891.99
Р - 35

-6 NOV 2011

Р А Ф Ф И

(Հակոբ Մելիք-Հակոբյան)

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԻՆՆԵՐՈՐԴ



Հայպետհրատ

Երևան

1964

Ր Ա Ֆ Ֆ Ի

(Հակոբ Մելիք-Հակոբյան)

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ



Ad 1
Р 35

Տեխստը պատրաստեցին՝
Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝
ԲՈՓՋՅԱՆ Է., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ե.,
ՀՈՎՍԵՓՅԱՆ Գ., ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Մ., ՔՈՉԱՐ ՀՐ.

Հրատարակչության խմբագիրներ՝
Ս ՊԱՅԱՑԱՑ, Ս. ՍԱՐԿՍՅԱՆ

Նկարիչ՝
Ռ. ԲԵԴՐՈՍՅԱՆ



48384-65

РАФФИ

(АКОП МЕЛИК-АКОПЯН)

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

в десяти томах

ТОМ IX

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат)

Ереван — 1964



ՐԱՖՖԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ԵՎ ՔՆՆԱԴԱՏ

Մեծ վիպասանի երկերի ժողովածուի ներկա հրատարակության իններորդ և տասներորդ հատորներն ամփոփում են նրա հրապարակախոսական, քննադատական, պատմագիտական աշխատությունները և նամականին։ Այս հատորում զետեղված են հրապարակախոս ու քննադատ Րաֆֆու՝ մամուլում մինչև 1880 թվականը լույս տեսած հոդվածները։ Չեն մտել այնպիսի նյութեր, որոնք կըրկնում են միմյանց կամ անցողակի նշանակություն են ունեցել հենց իրեն՝ հեղինակի համար, իսկ այսօր ուշագրավ չեն մասսայական ընթերցողի տեսակետից։

* *
*

Րաֆֆին որպես հրապարակախոս հանդես է գալիս դեռևս 1850-ական թվականներին։ Մինչև 1880 թվականը — դա մի ընդարձակ ժամանակաշրջան է, երբ արդեն ձևավորված ու հասակ է առած Հակոբ Մելիք-Հակոբյանի տաղանդը, զարգանում ու խորանում է նրա աշխարհայացքը, նա երևան է գալիս իբրև բանաստեղծ ու ակնարկագիր, հռչակվում է որպես վիպասան։ Նույն ժամանակաշրջանում լայն արձագանք է գտնում նրա հրապարակախոսությունն ու քննադատությունը։

1850—1880 թվականների բնորոշ գիծը ֆեոդալիզմի, ֆեոդալական ինստիտուտների քայքայումն ու փլուզումն է և բուրժուական հարաբերությունների զարգացումը։ Ֆեոդալիզմին փոխարինում է կապիտալիզմը։ Այս պրոցեսն ինքնին էական տեղաշարժեր է մտցնում հասարակության տնտեսական ու դասակար-

գային կառուցվածքի մեջ։ Քաղաքական ու գաղափարական պայքարի մեջ են մտնում պատմության գիրկն անցնող հին և ապագային մտնող նոր դասերն ու դասակարգերը։ Ծեռնալիզմի վերացմամբ ամենից ավելի շահագրգռվում են դեմոկրատական լայն խավերը, մանավանդ գյուղացիությունը։ Ցարական ու առաջին դաժան սուլթանական բռնակալությունների լուծը թոթափելու համար մղվող ազգային ազատագրական պայքարը ոտքի է հանում հայ հասարակության բոլոր կենսունակ ուժերին։ 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմին իր ուժեղ կնիքն է դնում ժամանակաշրջանի վրա։

Այս բարդ, հակասություններով ու հակադրություններով լի էպոխայում, գեղարվեստական խոսքի հետ Րաֆֆին հրապարակախոսությունն ու քննադատությունն ընտրում է իբրև գաղափարական պայքարի զենք, արձագանքում և ապարեզ է հանում դարաշրջանի ծնունդ հանդիսացող բազմաթիվ պրոբլեմներ ու հարցեր, անցնում է մտավոր զարգացման մի բարդ ճանապարհ։ Իրական հակասությունների ու հակադրությունները մտքի մեջ արտացոլել Րաֆֆին ինքը հաճախ հակասական հայացքներ է արտահայտում։ Կյանքի հետ կենդանիորեն հարաբերվող Րաֆֆին, միշտ զգայուն դեպի կյանքը, որոնել է նրա երևույթների բացատրության, իր ժամանակի համար, պրոգրեսիվ մեկնակետը։ Ծեռնալական ֆորմացիայի մահացման և բուրժուական ֆորմացիայի զարգացման ու հաստատման՝ կնճիռներով դրոշմված տասնամյակներին Րաֆֆի հրապարակախոսն ու քննադատը կանգնում է բուրժուա-դեմոկրատական աշխարհայացքի դիրքերում, որոշելով, թե կարծես հենց այդպիսի դիրքեր ունեցող գաղափարական մարտիկն ամենից ավելի խոր է զգում իրականության պահանջները և ամենից ավելի ճիշտ է ծառայում իր հայրենիքին ու հայ հասարակության զարգացման առաջավոր տենդենցներին։ Րաֆֆին իր էպոխայի արգասիքն է, այդ էպոխայի ծնունդն է նրա հրապարակախոսությունն ու քննադատությունը։

Տակավին վաղ երիտասարդության տարիներին, ինչպես գեղարվեստական երկերում, այնպես էլ հրապարակախոսական առաջին քայլերը կատարելիս, Րաֆֆին համակվում է լուսավորական մտքերով։ Երիմյանին՝ Սալմաստից Վան ուղարկված նամակ-հոդվածներում նա աղյուսնում է լուսավորության մասքը հայ հետամնաց իրականության։ Անկարող ժխտելու կրոնը, նա քննադատում է հայ կղերին, նրան համարելով հետամնացության պատճառ։

Ավելի սուր՝ Րաֆֆու հրապարակախոսությունն արտահայտվում է «Հյուսիսափայլի» տարիներին։ Համընկնում են երիտասարդ մտածողի և ամսագրի ուղղության, հատկապես նրա լուսավորական ոգին։ Ծեռնալական գաղափարախոսության դեմ բացված ճակատի արտահայտությունն էր դա — Րաֆֆու և «Հյուսիսափայլի» բարեկամությունը։ Այս ժամանակ է, որ Րաֆֆին հանդես է գալիս որպես արևելյան իրականությանը քաջատեղյակ մի գիտնական, դատապարտում է արևմտյան առաջապահներին՝ չարամիտ գործունեությունն Արևելքում, պաշտպանում է տեղային կուլտուրաների ինքնուրույն զարգացման գաղափարը։ Բայց ավատականությանն ընդդեմ գնացող նույն Րաֆֆին խորը գիջում է անում, երբ երևան է բերում հայ լուսավորչականությունը «ամբրելուց և զգտելուց» Քեզը, այն գերադասելով կաթոլիկությունից։

«Ընտանեքի կերբերոնները» հոդվածով հրապարակախոս Րաֆֆին Քևակոխում է «Մշակի» հիմնադրման և նրա հեղինակության տարածման շրջանը։

ամշակին պատմության մեջ էլ նա մեծ դեր է խաղում։ Բաֆֆին կանգնում է կապիտալիզմի զարգացման փաստի առաջ։ Դեռևս չկա կապիտալիստական արտադրանքների լիակատար հաղթանակը, ապապրեզում գերակշիռ դեր է խաղում առևտրական ու վաշխառուական բուրժուազիան՝ արևելյան և կովկասյան իր բոլոր առանձնահատկություններով։ Բաֆֆին նկատել է տալիս, որ փողը, առևտրականի կենցաղը այլասերում են մարդուն, իսկ նահապետական գյուղը հեռու է պահում նրան, մանավանդ կնոջը, նման այլասերումից, կապում է նրան աշխատանքի հետ, աշխատանքն է բարձր բարոյականության հիմքը։ Ավաճառականությունը հայերի մեջ նոր հոդվածում, երևսը քննելով փողի գերիշխանության գործ առօրյայից, հրապարակախոս Բաֆֆին վերստին դրվատում է հողն ու բնությունը և աշխատանքը հողի վրա, որպես ամիակ աղբյուր մարդկային հարստությանը։ Այս միտքը նրա գեղատոմսն էր, ըստ ինչպես փրկել հասարակությանը փողի այլանդակ իշխանությունից։

Սակայն նույն Բաֆֆին, լայն ու խոր հայացք ձգելով դարաշրջանի վրա, չէր ժխտում երկրի ու հայ հասարակության տնտեսական զարգացման նոր երևույթներն ու իր կողմից հրապարակ է բերում այդ զարգացման հետևանք հանգիսացող պրոբլեմները, ընդունելով միաժամանակ, որ կապիտալը, նրա գոյությունն արդեն օբյեկտիվ իրողություն է։ Դեռ ավելին, առևտրականի ու վաճառականի ստեղծած այլանդակ իրականությունից երես դարձնող, նրանց քննադատող Բաֆֆին ընդգծում է կապիտալի դրական դերը ֆեոդալական էկոնոմիկայի հարաբերությամբ։ Սա պատմականորեն ճիշտ տեսակետն է, որ արտահայտել է Բաֆֆի հրապարակախոսը, գտնելով, որ անխուսափելի է կապիտալիզմը, որ փաստ է նաև ազգայինս կապիտալը հայ հասարակության կյանքում։ Իդեալիստական է Բաֆֆու այն բացատրությունը, թե հայ վաճառականությունը Կովկասում և Ասիայում առաջացել է իբրև անկախ պետական կյանքի կորստի հետևանք և ազգապահպանման միջոց։ Բայց Բաֆֆին գիտել է տալիս, որ կապիտալը հակադրվում է նահապետական հին տնտեսաձևերին, որ ավելի խոշոր կլինի նրա դերը նոր՝ եվրոպական, այսինքն՝ էլուսավորյալ, էգիտնական» հիմունքներով ձևավորվող տնտեսության՝ բառի բուն իմաստով արդյունաբերական կապիտալիզմին անցնելու ժամանակ։ Այստեղից էլ Բաֆֆու խիստ քննադատությունն՝ ուղղված Ճանճուր Իվանիչների և Մասիսյանների հասցեին, ասիական տնտեսավարության հասցեին։ Այստեղից էլ նրա դրական վերաբերմունքը էթորտաների հիմնադրության, էբանկերի» և գործարանների ստեղծման նկատմամբ։

Բաֆֆին միամտություն ունի հավատալու, թե բուրժուական տնտեսական այդ հաստատությունները հասարակությանը փրկելն ամենայն շահագործումից ու խաբեբայությունից, ուր նրան չլինի իրեն հայտնի վաշխառուն և տեղական վաճառականը, երկրի վրա դրախտ կիջնի։ Նա տեսնում է տեղական վաշխառուի ու վաճառականի սոցիալական էությունը, բայց բոլորովին չի տեսնում էլուսավորյալ» կապիտալիզմի ծնած շահագործական նոր ախտերը և այն դժոխքը, որ ստեղծել է արևմտյան կապիտալիզմը իրեն թագավորության ենթական երկրներում։

Հայաստանի, Կովկասի, Թուրքիայի, Պարսկաստանի տնտեսական ու սոցիալական դրությունը լավատեղյակ Բաֆֆին Արևմուտքի երկրների տնտեսական ու սոցիալական վիճակի հարցերում հանդես է գալիս իբրև լուկ ամաքուր» մտածող ու տեսաբան, առանց քննական ու քննադատական վերաբերմունքի դեպի

արեմտյան իրականությունը։ Տեսության մեջ էլ նա փայփայում է արեմտյան կապիտալիզմի պաշտպանության գաղափարը, ցանկանալով նրա հզորությունը նաև հայ հասարակության կյանքում։ Զարգացնելով նույն այս միտքը, ազգի միավորման գիրքերն ունեցող Րաֆֆին ասում է. «Ազգի ներկա և ապագա ուժը», հակառակ գյուղացուն տրված առավելությանը, մի պահ գտնում է՝ առաջին՝ վաճառականի, երկրորդ՝ արհեստավորի և ապա Լրորդ՝ մշակ, այն է՝ հողագործ դասի մեջ։ Ով այդ այն պատճառով, որ ամենամշակ երկրագործը ընկած է դեռևս յուր հին նախապատմական հնության մեջ», որ ոչ մի մտավոր, գործնական և արհեստավոր գիտությամբ, մշակ դասից բարձր չէ և արվեստավոր գաս։ Նույն նահապետական հին գրությունը, նույն անփոփոխ, կոշտ և կոպիտ արհեստը։ Իրական, կոնկրետ պայմաններում, հավաստում է Րաֆֆին, տնտեսական ու նույնիսկ բարոյական ուժը մնում է վաճառականության կողմը.— «Ենթադա պիտի լինեն մեր հայտնի ներկայացուցիչը քաղաքական ազգերի առաջ, նոքա պիտի վերականգնեն մեր ընկած նշանակությունը մյուս ազգերի մոտ, և միևնույն ժամանակ նոքա պիտի լինեն մտրակող ուժը մեր մյուս՝ այն է՝ արվեստավոր և մշակ դասակարգեր»։ Այս տողերում Րաֆֆին ամենից ավելի ուժեղ արտահայտել է իր դրական վերաբերմունքը դեպի կապիտալը, որն իբր թե պետք է օժանդակեր նաև աշխատավորական զանգվածների ինքնագիտակցության արթնացմանը։

* * *

Րաֆֆի գրողի, Րաֆֆի հրապարակախոսի ստեղծագործության հիմնական առարկաներից մեկը — Արևմտյան Հայաստանն է, այնտեղ ապրող հայ ժողովուրդը և Թուրքիան, Հայաստանի, հայ ժողովրդի ազատագրությունը սուլթանական լծից։

Կարդում ենք «Խամակ Կ. Պոլսից» շարքը, նրանց հեղինակը — Րաֆֆին — Կ. Պոլսում չի եղել, բայց ապագիր խոսքով երևան բերված նրա մտքերը, կյանքի երևույթների վերլուծությունները և առաջադրած խնդիրները խոշոր նշանակություն ունեին արևմտահայ իրականության համար։

Ի՞նչ է մտածում Րաֆֆին այդ իրականության մասին։ «Անմխիթար դառաորկությունը,— այսպես է բնութագրում նա Կ. Պոլսի հայ հասարակական-քաղաքական, գաղափարական-կուլտուրական կյանքը։ Լրագրությունը կտրված է գավառներից, ժողովրդի վիճակը էֆենդիներին չի հետաքրքրում, ազգային սահմանադրությունը նույն էֆենդիների կուսակցության ձեռքին մի խաղալիք է, մտավոր կյանքը, արվեստը, դպրոցները զուրկ են լրջությունից ու մասնավոր անձանց կրքերին զոհ են դառնում։ «Ենթա (ժողովրդի.—Ս. Հ.) իրավունքները արտահելի բռնաբարության ենթակա ենթ, գրում է Րաֆֆին, նկատելով, որ հենց նրա «ուսերի վրա է բարձած այդպիսի հիմնարկությունների բոլոր նյութական ծանրությունները։ Տիրող խավերն ընդգծում են կղերի իշխանությունը, երբ «կղերի գործը անցավ»,— բացականչում է հրապարակախոսը։ Նա ասում է.— «Մենք տեսանք և տեսնում ենք այն ազգերի թշվառ վիճակը, որք յուրյանց կառավարության սանձը հանձնել էին կղերներ։ Հակառակ բուժուռալային հատկացված բարոյական նշանակության իր նախկին տեսակետին, Րաֆֆին այժմ ազգի հույսը կապում է «ազգայնության գլխավոր ուժի»— դեմոկրատական խավերի հետ։ Հայ

ժողովրդի անբախտության գլխավոր պատճառը քրդերը, չերքեզները և կամ այլ ազգերը չեն, այլ նրա տնտեսական քայքայումը, ազգաւուիյուրը։ Րաֆֆին հայ հասարակութիյան փրկութիյունը վերը ի վերջո տեսնում է հողի մեջ։ Այս միտքը նա արտահայտում է բազմիցս և այսպես.—«Քե մի ազգ, որ յուր կյանքի պահպանութիյունը չէ հիմնած հողի արդյունաբերութիյան վերա, նա ոչ միայն երկար ապրել կարող չէ, այլ չէ կարող ազգ համարվելւ»։ Կամ.— «Մի ազգի գլխավոր հիմքը է հողը, իսկ նորա գլխավոր ուժը գտանվում է երկրագործ և արդյունաբերող դասի մեջ»։ Արևմտյան Հայաստանին, Թուրքիային, այնտեղ ապրող ժողովուրդների փոխհարաբերութիյուններին նվիրված հոդվածներում Րաֆֆին քայլ առ քայլ բացահայտում է բազմաթիվ տխուր երևույթներ։ «Թուրքիա» հոդվածում, նա, օրինակ, ամբողջ ուժով ընդգծում է հայ գյուղացու պանդխտութիյան ողբալի փաստը, հարձակվում է այդ ողբերգութիյան օրերին աղաքեղ կղերի վրա «խավարասերներ, միշտ դեպի հինը, միշտ դեպի հետ, բայց ոչ երբեք մի քայլ առաջ» խոսքերով, և ինչպես այս, այնպես էլ «Ծարոնի և Վասպուրականի անցյալ և արդի վիճակը» ընդարձակ շարադրութիյան մեջ վերըստին անդրադառնում է իր այս մտքին.— հիմնվել հաստատ հողի վրա, գործ ունենալ բնութիյան հետ, ծաղկեցնել երկրագործութիյունը «Ծա Տարոնի և Վասպուրականի հայերի փրկութիյան միակ ճանապարհն էր»,— գրում է Րաֆֆին «Ծարոնի հոդվածում, նորից նույն հարցը, հայ գյուղացու քայքայման, նրա գաղթականութիյան ծանր ու կնճռոտ խնդիրը և միևնույն եզրակացութիյունը.— «Մարդո կյանքը կապված է բնութիյան հետ, և նորա մայրը — է հողը։ Թե հայր կամն ապագա և կյանք ունենալ, նա պետք է յուր ապրուստը հիմնե հաստատուն հողի վերա, և այդ հողը թո՛ղ լինի այն, որ սրբված և գնված է մեր նախահարց արյունով...»։ Կարևոր նշանակութիյուն է տալիս հրապարակախոսը հայ ժողովրդի հայրենասիրութիյանը, գտնելով այդ հայրենասիրութիյան արմատը նրա ժառանգութիյունը հանդիսացող հողի վճռական նշանակության մեջ։

Հայրենի գյուղի կործանման պրոբլեմը բազմակողմանի քննութիյան խնդիր է դառնում «Ծեղեկագիրք գավառական հարստահարութիյանց լայնածավալ հոդվածում։ Րաֆֆին այստեղ հարցը դիտում է իր ամբողջ բարդութիյամբ՝ Թուրքիայում տիրող պետական, դատական սիստեմի և ազգային ճնշման պայմաններում։ Նա նուրբ և խոր դիտողութիյուններ է անում հասարակութիյան սոցիալական կառուցվածքի, չերտավորման և ժողովուրդների փոխհարաբերութիյունների մասին։ Մտածում է հայ ժողովրդի պաշտպանութիյան հարցը օտար լծի դեմ։ Արտաքին ըշշնամու՝ օտար լծի դեմ պայքարելու միջոցը Րաֆֆին համարում է ակտիվ անձնապաշտպանութիյունը՝ զենքը ձեռքին։ Նա ակտիվ գործունեության կոչ է անում. ծաղրում է ազգային սահմանադրութիյունը և նրանց, որոնք հայ ժողովրդի ներքին թշնամիներն էին։ Սրանց՝ ներքին թշնամիների, թվին են պատկանում նաև վաճառականները, ա՛յն վաճառականները, որոնց Րաֆֆին հատուկ դեր էր հատկացրել։ Այժմ Րաֆֆին գրում է. «Նա այնտեղ է, ուր նրա շահերն են գտնվում» Վաճառականը հայրենիք չունի. նրա հայրենիքն այնտեղ է, ուր արծաթ կա։ Վաճառականը հասարակաց շահերի համար չէ մտածում. նա եսական էր։ Ժողովրդի ներքին թշնամիներն էին տիրող խավերը։ Թե Ծրանսիայում, նշում է Րաֆֆին, ռեակցիոն շարժումները նպաստում են հասարակութիյան զարգացմանը, ապա մեզանում դրանք դոհաբերվում են «էֆենդի աղաների չար կրքերին»։

Հրապարակախոսն իրավացի է, երբ մատնանշում է պոլսահայ շարժումների մեջ իրենց դասակարգային եսասիրական շահերը որոնող տիրող խավերի բամբնելի դերը։ Նա պաշտպանում է պատերազմի գործունեությունը, որ ուղղված էր չափավոր սահմանադրականների դեմ։ Նա գայրագին հարձակվում է կրոնական նրկպատակությունների ոճակիցների երեսների վրա։ Հայաստանը և յուր կատաղագրությունը հոդվածում Բաֆֆին ուժգնորեն դատապարտում է Հայաստանի կուսակցությունը որպես Հռոմի պապի—ազդ համաշխարհական հրեշի»,— կշռված գործակալություն հայերի մեջ։ Քաղաքական շահեր և ո՛չ թե կրոնական զգացմունքներ,— ահա՛ թե ինչ են որոնում պապը և Հայաստանը Հայաստանում։ Արևմուտքում իշխող պապը գլուխ է հայ քաղաղորությունները, քշնամացրել է այլ ժողովուրդների Հայաստանի դեմ, դառնությամբ ու արյունով է լցրել նրա պատմությունը։ Եվ, Բաֆֆին ընդունելով հակահայասության շարժման կարևորությունը, գրում է, թե Հայաստանի քշնամիները «ճանաչեցին այն վտանգի սխալը, թե արևմուտքից նորանց օգուտ չկա, որ պետք է ջհիմնվել յուրյանց սեպհական ուժերի վերա և պահպանել յուրյանց ազատությունը և ազգային իրավունքները»։

Մագում է ռուս-թուրքական պատերազմը։ Բաֆֆին, բացի գեղարվեստական երկերից՝ «Ջալալեդդին», «Խենթը», տպագրում է հոդվածներ, որոնք նվիրված են պատերազմին, Հայաստանին ու հայ ժողովրդին՝ պատերազմի տարիներին։ «Ահռելյան հարցը» դառնում է օրակարգի խնդիր։

Արևմուտքի բուրժուական պետությունները, վախենալով ռուսական զենքի հաղողությունները, փաստապես կանգնում են Թուրքիայի կողմը, խափանում են արևմտահայ ժողովրդի ազատագրությունը սուլթանական լծից, «Հայկական հարցը» 16 և 61-րդ հոդվածներով դարձնում են սուլթանի կամայականությունների մի արյունոտ հարց։

Ի՞նչ է Բաֆֆու դիրքը։ Նա ամբողջ էությամբ ձգտում է հայ ժողովրդի փրկությանը սուլթանական լծից։ Բաֆֆու փայփայած երազն է այդ։ Հրապարակախոսն ամենից առաջ գաղափարական հարվածներ է տեղում Թուրքիայի վրա։ «Սրբազան պատերազմը և քրիստոնյաների վիճակը Փոքր Ասիայում» հոդվածում նա ցույց է տալիս, որ Թուրքիան, սրբազան պատերազմ հայտարարելով, նպատակ ունի բնաջինջ անել ազատագրության ձգտող ժողովուրդներին, նաև հայ ժողովրդին և որ իսլամը նա գործածել է այդ պատերազմի գաղափարական դրոշը։ «Ժողովուրդների բնաջնջման Թուրքական մեթոդը բարբարոսական մեթոդն է։ Եվ սուլթանի հայտարարած սրբազան պատերազմը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովուրդների ակողոպուտ, հարստահարություն և կոտորածն։ Բաֆֆին փաստեր է պատմում այն մասին, թե ինչպես է հարստահարվում ու կողոպտում մանավանդ Հայաստանը, փաստեր, որ գեղարվեստական պատկերներ են դառնում «Ջալալեդդինում», որ նույն վիճակի մեջ են ժամբողջ Փոքր Ասիայի քրիստոնյաները...» «Ամեն տեղից լսվում է հարստահարություն, կայքի հափշտակություն, կանանց բռնաբարություն և կոտորածն։ Բաֆֆին հարցնում է.— «Բայց հասկացա՛վ Եվրոպան ի՞նչ բան է սրբազան պատերազմը և որքան չարիքներ էին թաքնված նրա ներքո»։ Անգլիան, որ գլխավորում էր Եվրոպայի դիվանագիտությունը, հենց այդ ազնգիան վաճառական է,— ասում է Բաֆֆին։—Ամեն վաճառական շահասեր է և եսական։ Ուր շահ կա, այնտեղ մարդկային գութը տեղիք չունի...» Այսպես, Անգլիայի, Բիսմարկի Գերմանիայի, Թրանսիայի քաղաքականությամբ ու

նրանց խորամանկ, հակառուսատյաց դիվանագիտության հետևանքով, Թուրքիան աթյան մեջ էր խեղդում ազատագրության ձգտող ժողովուրդներին ու հայ ժողովրդին։ Ռուսաստանի դերը Բաֆֆին գնահատում է ըստ արժանվույն, հայատարբերով նրան հարյուն քաղաքական երկիր, որը կրոնական հակադրության շահը չունի, և գիտե փրկելու սոկրանի լծի տակ հեծող ժողովուրդներին։ Հզոր Ռուսաստանը հարստահարված ազգերի պաշտպան — այսպես է արտահայտվում Բաֆֆին «Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածում։

Այս է Բաֆֆու դիրքը պատերազմին վերաբերող մի քանի հիմնական հարցերում։

Հրապարակախոսը հրահրում է հայ ժողովրդի զինված ապստամբության հարցը, սուրը ձեռքին ինքնությունը, պատիվը և հայրենիքը փրկելու խնդիրը։ Բայց հայերը ապստամբության պատրաստ չեն, իրր նրանց պակասում է ապատվի, ինքնահրության և ազատության զգացումը։

Հայրենասեր Բաֆֆին Հայաստանը և հարազատ ժողովուրդն ուզում է տեսնել ազատ, անկախ և ինքնուրույն։ Նա ձաղկում է հետամնացությունն ու անշարժությունը, սակայն սխալ էր նրա ընդհանրացումը, երբ ամեհությունով է տեսնում չորս կողմը։ Ճիշտ չէր Բաֆֆին և այն դեպքում, երբ մահմեդական անուն ունեցող ազգերին ամբողջությամբ հայտարարում է բարբարոս և վայրենի ազգեր, առանց շերտավորելու նրանց, վերլուծության ենթարկելու ազգի սոցիալական կազմը և տարբերություն տեսնելու տիրապետող ազգության տարբեր դասակարգերի միջև։ Նացիոնալիստական այս դիրքավորումը խանգարում է Բաֆֆուն խոր կերպով հետազոտել նաև հայ ժողովրդի ազատագրության ուղիների բարդ հարցը՝ 19-րդ դարի 70-ական թվականներին։

Բաֆֆին, մյուս կողմից, սուր ծաղրի է ենթարկում «ևևոլյուսոն մը ընելուս կ. Գոյի տարգուխների երկչոտությունն ու փախուստը պայքարի ասպարեզից։ Նա զայրացած է պատրիարքի, կաթողիկոսի, էֆենդիների, արիստոկրատիայի, սարաֆների դեմ, որոնք լռում էին կամ գրում ու խոսում՝ երեսները դեպի Եվրոպան։ Այս պարագայում հույսը մնում է նորից հասարակ մարդը, և հրապարակախոսը ցանկանում է, որ ազատության զգացմունքը արմատից գա, ցածից վեր բարձրանա, որ շարժումը դեմոկրատական լայն բնույթ ստանա, բայց հենց դեմոկրատական լայն խավերն էին, որ զեկավարություն ու կազմակերպություն չունեին։ Ասպարեզում գտնվող և ոչ մի կուսակցություն ազատության համար կռվված չէր։

Երբ դադարեց պատերազմը, հույսերն ի դերև ելան, Բաֆֆին կռվում է այն բանի համար, որ վիրահորդումները գեթ լրիվ և անխափան իրականանան, որ, եթե Հայաստանն անկախություն չստացավ, գոնե պահպանվի հայ ժողովուրդը, պահպանվի լեզուն, դպրոցը, որ գյուղային արմատ ձգե բուն հայրենիքում սեփական հողի վրա, Ռուսաստանի և Թուրքիայի հայ հատվածները փոխադարձաբար ճանաչեն միմյանց և պատրաստ լինեն այն օրվան, երբ հարմար առիթը կգա — արևելյան խնդրի լուծման առիթը — որպեսզի ոտքի բարձրանա Հայաստանը — այդ Եվրոպայի և Ասիայի պատմական կամուրջը — ազգերի անցուդարձի ներքո չշրխկոլվի ու չոչնչանա։

* *
*

Բաֆֆու հրապարակախոսության մեջ որոշակի տեղ ունի Պարսկաստանը։ Այս երկիրը ծանոթ է նրան մանկական տարիներից։ Պարսկաստանի նկատմամբ նրա կողմից հանդես բերված հիմնական տեսակետն ու մոտեցումն այն է, թե այդ երկիրը դարավոր հետամնացությամբ տառապող մի պետություն է, դաժան՝ իր ֆեոդալական էությամբ, սոցիալական ու անօրեն դատական սիստեմով։ Բաֆֆին Պարսկաստանը ճանաչելու հարուստ նյութ է տալիս։ Այդ վերաբերում է նաև Պարսկաստանում ապրող հայերի վիճակի ուսումնասիրությանը։ Ճամփի Դավթեժից» հոդվածաշարքում և այլ նյութերում նա պատմում է կրոնական և ազգային խտրականության, հակադրության ու հալածանքի մասին։ Հրապարակախոսը բաց է անում անվերջ պրովոկացիաների վարագույրը, շարադրում է նրբին հյուսված այն որոգայթների պատմությունը, որոնց զոհ է գնացել հասարակ և ոչնչի անմեղսակից ժողովուրդը։ Ըստ հրապարակախոսի, Խայրահեղ հեռատեսացության պայմաններում, խոշոր նշանակություն է ունեցել անհատ-լուսավորիչների գործունեությունը, որևէ մեկ դպրոցի հիմնադրումը կամ թեկուզ 20—30 անուն գրքի մուտքը հասարակության մեջ։ Մեծ վաստակ են ներկայացրել Արևմուտքից եկած միսիոներները. «Անգլիացին արքան յուր երկրում ազատամիտ է, այնքան նա Ասիայում շահամոլ է և հարստահարող»—գրում է Բաֆֆին։ Նա ձգտում է հայ ժողովրդին հեռու պահել օտար՝ արևմտյան քայքայիչ ազդեցություններից, պարսկահայերին խորհուրդ է տալիս հավաքվել Ռուսահայաստանի սահմաններին. գրվատում է հայ գյուղացու և արհեստավորի աշխատանքն ու վարպետությունը, որպես ազգապահպանման միջոց։

* *
*

Բաֆֆի-հրապարակախոսը, Բաֆֆի-մտածողը կյանքում տեսնում է բազմաքիվ հակասություններ և սուր հակադրություններ հասարակության տարբեր դասերի և դասակարգերի միջև, մարդկային տարբեր խմբերի միջև, ազգային հակադրություններ և ազգերի դիսկրիմինացիա։ Նրա տեսադաշտի մեջ են պետական զանազան կառուցվածքներ ու սիստեմներ՝ միապետական սուլթանական, միապետական ցարական, արևելյան՝ պարսկական, արևմտյան՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական, ամերիկյան, նրա մտածողության ոլորտի մեջ են մտնում իդեոլոգիայի բազմազան հարցեր ու բնագավառներ՝ կրոն, դպրոց, կրթություն, մամուլ, գրականություն, ընտանիք, բարոյականություն։ Որևէ տարիներ նա բանակումի մեջ է հայ մամուլի՝ նրա ազգային-պահպանողական օրգանների հետ։ Նա գրում է երբեմն մի քանի տող՝ նամակ խմբագրության և անմիջապես երևում է նրա դիրքը, կիրքը։ Բաֆֆի հրապարակախոսը որոնում է հարցերի լուծման ռեալիստական հիմքը, հաճախ հակասում է ինքն իրեն և այդ ոչ այնքան սեփական մտածողության թուլության պատճառով որքան իրականում գոյություն ունեցող ռեալ հակասությունների ու հակադրությունների ակտիվ արտացոլման հետևանքով։ Նա ինքը համեմատաբար հետամնաց միջավայրի արդյունք է, բայց բնման դարաշրջանի «արտագրություն», երբ նորի՝ կապիտալի հարվածների

ասակ հիշով ու ազմուկով նահանջում է հինը՝ նահապետականն ու ֆեոդալականը, երբ հինը քայքայվում է և նորը դեռ լիակատար տեր չի դարձել, երբ հասարակական գանազան ինստիտուտներ պայքարի մեջ փոխում են իրենց հիմքերը, երբ գարաշրջանն առաջ է բերում կապիտալիզմի զարգացման հիմքի վրա ազգերի, նաև հայ ժողովրդի ազգային միավորման հարցը. նրա տարբեր հատվածները մերձենալու, միավորելու ծանր, դժվարին պրոցեսը։ Բաֆֆին վերցնում է իր վրա բվաքաղած բոլոր երեւույթների ու խնդիրների արտացոլման միտիան։ Նա գիտե, նույնիսկ անհրաժեշտ է համարում իր առաջ կանգնած դժվար հարցերի տեսական-փիլիսոփայական մեկնաբանությունը գտնել, որոնել կեցության բացատրությունը փիլիսոփայության մեջ։ 1870-ական թվականներին նա գրում է «Մարդը գոյության կռվի մեջ» տեսական աշխատությունը։ Որպես աղբյուր նրան ծառայում է ռուս հայտնի գիտնական Իլ. Մեչնիկովը, հենվում է Դարվինի ուսմունքի վրա։ Գոյության կռիվը բնության մեջ և օրգանիզմների աշխարհում, Բաֆֆին, հետևելով Դարվինին, բացատրում է բնագիտական մատերիալիզմի դիրքերից։

Բաֆֆին Դարվինի ուսմունքը, Դարվինի նման, տարածում է նաև մարդկային հասարակության վրա։ Բայց նա գիտե, որ «մարդը հասարակական, ընտերական էակ է, այդ իսկ պայմանն ինքնըստինքյան արդեն չափազանց բարդում և բաղադրյալ է անում որպես նրա կյանքը, նույնպես և նրա կենսական պետքերը...»։ Հետագա շարադրության մեջ որոշակի երևում են հրապարակախոսին մտահոգող հարցերը, որոնց մեկնաբանության տեսական բանալին նա որոնում է զանազան տիպի փիլիսոփաների մոտ։ Մրցության օրենքը նա հայտարարում է համընդհանուր օրենք հասարակության, ազգերի ու անհատների միջև, նա «բացում» է իբր բնական անհավասարության «օրինաչափություններ» ցեղերի, ազգերի ու ժողովուրդների մեջ, որի հետևանքով առաջ են գալիս հաղթողներ ու հաղթվածներ։ Գործնականորեն Բաֆֆու բերանում այս նշանակում է, թե կան ազգեր, որոնք փոխվելու և զարգանալու ընդունակ չեն, թե նրանց բնավորությունը նույնը կմնա, թե օրինակ, թուրքը, թուրդը, պարսիկը կարող են լուսավորվել, բայց իրենց էությունը չեն փոխի։ Դարձյալ նացիոնալիստական ու իդեալիստական է Բաֆֆու այն տեսակետը, երբ նա ազգային բնավորության եռանում, տեսնելով ազգի տարբեր դասերին ու դասակարգերին, չի տեսնում նրանց միչև ընթացող դասակարգային կռիվը։ Մրցության օրենքը ծանր հետևանքներ է ունենում.— «դրամատերը հարստահարում էր աղքատին, խելացին անխելքին, զորավորը տկարին,— և նա ավելի նպաստում էր արտոնատերերին, կալվածատերերին, և վերջապես դառնում էր զանազան հարստահարիչների ձեռքում մի կեղտոտ գործիք»,— գրում է Բաֆֆին։ Բայց հենց այս հոյակապ դիտողությունն անող հրապարակախոսը ազգային միավորման տեսակետը գերադասում էր դասակարգային պայքարի տեսակետից։ Միայն կյանքի վերջում, «Թղթախաղերում» և այլ երկերում նա ընդունում է սոցիալական պայքարի փաստը, թեև մինչև այդ, այս ու այն ձևով ու տարբերակներն նա նկատել է տալիս հասարակությունների ներքին կյանքում արտահայտվող դասակարգային պոռթկումների երևույթը։ Բաֆֆին, ի վերջո, հայտարարում է, որ «տրևիցե որոշ վճիռ մեր հետագոտած հարցի մասին տալ չենք կարող, կթողնենք ընթերցողին իրան մտածելու։ Նա դժվարանում է որևէ որոշակի փիլիսոփայական սիստեմ ընդունել, երևի անբավարար մնալով

բուրժուական բոլոր նոյն մտածողներից, որոնց նա դիմում է և որոնց տեսությունները ակներևորեն հակասում էին իրեն հայտնի կենդանի իրականությանը։ Բայց նա պնդում է, որ եթե անհատ ու ժողովուրդն ուզում են ապրել և բարգավաճել, նրանք պետք է ճանաչեն իրենց գոյության պայմանները, գիտակցեն այդ պայմանները և փոփոխված պայմանների համեմատ մշակեն իրենց վարքագիծը։ Անբարոյականությունն անհատի ու ազգերի վարքագծի մեջ բացատրվում էր Հարկավոր չէ նմանվել, օրինակ, անգլիացուն, որը ամբողջ երկրագնդի վրա «հայտնվում է որպես մի հմուտ խարեբա»։ Բաֆֆու վերջին եզրակացությունն այս է.— «ով ժամանակի հետ չի ընթանում, նրան կտրիճ անշարժությունը, և այստեղ է հասնում ազգերի մահը»։

* *
*

Իր հրապարակախոսության կենտրոնում Րաֆֆին միշտ էլ նկատի է ունեցել մարդուն, նրա կեցության պայմանները, հոգևոր աշխարհի, կրթության ու դաստիարակության հարցերը։ Առաջիններից մեկը, նա մեզանում ծավալուն աշխատություն է հրատարակում հայ կնոջ ու հայ երիտասարդի վերաբերյալ՝ անհանգիստ ու մտահոգված նրանց վիճակով ու ապագայով։ Երիտասարդ կինը և տղամարդը գյուղում ու քաղաքում, գավառներում ու կենտրոններում, հայության տարբեր հատվածներում, հայ հասարակության սոցիալական տարբեր խավերում— այսպիսի ասպեկտով է նայում հետազոտող Րաֆֆին իր առարկային։

Բարձր գնահատելով կնոջ նշանակությունը հասարակության ու քաղաքակրթության զարգացման մեջ, հայ իրականության պայմաններում, Րաֆֆին ցավոք սրտի գործ ուներ գյուղում ծայրահեղ հետամնացության, իսկ քաղաքում՝ բուրժուական կենցաղի քայքայիչ ազդեցության հետ։ Գյուղում կնոջը հետապնդում է դարերի անցյալ ունեցող նահապետականությունը՝ հաճախ ողբերգական ելքով՝ գեղչկուհու համար։ Ողբերգական փաստեր Րաֆֆին շատ է պատմում։

Րաֆֆին նկատել է տալիս կնոջ կացության մեջ էական տարբերիչ գիծը։ Գեղչկուհին աշխատասեր է, աշխատանքը նրա հույսն է նաև ամուսնու մահվանից հետո, քաղաքացուհին՝ վաճառականի կինը, խորթ է աշխատանքին, այլասերված է հոգով, որովհետև պճնանքի ու մոդաների զոհ է գնացել։ Մեկին մաշում է աղքատությունն ու չքավորությունը, մյուսին խելացնոր է անում ոսկին։ «Հիվանդությունը սկսվել է գլխից»,— այսինքն՝ բուրժուական դասակարգի կնոջից։ Ծառի արմատը՝ «կինը ժողովրդի ստոր դասի մեջ ցույց է տալիս կենդանությունը»։ Նա քիչ ռամիկ է, տգետ է, նախապաշարմունքներով լի է, բայց ավելի աշխատասեր է, ավելի գործունյա է, և պահպանել է իր բարոյական մաքրությունը։ Դա ծառի արմատն է։ Րաֆֆու երազն է — հայ կնոջը տեսնել որպես հասարակական գործիչ, որպես ազդող ուժ, որպես քաղաքակրթության ղեկավար։

Նույն եղանակով Րաֆֆին հետազոտում է հայ երիտասարդին, սկսելով գյուղից և բարձրանալով քաղաք, վերցնելով նրա օրինակը ամեն մի դասակարգի մեջ առանձնապես։

Հրապարակախոսը ճիշտ դիտողություններ է անում գյուղի երիտասարդի կյանքի, կենցաղի և աշխատանքի մասին։ Տարբերվում է նրա վիճակը գեղչկուհու վիճակից, թեև քնդհանուր գծերով նա նույն միջավայրի ծնունդ է։ Րաֆֆին քարը

քաջի վրա չի ծողնում գյուղի դպրոցից և պահանջում է հոգին ու երկրագործությանը օգտակար դպրոցներ բաց անել։ Նա խոր վիշտ է ապրում քաղաք գաղթող երիտասարդության ապրիվ, որը կորցնում է իր լավ հատկությունները, ենթարկվելով քաղաքի այլանդակ կենցաղի ազդեցությանը, գյուղն իր հերթին զրկվում է նոր սերնդից ու թարմ ուժից։

Մեծ քաղաքի երիտասարդի հիմնական դեմքը ուսանողն էր։ Ռուսաստանի մտավոր կյանքը խորապես ազդել է հայ երիտասարդության վրա, ազդել է և ֆրանսիական ու գերմանական կրթությունը։ Ոգևորությամբ է խոսում Րաֆֆին Ֆրանսիայում ուսանողության դերի մասին հասարակական կյանքում. այս այն դեպքն է, երբ հրապարակախոսը նկատում է սոցիալական մեծ երևույթներ. նա գրում է.— «Երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, ուսանողները խլրտում են, զարթնում են որպես քնած առյուծ, և առաջինն են լինում, որ քնեցնում են փողոցները մարսելիեզներով, փշրում են բանակալների արձանները ու թռչում են բարիկադների վրա։ Ով որ փորր ի շատե ծանոթ է Ֆրանսիական պատմությանը, գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում, և մանավանդ կոմունայի ժամանակ։ Սրամիտ է Րաֆֆու այն դիտողությունը, որ նույն Ֆրանսիան օտարազգիներից կոմոպոլիտներ է պատրաստում։

Քննադատական սուր տողեր է նվիրում Րաֆֆին Թիֆլիսի բուրժուական ինտելիգենցիային, բայց սիրով է գրում նոր երիտասարդության՝ մշակական սերնդի մասին, ի հակադրություն ռեակցիոն սերնդի։ Ավելի գայրագին նա արտահայտվում է այն պայմանների դեմ, որոնց մեջ գտնվել են բուրժուական խոշոր քաղաքում պանդուխտ մշակները, բեռնակիրները, հասարակ մարդիկ, որոնք առանյակ հազարներով թափվել են այդտեղ օրվա հաց հայթայթելու համար։ Անելանելի է դրանց դրությունը, և Րաֆֆին ընթերցողին է ծանոթացնել, թե օրպիսի ապագա է խոստանում հայ երիտասարդությունը։

Ով, հիրավի, հրապարակախոսն իր վերջին խոսքը չէր ասում ու չէր կարող ասել։ Հայ կնոջ ու հայ երիտասարդի կյանքը բուրժուական հասարակության մեջ ենթակա էր նույն հասարակության օրենքներին։ Ապագան Րաֆֆու համար անորոշ էր։ Նա չի գնում ուտոպիստիկի հարցը, նրանով հետաքրքրելու նման երիտասարդի կեցությունը։ Ի՞նչ ցույց կտա կյանքը—առաջիկ այսքան,— մտածում է Րաֆֆին։

* *
*

Հին արժեքների վերագնահատության սուր պայքարի տարիներին Րաֆֆին երևան է բերում նաև կրոնի ու հոգևորականության, դպրոցի, կրթության և մանկավարժության հարցերը։ Ենդիրն այն էր, որ կրոնը, եկեղեցին, դպրոցը, մանկավարժությունը տիրում էին հասարակության լայն խավերի հոգևոր կրթության ու դաստիարակության ասպարեզներում, իսկ թե ի՞նչ ուղղություն, ի՞նչ բովանդակություն և ի՞նչ հեռանկար էր տրվում դրանց—այդ պրոբլեմները որոշիչ նշանակություն էին ստանում։

«Եկեղեցականների հարցը» հոդվածում Րաֆֆին այսպես է բանաձևում իր մաքրը։

եկեղեցականը—ուրիշի քսակից փող դուրս քաշող.

եկեղեցականը—անհաշողության նշան.

սուրբ խորհուրդները դարձել են վաճառքի նյութեր.

քահանայության լուծը տխմարների ձեռքին է.

եկեղեցականը—գող և ինտրիգան...

Հրապարակախոսը, սակայն, վերապահումներ է անում, քե այդպիսին է հոգևորականության մի մասը, որոշ մասը և այլն։ Նրա միտքն այն է, որ անկախությունից զուրկ ժողովրդի գոյության հիմքը կրոնն է ու լեզուն։ Վատ կրոնավորին պետք է փոխարինի ալավը», ոգեմտին՝ կրթվածը, անաչխիկին՝ իբր ազնիվ կրոնականը։ Բաֆֆին պայքարում է այն բանի համար, որ կրոնը և եկեղեցին բեկվեն դեպի նոր խնդիրներ, հարմարվեն ու ծառայեն նոր իրագործյանը, ծառայեն ժողովրդի պետքերին, ազգականաե ու գործնական կերպարանք ստանան։

Բաֆֆի հրապարակախոսն էլ քննադատում է եկեղեցականի վատ ու այլանդակ օրինակը, Վանի ավազակ Գողոս վարդապետին նա հալածում է անխնա, հրապարակով։ Դավրեժի առաջնորդը քննադատվում է անկարողության համար։ Վանքերը և կուսակրոն հոգևորականությունը չեն տեսնում, Թե ինչպես փոխվել են կյանքի պայմանները և այժմ ի վիճակի չեն ազգի արդի պահանջներին քավարարություն տալ։ Ազգային միասնության փոխարեն տիրում է կրոնական երկպառակությունը, արևմուտքի միսիոները տեր ու տիրական է դառնում։ Էջմիածինը պետք է հայրախնամ ուշադրություն դարձնի հհևռու արևելքում ցրված, մոլորված, իր կորուսյալ ոչխարների վրաե,—պնդում է Բաֆֆին։ Հայ ժողովրդի անպետական գոյության պայմաններում կրոնին ու կղերին ազգապահպանման ու իբր պետական գործունեության ֆունկցիա տալով, Բաֆֆին, որքան քննադատում և ծաղրում, այնքան ավելի բարձր դեր էր հատկացնում նրանց։ Հայ իրականության խեղճության արդյունք է բաֆֆիական հարցադրումը, այն ազգերգական կացության արդյունքը, երբ հալածված ու ոտնահարված իրավունքը պաշտպան չուներ, երբ դատարանն ու օրենքն ուղղված էին այլազգիների, նաև հայերի դեմ, երբ օրվա հացը մուրացող մշակն ու անհող գյուղացին դռնեդուռ ընկած օգնություն էին աղերսում, երբ սեփական ինչքը և պատիվը պաշտպանելու ուրիշ միջոց չէր կիրառվում, քան Քրիստոսի ծառայի ամխիթարողո դատարկ խոսքի պրատպագնդը։ Հեղհեղության դարմանը Բաֆֆին տեսնում է նույնքան խեղճ ու ապիկար ինստիտուտների մեջ։

Իրականում դպրոցը և մանկավարժությունը ենթարկված էին կղերին։ Բաֆֆին սաստիկ բողոքում է դրա դեմ, որովհետև կղերը իր այժմյան պատկերով բարոյական ներգործության ուժը կորցրել էր։ «...Մեր պղոցներում ընդունված կրոնագիտության ուսուցմամբ և նրա դասատվության եղանակը, բացի աշակերտին մոլորության մեջ ձգելից, բացի նրա խելքն ու միտքը չփոթելից, մի այլ նշանակություն չունեին։ Ակրթության խնդիրը հայոց մեջ հոգվածում Բաֆֆին հավասար չափով քննադատում է ընտանիքը, եկեղեցին ու դպրոցը, որովհետև նրանք բոլորն էլ շեղվել են մանուկ սերնդի դաստիարակության ճիշտ ճանապարհից, բայց հենց նրանց ձեռքին պետք է լինի այդ դաստիարակությունը։ Բարին, լավը, հայրենասիրությունը կրթության ու դաստիարակության խնդիրներն են և ամեն ոք պետք է օգնի դրանց արմատավորմանը մանկան հոգու մեջ։

Դպրոցի և մանկավարժության առօրյա գործնական հարցերում Բաֆֆին գոյություն ունեցող վիճակի ուժեղ քննադատ է։ Իբրև մանկավարժ, նա ինքը

Ագռավիսամ ծանր օրեր է ապրել, անընդհատ պայքարի մեջ է եղել, այդ պայքարը լայն արձագանք է գտել մամուլում։ Իբրև մտածող, մանկավարժության մեջ նա տեսնում է հզոր զենք՝ նոր սերունդ դաստիարակելու գործում, կուսակցության ու կրթության աշխարհականացման համար, բայց չի ժխտում և կրոնի դերը, կամենալով ծառայեցնել նրան, որպես ազգության միասնություն նաև դպրոցի միջոցով նպաստող բարոյական ուժ։

Այսպես, ահա, Րաֆֆու հրապարակախոսությունը բոլորվում, սառնում է իր ամբողջական պատկերը 1850—1880 թվականների սկզբի համարյ ինքը՝ Րաֆֆին, անհրաժեշտ է համարել շարադրել իր հրապարակախոսության ծրագիրը «Ինքնախոհություն» և «Հավարի արբանյակները» հոդվածներում։ Զեռք բարձրացնելով ինքնախոհության, այսինքն՝ ազգային տնապարծության վրա կառուցված պահպանողականության ու ազգային ռեակցիոն ուղղության դեմ, Րաֆֆին ինքնախոհությանը հակադրում է ինքնաճանաչողությունը, տնապարծության դեմ ուղղում է Սոկրատեսի այն միտքը, թե «ես միայն մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ չգիտեմ» «Ամբողջ խոսքի մեջն է ինքնաճանաչության բոլոր վսեմությունը»,— գրում է հայ հրապարակախոսը։ Քննադատել, քննական հայացքի տակ առնել իրականությունն ու հասարակությունը — այս Րաֆֆու ելակետն է։ Նրա քննադատության ոլորտն է մտնում, ըստ նրա շարադրության, ընտանիքը — ազգայնության այդ հիմքը, որովհետև այն սկսել է փտել, լեզուն, որովհետև այն այլասերվում է, գրականությունը, որովհետև այն աղքատ է և ժողովուրդը զուրկ է մտավոր սննդից, դպրոցը, որովհետև ամենաթշվառ դրության մեջ է և խմասուկների ձեռքում խաղալիք է դարձել, եկեղեցին, որովհետև այլանդակվել է և նրա վարչությունը գտնվում է բաշիբոզուկների մի կաստայի ձեռքին, լրագրությունը, ամսագրերը, որովհետև փոխանակ արթնացնելու ժողովրդին, թմրեցնում ու ավելի մոլորեցնում են նրան։ «Ինչ որ հայկական է, այն լավ է»,— ասում են պահպանողականները, փտած ու կեղծ ազգասերներըս Րաֆֆին մերկացնում է «ազգասերի» այդ տիպը, մերկացնում է և կոմսոպոլիտի տիպը։ Հրապարակախոսը և նրա համախոհները քանդում և ոչնչացնում են,— այսպես են ասում նրանց մասին խավարամոլները, իսկ Րաֆֆին պատասխանում է.— «Մենք այգեպանի պաշտոն ենք կատարում»,— անխնա կտրում ենք ծառի չորացած, փտած և ավելորդ ճղները, նոր ճյուղ չենք կպցնում, որովհետև նորը ինքն իրան կբուսնի, եթե ծառի մեջ կյանք կա, ուժ կա և հողի մեջ արմատ ունի... Բարեխիղճ վիրաբույժի պաշտոնն է կտրել մարմնի փտած ու ապականված մասը և պահպանել նրա կենդանությունը։ Այդպես է հասկացել Րաֆֆին «Շշակից դերը» հրապարակախոսության մեջ։ Ողորմելի դատարկություն է տիրում մեր կյանքին,— բացականչում է Րաֆֆին և այդ դատարկությունը նա հակադրում է այն նորը, որ ինքը գտնում է ժամանակակից թարմ ուժերի մեջ, նրանց ծրագրի, նրանց գաղափարախոսության մեջ։ Րաֆֆին պատրանքներ չի կառուցում.— նրա հնեաբանը մշակական ուղղությունն է և գաղափարական այն առանձնահատկությունները, որ նա ուներ Գր. Արծրունու համեմատությամբ, իր խոր համակրանքով դեպի դեմոկրատիան։ Արծրունու լիբերալիզմից հեռանալու նախանշանները կան և՛ 1870-ական թվականների րաֆֆիական հրապարակախոսության մեջ, բայց քան պատկառանք կգա ուրնուական թվականներին, երբ գրող ու մտածող Րաֆֆին կկանգնի նոր խնդիրների, դրանց լուծման նոր հեռանկարների առաջ։

* *
*

Րաֆֆու երկերի ժողովածուի առաջին հատորին կցված առաջաբանում արդեն խոսվել է նրա կսմնտիկական ըմբռնումների մասին։

Վիպասան ու քննադատ Րաֆֆու այդ ըմբռնումները մշակվել են 1860-ական թվականների մթնոլորտում՝ Նալբանդյանի և ռուս լուսավորիչների ազդեցությամբ։ Րաֆֆին հետագայում զարգացնում է իր սեփական մտքերը ևս, որոնք լայն դրսևորում են գտնում նրա կոնկրետ քննադատության մեջ։ Որոշակի երևում է, որ գրական քննադատության մեջ նա հրապարակախոս է և գրական երևույթները դիտում է իբրև մարտնչող մտածող։ Ահա՛ նրա երկու հոդվածը Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ» և «Էլի մեկ գոհ» կատակերգությունների մասին. Կրքոտ տողերով է նա գրում վաճառականների, նրանց այլանդակ կենցաղի, այդ սոցիալական միջավայրի տիպերի վերաբերյալ։ Բարոյական անկում, առևտրականի ամենալն կարգի բանկոտություն, մարդիկ ծնունդ են անկարգ, փշացած հասարակական կազմակերպության — այսպես է գրում նա բացասական երևույթների մասին։

«Ասիական վաճառականի տնտեսությունը կայուն չէ,— կրկնում է Րաֆֆին իր հայտնի միտքը։— Ի վերջո, «քանդված օջախը» է մի ցավալի ողբերգություն, որ պատկերացնում է մեր ժողովրդի քանդված դրության տխուր կործանվիլը, և նրա անկումը թե՛ բարոյապես և թե՛ նյութականապես... Սունդուկյանի ռեալիզմի պաշտպանությանն է նվիրված Րաֆֆու կրքոտ խոսքը, որ ավելի տար արտահայտված է «Էլի մեկ գոհ»-ին վերաբերող տողերում։ Պիեսն, հանձին վաճառականների, արտացոլում է «մարմնացած հարստահարությունը յուր բոլոր սարսափելի կերպարանքներով»։ Հրեշավոր ծնունդներ, հարստահարիչներ, խաբեբաներ, ավազակներ — սրանք վաճառականներն են ու սալոմիններըւ Պատերազմողներ են Միքայելն ու Անանին և սրանց «դիակների վրայից կանցնեն նոր հերոսներ, որոնք առաջ կտանեն հաղթության դրոշակը»։

Իբրև գրող ու քննադատ Րաֆֆին շարունակում է «Հյուսիսափայլ»-ի պայքարը գրականության աշխարհականացման ու նրա ժողովրդայնության համար։ Բավական է հիշել նրա առաջաբանները, որ կցված են «Փունջ»-ի հատորներին։ Սակայն ավելի շատ ժողովրդայնության համար նա մարտ է մղում «Կայծեքռումա», առհասարակ վեպի տեսության վերաբերող իր էսթետիկական հայացքներով։ «Քնար մշեցվոց և վանեցվոց գրբուկի առիթով» գրված հոդվածում Րաֆֆին այսպիսի ընդհանրացում է անում.— «Մի ազգի կամ մի ժողովրդի բարոյական և մտավոր պատկերն ավելի ճշտությամբ երևում է նորա բանաստեղծության մեջ. կամենում ես ճանաչել նորա հոգին, կարդա նորա երգերը»։ «Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ» նոր հոդվածում Րաֆֆին վերին աստիճանի բարձր գնահատական է տալիս ժողովրդական բանահյուսությանը, ի դեպ, արտահայտվելով այսպես.— «Մի կտորիկ ժողովրդական լեգենդայի վերա պռնոը կարող է հիմնել յուր հոյակապ ստեղծագործության չինվածքը»։ Ժողովրդական բանահյուսության մեջ քննադատը տեսնում է ժողովրդի մտքի, հոգեբանության, աշխատանքի, կենցաղի, գեղարվեստական մտածողության արտացոլումը։ Իրական է, բնականաբար, բանահյուսության հիմքը, նրա արտահայտչական ձևերի մեջ ժողովուրդը դրսևորում է իր գեղարվեստական հանճարի զարգացման տարրերը եզակականներն ու աստիճանները։

Գրականությունն ուղղված է ժողովրդի մտքին ու սրտին։ Րաֆֆին գաղա-
փարական առողջ տենդենցի կողմնակից է գրականության մեջ և ինքն էլ եղել է
տենդենցի ցայտուն արտահայտություն։ Ու երբ նա լույս է ընծայում «Ջալալեդ-
դինը», ստանալով ընթերցողներից բազմաթիվ նամակներ, իր հերթին նամակ է
գրում խմբագրությանը, հրատարակելով այսպիսի տողեր.— ...«Երբ հեղինակի
խոսքը արձագանք է գտնում մանուկ սրտերի մեջ, նա երջանիկ է...— Սերմ
բարիքեր հոդի վրա է ընկնում։

Սեղմում եմ ձեր ձեռքը, ո՛վ ապագայի քա՜րմ հույսեր, դուք ո՛ղջ լինեք։

Այսպիսի մաքերով Րաֆֆին քնակոխում է 1880-ական թվականների մթնո-
լորտը, ավելի ծանր, ավելի դաժան մի տասնամյակ։ Նրա հրապարակախոսու-
թյան ու քննագատության էվոլյուցիան ակներև է, նա գնում է դեպի նոր պրոբլեմ

ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՈՂՎԱԾՆԵՐ



ԱՐԴՈ ԲԱՐԵԿԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՔՈՒՆՑԱՆՑ

Ձեր վերջին նամակը, որ գրված էր մարտի 7-ին, կարդացի կարի ուրախությամբ։ Շնորհակալ եմ. աշխատել եք հասցնելու «Ազթամարա վանքը» մեր մի հատված բանը Մոսկվա պատվելի Նազարյանցին, որ կարդացի «Հյուսիսափայլի» թերթերու մեջ։ Դարձյալ շնորհակալ եմ պարոն Նազարյանցեն առավել հույժ պատճառ, պատվել է մեր գրվածքը տպելով յուր պատվական օրագրի մեջ, մանավանդ մշակելով նորա թերությունքը։

Այս նամակի ծոցումը կստանաք մի քանի ոտանավոր բաներ, որոնք մեր սեփական աշխատությանց պտուղներն են։ Սուրբ գիրքը կարդալու ժամանակ, տեսնելով շատ հարաբերություն ունին դոքա մեր ազգի այժմյան վիճակի հետ, մանավանդ, կարող են փոքրիշատե ներգործել, ազդել նորա բթացած, թմրած, մարմին դարձած հոգու վերա—ախորժել եմ աշխարհաբար թարգմանել, ոտանավորի ձևով։ Խնդրում եմ, այս ոտանավորները նույնպես անկորուստ հասուցանել պարոն Նազարյանցի ձեռքը. թե կամի կարող է տպել յուր օրագրի մեջ (չկարծեմ, որ նորա օրագրի ախորժակին ընդդեմ գտանվին)։ Ոտանավորներու հետ անպատշաճ չեմ համարում ուղարկել պարոն Նազարյանցին այս իմ առ Ձեզ գրված նամակը. պատճառ, նա կարող էր տեղեկություն ստանալ այն խոսքերեն, որ ես դրած եմ Ատրպատականի միսիոնարներու մասին։

Արդեն — 61 թվականի 5-րդ ամիսն է. բայց «Հյուսիսափայլի» տետրակները տակավին հասած չեն ինձ. կասկածում եմ, չիցե թե օրագիրը գադարած լինի. եթե այս տարի նույնպես բաժանորդ եմ գրված, կարող եք գրել պարոն Նազարյանցին, որ ինձ հասանելի ամսատետրակները Թաբրիզ ուղարկե աղա Գալուստ Շերմազանյանի տետրակների հետ. կամ թե իմ անվամբ ուղարկե Թաբրիզու նամակատունը. այն տեղից գերաստիճան Հովսեփ խանը, նամակատան մեծավորը, անկորուստ ինձ կհասուցանե։

Դուք պահանջում եք ինձանից Ատրպատականի միսիոնարներու մասին Ձեզ տեղեկություն տալ, որով կկատարեմ Ձեր խնդիրը։— Այժմ ես Ուրմիա քաղաքումն եմ. այստեղ է ամերիկյան պրոտեստանտ առաքյալներու և հռովմեական լազարիստյան միաբաններու բոլոր կարողությանց կենտրոնը։ Հիշյալ քարոզիչները, Ուրմիա լճակի արևմտյան ափերում, գտան մի կորած, վերջին ռամկության մեջ ընկած ազգ, որք վարվում էին մի խավար աստվածապաշտպանությամբ, որ առավել նսեմացած էր նեստորի վարդապետությամբ.— դոքա էին ասորիքը.— մի հին հոյակապ ազգի մնացորդք։ Հաչող միջոցները, այլև երկրի պատեհ հանգամանքը շուտով ձեռնտու եղան նորեկ առաքյալներուն առավել հեշտությամբ և առավել սրընթաց առաջ տանելու յուրյանց գործը։— Դոքա էին.— ա. բարեխնամ տերության ազատ թույլտվությունը. բ. ասորաց նյութական անկարողությունը և յուրյանց իշխաններից ունեցած անտանելի բռնությունը—մյուս կողմից եվրոպացի առաքյալներու (մանավանդ ինգլիզներու) դրամացի և տերության կողմից պաշտպանությունը. գ. ասորոց, իբրև մի երեսե ընկած ազգի ստրկական փոփոխամտությունը, և նոցի խորին տգիտությունը յուրյանց առանձին դավանության. դ. ազգի ընկնիլը վերջին հուսահատության մեջ հալածանքի երեսից, և Եվրոպայի մարդիկը տերությունից մեծ պատիվ ունենալով և նոցա հետևողը ամենայն մասամբ պաշտպանված լինելով և այլն, և այլն։

Հռովմեական քահանաները, Թեպետև առաջք ոտք կոխեցին Պարսկաստանի հողի վերա (իբրև 35 տարի առաջ). բայց հառաջադիմությամբ կարի հետ մնացին պրոտեստանտներեն։ Նոքա հազիվ թե կարողացան Ուրմիո քաղաքի և գյուղորեից մեջ ձեռք բերել 200 տուն (գերդաստան) անունով կաթոլիկ պապադավաններ. և Սալմաստ նահանգում՝ մինչև 300 տուն։ Թեպետ կարող էին ավելի առաջադեմ գտնվել քան պրոտեստանտները. պատճառ. կաթոլիկական քարոզությունը առավել հարմարություն

ունեին ժողովրդի ընդունակության հետ. մինչ դորա հակառակ, պրոտեստանտներու քարոզութիւնը փչի նման ծակոտում էին ծիսապաշտ ժողովրդի սիրտերը։

Լուսաւորութեան մասում հռովմեական քահանայքը ոչինչ օգուտ չարդյունավորեցին յուրյանց նոր կրոնափոխ ժողովրդին. միայն քե սասրի ազգի առաջուց աստվածացրած սնապաշտութեան տեղ սովորեցրին պաշտել մի նոր աստված, պապը։ Այժմ կաթոլիկները որպես Ուրմիում, նույնպես և Սալմաստում խոսրովյո գյուղի մեջ ուսումնարաններ ունին երկու սեռ մանուկ մարդերի համար։—Որոց մինի մեջ ուսուցանում են քահանայքը տղամարդերին, իսկ մյուսի մեջ ֆրանսիացի կուսանք աղջիկներուն։ Բայց մինչև այսօր, մի մասնավոր կրթութիւն ունեցող մարդ չէ դուրս եկել նոցա վարժարաններից։ Այն չեմ կարող ուրանալ, որ դուրս եկել են տիրացուներ, որք գիտեն անգիր մի քանի սերտած եկեղեցական աղոթք և մի քանի հատուկտոր բառեր ֆրանսերեն։ Եվ աստվածաբանութիւնից մի քանի թուղթ փաստեր, որով հակաճառութեանց մեջ, կարող էին մի հայ տգետ քահանայի դեմ, հաստատել Պետրոսի գլխավորութիւնը առաքյալներու վերա, սուրբ պապի, նորի հաչորդ լինելով, բոլոր քրիստոնեից վերայ, այս աշխարհում աստվածանալու կարողութիւն ունենալը. մանավանդ երկնքում արքայութեան դռնապան լինելը և դժոխքի մեջ Կերբերոսի պաշտոն կատարելը։

Հետին ժամանակներում, երբ 3 տարի առաջ (իհարկե հայերը կրոնափոխ առնելու համար) Վիեննայի սուրբ Ղազարու միաբաններից Սալմաստ եկան երկու վարդապետներ—հայր Մովսեսը և հայր Կղեմես Սիբլլյանը, ընթերցող հասարակութեան ծանոթ, հնագետ և դրամագետ անձն։ Դոցա գալուստը սկզբում խիթալի էր, շատ վտանգավոր երևեցան հասկացող աչքերու. բայց վերջում համարյա բոլորովին անարդյուն եղան։ Պատճառ, նոքա ոչ մի հայ չկարողացան մոլորեցնել յուրյանց երևելի հայ ազգի և հայ կրոնավորների անունով (որպես սկզբում վարվում էին)։ Շուտով հեռացան նոցանցից նոցա հետևող մի քանի բեթևամիտ գյուղացիներ, երբ հասկացան նոցա չար դարանագործութիւնը։

Միսիոնարները մինչև այսօր ոչ մի հայ չեն կարողացել Աստրպատականի մեջ կրոնափոխ առնել։ Այստեղ ավելորդ չեմ համարում ծանուցանել ձեզ գլխավոր պատճառը. և գուցե ընդունիք։ Առաջին, հայերը Պարսկաստանի մեջ կորած չեն, պահպանում են յուրյանց ազգային իրավունքը, ունենալով յուրյանց հոգևոր

առաջնորդ սուրբ էջմիածնա աթոռից, որ մեծ պատիվ, մեծ իշխանություն ունի, թե՛ տերության կողմից և թե՛ իր վիճակավոր ժողովրդի վերա։ Երկրորդ, առավել վճռական է այս տեղու հայերի տգիտությունը. թե բացի հայից ոչ մի ազգ Իրիստոնյա չէր. ինգլիզ, ֆրանկ, կաթոլիկ անունները լսում են որպես հեթանոսների։ Հայ ազգանունը համարում են կրոնական անուն, որ մնացել էր Քրիստոսից. ե՛վ հայ չէ՛, և Իրիստոնյա չէ՛, ա՛ո քեզ տգիտության կարծիքը, որ առավել օգտավետ գործ է կատարում, քան թե գիտությունը այս տեղում։

Այսքանս բավական է կաթոլիկներու մասին. այժմ խոսենք պրոտեստանտներու։ Ամերիկացի առաքյալները, այդ քրիստոնեական հավատքի ծրաջան մշակները, մեծ գործունեության մեջ են։ Կարծեմ նոքա ո՛չ մի տեղում, ո՛չ մի ազգի մեջ այդչափ սուղ ժամանակում (20 տարու միջոցում) չկատարեցին այն հրաշալի առաջադիմությունը, որպես Ուրմիայի նահանգումը, ձեռք բերելով մինչև 2000 գերդաստան պրոտեստանտ ժողովուրդ, բայց որպիսի ժողովուրդ յուրյանց դավանության մեջ կարի ուսյալ և կրթյալ ժողովուրդ։

Սրբոց սարի լանջանցը վերա (այս անունով գյուղի մեջ) այն, յուր դրությամբ հիանալի ամառանոցումը, որ չէ Ուրմիա քաղաքից ավելի հեռի քան 10 վերստ, պրոտեստանտները ունեն յուրյանց գլխավոր ճեմարանը։ Նորա մեջ մտնում են այն աշակերտները, որք գյուղերու մասնավոր վարժարաններում նախապատրաստված էին։ Գլխավոր ճեմարանը Սրբոի պարունակում է յուր մեջ այնքան ուսման ընթացք, որքան է մի եվրոպական գիմնազիոնի գիտությանց ամբողջ կուրսը. միայն թե այստեղ աստվածաբանական և ճարտասանական մասին շատ հմտանում են աշակերտները, որ այսպես լինի ճարտարախոս քարոզիչք աստծո բանին։ Մանավանդ յուրյանց հին և նոր Իլլղուի լեզուն, ավելի հարակցություն ունելով աստվածաշնչի բնագրի լեզվի հետ, առավել ծանոթանում հն հին կտակարանին։ Բայց մի քանի աշակերտներ միայն, մինչև այսօր սովորել են անգլիերեն, թեպետ շատերը ախորժակ ունին սովորելու, բայց չեն կամենում ուսուցանել ամերիկացիքը. ըստ որում այժմյան տերությունը մեծ կարոտություն ունենալով եվրոպական լեզուների հմուտ անձերի, շուտով թարգմանչի պաշտոն է տալիս այնպիսիներին, որք գիտեին մասնավոր ֆրանսերեն, անգլերեն կամ գերմաներեն և այլն։ Եվ անգլիացիք յուրյանց աշակերտները, յուրյանց գործին պիտանի կա-

ցուցանելու համար կրթում են նորանց ասորաց նոր բանախոսութեամբ։ Քաղաքի մեջ է մի այլ գլխավոր ճեմարան աղջիկներու համար, ուր ուսուցանում են ամերիկացի կանայք։ Նորա մեջ ընդունվում են այնպիսի աղջիկներ, որք նուիրեալ նախապատրաստված էին գյուղերում մանավոր աղջկանց վարժարանների մեջ։ Աշակերտուհիքը, ուսումն ավարտելուց հետո, պսակվում են Սըրոի աշակերտների հետ, այնուհետև կամ պաշտոն են ստանում գյուղերու մեջ վարժապետութեան և կամ քարոզչութեան։

Սըրո քաղաքի մեջ, աղջկանց ճեմարանի մոտ միսիոնարների տանումը, է և մի փառավոր տպարան ամենայն հարկավոր պարագայոք, նորանում տպվել են մինչև այսօր սուրբ գրքի քանի-քանի տեսակներ և այլ զանազան գրյանց ասորոց աշխարհաբար լեզվով։ Նորանում ամիսը մի անգամ տպվում է և մի օրագիր ասորերեն. «Զարիրրդ բարաց» (լուսավորութեան արշալույս) անունով։

Տարակույս չկա, որ ամերիկացիք մի փոքր ժամանակից հետո ձեռք կբերեն բոլոր Ուրմիո նահանգի ասորիքը. պատճառ, վերացել են նոցա հին կրոնքի պաշտպանողքը։ Նոցա հին րաբինեերը, բոլորեքյան այժմ պրոտեստանտներից ռոճիկ են ստանում։ Թեպետ ազգի մի քանի հարուստներ գլուխը կտրած օձի մարմնի նման շարժվում են. բայց նոքա ևս շուտով կդադարին։

Այժմ սկսել են պրոտեստանտները քարոզել գավառի. Նավաշայի, Դիեաբի, Տխուբի սարերում նուլոնեերին, որք նույնպես ասորիք են լեռնաբնակ։ Տարակույս չկա, որ շուտով կանցնեն և ճուլամերիկ մինչև Մոսուելի բերանը։

Այժմ կա այստեղ ինն ամերիկացի միսիոնարներու տուն, որոց մինը է ձրի բժիշկ և քարոզիչ, մինը՝ տպագրապետ, մյուսները վարժապետ և քարոզիչ։ Բացի դոցանցից 2 տուն վարժապետուհիք, որք դաստիարակում են աղջիկները։

Ավելորդ չեմ համարում մի քանի խոսք գրել ասորոց այժմյան կաթողիկոսի վերաւ— Ասորաց այժմյան կաթողիկոսը է Մար Շիմոնը (Տեր-Սիմոնը). գա նստում է այժմ Կոճանիս գյուղում, Տիար-Տխուբ նահանգի մեջ, որից կազմվում է Նբենել գետի հովիտը։ Մար Շիմոնը 10 տարի առաջ, քանի օսմանցիք չէին տիրապետել այն կողմերին (քուրդերի անկախության ժամանակ) յուր քաջ ճարտ ցեղի օգնությամբ, բացի յուր կաթողիկոսական աթոռը հաստատուն պահելուց, պաշտպանում էր և յուր ազգի անկախությունը. որով էր հոգևոր և մարմնավոր առաջնորդ յուր ցեղի հա-

Մար։ (Գուցե ժամանակի շատ խորին հնութիւնից մինչև 10 տարի առաջ այսօրինակ կառավարում էին վայրենի ճուլոները յուրյաց հոգևոր առաջնորդներու ձեռքով)։ Բայց երբ օսմանցիք նվաճեցին Քուրդիստանու տիրող աշիրաթները (իշխանները), չհնազանդվող Մար Շիմոնը պատերազմեցավ Բադրխանբեկի հետ և հաղթվեցավ, Թշնամին կողոպտեց կաթողիկոսի տունը և նորա ցեղը։ Մար Շիմոնը հուսահատված Ուրմի եկավ, յուր ազգից չգտավ այն առաջին պատիվը։ Պրոտեստանտյան հոգին ո՛չ միայն Մար Շիմոնին, այլև նույն ինքն մեծ Նեստորին մոռացման մեջ էր ձգել։ Առժամանակ Ուրմի մնալուց հետո, բոլորովին հուսահատված, կրկին վերադարձավ դեպի յուր երկիրը, այս մի քանի խոսքը ասելուց հետո «Ես խնդրում եմ ձեզանից, որ պինդ կենաք ձեր առաջին դավանության վերա. բայց երբ կամիք կրոնափոխ լինել, մի՛ լինիք պրոտեստանտ. կամ հայ եղեք, կամ ֆրանկ և կամ ռուս։ Բայց լութերի հոգին հաղթող է, նորա կտակը չկատարվեցավ։ Մար Շիմոնը այժմ կենդանի է. բայց օսմանցոց հպատակ իր ցեղովը հանդերձ, վերջին հուսահատության մեջ է. նա հոժար է յուր ազգի մնացորդը կամ խառնել հայոց հետ և կամ ռուսաց։ Ատրպատականի առաջնորդ հանգուցյալ Սահակ եպիսկոպոս Սաթունյանի ձեռքով քանիցս անգամ այդ մասին նամակագրությունք են եղել դեպի էջմիածնա աթոռը. բայց ո՛ւր այդպիսի սրբազան ձգտողություն հայերու կողմից... էջմիածնա վարդապետները քմրած են զեխության հրապույրներով...։ Բայց ռուսերից քահանայք եթե գալու լինեն այս կողմերս, քանի կենդանի է Մար Շիմոնը— շատ շուտով կարող են յուրացնել բոլոր ասորաց մնացորդները. մանավանդ, որ ազգը շատ հակամետ է դեպի ռուսաց կողմը։

Այսքանս բավական է, գուցե դորանով կբավականանա Ձեր հարցասիրությունը։ Ուրիշ ժամանակի եմ թողնում Ձեզ դրել, արդյոք Ատրպատականի հայերը ևս մի ժամանակ կենթարկվե՞ն միսիոնարաց ազդեցությանը, թե միշտ կպահպանեն յուրյանց հայրենական կրոնը։

Մի բան, որ գրած եք Ձեր եղբոր մասին, չեմ կարող հանձնառու լինել։ Ես ինքս ձանձրացել եմ այն առևտուրից, որ Թիֆլիսում կատարում ենք. պատճառ, ունի նեղություն չափից դուրս, բայց վաստակը կարի սակավ. Մտադիր եմ Պոլիս գնալ, որ Պոլսից դեպի Թաբրիզ եվրոպացոց մանուֆակտուրայի առուտուրք առնեմ։

Քանիցս անգամ Ձեզ գրած եմ, այժմ կրկնում եմ, որ մի քանի հատ ռուսերեն ընտիր թարգմանություններ, մանավանդ ռոմանս, իմ համար ուղարկեք. թե Մոսկվա կամ Ս. Պետերբուրգ բարեկամ ունիք, կարող են առնուլ, իսկ նոցա գինը որքան էլ լինի կգրեմ Թիֆլիսուց, անհապաղ Ձեզ հասուցանեն։ Այս պահանջում եմ, որովհետև կասկածում եմ, այս տեղում ռուսաց լեզուն ամենևին անգործածությունից մոռանալու։ Մնաք բարև։

Ձեր Հ. Մ. Մելիք Հակոբյանց

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՐԲԵՐՈՒՀԻՆ

Հավասարության և ազատության հարցը կանանց սեռի քանի դար առաջ սկսավ մշակվել քաղաքակիրթ ազգերի մեջ, և վերջապես ներկա դարու առաջին կիսաբաժնում նա իր լուծումն ստացավ նորանով, թե կինը մարդկային կյանքի մի անդամն է, ուրեմն և պիտի լինի բաժանորդ նորա իրավունքներին։

Բայց թե մինչև ո՛ր աստիճան իրագործվեցավ այդ հարցի վճիռը լուսավոր Եվրոպայի և Ամերիկայի մեջ, մենք թողնում ենք դորա վրա խոսելը, միայն կասեմք մի քանի խոսք, թե որպիսի ընդունելություն գտավ նա հայերի կյանքում։

Արդարև, մի քանի եվրոպական քաղաքներում, որոնց թվումն է և Թիֆլիսը, հայերի ընտանեկան կյանքը նոր կերպարանք ստացավ։

Որպիսի՞։

Հայը դուրս բերավ հարեմի դարավոր բանտարկությունից յուր կինը, նա ձգեց նորա երեսից ծածկապահության քողը, նա թույլ տվեց նորա լեզվին խոսել և մտածել օտարների հետ։ Եվ սիրախնդիր տղամարդը, որո համար հայ կինը մի ծածկյալ գանձարան էր, պատիվ ունեցավ հանդիպել նորան թատրոններում, պարահանդեսներում, փողոցներում և ամենայն զբոսարաններում։

Բայց հին հարեմային դրության կուսակիցները դեռ ո՛չ բոլորովին անհետացած էին։ Ամեն գերդաստանում մի ծերունի պապա, կամ մի պառավ մամա, սկսան խորթ աչքով նայել մի այդպիսի նոր երևույթի վերա։ Նոքա բողոքեցին այդ ընտանեկան հե-

դափոխության դեմ, կոչելով նորան լրբություն, շռայլություն, անամոթություն, մի խոսքով, անբարոյական մոլություն։

«Կրթյալ երիտասարդությունը» իբրև գեղեցիկ սեռի բռնաբարված իրավունքների պաշտպան, հերքեց նոցա բողոքը, մի քանի փաստերով, թե դուք փտած մարդիկ եք, դուք կուրացել եք հնամոլության նախապաշարմունքներով, դուք մեղանչում եք հավասարության և ազատության սկզբի դեմ...

Կուսակցություններ կազմվեցան։ Ընտանեկան պատերազմը սկսվեցավ։ Այդ պատերազմը անխզելի կերպով շարունակվում է մինչև այսօր և գուցե ընդ երկար տևելու է ապագայում...

Բայց ո՞ր կողմին պետք է արդարության իրավունքը տալ։

Ո՛չ առաջինին և ո՛չ երկրորդին։

Երկուքն էլ ունեն յուրյանց սխալ կողմները։

Արդարև, ծերունի պապայի, այդ գերդաստանի պատրիարքի, արթուն աչքը անդադար հսկում է յուր ընտանիքի վերա։ Նա հավարձակ մուտք չի տալիս սիրախնդիր երիտասարդին սողալ յուր գերդաստանի սրբարանում և կոկած, սերտած, օտարազգի բառերով քաղցրախոսել, սեթևեթել յուր օրիորդ թոռնիկին, յուր մանկահասակ հարսի հետ, և խելքից հանել նորանց։ Այդ պատճառով, երիտասարդը վշտանալով հեռանում է հայի գերդաստանից, նա այլևս չէ դառնում այնտեղ, որովհետև ծերունու հեքիաթները նորան դուր չէին գալիս, որովհետև նորա ընտանեկան շրջանի երեվույթը համապատասխան չէր նորա նպատակներին, և ոչ գոհացուցիչ նորա կրքերին ու պահանջմունքներին...

Կրթյալ երիտասարդությունը պահանջում է հեռացնել, յուր կարծիքով, այդ ծերունի կերբերոսները. անհետացնել նոցա իշխանության բռնաբարությունը և կատարյալ ազատությունը ներս տանել հայ ընտանիքի մեջ։

Շատ լավ։

Մենք նպատակ չունեմք վիճել ազատության սկզբի դեմ։ Միայն կրկնում ենք, թե մենք արդեն տվինք փոքր ի շատե ազատություն մեր կնիկներին, բայց արինք նորա առաջև հարեմի փակված դուռը, և թույլ տվինք նորան հրապարակ ելանել իբրև մարդ, իբրև մարդկային անհատական իրավունքների բաժանորդ։

Բայց կինը ինչո՞վ արդյունավորեց այդ առանձնաշնորհությունը։

Նա հանդիպեցավ մեր կյանքի ասպարեզում, ոչ իբրև մարդ։— գործունյա, աշխատավոր և կարեկից յուր տղամարդի հոգ-

սերին, այլ որպես խրձիկ, կուկլա, զուգված, զարդարված մոդնի մագազինների պաճուճանքներով, և յուր դեմքը խարդախած արվեստական գեղերով...

Նա եղավ յուր տղամարդի համար մի նոր տանջանքի մեքենա, մի նոր հոգածության առարկա։ Նա գերի արեց յուր տղամարդին, որ առաջ նորա վերա իշխում էր, որո ինքը առաջ ստրուկըն էր։

Արևելյան կյանքի մեջ, ուր հայ կինը դեռ ապրում է նահապետական շրջանում, ուր նա (որպես ոմանք մտածում են...) դեռ ստրուկ է յուր տղամարդի և տան ծերունիի կամքին, կինը ոչ միայն անկեղծ մաքրությամբ պահպանում է յուր բարոյական սրբությունը, այլ նա բաժանորդ է լինում յուր տղամարդի հոգսերին, նորա զբաղմունքներին, նա յուր տղամարդի հետ լծորդաբար կրում է յուր վերա ընտանիքի ապրուստի պիտույքը հաղթահարելու հնարները։

Այնտեղ կինը կուկլա չէ, և ոչ կրթյալ երիտասարդության ցնորքների առարկա։ Այնտեղ կինը ժիր և գործունյա տանտիկին է։ Նա թխում է յուր զավակների համար հաց, եփում է նոցա համար կերակուր, լվանում է նոցա լվացքը, կարում է նոցա հագուստը։ Նա օգնում է յուր տղամարդին նորա հողերի մշակության մեջ, կալսում է նորա կալը, մաքրում է նորա ցանքերը ավելորդ խոտաբույսերեն։ Նա օտար մարդի հետ գործ չունի։ Նա յուր սերը, յուր սիրտը նվիրած է յուր ամուսնուն։

Բայց մեր քաղաքի ազատության վայելող աղջիկ-պարոնը խոհանոցը չի մտնում, որովհետև կերակուր եփելու համար խոհարարներ կային, նա հաց չէ թխում, որովհետև կոռ-փռնչին միշտ պատրաստ էր այդ պաշտոնը կատարելու, նա հագուստ չէ կարում, որովհետև այդ դերձակների գործ է։

Ուրեմն ի՞նչ է շինում նա։

Գիշերները վարում է զվարճությունների մեջ, զարթնում է ժամը տասին, շատ անգամ տասներկուսին, մի երկու ժամ հյարկավոր են նորան լվացվել, հագնվել և հայելվո առաջ երեսը կոկել։ Այնուհետև նա դուրս է գալիս փողոց, մագազիններին այցելության գործելու, բուլվարները չափելու, պատերի վերա աֆիշաներ կարդալու և սիրուն տղերանց նայելու...

Ահա կանանց ազատության հետևանքը մեր կյանքի մեջ։

ՎԻՐԱՁ ԻՇԽԱՆԻ ԱՐՔԱՅԱԶՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՑԱՆՔԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Իշխան Ալեքսանդրի ժամանակը դեռ շատ չէ հնացել։ Պարսկաստանում մինչև այսօր ծերունի ալևորներ հիշում են նորա պատմությունը։ Ով մեք, նյութեր քաղելով կենդանի ավանդություններից, կաշխատեմք տալ ապագային մի քանի տեղեկություն նորա կյանքից։

Իշխան Ալեքսանդրի Պարսկաստան գնալու պատճառները այնքան հայտնի են ժամանակակից պատմագրությանը, որ մենք ավելորդ ենք համարում այդ մասին մի բան խոսել, միայն նա գնաց այնտեղ, երբ Ղեջարյան գահին տիրում էր Ֆեթհ-Ալի-Շահը։ Շահից նա գտավ արժանավոր ընդունելություն, որ որոնում էր ապաստան մի այլ տերության մեջ։

Ֆեթհ-Ալի-Շահի հրամանավ Ապպաս-Միրզան, որ և կոչվում էր Նախբուլ-Սալթանա, այսինքն՝ Շահի ժառանգը, և միևնույն ժամանակ Ատրպատականի կուսակալը, շնորհեց իշխան Ալեքսանդրին Սալմաստա գեղեցկագիր գավառում մի քանի գյուղորայք նորա կացարանի և ապրուստի համար։ Այդ գյուղորայքից իշ. Ալեքսանդրը ընտրեց յուր բնակության համար Խորովիա անունով հայաբնակ և Ասորոց գյուղը, որ յուր այգևետ և ծառազարդ դիրքով, մաքուր ջրով և հստակ օդով, առժամանակ կարող էր մխիթարել նորանում կախեթիայի լաղձանքները։

Խորովիայում իշխան Ալեքսանդրը շրջապատված էր այն վրացի տղամարդերով, որք ավելի քան հիսուն հոգի գաղթել էին նորա հետ։ Նոցա թվում կային և մի քանի անձինք ազնվական տոհմից, որք իշխանի դժբախտության ժամանակ չհեռացան նորանից։ Դոցա մեջ նշանավոր էին Ղարսաման-բեկ, Յոթան-բեկ, Մակա-բեկ, Աղա-բեկ, Բուստեմ-բեկ և այլն։

Ֆեթհ-Ալի-Շահը սիրում էր իշխան Ալեքսանդրին, նա շնորհեց նորան Վալիի Գուրջիստան տիտղոսը։ Ով Վալին տարենը մի անգամ Թեհրան էր գնում Շահի հետ տեսություն անելու, ուսկից դառնում էր նա քանկագին ընծաներով։

Ֆեթհ-Ալի-Շահը այնքան պատվեց նրան, որ մի անգամ, երբ նա ուներ մեծահանդես Սալամ (ընդունելություն) Նիգարիստանի այգիի ապարանքում, ընդունեց իշխան Ալեքսանդրին յուր ամենաբարձր դրանիկների թվում, խիստ փաղաքշական խոսքերով, և

ընդունելության ծեսերն կատարվելեն հետո, Շահը հրամայեց նույն հանդիսի պատկերը նկարել ապարանքի դահլիճի պատի վերա, որտ մեջ առաջին տեղը բռնում է իշխան Ալեքսանդրիի պատկերը[1]։

Որը սկսվեցավ Պարսից և Ռուսաց պատերազմը, իշխան Ալեքսանդրը առանձին զորախմբով, որ կազմված էր պարսիկ, ղիզիլբաշ զինվորներից, և յուր հետ ունեցած ազնվական վրացի զորապետներից, Տաճկաստանի-Քուրդիստանի կողմից, օգնում էր պարսիկներին։ Բայց, երբ նա լսեց Ռուսաց զորքերի հաղթությունը, նոցա Արաքսից անցնելը, Խոյ, Սալմաստ, Ուրմի և Թաբրիզ քաղաքների առնվելը, նա բոլորովին հուսահատվեցավ, նորա զինվորներն ցրվեցան, և ինքը մի քանի յուր հավատարիմներով դարձավ Տաճկաստանի Վան քաղաքը, ուր նա սպասում էր պատերազմի վերջին։

Թուրքմենչայի հաղթությունից հետո, երբ Ռուսաց զորքերը թողեցին Ատրպատականը, մի քանի ամիս անցնելով իշխան Ալեքսանդրը դարձավ Խոսրովիա։ Բայց նա չգտավ այնտեղ յուր վրացիքը, նոքա Ռուսաց զորքերի հետ գաղթել էին դեպի Կովկաս։

Իշխան Ալեքսանդրի վիճակը այնուհետև նախանձելի չէր։ Գլխավորապես այն պատճառավ, որ Շահի առաջին վեզիրը, Հաջի-Միրզա-Աղասին, այդ բնավորությամբ դերվիշ և մոլլայի կրթությամբ մոլեռանդը, որ յուր գուշակություններով կարողացել էր գրավել սնահավատ Շահի անչափ համակրությունը յուր գերբնական գիտության մասին—այդ վեզիրը սկսավ վատ վարվել իշխան Ալեքսանդրի հետ։ Նա կտրեց իշխանի հասույթները, որ ստանում էր կառավարությունից, և հետզհետե խլել նորանից Շահի նորան պարգևած գյուղորայքը։

Իշ. Ալեքսանդրը յուր հույսը կտրեց պարսիկներից, այն հույսը, որո մեջ խաղում էին նորա քաղաքական երևակայություններ երը...

Բայց նորա գլխում հղացավ մի նոր երևակայություն։

Կովկասի վայրենի լեռնաբնակների քաջություններով միշտ հրապուրված իշխանը, Սալմաստա սահմանակից Քուրդիստանի լեռներում, Ջուլամերիկում, գտավ մի վայրենի ազգ, նույնպես քաջ պատերազմող և հանդուգն։

Այդ ազգը կրոնքով նեստորական, կոչվում էր Ջուլո, մի հին

---

[1] Այդ պատկերը Նիգարիստանի ապարանքում մնում է մինչև այսօր։

ցեղ ասորիներից, որք օգուտ քաղելով յուրյանց լեռների դժվարմատչելի դրությունից, ժամանակի խորին հնությունից պահպանում էին յուրյանց անկախությունը։ Նորանց կառավարում էր յուրյանց եկեղեցական գլուխը, յուրյանց պատրիարքը, որ կոչվում էր Մար-Շիմոն (տեր Սիմոն), որդոց որդի ժառանգաբար տիրում էր գուցե սուրբ Սիմոնի գահին, միշտ յուրյանց վերա կրելով Շիմոն անունը։

Մար-Շիմոնը էր նույնը Ջուլամերիկում, ինչ որ Շամիլն էր Դաղիստանում, այսինքն՝ նա էր և՛ հոգևոր, և՛ մարմնավոր գլուխը յուր ժողովրդի, նա Քրիստոսի խաչի հետ կրում էր և պատերազմական սուրը։

Իշ. Ալեքսանդրը մտածեց կցել մի ըարեկամական կապ Մար-Շիմոնի հետ, գուցե օգուտ քաղեր նորա բազմաթիվ պատերազմող ցուղներեն։ Եվ այդ նպատակավ իշխանը պսակվեցավ Մար-Շիմոնի եղբոր, երեխայությունից կուսակրոնության ուխտած դստեր հետ։

Բայց իշխանի նպատակները չպսակվեցան։ Որովհետև, երբ նա վերջին անգամ գնաց Թեհրան, մահը այնտեղ վախճան տվեց նորա բոլոր երևակայական նպատակներին... Նա մեռավ հետին աղքատության մեջ։

Նորա վերջին կտակը եղավ այն, որ յուր մարմինը տարվի Վրաստան, և այդ պատճառավ նորա դագաղը երկար անթաղ դրրված էր Թեհրանի Շահ-Աբդուլ-Ազիմի դերվազայի հայոց եկեղեցումը։ Բայց կտակը չկատարվեցավ։ Եվ Յագուբ խանը նույն եկեղեցու գավիթում, դռան հանդեպ թաղեց իշխանի մարմինը։

Թեհրանում շատ քիչ մարդիկ գիտեն, թե հայոց եկեղեցվո դռանը դրած այն փառազուրկ և աննշան գերեզմանը ամփոփում էր յուր մեջ վրաց սպառված իշխանության վերջին նշուլները։

ՎԱՀԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Հայերը, կորցնելով յուրյանց քաղաքական նշանակությունը, ենթարկվում են մահմեդական ազգերի իշխանության ներքո։ Նոցա հայրենական հողը դառնում է օտարների կալվածք, իսկ իրանք նույն կալվածատիրոջ ստրուկները։

Անշահավետ պայմանները կալվածատիրոջ մշակների հետ ստիպում են նորանց թողնել հողը, թողնել երկրագործությունը և դաղթել դեպի քաղաքները։

Եվ այդպիսյավ հայերը հետզհետե յուրյանց բնակությունը կենտրոնացնում են մեծ մասամբ Տաճկաստանի, Հնդկաստանի և Պարսկաստանի գլխավոր քաղաքներում։

Այդ քաղաքներում ընտրում են նոքա ավելի ազատ պարապմունքը—վաճառականությունը։ Հայերի ճարտարությունը այդ արհեստի մեջ շուտով երևան է լինում։ Վաճառականությունը հաջողվում է նրանց, և նոքա գործում են մեծամեծ առաջադիմություններ։

Դորա պատճառն այն էր, որ հայերը յուրյանց կրթությունով և սումունքով ավելի բարձր աստիճանում գտնվում էին, քան այդ երկրների մյուս ազգաբնակությունները, որպիսի էին—պարսիկները, թուրքերը, տաճիկները, հնդիկները և այլն։

Ուրեմն ասպարեզը բաց էր հայերի առջև։ Եվ նոքա սկսում են առաջին դերը խաղալ ասիական վաճառականության մեջ։

Իսկ այդ բախտը երկար չէ տևում։

Ասիական վաճառականության արդյունաբերությունքը հրապուրում են եվրոպացիների շահասիրությունը։ Եվ վերոհիշյալ երկրներում հայտնվում են անգղիացի, գաղղիացի, հույն և զվիցերիացի վաճառականների մեծամեծ տներ։

Ասել է, թե հայերի առևտրական ասպարեզում երևում են ավելի զորեղ ախոյաններ։ Սկսվում է մրցությունը։ Բայց հայերը չեն կարողանում դիմագրավել եվրոպացիներին և ընկճվում են։ Եվրոպացիք խլում են նոցա ձեռքեն ասիական վաճառականության ասպարեզը։

Եվ բնականապես այդպես է լինում։ Հաղթությունը միշտ մնում է զորեղի կողմը։

Մինչդեռ հայը առնում էր յուր ապրանքները երկրորդական և երրորդական ձեռքերից, հետզհետե թանկ նստեցնելով յուր վերա վաճառքի գները, եվրոպացին բերել էր տալիս նույնը ուղղակի նորա աղբյուրից, այսինքն նորա կենտրոնից, ավելի էժան գնով։ Ուրեմն համեմատությունը վաճառքի մեջ, գների վերաբերությամբ, լինում էին զանազան։—Եվրոպացին կարողանում էր վաճառել յուր ապրանքը վաստակ շահելով, իսկ հայը վաճառում էր նույնը, կամ առանց վաստակի և կամ վնասով։

Հայերը չգիտեին եվրոպական լեզուներ, և ծանոթ չէին եվ-

րոպայում երևելի վաճառական տների և գործարանների հետ։ Այդ պատճառով և չկարողացան ունենալ նոցա հետ ուղղակի հարաբերություններ։ Այդ հանգամանքներով, նոքա, ոչ միայն զրկվում էին ուղղակի եվրոպայից ապրանքներ բերել տալու միջոցներին, այլև ստիպված էին յուրյանց երկրի մշակության հում բերքերը վաճառել դարձյալ նույն երկրում գտնված եվրոպացիների վերա։ Եվ այդպիսյավ ասիական վաճառականության երկու փոխադարձ ծայրերն ևս անցանում են եվրոպացիների ձեռքում։

Բացի անհմտությունը վաճառականության արհեստի մեջ, Ասիայում հայերի եվրոպացվոց հետ մրցություն անելու անկարողության գլխավոր պատճառներից մինն էլ այն էր, որ նոքա չէին այնպիսի մեծ դրամատերներ, որպես նոցա հակառակորդները, որոց ուժը կազմված էր մեծամեծ ընկերություններից։

Հայերի թուլության վերչին հանգամանքին կարող էին նպաստել նույնպես ընկերությունները, զանազան մասնավոր գումարներից կազմելով նշանավոր դրամագլուխներ։

Այդ հնարը նույնպես գործի դրվեցավ։ Հայերի մեջ երևեցան զանազան ընկերություններ։ Իսկ նոքա ոչ միայն եղան ապարդյուն, այլ յուրյանց գործը մի կամ երկու տարի վարելեն հետո տասն տարիներով ակսան միմյանց հետ դատ վարել, մինչ կարողացան բաժանվել միմյանցից։

Ի՞նչ էր դորա պատճառը։

Թեև շատերը հայերի անմիաբանությանն են վերաբերում այդ, իսկ ես պատասխանում եմ,— պատճառն էր նոցա գիտնական վաճառականության արհեստը չիմանալը և հաշվապահության կանոններին անտեղյակ լինելը։

Ահա այդպիսով, հայերը, լինելով մի ժամանակ գլխավոր ներկայացուցիչքը ասիական վաճառականության, սկսում են նոքա երկրորդական դերը խաղալ, դառնալով եվրոպացի վաճառականների օգտին գործիք և նոցա շահերուն ծառա։

Երկաթուղու գիծը հասավ մինչև Խիֆլիս, և նա կգնա մինչև Կասպից ծովը։ Կովկասը կլեցվի մի մեծ հոսանքով եվրոպացի շահախնդիրների։ Նոքա կհայտնվին յուրյանց գիտությամբ, ճարտարությամբ և ամենայն ֆոկուսներով։

Կսկսվի մրցությունը և այտեղ։

Ի՞նչ պիտի անեն հայերը։ Պատրաստվա՞ծ են նոցա հետ մրցելու։

Կարծեմ, ո՛չ։

Եթե հայը Կովկասում ևս կկամեր տեղի տալ օտարազգիներին յուր վաճառականության ասպարեզը, թող նա դաս առնե այն հանգամանքներից, ինչ որ պատահեցան նորա ազգակիններին Ասիայում։

Մենք պատմական կերպով ցույց տվեցինք բոլոր պակասությունները, որք առիթ տվեցին հայերի հաղթվելուն։ Թող Կովկասի հայերը լրացնեն այդ թերությունները։

Մենք կպարզեմք փոքր ի շատե մեր միտքը։

Մի հաստատուն ճանճուր Իվանիչի մոտ աշակերտ դառնալով, նորա խանութը սրբելով, տանը մխ, ձուկ և գինի տանելով, տանիցը ճաշ բերելով, և մի քանի տարի այս ծառայական գործերի մեջ պարապվելով, հետո նույն խանութի պրիկաշչիկ դառնալով, և մի փոքր գումար կազմելեն հետո, յուր համար առանձին դուքան բաց անելով, առ և տուր սկսել,— դա չէ նշանակում գիտնական վաճառական դառնալ։ Թեև մեր Կովկասի վաճառականների գործունեությունքը սկսվում են ըստ մեծի մասին այդպիսի միջոցներով։

Վաճառականությունը ինքնըստինքյան մի արհեստ է։ Նորան պետք է գիտնական կերպով ուսումնասիրել և փորձով իրագործել։ Մի այդպիսի վաճառականությունը սովորելու համար ճանճուր Իվանիչի խանութը չէ կարող վարժարան լինել։ Նորան պետք է ուսանել Անգղիայի, Գաղղիայի կամ Գերմանիայի վաճառականական ուսումնարաններում։

Իհարկե, այդ հնարը մատչելի չէ կարող լինել մեր ժողովրդի չքավոր դասին։ Նոցա որդիքը, եթե միտք ունին առևտրական դառնալ, դարձյալ ստիպված են ճանճուր Իվանիչի խանութում աշակերտել։

Իսկ այդ ճանճուր Իվանիչները—փոխանակ յուրյանց որդիքը Ռուսաստանի մայրաքաղաքները ուղարկելու, որ այս կամ այն գիտությունը սովորեին, միմիայն չինովնիկ դառնալու նպատակավ (որոց մեծ մասը այս նպատակին չհասնելեն հետո, հոր հարըստությանց ցեց են դառնում), թող նոքա մտածեն այդ մասին յուրյանց որդիք գիտնական, եվրոպական կրթությամբ, վաճառականներ անելու։

Միայն ռուսերեն լեզու գիտենալով և վրացերեն լեզվով յուր դավթարները խժբշտելով, չէ կարելի եվրոպական վաճառական դառնալ և եվրոպացվոց հետ մրցություն անել։ Դորա համար անհրաժեշտ պետք է սովորել եվրոպական լեզուներ, գաղղիերեն,

անգղիերեն, գերմաներեն, որպեսզի ուղղակի Եվրոպայի երևելի վաճառականական քաղաքների հետ, որպիսին են Մարսել, Մանչեստր, Լեպցիխ—հարաբերություններ ունենալ։

Կովկասը հարուստ է հում բերքերով։ Կովկասի մետաքսը, բուրդը, բամբակը, կաշին, ընկուզենու տախտին, չոր մրգեղենները, գինին, և այլ զանազան բերքերը, կարող են վաճառականության առատ մթերք դառնալ։ Դորանց օրինավոր կերպով արդյունաբերելու համար պետք է քողուլ նահապետական հին ձևերը և սովորել գյուղատնտեսական արհեստը։ Որպեսզի փոխադրելով մեր երկրի հում բերքերը դեպի արտաքսհման, այնտեղից ներս բերեին պատրաստի, արվեստագործած ապրանքներ։

Գյուղատնտեսությունը ձայնհանդում է հող, զանազան մեքենաներ, գործիքներ, ուրեմն արծաթի անհրաժեշտ հարկավորություն։ Մեր դրամատերները մի շար բախտով անձնատուր եղած կապալներին, ուշադրություն չեն դարձնում այդ արհեստի վերա, նոքա չեն ցանկանում հողի և բնության հետ գործ ունենալ, որ միակ աղբյուրն է մարդկային հարստության։

Իսկ վաճառական դասի մեծ մասը յուրյանց առևտրական գործունեության շրջանը դարձնում են մասնավոր գումարներով։ Այստեղ դեր է խաղում վարկը, համարումը (доверия)։ Մի փոքրիկ անհաջողությունն, մի քանի շար լեզուների բամբասանքը, մի րոպեում կարող են ոչնչացնել և՛ վարկը, և՛ համարումը։ Այդ պատճառավ սնանկությունը սովորական դեպք է մեր վաճառականների մեջ։

Վաճառականության գործունեության շրջանը դարձնել միայն դատարկ վարկով և համարումով, դա կլինի ժամանակավոր և անհիմն։

Վաճառականի գործունեությունը պիտի հիմնվի կենդանի կապիտալի վերա։ Մի այդպիսի կապիտալի գումարը պիտի նշանավոր քանակություն ունենա։ Ուրեմն այստեղ ևս բարձրանում է ընկերության անհրաժեշտ կարևորությունը։

Ընկերությունների գլխավոր օգուտներից մինն էլ այն կլինի, որ մեր վաճառականները կդադարեն մենավաճառության ինտրիգաններով մինը մյուսին վնասել, յուրյանց արհեստակիցներին ստորացնել, որ դուրս ցցվի յուրյանց անձնական նսը։

Ընկերության մեջ վաստակը և օգուտը կլինի ընդհանուր։ Եվ նոքա ընդհանուր ուժով կկարողանան եվրոպացիների հետ մրցություն անել։

ԷԴ ԷԼ ՔԵՉ ԿՐԻՏԻԿԱ

«Արարատ» ամսագրի անցյալ տարվա ժա. և ժբ.-երորդ համարներում կարդացի, «Թե ո՞ւր են Ավարայր և Տղմուտ» վերնագրով պ. Գալուստ Շերմազանյանի մի երկար և ձիգ ընդդատություն պարոն Բաֆֆիի Պարսկաստանի ուղևորության երկրորդ նամակումը հայտնած մի կարծիքի դեմ, որով պարոն ճանապարհորդը հիշում է մի քանի ժողովրդական ավանդություններ Վարդանի, նորա պատերազմի և Ավարայրի դաշտի մասին։

Պարոն կրիտիկոսը յուր միտքը հաստատելու համար, անխորտիր կերպով յուր քննադատության մեջն է կոխում բոլոր ուսած և սերտած խոսքերը Խորենացիեն, Ղազար Փարպեցուց, Ինճիճյանից, Եղիշեից, Այսմավուրքից, Ջամչյանից և այլ պատմագրություններից։

Հիշյալ պատմագրություններից բերած վկայությունները այնքան խառնիխուռն և միմյանց հակասական են, որքան չէ վերաբերում և ոչինչ կապ չունի նորա քննադատության հետ պարոն կրիտիկոսի կյանքի ամբողջ պատմությունը, այսինքն 1865 թվի Թիֆլիսի անկարգությունը, Մագվա Ալիխանի որդվո հարսանիքը, յուր որսորդությունը խանի որդվո հետ, Ջավոյի և Գասպարի վիրավորվիլը, պար եկող Մուրուֆի սպանվիլը, Սեմեոն վարդապետի հեքիաթները, Ռուսաց և Պարսից պատերազմը... և այլն, և այլն... պարոնը դեռևս շատ բաներ է ունեցել գրելու, ափսոս, որ շատն մոռացած է եղել...

Իսկ մեք կրավականանամք այնքանով միայն, որքան պարոն կրիտիկոսը կարողացել է գրել, թեև նորա գրվածքի խառսի մեջ ոչ միայն շփոթվիլ կարող է ամեն մի ընթերցողը, այլանց մի որոշակի գաղափարի ամբողջություն դուրս բերելու նորա խոսքերեն, այլ շփոթվում է ինքը գրողը, երբ նկատում ենք, որ նա շատ տեղերում ինքն հակառակում է յուրյան, որը կաշխատենք ցուցանել մեր ընթերցողներին։

Միայն պետք է խոստովանած, թե մեք շատ հեռու ենք այն նպատակից, որ աշխատենք ապացուցանել, թե որքան ուղիղ, կամ սխալ է պարոն Բաֆֆին յուր կարծիքի մեջ, Ավարայրի դաշտի Խոյ քաղաքի, այսինքն՝ Դուզլաղի մոտ լինելու մասին։ Որովհետև ինքը ճանապարհորդը վճռողականապես չէ հիմնվում յուր կարծիքի վերա, այլ նա հայտնում է մի քանի կենդանի ավանդություններ, ասելով. «Ես նայեցա», խիստ հավանական է մտածել, թե

Վարդանանց պատերազմը, կամ սրբուն Վարդանա նահատակվիլը եղել է վերոհիշյալ մատուռի մոտակայքում, այսինքն՝ Ղոթուր գետի ափերու մոտ, որ կարծվում է պատմական Տղմուտը։ Թեպետ հայերի շատերի կարծիքն այդ է, պատերազմի մագվա դաշտերում լինելը, բայց այդ կարծիքը տարակուսական է։ Որովհետև այնտեղ ոչ մի ընդարձակ դաշտ չէ հիշեցնում մեզ Ավարայրին և ոչ մի գետ՝ Տղմուտը։ Բայց առավել հավանական է, թե գլխավոր պատերազմը եղել է Դուռլուղի հարավային կողմում, այն նվիրական աղբյուրների և այն ըստ ավանդության նետերով ծակծկոտյալ քարաժայռի մոտակայքում, ուր փոքր-ինչ Ղոթուր գետը յուր պղտոր ջրով, լիլային և ցեխոտ հատակով, ձևացնում է մի հեղեղատ, որին այլ անուն անհարմար էր տալ, քան անունս Տղմուտ։ Եվ ընդարձակ դաշտը, այնպես ցամաք և անապատ, հիշեցնում է ողբալի Ավարայրը...։

Պարոն Շերմազանյանը, վերոհիշյալ խոսքերի ճշմարտությունը հերքելու համար, թափ տալով ամբողջ հայ պատմագրությունը, դուրս է բերում զանազան վկայություններ, իբր թե յուր միտքը հաստատելու Ավարայրի դաշտի պարոն Բաֆֆիի ցույց տված տեղում չլինելու մասին, չնայելով, որ նույնիսկ վկայություններով նա հաստատում է պարոն Բաֆֆիի կարծիքը։

Պ. Շերմազանյանը հիմնվելով Ղազար Փարպեցու (երես 8) և Ջամչյանի (հատ. բ. երես 67) խոսքերի վերա, ասում է. «Մեր պատմիչներն հայտնի ասում են, թե Պենտեկոստեի մեծ տոնի ուրբաթ օրը Արտաշատ քաղաքեն, այսինքն Խորվիրաբեն սուրբ Վարդանը վեր առավ հայերի գունդն և հասավ Արտազ գավառի Ավարայր գյուղը կամ դաշտը, և շաբաթ օրը պատերազմը արին, այսինքն մին օրվան ճանապարհ»։

Ընդունելով առաջմանակ հիշյալ խոսքերը իբրև ճշմարտություն մեք հասանում ենք մի այդպիսի եզրակացության, թե պ. կրիտիկոսը հայոց բանակի արշավանքի երկու ծայրերը դնում է Արտաշատեն կամ Խորվիրապեն սկսյալ մի օրվա ճանապարհի հեռավորությամբ մինչև Արտազ գավառի Ավարայր գյուղը, որ համարում է վերջին կետը, ուր վերջացած է պատերազմը։

Այժմ հարցը նորանումն է, թե Խորվիրապի մոտեն ճանապարհ ընկնելով հայոց բանակը նույն ուղղությամբ, որով տանում է նորանց պ. Շերմազանյանը, մի օրվա մեջ մինչև ո՞ւր կարող էին հասնել։

Երկաթուղու դաշտափարն անգամ այդ դարումը ծանոթ չէր հայերին։ Թեև ընդունեմք հայոց բանակը մի օրվա մեջ անդադար առաջ տանելու լիներ յուր արշավանքը, նա կհասներ միայն մինչև Մասիս լեռան արևելյան ստորոտը, այսինքն այժմյան Մագվա դաշտին։ Ուրեմն պարոն Շերմազանյանի խոսքերից եզրակացնելով, այստեղ պետք է համարել Արտազը կամ Ավարայրին։

Բայց Մագվա դաշտը, ասում է պարոն կրիտիկոսը, չէ Արտազը և ոչ Ավարայրին, այլ նորան կոչում է պատմական Գերատա դաշտը։

Եվ այդպես չեզվելով յուր հիմնական փաստից, պարոն Շերմազանյանը թողում է այժմյան Մագուն (Արտազը) անցնում է մինչև Ղարա-Ջիադին (սխալմամբ կոչելով նորան Ղարա-Ջիադին) գյուղը, և այնտեղ Ջորսի դաշտը ցույց է տալիս պատմական Ավարայրի դաշտի լինելը, որը Խորվիրապից ոչ թե մի օրվա, այլ երեք օրվա ճանապարհորդության հեռավորություն ունի։

Մեր ընթերցողներին ցույց տալու համար, թե պարոն Շերմազանյանը ինքն չգիտե, թե ի՞նչ է գրում, այլ միմիայն լոկ անուններ է շարում միմյանց պոչից, և պատմական խառնիխուռը, անկապ վկայություններ է թափ տալիս, ավելորդ չեմք համարում հիշել նորա խոսքերից մինը, որ ոչ միայն հակառակում է յուրյան, այլ բոլորովին հաստատում է պարոն Բաֆֆիի կարծիքը։

Պարոն Շերմազանյանը բոլորովին շփոթելով յուր երկար և անկապ դրվածքի խառնի մեջ, և մոռանալով յուր մի անդամ, Ավարայրի դաշտի Խորվիրապից մի օրվա ճանապարհի հեռավորությամբ ցույց տալը, Ղարա-Ջիադինի մոտ Ջորսի դաշտումը ցույց տալը,— ասում է. «Որպեսզի ընթերցողներին ավելի շուտով կարողանամ հասկացնել, հարմար եմ համարում սկսել ուղևորությունը Խորվիրապեն դեպի Հեր և Զարևանդ գավառն, որոց մեջին պետք է որոնած Ավարայրը և Տղմուտը»։

Հիմնվելով պարոնի վերջին խոսքերի վերա, պետք է վճռել, թե Ավարայրը և Տղմուտը գտնվում են Հերի և Զարևանդի մեջտեղում։

Շատ լավ։

Համարելով Հերը՝ այժմյան Խոյը, Զարևանդը՝ այժմյան Սալմաստը (որոց մասին պարոն Բաֆֆին և պարոն Շերմազանյանը համաձայն են միմյանց հետ)—ուրեմն Ավարայրին և Տղմուտը պետք է որոնել, ոչ թե Ղարա-Ջիադինի կամ Ջորսի դաշտերումը, այլ այդ երկու մահալների, այսինքն Խոյի և Սալմաստա մեջտեղում։

Դալով մի այդպիսի եզրակացության, ստիպվում ենք հարցնել պարոն Շերմազանյանին,— մի՞թե պարոն Բաֆֆիի ցույց տված տեղը Խոյի և Սալմաստա մեջտեղումը չէ։

Մենք չեմք կարծում, որ պարոնը չհամաձայնի մեզ հետ, երբ ինքը խոստովանում է պարոն Բաֆֆիի ցույց տված տեղերի Խոյի և Սալմաստա մեջտեղում լինելը[1]։

Ուրեմն պարոն Բաֆֆին ինչո՞վ է սխալ յուր կարծիքի մեջ։

Վերջին հարցը թողնում ենք նորից մտածել պարոն Շերմազանյանին...

Միայն կավելացնենք այդքանը, որ պարոն կրիտիկոսը ցանկացել է յուրյան ցույց տալ ոչ միայն հմուտ հայոց պատմագրությյան, այլև պարսից և արաբացվոց։ Պ. Բաֆֆիի Ղազանֆարի հիշատակարանի մասին նա ասում է, իբր թե արաբացի Մահամադ Հանըֆին է պատկանում և ոչ Ղազանֆարին։ Պարոնը «լսել է զանգի ձայն, բայց չգիտե ուր է այնա։

Մահմադ Հանըֆի հիշատակարանը գտանվում է ոչ թե Խոյի մոտ, այլ Ուրմիո և Սալմաստա մեջտեղում, Խի-Սու կոչված գյուղի հանքային տաք ջրերի մոտի գերեզմանատունում, ուր տեղացին սունիների ուխտատեղին է։

Իսկ պարոն Բաֆֆին այդ տեղի մասին ոչինչ չէ գրել։

Ա՜խ, ես մոռացա ասել, որ պարոն Շերմազանյանը յուր քննադատությյունը, այնքան բազմամասնյա նյութերից խառնած, թեև կատարյալ թուրքի հարխա է չինել, այսուամենայնիվ պետք է խոստովանած, որ նա մի նշանավոր բնագիտական գյուտ է արած, որն է արդյունք նորա երկարամյա Պարսկաստանի աշխարհի հետազոտությյանը,— այն է անուշահոտ մշկի յուր ցույց տված ավարայրի դաշտումը արածող այծյամների պորտի վերա գոյանալն։ Եթե լուսավոր Եվրոպան յուրյան թույլ կտար հավատալ այդպիսի առասպելին, մեք խորհուրդ կտայինք պարոնին յուր արած գյուտը Լոնդոնի արքունական երևելի բնագիտական ակադեմիային հայտնել, ի փառս գիտությյան։

---

1 Տե՛ս «Ավարարատ», համար ԺԱ. 426-րդ երեսի երկրորդ էջի 17-րդ տողից սկսյալ մինչև 37-րդ տողի վերջը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Տաճկաբնակ հայերը, ասում ենք, թե վայելում են ազատություն։ Տաճկաբնակ հայերը, ասում են, թե առաջ են ընթանում։ Այդ խոսքերը խիստ քաղցր կերպով հնչում են, ոչ միայն ամեն մի հայ մարդու ականջին, այլ ընդհանուր մարդկության բարեկամներին նոքա հաճություն են պատճառում։

Եվ իրավ, լրագրների մի շարք, որք ցոլացող աստղերի նման, հաջորդաբար երևում են, փայլում են, և դարձյալ կորչում են հայկական գրականության խավար մթնոլորտի մեջ. ազգային սահմանադրական վարչություն, հրապարակական դասախոսություններ, քաղաքնական բեմ. երկսեռ դպրոցներ և այլն.— այդ ամենը պնդում են լսողների համոզմունքը տաճկաբնակ հայերի առաջադիմության մասին։

Բայց խորին կերպով հետազոտելով այդ ուրախացուցիչ երեվույթների ներքին էությունը, մենք գտանում ենք անմխիթար դատարկություն։

Լրագրությունը ավելի զբաղված է օտարներով, քան թե յուրյանով։ Նա հայտնում է, թե ինչ է խոսում ամեն օր Թիերը յուր կաբինետում, բայց չգիտե յուր տան մեջ ինչեր են լինում, չգիտե. թե վասպուրականի, Մշու, Բաղեշի, Կարնու և փոքր Ասիայի զանազան անկյուններում, ինչեր են պատահում խեղճ հայերի հետ և ի՞նչ դրության մեջ է նոցա վիճակը։ Նա ընդհանուր ծերոպայի ճակատագիրն է վճռում, բայց հիշյալ երկրներում բնակվող յուր ազգայինների տնտեսական և մտավորական կյանքի մասին շատ քիչ է մտածում։

Փոխանակ ազգի վիճակագրական և նորա տնտեսական դրությունը արտահայտող հոդվածների և գավառական նամակների, մենք կարդում ենք լրագրության մեջ շատ անգամ աննշան և անպատակ բանակռիվներ, որք ավելի անձնականության են դիպչում, որք պարունակում են յուրյանց մեջ ավելի երգիծական սրախոսություններ և հաճախ կեղտոտ հայհոյանքներ, քան թե միտք, լոգիկա և առողջ դատողություն։

Իհարկե, լինում են բացառություններ, բայց այդ բացառությունները դժբախտաբար այնքան փոքր են թվով, և այնքան չընչին, մինչ ընդհանուրի մեջ կորցնում են յուրյանց նշանակությունը։

Ազգային սանմանադրությունը հանապազ երևման մեջ է։ Նա եղել է խաղալիք զանազան կուսակցությունների և նոցա ներկայացուցիչ այս և այն էֆենդիների։ Նա զբաղված է միշտ Պոլիսով և Բյուզանդիոնի պարապներից դուրս չէ գնում։ Կարծես, թե մեր մյուս տաճկաբնակ հայերը զուրկ լինեն այդ արտոնություններից...

Հրապարակական դասախոսությունները ունեն փոքր ի շատե բավականացուցիչ կերպարանք յուրյանց ներկայիս համապատասխան բնավորությամբը։ Որո ընդհակառակն թատրոնական բեմը հայոց խոսքով դեռ մեծ մասամբ ֆրանսիական վայրիվերո, միմիայն երևակայության և աչքի վերա ազդող պիեսաներ է ներկայացնում, թողնելով բուն ազգային կյանքի դաշտը։

Դպրոցները,— իբրև այս և այն պարոնի, իբրև այս և այն սրբազանի մենավաճառության մեքենա,— անհաստատ դրության մեջ են։ Նոքա կողպվում են, բացվում են, ընկնում են, կանգնում են և հանապազ փոփոխությունների մեջ են ապրում, որքան փոխվում են այն անհատները, որոց կամքից և կրքերից կախումն ունի հասարակական կրթության գործը։

Ժողովուրդը այդպիսի հանգամանքներում բոլորովին կրավորական դեր է խաղում։ Նա, որո ուսերի վերա է բարձած այդպիսի հիմնարկությունների բոլոր նյութական ծանրությունը, նորա իրավունքները սարսափելի բռնաբարության ենթակա են։

Գրականությունը չէ ներկայացնում մի բավականացուցիչ երևույթ։ Գրական գիտությունների ինքնաստեղծ, ինքնուրույն հետինակությունները այնքան աննշան են, որ չինելության հաշվում պետք է դնել նորանց։ Թարգմանություն,— փոխանակ յուրյան պարապեցնելու Եվրոպայում ընդունված մանկավարժական, գիտնական և արհեստական գրքերի ի հայ լեզու վերածելուն, որոցմե այնքան զուրկ են դպրոցները,— զբաղված է վեպերով, ռոմաններով և երգերով։ Այդպիսի գրքերի ազդեցությանը պետք է վերաբերել պոլսեցի հայի այն դյուրագրգիռ և ոչնչով ոգևորվող, ֆրանսիական թեթևությունը, որ է հատկանիշ նորա աշխույժ բնավորությանը։

Մի առարկա, որ առավելապես զբաղեցնում է տաճկաբնակ հայոց կրթյալ դասի մտածմունքը, մի առարկա, որին գլխավորապես նվիրել է յուրյան ազգային մամուլը,— է կղերական խնդիրը։ Այդ պարոնները աշխատում են նորից կյանք տալ կղերին, կրթել նորան, բարվոքել նորա դրությունը, որպեսզի նա, նորից ուժ

ստանալով, կարողանա համարձակ տանել ազգային վարչության սանձը։ (՞ ՞։)

«Ասանկ ալ պետք է ընել, ախբար, մեր ազգը կրոնական ազգ մըն է կոր»։— Ասում է ինձ մի ֆեսվոր պարոն։

— Կղերի դարը անցավ։

Մենք տեսանք և տեսնում ենք այն ազգերի թշվառ վիճակը, որք յուրյանց կառավարության սանձը հանձնել էին կղերին։

Թող նոքա կարդան յուրյանց սաղմոսը և Նարեկը և ազգի հանգուցյալների հոգուն աղոթք անեն։ Իսկ կենդանիների վերա մտածելը նորանց չէ պատկանում։

Ինչ եմ հասկանում մենք այդ խոսքերովս կենդանիներ։ Արդյոք վսեմափառ ամիրանե՞րն են դոքա, թե մեծապատիվ էֆենդիները։ Արդյոք արծաթասեր չորբաջինե՞րն են դոքա, թե շնորհավաճառ փափազները։ Ո՛չ. դոցանից և ո՛չ մինը։ Դոքա ազգային մարմնի կազմվածքի մեջ փտած նյութեր են։

Կենդանիներ ասելով, մենք հասկանում ենք Պոլսի և Տաճկաստանի զանազան քաղաքներում գաղթած այն պանդուխտ մշակները, որք խաներում, իսկալաներում, մեյդաններում, սոխախներում մաշվում են բեռնակրությամբ։ Կենդանիներ ասելով, մենք հասկանում ենք, Ռումելիի, Փոքր Ասիայի, Բաղեշու, Մշու, Կարնի և այլն մեր թե՛ գյուղացի և թե՛ քաղաքաբնակ ազգայիններ, այն ճնշված և հարստահարությանց մեջ մաշված հայերը, որոց մեջ դեռևս պահպանվել է ազգային առանձնությունների կենդանի տարրը, որք կազմում են ազգայնության գլխավոր ուժը։

Նոցա համար պետք է մտածել, նոցա համար պետք է գործել, մեր հույսը նոքա են...

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Տաճկաբնակ հայերը մի բախտավոր ներկայի վերա են կանգնած։ Բայց ցավելով պետք է խոստովանվել, որ նոքա յուրյանց դրությունից օգուտ քաղել չգիտեն։ Նոքա ապրում են մի այնպիսի երկրում, ուր տիրող ազգը, թե՛ կրոնքով, թե՛ սովորություններով և թե՛ ազգային այլ հատկություններով, բոլորովին տարբերվում է յուրյանցից։ Նոքա ապրում են մի այնպիսի երկրում, ուր տիրող

ազգը, թե՛ յուր թվի բազմությամբ և թե՛ յուր մտավոր և նյութական գործունեության մեջ, խիստ ստոր աստիճանի վերա է գըտանվում, քան թե հպատակ ազգերը։

Հայը, եթե կարողացավ պահպանել Տաճկաստանում յուր կրոնքը, յուր ազգային գոյությունը, դորանով նա պարտական է մահմեդականության շրջափակ, խորություն դնող և հալածասեր բնավորությանը։ Հայը, եթե վայելում է ազատություն յուր ազգային հիմնարկությունների մեջ, դորանով նա պարտական է տիրող ազգի դեռ մանուկ քաղաքական զարգացմանը։

Իսկ այդ ազատությունը ժամանակավոր է։ Նա երկար չպիտի տևե։ Իսկ հայը կարողանո՞ւմ է օգուտ քաղել նորանից։

Այդ հարցի պատասխանը կգտանե ընթերցողը իմ առաջին նամակի մեջ[1], ուր թեև համառոտ, բայց մի ընդհանուր տեսություն է արած Կ. Պոլսի մտածող ազգայինների գործունեության մասին։

Այս անգամիս հարկավոր եմ համարում քննել մի քանի մասնավոր երևույթներ։

Համարյա ամեն օր, ամեն շաբաթ շոգենավը բերում է Կ. Պոլիս Փոքր Ասիայի զանազան գավառներից մի խումբ հայազգի պանդուխտներ, որք թողելով տուն, տեղ, ընտանիք, գալիս են այս քաղաքը, որ մշակությունով, համալսությունով, մի քանի դուրուշ փող վաստակեն, տանեն յուրյանց չքավոր ընտանիքը պահեն։ Թեև խիստ սակավներին այդ ձկվառներից հաջողվում է ողջությամբ յուրյանց հայրենիքը դառնալ։

Կ. Պոլսի ազգային վերնագիրը յուր ճակատին հպարտությամբ կրող լրագրությունը մինչև այսօր չքննեց բուն պատճառը այդ վնասակար գաղթականության։ Բացի մի քանի մասնավոր խոսքերից—«Ըշտե քուրդերը կթալնեն կոր»։ «Ըշտե չերքեզները ավազակություն կընեն»։ «Ըշտե ֆիլան փաշան աղեկ ղոնուշմիշ չըլլար կոր»։

Քուրդերի, չերքեզների և այլ դոցա նման ազգերի վնասակար հարաբերությունը հայերի հետ, և նոցա հաղթահարությունները ժամանակավոր մի բան են։ Դոքա չեն և չեն էլ կարող հայերի գլխավոր անբախտության պատճառ դառնալ։ Որո ընդհակառակն մեք պնդում ենք, որ այդպիսի ազգերի դրացությունը առավելապես նպաստում է հայերի բախտավոր ապագային։

---

[1] Տե՛ս նախորդ նամակը։ Թանոք. կազմողներից։

Մեր խոսքը ապացուցանելու համար օրինակ առնենք Վասպուրականի և Տարոնա նահանգները։ Քուրդերին մենք գտանում ենք այդ երկրներում մի թափառաշրջիկ, աստանդական ազգ, առանց հիմնավոր բնակության, որ յուր ապրուստը գտանում էր միայն խաշնարածության մեջ։ Այդպիսի ազգերը շատ բնական է, որ օտարանում են հողից և նորա մշակությունից։ Այդ իսկ պատճառավ, երբ տերությունը առաջարկեց տեղային բնակիչներին հողերը թափիա[1] անել, գլխավորապես հայերին մնաց երկրի ընդարձակ դաշտերը, իսկ քուրդերը չկարողացան այնտեղ հիմք ձգել։

Վասպուրականի հանգուցյալ Արծիվը «ազգ... հայրենիք... Հայաստան»... գոռալով կամենում էր Հայկի և Արամի անցյալ հիշատակներով միայն կերակրել սոված ժողովուրդը, չմտածելով, որ մարդը յուր կյանքի գոյությունը պահպանելու համար կարոտ է նյութական սնունդի և ոչ երևակայական քամիների։ Այժմյան լրագրությունը միակ ճարը գտանում է դարոցների, ուսման և կրթության մեջ, չմտածելով, որ լոկ այդ բեմը քաղցած փորին կերակուր չի տալ։

Կ. Պոլսի մտածողները չկարողացան մինչև այսօր իրենց ուշադրությունը դարձնել այն առարկայի վերա, թե մի ազգի յուր գոյությունը պահպանելու գլխավոր պայմաններից մինը է հողը և նորա մշակությունը։ Թե մի ազգ, որ յուր կյանքի պահպանությունը չէ հիմնած հողի արդյունաբերության վերա, նա ոչ միայն երկար ապրել կարող չէ, այլև չէ կարող ազգ համարվել։

Գաղթականության հոսանքը դեպի մեծ քաղաքները, որ ամեն տարի հազարավորներին խլում է հայրենի հողի արմատից, պատրաստում է հայերից ժողովրդի մի դաս, բոլորովին անպիտանացած ազգայնության մարմնի մեջ։ Մի ազգի գլխավոր հիմքը է հողը, իսկ նորա գլխավոր ուժը գտանվում է երկրագործ և արդյունաբերող դասի մեջ։ Սպառող դասը մի անհրաժեշտ մեքենա է այդ կազմակերպության մեջ։

---

[1] Թափիա։ Տերությունը, թե՛ այդ և թե՛ Փոքր Ասիայի գանազան գավառներում, սեփականացնելով յուրյան գանազան բռնակալների տիրած հողերը, խիստ էժան գնով վաճառեց երկրի բնակիչների վերա։ Դա կոչվում է թափիա։ Թափիա արած հողը համարվում է սեփականություն, տերը կարող է վաճառել, գրավ դնել և վարվել նորա հետ, որպես յուր կամքն է։ Միայն նորա մահից հետո ժառանգը պիտի հայտնե, թե ինքը կամեր մշակել հոր թողած հողերը։

Իսկ գաղթականությունը շարունակվում է։ Ժողովուրդը օրըստօրե հեռանում է Հայաստանի կենտրոնից։ Նորա ուժերը ցրվում են և հայրենյաց դաշտերը մնում են ամայի, դատարկացած։

Ինչո՞վ կարելի է այդ հոսանքի պատճառը բացատրել։

Երկու բանից մինը պետք է լինի, կամ հայերը ընդունակ չեն երկրագործության մեջ, կամ եթե ընդունակ են, նոցա մշակության արդյունաբերությունը այնքան օգուտ չէ բերում, որ կարողանային ապահովել յուրյանց ապրուստը։

Վերջին պատճառը ավելի հավանական է։ Շարունակ սովորական, և միատեսակ ընդհեղհեղների վարուցանքը, մշակության նահապետական ձևերը, երկրի չափազանց էժանությունը, եթե ավելացնենք դոցա վերա տեղության, ինքնըստինքյան թեթև, բայց արդյունաբերության համեմատ ծանր հարկերը,— մեք կտեսնենք, որ երկրագործին ավելի ոչինչ չէ մնում յուր ապրուստը ապահովելու։

Գյուղատնտեսական ուսումնարանը, որ միակ ճարն է այդպիսի դեպքերի առաջն առնելու, դեռևս չէ հետաքրքրում Կ. Պոլսի լրագրության ուշադրությունը։

— Երկրի հում բերքը արվեստագործելու համար արվեստագիտական ուսումնարանների մասին նա մտածել անգամ չէ ուզում։

— Երկրի մթերքը վաճառահանելու համար, Տրապիզոնից Արզերում, այնտեղից Վան, Վանից Մուշ, մինչև Մուսուլ և Բաղդադ երկաթուղի շինելու հարցը բարձրացնել չէ ուզում, որովհետև կենտրոնական Ասիո խնդիրը նորան շատ է զբաղեցրել...։

— Մշեցի, բաղեշցի կամ վանեցի հային մի վաշխառու քըրդից, կամ տաճկից, հարյուր ղուրուշ փոխ առնել և շուտով մի քանի հարյուր պարտական մնալ, այնուհետև յուր կինը, ընտանիքը գրավ թողնել, Պոլսի սոխախնձորում տարիներով փտել և մաշվել,— այդ երևույթները նորան չեն գրավում, որ գյուղական փոխատու ընկերությունների վերա մտածե։ Որովհետև նա շատ պարապված է նորանով, որ գիտենա դեռևս ինչ երազներ է տեսնում Բիսմարկը յուր անկողնի մեջ։

Ահա բոլոր դատարկությունը Պոլսի լրագրության, որ մեք հիշեցիմք մեր առաջին նամակում, մնացորդը խոստանում եմ գրել հետո։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Տաճկաստանում հայոց եկեղեցվո բաժանվելը զանազան դավանութիւնների եղավ ազգային միութեան քակտվելու գլխավոր պատճառներից մինը։

Ազգը կորցրուց իր զորութիւնը, և նորա ուժերը ցրվեցան։

Մեք հեռու եմք այն նպատակից, որ կրկին քարոզեմք կրոնական միութիւն, որովհետև բռնաբարել խղճի ազատութիւնը և համոզմունքը մեր դարու գործը չէ։ Բայց մի ազգ բացի կրոնքից ունի միութեան ավելի զորեղ կապեր.—նա կապված է աւյուեով և յուր պատմական անցյալով։ Նա կապված է լեզվով, որո մեջն է նորա կյանքը։ Նա կապված է յուր տնտեսական և հասարակական շաճեռով։

Բայց կղերի ազդեցութիւնը, կրոնքով բաժանելով մի անդամ ազգային ամբողջութիւնից, կտրեց և նոցա անմիջական հարաբերութիւնների և մյուս կապերը։ Հայկա զավակները մինը՝ «ֆրանկ եմ» ասելով, մյուսը՝ «ընկկիս», երրորդը՝ «հոռոմ», սկսան ուրանալ հայութիւնը, եղբայրը բաժանվեցավ եղբորից։

Խավարի դարը անցավ։ Փորձը ցույց տվեց այն հույսի սխալմունքը, թե մի հայ կարող էր կրոնափոխութեան վաճառքով գնել իր հանգստութիւնը։ Թե մի հռոմէական փափազ, մի ամերիկացի միսիոնար, և այս կամ այն ֆրանսիական, անգլիական հիպատոսները, դեսպանները, կարող էին մի օտար տերութեան մեջ պաշտպանել հայի իրավունքները. և կամ նոքա կնպաստեին նորա մտավոր և նյութական զարգացմանը։

Բնական օրենք է, որ մի առարկայի մեքենայական շարժման ուժերը պետք է կենտրոնացած լինեն նույնիսկ առարկայի մեջ։ Արտաքին ուժը միայն ժամանակավոր շարժառիթ է։ Դադարեց զարկը, կդադարե և նա գործելուց։

Նվ այսպես, մեր գործունեութեան բոլոր զորութիւնը պետք է ծնվի մեզանում, ծագե մեզանից։ Մեք պետք է դիմեմք մեր իմաստականութեանը։ Արտաքին ուժերը միայն ժամանակավոր շարժառիթներ պետք է լինեն։

Ազգի ընդհանուր շահերի վերա մտածել, գործել և իրագործելու պետքը, ազգի անմիջական միութենից կախումն ունի։ Բայց դժբախտաբար դեռ մեր կաթոլիկ, բողոքական և լուսավորչական եղբայրները Տաճկաստանում որոշ խումբեր են կազմում։ Նոցանից ամեն մինը եսականապես յուր համար է ապրում։

Ազգային մամուլը մինչև այսօր չբարձրացրեց միության խնդիրը։ (Մենք չենք նայում այդ հարցի վերա կրոնական կետից)։ Թեև ժամանակ առ ժամանակ հայտնվեցան զանազան հրավերքներ, բայց նոքա լինելով բոլորովին միակողմանի, եղան ձայն բարբառո հանապատի։

Հակահասունյան կուսակցության բաժանվելը Վատիկանի՝ ամենայն ազատության ճնշող, միտքը և հոգին կաշկանդող շղթաներից, մի համարձակ քայլ էր դեպի ազգային միությունը։ Բայց մեր լուսավորչական հայերը ո՞րպես նայեցան այդ երևույթին։— Նոքա ոգևորվեցան, ուրախացան, հրճվեցին և ավելի ոչինչ...

Կ. Պոլսի հայերը դեռևս չունեն մի կենտրոն, ուր ազգի զանազան անդամները հավաքվելով, նորա պիտույքների վերա մտածեն։ Հասարակաց սրճատները, այդ ժողովարանները ամենատեսակ դատարկախոս, մոլաշրջիկ և ծույլ մարդերի, հայտնի բան է, չէին կարող բավականություն տալ մի այդպիսի նպատակին։ Մի կենտրոն, որ կարող էր ժողովրդի գործունյա և մտածող դասին մի տեղ հավաքել, է ազգային կլուբը։ Այդ բանից զուրկ են Կ. Պոլսի հայերը։

Ասելով կլուբներ մենք չենք կամենում հիշել այնպիսի կլուբներ, ուր հաճախորդները միայն թղթախաղով ու զանազան զվարճություններով են վարում յուրյանց դատարկ կյանքի ծանրացած րոպեները։ Այլ ազգային կլուբներ ասելով, մենք հասկանում ենք այնպիսիքը, որ ծնեցին այսպես կոչված երևելի կլուբական ներոսներին։ Ազգային կլուբ ասելով մենք հասկանում ենք մի կենտրոն, ուր հասարակական գործիչները, միատեղ հավաքվելով խոսում են, վիճում են, հակաճառում են և վերջապես մշակում են հասարակական գործերի դժվարին խնդիրները։ Այստեղ կազմվում են զորեղ կուսակցություններ, այստեղից ծնվում են երևելի տաղանդները, և վերջապես, այստեղ կցվում են կրոնական մրրկով զատված կապերը ազգի անդամների։

Շատ նեղ կլիներ այդ հայացքը և միակողմանի, եթե հայերը ուրյանց հասարակական շահերը պահպանելու համար միայն կաշխատեին միանալ յուրյանց այլազավան ազգայինների հետ, առանց ուշադրություն դարձնելու մյուս ազգությունների վերա, որպիսի են հույները, ասորիները, հրեաները և այլն։

Մի պետության մեջ որպես է Տաճկաստանը, հպատակ ազդությունները մասնավոր բացառությամբ միևնույն լավ կամ վատ վիճակի, միևնույն բախտավոր կամ անբախտ դրության մեջ են

ապրում։ Պաշտպանել այստեղ իրավունքը տիրող ազգի ճնշումներից, համահավասար ազատություն վայելել,— այդ բոլորի պարտքն է։ Այսօր խլվեցավ մի ազգից նորա որևիցե իրավունքը, սեփականությունը, այսօր բռնաբարվեցավ նորա որևիցե արտոնությունը, պատիվը, վաղը միևնույնը կարող է պատահել և մյուսներին։ Այսպիսի հանգամանքներում հպատակ ազգերը պետք է ունենան ներդաշնակ համաձայնություն և փոխադարձ օգնականություն դեպի հասարակաց բարին։ Որովհետև միակ ուժը, հանդիպելով ավելի զորեղ ընդդիմադրության տիրապետող կողմից, կորցնելու է յուր նշանակությունը, առանց հասնելու որևիցե հաջող հետևանքի։

Իսկ հայոց պատրիարքը այս ինչ մասնավոր դեպքի առիթով կտրում է յուր հարաբերությունը յուրյանց պատրիարքարանի հետ և դորանով խզվում է մի ազգի կապը մյուսի հետ։ Ջնայելով, որ նոցա փոխադարձ հարաբերությունները որքան օգտավետ էին յուրյանց ներկայի և ապագայի շահերուն։

Այս տողերը գրելու ժամանակ ինձ բերեցին «Մասիս» լրագրի 1356 և 1358 համարները։ Նոցա մեջ մի հոդված, որ թարգմանված էր հունաց «Անաթոլի» լրագրից, բավականին գրավեց իմ հարցասիրությունը։ Նորա մեջ ամենայն անկեղծությամբ հնչվում էր հույների մտածող դասի արձագանքը դեպի եղբայրական սերը և հաշտությունը հայերի հետ, հեռու պահելով այս պարագայիս մեջ կրոնական միշտ երկպառակություն գցող և ատելություն սերմանող խնդիրները։ Հոդվածագիրը մեղադրում է հունաց կղերի մոլեռանդությունը, որ կրոնական դեպքերի պատճառով կտրում են հայերի հետ հաշտության և սիրո կապերը, որք միակ հիմքը կարող էին լինել նոցա ներկայի և ապագայի բարօրությանը։ Մեք բոլոր սրտով համակրում ենք հոդվածագրի կարծիքը։

Տխուր երևույթ է ներկայացնում, երբ նշմարում ենք Տաճկաստանում ամեն մի դավանության պատկանող ազգությունները փոխանակ հիմնվելու ժողովրդական ուժերի վերա, խիստ պինդ բռնած են կղերի փեշերից (քղանցքից)։ Այդ իրողությունը ունի յուր քաղաքական պատճառները։ Բարձ. Դուռը մինչև այսօր եկեղեցականներին է ճանաչում որպես ազգային գլխավորների ներկայացուցիչներ։ Եվ ուրիշ կերպ չէր կարող լինել, երբ մահմեդական աշխարհը յուր կրոնական բնավորությամբ ինքը տակավին չէ կարողացել ազատվել յուր շեյխերի և ղաղիների ազդեցությունից։

«ՔԱՆԴՎԱԾ ՕՋԱԽ»

1

Ապրիլի 19-ին սիրողների խումբը առաջին անգամ ներկայացրին ձմեռային թատրոնում պ. Սունդուկյանցի «Քանդված օջախ» անունով նոր կատակերգությունը։ Որպես սիրողների վերա, ես ավելորդ եմ համարում խոսել, թե նրանցից ամեն մինը որպես կատարեց յուր դերը, միայն չէ կարելի մի քանի խոսք չասել տաղանդավոր հեղինակի այդ նոր պիեսայի բեմական արհեստի և նորա կրթողական նշանակության մասին։

«Քանդված օջախը» որպես մեր այժմյան հասարակական կյանքի մի պարզ հայելի, ցոլացնում է յուր մեջ մի տխուր երեվույթ, որ պատկերացնում է նորա թե՛ տնտեսական, թե՛ բարոյական և թե մտավորական ընդհանուր բանկոտությունը — նորա անկումը։

Մի կողմից, առևտրական գործը,— հայի ապրուստի գլխավոր աղբյուրը, կայանալով խաբեբա, փտած և անհաստատ հիմքերի վերա,— չէ տալիս բավականացուցիչ արդյունք փոքր ի շատե յուր գործը խղճմտանքով վարող վաճառականին։ Մյուս կողմից, ընդհանրացած շռայլությունը, ընտանեկան անկարգ տնտեսությունը, մոլությունները դեպի նորաձևություն՝ անխնայաբար խլում են, սպառում են գերդաստանի աշխատավորի դառը քրտինքի արդյունքը, և նա, թեև այդ բոլորը հասկանում է, թեև աշխատում է ընդդիմադրել նորանց, բայց կամ ակամա ենթարկված լինելով

ընդհանուր շուայլության հոսանքին, չէ դիմանում և, վերջապես, ընկնում է։ Այդ սարսափելի դրամատիկական պատերազմը կյանքի և մահվան մեջ տեսնում ենք Օսեփի տիպի մեջ։

2

Օսեփը երևակայական տիպ չէ։

Նորա մեջ կա հասկացողություն և համոզմունք. Նորա մեջ կա կամք և հաստատամտություն, մի խոսքով, նա թույլ բնավորություն չէ։ Այսուամենայնիվ, Նորա ազդեցությունը յուր գերդաստանի վերա ստանում է բոլորովին թույլ կերպարանք, երբ նա, մի կողմից շփոթվելով յուր արտաքին գործերի անհաջող հանգամանքներից, մյուս կողմից, տանջվում է ընտանեկան երկպառակություններով։ Վերջին երևույթը ավելի խոշոր կերպարանք է ստանում այն ժամանակ, երբ Նորա աղջկան, Նատոյին ուզում են ամուսնացնել։ Օսեփի կինը, Սալոմեն, չգիտե և չէ էլ ցանկանում գիտենալ յուր ամուսնի դժբախտ դրությունը։ Նա պահանջում է յուր մարդուց մեծ բաժինքով յուր դուստրը չինովնիկի կին շինել։ Օսեփը մանրամասնաբար պատմում է Սալոմեին յուր վիճակը, թե Նորա պահանջմունքը վեր է յուր կարողությունից, այլև խորհուրդ է տալիս, որ ավելի հարմար է յուրյանց դստեր ապագա բախտավորությանը լինել մի համեստ և աշխատավոր վաճառականի կին, որ բավականանար փոքր բաժինքով, քան թե մեծ բաժինքով գնալ որևիցե գրպանը և գլուխը դատարկ չինովնիկին։ Բայց այդ կինը այդ ընտանեկան կռվի մեջ տանում է հաղթությունը։ Նատոն նշանվում է Ալեքսանդր Մարմարով չինովնիկի վերա։

Անբնական մի երևույթ է թվում այդ, որ հայ տղամարդը դարերով կնոջ վերա տիրող և նորան ստրկացնող բռնակալը, հանկարծ ենթարկվում է նորա ազդեցությանը։ Բայց հեղինակը չէ սխալվել այստեղ, նա որսացել է մեր այժմյան ընտանեկան կյանքից ամենազգալի մի գիծ։ Այստեղ երևում է մեր առաչնոր քաղաքակրթված հայ կնոջ տիպը, որ ինչպես ինքը Օսեփը բացատրում է «վուտտումեն ինչրու բողազը փռանգստնու է ու գլուխը կի էլի էն է մնացի»։ Հայ կինը, արտաքին ձևերով նմանելով եվրոպայի կնոջ օրինակներին, առանց նոցա կրթությունը և ուսումը յուրյանց սեփականելու, միայն լինում է մոդայի և մոդնի մագազինների գերի, դառնում է ընտանիքի ծանրությունը, բաժանորդ

լինե Նորա բախտավոր և անբախտ րոպեներին։ Օսեփը թեև ինքը ուսում առած մարդ չէ, բայց նա արտասահմանում տեսել է, թե որպես կանայք օգնում են յուրյանց տղամարդներին և հասարակական գործիչներ են դառնում։ Բայց հայ կինը միայն մտածում է բալերի, վեչերների, պիկնիկների և լոտոյի վերա։ Այդպիսի կապիկությունները եվրոպական ձևերի միայն վատ կողմերեն սովորելու, առանց նոցա գիտությյանը և ուսմանը մասնակից լինելու, տալիս է Սալոմեին մի դարտակ և վայրիվերո բնավորություն։ Նա փոխադրում է յուր անձի վերա այն, ինչ որ մի ժամանակ Նորա տղամարդն էր,— պարզ ասած լինում է մի նոր բռնակալուհի տան մեջ։ Այսպիսի վնասակար և այլանդակ վերանորոգությունը ընտանեկան կյանքի մեջ հիշեցնել է տալիս սրբազան նահապետականությունը, այն անցած, գնացած պարզ և անհոգ օրերը, որոնց երանի տալով միտքն է բերում մամիդա խախոն, Օսեփի հորաքույրը։ Պառավի հիշողության մեջ զարթնում է ոսկի անցյալը, երբ ամեն մարդ սակավով էր բավականանում, երբ ամեն մարդ գոհ էր յուր վիճակեն և ընտանիքը երջանկություն էր վայելում։

3

Նատոյի, Սալոմեի աղջկա կրթությունը, Նորա ուսումը՝ բոլորովին համապատասխանում է այն շրջանին, որո մեջ զարգանում է նա։ Այստեղ մեք տեսնում եմք այն տխուր պատկերը, որով ներկայանում է մեզ այժմյան կրթված հայ աղջիկը։ Նորա մեջ չէ երևում մի հաստատ բան, ամեն ինչ Նորա մեջ թեթև, թերի և անկատար է, որպես այն ուսումը և կրթությունը, որը ստացել է նա։ Նա ոչինչ գաղափար չունի յուր գոյության բուն նշանակության մասին, նա անտարբեր է դեպի յուր ազգը և կրոնքը, նա մինչև անգամ ատում է յուր մայրենի լեզուն։ Ամուսնական գաղափարը զարթնում է Նորա մեջ բոլորովին դարտակ շարժառիթներից, չինովնիկի կին լինելով մտածում է Նատոն, ավելի հեշտ միջոցներ կունենա կրուժոկ, թատրոն և այլ զվարճությանց տեղերը հաճախելու և ամեն օր մի նոր շիֆ տալու յուր հագուստին ու զարդարանքներին։ Այդպիսի դարտակ բնավորությունը, որպես է Նատոն, չունի իր մեջ մի կենդանի կապիտալ, որով գրավեր դեպի ինքը փեսաներին, միակ կապիտալը, որով նա կարող էր յուր համար փեսա ընտրել, լինում է ածաքը և այդ նյութի վերա դրվում է Նորա ամուսնական կյանքի հիմքը։ Նորա ճակատագիրը

կապվում է յուր նման մի երիտասարդի հետ, որպես էր Ալեքսանդր Մարմարովը։ Վերջինս չունե յուր աչքի առջև որևիցե անձնական արժանավորություն Նատոյի, միակ բանը, որ գրավում է նորան դեպի Նատոյի սերը, է՛ այն քանի մի հարյուր թուման փողը, որ պիտի ստանար նա որպես բաժինք։ Այդ պատճառավ, Օսեփի անակնկալ դժբախտության հետ, երբ քանդվում է նորա բոլոր նյութական զորությունը, նորա հետ և վերջանում է Մարմարովի սերը դեպի յուր հարսնացուն, երբ նա մտածում է, թե այլևս ոչինչ ստանալու հույս չկա։ Փողի հաշիվը, բոլորովին նյութական նպատակը դեպի ամուսնական կապը, մինչ այն աստիճան կուրացրել են թեթևամիտ, բայց միևնույն ժամանակ կրթված երիտասարդին, որ նա արտասուքը աչքերում թողում է և հեռանում է Նատոյից...

4

«Քանդված օջախ» մեջ բոլորովին հակառակ Օսեփին, որպես նորա հակապատկերը,— հանդիսանում է մի այլ տիպ— «Հիպրոինց Մաթուսի վուրթի Փարսեղը»։ Այդ անձնավորությունը մի հարազատ ծնունդ է մեր անկարգ, փշացած, հասարակական կազմակերպության։ Մնվելով, զարգանալով անբարոյական շրջանի մեջ, ուր միշտ խաբում են, կողոպտում են, մի խոսքով, ամեն կեղտոտ միջոցներ գործ են դնում միայն արծաթ որսալու նպատակով, Փարսեղը կազմել է յուրյան մի ամբողջ գաղափար, թե աշխատելուս սուրբ բան չկա։ Հիմնվելով այդ վարդապետության վերա, Փարսեղը յուրյան ներելի է կացուցանում բոլոր անարդար հնարները հարստանալու և նա հասնում է յուր նպատակին։ Մաթկելով յուր կեղտոտ անցյալը ոսկու թիթեղի տակ, փինաչի Մաթուսի տղան հանդիսանում է որպես պատվավոր քաղաքացի, նա ստանում է վարկ և կշիռ, նորան պատվում են և երկրպագում են։ Նորա առևտրական խանութը պատկերացնում է այն հիմնարկությունը, եթե կարելի է այդպես ասել, այն ըշկոլան, ուր պատրաստվում են այդպիսի Փարսեղներ, այդպիսի պատվավոր քաղաքացիք։ Խաբեությունը, ստախոսությունը և խորամանկությունը՝ գլխավոր դասախոսության այդ ըշկոլայի ամբիոնից առարկայքն են, որք քարոզվում են։ Փարսեղը գլխավոր պրոֆեսորի դերն է խաղում։ Նորա աշակերտները հպատակում են նորան, որպես մի բարձր հեղինակության։ Փարսեղը գովում է յուր մեծ աշակերտի՝ Դարչոյի, այդ պրիվատ դոցենտի առաջադիմությունը

յուր ուսման մեջ և նախագուշակում է նորա բախտավոր ապագան, որին նա մի օր կհասներ այդ կեղտոտ ճանապարհներով։ Փարսեղը նախատում է, մինչև անգամ ծեծում է, յուր դուքնի փոքրիկ աշակերտ անմեղ Միխոյին, նորա անընդունակության համար, որ նա չէր կարողանում կտավը ձգելով, և արշինի տակ սլլացնելով, օրինակի համար, տասը գազը՝ տասներկուսի տեղ ծախել։ «Դուն մարթ չիս դառնա»— ասում է ուստան, խեղճ աշակերտի ականջներեն ձիգ տալով։

Աչքի առաջ ունենալով այդպիսի Փարսեղները, աչքի առաջ ունենալով նոցա առևտրական խանութները, ուր պատրաստվում են յուրյանց նման վաճառականներ, ինքնըստինքյան պարզվում է այն հարցը, թե ինչու մեր, հայերիս, մեջ շատ փոքր են թվով օրինավոր և յուրյանց գործը խղճմտանքով վարող առևտրական մարդիքը։ Հայտնի բան է, որ Օսեփները մի մասնավոր բացառություն են կազմում այդ փչացած դասի մեջ։ Նոքա լինելով փոքր ի շատե յուրյանց խղճմտանքով կենդանի մարդիկ, չեն կարողանում ազատ մրցության անել ամենայն խաբեբայությամբ զինավորված բազմության հետ, և նոքա ընկնում են։ Ահա գլխավոր անբախտության պատճառը Օսեփի և նորա ընտանիքի։

5

Փարսեղը այն է յուր ընտանիքի մեջ, ինչ որ է յուր առևտրական խանութումը։ Նա կամենում է այնպես «գլխիցը ոգ անել» յուր աղչիկը—տան անպետք վաճառքը, որպես նորա ուշիմ աշակերտ Դարչոն «սաղացրեց»—փտած ապրանքը խեղճ սղնախեցու վերա ծախելով։ Նա կամենում է և այդ առևտուրի մեջ մրցություն անել յուր հակառակորդի հետ։ Այդ ձեռնարկության մեջ նորան գործակից է լինում յուր կինը՝ Քալին։ Նոքա միասին խորհուրդ են անում խլել Օսեփի և նորա կնոջ Սալոմեի ձեռքից, նոցա աղչկա, Նատոյի նշանածը՝ Ալեքսանդր Մարմարովին։ Աշխարհի ամեն բաների շինվելու և քանդվելու գլխավոր ուժը միայն փողի մեջ ճանաչող հայ վաճառականը ձեռք է առնում այդ զորավոր գործիքը։ Նա խոստացել է տալ Մարմարովին 100 թուման ավելի, քան Օսեփի խոստացածը, այլև ամենայն խորամանկ հնարներով աշխատում է վերջինիս զրկել յուր նյութական միջոցներեն, կոտրել նորա վարկը առևտուրի մեջ, որպեսզի նա չկարողանա վճարել խոստացած արծաթը յուր փեսացուին։ Հիշյալ դավադրությանց

մեջ փոքր չէ օգնում Փարսեղին Նորա աշակերտ Դարչոն, որը սկսում է տուտ լուրեր տարածել Օսեփի գործերի ավերված վիճակի մասին, և հրապարակավ պահանջել այն գումարը, որ Օսեփը պարտական էր յուր ուստային։ Փարսեղը յուր կողմից ուրանում է Օսեփից որպես գրավ ստացած «չարշիի բարաքներըե» և գործը դատաստանին հասցնելով, Օսեփի դուքանը կնքել է տալիս։ Օսեփը սնանկանում է։ Ով Նորա աղչիկը՝ Նատոն, որպես հիշեցի, զրկվում է հիմար և միևնույն ժամանակ շահասեր Մարմարովի կինը լինելուց։

Իհարկե Ծեսեփի սնանկության գլխավոր պատճառը պետք է որոնել, ոչ միայն Փարսեղի չարաենթագործությանց մեջ, որ նա վերջինիս մի հարվածքովը գլորվեցավ դեպի անկումն, այլ Նորա գործերի անհաստատ և փտած տրամադրության մեջ, որոնք շատ տարիների հասարակական և տնտեսական պայմանների հետևանքներ էին, որոնց ակամա կերպով ենթարկվել էր խելք Օսեփը։

6

Որպես երկրորդական տիպեր «Քանդված օջախի» մեջ հանդիսանում են Օսեփի՝ Գևոն, Նորա մտերիմ բարեկամը, իսկ Փարսեղի կողմից՝ Գիժ Մոզին, Նորա մերձավոր ազգականը։ Գևոն երևում է մի թույլ բնավորություն, թեև բարի և խղճմտանքով մարդ։ Նա յուր բարեկամի դժբախտությանը չէ կարողանում այլ բանով օգնել, միայն Նորա սնանկանալու ժամանակ բավականանում է նորանով, որ չէ ցանկանում պահանջել նորանից այն գումարը, որը Օսեփը պարտական էր յուրյան։ Իսկ Գիժ Մոզին չէ կարելի ասել, թե իսկական տիպ է, նորան կարելի է համարել մի երևակայական մարդ, որին ստեղծել է հեղինակի քանքարը, Փարսեղի բոլոր չարագործություններին և Նորա կեղտոտություններին թարգման լինելու։

Իսկ ինչ որ վերաբերում է «Քանդված օջախ» բեմական նշանակությանը, պետք է ասել, որ նա հորինված է բավականին գեղարվեստական կերպով։ Տիպերը հանդես են դուրս գալի խիստ հատկանիշ բնավորություններով. իսկ լեզուն, խոսքերը, արտահայտությունքը՝ հնչվում են ժողովրդի սրտի և հոգու խորքիցը։ Ջանձրացնում է միայն մոնոլոգների երկարությունը, և էֆեկտը վերջանալու միջոցին խիստ սառն է, երբ այն տխուր դրամատիկական րոպեում, որ կործանվում է Օսեփի տնտեսական կյանքը,

լոտոխաղ կնիկները նորից սկսում են վիճել յուրյանց անպատվության մասին, որ գրկվեցան յուրյանց զվարճությունից։

Վերջացնում եմ իմ նկատողությունները այդ խոսքերով. որ «Քանդված օջախը» է մի ցավալի ողբերգություն, որ պատկերացնում է մեր ժողովրդի քանդված դրության տխուր կործանվիլը, և նորա անկումը թե՛ բարոյապես և թե՛ նյութականապես...

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

«Արարատ» ամսագրի ներկա տարվա մայիսի տետրակումը կարդացի պ. Շերմազանյանի պատասխանը իմ Մշակի 7-րդ համարումը տպված հոդվածի դեմ։

Պարոնը շատ վրդովվում է, իբրև թե ես, հեռանալով պատմական փաստերից, պատասխանել եմ նորան հեգնորեն։ Բավականին ուղիղ է նկատել նա։ Ցմտածելով, մի գրվածք, որ ստոր էր ամենայն կրիտիկայից, նորան հերքելու ամենահարմար զենքը կատակն է։

Իսկ պ. Շերմազանյանը յուր վերջին հոդվածում մի նոր առաջադիմություն ևս է արել,— նա, անցանելով պատմաբանական դաշտից, հասնում է անձնականության։ Ի՞նչ փույթ, գուցե «էդ էլ մի նոր» կրիտիկա է։

Մի բան վաղուց մեք գիտեմք կյանքի մեջ, թե կատուն նեղի ընկած միջոցին սկսում է չանգռել մարդի ձեռքերը։ Մի այլ բան դորա նման երբեմն հանդես է դուրս բերում գրականությունը, երբ թույլ մարդ են ծանր պոլեմիկայի մեջ, սկսում են հայհոյանք և լուտանքներ արձակել։

Մեր քաղաքում նույնպես մուրը շատ թանկ չէ ծախվում, եթե պետք լիներ նորա գործածությունը։ Բայց ո՞վ ախորժակ ունի արատավորել յուր ձեռքերը։

Գրականության մեջ այս և այն անձի պսեուդոնիզմը մերկացնել կատարյալ անազնվություն է։ Այդ պատճառավ, ոչ ոք իրավունք չէ տալիս պ. Շերմազանյանին ասել, թե Մելիքզադեն Բաֆֆին է, կամ Բաֆֆին Հակոբ Միրզայանն է և այլն։ Որովհետև այդ անունները, ով ոք և լինեին նոքա, Եղիշեի, Փարպեցու և Ավարայրի դաշտի հետ ոչինչ կապ չունեն։

Բայց թե Մելիքզադեն էշի կամ ուղտի վերա հեծնելով է ճանապարհորդել այն կողմերը, և դորա համար նորա խոսքերի մեջ ճշտություն չկա, այդ շատ իրավացի է։ Ինչ պետք է արած, երկրի առօրություններուն դեմ մարտնչելը դժվար բան է։ Երևելի Վամբերին ևս էշով անցավ Պարսկաստանը։ Այդ բանը կարծես, թե արևելքի ճանապարհորդների ճակատագիրն է։ Միայն շատ քչերին է հաջողվում հարստանալ, փողի և գյուղի տեր դառնալ, և նժույգ ձի նստած, Փառնա գյուղեն մի քանի ժամվա մեջ մինչև Խորվիրապ հասնել և լավ հետազոտել երկիրը...

Պարոն Գալուստ, ես իմ կողմից վերջացնում եմ իմ բանակռիվը ձեզ հետ, գուցե պարոն Բաֆֆին ինքը կպատասխանե ձեզ, որովհետև, ես թեև մինչև այսօր համոզված էի, որ դուք լավ պատմաբան եք (*), բայց չգիտեի...։ Միայն բարեկամաբար խորհուրդ եմ տալիս ուշադրությամբ կարդալ ձեր առաջին և երկրորդ հոդվածները, եթե կա նոցա մեջը միտք, դուք կհամոզվիք, թե որքան հակառակում եք ինքներդ ձեզ։

Պարսից առածը ասում է. «ստախոսները հիշողություն չունեն»։ Միևնույն հակասությունն է պատահում գրականության մեջ, երբ մարդ ամեն րոպե մի նոր խոսք է խոսում։

[ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԵՂՈՒԻՆ»]

№ 26 «Մեղու»-ի ֆելիետոնում պ. Քաղքցին չգիտեմք ինչ իրավունքով վատ կարծիք է տարածում և դատապարտում է մի գիրք, որ տակավին տպագրության մամուլի տակ անգամ մտած չէ։ Նա կոշում է մեր աշխատությունը «Փունջ» անգույն ու անհոտ ծաղկանց» և այլն։ Մեք հավաստի եմք, որ Բաղաամի հոգին մտել է պ. Քաղքցու մեջ. նա սկսել է գուշակություններ անել։ Բայց ինչ որ վերաբերում է «Փունջի» «անգույն, անհոտ» լինելուն, մեք կրկնում եմք երևելի Սաադիի խոսքը. «ինչ մեզ ունի արեգակը, երբ կույր չղջիկը լուսո ցերեկով չէ տեսնում նորա ճառագայթը»։ Էնպես էլ «Փունջը» մեղավոր չէ, երբ մեր պ. Զոյելի հոտառությունը, չար նախանձից գուլանալով, ոչինչ չէ զգում։ Բայց ինչ որ վերաբերում է այն բանին, թե պ. Քաղքցին որքան է հասկանում և գիտե բանաստեղծությունը, այդ արդեն հայտնի է նորա վերջին զրվամա ֆելիետոնից, ուր ոտանավորներով է արտավիժում յուր ցնորաբանություններ։ «Ագռավը ուղեց կաքավի երիշ գնալ, իր երիշքն էլ կորցրեց»։— Ասում է հայի առածը։

Կ. ՊՈԼՍԻ ՍՐ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Ֆրանսիական կրթության վայրիվերո ազդեցությունը հայտնվում է պոլսեցու կյանքի ամեն մի երևույթների մեջ, միայն այն զանազանությամբ, որ այնտեղ ամբոխի կուսակցությունները, նոցա շարժումները, խռովությունները և հեղափոխական ցույցերը մեծ մասամբ լինում են նպատակավոր, ծառայում են ընդհանուրի օգտին և նորա ազատությանը, իսկ Կ. Պոլսում՝ միայն մի քանի էֆենդի աղաների չար կրքերին։

Այդպիսի հանգամանքներում խառնիճաղանճ ամբոխը, բոլորովին անգիտակցաբար, առանց մի բան հասկանալու՝ թեքվում է երբեմն այս, երբեմն այն կուսակցության կողմը և շարժվում է նոցա պարագլուխների ձեռքում որպես մի կրավորական մեքենա։

Կ. Պոլսի վերջին պարբերական թերթերը զբաղված էին Սր. Պատրիարքի հրաժարման հարցով։ Նախ քան խոսելը այդ խնդրի մասին, մի թեթև հայացք ձգեմք Տաճկաստանի հայոց սահմանադրական վարչության կազմակերպության և նորա գործադրության ձևերի վերա։ Սահմանադրությունը Կ. Պոլսի մեջ ունի զանազան ժողովներ՝ խառն, քաղաքական, կրոնական, քաղաքական և այլն, և ընդհանուր ազգային ժողով։ Վերջինը, եթե կարելի է այդպես կոչել, հանդիսանում է որպես բարձր կենտրոնական կայարան, ընդհանուր տաճկաբնակ հայերի գործերին։

Երևակայեցեք, սահմանադրական վարչության գործադրությունը դեռ չէ անցել Բոսֆորից։ Դավառները դեռ զուրկ են յուրյանց հատուկ ժողովները ունենալուց։ Նոցի գործերը՝ բոլորովին անմշակ և առանց տեղային դատարաններում քննվելու պետք է Կ. Պոլիս գան և այնտեղի ժողովների քննությանը ներկայանան։ Արդյոք ի՞նչ փաստերով և ի՞նչ ապացույցներով Կ. Պոլսի ժողովները կարող էին քննել և յուրյանց վճռահատությունը տալ, օրինակի համար, Վանի, Մուշի, Պրուսայի մեջ պատահած մի անցքին։ Գործը ձգվում է տարիներով, դատախազների և դատարանի կողմից բացվում են անընդհատ գրագրություններ, մինչև, որպես հաճախ պատահում է, դատախազներն անձամբ ստիպվում են Կ. Պոլիս դիմել և ամիսներով յուրյանց վիճմունքների վճռին սպասել։

Մի այդպիսի վարչության ձևը, ոչ միայն քաղաքակրթված պետություններում անկարելի է գտանել, այլև վայրենի ազգերի մեջ անգամ նորա օրինակը հազվագյուտ է։ Որովհետև Կ. Պոլսի

Քաղաքական ժողովը երբեք չէ կարող և անկարելի է, որ կարողանա Տաճկաստանի ավելի քան երեք միլիոն հայ ժողովրդի պահքերը հոգալ և նոցա պահանջմանցը լրացուցիչ բավականություն տալ, երբ որ նա, նույնիսկ Կ. Պոլսի մեջ պատահած գործերը քննելու և վճռելու անձեռնհաս է։

Հիշյալ հանգամանքներր աչքի առջև ունենալով Սր. Պատրիարքը առաջարկում է քաղաքական ժողովին կազմել երկու մասնաժողովներ, մինը՝ տեղական գործոց համար, մյուսը՝ գավառական գործոց համար, որպեսզի նոքա քննեցնեն տարիներով վեր թափված գործերը։

Այդ պատճառավ Սր. Պատրիարքը ներկայացնում է մի ծրագիր քաղաքական ժողովի քննության, որո մեջ բացատրում է նա, թե սահմանադրության արդի օրենքները և նոցա գործադրության ձևերը անհամապատասխան են հայ հասարակության ներկա պիտույքներին, և խնդրում է նորից վերաքննել սահմանադրությունը, լրացնել նորի թերությունքը և ընդհանուր բուրքաբնակ հայերի պահանջմանցը հարմարավոր կացուցանել։

Քաղաքական ժողովը ոչ միայն ուշադրություն չէ դարձնում Սր. Պատրիարքի մի այդպիսի առաջարկության վերա, այլ արժան էլ չէ տեսնում Ընդհանուր ժողովին ներկայացնել։ Այստեղից ծագում են երկպառակության պատճառները Սր. Պատրիարքի և Քաղաքական ժողովի մեջ, որ հետզհետե ավելի ծանր հետևանքներին հասնելով, Խրիմյանը ստիպված է լինում թողուլ պատրիարքական աթոռը և յուր հրաժարականը տալ։

«Մասիսի» 1419 համարում կարդալով այդ հրաժարականի գրավոր պատճենը, որ մատուցել է Խրիմյանը երեսփոխանական ժողովին,— մի ցավալի տպավորություն է թողնում ընթերցողի վերա, թե ինչ անպիտան վիճակի մեջ է սահմանադրությունը Կ. Պոլսում, և որպիսի անզարգացած և չարանախանձ անձինքներից բաղկանում է նորա վարչությունը։ Օրինակի համար, քաղաքական ժողովի անդամները հայտնում են, թե սահմանադրությունը ամենևին վերաքննության կամ փոփոխության կարոտություն չունի, և համարում են Խրիմյանին ճակատամանադրական, որ պահանջելով դոքա, մեղանչում էր սահմանադրության սրբազնության դեմ... Զարմանալի հետաքրքիր միտք, որ մեր դարում բոլորովին հիվանդոտ ուղեղների ցնորք համարելու է։ Մի ժողովուրդ, որ կառավարվում է անփոփոխ օրենքներով, նա կմնա անփոփոխ անշարժության մեջ։

Այդ վեճերը քննելու համար կազմված երեսփոխանական ժողովը բոլորովին իրավացի է համարում Խրիմյանի հրաժարմանը առիթ եղող պատճառները, և նորա բացատրությունքը հարգելով, նորից հրավիրում է պատրիարքական աթոռը ընդունելու։ Սրբազան հայրիկը ընդունում է այդ առաջարկությունը։

Վերջացնում ենք մեր խոսքը նորանով, որ Կ. Պոլսի սահմանադրությունը երբեք հասնել չէ կարող յուր նպատակին, քանի սր նա Կ. Պոլսի մեջ է միայն կենտրոնանում, քանի որ չեն աշխատելու նորան ճանապարհ դրության վերածել և բոլոր տաճկաբնակ հայերի համար նրա գործադրությունը կարևոր կացուցանել։

ՓՈՍՏԱՅԻ ՀԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Ամեն մի սահմանակից պետությունների մեջ փոստայի հարակցությունը է այն դյուրացուցիչ միջոցներեն մինը, որ հեշտացնում է առևտրական հարաբերությունները և մեծ զարկ է տալիս վաճառականության։

Կես դար հազիվ է անցել, որ Պարսկաստանը բացեց յուր շրջափակ չինեական պարսպները արտաքսմանցիների դեմ և եվրոպացիք սկսան այնտեղ համարձակ և ապահով մուտք ունենալ։ Այդ հարաբերությունը շատ փոքր ժամանակում այնպես արագ կերպով ընդարձակվեցավ, մինչ եվրոպական մեծամեծ պետությունները ունեցան Պարսկաստանի ամեն մի նշանավոր առևտրական քաղաքներում յուրյանց կոնսուլները և Թեհրանում՝ յուրյանց դեսպանները։ Թաբրիզի, Ռեշտի և Թեհրանի մեջ հիմնվեցան մեծամեծ առևտրական տներ, և Եվրոպան սկսավ դուրս քարշել Պարսկաստանի հում բերքերը, և փոխադարձաբար յուր գործարանների արվեստագործությունը պարսից շուկայ գործածությանը նյութ դարձնել։

Ջնայելով վաճառականության այդպիսի հսկայական քայլերին, նա յուր ընթացքի մեջ մեծ դժվարություններ է կրում և շատ արգելքների է հանդիպում դրամի փոխադրության և նամակների երթևեկության մեջ։

Ահա պատճառները.—

Պարսից կառավարությունը ինքը փոստայի օրինավոր հիմնարկություն չունի և հետևապես զուրկ է արտաստահմանի հետ

ուղղակի հաղորդակցություն ունենալուց։ Այդ պատճառով մասնավոր անձինք միջնորդական դեր են խաղում։ Այսինքն՝ եվրոպական կոնսուլները,— Ռուսաց, Ֆրանսիայի, Անգլիայի, Բելգիայի, Տաճկաստանի և այլն,— դոցա ամեն մինը ունեն յուրյանց առանձին սուրհանդակները (չափարներ), որք կատարում են թղթատարի պաշտոն։

Սուրհանդակների մի նշանակված քաղաքից դուրս գնալը կամ վերադառնալը՝ լինում է անորոշ ժամանակներով, իհարկե, այն ժամանակ միայն, երբ նոքա պետք է տանեին կոնսուլների պաշտոնական թղթերը։ Վաճառականները ստիպված են լինում ենթարկվել այդ կամայականություններին և սպասել այնքան, մինչ որևիցե կոնսուլ յուր սուրհանդակը ճանապարհ կ'դներ, որ նոքա ևս կարողանան յուրյանց նամակները ուղարկել։ Շատ անգամ նոքա այդ սուրհանդակների ձեռքով ուղարկում են յուրյանց արծաթը։

Մի այնպիսի երկիր, որպես Պարսկաստանն է, ուր ավազակությունը մի սովորական բան է, քիչ չէ պատահում, որ սուրհանդակները կողոպտվում են։ Այդպիսի դեպքերում վաճառականը կորցնում է ոչ միայն յուր նամակները, այլև զրկվում է յուր արծաթից։ Ոչ ոք պատասխանատու չէ լինում նորա կորստին, որովհետև սուրհանդակը մի պաշտոնական կամ պայմանավոր նշանակություն չունի։ Պարսից կառավարությունը այդպիսի հանգամանքներում միշտ մնում է անտարբեր, որովհետև նորա և սուրհանդակատիրոջ մեջ որևիցե համերաշխություն տեղի չէ ունեցած։

Փոթի—Թիֆլիսյան տրանզիտի ճանապարհը բացվելեն հետո, սուրհանդակների գնացքը՝ Թաբրիզից էրզրում և այնտեղից Տրապիզոն՝ համարյա դադարեցավ։ Ասպարեզը մնաց Ռուսաց սուրհանդակին։ Այդ վերջինը, օրինակի համար առնենք մինը՝ Թաբրիզի ռուսաց կոնսուլը։ Վաճառականները յուրյանց նամակները կամ արծաթը հանձնում են հյուպատոսարանին, կոնսուլը ճանապարհ է դնում մինչև Ջուլֆայի կարանթինը, այնտեղից հանձնվում ռուսաց փոստային և Պարսկաստան բերվելու նամակները դարձվում է Թաբրիզ։ Մինչև անցյալ տարի վաճառականները ստիպված էին ուղարկվելու նամակների ամեն մի լոտ ծանրության համար վճարել երեք կոան (90 կոպեկ), իսկ ստացած նամակի համար մեկ կոան (30 կոպեկ)։ Իսկ այժմ ստացվում է ուղարկվելու նամակների մի լոտին երեք փանաիբաք (45 կոպ.), իսկ ստացած նամակին՝ մեկ կոան (30 կոպ.)։ Իսկ լրագրների ամեն մի նոմերի հա-

մար ստացվում է մին փանաֆրաք (15 կոպ.) դարձյալ սարսափելի վճարներ։

Մինչև վերջին տարիները ռուսաց կոնսուլները քղթատարության սուրհանդականոցը տալիս էին վարձով մասնավոր անձինքների, որոնք պարտավորվում էին ամեն տարի մի մասնավոր գումար վճարել կոնսուլին, և մնացած օգուտները յուրյանց գրպանն էին դնում։ Այժմ բոլորը անցել է կոնսուլի ձեռքը։

Ի նկատի ունենալով այն սկիզբը, որ ոչ մի օրինավոր պետության մեջ փոստայի հիմնարկությունը չէ լինում մասնավորների շահավոր նպատակների համար, այլ նա ծառայում է ընդհանուրի օգտին, մեք բոլորովին վնասակար ենք տեսնում մի այդպիսի գործողությունը, երբ վաճառականի քղթերը և արծաթի ապահովությունը կախված կլինի մի սուրհանդակի կամայականությունից։ Դորա հետևանքն այն է լինում, որ շատ անգամ (որպես հաճախ պատահել է), վաճառականը զրկվում է յուր փողերից,— բավական է միայն, որ սուրհանդակը ասե, թե կողոպտվեցա։

Այդպիսի դեպքերի առաջն առնելու համար, և վաճառականների թե՛ գրավոր և թե՛ դրամական հաղորդակցություններին դյուրություն տալու համար, խիստ անհրաժեշտ կարևորություն կա փոստայի հարակցության Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ։

Ամեն մի պետություն յուր սահմանի մեջ, ինքն յուր կառավարության ներքո ունի փոստայի համակարգություն։ Այդ պատճառավ պատասխանատու է լինում կորուստներին, երբ նոքա ապահովված էին։ Իսկ Պարսկաստանում, որպես մեր ընթերցողը տեսավ, այդպես չէ։ Այնտեղ ոչ միայն կոնսուլները, և ինքը կառավարությունը[1], այլ ամեն մի մասնավոր մարդ կարող է յուր հատուկ սուրհանդակը ունենալ։

Ինչո՞ւ չպետք է Պարսկաստանը անե միևնույնը, ինչ որ անում են մյուս տերությունները։ Այսինքն արգելե սուրհանդակների նահապետական ձևը, հարթե ճանապարհները, փոստայի երթևեկության հարմարավոր կացուցանե, և Ռուսաստանի հետ հարակցության պայման կապե։

Ռուսաստանը վաղուց է, որ խիստ մոտ հարաբերություններ ունե Պարսկաստանի հետ. այդ հարաբերությունները օրըստօրե

---

[1] Կառավարությունը ունի կանոնավոր սուրհանդակի վարչություն Թաքրիզից—Հազվին—Զանգյան, մինչև Թեհրան, որտեղ ինքը երաշխավոր է լինում հանձնված արծաթի կորստին։

ավելի և ավելի ընդարձակ շրջան են ստանում։ Փոստայի սերտ հարակցությունը այդ երկու պետությունների մեջ կարող է ավելի ևս ընդարձակել նոցա առևտրական հաղորդակցությունը, որպես սահմանակից և դրացի երկրների, և հետևապես մեծ օգուտ կհասցնե ուղեգնացության և ճանապարհների հաղորդակցության։ Փոստաների առիթով հարթած ուղիները կդառնան միևնույն ժամանակ հաճախորդների և ապրանքների փոխադրության ուղիներ։ Այն ժամանակ, թե՛ ռուսաց նավագնացությունը և թե՛ Փոթի— թիֆլիսյան երկաթուղին կհասնեն յուրյանց նպատակին։

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Երբ հանդիպում ես մի հայ օրիորդի, որ Ժորժ-Սանդի կամ Տուրգենևի ռոմանը խտտած, դառնում է օտարազգի ընթերցարանից, հարցնում ես նորան՝ օրիորդ, ինչո՞ւ չեք կարդում հայերեն։ Պատասխանը լինում է՝ կամ մի արհամարհական ժպիտ և կամ— «ի՞նչ կարդամ»։

Ի՞նչ կարդա, կրկնում ենք մենք, նարե՞կ, եղիշե՞. թե Խորհնացի։ Դոցա լեզուն այնքան հասկանալի է օրիորդին, որքան նոցա նյութը մատչելի է նորա սրտին։ Դյումայից և Հյուգոյից պոլսեցոց թարգմանությունն է՛ր կարդա օրիորդը. ո՛չ, նա ծանոթ է արդեն դոցա բնագրին, կամ կարդացել է թարգմանությունը մի օտար լեզվով։

Ի նկատի ունենալով այդպիսի երևույթներ, համոզվում ենք, որ մենք, հայերս ընթերցանության գրքեր չունենք. էլ ինչո՞ւ ենք մեզադրում մեր մանուկ սերունդը, թե նոքա հեռու են պահում յուրյանց հայոց լեզվից և նորա գրականությունից։

Մի ազգ երբեք չէ կարող կրթության կատարելագործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը։ Իսկ ընթերցասիրությունը ամբոխի մեջ տարածելու գլխավոր միջոցներից միևը բանաստեղծական և վիպական գրվածքներն են։ Ի՞նչ գիրք կարող է լինել ժողովրդի սրտին և հոգուն այնքան մոտ, որքան մի վիպ, որը կախարդական հայելվո նման պատկերացնում է յուր մեջ նորա կյանքը, երևան է հանում հասարակական տիպեր՝ յուրյանց գեղեցիկ և այլանդակ նկարագիրներով։ Վերջա-

պես ի՞նչ ձայն կարող է լինել այնքան ազդու, քան թե մի երգ, որ հնչեցնում է ժողովրդին նորա ցավերը, նորա սրտի տխուր կամ ուրախ զգացմունքները։

Հայերն, իբրև արևելցիք յուրյանց տաք երևակայությամբ, որպես է նոցա շրջապատող բնությունը, սաստիկ հակումն ունեն դեպի վեպեր և դեպի ֆանտազիան առհասարակ։ Տեսնում ենք, թե քանի ախորժանոք նոքա լսում են աշուղների «հեքիաթները» և որքան սիրով կարդում են «Պղնձե քաղաքի» հիմար առասպելները, կամ խիկար իմաստունի խրատները։ Աբովյանի «Վերք Հայաստանին» թեև նա գրված է մի գավառի ժողովրդական բարբառով, որ մատչելի չէր ընդհանրությանը, թեև յուր կրկնությունների ճոխությամբ մինչև անգամ ձանձրացնում է, այսուամենայնիվ՝ ամեն հայ սիրում է այդ գիրքը և կարդում է նորան։ Ուրեմն, բոլորովին անտեղի է մտածել, թե հայերը ընթերցասեր չեն։ Մեզավորքը մեր գրագետներն են, որ նորանց մտավոր սնունդ չեն մատակարարում։

Այդ շարժառիթներն էին, որք խրախուսեցին «Փունջի» հեղինակի վստահությունն յուր ավելի քան տասը տարվա աշխատությունները զանազան հատորներով ի լույս ընծայել։ Թեև այդ մեր կողմից մի հանդգնություն էր, փույթ չէ, միշտ պատերազմողների առաջին շարքը ընկնում են։ Եթե մի օր հայոց հողի վերա կծնվեին Գյոթեներ, Շիլլերներ և Շեքսպիրներ, թող նոքա մեզ նման անձնավստահների ավերակների վերա բարձրացնեն յուրյանց գեղեցիկ և հսկայական շինվածքը։

Հանճարներն և տաղանդներն ավելի զարգացած հասարակական կյանքի արտահայտություններ են։ Թեև ես գրեցի հանգավոր տողեր, բայց, սիրելի ընթերցող, դու իմ չոր ու ցամաք և անտաշ երգերիս մեջ չես գտանելու ոչինչ բանաստեղծական։ Նոքա զուրկ են այն գեղարվեստական վսեմությունից, որով մուզաների սիրելին ստեղծագործում է յուր հորինվածքը։ Բայց ես ներկայացնում եմ քեզ մի ալբոմ, ուր դու կտեսնես զանազան այլանդակված պատկերներ՝ յուրյանց բարոյական և մտավոր տգեղությունները։— դոքա մեր հասարակական կյանքի տիպերն են։ Իսկ իմ երգերն՝ արձագանք են դառն հառաչանքի...

Գուցե ոմանք կդատապարտեն մեր բացասական ուղղությունը, չնկատելով որևիցե ուրախալի երևույթ մեր ներկայացրած պատկերների մեջ։ Բայց թող մեր անձնախաբեությունը չմոլորեցնե մեզ, մենք ուրախալի ոչինչ չունենք։ Հազիվ նշմարվող լուսա-

վոր կետերը հայոց մութ հորիզոնի վերա, գուցե հրապուրում են շատերի աչքերը, բայց նոքա խաբուսիկ լույսեր են, որք անհետանում են ընդհանուր խավարի մեջ...

«Փունջը» լույս կընծայվի տասը հատորով։ Բացի առաջինից՝ մնացորդ ինը հատորներն կտպվին հետևյալ պարունակությամբ՝

II Հատոր վիպասանություններ
- ա. Անմեղ վաճառք
- բ. Ուխտյալ միանձնուհի
- գ. Տնային փեսա
- դ. Հարեմ (առաջին մասն)
- ե. Սառա (բանաստեղծություն)

III Հատոր վիպասանություններ
- ա. Հարեմ (երկրորդ մասն և վերջ)
- բ. Թաթոսներ
- գ. Խաչագողի հիշատակարան
- դ. Սպանդանոց
- ե. Խորենացու ողբը (բանաստեղծություն)

IV Հատոր վիպասանություն
- ա. Ջահրումար (առաջին և երկրորդ մասն միասին)

V Հատոր ճանապարհորդական հիշատակարան
- ա. Բաֆֆիի ուղևորությունը Պարսկաստանում[1]
- բ. Ճանապարհորդություն Տաճկաստան (Վասպուրականի և Տարոնի նահանգներում)

VI Հատոր վիպասանություն
Սալբի (առաջին մասն)

VII Հատոր վիպասանություն
Սալբի (երկրորդ մասն)

VIII Հատոր վիպասանություն
Սալբի (երրորդ մասն և վերջ)

IX Հատոր վեպիկներ
- ա. Դեղեցիկ Վարդիկ
- բ. Սով
- գ. Նազանի
- դ. Անբախտ Հռիփսիմե
- ե. Մի օրավար հող

---

[1] Բաֆֆիի ուղևորությունը Պարսկաստանում բղդամիներ կազմվում է 50 նամակներից, որոց 24-ն միայն տպված են «Մշակ» տրպրի 1872—1873 համարներում։

Հիշյալ վեպիկները տպված են «Մշակ» լրագրի 1872—1873 տարվա համարներում «Մելիքզադե» ստորագրությամբ։ Այդ իսկ հատորի մեջ կպարունակվին և Մելիքզադեի մյուս հոդվածներն, որք տպված են նույն լրագրի մեջ։ Այլև զանազան ամսագրերում տված մեր աշխատությունները, որպես է՝ «Ախթամարա վանքը» «Հյուսիսափայլի» մեջ և այլն։

X Հատոր

ա. Ներսես Ե-րդի կենսագրությունը

բ. Խրիմյանի կենսագրությունը[1]։

«Փունջի» ամեն մի հատորը միևնույն դիրքը կունենա, ինչպես առաջինը։ Եթե որևիցե պատճառով վերոհիշյալ աշխատություններից մինը չտպվի, այն ժամանակ հատորների պարունակությունը փոփոխություն կստանա։

Վերոհիշյալ նյութերն, որք պետք է կազմեն՝ բացի առաջինից՝ մնացյալ ինք հատորների պարունակությունը, բոլորը պատրաստ են, վերջացրած չէ միայն Ներսես Ե-րդի կենսագրությունը։ Որովհետև մենք պատրաստում ենք հանգուցյալի ավելի ընդարձակ կենսագրությունը, սկսյալ նորա երեխայությունից մինչև նորա մահը, այդ պատճառավ այդ աշխատությունը մեր ցանկացածին պես լրացնելու համար՝ մենք կարոտ ենք ավելի մանրամասն և ճիշտ տեղեկությունների։ Որո համար խնդրում ենք հանգուցյալի ծանոթներից հաղորդել մեզ նյութեր նորա կյանքի, գործունեության և հարաբերությանց մասին օտարների հետ։ Տեղեկություններն որքան և աննշան լինեին դարձյալ մեզ համար թանկագին են, մենք կարող կլինենինք նոցանից օգուտ քաղել։ Եթե որևիցե կոնդակ, նամակ հանգուցյալից, չկամեին նոցա իսկականը մեզ հաղորդել, բավական են միայն նոցա արտագրած պատճեննները. մենք կվճարենք փոստայի և գրագրի ծախսը։ Ներսեսի կենսագրության հետ զուգընթաց կնկարագրվին՝ նույն ժամանակի էջմիածնա, մեր հոգևոր կառավարության և հայերի դրությունը, այլև Ռուսաց Պարսից հետ ունեցած պատերազմը և հայերի գաղթականությունը Պարսկաստանից և Տաճկաստանից դեպի Ռուսաստան։ Մենք հուսով ենք, որ մեզ կօգնեն և այդ մեծ մարդի հավերժական հիշատակը անմոռաց կմնա պատմագրության մեջ։

---

[1] *Խրիմյանի կենսագրության համառոտությունը՝ «Մի քանի գծեր Խրիմյանի կյանքից» վերնագրով՝ մենք տպեցինք «Մշակի» 1873 ամի 48 համարում «Մելիքզադե» ստորագրությամբ։*

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ընծայելով պատվելի հասարակությանը «Փունջի» երկրորդ հատորը, մենք մասամբ հասած ենք համարում մեր նպատակին, տեսնելով, որ նորա առաջին հատորը սառն ընդունելություն չգըտավ ընթերցողներից։ Այլ ընդհակառակն, նա հարուց աղմուկ, գրգռեց հարցասիրություն, իսկ շատերի մեջ կրքեր և զզվանք...։ Այդ բավական է մեզ, նշանակում է, որ նա ազդեց, նշանակում է, որ մեր ժողովրդի մեջ դեռ հանգած չեն կենդանի զգացմունքները...

Անտարբեր չմնաց և մեր լրագրությունը։ «Մշակը» և «Մեղուն» յուրյանց կողմից ընծայեցին «Փունջին» մի քանի վայրիվերո խոսքեր։ Ավելին սպասել չէր կարելի, երբ պակաս էր առողջ կրիտիկան կամ անաչառ քննադատությունը։

Գալով երկրորդ հատորի հրատարակությանը, այսքանը միայն կասենք, որ այս գրքի մեջ պարունակված վեպիկները մենք գրել ենք Թիֆլիսում 1872—1873 թվականներում։ Թե որքան է հաջողվել երկու տարվա ընթացքում ըմբռնել մեզ անծանոթ մի երկրի հասարակական կյանքի մի քանի երևույթները, այդ թողնում ենք ընթերցողների դատողությանը։ Բայց «Հարեմը», «Սառան» և «Ղուլլուբանին» մեր Պարսկաստանում եղած ժամանակվա գրվածներիցն է, երբ արդեն վերադարձած էինք մեր հայրենիքը։

Մենք հարմար համարեցինք այդպիսի փոքրիկ վեպիկներով նախ զարգացնել կարդացողների ճաշակը և նոցա սերը դեպի մայրենի լեզվի ընթերցանությունը, մինչև նոքա պատրաստված կլինեին հետաքրքրվել ավելի ընդարձակ վիպասանական գրվածքներով, որոնց, եթե կհաջողվի մեզ, կմատուցանենք հետագա հատորներով։

Թող կույր վայրահոսներն ինչ որ ուզում են ասեն, մեր վրատահությունը կմնա միևնույնը, ինչ որ էր առաջ։ Դափնիք վայելելու ցանկությունից հեռու ենք մենք, բայց ուրախ ենք, որ հասարակական կրթության գանձանակի մեջ կարողանում ենք ձգել մի չնչին լումա — մեր ունեցածն այդ է։

«ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԵՐԱ»

Խմբագրությունը ստացավ անհայտ հեղինակից վերոհիշյալ վերնագրով մի տետրակ, տպված Կ. Պոլսում 1874 ամի 15 հունվարի, որ բաղկանում է 77 երեսից։ Այդ տետրակը հետաքրքրական է նորանով, որ, մի կողմից՝ տալիս է բավականին ճիշտ տեղեկություններ Վասպուրականի ազգաբնակությանց և նոցա դրության մասին, մյուս կողմից՝ ցույց է տալիս Կ. Պոլսի Ազգ. Սահմանադրության անխնամ և թույլ ազդեցությունը տեղային հայերի վիճակը բարվոքելու համար, այլև՝ հայոց հոգևոր առաջնորդի հարաբերությունները թե՛ յուր ժողովրդի և թե՛ օտարազգիների հետ։

Վասպուրականի նահանգը յուր Վան քաղաքով ունի 180 հազարի չափ հայ բնակիչ, 40-ից ավելի վանքեր, հարյուրավոր եկեղեցիներ և բազմաթիվ թե՛ կուսակրոն և թե՛ աշխարհային հոգևորականներ։ Այդ բոլորի վերա իշխում է վիճակային հոգ. առաջնորդը։ Քրդերն, ասորիներն ու եզդիք բնակիչների շատ փոքր և աննշան մասն են կազմում, վարում են թափառաշրջիկ կյանք և պարապվում են մեծ մասամբ անասնապահությամբ։ Երկրի արհեստը, վաճառականությունն և երկրագործությունը կենտրոնացած է հայերի ձեռքում։

Վաղեմի սովորությամբ հայոց առաջնորդն, ոչ միայն ընդարձակ իրավունքներով իշխում է յուր վիճակի հոգևոր կառավարության վերա, այլև քաղաքական կառավարության կողմից նա համարվում է որպես ներկայացուցիչ ազգի և միջամտություն է անում նորա ամեն մի դատաստանական գործերում։ Այդ իրավունքն առաջնորդի տարածվում է՝ բացի հայերից՝ և մյուս մանր ազգերի վերա, որպես են՝ ասորիները, քրդերն, եզդիները և այլն։ Առաջնորդն է նշանակում վանքերի վանահայրերը, եկեղեցիների ծխական քահանաները, նա հոգում է նոցա եկամուտների վերա։ Առաջնորդն է նշանակում գյուղերի ռեիսները (տանուտերերը) և ամեն մի թե՛ քրեական և թե՛ քաղաքական գործերի համար, նախ դիմում են հայոց առաջնորդարանը, իսկ եթե այնտեղ դատը չէ վճռում, ապա փաշային։ Իսկ փաշային մեջլիսում ազգի կողմից նախագահում է դարձյալ առաջնորդը։

Մի այդպիսի պաշտոնը վարում էր երկար տարիներով Պողոս վարդապետը։ Այդ վարդապետի վարմունքը միանգամայն ներկա-

յացնում է մի տխուր երևույթ՝ այդ հոգևորականը բարձր իշխանության հասած, փոխանակ գործ դներ իր իրավունքը դեպի բարին, գործադրում է դեպի չարը։ Պողոս վարդապետը հանդիսանում է այն հմուտ որսորդներից մինն, որ շատ լավ ուղղել գիտե յուր զենքը նպատակին դիպցնելու համար։ Նա կշռել էր յուր ուժը, նա գիտեր, որ յուր ժողովուրդը Բարձ. Դռան առջև ձայների ավելի մեծ բազմություն էր կազմում։ Կառավարության ամեն մի պաշտոնակալը՝ փաշան, գայմագամը, դաղին, մեմուրը, զափթիան՝ ստիպված էին հնազանդել Պողոս վարդապետին, և նորա հաճույքին համեմատ վարվել, որովհետև հակառակ ընթացքում՝ նորա զրկված կլինեին յուրյանց տեղերեն։ Բավական էր հայր սուրբի մի խոսքը, իսկույն պատրաստ էր ժողովրդից մի հանրագրություն, հազարավոր ստորագրություններով, փաշայի կամ գայմագամի դեմ։

Այդպիսի միջոցներով ենթարկելով յուր ազդեցությանը կառավարության պաշտոնակալները, Պողոս վարդապետը հասնում է այն իրավունքին, որ կարողանում է տիրել և մանր ազգությունների, որպես են քրդերի իշխանների վերա։ Յուզբաշի Ալի աղան, Զազա էմիերը, Շեմսկի Տրպոն, Պաշկալայի Քոռ էմիերը, բոլորը հպատակում են նորան։ Նորտուզա Տրպազ աղան, որ Հոգվոց վանքը թալնեց. Շատախու Գյուլ-Մեհմեդը, որ տեղային եկեղեցիները կողոպտեց և յուր անասունների դոմեր դարձրուց, Մոգաց երկրի Ավդալ բեկը, որ Նեթոյի պես նշանավոր հային սպանեց, Դեվրիշ բեյը՝ այն հազարավոր հայերի արյունը թափող խան-Մահմուդի եղբայրը — և Մուքուրցվոց Մեհմետ-Ալի աղան, որ Սաթմանից եկեղեցին պղծեց՝ բոլորը Պողոս վարդապետի ամենահավատարիմ բարեկամներն են դառնում։ Ծզրդիներու աղանները՝ Ջաթոն և Սատոն, Հայտարանցոց բազմաթիվ ցեղապետները, Նոցա գլխավորը՝ Ալի աղան, որը Տաճկաստանից կողոպտելով անցնում են Պարսկաստան, և այնտեղից կողոպտելով պատրաստ պարվում են Տաճկաստանում՝ այդ բոլոր չարագործները,—գաղտնի կապեր են կցում Պողոս հայր սուրբի հետ և նորանից կախումն ունեն։ Ինչո՞ւ, Որովհետև Պողոս հայր սուրբը փաշային շատ մոտ մի անձն է, եթե այդ ավազակապետներից մինը մեղադրվում էր որևիցե հանցանքի մեջ, միշտ կարող էր նորա միջնորդությունից օգուտ քաղել և ազատվել։

Պողոս վարդապետն յուր պաշտպանությունը դեպի վերոհիշյալ ամենասոսկալի ավազակապետները գործ էր դնում ոչ միայն

այնպիսի դեպքերում, երբ նոքա որևիցե չարագործություն էին անում օտարներին, այլև երբ հարստահարվածները լինեին նույնիսկ յուր ժողովուրդը — հայերը։ Անուրանալի է այն անցքն, երբ Մուքուրցվոց Մեհմեդ Ալի աղան Սաթմանից եկեղեցին կողոպտեց և պղծեց, երբ տարվում էր նա Պոլիս պատժվելու համար, կես ճանապարհից, այն է Կարինից, ետ դարձավ Պողոս հայր սուրբի պաշտպանությամբ։

Այլ փաստեր.

Պողոսի պաշտպանությունը վայելող Հեյդարանցի քրդերը ծժիշկ գյուղի եկեղեցին կկողոպտեն, հայր սուրբը գյուղացիներեն 6000 ղուրուշ ընծա հավաքելով կտա ավազակների գլխավորին և կողոպուտը ետ կգնե։ Մի հայոց եկեղեցի պղծել տվող Մեհմետ Ալիին ազատելու համար Պողոսը կառավարության ատյանի մեջ վկայում է, թե չարագործն անչափահաս մանուկ լինելով, ազատ է պատժվելուց, մինչդեռ նա ահագին մորուք ուներ։ Կոջայի աղան՝ Շերիֆը ճանապարհին մի խավենցի հայ կին է բռնաբարում, և ազատվում է հայր սուրբի օգնությամբ։ Շատ անգամ ինքը հայր սուրբը այդպիսի անիրավությունների միջնորդ էր դառնում, որպես է այն դրամատիկական անցքը, երբ զորապետ Ֆերիկ փաշան Պողոսեն մի հայ կին է ուզում, նույն միջոցներում տրհերցի Պետրոսն յուր կնոջ ծեծած լինելով, հայր սուրբը լսում է և բերել տալով, փաշայի մոտ է ուղարկում։

Ի՞նչ էր պատճառն, որ Պողոս վարդապետը, կապեր ուներ այդպիսի եղեռնագործների հետ։ Պատճառը շատ պարզ է։ Երբ նոքա հափշտակում էին, հայր սուրբը մասն ուներ կողոպուտի մեջ։ Երբ նոցա ցեղերի մեջ որևիցե մարդ կամենում էր վաճառականության առիթով կամ այլ գործով գնալ, յուր անձի և ապրանքի ապահովության համար ստիպված էր հայր սուրբից մի հանձնարարական թուղթ առնել այս կամ այն իշխանի վերա, իհարկե, միևնույն ժամանակ ընծայելով հայր սուրբի «աջահամբույրը»։ Բացի դոցանից, այդ ավազակներից ամեն մինը, լինելով միևնույն ժամանակ մի ամբողջ ցեղի իշխան, նոքա միշտ պատրաստի գործիքներ էին հայր սուրբի ձեռքում յուր հակառակորդներին ոարսափեցնելու համար, և երկրի մեջ ցանկացած խռովությունները հարուցանելու համար։

Օրինակի համար Տփխիսից Վանա երկու Անապատներին հատկացյալ մի կտակի մասին Պողոսի և Թոփուզյան հայր սուրբի մեջ անհամաձայնություն է բացվում։ Քանի օրից Թոփուզյանի

վանահայրությանը ներքո գտնվող Անապատի խոտի մարագները հրդեհվում են, վնասը հասնում է մինչև 30,000 դուրուշի։ Ջարագործը հայտնվում է Պողոսի հավատարիմ քրդերից մինը։

Մի այդպիսի ճարպկություն, որով Պողոս վարդապետը կարողացավ հպատակեցնել յուրյան՝ թե՛ տեղային կառավարության ներկայացուցիչներին, և թե՛ թափառական ցեղերի զանազան իշխաններին, մենք վերաբերում ենք նորա ամենահնարագետ խորամանկությանը և հմուտ քաղաքականությանը։ Արդարև, նա երեվում է բարձր բնավորության տեր մարդերից մինը։ Եթե նա յուր այդքան ազդեցությունը գործ դներ դեպի ժողովրդի բարօրությունն, անուրանալի է, որ Վասպուրականի հայերը կարող կլինեին շատ բարիքներ վայելել։ Մենք չենք հերքում այն բանը, որ, Վասպուրականի նման նահանգում, ուր առաջնորդը ժողովրդի և՛ հոգևոր, և՛ մարմնավոր գլխավորի ներկայացուցիչն է, նորան մինչև անգամ հարկավոր է մյուս մանր ազգությանց իշխանների հետ կապեր ունենալ, կառավարության հարստահարությունների առաջը առնելու համար։ Բայց երբ որ մի այդպիսի մարդն յուր ուժերը դեպի չարն է գործադրում, այդ ներելի չէ։

Բայց շուտով Պողոս վարդապետը անտանելի է դառնում ժողովրդին և սկսվում են անդադար և ծիգ բողոքներ դեպի Կ. Պոլսի Ազգ. Վարչությունը։ Պատրիարքարանի 1860 թվից սկսյալ արձանագրություններից հանելով, տետրակի հեղինակը հիշում է հետևյալ հանցանքները. ա. Վանա Այգեստանի մեջ կասկածավոր կնոջ տունը հաճախելը. բ. Յուր սիրելի նժույգը գինիով արբեցնելը, և արհեստական կատաղությամբ վարժեցնելով, նորանով զվարճանալն. գ. Ավանցի Մանուկի կինն ամուսնի կենդանության ժամանակ ուրիշին հետ պսակել տալն. դ. ռեհս (տանուտեր) Սինանին ծեծի տակ անողորմաբար կաշին քերթելը. ե. տրլաշենցի բահանային մահու չափ գանակոծելը. զ. սխակայեցի ռեհս Գրիգորին չարաչար ծեծելով աչքերը կուրացնելը. է. Հարություն ժամկոչին նույն վիճակի մեջ գցելը, Վարդավառի տոնախմբության օրում, Վարագա վանքի մեջ, Դրախտ անվանյալ պարտեզում, Ըղղատաշի Հակովբի հարսին հետ ունեցած կոմեդիան... թ. Մի փոքրիկ երեխայի գողության համար մորը ժամկոչին շալակն տալով չարաչար ծեծելը, ժ. ժողովրդից անասելի բռնաբարությամբ փող հավաքելը տաճիկների համար զորանոցներ շինելու և այլն։

Վերոհիշյալ հանցանքները մանրամասնաբար բացատրելեն հետո, տետրակի հեղինակը մեջ է բերում մի քանի նշանավոր

անձինքների նամակներն, ուղղած Պոլսի պատրիարքին, որոնք նույնպես երևան են հանում Պողոսի այլ մեղադրանքներն, որոնք մենք ավելորդ ենք համարում հիշել։

Ազգ. Վարչությունն, ուշադրություն դարձնելով ժողովրդի բողոքներին, Պողոս վարդապետին բերել է տալիս Կ. Պոլիս քննության համար, նորա տեղը նշանակելով Իգնատիոս եպիսկոպոսին։ Իսկ Պողոսը Պոլսից փախչում է, կրկին վերադառնում է Վան, և յուր հին բարեկամները գլխին հավաքելով, հարձակվում է առաջնորդարանի վերա և արյունահեղությանց պատճառներ է տալիս։ Այնուհետև նա սկսում է յուր հին դերը խաղալ։ Անապատի վանքի հարստությունքը վատնում է զանազան անբարոյականների հետ, մինչև անգամ նույն վանքի վարադույրների հետքում Դերվիշ բեկին հետ չենկի (պար եկող պատանի է) խաղցնում։ Եվ կտուց Անապատի միաբան Ռափայել վ. Պողոսից չարաչար ծեծվելով, ոսկորները փշրվում է և մեռնում։ Այնուհետև նա սկսում է վրեժխնդիր լինել այն անձանց, որք նորա մասին Պոլսում բողոքել էին։ Դոցանից մինն էր Տ. Օհաննեսյան կարապետը։ Պողոս վ. գիշերով յուր երևելի քուրդ դերվիշին մի քանի ծառաների հետ ուղարկում է Տ. Օհաննեսյանի տունը. անկողնից քարշում են և ձեռքն, ոտքը կապած բերում են Պողոսի մոտ։ Հայր աուրբն յուր զոհին պահեցնում է, գլուխը նազար անուն ծառային բռնել տալով, և ոտները ուրիշներին, յուր հաջի ռաճապով[1] այնքան ծեծում է, մինչև երիտասարդի բերնեն արյուն է հոսում և շատ չէ տևում, որ մեռնում է։

Այնուհետև տետրակի մեջ նկարագրվում է Պողոսի մինչև հիսուն չափ սարսափելի բարբարոսություններն, որք արտահայտում են նորա գազանային, ցած և անբարոյական բնավորությունը։ Մենք լռում ենք նոցա մասին, որովհետև չենք ուզում զզվեցնել ընթերցողին։

Նորից բողոքները թափվում են դեպի Պոլսի Ազգ. Վարչությունը։ Քաղաքական ժողովը գործը գցում է Կրոնական ժողովին, վերջին այդ խնդիրն յուր վրա չէ առնում։ Խրիմյանը ստիպված է լինում ինքնին գործի վճիռը տալ. Բարձ. Դռան հրամանով և

---

1 «Հաջի ռաճապ» Պողոսի ահագին մարդածեծ փայտի անունն է, որ վերս քուրքերեն գրել էր ուված՝ «դա հաջի ռաճապն է, մոլորվածներին կդարձնե դեպ ուղիղ ճանապարհը»։

յուր պատրիարքական թաղիրով[1] Պողոսին Վանից աքսորելով, Ուչ Քիլիսայի վանքն է ուղարկում։ Այնտեղ Պողոսն անտանելի է դառնում, աքսորը դարձյալ Խրիմյանի հրամանով փոխվում է Կարին։ Բայց Կարինում Պողոսը նույնպես հանգիստ չէ մնում. նորա հին բարեկամների, քրդերի զանազան իշխանների գաղտնի և հայտնի հարաբերությունները նորա հետ դարձյալ շարունակվում են։ Պողոսը Կարինում դառնում է ոչ միայն անտանելի, այլև վտանգավոր։ Այնտեղից բողոքում են Պոլսի Ազգ. Վարչությանը Պողոսի աքսորանքի տեղը փոխել։ Ազգ. Վարչությունը մի քանի «պողոսյաններ» միջնորդությամբ որոշում է՝ ներկա հունվարի 10-ին, որ Պողոսը Բարձ. Դռան հրամանով կրկին Վան երթա և մնա Անապատում, այն անապատում, որտեղից նա քանի տարի առաջ սպառազինյալ քուրդերով Վանա առաջնորդարանին վերա հարձակվեցավ և խեղճ Իգնատիոս եպիսկոպոսի գլխին այն սարսափելի դրաման խաղաց։

Պոլսի Ազգ. Վարչության մի այդպիսի որոշումը մեծ խռովություն է բարձրացնում Վասպուրականի մեջ։ Ժողովուրդն ամենևին չէ ուզում այն մարդին կրկին յուր մեջ ունենալ, որից այնքան չարիքներ կրած էր։ Բայց Ազգ. Վարչությունը բոլորովին անտես առնելով ժողովրդի բողոքը, մնում է հաստատ յուր որոշման վերա, որովհետև Պողոսին պաշտպանողները ժողովրդի մի քանի նշանավոր անձինքներն էին[2]։

Ինչո՞վ է վերջանում այդ խռովությունը։ Ժողովրդի ներկայացուցիչները վերոհիշյալ տետրակը առաջարկելով Պոլսի Ազգ. Վարչությանը, երեսները դարձնում են այդպիսի խոսքերով՝ «Եթե Ազգ. Վարչությունը Նորեն անփոփոխ պահե իր ըրած որոշումն, մեզ կմնա վերջինը համարել խոհեմություն... և դիմել բարձրագույն կառավարության ներկայացնելու մեր այս կենաց և մահու խնդիրը...։ Ալ ազատ պիտի մնա մեր խիղճը, մեր պատիվն ալ»։

Մենք հուսով ենք, որ Պոլսի Ազգ. Վարչությունն այնքան խոհեմ կլինի, որ չի արհամարհի ժողովրդի ձայնին, որպես ճշմարտության ձայնին, ի նկատի ունենալով այն սարսափելի հետևանքն,

---

1 Խրիմյանի այդ արդարադատ վարմունքն էր, որ վերջապես Պոլսի Քաղ. ժողովի կողմից նորա վերա գրած մեղադրանքներից միևը համարվեցավ։

2 Յուրյանց անխիղճ շահերը հաջողցնելու համար Պողոսի պաշտպանությունը վայելում էին և մի քանի հայ աղաներ, որպես են Վանա կոմպանիաները, որք նորա միջոցով կարողանում են օրինավոր կերպով հարստահարել աղքատ գյուղացիներին։

որ կարող է ծագել այդպիսի դեպքերից։ Որովհետև երբ Ազգ. Վարչությունը, չհարգելով ժողովրդի բողոքները, նորանց ատիթ կտա դիմել Բարձ. Դռանը, այսպիսով նա ինքը ճանապարհ կբաց անե հայերի դեմ դեպի տաճիկների դիվանատները դիմելու։

Այդ է կառավարության իսկական նպատակը։ Երբ որ այդպիսի դեպքերը կկրկնվեն հաճախակի, կառավարությունը մի օր կասե. հայեր, մենք տվեցինք ձեզ սահմանադրություն և ազգային ինքնակառավարության իրավունքներ, բայց դուք անընդունակ եղաք վարելու, ուրեմն ետ տվեք։ Արժե՞ արդյոք մի այդպիսի կորուստը զոհել մի քանի շահասեր «պողոսյաններին» հաճույքին, որք Խրիմյանի անկումից հետո, աշխատում են Պողոսին այդ միջոցով կրկին Վանա առաջնորդության աթոռը նստեցնել...

«ՔՆԱՐ ՄՇԵՑՎՈՑ ԵՎ ՎԱՆԵՑՎՈՑ» ԳՐՔՈՒՅԿԻ ԱՒԻԹՈՎ

Լույս տեսավ Ս. Էջմիածնի տպարանից հայր Արիստակես վ. Սեդրակյանի հրատարակությամբ մի գրքույկ, որ կոչվում է «Քնար մշեցվոց և վանեցվոց»։ Այդ գրքույկը բաղկանում է 46 երեսից և պարունակում է մինչև 36 երգեր, որ ժողովել է հրատարակիչ հայրը Տաթևի և Վասպուրականի ժողովրդական երգերից։

Երգերը կարելի է բաժանել երկու մասն՝ կրոնական և լիրիկական։ Առաջին մասին պատկանում են՝ «Մննդյան երգ». «Ս. Կարապետն Գլակա վանքից», «Քարոզ խաչ», «Հոգի և մարմին»։ Այդ երգերը, թեև զուրկ են դավանաբանական և պատմական ճշտություններից, այսուամենայնիվ, նոքա հետաքրքրական են նրանով, որ արտահայտում են գնևհիկ և անուս ժողովրդի հայացքը յուրյանց սրտին խիստ սուրբ եղած առարկաների վերաբ։ Օրինակի համար, «Մննդյան երգի» մեջ ժողովրդական ֆանտազիան չէ բավականանում նրանով, թե Մեսիայի ծնունդն եղավ անշուք փարախի անկյունում, հովիվների տնակի մեջ։ Նա ընդայում է մարդկության նորածին փրկչին մի տուն, որո շինվածքը շաղախված էր աշնան գինիով, զարդարած էր գարնան ծաղիկներով. եկեղեցին ներկայացնում էր նորա քանիը — սրբազան կրակարանը — իսկ բոլորած լուսինը՝ կազմում էր այն քոնրի խուփը։ Մի տուն, որո

սյուները խնկենի ծառերից էին, առաստաղը՝ ծալ-ծալ ոսկուց. աղավնիք հարսների նման սպասավորում էին այնտեղ և մանիշակի փունջերով ավելում էին, մաքրում էին տունը և այլն։

Դորանից երևում է, թե որպիսի առասպելաբանական կերպարանք է ստանում կրոնքը, երբ նորա ծագումը կապված էր մի ապգի բանաստեղծության հետ։

«Սուրբ Կարապետն Գլակա վանից» *այդ երգը, որ նվիրված է Մշու սուրբ Կարապետի վանքին, ցույց է տալիս այն խորին, մինչև մոլեռանդության հասած հավատքը ժողովրդի, որ ունի նա դեպի յուր պաշտած սրբարանը։ Նա ամեն ինչ սպասում է նորանից. յուր կյանքի բոլոր պետքերի մատակարարը նորան է համարում։ Նա տալիս է այդ վանքին «Մշու սուլթան»— Մուրադատուր» տիտղոսները, այն ջերմ հուսով, որ ամեն մուրադների, այսինքն՝ նպատակների և փափագների կատարողը նա է։ Ահա մի այդպիսի հավատքն է, որ ձգում է հեռու աշխարհներից բազմաթիվ հայ ուխտավորների քարավանները դեպի այդ վանքը...։ Բանաստեղծը չէ ընդունում Հովհաննեսին որպես Քրիստոսի մկրտիչ, նորա երեսուն տարեկան հասակում, այլ որպես կնճավոր նորա երեխայության ժամանակ։ Այդպես էլ հավատում է ժողովուրդը։ Իսկ ինչ որ վերաբերում է այն խոսքերին,— թե որպես սուրբ Կարապետ հաղթեց չար ոգիներին, որք չէին հեռանում նորա սրբարանից, և բանտարկեց նորանց մթին զնդանում,— այդ ավանդությունն այնքան հին է, որ գուցե հասնում է մինչև Լուսավորչի օրերը, երբ այդ վանքը հեթանոսական մեհյանից քրիստոնեական տաճարի վերափոխվեցավ, երբ Տրդատ Ամանոր շաստուծո տոնի փոխարեն հրամայեց կատարել սուրբ Կարապետի տոնախմբությունը։ Սուրբ Կարապետի մարմինը Կայսրիից (Կեսարիայից) Տարոն բերվիլը, որպես ասվում է երգի մեջ, հիշում չեն մեր պատմագիրները։ Թեև խորին կապ ունեն ժողովրդական ավանդությունները նորա պատմական անցյալի հետ։*

«Քարոզ խաչ»։ Այդ երգի մեջ նկարագրվում է մի ամբողջ առասպել, թե որպես խոտաղները (խոտարած մանկտին) դաշտում պոխի կոչված բույսից շինում են մի խաչ, զարդարում են նորան։ Թե որպես նոցա աղոթքով երկնքից իջնում է նույն խաչի մեջ «սուրբ մասունք»։ Գյուղացիք փառավոր հանդիսով այդ սրբությունը տանում են գյուղը։ Նա ցերեկով հովանի էր լինում նոցա գյուղի վերա և պատսպարում էր արևի տոթից, իսկ գիշերով արեգակի նման լույս էր սփռում։ Թե որպես չար գզիրի մատ-

Նուիրյամբ այդ դեպքը լսում է մի քուրդ աղա, կամենում է խաչը յուր ամրոցը տանել, որ այնտեղ լուսավորե։ Որո պատճառով ինքը, յուր բոլոր գերդաստանի հետ, պատժվում են կատաղության ախտով, և այլն։ Այդ երգը, իբրև ծնունդ ժողովրդական անհավատութեան, նշանավոր է նորանով, թե որպես ստեղծագործվում են հրաշքները։

«Հոգի և մարմին» երգի մեջ ընթերցողը տեսնում է ամբոխի հայացքը, որ նա ունի ներկա աշխարհի և առհասարակ կյանքի վերա։ Երևակայելով մի փառավոր և խաղաղ ապագա գերեզմանի մյուս կողմում, մշեցին նայում է նյութական աշխարհին որպես անցավոր և փուչ բանի վերա, որո պետքերի մասին մտածելն անգամ մեղք էր։ Այդպիսի ուղղութիւնը նկատելի է համարյա մեր բոլոր ռամկական երգերի մեջ, երբ նոքա հայտնում են որևիցե կարծիք ներկա և հանդերձյալ կյանքի մասին։ Այդ վնասակար համոզմունքի ներշնչութիւնը ժողովրդի մեջ, մենք ուրիշ պատճառի չենք կարող ենթադրել, եթե ոչ այն բազմաթիվ վանքերի, ճգնավորների, և միայնակյաց աբեղաների ազդեցութիւնը, որոցմով շրջապատված են Մուշը և Վանը։ Եվ այդ է պատճառը, որ Տարոնի և Վասպուրականի ժողովուրդը չափից դուրս ծույլ են դեպի աշխատութիւնը, նոքա բավականանում են այնքանով, որ կարող լինեին վարել յուրյանց աղքատիկ ապրուստը, այլ խոսքով, նոքա արհամարհում են մարմինը, մտածելով հոգու մասին, որ ուներ ավելի փառավոր և տևողական ապագա։

Լիրիկական երգերի մեծ մասը ջանիմաննեե են. այդ անունը, որ պարսկերեն նշանակում է իմ հոգյակս, տալիս են մի տեսակ պարերգի, որ երգվում է զանազան խաղերի մեջ։ Այդ խաղերը Վասպուրականի և Տարոնի կողմերում կոչվում են գովաղ, կամ գոնդ, իսկ Արարատա կողմերում յալլի։ Խաղացողները երկու սեռից ևս, միմյանց ձեռքից բռնելով կազմում են բոլորակ շղթա, որ պար գալով զանազան պտույտներ և շրջաններ է գործում, իհարկե շարժմունքները հարմարեցնելով պարի եղանակին։ Պարագլուխը (յալլի բաշին) սկսում է մի ջանիման, իսկ ամբողջ խորը կրկնում է երգի ամեն մի տան վերջին տողերը միայն։ Այդ է պատճառը, որ ջանիմաննեերի մեջ առաջին տողը կրկնվում է միշտ, օրինակ.

Ջանիման, ջանիման,
Դեհե զընկ զընկ, դեհե ջան,
Բաղնի ջան, Բաղնի և այլն։

Լիրիկական մնացյալ երգերի մեծ մասը, որպիսին են՝ «Մայրամ», «Վալուխան», «Խումար», «Ջաշմիկ», «Խանգյուլ»— եթե կարելի է այդպես կոչել, դոքա ժողովրդական երգիծաբանութիւններ են, դեպի նույն անձինքը, որոց անունները հիշվում են այդ երգերի մեջ։ Ամեն մի տարապայման երևույթ ժողովրդի մեջ, որ հարմար չէր նորա սովորութիւնների և կյանքի կանոններին, միշտ սաստիկ ազդեցություն ունի նորա սրտի և հոգու վերա։ Մի պարզ, նահապետական մաքրութիւնով ապրող ամբոխի մեջ մի կնոջ փոքր ի շատե տարապայման վարմունքը, ոչ միայն հարուցանում է ընդհանուրի զզվանքը, այլև յուր վերա է դարձնում նորա երգիչների պարսավը։ Այդ է պատճառը, որ ժողովրդական երգերի մեջ, երբ նոքա վերաբերում էին որևիցե անձնականութեան, ըստ մեծի մասին չեն հիշվում հնարված անուններ, այլ իսկական անուններ, որք առնված էին կյանքից։ Այդպես է և պ. Միանսարյանցի «Քնարի» մեջ տպված «Ջուլոն»։

Լիրիկական երգերի մեջ հետաքրքրական է մի հարսանյաց երգ (տե՛ս եր. 16-ը), որը նվիրված է փեսայի մորը։ Հեռանալով հայրենական օջախից, դեռահաս օրիորդը պիտի մտնե մի նոր շրջան, մի նոր ընտանեկան լծորդության մեջ։ Նորան կանդնեցնում են այն տան շեմքի վերա, որտ մեջ ընտրված էր նա լինել գերդաստանի անդամ։ Այդ երգով հրավեր են կարդում փեսայի մորը, որ նա դուրս գա տնից և ընդունե յուր նորընծա հարսնացուն։ Երգի մեջ կարդացվում է այդ խղճալի զոհի ճակատագիրը, նորա պաշտոնը, որ պետք է լիներ ամուսնի տան մեջ։ Ահա երգի միտքը՝ «Դուրս արի, դե դուրս արի, թագավորի (փեսայի) մայր, դուրս արի, քեզ համար աղբյուրից ջուր բերող ենք բերել, քեզ համար դաշտը հաց տանող ենք բերել. քեզ համար ձավար ծեծող ենք բերել, քեզ համար հաց թխող ենք բերել. քեզ համար կերակուր եփող, տունը ավլող, աղախին ենք բերել» և այլն։

Դեռահաս աղջիկն առաջին օրից դառնում է մի կրավորական էակ պառավ կեսուրի անսահման իշխանութեան ներքո, նորա մեջ ճնշվում, խեղդվում են մարդկային ազատ զգացմունքները։ Այդ երգը մասնավորապես երևան է հանում հայոց ընտանեկան կյանքի այն պատրիարքական միապետութիւնը, ուր գերդաստանի պետը իշխում է բոլոր մանուկ ուժերի վերա։

Մի այլ տեղ, որպես է եր. 22. ԺԲ երգի մեջ, մշեցին արտահայտում է յուր սիրո զգացմունքները։ Նա երևակայում է յուր սիրուհին կանգնած աղբյուրի մոտ, որո դեմքը շողշողում էր արև-

գակի լուսով. այդ միակ տեղն է, ուր հաճախ կարելի էր տեսնել հյուղացի աղջիկներին։ Գովում է նորա ժրությունը, որ երկու սափոր միասին շալակն առած, գալիս էր աղբյուրից ջուր տանելու։ Նորա մեջքի ներքությունը նմանեցնում է յուր խնկաբույր բարակ կոթին, իսկ նորա կուրծքի սպիտակությունը մածունի։ Նորա ընթացքը նմանեցնում է ոչխարների շորոր տալով ճմելուն։ Եվ արդարև, ուրիշ ի՞նչ գեղեցիկ համեմատություն կարող էր գտնել մի խաշնարած ժողովրդի որդին, քան խնկաբույրը, որ յուր անձի պաշտպանն է, քան մածունը, որ նորա սիրելի կերակուրն է, քան ոչխարը, որ նորա հարստությունն է։ Բնության այլ գեղեցկությունները նորա համար զգալի չեն։ Յուր նպատակին հասնելու համար, սիրած օրիորդն յուրյան կին ունենալու համար, հերոսը մտածում է գործ դնել երկու միջոցներ միայն, կամ փախցնել աղջկան յուր ալ նժույգով և կամ նորա հայրը, եթե հարյուր ուզելու լինի, փոխարենը հազար վճարել և առնել աղջկան։ Փոխադարձ սերն այս հանգամանքում տեղիք չունի։ Մնողքների կամայականությունը ստիպում է սիրողներին այդպիսի միջոցների դիմել։

Դառնալով դեպի այդ երգերի գրականական նշանակությունը, մենք այդքանը կասենք, որքան այդպիսի ժողովրդական երգերը կազմված լինեին կոշտ-կոպիտ կերպով, որքան նոքա զուրկ լինեին արհեստական գեղեցկությունից, այսուամենայնիվ, նոքա դարձյալ նշանավոր են, որպես մի անզարդացած, դեռ յուր տղայության մեջ ապրող ժողովրդի երեխայական-անկեղծ թոթովանքը, որ բխում է նորա սրտից և նորա կյանքից։

Մի ազգի կամ մի ժողովրդի բարոյական և մտավոր պատկերն ավելի ճշտությամբ երևում է նորա բանաստեղծության մեջ. կամենում ես ճանաչել նորա հոգին, կարդա նորա երգերը։

Մշեցվոց և վանեցվոց երգերի մեջ ընթերցողը տեսնում է ոչ թե երևակայական էակներ, այլ մի կենդանի ժողովուրդ, թե որպես ապրում է նա, որպես մտածում է, զգում է, վերջապես որպես սիրում է նա։ Այդ իսկ հատկանիշն է ժողովրդական երգերի։

Մինչև այսօր տպված աշըղ Շիրինի, Նիրանու, Ադամի և այլ դոցա նման երգերը չէ կարելի կոչել բուն ազգային կամ ժողովրդական։ Նոքա որիշ բան չեն, եթե ոչ կուրորեն հետևողություն պարսից կամ թուրքաց մուխամմազների ձևերին։ Բայց մշեցվոց և վանեցվոց երգերի մեջ կա ինքնուրույնություն, կա մի ժողովրդի հատկանիշ, բնավորություն։

Բացի մեր հիշածները, այդպիսի երգերը, որպես մի ժողովրդական բարբառի մաքուր օրինակ, ունեն և լեզվագիտական նշանակություն։ Նոցա լեզուն, թեև չափից դուրս աղավաղված է, այսուամենայնիվ նորա մեջ դեռ պահպանված են մեր հին լեզվի մի քանի ձևերը. ընթերցողը հանդիպում է մինչև այսօր յուրյան անծանոթ բուն հայկական բառերի, որոնց նա ոչ մի գրքի մեջ չէ տեսել։

Դառնալով դեպի այդ գրքույկի հրատարակությունը, մենք չենք կարող չհամակրել հայր Արիստակես վ. Սեդրակյանի գովելի աշխատությանը. առավել այն պատճառով, որ նա յուր դասի մեջ մի նախանձելի օրինակ է, որ յուրյան նվիրել է այդպիսի աշխատությանը։ Բայց միևնույն ժամանակ չենք կարող չնկատել, որ այդ գրքույկն ունի յուր թերություններն, այն կողմից, որ բոլոր անհասկանալի բառերի բացատրությունները դրած չեն, մանավանդ այն տողերը, ուր ամբողջ տողեր թուրքերեն կամ քուրդերեն են։ Բացի դորանից ծանոթությունների մեջ տեղ-տեղ երևում են անճշտություններ։ Որո ընդհակառակն, ոչ միայն հարկավոր էր դնել ամեն մի բառի բուն նշանակությունը, այլև անհասկանալի պարբերությունների և դարձվածների միտքը նույնպես պետք էր բացատրել։

ՀԱՍՈՒՆՅԱՆԸ ԵՎ ՅՈՒՐ ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Համարյա 8 տարի է Կ. Պոլսի մեջ հուզվում է հասունյանների և հակահասունյանների խնդիրը, բայց տակավին յուր վերջնական լուծմանը հասած չէ։ Այդ խիստ տխուր մի երևույթ է մեր հայ կաթոլիկների կյանքի մեջ, երբ լուսավոր աշխարհի ուշադրությունը դարձած է այն հարցի վերա, թե որքան բռնակալ պապականությունը վնասից մարդկային առաջադիմության գործին, երբ ամեն մի ազգի մտածող մասը աշխատում է քաքափել իրենից Հռոմի շղթաները, և ահա Տյուֆկաստանում հանդիսանում է մի կուսակցություն, կնքված Հասունյանի անունով, որ կրկին մտնում է պապի—այդ համաշխարհային հրեշի—ծանր լծի տակ։

Հասկանալի է մի հերձված որևիցե ժողովրդի մեջ, որ քաքափելով իրանից հնության փոշին, ձգտում էր դեպի ավելի պարզ

և ավելի ազատ կրոնական դաշափարներ։ Բայց հաստնյանների վարմունքը բոլորովին հակառակ երևույթ է ներկայացնում, մի երևույթ, որ քանի մի դարով պետք է ետ մղեր նոցա առաջադիմությունը և կրկին տաներ դեպի այն ստրկությունը, որ քարոզվում է հոգու փրկության անունով...

Մենք ավելորդ ենք համարում մտնել այդ հարցի դավանաբանական վիճմունքների մեջ. քննել նորան ազգային և հասարակական կետից։ Երբ մի փոքր հեռու հայացք ենք ձգում դեպի մեր ազգի պատմական անցյալը, տեսնում ենք՝ կրոնափոխությունները հայերի մեջ եղած են ոչ այնքան հավատքի համոզմունքով, որքան քաղաքական նպատակներով։ Հայը, նեղված տաճիկներից, պարսիկներից և այլ բարբարոս հարստահարողներից, չէ մտածել յուր սեփական ուժերից օգուտ քաղել, նա սովորած է եղել միշտ օտարներից օգնություն մուրալ, և նորան հասնելու համար զոհել է նա մինչև անգամ յուր գոյության ամենակենսական տարերքը— յուր անկախ եկեղեցին և ազգայնությունը։

Հայերի կրոնական միության ձգտումը երբեմն Հռոմի և երբեմն Բյուզանդիոնի հետ՝ նոցա քաղաքական նպատակների արտահայտությունն էր։

Բայց ի՞նչ օգուտ շահեցին հայերն այդ ընթացքը բռնելով։— Ոչի՛նչ, եվ այն ժամանակներում, երբ պապերի մի խոսքը վայր էր գլորում թագավորներին յուրյանց գահից և այն ժամանակներում, երբ նոցա հրամանով ամբողջ երկիրներ ողողվում էին պատերազմական արյունով, պապերի այն հզոր իշխանությունն ոչ միայն չկարողացավ ազատել հայերին թշնամիների սրից, այլ ավելի և ավելի գրգռեց թաթարների, տաճիկների և եգիպտոսի ամիրապետների կատաղությունը, և Հայաստանը նոցա ավերմունքին զոհ դարձավ։

Այսքան դառն և արյունալից փորձերից հետո, արևմուտքից օգնություն հուսալու ցնորքը մինչև այսօր տաճկաստանցի հայերի երևակայության մեջ մեծ դեր է խաղում։ Կապված լինել Հռոմի հետ և պապի—այդ արդեն ուժից ընկած ճիվաղի—օգնությամբ գրավել Ֆրանսիայի կոնսուլների և դեսպանների պաշտպանությունը—դոքա գլխավոր շարժառիթներն էին, որք ստիպել են տաճկաստանցի հային ընդունել կաթոլիկությունը։

Ջնայելով, որ այժմ Տաճկաստանի կառավարությունը այն չէ, ինչ որ էր սուլթան Մահմուդի ժամանակ, այսուամենայնիվ պապի որսորդները վաղուց ճանաչած էին հայերի մի այդպիսի թույլ

կողմը և ամենայն կերպով աշխատեցին նրանից օգուտ քաղել։ Եվ այդպիսով նոքա կտրեցին ազգի ամբողջությունից 150,000 հոգու հասնող մի հատված, որ կոչում է յուրյան կաթոլիկ և ֆրանգ անուններով և թուլացրին ազգի միության ուժերը։

Ընթերցողի ուշադրությունը դարձնելով «Մշակիս» անցյալ և ներկա համարների բանասիրականի վերա, դառնանք կրկին դեպի հասունյանների և հակահասունյանների խնդիրը։ Որպեսզի կարողանանք լավ ծանոթացնել այդ երկու կուսակցությանց նպատակների հետ, հարկավոր ենք համարում հիշել, որ մինչև 1865 թիվը, այսինքն՝ մինչև Կիլիկիայի վերջին կաթողիկոս Գրիգոր Պետրոս ութերորդի մահը, Տաճկաստանի մեջ հայ կաթոլիկների հոգեվոր կառավարությունը երկու թեմերի էր բաժանված, այն է՝ Կիլիկիայի և Կոստանդնուպոլսի, որք ունեին յուրյանց առանձին կաթողիկոսները և պատրիարքները։ Նոքա թեև պապի իրավասության ներքո էին գտանվում, բայց դեռ բոլորովին զրկված չէին յուրյանց ազգային առանձնություններից։ Նոքա պահպանել էին յուրյանց նախկին եկեղեցվո ծեսերը, ժամասացությունը և լեզուն։ Ժողովուրդն ինքն էր ընտրում յուր կաթողիկոսները, պատրիարքները և ազգապետները, ներկայացնում էր պապի և Բարձր. Դռան հաստատությանը։ Ժողովրդի ձեռքումն էր եկեղեցական կալվածների, դպրոցների, հիվանդանոցի և այլ ազգային հիմնարկությունների պահպանությունը։ Մի խոսքով ժողովուրդն ուներ յուր հասարակական և եկեղեցական անկախ կառավարությունը, նա հպատակում էր պապին, ընդունելով նորան իբրև եկեղեցվո գլուխ միայն, բայց թույլ չտալով միջամտել յուրյանց ներքին գործերում։

Բայց Հռոմի քաղաքականությանը ընդդեմ էր հայ կաթոլիկների հիշյալ իրավունքների վայելումը, նա ամենայն ջանք գործ էր դնում խլել նրանցից յուրյանց առանձնաշնորհությունները և իսպառ հպատակեցնել Վատիկանի իշխանությանը։ Յուր այդ նպատակին հասնելու համար պապը գործիք է ընտրում Հասունյան Անտոն վարդապետին, որ 1833 թվին պրոպագանդայի դպրոցում ավարտելով յուր ուսումը, ձեռնադրվում է քահանա և վերադառնում է յուր հայրենիքը՝ Կ. Պոլիս։ Այն օրից այդ նենգավոր եկեղեցականի կյանքը ներկայացնում է մի անընդհատ շարք ինտրիգաների, խռովությունների և ապստամբությունների, որոնցմով նա անցնում է հոգևոր իշխանության ավելի բարձր և բարձր աստիճանները, և վերջապես 1867 թվին նշանակվում է կաթողիկոս և

պատրիարք Կիլիկիայի և Կ. Պոլսի աթոռներին, միացնելով այդ երկու որոշ թեմերը յուր իշխանության ներքո։

Հասունյանն յուր վաղուց փափագած բաղձանքին յուրյան հասած էր համարում։ Բայց Պիոս իններորդը էժան գնով չծախեց Հասունին յուր շնորհած իշխանությունը։ Նա պետք է զոհեր հայ-կաթոլիկների դարերով պահպանված իրավունքները պապի կամայականությանը։ Եվ այդպես եղավ։ Պապի և Հասունյանի հետ հաստատած նոր կանոնադրության համաձայն հայ-կաթոլիկների բոլոր ժողովրդական առանձնաշնորհությունները ոչնչանում էին, և նոքա դառնում էին մի լոկ կրավորական մարմին, ենթարկված Հռոմի և նորա ներկայացուցիչների իշխանության ներքո։

Բայց բռնակալությունն այն ժամանակ միայն ավելի զգալի է լինում, երբ ուղղակի կերպով դիպչում է ժողովրդի իրավունքներին։ Հակահասունյանների ապստամբությունը մի համարձակ, միևնույն ժամանակ հակակրական բողոք էր ընդդեմ Հռոմի քահանայապետի մի այդպիսի վարմունքին։ Նոքա ճանաչեցին այն վաղեմի սխալը, թե արևմուտքից նորանց օգուտ չկա, թե նորանց պետք է գրավել տիրող պետության հովանավորությունը, հիմնվել յուրյանց սեպհական ուժերի վերա և պահպանել յուրյանց ազատությունը և ազգային իրավունքները։ Բայց բոլորովին այլապես էր մտածում հակառակ կուսակցությունը — Հասունյանները։ Նոքա բռնեցին պապի և նորա ներկայացուցիչ Հասունի կողմը։ Ահա մի հետաքրքիր կուսակցություն, որ կույր մոլեռանդությամբ զոհում է անսխալական կիսաստվածին յուր ազատությունը, եկեղեցվո ժողովրդականությունը, որ աշխատում է ոչնչացնել յուր ազգային սրբություններ և ստրկանալ...։

Բայց որքան զզվելի է ստրկության գաղափարը, այնքան ժամանակ պատմագրության մեջ դատապարտելի կմնա Հասունի և նորա կուսակիցների ազգանենգ վարմունքը...

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Մեզանում գրականությամբ պարապվողներն ըստ մեծի մասին սղքատ մարդիք են։ Եթե նրանցից մեկը հեղինակել, կամ թարգմանել էր որևիցե գիրք, տարիներով նորա աշխատությունը լույս չէ տեսնում, մնում է առանց տպագրվելու։

Ի՞նչ անեն հեղինակը՝ նորա աշխույժը սառչում է, նա հուսահատվում է և դադարում է աշխատելուց. տեսնելով, որ յուր պարապմունքը ոչ միայն հաց չէ տալիս նորան, այլև նա զրկվում է յուր գործունեության բարոյական բավականությունից։

Մի միջոց, որ շատ անգամ գործ է դրվում մեզանում գրքեր տպագրելու, այն է, որ հեղինակը կամ նորա բարեկամներից մեկը ստիպված են լինում բաժանորդագրության թերթը դռնե-դուռն մաս ածել, դորան նորան խնդրել, որ մի քանի օրինակ ստորագրեն, արծաթը կանխիկ վճարելով։ Եվ եթե հաջողվում է մի այդպիսի ձանձրալի ձեռնարկությունը, այնևս ոչ թե հեղինակի տաղանդը հարգելու և նորան խրախուսս տալու համար է լինում, ոչ, այլ որպես ողմկորեն ասում են՝ «խաթրի համար»։

Թե հիշյալ միջոցներով գիրք տպագրելը որքան վիրավորում է հեղինակի անձնասիրությունը, այդ ինքնըստինքյան հասկանալի է. բայց ի՞նչ հնարներ պետք է գործ դրած նրանց այդ դժբախտություններից ազատելու համար։

* *
*

Առհասարակ գրքերի պահանջը մեզանում այնքան զգալի է, որ այդ մասին երկար խոսելը բոլորովին ավելորդ է։

Մանկավարժական ժամանակակից խնդիրն արդեն զարթել է մեր մեջ, և մենք խիստ հաճախ լսում ենք՝ նոր մեթոդ, նոր եղանակ պետք է մտցնել դպրոցների մեջ. հին, փտած դրությունը պետք է ոչնչացնել և նոր համակարգությամբ կազմակերպել ուսումնարանների ձևը և այլն։

Բայց այդ վերանորոգություններին հարկավորած դաշսագրքերն ունե՞նք արդյոք։— Այդ մասին ո՛չ ոք չէ մտածում։

Գիտությունների և արհեստների դասավորությունը հայերենի լեզվով պետք է լինի, կրկնում են նույն ձայները, և երեխան երեխայությունից պետք է սովորի մտածել և խոսել ազգային լեզվով։

Իսկ այդ առարկաներին հարկավոր ձեռնարկներ ունե՞նք։— Դարձյալ ո՛չ ոք չէ մտածում։

Հարաժամ լսում ենք՝ ժողովրդի մեջ պետք է ընթերցանություն տարածել, դարուս լուսավոր գաղափարները պետք է նորա մեջ տարրացնել, արհեստների և գիտությունների հետ պետք է ծանոթացնել և հեռացնել պետք է նրանից վաղեմի նախապաշարմունքները, սովորեցնելով նորան ազատ և առողջ դատողություն։

Ինչո՞ւ չունենք։

Կոշկակարն յուր արհեստով ապրում է. հյուսն յուր արհեստով ընտանիք է պահում. իսկ գրքերի հեղինակն յուր գլուխն անգամ պահել չէ կարողանում։ Նորա արդյունաբերությունը մի պյնպիսի մթերք է, որ խիստ սակավ է գնահատվում։ Ջկա մի ձևոք, որ գնելով նորա աշխատության նյութը հաղորդեր ամբոխին։

Մեր հայ գրավաճառները մեծ մասամբ օտար ազգի գրքերի առևտուրով են պարապված։ Նոքա խիստ հեռու են պահում յուրյանց այն մտքից, որ գնեին հայ հեղինակի աշխատությունը և յուրյանց ծախսով հրատարակելով տարածեին ամբոխի մեջ։ Եվ եթե նրանցից մեկը հոժարվում է գնել մի աշխատություն, այն ևս այնպիսի պայմաններով, որ հեղինակի քրտի և մելանի արժեքը չէ դուրս բերում։

Իսկ առանձին մեկենասներն մեր մեջ հազվագյուտ բաներ են։ Մեր հարուստները պատրաստ են հազարներով մսխել յուրյանց փառասիրության համար, իսկ մի հեղինակի միջոց տալ յուր աշխատությունը ի լույս ածելու, այդ նրանց համար մահ է։

* *
*

Մասնավոր անձանց նվիրատվությամբ գիրք տպագրելը հաստատուն լինել չէ կարող, որովհետև զոհաբերությունը որքան գեղեցիկ բան է, այնքան և անտևողական է։

Ուրեմն, գրքերի տարածելը ժողովրդի մեջ ոչ թե մասնավոր մարդու գործ է, այլ մի կազմակերպված ընկերության գործ։

Թողնենք օտարազգիների մեջ զանազան ձևերով եղած տպագրական ընկերությունները, թողնենք Կ. Պոլսի մեջ նույն նպատակով կազմված մի քանի ընկերություններ, հիշենք միայն Վենետիկի և Վիեննայի հայ աբեղաների միաբանությունները։ Նոքա ոչ միայն ազատեցին մեր հին մատենագրությունը Հայաստանում վանքերի խորշերում փտելուց, այլև ընծայեցին մեզ թվով շատ ինքնուրույն և թարգմանական հեղինակություններ։ Նոքա մի կող-

մից տարածեցին մեր հասարակության մեջ ընթերցասիրություն, ծանոթացրին եվրոպական գիտությունների հետ, մյուս կողմից, հարստացրին յուրյանց վանքը։

Ս. էջմիածնի տպարանը կարող էր նույն դերը խաղալ, ինչ որ արեցին վենետիկցիք, եթե նրա գործունեությունը չլիներ սահմանափակված և եթե վանքի միաբանությունը կազմված լիներ գիտնական աբեղաներից և նոքա յուրյանց նվիրած լինեին գրականությանն։

Բայց դժբախտաբար Ս. էջմիածնա մամուլը ճաշոցներով և սուրբ գրքերի հին մեկնություններով է զբաղված...

* *
*

Վերոհիշյալ հանգամանքներն աչքի առաջ ունելով, մեզ համար խիստ զգալի է լինում մի օրինավոր տպագրական ընկերության կարևորությունը։

Բայց թիֆլիսեցի հայը ոչ մի գործի միջամուխ չէ լինում, մինչև նորա մեջ մի շոշափելի օգուտ չտեսնե։ Հինգ աբասով առնել, տասն աբասով ծախել, այդ բաները նորան այնքան սովորական են, որ նա մի ուրիշ առևտրական հիմնարկության վերա չէ մտածում։ Առհասարակ թիֆլիսեցի հայի գործունեությունը վաճառականական ասպարեզում դալաւրի գործունեություն է,— մի ձեռքից առնել, մյուս ձեռքին տալ. նա ինքը մի նյութ արդյունաբերելու ընդունակ չէ։

Ուրեմն խիստ դժվար է հասկացնել, թե վաճառականական սկիզբների վերա հիմնված մի տպագրական ընկերություն կարող էր տալ նրանց, եթե ոչ այն կողոպուտներն, որ անում են յուրյանց առևտուրից, այլ մի արդար և խղճմտանքով արդյունք։ Իսկ դորանով մեր դրամատերները բավականանալ կարող չեն։ Դարձյալ ստիպված ենք դիմել ուրիշ միջոցների։

* *
*

«Մշակի» 45-րդ համարում տպված էր մի լուր, թե մեծապատիվ Օնանովի հորդորանքով հավաքում է մի գումար Ներսիսյան դպրոցի հոբելյանի տարեդարձը կատարելու համար։ «Մշակը» յուր կողմից արել էր մի առաջարկություն, թե ավելի լավ կլիներ հոբելյանի հանդեսն որքան կարելի է համեստ կերպով կատարել

և ավելորդ գումարն ընծայել դպրոցին, նորա տոկոսով մի աշա-
կերտ արտասահմանում ուսանելու համար։

Այժմ լսում ենք, որ քանի օր առաջ մեծապատիվ Օնանովի հոգատարությամբ կազմվել է մի ժողով բժշկապետ Շահպարունյանցի տանը, ուր հավաքված են եղել Ներսեսյան դպրոցի հին աշակերտներից ոմանք, ստորագրել են մի նշանավոր գումար, որ տոկոսով մի աշակերտ պետք է ուսում առնե արտասահմանում հանուն հանգուցյալ Ալամդարյանի, որը նոցա վարժապետն է եղել։ Արդարև, երախտագիտության մի գովելի արտահայտություն է այդ դեպի այն մարդու հիշատակը, որ նոցա մտավոր և բարոյական դաստիարակիչն է եղել։

Բայց հանդիսականներից մինը պարոն Ն. Տ. Շ., հայտնելով գրատպության այժմյան մեծ կարևորությունը, և նկարագրելով հեղինակների աննախանձելի դրությունը, նույն ժողովի մեջ արել է ուրիշ առաջարկություն, թե հավաքված գումարը փոխանակ գործ դնելու մի աշակերտ ուսում առնելու համար, ավելի օգտավետ կլիներ նույն գումարով կազմել մի դրամագլուխ, որ տոկոսով տպագրվեին զանազան գրքեր, և այդպիսով միջոց տրվեր հեղինակներին թե՛ ապրելու, և թե՛ եռանդով աշխատելու։

Որպես լսում ենք, պարոն Ն. Տ. Շ...ի առաջարկությունն ընդունվել է ժողովի ընդհանուր համակրությամբ և նոքա վճռել են՝ բացի հանգուցյալ Ալամդարյանի անունով հավաքված նվիրատվություններ, կազմել մի տպագրական ընկերություն, ստորագրությամբ հավաքելով մի առանձին դրամագլուխ գրատպության գործին նպաստելու համար։

Հուսով ենք, որ մեծապատիվ Օնանովն ի թիվս յուր այլ բարեգործությանց կատարումն կտա և տպագրական ընկերության հաստատությանը, որը մեր կենսական ամենամեծ պահանջներից մեկն է, և այդպիսով կդյուրացնե գրքերի տարածվիլը մեր հասարակության մեջ։

Հիշյալ գումարի գործադրության կամ նորա ընկերության պայմանների մասին խոսելն ավելորդ է այժմ, միայն այսքանը պետք է ասել, որ դրամագլուխը պետք է հասնի այն քանակության, որ գոնյա տարեկան 1000 ռուբլի տոկոս բերե։ Այն ժամանակ կարող էին տպագրվել ամեն մի տարի երեք գրքեր, մոտավորապես 300 երեսից բաղկացած, և յուրաքանչյուր գրքից 1200 օրինակ։

* * *

Բոլորովին անիրագործելի բան չէ մի այդպիսի տպագրական ընկերություն, զոհաբերության սկիզբների վերա հիմնված, այնպիսի անձանց կողմից, որ այժմ մտածում են այդ մասին։ Մանավանդ, որքան մեզ հայտնի է, թեև նոքա անվերադառնալի կերպով ընծայելու են մի գումար, բայց նորա տոկոսի փոխարեն յուրաքանչյուրն միշտ և ժառանգաբար ստանալու է մի օրինակ ընկերության բոլոր հրատարակություններից։

Ներսիսյան դպրոցն ընծայել է մեր հասարակությանը, բացի յուրյանց հայրենի լեզվին հմուտ և ազգային ոգվով կրթված բազմաթիվ աշակերտներ, այլ նույն անձանց մեջ շատերը վայելում են բախտի առանձին բարիքները,— նոքա մեր քաղաքի հարստահանների շարքումն են դասվում։ Որպես լսում ենք, մեծապատիվ Օնանովի համախոհները, որք մտածում են տպագրական ընկերության մասին, նույն դասակարգի մարդիք են։ Ուրեմն նրանց համար մի մեծ ծանրություն չէր լինի հոգեկյանի առթիվ կազմել մի մշտական դրամագլուխ օգտավետ հրատարակությունների համար։ Այդպիսով, մի կողմից հեղինակներին միջոց կտրվեր աշխատելու, մյուս կողմից թե՛ մեր դպրոցները և թե՛ հասարակությունը զրկված չէր մնա այն գրքերից, որոց մեծ կարոտություն ունի։

Թե պարոն Ն Տ. Շ...ի առաջարկությունը բոլորովին կիրագործվի, այն ժամանակ մենք պատրաստ ենք հրատարակել մի ամբողջ ծրագիր հիշյալ տպագրական հիմնարկության թե՛ կանոնների և թե՛ նորա վարչության ձևերի մասին։

ԹՈՒՐՔԻԱ.

Փոքր Ասիո սովը տակավին սարսափելի կոտորածներ է անում, ձմեռվա վրա հասնելը մի երկրորդ դժբախտության պատճառ եղավ ժողովրդին, ճանապարհների հաղորդակցությունները դժվարացան և խեղճ սովատանջները զրկվեցան դրսից շուտափույթ կերպով պաշարներ ստանալուց։ Ամեն կողմից բարեգործական օժանդակությունները դեռ շարունակվում են. Նորին մեծ սուլթանը յուր սեփհական կալքից շնորհեց 20,000 լիրա, իսկ մայր թագու-

հին 5000 լիրա։ Այդ նմանում է այն հայրերի ծնողական զգացմունքին, որոնք անգութ կերպով իրենց որդիներին ճնշում են, մաշում են քանի նրանք առողջ են, իսկ երբ հիվանդացան, սկսում են սիրել, երբ մեռան, մի քանի կաթիլ արտասուքով միայն մխիթարում են իրանց...

Փոխանակ ժողովրդի հարկերը թեթևացնելու, փոխանակ նրա տնտեսական դրությունը բարվոքելու, փոխանակ միջոց տալու երկրագործության ծաղկելուն, կառավարությունը յուր պարտքերի բացը ծածկելու համար մինչ այն աստիճան հարստահարում է նրանց, որ ժողովուրդը շատ չէ ցանում, որովհետև արդյունքը չէ կարողանում լրացնել այն հարկերը, որ պետք է վճարե կառավարությանը։ Այստեղից հասկանալի է, թե ինչու սովը հաճախ կրկընվում է նույն երկրներում։

Նորոգ պատրիարքության ժամանակ վճռված ազգային խընդիրների կարգում անցավ և եկեղեցականների ընտրության հարցը։ Կրոնական ժողովի նոր կանոնադրության համաձայն, հոգևորականներ լինելու արժանավորություն ունենալու համար, պետք է լինել՝ համեստ, բարոյական, կրթված սուրբ գրոց մեջ և ունենալ մի քիչ էլ ուսում,— այդ վերջինը ամենաերկրորդական տեղն է բռնում... Պատվական «Մասիսը» մինչև անգամ այդ ևս ավելորդ էր համարում, նա 1874 ամի յուր 1856 թերթի մեջ հայտնում է այն միտքը, թե ի՞նչ պետք է եկեղեցականների դրությունը բարվոքելու համար նոր կանոնադրություն, երբ մեր մայր Մաշտոցի մեջ ամեն բան գրված է... (՞) թե ամեն մի նոր վերանորոգություն եկեղեցականների վերաբերությամբ համարվելու է զեղծում հայաստանյայց եկեղեցվո դեմ և այլն։

Խավարասերնե՜ր, միշտ դեպի հինը, միշտ դեպի ետ, բայց ոչ երբեք մի քայլ առաջ...

Ազգային, փոքր ի շատե հասարակական նշանակություն ունեցող հարցերի կարգում կարելի է դասել և Կ. Պոլսի հայ գաղթականների խնդիրը, որոնք գավառներից թափվում են դեպի մայրաքաղաքը և տարիներով մնում են այնտեղ։ Ազգ. ժողովը վճռեց ազդարարություն տալ ծխատեր քահանաներին և եկեղեցիների երեսփոխաններին, որ նրանք խրատեն և համոզեն պանդուխտներին չորս տարուց ավելի չմնալ Կ. Պոլսում, այլ դառնալ իրանց հայրենիքը։ Մի՜շտ պալիատիվ միջոցներ և ոչ արմատական...

Փոխանակ քննելու այն պատճառները, որոնք ստիպեցնում են պանդուխտներին թողնել հայրենիքը, իրանց տունը, տեղը և ըն-

տանիքը, և տասն-քսան տարիներով մաշվել օտարության մեջ, փոխանակ մտածելու այն միջոցների մասին, որոնք հնար տային գաղթողներին մնալ իրանց հայրենական հողի վերա և հաստատուն ապրուստ ունենալ. ժողովը յուր վճիռով տերտերներին և մղդսներին է դիմում... Ահա ինչպես են օգուտ քաղում մեր զարգացած պոլսեցիք Սահմանադրության արտոնությունից...

Գաղթականության հարցը ամենագլխավոր տեղն է բռնում Տաճկաստանի հայերի վիճակի մեջ։ Ամեն տարի հազարավոր երիտասարդներ Վանից, Մուշից, Բաղեշից, Կարինից և այլ գավառներից, դիմում են դեպի Կ. Պոլիս իրանց ընտանիքի համար ապրուստ շահելու։ Այդ հոսանքը գնալով ավելի ընդարձակ քանակություն է ստանում, քանի նույն երկրներում ժողովրդի ապրուստի հնարները դժվարանում են։ Ցավալին այն է, որ պանդուխտներից շատ քչերին է հաջողվում վերադառնալ յուր հայրենիքը. մեծ մասը կորչում են մայրաքաղաքի մեջ, թողնելով հազարավոր անբախտ և անխնամ ընտանիքներ...

Ջենք հիշում, թե որքա՞ն է վնասում գաղթականությունը մեր ազգի աճելությանը, իսկ ավելի զգալի կորուստ է այն, որ հայ ազգաշինակությունը հեռանում է յուր բնիկ կենտրոնից, որի վերա պետք է հաստատված լիներ նրա կյանքը և ապագան։ Որ նա յուր հայրենական հողից ստանար յուր ջնունդը և ոչ մեծ քաղաքներում համալսություն աներ։ Ահա գլխավոր խնդիրը, որո վերա պետք է ուշադրություն դարձներ Ազգ. ժողովը։

Վսեմափայլ Երեմյան բեյը շնորհեց մի նշանավոր գումար ազգային անդուկի պարտքերը վճարելու համար։ Բարեգործությունը միշտ գեղեցիկ բան է, այդ պատճառավ էլ Պոլսի լրագրությունը ջերմ խնկարկություններ է անում։ Մենք խորհուրդ կտայինք ուշադրություն դարձնել այն հարցի վերա, որ Ազգ. վարչությունը կանոնավորեր յուր անհաշիվ տնտեսությունը, որ մյուս անգամ նրա անդուկը մի նոր Երեմյանի օգնության կարոտ չմնար։

Երիմյանի բողոքը յուր վերա դրած ծանր զրպարտությանց մասին մնաց առանց հետևանքի։ Եե՞ղ հայրիկ, մխիթարեցեք ձեզ նրանով, որ այդպես է մի անզարգացած հասարակության մեջ գործիչների վախճանը... Շա՜տ ապրի Պոլսո լրագրությունը, նա մի մարդու գործունեությունը քննելու ընդունակություն չունի, իսկ նրան անձնապես մրոտելու վարժված է...

Կ. Պոլսի լրագրությունը բացարձակ հայտնում է, թե Երիմյանին յուր աթոռից գլորելու համար, մի նշանավոր տեղից 25,000

ռուբլի ուղարկված է եղել, «կծողների» ատամները սրելու և նրանց բերնում լեզու դնելու համար։ Որքան ուղիղ է այդ լուրը, մենք չգիտենք, միայն այսքանը կարող ենք ասել, որ մեր բարձր եկեղեցականների մեջ հիշյալ միջոցը նոր բան չէ. մի ժամանակ նրանք կաշառում էին պարսից շահերին, տաճկաց սուլթաններին և միմյանցից աթոռներ էին խլում, այժմ կաշառում էին գրական մամուլը...

Կրոնական ժողովի նախազգուշությունը, որ դարձած էր Կ. Պոլսի լրագրությանը, որ նրանք եկեղեցականներին վերաբերյալ տեղեկությանց մեջ համեստություն պահպանեն, նրանց անձնականությանը չդիպչեն և այլն—այդ հռոմեական կուժը խեղճ «Ասիայի» գլխին կոտրվեցավ. լրագիրը դադարեցավ յուր գործունեությունից։ Կրոնական ժողովը փոխանակ լրագրության ձայնը լռեցնելու, ավելի լավ կաներ հոգևորականներին ուղղել։ Կեղտոտ գործը կմնա միշտ կեղտոտ, թեկուզ, գործողը աշխարհական լիներ, թեկուզ հոգևորական...

Սահմանադրության զանազան հոգվածները, որոնց ժողովրդի այժմյան պահանջներին անհամապատասխան լինելու մասին բողոքում էր Խրիմյանը,— այդ գլխավոր հարցը նույնպես ուշադրության առնված չէ։ Իսկ ի՞նչ բաներով զբաղված է Կ. Պոլսի Ազգավարչությունը, ավելի ոչինչ չենք կարող հաղորդել, որովհետև մի շոշափելի բան չենք գտնում։

«ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԿԱՄ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»

Գրմայկի առիթով, տպված Կ. Պոլսում, 1874 ամի Գ. վ. Սրվանձտյանցի աշխատասիրությամբ

Կարդալով Խորենացու խոսքերը, որով նա մեղադրում է յուր նախորդների անհոգությունը, թե նրանք չքողեցին որևիցե հիշատակարան հայերի պատմական անցյալից, ընթերցողը բոլորովին իրավացի է գտնում ծերունի պատմագրի գանգատը։ Բայց նույնիսկ Խորենացին չկարողացավ իրան ազատ պահել մի այդպիսի անհոգությունից, որի դեմ բողոքում է տասնիններորդ դարու սերունդը։

Նորենացին մեզ ավանդեց մեր նախնյաց պատմությունը, իսկ այդ ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ լոկ ազգահամար իշխող տների խոսվում է նրանց գործունեության մասին, երբ պատերազմ կա, երբ հաղթում են, կամ հաղթվում են։ Իսկ թագավորի ներքին գործերի, նրա օրենսդրության և կառավարչական ձևերի մասին գտնում ենք խիստ աննշան տեղեկություններ։ Պետությունը կազմող մարմինը —ամբոխը—չէ մտնում նրա պատմության մեջ. ժողովրդի ընտանեկան և քաղաքական կյանքից մենք ոչինչ չենք գտնում։

Նույն մեթոդին հետևեցին մեր և մյուս պատմագիրները։

Թողյալ այդ, Նորենացին,— ակնարկելով յուր ժամանակի «գողթան, թվելյաց, ցցոց, վիպասանաց» երգերի մասին, հիշելով հին զրույցները և ավանդությունները,— տալիս է մեզ մի քանի կտորիկներ միայն այն թանկագին ժառանգությունից, որոնց ամբողջությունը կարող էր լուսս գցել մեր ազգի խորին առասպելավիպական անցյալի վերա։

* *
*

Արդյոք, մենք ևս նույն մեղադրանքներին չե՞նք ենթարկվելու, ինչով դատապարտում ենք մեր նախնիքներին, եթե զրկենք ապագա սերունդը գրականության այդ մասնից։

Մի այնպիսի անշարժ ազգ, որպես եղել է և է հայը, նրա կյանքի ձևերը շուտով չեն փոխվում։ Մինչև այսօր պահպանել է նա յուր հին սովորությունները, մինչև այսօր նրա կյանքը լի է նախապաշարմունքներով։

«Գողթան երգիչների» բամբիռը դեռ ոչ բոլորովին լռել է Հայաստանում. աշուղները և այսօր հիշեցնում են հին վիպասաններին։ Այդ կույր Հոմերոսները[1] ժողովրդական բանաստեղծներ են։ Աշուղը, ժողովրդի սիրելին, յուր սազն առած, թափառում է գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, երգում է ու ճեֆիաթեեր է ասում։ Աշուղը գրագիտ մարդ չէ, բայց նա բերանացի գիտե ամբողջ վեպեր. նա հանպատրաստից հորինում է ամբողջ երգեր. նրա հոգու բխմունքը արտահայտություն է ժողովրդական ոգևորության։

---

[1] Աշուղ պարսից հշխ բառից է, որ նշանակում է բանաստեղծական ոգևորություն։ Աշուղներ կոչվում են և ժողովրդական երգիչները կամ սիրահարները։ Հայոց աշուղները մեծ մասամբ լինում են կույր մարդիք, երևի նորա համար, որ կյանքի մեջ ուրիշ պարապմունք չգտնելով, իրանց նվիրում են բանաստեղծությանը։

Մտածո՞ւմ են արդյոք մեզանում հավաքել և գրի անցուցանել աշուղների, այդ կենդանի հնադարյանների մեջ պարունակված վեպերը և երգերը, որոնց նրանք մի օր իրենց հետ գերեզման կտանեն։

Բացի դրանից, մեր ժողովրդի մեջ մինչև այսօր իրանց սկզբնական պարզությամբ պահպանվել են՝ զանազան ավանդություններ, սնոտիապաշտություններ, առասպելներ, զրույցներ, երդումներ, անեծքներ, առածներ, առակներ, երգեր և այլ ծեսեր ու սովորություններ։— Դրանք այնպիսի խորին կապ ունեն մեր ամենահին անցյալի հետ, որ մասամբ կարող են լրացնել այն թերությունները, ինչ որ նկատվում են մեր պատմագրության մեջ։

Որպես բնագետը մի կենդանու քարացած ժանիքից կազմում է մի ամբողջ գաղափար նրա մարմնի կազմվածքի մասին, նրա ջրհեղեղյան գոյության մասին, այնպես և հետախույզ հնագետը մի ժողովրդակ·ան ավանդությունից կարող է եզրակացնել նույն ազգի անցյալ կյանքի այս և այն ձևերը։

Թողյալ այդ, ժողովրդական ավանդությունները, նրա առասպելները և զրույցները ծնունդ են ժողովրդի երևակայության, նրանց հավաքածուն նպաստում է նույն ազգի բանաստեղծությանը։ Որովհետև մի ազգի բանաստեղծությունն այն ժամանակ միայն կենդանանում է և նույն ազգի բնավորության հատկանիշ կերպարանքն է ստանում, երբ նա ծագում է նրա ավանդություններից։

Մի կտորիկ ժողովրդական լեգենդայի վերա պոետը կարող է հիմնել յուր հոյակապ ստեղծագործության շինվածքը։

* *
*

Դառնալով Գ. վ. Սրվանձալյանցի գրքույկին, մենք գտնում ենք նրան մինը այն աշխատություններից, որ յուր պարունակությամբ բոլորովին համապատասխանում է մեր վերոհիշյալ մրտքերին։ Գրքույկը բաղկացած է 192 երեսից. առաջաբանից հետո հեղինակը խոսում է հայոց գավառական բարբառների մասին (առավելապես Տարոնի և Վասպուրականի նահանգների) և ցույց է տալիս օգտավետությունը ժողովրդական բառեր հավաքելու, այժմյան մեր գրականական լեզուն հարստացնելու համար։

Բոլորովին համակրելով հեղինակին, մենք ավելի կընդարձակենք նրա միտքը, ասելով, որ միանգամայն սխալ է դատողու-

Թյունը այն պարոնների, որոնք պնդում են, թե մեր այժմյան կենդանի լեզուն պետք է կազմվի հին գրաբարից, և թե միմիայն գրաբարից պետք է առնենք այն ամեն բառերը, որոնք հարկավորվում են մեր այժմյան գրականության մեջ։

Այդ կարծիքը խաբեական է, այն պատճառով, որ մի հին, գործածությունից ընկած լեզվի մեջ չեն կարող գտնվել այն բոլոր բառերը, որոնցմով կարելի լիներ արտահայտել մեր ժամանակակից գաղափարները։

Մի ազգի լեզուն աճում է և զարգանում է ներդաշնակաբար նույն ազգի կյանքի և մտավոր զարգացման հետ։ Որքան ընդարձակվում է նրա գիտությունը և արհեստը, այնքան ավելի առարկաների հետ ծանոթանում է նա և այնքան ավելի անուններ ու բառեր է հնարում։ Այդ է պատճառը, որ վայրենի ազգերը հազար անգամ ավելի քիչ բառեր ունեն, քան թե քաղաքակրթված ազգերը։

Մեր գրաբար լեզուն ժողովրդի բերանով մեզ հասած կենդանի լեզուն չէ, որ նա կարողանար աճել, մշակվել և կատարելագործվել նրա կյանքի պայմանների հետ։ Մեր գրաբար լեզուն մի քանի տասնյակ դարերով առաջ մեռած լեզուն է, որ հասել է մեզ դրված հին մատենագրության դագաղների մեջ։ Ուրեմն նա սրտահայտություն է այն ժամանակվա դրության, որպես մտածում էր և գործում էր հայը։

Թողյալ այդ, նույն գրքերը, որոնց միջոցով հասել է մեզ գրաբար լեզուն, չեն պարունակում նկարագրեր իրանց ժամանակի կենսական բոլոր երևույթների։ Մեր հին մատենագրությունը կազմված է պատմական և կրոնական գրքերից, որոնց պարունակությունն այնքան միակողմանի և համանման է, որ միևնույն բառերին հանդիպում ես ամեն տեղ։ Նրանց մեջ պակաս են, օրինակ, բառեր տնտեսական և ընտանեկան կյանքի, նրանց մեջ շատ չկան գիտնական, արվեստագործական և հոգու զգացմունքներ արտահայտող բառեր, որովհետև այդ առարկաների մասին խոսվում է կամ խիստ սակավ, կամ ամենևին ոչ։

Բառերի մի փոքր ընդարձակ հավաքածու տալիս է մեզ Աստվածաշնչի Թարգմանությունը, որովհետև նրա պարունակությունն ավելի բազմակողմանի է։

Իսկ ժողովրդական լեզվի մեջ մեծ մասամբ կարելի է գտնել այն բառերը, ինչ որ պակասում են մեր հին գրքերից հավաքած բառարաններում։ Մտի՛ր գյուղացու խրճիթը, նրա տնտեսական բոլոր կահ-կարասիքը նրա լեզվում ջոկ-ջոկ անուններ ունեն։

Գնա՛ երկրագործի մոտ, նա յուր գութանի և արորի բոլոր պարագաների անունները կասե քեզ. նա կասե քեզ ժամանակների անունները, երբ նա ցանում է, նա կասե քեզ այս և այն հատկություն ունեցող հողերի անունները։ Ուզում ես ծառերի, թփերի, պտուղների անուններ գիտենալ, գնա՛ անտառների մեջ բնակվող շինականի մոտ, նա բոլորը կասե քեզ։ Ուզում ես ծաղիկների և խոտերի հետ ծանոթանալ, հարցրու խաշնարած հայից, նա կասե քեզ՝ ոչ միայն յուր սարերի և դաշտերի բույսերի անունները, այլև նրանց բժշկական հատկությունները։ Մի խոսքով, դու գյուղացի հայի լեզվի մեջ կգտնես նրան շրջապատող բնության շատ առարկաների անունները և կլսես նրա կարծիքը յուրաքանչյուրի մասին։

* *
*

Այնուհետև հեղինակը նկարագրում է մի շարք խիստ հետաքրքրական ավանդություններ, որոնց մեջ դեռ նշմարվում են հետքերը մեր հեթանոսական անցյալի։ Ավանդություններից մի քանիսը ունեն դիցաբանական նշանակություն, այդպես է այն գեղեցիկ լեգենդը, որ պատմում են Մշու դաշտի բնակիչները Աստղիկի մասին։ Թե Աստղիկը սովորություն ունի ամեն գիշեր Եփրատի[1] մեջ լողանալու, թե հայոց կտրիճները կրակ են վառում Դաղոնաց լեռան վերա (դա հանգած վուլկան է), որ նրա մարմնի չքնաղությունը տեսնեն։ Գեղեցիկ դիցուհին ամբողջ այն միջավայրը պատում է մշուշով (մառախուղով) և յուր մարմինը անտեսանելի է անում սիրաբորբոք տարփածուներից։

Այդ պատճառավ Մշու դաշտի հորիզոնը մշուշով պատած է և այդ մշուշից երկիրը կոչվեցավ Մուշ։ Իսկ ժողովրդական երգը ասում է՝

Մշու սարեր մշուշ է
Յուր հողն ու ջուրը անուշ է։

Առհասարակ, հեղինակի ասելով, Տարոնի և Վասպուրականի մեջ շատ նվիրական սարեր, բլուրներ և ժայռեր կապ ունեն Աստղիկի անվան հիշատակի հետ։

---

[1] Եփրատը հոսում է Մշու դաշտի միջով և կոչվում է Մուրատ գետ։

* *
*

Լեզ կամ Հարալեզք, հայտնի են մեր պատմության մեջ, որպես լիզելով մեռած մարմինները կենդանացնողներ, վերջին անուն նրանք ստացան գուցե այն դեպքից հետո, երբ Շամիրամի աղերսանոք հրավիրվեցան լիզել պատերազմումը ընկած սիրելվո՝ Արայի վերքերը և կենդանացնել նրան։ Որովհետև Արալեզք նշանակում է Արային լիզողներ։ Երևում է, այդ աստվածների պաշտոնն էր խնամք տանել ավելի կոիվի դաշտումը ընկածներին, նրանց վերքերը բուժելու համար,— այդ իհարկե մի խրախույս էր դեպի պատերազմը։

Հայերը Լեզք անունով կուռք էին պաշտում այն բլուրի վերա, ուր այժմ դեռ մնում են Լեզքա ամրոցի ավերակները, որոնց քարերը պատած են բևեռագրերով։ Հեղինակը ասում է՝ քանի տարի առաջ պղնձե արձաններ և այլ հնություններ գտնվեցան այնտեղ։

Նաև՛ն բլուրի վերա, ուր առաջ Լեզքերի մեհյանն էր, այժմ կանգնած է Ամենափրկչի մատուռը և Աշխարհամատրան կյուրակեին մեծ տոնախմբություն է լինում այնտեղ։ Այդ իհարկե, կռապաշտությունից դեպի քրիստոնեություն անցած, մի հին սովորություն էր։

Շամիրամի անունը նույնպես դեռ ոչ բոլորովին անհետացած է այն տեղերից, և այժմ Շամիրամ անունով մի գյուղ կա Գրգուռ լերան մոտակայքում։ Արտամիսու մոտ մի ահագին ժայռ կա, որ կոչվում է Ծամփար, որ մասին խոսվում է, թե Շամիրամ այն ժայռը յուր ծամերուն կապելով, պարսաքարի պես Վանա բերդից նետել է մինչև այնտեղ։

* *
*

Տարոնը և Վասպուրաձանը, որպես այն ասպարիզը, ուր հանդիսացավ մեր Հայկ դյուցազնի պատերազմը Տիտանյան Նեբրովթի հետ, մինչև այսօր անթիվ հիշատակարաններով կապված են այդ հսկաների անունների հետ։ Նեմրութա[1] լերանը նայելով, մշեցի հայը ցույց է տալիս յուր որդուն «Բելի ուղտերի քարավա-

[1] Նեմրութա կամ Ներբովթա լեռը Մշու դաշտի արևելահյուսիսային կողմումն է։ Վանա ծովակի մոտ նրա մոտն է Գրգուռ սարը, որի մասին ավանդություն կա, թե նույն տապանը նրա գագաթից քսվելով անցավ, գրգռալու ձայն հանեց, և դորա համար Գրգուռ անուն ստացավ։

նը[1], նրա զորքերը, որոնք աստուծո հրամանով քար դարձան»։ Նա ասում է՝ կռապաշտ թագավոր էր Բելը, իրան աստուծո տեղ դրեց և եկավ մեր թագավորի վերա կռիվ։ Աստված պատժեց նրան, և մեր թագավորին զորություն տվավ, Բելին սպանեց։ Նրա մարմինը վեր հանեց Նեմրութա սարի գագաթը, այնտեղ քոնիր փորեց, և դիակը մեջը կախելով, այրեց։ Աստուծո հրամանով կրակը ջուր դարձավ և մոխիրը չրի տակն անցավ, չլինի՞ թե նա երկրի վերա ցրիվ գա և աշխարհը ապականե։

Ով որ տեսնե Նեմրութա սարի դիրքը և նրա կաթսայաձև գագաթը, ուր կանգնած է փոքրիկ լճակ, կհամոզվի, թե որքան գեղեցիկ հարմարացրած է այդ ավանդությունը մեր պատմության առասպելական սկզբի հետ։

Խորենացին ասում է՝ «Հանյալ կախե ի լյառնե մի բարձր զմարմին Բելա ի տեսիլ կանանց և որդվոց»։ Շատ կարելի է, որ Հայկը Բելի դիակը որպես յուր քաջության առարկան, յուր գերդաստանին ցույց տալեն հետո, հեթանոսական օրենքով այրեց նրան։

Շատ հավանական է տեղացիների կարծիքը, թե Նեմրութա գագաթի լճակի ջուրը, սարի տակովն անցնելով կազմում է Մեղրագետի ակը։ Եվ արդարև, Նեմրութա սարից ոչ այնքան հեռու գետնի խորությունից շատրվանաձև դուրս է ժայթքում ջրի ահագին կիտվածք, որտեղից սկիզբն է առնում հիշյալ գետը և անցնում է Մշու դաշտի միջով։

Թե Բելը և Նեբրովթը նույն անուններն են համարվում, որպես մեր պատմության, նույնպես և ժողովրդական ասացվածքների մեջ, դրանում տարակույս չկա։ Հայաստանի մյուս մասներում, օրինակ Ղարաբաղի և Ղարադաղի կողմերում, Բելի անունը առակ է դարձել. յուր հպարտություններով հիմարացած մարդուն հայը միշտ ասում է՝ «բելացել է», այսինքն՝ Բելի բնավորությունն է ստացել։

Հայկա անունը և հիշատակը նույնպես մոռացված չէ։ Վասպուրականից, նրա քաջագործությունքը դեռ քողել են իրանց հետքերը։ Այնտեղ է «Հայկա կամ Հայոց ձորը»— Բելի և մեր դյուցազնի պատերազմի դաշտը։ Վանա քաղաքից դուրս մի արվարձան մինչև այսօր կոչվում է Հայկավան։ Հայկա ձորի մեջն է Տըրշող

---

1 Դրանք մի շարք ցցված ժայռեր են, որոնք հեռվից ուշադի քարավանի պատկեր են ներկայացնում։

գյուղը, ուր ժողովրդական ավանդությամբ արեգակի շողը անցավ Հայկի նետից ծակված Բելի զրահապատ կողքից։ Նույն ձորի ունչն է և Հայկ անունով գյուղը։

* *
*

Շատ հետաքրքրական են ավանդությունները օձերի և վիշապների մասին։

Պատմությունից մեզ հայտնի է, որ Երվանդյան Տիգրանի ժամանակ օձը և վիշապը հայկական դրոշակի նշանն էին, գուցե ի հիշատակ այն հաղթության, որ Տիգրանը գործեց «վիշապազանց» դեմ։ Մինչև այսօր Տարոնի նահանգի արևելա-հարավային կողմում մնում են Օձ քաղաքի ավերակների հետքերը, ուր այժմ նույն անունով փոքրիկ գյուղ կա։ Տարոնի պատմիչ Հովհաննես եպիսկոպոսը վիշապ անունով քաղաք է հիշում նույն նահանգում Աշտիշատա մոտ։

Առհասարակ օձերի, մանավանդ վիշապների վերա նայում է հայը որպես գերբնական զորությունների վերա։ Հեղինակն ասում է, թե մինչև այսօր Տարոնի և Վասպուրականի մեջ մի տեսակ օձեր համարվում են երկրի պաշտպաններ, և նրանց չարշարելը կամ սպանելը մեղք է համարվում։ Այլև մասնավոր տներում իբր թե բնակվում են օձեր, որոնք նույն գնդրաստանի պաշտպանն են, որոնց գոյության հետ կապակից է այն ընտանիքի բախտը, հաջողությունը, կամ անհաջողությունը։ Հեղինակը հիշում է և մի առասպել, թե որպես մի տան պաշտպան օձը սպանվելով, ընտանիքը անբախտության է ենթարկվում։

Մինչև այսօր սովորություն կա, որ երեխաների գդակի վերա կարում են օձի կամ վիշապի ձև ունեցող արծաթյա բժժանքներ. իհարկե, այդ զարդարանքի համար չէ, այլ ունի մի դյութական նշանակություն[1]։ Որպես Հայաստանի շատ տեղերում երեխաների գդակի վերա կարում են արծաթյա մահիկներ[2], այսինքն՝ կիսալուսնի ձև ունեցող մի զարդ. նույնը հուլունքներով շարած, հարսները կապում են իրանց պարանոցին։ Որպես երևում է, դրանք հին հեթանոսական սրբություններ են, որոնք ունեին նույն նշա-

[1] Թիֆլիսի կինտոները ևս կրում են իրանց բթամատի վերա գալարված օձի ձև ունեցող մատնիք։

[2] Մահիկ պարսկերեն մահ բառից է, որ նշանակում է լուսին։

նակությունը, որպես խաչի գործածությունը քրիստոնեական աշխարհում։

Թե լուսինը պաշտվում էր հայերից որպես աստված, այդ մենք գիտենք, իսկ թե օձերը և վիշապները նույն արտոնությունն էին վայելում, այդ հարցը այնքան տարակուսական է, որ խորին քննությունների է կարոտ։ Միայն կասենք, որ օձերը և վիշապները կախարդության մեջ մեծ դեր էին խաղում։ Եվ այսօր օձի շապիկը հայը պահում է յուր ծոցում, տալով նրան թիլիսմանական նշանակություն։

Վիշապները իրանց հսկայական զորությամբ անկարելի բան է, որ նույն ազդեցությունը չունենային հայի անահավատության վերա, որպես Եգիպտոսում և Հնդկաստանում։ Առհասարակ հայը նայում է վիշապների վերա, որպես անմահ էակների վերա, իբր թե վիշապը հազար տարեկան դառնալեն հետո, հրեշտակները քաշում են նրան դեպի երկինքը, որ երկիրը չապականե։ Այդպես է նայում հայը քաթաոի, կամ դեպի երկինքը բարձրացող պտտվող մրրիկների սյուների վերա։ Հիշյալ երևույթներին նա տալիս է մի խորհրդական նշանակություն, որպես թե վիշապներ էին քաշվում։

Վասպուրականի հայերը հավատում են, թե վանա ծովակի խորքումը բնակվում է մի վիթխարի վիշապ, որի վերա պատմված հրաշալիքները հիշեցնում են Հորա լևիաթանը։

Ավելի առասպելական բնավորություն ունի տեղային հայերի կարծիքը օձերի մասին, իբր թե նրանք մի կազմակերպված կառավարություն ունեն. թագավորը կրում է քանկագին գոհարներով զարդարած պսակ. նրա թագուհին բոցագույն գիսակներ ունի. թե նրանց ամրոցը գտնվում է Դազոնաց լեռան այրերի մեջ։ Թագավորը յուր զորքերով կռվելու է գնում Դիարբեքիրի (Տիգրանակերտ) կողմերում բնակվող յուր հպատակ օձերի հետ, երբ նրանք ապստամբվում են, հաղթում է նրանց և դառնում է գերիներով և անհուն ավարով[1] և այլն։

Այդ առասպելը չէ՞ հիշեցնում արդյոք մեր Երվանդյան Տիգրանի պատերազմը Աժդահակի և վիշապազանց հետ։[2]

---

[1] Այդ ավանդությունը սուրն իսկ ձևով պատմվում է Նախիչևանի մոտ գտնվող Իլան-Դաղի (օձի սարի) մեջ բնակվող օձերի և նրանց պետության մասին։

[2] Աժդահա պարսից և մեդացվոց լեզվով նշանակում է վիշապ։ Խորենացին նկարագրում է Տիգրանի պատերազմը վիշապազանց հետ և թե սպիսի առասպելաբանական կերպարանք ստացավ նա հայերի ժողովրդական վեպերի մեջ։

*

*

Հայաստանի լճերը, գետերը և աղբյուրները պահպանել են ժամավին իրանց Ներյան կուլտերը և հավերժահարսունքը։ Մինչև այսօր պատմվում են զանազան զրույցներ «հրեղեն աղջիկների» մասին։ Վանա գավառում հայոց հուրիանների[1] սրսկապանն է Արջակա[2] լճակը։ Տարփավոր երիտասարդները իրանց պատրաստում են զանազան միջոցներով և գիշերը պառկում են նույն լճակի ափերու մոտ, որ «հրեղեն աղջիկները» ջրից դուրս գալու ժամանակ, հափշտակեն նրանց։

Նույն լճակում կան և «հրեղեն նժույգներ», որոնց բաշը հյուսում են հավերժահարսունքը իրանց քնքուշ մատներով և այլն։

Թե աստվածները և նրանց սերունդը ժողովրդի երևակայության ծնունդ են, դրանում տարակույս չունենք։ Ամեն ազգի դիցաբանության մեջ երևում է նույն ազգի փիլիսոփայությունը, այլև նրա բնավորությունը և ճաշակը։ Հույները սեպհականեցին իրանց աստվածներին մինչև անգամ իրանց ամենաանբարոյական հատկություններր։

Իսկ հայը, մի ժամանակ լուսինը պաշտող հայը, և այժմ նույն հատկություններն է գտնում նրա մեջ, որպես յուր կանանց մեջ։ Հայ կինը ամոթխած է, նա ոչ ոքի հետ չէ խոսում, յուր գեղեցկությունը ծածկում է ամենից։ Հայոց լուսինը, արեգակի նշանածը, այդ երկնային թագուհին, նույն բնավորությունն ունի։ Նա յուր դեմքի չքնաղությունը քողարկել է ամպերից հյուսած նուրբ շղարշով, յուր նաժիշտներին (աստղերը) յուր հետն առած, մանե գալիս գիշերով, երբ նրա ամուսնացուն (արեգակը) քնած է։ Նա յուր պարկեշտ ողջախոհական ամոթխածությամբ ամաչում է հանդիպել նրան, որպես հայ օրիորդը միշտ խույս է տալիս յուր ապագա ամուսնից, քանի դեռ նրա հետ պսակված չէ։

Իսկ արեգակը գիշերները մտնում է Վանա ծովակի մեջ հանգըստանալու յուր ցերեկվա ուղևորությունից. երեկոյան նրա նընջարանը բաց է անում յուր ոսկեղեն դռները, վարդագույն-ծիրանի ամպերը իրանց նուրբ և թափանցիկ ծալքերով կազմում են նրա

---

1 Հուրիա, այդպես են կոչվում Մուհամմեդի դրախտի հավերժահարսունքը, այդ արաբական անունը գուցե կազմվել է մեր հուր բառից. Երեղեն կոչվում են մեզանում այն էակները, որոնք մարմին չունեն։

2 Արջակա, ժողովրդական բարբառում աղճատված անուն է, ճոխանակ ասելու Արշակա։

անկողնի վարագույրները, որ դրած է ծովակի հատակում սպիտակ փրփուրներից հյուսած մահճակալի վերա։

Առավոտյան, երբ զարթնում է արեգակը, լվացվում է նույն ծովակի ալիքների մեջ, և յուր գեղեցիկ դեմքի թացությունից, որպես մարգարիտներ ցողում է վաղորդյան շաղը ծաղիկների, խոտերի և դաշտերի վերա։ Ահա, որպես բանաստեղծորեն է մտածում հայը յուր հին, բայց մինչև այսօր իրանց պաշտունը ճշտությամբ կատարող, աստվածների մասին...[1]։

* *
*

Պատմությունից հայտնի է, որ Տարոնը Հայաստանի այն նահանգներից մինն է, ուր ավելի ծաղկյալ դրության մեջ էր գտնվում կռապաշտությունը։ Այստեղ էր Վահագնի մեհյանը, այստեղ Վահունիք կատարում էին նրա հանդիսավոր տոնախմբությունը։ Այստեղ Լուսավորիչն ունեցավ այն սարսափելի պատերազմը քուրմերի հետ։

Այն ևս հայտնի է, որ Լուսավորիչ, քանդելով հին մեհյանները, նրանցից շատերը անմիջապես քրիստոնեական տաճարների վերափոխեց։ Շատ հավանական է, որ իբրև պատրաստի նյութեր, շինվածքի համար գործ դրվեցան նույնիսկ մեհյանների քարերը։ Այդ կարծիքին որպես ապացույց կարող է լինել այն, որ Վասպուրականի մեջ կան եկեղեցիներ և վանքեր, որոնց շինվածքի քարերից շատերը ամբողջապես պատած են բևեռագրերով։ Այդպես են Վան քաղաքի սուրբ Առաքելոց եկեղեցվո տաճարի ներքին պատի քարերը, Վարագա վանքի տաճարի շենքին մեջ գործածված քարերը, Կարմրավորաց վանքինը և այլն։ Երևում է, որ դրանք հին մեհյանների շինվածքի նյութեր են։

---

[1] *Մինչև այսօր հայերը երդվում են արևով. «իմ արևը»—«քո արևը»,— այդ երդումներն այնքան հին են, որքան հին էր արևի պաշտամունքը Հայաստանում։ Սույն իսկ երդումը գործ էր ածվում և հայոց հեթանոսական դարերում։ Խորենացու մեջ կարդում ենք՝ «Ծիրդնոյր Վարդան յարևն արքայի...» Երդումը արևով մինչև այսօր գործ են ածում վրացիք։ Նրեսը դարձնել դեպի արևելք աղոթելու ժամանակ, այդ հեթանոսական սովորությունը մուտք գործեց և քրիստոնեական տաճարներում։ Հայը միշտ առանձին ջերմեռանդությամբ է նայում դեպի արևելք։ Նրա երեսը մինչև անգամ գերեզմանի մեջ դարձած է լինում դեպի այն կողմը, որտեղից ծագում է արևը...*

Արեւապաշտները, որ կոչվում էին արեւորդիք, Հայաստանում երկար ժամանակ մնացին և քրիստոնեական դարերում։

Եվ մի մեհյան, քրիստոնեական տաճարի վերափոխվելով, շուտով չէր կարող կորցնել յուր դարերով ժողովրդի սնահավատությյան հետ կապված ծեսերը և ավանդությունները։ Այդ է պատճառը, որ Հայաստանի վանքերի տոնախմբությունների մեջ և մինչև այսօր տեսնվում են ճիշտ հեթանոսական արարողությունների շատ նշաններ, օրինակ, կախարդություններ, գուշակող աղջիկների մարգարեություններ, պարերգություններ, աշուղների, վիպասանների հանդեսներ և այլն։

Մշո դաշտի Կլակա կամ սուրբ Կարապետա հռչակավոր վանքը մինչև այսօր պահում է յուր հին, քրիստոնեական ժամանակներից մնացած, ոգիներից մինը։— Դա մի դևիկ է, որ իբր թե աներևութապես վանքի սպասավորությունն է անում։— Սուրբ Կարապետա «կաղ դևի» պատմությունն ամեն մշեցի գիտե։ Երբ Լուսավորիչը բանտարկեց կռապաշտական մեհյանի բոլոր ոգիները, այն մինին խնայեց, որովհետև նա խոստացավ միշտ հավատարիմ մնալ վերանորոգված տաճարին, թեև նա այժմ էր նոր աստծուն էր պատկանում։

«Կաղ դևը» մինչև այսօր վանքի վառարանների մոխիրը շալակած, գետնի տակով տանում է դեպի Տիգրանակերտ և թափում է Փրեքաթման գյուղի մոտ, որից ահագին բլուր է ձևացել։

Ահա որպես է բացատրում այդ առասպելը ժողովրդական երգը.

Լուսավորիչը ժողվեց դիվան,
Լըցեց զընդան.
Կաղ դևն եկավ ասաց՝ յաման,
Ջիս մի դըներ զընդան.
Ես կեղնեմ սուրբ Կարապետու փոշեհան.
Տանեմ, թափեմ Փրեքաթման.
Մինչ օր Քրիստոս գա դատաստան։

Դևերի մի ահագին խումբ ևս սուրբ Կոնոնոսի վանքումը կա, կարասներու մեջ լցրած, բերանները կնքած և գետնի տակը թաղած, ուր պետք է մնան մինչև վերջին դատաստանի օրը։ Հոգվոց վանքը, որը Վասպուրականի մեջն է, նույնպես ունի Ղուդրաթ խաթուն[1] անունով մի աղջիկ դև, որ նույնպես քոնիրների մոխիրները դուրս է ածում և շատ անգամ երևում է միաբաններին...

---

[1] «Ղուդրաթ-խաթուն» նշանակում է բնության տիրուհի։

* *
*

Գ. վ. Սրվանձտյանցի ավանդությանց հավաքածուի մեջ մի քանիսը վերաբերում են ժողովրդի ընտանեկան և հասարակական կյանքին։ Օրինակ, այն ժայռերը, որոնք Վանա մոտ կոչվում են հարսն ու փեսա, դրանք մի զույգ անբախտ ամուսիններ էին, որոնք պսակվեցան ընդդեմ իրանց ծնողաց կամքին։ Աստված բարկացավ նրանց վերա և հարսանիքի միջոցին, թե հարսն ու փեսային, թե հանդիսականներին և թե երաժիշտներին բոլոր քար դարձուց։

Ահա մի ազգու արտահայտություն ծնողական բռնակալության... Հորն ու մոր կամքը այնքան մեծ նշանակություն ունի որդիների ամուսնության մեջ, մինչ որևիցե ընդդիմադրություն զավակների կողմից կարող էր նրանց աստուծո պատժին ենթարկել... Հայոց ընտանեկան կյանքը, ուր որդիների կամքը ամուսնության մեջ ոչինչ կշիռ չունի, շատ բնական էր, որ ստեղծեր հիշյալ ավանդությունը։

Կալվածատերերի հարստահարություններն ևս չէին կարող չանցնել ժողովրդական ավանդությունների կարգում։ Վանա հյուսիսային կողմում Դալաշեն գյուղի մոտ են «շեղջա դար»[1] կոչված հողաբլուրները։ Դրանք մի հարուստ, բայց ագահ կալվածատիրոջ ցորենի կույտերն են, որ յուր անսահման ժլատության և խստասրտության պատճառով աստված հողային բլուրների փոխարկեց։

«Սուրբ Քոնիրի»[2] ավանդությունը պարունակում է յուր մեջ բոլոր զարհուրանքը խանդոտ ամուսնի։ Գեղեցիկ տերտերակինը Քոնրի մեջ հաց թխելու միջոցին, գալիս է նրա մոտ մի մուրացկան. տիկնոջ՝ կրակի տաքությունից շառագունած երեսը գրավում է մուրացկանի սիրտը։ Նա հաց է խնդրում, տերտերակինը տալիս է. կերակուր և գինի է խնդրում, նույնպես տալիս է։ Վերջապես մի համբույր է խնդրում։ Տերտերակինը մտածում է՝ «Աղքատ թե-մարզու (կարոտյալ) է, ի՞նչ կա, վարձք է...» Համբույրն էլ տալիս է։ Նույն վարկենին երեցը ներս է մտնում, տեսնում է կնոջ ան-

[1] Շեղջ նշանակում է ցորենի կամ ուրիշ բանի կիսվածք, իսկ դար նշ. բլուր, կամ հողային բարձրություն։

[2] Սուրբ Քոնիրը,— Քոների ձև ունեցող մի ավազան է Լեզք գյուղի մոտ, որտեղ ուխտագնացություններ են լինում և կանայք զանազան հմայություններ են անում։

պարկեշտություն, երեցկինը, որը ամոթից, որը երկյուղից, իրան քցում է քոնրի կրակի մեջ։ Կատաղած տեր հայրը հետևում է նրան, որ բռնե և պատժե, ինքն էլ ընկնում է կրակի մեջ։ Բայց աստուծո հրամանով քոնիրը դառնում է ավազան. կրակը փոխարկվում է ջուր, և տերտերակինը կերպարանափոխվում է մի ձուկ, որ մինչև այսօր լողում է նույն ավազանի մեջ, ոսկի օղը քթից անցուցած, որպես հավիտենական խրատ անհավատարիմ ամուսիններուն...[1]։

* *
*

Հեղինակը հիշում է մի քանի ավանդություններ «ազնավորների» գերեզմանների մասին, որոնց շատերը ունեն հսկայական մեծություն։ Նրանց համարում է զանազան ցեղապետների դամբարաններ, որովհետև ազնավոր նշանակում է տոհմ կամ ցեղ ունեցող։ Եվ նկարագրում է, թե որպես այն գերեզմաններից շատերը դարձել են ուխտատեղիներ և այլն։

Հեթանոսական դարերում նշանավոր մարդիք, որոնք իրանց մտավոր կամ մարմնական զորություններով ավելի բարձր էին, քան հասարակ ամբոխը, համարվում էին դիցազունք և պաշտելի էին դառնում ժողովրդին։ Նույն անհավատությունը կրկնվել է մինչև այժմ անգարգացած ժողովուրդների մեջ։ Քիչ չէ պատահում յուր քաջությամբ հռչակված մարդու, կամ մի կախարդի գերեզմանը երկրպագության առարկա է դառնում, տաքցոց, կամ այլ հիվանդություններ ունեցողները լվացվում են նրա վերա, բժշկություն հուսալով, և կանայք դյութական գործողություններ են կատարում այնտեղ։ «Ազնավորների» գերեզմանները նույն նշանակությունն ունեն։ Նրանք պատկանում են այնպիսի անձանց, որոնք գրված են եղել ռամկի անհավատությունը, որ տեսնում էր նրանց մեջ, իրան անմատչելի, մի գերբնական ուժ։

Մեր ասածին ապացույց է ավանդությունը, որ խոսվում է Մանազկերտի Բոստան խայայ, կամ Քարապարտեզ կոչված գյուղում «ազնավորի» գերեզմանի մասին։ Նույն գյուղի մոտ ակոսաձև ճեղճած քարադաշտը, որ պարտեզի քարացած թումբերի նմանություն է բերում, դեռ ներկայացնում է այն դիրքը, որ կապ ունի ավանդության հետ։ Ահա նրա վեպը՝ «Ազնավորը» հեռու տեղից հափշտակում է մի գեղեցիկ «հրեղեն աղջիկ», բերում է հիշյալ

[1] Հայաստանի մի քանի գավառներում կանայք մինչև այսօր օղեր ունեն անցուցած իրանց քթից որպես զարդ։

գյուղում, պալատ է շինում և բնակեցնում է նրա մեջ։ Նրա անունը լինում է Շիրին։ Բայց որքան աշխատում է նա, չէ կարողանում գրավել աղջկա սերը. Շիրինը միշտ անհնարին պայմաններ է առաջարկում «ազնավորին»։ Ծրինակ, որ նա այնտեղի քարադաշտը վարե, բոստան ցանե, վարունգ բուսեցնե, Շիրինը ուտելուց հետո, կսիրե նրան։ Հակա «ազնավորը» քսան լիդրանոց քարը ձեռին, երկար տանջվում է, մինչև քարերը փշրելով, պարտեզ է շինում և կատարում է Շիրինի բաղձանքը։

Խորամանկ աղջիկը մի նոր և ավելի դժվարին առաջարկություն է անում, թե նա ուզում է վարունգը հարիսայի հետ միասին ուտել. և խնդրում է «ազնավորից» գնալ Սիփան սարի դևերից մի աման հարիսա բերել։

Մինչև «ազնավորը» այնտեղ գնալը և մինչև հարիսան բերելը, Շիրինի բուն սիրականը՝ Ղովտ վրա է հասնում, աղջիկը նրա հետ միասին փախչում են պալատից։

«Ազնավորը» հուսահատվելով յուր սիրուհու նենդության վերա, թե որպես նա խաբեց աշխարհի ամենահզոր հսկային, յուր բահով ինքն իրան սպանում է. երիտասարդները նրան թաղում են և գյուղի կնանիքը նրա մասին երգ են հորինում։

Հայաստանում, ուրիշ տեղեր գտնված, ազնավորների գերեզմանները՝ հսկաների, կամ «օղուզների» գերեզմաններ են կոչվում։ Նրանց շատերն իրանց հնությամբ հասնում են կռապաշտական ժամանակներին։

* *
*

Նա խոսում է և «ցասման խաչերի» մասին, որոնք զանազան տեղերում, ըստ մեծի մասին բլուրների վերա տնկած, խաչաձև արձաններ են։ Որպես կռապաշտության ժամանակ ժողովուրդը ամեն մի անբախտություն վերաբերում էր աստվածների բարկությանը և զոհերով աշխատում էր հաշտվել նրանց հետ, այնպես և քրիստոնեության ժամանակ հեռու չմնաց ժողովուրդը նույն նախապաշարմունքներից։ Ամեն մի անբախտության վերա, օրինակ, սով, ժանտախտ, խոլերա, ցանքերի երաշտություն և այլն,— նայում է նա որպես աստուծո կամ նրա սրբերի պատուհասի վերա։ Ով այդպիսի դեպքերում նա զոհեր է մատուցանում, թափոր անում և «ցասման խաչեր» է կանգնում[1]։

[1] Ես ինքս ներկա էի, որ Փարսկաստանի 1865-ի խոլերայի ժամանակ, մեր գյուղում, Շահմուրատ անուն մի ծերունու երազի մեջ նույն գյուղի սուրբ Գևորգը

Նա խոսում է և զանազան լեռների մեջ գտնվող բազմաթիվ այրերի և քարանձավների մասին, որոնց շատերի մեջ երևում են արհեստի հետքեր։ Այդպիսի քարանձավները (տրոգլոդիտ) պատկանում են այն ժամանակներին, երբ մարդկությունը դեռ սովրած չէր յուր համար բնակարաններ շինել։ Հայաստանում շատ են պատահում լեռների մեջ քարանձավներ։ Նրանք դարձան միայնակյացների բնակարաններ, երբ քրիստոնեությունը հայոց մեջ տարածվելեն հետո, մտցրուց յուր հետ և ճգնավորական կյանքը։

* *
*

Գ. վ. Սրվանձտյանցի գրքի մեջ հանդիպում են այնպիսի տեղերի անուններ, որոնք պատկանում են մինչ-ջրհեղեղյան ժամանակներին, օրինակ, Խնուսա դաշտի մեջ Հարամիկ գյուղին մոտ գտնված ծառերը, որոնց տեղացիք անվանում են «Կայենի ծառեր»։ Պատմում են, թե Կայենը նույն ծառերը հովանվո տակ հանգստանում էր յուր երկրագործական աշխատությունից։ Այնտեղից ոչ այնքան հեռու մի բլուր կոչվում է «Կայենի գերեզման»։ Նույն դաշտի մեջ կա մի սար, որ անվանվում է «Ղամեքա բերդ». Ղամեքա այն քաջ որսորդն էր, որ սպանեց անեծքով դատապարտված, թափառական Կայենին։ Հիշյալ տեղերի մոտն է այժմյան Բինգյոլը. այդ գեղեցիկ հովիտը յուր հավերժական չքնաղությամբ բոլորովին համապատասխանում է բնակիչների ավանդություններին, որոնք համարում են նրան Աղամա դրախտը։ Նրանք ցույց են տալիս առաջին քաղաքը, որ շինեց Կայենը և այն դաշտերը, ուր Աբելը արածացնում էր յուր հոտը։ Այդ տեղերը խիստ կենդանի կերպով պատկերացնում են նախաստեղծ մարդերի բնագավառը։

Բացի վերոհիշյալ բիբլիական անուններից Գ. վ. Սրվանձտյանցի գրքի մեջ տեսնում ենք և պատմական անուններ, որպիսիք են՝ Եփրատի ափի մոտ Ողկան բերդը, որ յուր հետ ունի դարևոր ժամանակների հիշատակներ. նա նշանավոր էր Տրդատի ժամանակ և Մամիկոնյանց օրերում։ Գրգուռ լերան մեկ կողմն է Սեղանասարը, իսկ մյուս կողմն՝ Սեմ սարը, նոյի որդվո հիշատակարանը։ Այդ տեղերից շատ հեռու չէ Ցրոնք գյուղը, որի մա-

---

հայտնել էր, թե խալերան յուր բարկությունից է, և պահանջել էր, որ մատաղներ կտրեն և ջցամաձ խաչ կանգնեն։ Գյուղացիքը անմիջապես կատարեցին այդ հրամանը...

սին պատմությունն ասում է՝ «Սևմի որդին Տարբան յուր տոհմակներով բնակվեցավ այնտեղ և այնտեղից ցրվեցան, որո համար և տեղի անունը մնաց Ծրոնք»։

Տեսնվում են և այլ բազմաթիվ պատմական անուններ, որոնք ավելորդ ենք համարում մի առ մի հիշել։

* *
*

Այնուհետև հեղինակը նկարագրում է տեղային հարսանիքի ծեսերը, որ շատ նման է Հայաստանի մյուս կողմերում կատարվող հարսանիքների արարողությանը։ Նկարագրում է Համբարձման տոնի օրիորդաց վիճակախաղը, որ նույնպես շատ չէ զանազանվում Արարատա կողմերի խաղերից։ Հետո խոսում է Վարդավառի տոնախմբության մասին, թե որպես մարդիք ջուր են թափում միմյանց վերա, որպես աղավնի են թռցնում, և թե այդ բոլորն հիշատակ է ջրհեղեղին, Նոյի աղավնի թռցնելուն և այլն։ Այդ սովորություններն ոչ միայն Հայաստանում, այլ ամեն տեղ կարելի է տեսնել, ուր հայերը գաղթած են։ Առհասարակ հին ավանդությունները ընդհանրանում են մի ազգի մեջ և անցնում են մինչև անգամ նույն ազգին ցեղակցություն ունեցող օտար ազգերի մեջ։ Որպես պարսիկների մեջ ևս տեսնում ենք միմյանց վերա ջուր թափելու և աղավնի թռցնելու սովորությունը, որովհետև մենք և պարսիկները միևնույն ցեղին ենք պատկանում։

Այդպես ևն և հեղինակի հիշած նվիրական ծառերը, որոնց ճյուղերի վերա ժողովուրդը իրանց հագուստի կտորներից կամ թելերից փաթաթում են, որ իրանց հիվանդությունը անցնի, կամ փոխադրեն ծառի վերա։ Այդպիսի ծառերին Պարսկաստանում շատ տեղ կարելի է հանդիպել, որոնց միևնույն հուսով դիմում է ժողովուրդը։ Սրբազան ծառեր ունեին հռովմայեցիք և գալլիական ցեղերը։

Հայոց «Քուխ-մանուկները»[1] նույնպես կան զանազան արևելյան ազգերի մեջ։ Շատ հավանական է, որ Գ. վ. Սրվանձտյանցի կարծիքը ճիշտ լինի, թե նրանք զանազան ժամանակներում նա-

[1] «Քուխ-մանուկ» կոչվում են Վասպուրականի կողմերում գանազան նվիրական տեղերը, ուր նշանակյալ օրերում (ըստ մեծի մասին կիրակմուտ գիշերներում) ժողովուրդը ճրագներ է վառում, խունկ է ծխում, զանազան խնդրվածքներ անելով։ «Քուխ-մանուկներին» վերա շատ տեղ շինված են փոքրիկ մատուռներ և կոչվում են «օջախ»։

հատակված, քրիստոնյա մարտիրոսների արյուն թափած տեղերը լինեն։ Իսկ շատ անգամ ևս ժողովրդի սնահավատությունը ստեղծում է «թուխ-մանուկները»։ Հանկարծ պառավին մինը այնինչ ավերակի մեջ երազում կամ առաչյոք լույս տեսավ, ալեզարդ և ճաճանչավոր գլխով մի ծերունի տեսավ, նա այդ տեսիլքը պատմում է ժողովրդին, և իսկույն նրանք ամենայն ջերմեռանդությամբ շարում են այնտեղ իրանց ճրագները և խունկեր են ծխում...

* *
*

Մի քանի տեղերում Գ. վ. Սրվանձտյանցի գիրքը ունի աշխարհագրական նշանակություն։ Նկարագրում է զանազան վանքեր, լեռներ, դաշտեր, բայց ուշադրություն չէ դարձնում ժողովրդի ներկա կյանքի վերա, նրա առնտին և արտաքին գործունեության վերա, թե ինչ պարապմունք ունեն, կամ ինչպես են ապրում։ Բացի հայերից ավելորդ չէր լինի ուշադրություն դարձնել և ուրիշ ազգությունների վերա, որոնց հետ դրացություն ունեն հայերը, և տեղեկություն տալ նրանց միմյանց հետ հարաբերության մասին։ Ախո, շատ քանկագին են մեզ համար մի երկրի կամ ժողովրդի հնագիտական տեղեկությունները, բայց նույնքան օգտավետ է նրա ներկա կյանքի ուսումնասիրությունը։

Աշխարհագրական տեղեկությանց մեջ ուշադրության արժան է Սիփան լեռան նկարագրությունը, որը գտնվում է Վանա ծովակի մոտ և յուր գեղեցիկ հովիտներով խոտավետ արոտատեղիներ է բաշխում խաշնարածներին։ Տեղային հայ բնակիչները մինչև այսօր պահել են այն հին ավանդությունը, թե Նոյի տապանը, Գրգուռ լեռան գագաթին քավելով, տաշեց նրան՝ անցավ դեպի Սիփան, այնտեղ հանգչելու։ Բայց Սիփանը, ավելի համեստ լինելով, չընդունեց նրան, ցույց տալով իրանից ավելի բարձր սարը— հսկա Մասիսը։

Տեղացիք այսպես են երգում հիշյալ լեգենդը.

Նոյա տապանն եկավ ի Սիփան,
Ասաց՝
Սիփան, ա՛ռ զիս, ա՛ռ զիս։
Սիփանն ասաց՝
Գնա՛ ի Մասիս, գնա՛ ի Մասիս,
Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս։

Տեղացիք հավատում են, թե Սիփան լեռան մեջ թաքնված է մի կախարդված քաղաք, որի մուտքը փակած է երկաթե դռներով. թե նա ունի յուր թագավորը և մեծ գետ է հոսում քաղաքի միջով և այլն։ Առհասարակ Սիփանը տեղացի բնակչաց Օլիմպոսն է, որի հետ սերտ կապված է ժողովրդի սիրտը, որի մասին նրա երևակայությունը ստեղծել է շատ և շատ ավանդություններ, որք այնքան բանաստեղծական և վառուն են, որպես մի լեռնաբնակ ժողովրդի հոգին։

Թխտ ազդու է մի աղջկա երգ, որին մի պատանի փախցնելով, Սիփանա սարն է բերում։ Մանկահասակ սիրահարները երեք օր մնում են այնտեղ, մի բան չեն գտնում ուտելու, նրանք ապրում են միայն սիրով։ Վերջապես քաղցը ստիպեցնում է պատանուն որսալ մի եղնիկ. նրա հրացանի գնդակը դիպչում է, արյունը սկսում է հոսիլ, իսկ կիսաշունչ անասունը դեռ շարունակում է փախչել։ Պատանին վազում է նրա հետքից և գլորվում է բարձր քարաժայռից դեպի ցած... Աղջիկը այսպես է երգում նրա մահը, կշտամբելով միևնույն ժամանակ յուր սիրելվո խստասրտությունը.

Ինչու մինակ ելավ որսի,
Ինչու զարկավ եղնիկին.
Գուցե նա ալ սիրական մ'ուներ
Այս վայրերուն մեջ մեզ պես։
Ահա սիրո աստվածը արդար
Ու վաղահաս ըրավ յուր դատաստանը...

Երգը վերջանում է հետագա խոսքերով.

Թե «Ինքը նրա համար ելավ սարը, նրա համար... և նրա հետ պիտի մեռնի...»

Վերջին խոսքերի հետ աղջիկն էլ իրան գահավիժում է ժայռի բարձրությունից...

* *
*

Առհասարակ խոսելով Գ. վ. Սրվանձտյանցի գրքույկի մասին, թեև նա անկապ կերպով գրված է, թեև նա շատ անգամ մի մտքից մյուսն է թռչում, այսուամենայնիվ, մենք համարում ենք նրան մի օգտավետ աշխատություն, որ ընծայում է հնագիտական առատ և անմշակ նյութեր։ Ցանկալի կլիներ, Հայաստանի ամեն մի գա-

վառի ժողովրդական ավանդությունները այդպես հավաքվեին[1]. հուսով ենք, հայր Սրվանձտյանցի գրքույկը օրինակ և խրախուսս կտա շատերին։

Գրքույկը պարունակում է յուր մեջ և մի ամբողջ վեպիկ այս անունով՝ «Մասունցի Դավիթ, կամ Մհերի դուռը։ Վեպը պատկանում է մեր Սկայորդվո ժամանակներին և մի բանաստեղծական նկարագրություն է Ասորոց Սեննքերիմ թագավորի որդիների—Ադրամելիքի և Սանասարի — գաղթականությանը դեպի Հայաստան։ Սույն վիպասանությունը, թեև ավանդությամբ մինչև մեր ժամանակը անցնելով, շատ տեղերում աղճատվել է, բայց դարձյալ պահպանում է յուր խորին առասպելա-պատմական հնությունը։ Մենք խոստանում ենք, առանձին հոդվածով ներկայացնել մի քննադատություն հիշյալ վիպասանության մասին։

«ԷԼԻ ՄԵԿ ՉՈՀ»

Կոմեդիա երեք արարվածով և ճիշգ պատկերով, ճեղինակությունն պ. Գ. Սունդուկյանցի

Թիֆլիսի ամառային թատրոնում մայիսի 16-ին ներկայացրին պ. Սունդուկյանցի «Էլի մեկ զոհ» կոմեդիան։

Այս կոմեդիայի մեջ հանդես են գալիս երեք ընտանիքներ, որոնք պատկանում են ժողովրդի զանազան դասակարգերին՝ Սուրաթովի ընտանիքը, որ է չքավոր ազնվական, Բրիլիանտովի ընտանիքը, որ է շատ հարուստ վաճառական և Թորոսի որդի Սարգսի ընտանիքը, որ ստոր ծագումից և աղքատությունից միջակ հարստության հասած վաճառական է։ Տիպերը, որ դուրս են բերած յուրաքանչյուր ընտանիքի մեջ, են հին և նոր սերունդի ներկայացուցիչներ։

Հին սերունդի հերոսներն են Սարգիսը և Սալոմեն, իսկ նոր սերունդի հերոսները—Միքայելը և Անանին։ Մնացյալ տիպերը համարյա թե կորչում են դրանց ստվերի տակ։

[1] «Մշակի» ընթերցողների ուշադրությունը հրավիրելով սույն հոդվածի վերա, առաջարկում ենք թղթակիցներին, հաղորդել իրանց տեղերի ժողովրդական ավանդությունների նկարագրություններ, որքան կարելի է պարզ կերպով և այն ճշտությամբ, որպես խոսվում է ժողովրդի մեջ։

Քննենք յուրաքանչյուր տիպերն առանձին։

Միքայելը Սարգսի որդին է, մի ուսումնական երիտասարդ, որ սիրահարված է Սուրաթովի աղջկա՝ Անանու վերա. վերջինը նույնպես ուսում ստացած օրիորդ է և երկուսն ուխտել են միմյանց սեր, որ պետք է պսակվեր ամուսնական կապով։ Անանին և Միքայելը սիրում են միմյանց ջերմ և անկեղծ սրտով, սիրում են, որպես կսիրե կրթված և զարգացած մարդը, որ հասկանում է նրա բարձր և վսեմ նշանակությունը։

Բայց Անանին չքավոր ծնողաց դուստր է. Նրա հայրը՝ Յագոր Սիմոնիչը, մի հին աստիճանավոր, պահում է ընտանիքը մանավոր ռոճիկով, որ կախված է յուր մեծավորի կամայականությունից. մի անզգուշություն, մի անհաճո վարմունք մեծավորի դեմ, բավական էր զրկել Յագոր Սիմոնիչի ընտանիքը օրական հացից։ Ուրեմն, Անանին փող, բաժինք, օժիտ, ոչինչ չունի, միակ կապիտալը, որ նա նվիրելու է փեսային, է նրա սերը և յուր մաքուր սիրտը։ Իսկ Միքայելը գոհ է միայն դրանով։ Նա չէ ցանկանում պսակվել փողի վերա. Նա որոնում է կյանքի ընկեր, հավատարիմ ամուսին, և նրա գտածը — Անանին է։

Սովրած լինելով ազնիվ և տոկուն աշխատության, Միքայելը և Անանին չեն համարում փողը որպես կենդանի կապիտալ, որպես միակ միջոցը մարդկային ապրուստի։ Նրանք նայում են փողի վերա, որպես մի անտևողական առարկայի վերա, որ այսօր կա, իսկ էգուց կարող էր անհետանալ։ Փողը Միքայելի և Անանու համար ճարտասություն չէ։ Հարստություն համարում են նրանք իրանց ձեռքի վաստակը, որ արդյունաբերվում էր եռանդոտ ջանքերով և սեփական քրտինքով։ Աշխատությունը համարում են նրանք ապրուստի հաստատուն աղբյուր, որ նույնքան տևողական է ու բեղմնավոր, որքան մարդը սովոր և ընդունակ է գործելու։ Ամուսնական կապը, զարդնած ոսկու շղթաներով, համարում են նրանք խիստ թույլ և դյուրին կերպով խորտակելի։

Այսպես չեն մտածում հին սերունդի հերոսները՝ Սարգիսը— Միքայելի հայրը և Սալոմեն — Անանու մայրը։

Սարգիսը և Սալոմեն համարում են փողը ոչ միայն իբրև միջոց մարդկային ապրուստի, այլ իբրև միակ նպատակ կյանքի։ Փողը Սարգսի և Սալոմեի համար մի աստվածություն է, որ բովանդակում է յուր մեջ բոլոր հրաշալի զորությունները և միակ գործիչ ուժը մարդկային կենցաղավարության մեջ։

Ամեն գործողություն, որքան բարբարոսական լիներ նա, ամեն գործողություն, որքան քաքախված լիներ անբարոյականության կեղտերի մեջ, որքան ներկված լիներ նա արյունով և արտասուքով,— սուրբ է Մարգսի և Սալոմեի համար, երբ նա ուներ շահասիրական նպատակներ։ Փողի սնդուկը մաքրության ավազան է Մարգսի և Սալոմեի համար, ուր սրբագործվում է մարդը յուր բոլոր կեղտոտություններից։ Փողն այն կախարդական զգեստն է, որ ծածկում է պատվի քողով մարդու անազնվությունը, նրա անբարոյականությունը, նրա հիմարությունները, մի խոսքով ամեն ինչ, որ կարող էր բիծ դնել օրինավոր մարդու վերա։

Փողը բովանդակում է յուր մեջ ամեն ինչ։ Ով որ փող ունե, ամեն ինչ ունե.— ահա Մարգսի և Սալոմեի վարդապետությունը։

Մարգիսը և Սալոմեն հայերի մեջ ճիշտ կատարելատիպ են։ Մեկը, որպես գերդաստանի հայր, մյուսը որպես գերդաստանի մայր, նրանք պարունակում են իրանց սնձնավորության մեջ մարմնացած հարստահարությունը յուր բոլոր սարսափելի կերպարանքներով։

Մարգիսը և Սալոմեն փչացած հասարակության հարազատ զավակներն են։

Ինչպե՞ս է ծնում հասարակությունը այդպիսի հրեշավոր որդիք։

Մարգիսը վաճառական է։ Նրա արհեստի բնավորությունն ունի այն հատկությունները, ինչ որ ուներ մի ժամանակ վաճառականության աստվածը—Հերմեսը, որ պաշտվում էր Հունաստանի տաճարներում։ Հերմեսը միևնույն ժամանակ և վաճառականության, և ավազակության, և խաբեբայության աստվածն էր։ Վաճառականը թաղաքավարի ավազակ է, իսկ նրա զենքը—հարստահարությունը և խաբեությունը։

Որքան հասարակությունը զարգացման ստոր աստիճանի վերա է կանգնած, որքան նրա մեջ տարածված չէ կրթությունը, այնքան հաճախ վաճառականությունը միանում է խաբեության և ավազակության հետ, այնքան ավելի զորություն է ստանում հարբստահարությունը։

Մարգիսը վաճառական է։

Ամեն առարկայի վերա նայում է նա, որպես առևտրական մթերքի վերա։ Նրա ընտանիքը յուր համար նույնպես մթերք է, որպես յուր խանութում դարսած ապրանքները։ Երկուսի հետ էլ վարվում է նա միօրինակ կերպով։ Յուր ապրանքների ծախելում

Սարգիսը գործ է դնում ամեն միջոցներ, որքան կարելի է, ճարպիկ կերպով կողոպտել գնողին։ Ստախոսությունը, խորամանկությունը և անխիղճ հարստահարությունը նրա գլխավոր զենքերն են. նույնը նա չէ խնայում և յուր ընտանիքի վերաբերությամբ։

Սարգիսն այն մարդերիցն է, որ ամեն առարկայի վերա նայում է շահասիրական կետից. ոչ մի գործողություն նրան չէ գրավում, երբ նա կապված չէր նյութական օգուտների հետ։ Բարոյական բավականություն նրա համար չկա։ Սարգիսը նյութապաշտ է։

Մի այսպիսի մարդը չէր կարող համբերել յուր որդու՝ Միքայելի ամուսնությանը աղքատ Անանու հետ, որ «փող ու բաժինք» չուներ։ Սարգիսը պետք է օգուտ քաղեր որդու ամուսնությունից. իսկ նա պսակվում էր առանց փողի։ Ահա երկպառության պատճառը, որ հարուցանում է անբավականություն հոր և որդու մեջ։

Սալոմեն նույն է յուր դստեր՝ Անանու վերաբերությամբ, ինչ որ Սարգիսը Միքայելի վերաբերությամբ։ Մեկը հարստահարող հայր է, մյուսը հարստահարող մայր։ Երկու բռնակալ ծնողներ ճնշում են իրանց որդիների կամքը և ազատությունը։ Երկուսն էլ ունեն իրանց առանձին նպատակները։ Սարգիսը աշխատում է յուր որդու Միքայելի համար նրա սիրած Անանու փոխարեն հարուստ աղջիկ բերել, իսկ Սալոմեն աշխատում է Անանուն զրկել յուր Միքայելից և հարուստ փեսայի տալ։ Որդիքը ընդդիմանում են ծնողաց կամքին և պաշտպանում են իրանց ընտրածը։

Խորտակել գերդաստանի հոր և գերդաստանի մոր իշխանությունը, ոչնչացնել նրանց ամենահին դարերից ժառանգած իրավունքը, չէր կարող անցնել առանց պատերազմի, հին և նոր սերունդի մեջ։ Այդպես էլ եղավ։

Որը՞ կհաղթե։

Պետք է կշռել հակառակ կողմերի ուժերը։

Սարգիսը և Սալոմեն, իբրև հին և փորձված զինվորներ, համարձակ կռվողներ են։ Նրանց բոլոր պատերազմական տնօրինությունները՝ յուր խորամանկություններով, յուր նենգությունով և յուր արյունով՝ նրանց մոտ նախապատրաստված են։ Ընտանեկան պատերազմի մեջ նրանք կռվում են ոչ իբրև ազնիվ և մեծահոգի հերոսներ, այլ իբրև քուրմ կամ մարգարե։ Մարդարեն պատերազմում է ուղղության և ճշմարտության անունով։ Նա յուր քարոզները առաջնորդում է սրով։ Բայց պատահած ժամանակ նա գիտե նենգել, գիտե խաբել։ Երբ իրան թույլ է զգում, նա գիտե կեղծավորել։ Երբ երկրային զենքերն անզոր մնացին, երկյուղ է զգում հակառակորդի

վերա երկնքի սպառնալիքներով, անեծքներով։ Իսկ երբ հաղթեց, նա անգութ է որպես գազան յուր զոհի վերաբերությամբ։

Այդպես են վարվում Սարգիսը և Սալոմեն իրանց կռիվի մեջ նոր սերունդի դեմ։

Սարգիսը և Սալոմեն, որպես ընտանիքի պատրիարքներ, որպես ծնողքներ, քաղցր խրատներ են կարդում, երբ որդին ցույց է տալիս սաստիկ ընդդիմադրություն։ Նրանք ճնշում են, ոտնակոխ են անում որդուն, երբ նա խոնարհվում է։ Մայրական-հայրական գութը, անեծքը, արտասուքը և սպառնալիքը խառնում են միմյանց, ազդելու որդու մեջ խոնարհության և պատկառանք դեպի ծնողաց ևսը։

Ինչպե՞ս են վարվում նոր սերունդի ներկայացուցիչները իրանց կռիվի մեջ հների դեմ։

Նրանք պարզ և անկեղծ կռվողներ են, նրանք դեռ վարժված չեն պատերազմական նենգություններին մեջ։ Միքայելի և Անանու կռիվը ծնողաց դեմ՝ ստրուկների կռիվ է իրանց տիրոջ դեմ, որոնք հաշտվում են, երբ տերը դադարում է բռնաբարել։ Միքայելը և Անանին տիրելու կամ իշխելու նպատակ չունեն. նրանք խնդրում են ազատություն։ Իսկ Սարգիսը և Սալոմեն ձգտում են տիրելու և իշխելու։ Նրանք բռնակալներ են։

Որպես նոր, որպես դեռ յուր սաղմական դրության մեջ, Միքայելի և Անանու բոլոր հոգեկան ուժերը, բոլոր ձգտողությունները դեպի բարին և դեպի ճշմարտությունը, դեռ գտնվում են իրանց գոյության խառն, երերյալ և տկար վիճակի մեջ։ Նրանք դեռ չեն ստացել հասուն, կատարելագործված ձև ու կերպարանք։ Միքայելը և Անանին ունեն համոզմունք, իսկ նա վճռական չէ. նրանք ունեն բարի ցանկություններ, ազնիվ նպատակներ, բայց որպիսի՞ ուղղություն տան իրանց ընթացքին, որ հասնեն նրանց, իրանք լցիտեն։ Եվ նրանց խոսակցությունը, և նրանց դարձվածները, և նրանց ձայնը մինչև անգամ արտահայտություն է սրտի և հոգու անհատատ տրամադրության։

Ընդհակառակն, Սարգսի և Սալոմեի մեջ ամեն ինչ վճռված է նախ քան նրա գործադրությունը։ Նրանց մեջ կա կամքի հաստատություն, նրանք ունեն երկաթի պնդությամբ համոզմունքներ, և նրանց գործադրության մեջ ոչ միայն համարձակ են, այլ հանդուգն են և աներկյուղ։ Սարգսի և Սալոմեի խոսքերն ուժ ունեն, հնչում են ինքնահավան կերպով, արտաշնչում են հեգնության, արհամարհանքի և երգիծանության բոլոր զորությամբ։ Նրանց բե-

բանից թափվում են ամբողջ հեղեղներ ազդու և ներգործող մոնոլոգների, որոնք բխում են սրտի խորքից։ Իսկ Միքայելը և Անանեն, կարծես, վախում են իրանց խոսքերից, կարծես, իրանք էլ երկբայության մեջ են նրա մասին, որ խոսում են, նրա մասին, որ գործում են։

Սարգիսը և Սալոմեն հանդիսանում են որպես հաղթողներ։ Թե՛ Սարգիսը և թե՛ Սալոմեն իրանց նպատակների իրագործումը գտնում են մեկ տան մեջ,— դա է Ստեփան Դանիելիչ Բրիլիանտովի, ամենահարուստ, միլիոնատեր վաճառականի ընտանիքը։ Այնտեղ կան մի օրիորդ և մի պատանի—Նատոն և Վանոն, մեկը Բրիլիանտովի աղջիկն է, մյուսը՝ տղան. մեկին ուզում են Միքայելի համար կին բերել, մյուսին Անանու համար ամուսին առնել։

Բրիլիանտովը նույնպես վաճառական է, և որպես հայ վաճառական, ամենակեղտոտ ճանապարհներով բարձրացած յուր ոսկու ամբարդակի վերա։ Նա զանազանվում է Սարգիսից նորանով, որ հազարավոր խեղճերի արյունով և արտասուքով դիզած յուր հարստությունը ներկել է ազնվության ներկով, և բարձր կանգնած է յուր փառքի զենիթի վերա։

Թե ի՛նչ միջոցներով էր հարստացել Բրիլիանտովը, դա երրորդական բան էր Սարգսի և Սալոմեի համար. միայն նրանք գոհ էին նրանով, որ իրանց որդիքը — Միքայելը և Անանին — կարող են բախտավորություն գտնել Բրիլիանտովի ոսկիների մեջ, մեկը՝ նրա փեսա դառնալով, մյուսը՝ նրա հարսը լինելով։

Նատոն և Վանոն — Միքայելի և Անանու նշանակված ամուսնացուքը — նույնպես պատկանում են նոր սերնդին, այսպիսի սիպեռն երիտասարդության մեջ բազմություն են կազմում։ Նրանք քեֆ-համիամ և փչացած արարածներ էն։ Նատոն և Վանոն ստացել են վայրիվերո կրթություն, կուրորեն հետևում են նոր ձևերին և սովորություններին, կոտրատում են հայերենի հետ խառն հատուկոտոր ռուսերեն և ֆրանսերեն բառեր։ Նրանց խոսակցության առարկան է՝ մոդան, զանազան զվարճության տեղերը, պարահանդեսները և այն անկյունիկները, որոնք թափ են տալիս մարդու քսակից առատ արծաթ, բավականություն տալով նրա անբարոյական հաճույքներին... Վանոյի մտերիմ բարեկամը և խորհրդակիցն է Ծանփը՝ յուր խորամանկ սպասավորը, որ ծածուկ Վանոյի սիրուհի Կարոլինին նամակներ է տանում ու բերում։ Իսկ Նատոյի մտերիմը, սատանան գիտե թե ո՞վ...

Այսպիսի որդիքը, ինչպես Վանոն և Նատոն, Բրիլիանտովի

նման հարուստների տան ցեցն են, աստուծո պատիժն են, Բրիլիանտովները, որոնք չեն մտածում որդիների օրինավոր կրթության մասին, որոնք իրանց խելքը և միտքը տված են միայն փող դիզելու, նույն փողը բաց է անում որդիների դեմ շռայլության և անբարոյականության լայն ուղին։ Ահա գլխավոր պատճառը, որ հայ մեծատունների մեջ հարստությունը չէ անցնում մինչև մի քանի սերունդներ։ Ինչ որ յուր անազնվությամբ դիզել էր ժլատ հայրը, յուր շռայլությամբ ոչնչացնում է անբարոյական որդին։

Վանոն և Նատոն այս տեսակ որդիներից էին և խիստ հավատարիմ իրանց կոչմանը, և դրանց հետ պետք է կապվեր Անանու և Միքայելի կյանքը...

Աննային ստիպված է լինում թողնել Միքայելին և ընդունել յուր մոր Սալոմեի առաջարկությունը, թեթևամիտ Վանոյի կին դառնալով։ Միքայելը այնքան ընդունակություն չէ ունենում ազատելու թշվառ զոհը...

Դրանով վերջանում է նրանց պատերազմը ծնողքների դեմ, դրանով է քանդվում կապը, որ պետք է զուգեր երկու սիրողներին— Անանուն և Միքայելին։

Պիեսայի մեջ մնացյալ տիպերն աննշան են։ Բարբարեն՝ Սարգսի ամուսինը, մի բարեսիրտ կին է. նա սիրում է յուր որդուն՝ Միքայելին, պաշտպանում է նրան, համակրում է նրա ցանկությունները, բայց շարժված ավելի մայրական գութից, քան գիտակցական համոզմունքից։ Բարբարեն ստրկացած հայ կնոջ տիպն է, որ յուր բողոքը ամուսնի բռնակալության դեմ կարող է հայտնել միայն լուռ արտասուքներով։

Յագոր Սիմոնիչ Սուրաթովը — Սալոմեի այրը՝ Անանու հայրը, հին աստիճանավոր է, որ որպես ծառայող, նա սովորել է դրսում կույր հնազանդությամբ թեքվել յուր մեծավորի առջև, իսկ տանը կնոջ «կոշիկների տակ»։ Յագոր Սիմոնիչը նույնպես բարի մարդ է, բայց որպես ծառայող նա խոնարհվում է այնտեղ, որտեղ ուժ է տեսնում։ Ահա պատճառը, որ Սալոմեն տիրում է նրա վերա։ Նա իբրև հայր լավ սիրտ ունի, հասկանում է յուր դստեր՝ Անանու, անբախտությունը, Վանոյի կին դառնալով, ճանաչում է Միքայելի արժանավորությունները, գիտե, որ յուր աղջիկը Միքայելի ամուսինը դառնալով, կարող էր ավելի երջանիկ լինել, քան Բրիլիանտովի ոսկիների մեջ. բայց այնքան քաջություն չունի ընդդիմանալ յուր կնոջ կամքին, մանավանդ հակառակ կողմում ուժ է տեսնում— հարստություն — նրա առջև ևս պետք է թեքվի հին ծառայողը...

Մենք քննեցինք պ. Սունդուկյանցի կոմեդիայի միայն տիպերը, իսկ նրա բովանդակությանը մանրամասնաբար չդիպանք։

Իսկ ինչ վերաբերում է պիեսայի արհեստական նշանակությանը, մենք այսքան կասենք՝ «էլի մեկ զոհը» թեև լրացրած գործ չէ, թեև նա չէ հասցնում գործողությունները իրանց վերջնական կետին, այսուամենայնիվ, հեղինակը ցույց է տվել յուր տաղանդը, որ իրան հանդիսականին մտածել է տալիս կոմեդիայի վախճանը, երևակայել այն, ինչ որ նա պետք է տեսներ բեմի վրա։

Որպես պ. Սունդուկյանցի մյուս պիեսներում և «էլի մեկ զոհի» մեջ ավելի ճիշտ և գեղագրական կերպով նկարված է հին սերունդը, մանավանդ վաճառական դասը։ Նոր սերունդի մեջ Վանոն և Նատոն երևում են իրանց իսկական պատկերներով, նրանք կատարելատիպ են թեթևամիտ երիտասարդության։

Բայց Միքայելը և Անանին նոր պատերազմողներ են, նրանք պետք է ընկնեին, որովհետև կանգնած էին կռվողների առաջին շարքում։ Իսկ նրանց դիակների վերայից կանցնեն նոր հերոսներ, որոնք առաջ կտանեն հաղթության դրոշակը...

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Հուլիսի 5-ին

Շատ տարիներ չեն անցել, որ Դավրեժի հայերը մի քանի անգամ ենթարկված են եղել սարսափելի հալածանքների. մահմեդականներն ընդհանուր ապստամբությամբ հարձակվել են հայոց թաղերի վերա, քանդել են տներ, կողոպտել, թալանել են նրանց կայքը, բարբարոսությունը հասել է մինչև արյունահեղության և վերջացել սպանություններով։ Այսպիսի չարագործությանց շարժառիթը եղել է միշտ մի հնարավոր ամբաստանություն հայերի վերա, որ դիպչում էր մահմեդականների կրոնական կամ ազգային առանձնահատկություններին, և գրգռելով մոլեռանդ ամբոխի կատաղությունը, առիթ է տվել նրանց վրեժխնդրությանը։

Այս օրերում Դավրեժի հայերին սպառնում է մի այնպիսի վտանգ, այս օրերում, երբ ամեն կողմից լսելի է լինում բանզիմութի (օրենսդրության) ձայնը, նրա ներմուծանելը Պարսկաստանի մեջ։ Այս օրերում, երբ Բարձր. Կառավարությունը աշխատում է

խաղաղություն տարածել, ապահովել ժողովրդի դրությունը, և առանց խտրություն դնելու կրոնի և ազգության, հավասարություն հաստատել։

Ամբողջ մահմեդական բազմությունը գտնվում է կատաղի խռովության մեջ. նրա վրեժխնդրությունը հասել է մինչև այն աստիճանի, որ ամեն րոպե պատրաստ է հարձակվելի հայերի վերա, ոչնչացնել և խպատ բնաջինջ անել նրանց։ Հայերի երկյուղը և հուսահատությունը անցել է սահմանից. նրանք արդեն սկսել են իրանց կայքը թաքցնել ապահով տեղերում և մեծ տագնապի մեջ սպասում են զարհուրելի ճգնաժամին։

Տեղային կառավարությունը ամեն միջոցներ գործ է դրել խռովությունը հանգստացնելու, նա արդեն բաժանել է զինվորներին պաշտոններ, որ վտանգի ժամանակ պաշտպանեն հայերին մահմեդականների հարձակմունքից, և հրամայել է քաղաքապետներին (դալաթեզիներին), որ նրանցից յուրաքանչյուրն զսպե յուր թաղում գտնված խռովարարների չարությունը։ Որովհետև այսպիսի դեպքերում ավելի մեծ ազդեցություն ունեն մոլլաները, այս պատճառավ քաղաքիս մեծ մուշտայիդը յուր կողմից ամեն ջանք է գործում դնում ապստամբության առաջն առնելու։

— Ի՞նչ է այս բոլոր հուզմունքի պատճառը։

— Ջորս ամիս առաջ կորել է մի թուրք աղջիկ...

Ահա անցքի մանրամասնությունքը։

Մի թուրք ընտանիք ընդունում է յուր մեջ մի մանկահասակ որբ աղջիկ, որը գյուղից բերվելով, հանձնվում է նույն տանը իբրև աղախին։ Աղջիկը, որպես լսվում է, շատ պարկեշտ վարքի տեր չէ լինում և մի օր անհետանում է այնտեղից։ Ասում են, նա սիրահարվելով քաղաքումս գտնված ձեռնածուներից (ֆոկուսնիկներից) մեկի վրա, նրա հետ գնում է օտար երկիր։ Բայց մահմեդական ձեռնածուի փոխարեն ամբաստանվում է մի հայ երիտասարդ, թե նա առևանգել է աղջկան, մեղանչել է կույս օրիորդի պատվի դեմ, և կամենալով ծածկել յուր հանցանքը, խեղդել է նրան ու ձգել մի հորի մեջ և այլն։

Երիտասարդը անմիջապես կալանավորվում է և ոստիկանության կողմից սկսում են խուզարկություններ անել հայերի տներում աղջկա դիակը գտնելու համար։ Իհարկե ոչինչ չեն գտնում և երիտասարդի վերա ոչ մի հանցանք չէ հաստատվում։ Բայց մահմեդականների հալածասիրությունը դրանով գոհ չէ մնում, նա կամենում է վրեժխնդիր լինել. նա պատիվ է պահանջում...

— Ումի՞ց։

— Ամբողջ հայ հասարակությունից...

Դիցուք թե երիտասարդը հանցավոր էր այս դեպքի մեջ, դիցուք թե բոլորովին ճշմարիտ լիներ նրա վերա դրած զրպարտությունը, բայց ինչո՞վ են մեղավոր թավրիժեցի հայերը։— Այս հարցը խավարասեր մահմեդականի համար ոչինչ նշանակություն չուներ, բավական է, որ նա մի հաջող միջոց է գտել յուր վրեժխնդրությունը թափելու մի քրիստոնյա հասարակության վերա, որի գոյությունը այնքան տանելի չէ նրան...

Քաղաքիս սահաբդիվանը (դիվանի պետը) վերջին օրերումս պատասխանել է թուրքերին՝ եթե հաստատվի երիտասարդի վերա հանցանքը, ինքը պատրաստ է նրան գլխատել տալ, միայն հայոց հասարակությունը անպարտ կմնա այս գործի մեջ։ Այս խոսքը դարձյալ չխաղաղեց թուրքերի կատաղությունը։ Յավալին այն է, որ գահաժառանգ իշխանը քաղաքումս չէ, գտնվում է ամառանոցում, նորին բարձրության ներկայությունը կարող էր զսպել ապստամբությունը։

Թե ինչով կվերջանա խռովությունը, ոչինչ նախագուշակել կարող չեմ, միմիայն այսքանը կասեմ, որ ներկա դարումս պատահած մի այսպիսի անկարգություն հավիտենական բիծ կդնե մի պետության վերա, ուր իրավունքը և արդարությունը բռնաբարվում է կույր և հալածասեր ամբոխի մոլեռանդությունից...

Մինչև ե՞րբ...

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Հունիսի 15-ին

Խոսելով հայերի նշանակության մասին Ասիայի մեջ, շատ անգամ հայտնված է եղել մի այսպիսի միտք թե հայերին վիճակված է գիտություն և լուսավորություն տարածել արևելքում, թե քաղաքակրթությունը պետք է նրանց առաջնորդությամբ մուտք գործե մահմեդական Ասիայում։ Մի այսպիսի ինքնահավան կարծիքը շատերին կարող է ծիծաղելի երևնալ, եթե ի նկատի չառնվի ամենամոտ անցյալը և այն դերը, որ հայերը ներկայումս խաղում են Տաճկաստանի և Պարսկաստանի մեջ։ Բերենք մի քանի օրինակ-

ներ։ Շահի և Սուլթանի արքունիքը միշտ ունեցել են իրանց դռանը մեծամեծ պաշտոնակալներ, որոնց ձեռքումն է եղել պետության ամենագլխավոր գործերի վարչությունը, որոնք համաձայն եվրոպական քաղաքագիտության ուղղության են տվել կառավարության վերանորոգություններին, որքան կարելի է, հեռացնելով այն հին ձևերը, որոնք բռնաբարում էին իրավունքը և արդարությունը։ Պետության ֆինանսական վիճակը կախված է եղել հայ սարաֆների ձեռնտվությունից, դպրոցների մեջ եվրոպական գիտությունների առաջին վարժապետներն են եղել հայերը. դեսպանախոսական հարաբերությանց մեջ թարգմաններ եղել են հայերը, և հայոց թատրոնից առաջին անգամ լսելի է եղել բեմական խոսքը, և մամուլը հայկական տառերով և տաճկաց լեզվով աշխատել է ծանոթացնել մահմեդականներին լուսավոր աշխարհի մտածությանց և գաղափարների հետ։

Թողնենք այդ ընդհանուր տեսությունը, անցնենք դեպի մասնավորը. խոսքս Պարսկաստանի Դավրեժ քաղաքի մասին է։

Դավրեժը թե՛ յուր բազմամարդությամբ և թե՛ առևտրական ընդարձակությամբ, առաջին տեղն է բռնում ամբողջ Իրանի մեջ։ Խիստ հաճախ հարաբերություններն օտարների հետ վազօրոք զգալ տվին քաղաքիս մտածող մասին եվրոպական կրթության կարևորությունը, և մի քանի տարի առաջ Դավրեժի մեջ սկսեցին հիմնել մի դպրոց։ Մոլլաների դասը (որպես սպասելի էր) ընդհանուր կատաղությամբ ընդդեմ կացան դպրոցի հիմնարկությանը, համարելով նրան վնասակար, կրոնքի և օրենքի հակառակ։ Մեծ մուշտայիդը ամբոխից քարոզ էր կարդում՝ թե Իսլամի որդիքը, ֆրանգների (եվրոպացիների) լեզուն և գիտությունը սովորելով, ֆաֆիրներ (անհավատներ) կդառնան, և երբ նրանց մահից հետո աստուծո հրեշտակները կգան հարցնելու Իսլամի հավատո հանգանակը, նրանք կպատասխանեն ֆրանգի լեզվով, և հրեշտակները նրանց լեզուն չհասկանալով, և կարծելով թե նրանք ֆրանգներ են, կփակեն նրանց առջև դրախտի դռները, և բոլորին կտանեն դժոխքը[1]...

Մի այսպիսի քարոզը բավական էր գրգռելու մահմեդականների մոլեռանդությունը, խլելով նրանցից հոժարություն իրանց որդիքը եվրոպական կազմակերպությամբ մի դպրոց ուղարկելու։

---

[1] *Մահմեդականների կարծիքով թե՛ աստված և թե՛ նրա հրեշտակները բոլորը խոսում են արաբերեն լեզվով, և վերջին հարցափորձը մի մեռանողից նրա դավանության մասին լինելու է նույն լեզվով, ոչ մի այլ լեզվով խոսակցություն բնդունված չէ երկնքում։*

Բայց դժբախտաբար այս հանգամանքին ավելի շատ նպաստում է մի դեպք՝ նույն միջոցում քանդվում է նորակառույց դպրոցի պատերից մեկը, այս երևույթը բավական էր ժողովրդին մտածել տալ, թե ինքը աստված և նրա մարգարեն (Մուհամեդ) ընդդեմ են դպրոցի հիմնարկությանը, և հրաշքով ցույց տվին իրանց անհամաձայնությունը։ Եվ այսպես ֆրանգների ուսումնարանը յուր սկզբնավորության մեջ ոչնչացավ...

Նույն իսկ ժամանակներում Ատրպատականի վիճակավոր առաջնորդ Սահակ եպիս. Սաթունյանը Դավրեժում սկսել էր մի դպրոցի շինարարությունը հայերի համար։ Դա նույնպես պետք է պատերազմեր ժողովրդի մոլեռանդության հետ։ Որովհետև տեղի անձկության պատճառով առաջնորդը ստիպված էր դպրոցը հիմնել մի հին գերեզմանատան վերա, ժողովուրդը չէր ցանկանում, որ իրանց պապերի փոշիների վերա դրվի հիմքը այն շինվածքի, որի մեջ նրանց որդիքը պետք է ուսում և կրթություն ստանային։ Այսուամենայնիվ հայր Սաթունյանը հաղթելով բոլոր արգելքներին, հասավ յուր նպատակին, մի տարվա մեջ թե՛ դպրոցը և թե՛ նրան կից առաջնորդարանը՝ երկուսն էլ պատրաստ էին։ Այնուհետև հիմնադիրն մտածում էր նյութական կողմից մշտապես ապահովել դպրոցի գոյությունը, երբ մահը վերա հասավ, և նա յուր բոլոր բարի ցանկությունները յուր հետ գերեզման տարավ։ Բայց նա թողեց յուր վախճանից հետո մի գումար, որ նույն ուսումնարանի հիմնական դրամագլուխն դարձավ։

Սահակ եպիսկոպոսից հետո փոխվեցան մի քանի առաջնորդներ, բայց նրանցից և ոչ մեկը մտածեց աճեցնել դպրոցի նյութական միջոցները և ընդարձակել նրա նեղ ուսումնական պրոգրամաը։ Գործը առաջ էր գնում խիստ թույլ կերպով, և դպրոցը օրըստօրե ընկնելու վերա էր, երբ Վեհապետյան Գևորգ եպիսկոպոսի առաջնորդության օրերում դպրոցը սկսեց վերածվել։ Ինքը Վեհապետյանը շահին ներկայանալով, և դպրոցի առաջադիմության արդյունքը նորին Մեծությանը առաջարկելով, դարձրուց դպրոցի վերա շահի բարձրագույն ուշադրությունը, որով բարեհաճեց յուրաքանչյուր տարի մի նշանակյալ գումար արքունի գանձարանից օժանդակել դպրոցին։

Բայց դպրոցը տակավին յուր իսկական նշանակությանը հասած չէր և չէր կարող ևս հասնել, քանի նա գտնվում էր առաջնորդների միակ իրավասության ներքո, քանի ժողովուրդը յուր ներկայացուցիչները չուներ նրա կառավարության մեջ։ Այս իրողությունն

ավելի զգալի եղավ Գրիգոր եպիս. Հոբյանի առաջնորդության օրերով, երբ դպրոցը թե՛ բարոյապես և թե՛ նյութապես՝ դնվում էր յուր վերջին հոգեվարքի մեջ։ Քաղաքի նշանավոր մարդիկը, ոչինչ արդյունք չտեսնելով, իրանց որդիքը դուրս բերեցին այնտեղից և հիմնեցին առանձին վարժատուն։ Այս բաժանումն ազգային դպրոցից վերջին զարկն էր, որ պէտք է տաներ նրան դեպի կործանում, եթե էջմիածնո հոգևոր կառավարությունը չհասկանար Հոբյանի անպիտանությունը և չհեռացներ նրան Պարսկաստանից։

Հոբյանի փոխարեն ուղարկվեցավ առաջնորդ Անդրեաս եպիսկոպոսը, որն Ատրպատականի այժմյան վիճակավորն է։ Այս վերջինը, օգուտ քաղելով յուր նախորդների արած սխալներից, դպրոցը կրկին վերականգնելու միջոցը գտավ նրա մեջ, որ դուրս բերե նրան եկեղեցական նեղ իշխանությունից և դարձնի ժողովրդական։ Մի այսպիսի փոփոխությունը շուտով ցույց տվեց յուր արդյունքները։ Դպրոցի համար նշանակվեցան ժողովրդից ընտրված **հոգաբարձուներ**, որոնք իրանց պաշտոնի մեջ մտած օրից ուշադրություն դարձրին դպրոցի նյութական ապահովության վերա, որից կախումն ուներ նրա ուսումնական առաջադիմությունը։ Խիստ կարճ միջոցում նվիրատվությամբ հավաքվեցավ մի նշանավոր գումար, որը թեև լիապես բավականություն չէր կարող տալ դպրոցի պահանջներին, բայց կարելի եղավ նույն գումարի տոկոսիքով նշանակել հմուտ տհսուչ, վարձել մի քանի օրինավոր վարժապետներ և ավելացնել դասատվության առարկաների և լեզուների թիվը։ Դպրոցը ստացավ փոքր ի շատե կանոնավորված ձև և կերպարանք, եվ ներկա հուլիս ամսի հարցաքննությունը (որին ներկա դնվելու պատիվն ունեի) ցույց տվեց մի տարվա ընթացքում եղած արդյունքը, որից երևում էր դպրոցի զարմանալի արագությամբ առաջադիմությունը։ Քննությունների ներկա էին բացի աշակերտների ծնողքները, նաև եվրոպական հյուպատոսների ներկայացուցիչներ, և համարյա քաղաքում գտնված ամբողջ եվրոպական հասարակությունը։ Բոլորը մնացին գոհ և ամենի հաճությունը չափ չուներ։

Մենք բավականին չեղվեցանք մեր դրած հարցեն, այժմ դառնանք դեպի այն։ Մենք ասեցինք, թե հայերին, որպես կրթության ընդունակ մեկ ազգի, վիճակված է լուսավորություն տարածել Ասիայում, այս մտքին իբրև ապացույց վեր առնենք նույն իսկ Դավրեժի դպրոցը։ Դեռ դպրոցը յուր թույլ և խանգարված դրության մեջ, նա դարձյալ այնքան բարձր էր մոլլաների ձեռքում եղած **մադրասայներից** (*վարժատներից*), որ շատ անգամ պարսիկներից

նշանավոր անձինք առաջարկել են յուրյանց որդիքը այնտեղ ուղարկել ուսում առնելու համար։ Բայց տեղային հայոց առաչնորդը այնքան նեղսիրտ է գտնվել, որ չէ կամեցել մահմեդական երեխան ընդունել քրիստոնյայի դպրոցի մեջ։ Մոլեռանդությունն ինքընըստինքյան հասկանալի է... Թողնենք այդ։ Այս տարվա հարցաքննությանց ժամանակ կրկին անգամ զարթեցավ նույն հարցը։ Պարսկերենի քննության օրը հրավիրված էր Նախիջուլ-վուզարաե, այսինքն՝ արտաքին գործոց վեզիրի փոխանորդը[1]։ Նա ուղարկեց յուր կողմից գեներալ Ղուլի-խանին, բայց ինքը Նախիջուլ-վուզարան, անձամբ եկավ ֆրանսերենի քննության օրը։ Նա որպես ֆրանսիագետ և եվրոպական ուսմունք ունեցող ոմն, բոլորովին հիացած մնաց աշակերտների առաջադիմության մասին և ընծայեց դպրոցին հարյուր թուման փող։ Բայց նորին պայծառափայլության ավելի մեծ ընծան այն էր, որ խոստացավ յուր որդին ուղարկել այնտեղ ուսանելու համար, և հայտնեց, թե պարսից մեծամեծներից շատերը պատրաստ են հետևել յուր օրինակին, որովհետև իրանք օրինավոր վարժապետներ չունեն։ Բացի դրանից, Նախիջուլ-վուզարան բարեհաճեցավ՝ թե դպրոցի դրությունը և նրա Պարսկաստանի ժողովրդի համար բերած օգուտները կհայտնե արտաքին գործոց վեզիրին և նա յուր կողմից կներկայացնե շահի բարձրագույն ուշադրությանը։

Քննությունից հետո Նախիջուլ-վուզարան մտավ հայոց ընթերցարանը, որ նույն շինվածքի մեջ է գտնվում, ուր դպրոցն է։ Պարսկաստանի մեջ առաջին անգամ նա տեսավ, սեղանի վերա դրած, մինչև տասն և հինգ զանազան օրինակներ՝ հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն և պարսկերեն լրագրներ և ամսագրեր։ Այս տեսարանը մինչև այն աստիճանը գրավեց Նորին պայծառափայլությանը, որ խոստացավ 40-պարսկերեն գրքեր ընծայել ընթերցարանին, որովհետև պարսկերեն գրքերի թիվը փոքր էր։

Նորին պայծառափայլություն Նախիջուլ-վուզարայի այս համակրությունը՝ թե՛ դեպի դպրոցը և թե՛ դեպի ընթերցարանը՝ ամենայն շնորհակալության արժանի է։ Իսկ ինչ որ վերաբերում է այն մտքին, այսինքն՝ հայոց դպրոցի մեջ ընդունել և պարսիկ երեխաներ, այդ մասին մենք կխոսենք առանձին նամակով. առայժմ այս-

---

[1] Դավրեժի այժմյան Նախիջուլ-վուզարան, մի ժամանակ Թիֆլիսի մեջ պարսից կողմից գեներալ կոնսուլ Ալի-խանն է, որ հայտնի է հայ հասարակության մեծ մասին, որպես եվրոպակիրթ և ուսումնասեր ոմն։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԲՆԱԿԱՁՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Տեղագրություն։— Վաճառականություն ընդհանրապես, և հայերի վերաբերմամբ՝ մասնավորապես

Ատրպատական. Այստեղ հայերը գլխավորապես զետեղված են Ուրմիո լիճը շրջապատող գավառներում, որպիսին են Խոյ, Սալմաստ, Ուրմի, Սուլդուզ, Սովուխ-բուլախ, Բինաբ և Մարաղա։ Բացի դրանցից բնակվում են Ղարադաղի գավառներում, Թարվեզ քաղաքում, Մագու քաղաքում և իր շրջակա գյուղորայքում։

Հայերի թիվը Ատրպատականի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսի վիճակագրության համեմատ կարելի է նկատել հետևյալ ցուցակից։

Պարսկաստանում հայերը մեկ երկրի մեջ ամփոփված չեն բնակվում, այլ ցրված են զանազան կողմեր, սկսյալ Օրասխ գետից մինչև Բաենդեր-Բուշեր, այսինքն՝ մինչև Պարսկական ծոցը կան Հնդկաստանի սահմանները։ Այս ահագին տարածության վերա հայեր կարելի է գտնել զանազան քաղաքներում և առավելապես գյուղորայքում։ Նրանց որքանությունը կարելի է գիտենալ հետևյալ թվանշաններից.

	տուն	այր	կին
Նոր-Ջուղա (Սպահանի մոտ).	*371*	*1 191*	*1 355*
Ջրհար-Մահալ (գավառ Սպահանա, ուր կան 5 հայաբնակ գյուղեր՝ Ահմադապատ, Սիրաք, Գիլնեկան, Մահամդա և Հուասխան).	*306*	*1 107*	*956*

Փերիա (գավառ Սպահանա, ուր 25 զանազան գյուղորայքում բնակվում են).	1 012	3 437	2 966
Բուրվարի (գավառ Սպահանա, ուր 16 զանազան գյուղորայքում բնակվում են).	446	1 450	1 243
Քամարա (գավառ Սպահանա, ուր 5 զանազան գյուղորայքում բնակվում են).	124	402	343
Կիաֆլա (գավառ Սպահանա, ուր 9 զանազան գյուղորայքում բնակվում են).	183	578	448
Քեազազ (գավառ Սպահանա, ուր 7 զանազան գյուղորայքում բնակվում են).	151	489	453
Մալայիր (գավառ Սպահանա, ուր 4 զանազան գյուղորայքում բնակվում են).	110	321	260
Վարադան (գավառ Սպահանա, ուր 4 զանազան գյուղորայքում բնակվում են).	102	395	377
Ուրեմն ամբողջ Սպահանա նահանգում՝	2 805	9 370	8 501
Շիրազ քաղաքում	7	14	20
Բուշեր քաղաքում	9	33	32
Համադան (հին Եկփատան քաղաքում).	40	114	120
Նավարին (գյուղ Համադանի մոտ).	76	165	149
Թեհրան (մայրաքաղաք Պարսկաստանի).	110	300	251
Վանակ և Շոթորխադ (գյուղեր Թեհրանի մոտ).	43	108	103
Ամբողջ Արաղեստանի հայ ազգաբնակության գումարն է	3 090	10 104	10 082

Վերոհիշյալ թվանշաններից երևում է[1], որ հայոց ազգաբնակության մեծ մասը կենտրոնացած է Սպահան քաղաքում և նրա գյուղորայքում։ Թե որտեղից և որպես գնտեղվեցան այնտեղ հայերը, այդ հայտնի է պատմությունից. մենք թողնում ենք անցյալը, հարկավոր ենք համարում նրանց արդի վիճակից ասել մի քանի խոսք։ Նոր-Ջուղան (մի արվարձան է Սպահանա մոտ) յուր բազմամարդության ժամանակ ունեցել է 20 եկեղեցի, բայց այնուհետև, երբ ժողովրդի մեծ մասը գաղթեցին դեպի Հնդկաստան, կանգուն մնացած են 7 եկեղեցի միայն։ Երկու վանքեր տակավին չեն զրկված իրանց միաբանությունից։ Ս. Կատարինեի վանքը կուսանոց է, ունի մինչև 20 միանձնուհիք. Ամենափոքրիկիչ վանքում գտնվում է տեղային առաջնորդարանը։

Նոր-Ջուղան ունե երեք դպրոց, ա) Հայկյան-Հայրենասիրական, հաստատված 1843 ամի բարերարությամբ պ. պ. Հարություն Աբգարյանի և Հովհաննջան էլիազյանի, որք բնակվում են Հնդկաստանի Կալկաթա քաղաքում. այս դպրոցի մեջ նույն պարոնների օժանդակությամբ ուսանում են 70 աշակերտներ. բ) Ամենափրկիչյան դպրոց. բացված 1852 ամի բարերարությամբ երկու քույրերի՝ տիկ. Մարիամ Հարությունյան և օրիորդ Թագուհի Մանուկյան, որոնք բնակվում են Հնդկաստանի Բատավիայում։ Այս դպրոցը ունե 40 աշակերտներ և կառավարվում է նույն տիկինների օժանդակությամբ. գ) Սուրբ Մինասա դպրոց, որի հիմնադիրն է պ. Մարգար Սուքիասյան, բնակվում է Հնդկաստանի Ջավա կղզու Ջափարա քաղաքում. աշակերտաց թիվը 80 է։ Բացի հիշյալ արական դպրոցներից, Ս. Կատարինի վանքի կուսանոցն ուներ յուր մեջ մի օրիորդական վարժարան, որ հիմնված է բարերարությամբ պ. Մանուկ Հորդանանյանի, որը բնակվում է Բատավիայի մեջ։

Բայց այժմյան վիճակավոր առաջնորդի՝ հայր Գրիգորիս եպիսկոպոսի օրերով Սպահանա վերոհիշյալ երեք արական դպրոցները բոլորովին ուրիշ կերպարանք ստացան։ Նորին սրբազնությունը հայոց դպրոցները հանձնում է մստեր Բրուս անունով անգլիացու տեսչությանը, որպեսզի եվրոպական մանկավարժության կանոններին համեմատ նրանց ուղղություն տա։ Այդ իհարկե, մի

---

1 Վերոհիշյալ թվանշանները դուրս են բերված Թագեոս եպիսկոպոսի՝ մի ժամանակ Սպահանա առաջնորդի, 1856—1857 թվի վիճակագրությունից։ Բայց 1871—1872 թվի սուվը այնպիսի մեծ հարված տվեց տեղային հայերին, որ այժմ նոցա թիվը պետք է պակասած լինի։

գեղեցիկ միտք է հայոց վանակարգ վարժարանը հանձնել եվրոպացի գիտնականին, նրան բարեկարգելու համար, երբ հայերից եվրոպական կրթությանը ծանոթ մարդիկ չկային։ Բայց մստեր Բրուսը միսիոնար է, որը Լոնդրայի Անգլիական եկեղեցու կողմից ուղարկված էր Պարսկաստանում քրիստոնեություն տարածելու։ Մի այսպիսի մարդուն հանձնել հայոց դպրոցների տեսչությունը, հազիվ թե կհասցներ ցանկալի նպատակին, այն է դպրոցի բարեկարգությունը և նորա եվրոպական մանկավարժության համեմատ կազմակերպությունը։ Որովհետև միսիոնարը գիտության մարդ չէ, միսիոնարը, ո՛ր եկեղեցուն և պատկանելու լինի, այնուամենայնիվ մոլեռանդ և կրոնամոլ է։ Նա ծառայում է մի վերացական գաղափարի, որն իրականության հետ առանձին ոչինչ չունի, և նույն գաղափարին նվիրում է յուր գործունեությունը։ Եթե միսիոնարին հանձնում են հայոց դպրոցների տեսչությունը, հարկավ, այն դպրոցները ծառայեցնելու է յուր նպատակներին։ Այսպես էլ լինում է։ Մստեր Բրուսը յուր օգնական հայազգի պ. Մելքում Ասատուրյանի հետ, որ ուսած էր Գերմանիայում, յուրյանց տեսչության տակն առնելով հայոց դպրոցների կառավարությունը, քիչ ժամանակից հետո հայտնվում է մի նոր այլանդակ կրոնական ուղղություն, որ մտցրած էր նույն ուսումնարաններում։ Հայր Գրիգորիս եպիսկոպոսը, թեև ուշ, բայց հասկանում է յուր սխալը, նա կամենում է հեռացնել անգլիացի միսիոնարին յուր պաշտոնից։ Բայց նա չէ ցանկանում հաճությամբ թողնել հայոց դպրոցները, մինչև հայոց առաջնորդին ստիպեցնում է դիմել տեղային կառավարությանը և բողոքել։ Թեև դատը վճռվում է հօգուտ հայոց առաջնորդի, բայց անգլիացի միսիոնարը մեծ մասամբ հասած էր յուր նպատակին, որովհետև աշակերտները մինչ այն աստիճան գրաված են լինում իրանց տեսչի տված ուղղությունով, որ չեն հեռանում նրանից, և ո՛չ ցանկանում են շարունակել իրանց ուսումը այն դպրոցներում, որոնք կրկին հայոց առաջնորդի հովանավորության տակ պետք է մտնեին։ Նրանք, աշակերտները, սկսում են հաճախել մստեր Բրուսից հիմնված մի առանձին վարժատուն, որ հատկապես հայ մանուկների համար կառուցել էր նա։

Մենք ամենևին չենք դատապարտում անգլիական միսիոնարի գործ դրված խորամանկությունը, որովհետև գիտենք՝ անգլիացին որքան յուր երկրում ազատամիտ է, այնքան նա Ասիայում շահամոլ է և հարստահարող։ Մենք դատապարտում ենք Գրիգորիս եպիսկոպոսի անհոգությունը. նա շատ միամիտ պետք է լինի, որ

չէ հասկանում, թե գայլն ինչ նպատակով հանձն է առնում գառների պահպանությունը...

Մենք հայոց եկեղեցվո մոլեռանդ պաշտպաններից չենք. միայն նայում ենք նրա վերա բոլորովին ազգային կետից, և խիստ վնասակար ենք գտնում, որ հայը, հեռանալով հայրենական եկեղեցուց, դադարում է յուրյան հայ կոչել:— Ահա միսիոնարների մեզ տված օգուտը...

Սպահանա հայերի մեջ, բացի բողոքական տարրեն, որ նոր է մտցրած, կան քսան գերդաստանի չափ հայ կաթոլիկներ, որոնք կրոնափոխ են եղած մասամբ եզվիտներից, մասամբ Ունիթոռ կոչված Դոմինիկյաններից: Այս վերջինների արհամարհանքը դեպի հայությունը հասնում է մինչև այն աստիճանի, ինչ աստիճանի հասնում է Հռոմի պաշտոնյաների հալածասիրությունը դեպի մարդկային ամեն ազատ ձգտողություն...

Բացի Սպահանից և նորա գավառներից, որպես տեսավ ընթերցողը, Պարսկաստանի մյուս քաղաքները շատ փոքր հայ բնակիչներ ունեն: Շիրազը, պարսից բանաստեղծական քաղաքը, այժմ ունի 7 հայոց գերդաստաններ, նոցա թիվը առաջ շատ էր, բայց օրըստօրէ սպառվելու վրա են: Շիրազն ունի մի հայոց եկեղեցի, որն 1853-ի երկրաշարժից փլած էր, բայց կրկին նորոգվեցավ 1856 թվին: Վարժատուն չունի: Բենդեր-Բուշերի ինը տուն հայերը նույնպես ունեն մեկ եկեղեցի, բայց դպրոց չունեն, իրանց որդիքն ուղարկում են Բոմբա ուսանելու: Զարմանալի երևույթ, ամեն տեղ, հայն որքան և փոքր լինի թվով, նա դարձյալ ունի մի եկեղեցի: Նա առանց դորան ապրել կարող չէ... չնայելով, որ առանց դպրոցի, եկեղեցվո ժողովուրդն ոչնչանում է, և նորա քարերն պարսից բաղնիքների շինության համար են գործ դրվում...

Պարսկաստանի 1871 թվի սովը բավականին լայն ասպարեզ բաց արավ ամերիկացի բողոքական միսիոնարների առջև տարածել իրանց վարդապետությունը տեղային հայերի մեջ, որոնք փոխեցին իրանց կրոնքը ավելի մի պատառ հացի համար, քան որևիցե համոզմունքից դրդված: Այս մոլորության առաջին օրինակը տվեցին Համադանա հայերը, որոնք համարյա բոլորը ընդունեցին բողոքականություն: Այժմ ամերիկացի միսիոնարներն ունեն այնտեղ ուսումնարան, աշակերտները ստանում են շաբաթական 2 կռան փող, հագուստ և ուտման բոլոր պարագայք:

Նույնը արեցին ամերիկացի միսիոնարները և Թեհրանի հայերի մեջ, հիմնելով այնտեղ երկու դպրոցներ, որոնց մեջ ուսանում

են 60 աշակերտներ, ստանալով շաբաթական 2 կռան փող, հագուստ, գիրք և բոլոր ուսման պարագայքը։ Ամերիկացի միսիոներների օրինակը գրավեց այնտեղ և երկու կաթոլիկ քահանաներ, որոնք հինգ մայրապետների հետ, բույն դնելով Թեհրանում, միտք ունեն օրիորդաց ուսումնարան հիմնել հայերի մեջ։

Բայց Թեհրանում գտնվեցան մի քանի եռանդոտ երիտասարդներ, որոնք տեսնելով ազգի կորուստը, հորինեցին մի ընկերություն. Հայկազնյան կոչված, և հիմնեցին նույն անունով մի դպրոց, որ ունի այժմ մինչև 40 աշակերտներ։ Դպրոցը կառավարվում է բարերարների մասնավոր նվիրատվությամբ, բացի դրանից ստանում է Պարսից կառավարությունից տարեկան 200 թուման օժանդակություն։ Դպրոցի աշակերտները, բացի նորանից, որ ձրիվարժ են, ունեն նաև գրադարան, որ ծառայում է որպես հասարակաց ընթերցարան։ Թեհրանի երիտասարդության գործը գովելի է և այն կողմից, որ փոխանակ զանազան միջոցներով աշխատել է օտարերկրյա քարոզիչներին դուրս հալածել իրանց միջից, նրանք սկսել են ազատ կերպով մրցություն անել, որը միակ և ուղիղ ճանապարհն է հայ հասարակության մեջ կրոնափոխության առաջն առնելու։ Թեհրանը ունի երկու հայոց եկեղեցի։

Մեր հաղորդած վերոհիշյալ տեղեկություններից ընթերցողը կտեսնի, թե որպես կրոնափոխությունը արագ քայլերով, օտարերկրյա քարոզիչների ձեռքով, առաջ է գնում հայերի մեջ։ Այս երևույթի գլխավոր պատճառն է ժողովրդի չքավորությունը, որ յուր ապրուստի համար վաճառում է ամեն ինչ, որքան և նվիրական և սրբազան լիներ յուր համար։ Իսկ բողոքական և կաթոլիկ քարոզիչները հայտնվում են Պարսկաստանում ահագին գումարներով։ Մի երկրորդ ամենագլխավոր պատճառը մենք վերաբերում ենք տեղային հայոց հոգևոր կառավարության անհոգությանը և նրա անկարգությանը։ Թողնենք մյուս եկեղեցական հաստատությունները, այսքանը բավական է հիշել, որ Սպահանա առաջնորդական վիճակը պարունակում է յուր մեջ, բացի վերոգրյալ քաղաքների և գավառների հայ ժողովուրդը, նաև Հնդկաստանի հայերը։ Թե՛ Հնդկաստանի հայերը և թե՛ Պարսկաստանի հայերը իրանց սեփական քահանա չունեն։ Սպահանա առաջնորդն ուղարկում է ամեն կողմ քահանաներ երկու կամ երեք տարվա պաշտոնով։ Կնշանակե, Հնդկաստանի և Պարսկաստանի բոլոր հայ ժողովուրդը Սպահանա քահանաների ղևտական ծառանգությունն են։ Մի քահանա Սպահանից դուրս գալով, մի և երկու ամսվա ճանապարհ

պետք է անցնեի, մինչև Թեհրան, Բուշեր և Հնդկաստանի զանազան քաղաքները հասնի, իսկ այնտեղ մնալու է նա երկու կամ երեք տարի։ Ժամանակը լրանալեն հետո նրան կփոխանորդեն մի երկրորդը։ Իսկ այդ վիճակը ձրի չստացավ այն քահանան, նա յուր գալու ժամանակ բավականին գումար ծախսեց, մինչև ստացավ յուր տեղը։ Նա ճանապարհին բավականին ծախս արավ մինչև հասավ յուր համար նշանակած քաղաքը։ Ո՞րտեղից պետք է դուրս բերեն այս բոլորը, որ ինքն ևս մի բան շահե,— ժողովրդի քսակից...։ Այժմ երևակայեցեք, թե ի՞նչ բարոյական և հոգևոր ուղղություն կարող է տալ յուր ժողովրդին այդ տեսակ քահանա...

Այժմ, որպես հիշեցինք, Սպահանա հայոց առաջնորդը Գրիգորիս եպիսկոպոսն է. նա թողել է Պարսկաստանը և գնացել է Հնդկաստան։

Ինչ որ վերաբերում է Պարսկաստանի հայերի հասարակական կյանքին, նրանց կենցաղավարությունը ամեն տեղ այնքան միատեսակ է, որ կարելի է այդ ընդհանուր տեսությունը անել, քաղաքաբնակները պարապվում են մի քանի արհեստներով, որպես են՝ հյուսնություն, ոսկերչություն, ջուլհակություն և այլն, նրանց գլխավոր առևտուրը գինեվաճառությունն է, որ մահմեդականներին արգելված լինելով, մնացել է քրիստոնյաների սեփականություն։ Նվ որովհետև կրոնքով արգելված մի ըմպելիքի գործածությունը լինում է մահմեդականներից առավել անբարոյական և սրիկա մասնի մեջ, այս պատճառավ հայը գինեվաճառության հետ ծախում է և յուր պատիվը, մանավանդ այդ առևտուրը գտնվում է կանանց ձեռքում... Կանոնավոր վաճառականությամբ պարապվում են քաղաքներում շատ քիչ մարդիք։ Այնպես որ, ամեն տեղ տիրում է չքավորություն։ Սպահանա հայերը համարյա ապրում են իրանց հնդկաստանցի ազգայինների ողորմությամբ։ Գյուղացիների վիճակը ավելի դժբախտ է. նրանք թեև առհասարակ պարապվում են երկրագործությամբ, բայց կալվածատիրոջ հարստահարությունը նրանց ձեռքում ավելի վաստակ չէ թողնում. և իրանց ապրուստը որոնում են օտար երկիրներում գաղթականության մեջ։

Գաղթականությունը տարածվում է ավելի դեպի Հնդկաստան, որ հայերի համար մի անդառնալի կորստյան անդունդ է...

Պարսկաստանի գյուղացիների գաղթականությանը նպաստում է տեղային կառավարության այն ապօրինությունը, որ յուրաքանչյուր գյուղի համար սահմանված տուրքը ստացվում է նրանից մինչև վերջին շունչի մնալն։ Գյուղն այն ժամանակ միայն ազատվում

է տուրքից, երբ բոլորովին ամայի և դարտակ է մնում։ Օրինակ, մի գյուղ մի ժամանակ ունեցել 200 տուն բնակիչներ և նոցա մարդահամարի համեմատ նշանակված է տուրքի մի որոշյալ գումար։ Այժմ բնակիչներից 50 տուն գաղթեցին. տուրքի գումարից ոչինչ չէ պակասում. 50 տուն ևս գաղթեցին, դարձյալ նույն գումարը կատացվի, և այսպես բնակիչների թիվը օրըստօրե փոքրանում է, բայց տուրքը մնում է միևնույնը։ Իսկ մնացած բնակիչները ստիպված են այնուհետև թողնել գյուղը, որովհետև այնքան ծանրութիւն տանել կարող չեն։

Ի նկատի ունենալով այսպիսի հանգամանքները, մենք ստիպված ենք հայտնել մի քանի տխուր ճշմարտութիւններ, որ Պարսկաստանի հայոց ապագան չէ խոստանում որևիցե մխիթարական վախճան, քանի նորա գոյութիւնը ապահովող մի հաստատ դրութիւն չենք տեսնում։ Թողյալ այդ, միշտ փոքրիկ մասնիկները անհետանում և կուլ են գնում նույն տարրի ընդհանրութեան մեջ։ Այժմ երևակայեցեք Պարսկաստանի հայոց ցրվյալ, կտոր-կտոր եղած մասնիկները զանազան պարսկական քաղաքներում և գյուղերայքում։ Բավական է միայն քարտայի վերա նայել և տեսնել, թե որքան հեռու են միմյանցից Թեհրանը, Համադանը, Սպահանը, Շիրազը, Բենտեր-Բուշերը և այլն։ Այնտեղ, ուր մենք 7—8 տուն հայ ենք տեսնում, գտնում ենք մի կամ ավելի եկեղեցիներ, ընդարձակ գերեզմանատուն, որոնք որպես անբարբառ վկայարանք ցուցանում են, թե հայ բնակիչների թիվը ավելի շատ է եղած առաջ. իսկ ո՞ւր են այժմ։—Բոլորը անհետացան շրջապատող տարրի ընդհանրութեան մեջ հետևելով մարդկային կենցաղավարութեյան կլանող օրենքներին...

Պարսկաստանի հայերի փրկութիւնը նրա մեջն է կայանում, որ նրանք ամփոփվեն մի տեղ, և մի այնպիսի տեղ, որ ավելի մոտ լինի Հայաստանին։ Այս ասելով, մեր նպատակն այն չէ՝ գաղթականութիւն քարոզել դեպի Պարսկաստանի սահմաններից դուրս, և հայերին օտար երկրներում բախտ որոնելու ճանապարհ ցույց տալ։ Այլ կամենում ենք ասել, փոխանակ Սպահանից և այլ քաղաքներից գաղթելով Ղնգկաստան գնալ, ուր մեր ազգայինների կյանքը բոլորովին վտանգի մեջ է,— ավելի լավ և նպատակավոր կլիներ տեղափոխվել Ատրպատականի նահանգը, որը Հայաստանի նախկին գավառներից մեկն է և հայկական կենտրոնից շատ հեռու չէ։ Այստեղ դարձյալ հայերը պարսից կառավարութեյան իշխանութեյան ներքո կարող էին ամփոփ դիրք ընդունել, և բոլորը հավաքվե-

լով միասին ապահով կյանք վարել։ Եվ որովհետև պարսկահպատակ հայերի մեծ մասը Ատրպատականի մեջ են ջեռեզված, նրանց գումարումը կկազմեր մի ամբողջություն, մի կենդանի ազգային մարմին։

Եթե ոչ, ամեն մի ազգային ամբողջություն, երբ որ կտրատվում է նա, յուր մեջ ե՛չ միայն ուժ չունի, այլ դադարում է և կյանք ունենալուց...

Մեր այս նամակով հաղորդած վիճակագրական տեղեկությունները վերաբերում են միայն Պարսից Արաղիստանի մասին, մնում է Ատրպատականի նահանգը, որի մասին կգրենք հետո։

Քաղաքաբնակ հայերը ոլորվում են գյուղացիներից ո՛չ միայն իրենց պարապմունքով, այլ կենցաղավարության մյուս ձևերով։ Գյուղացիք առհասարակ երկրագործներ են, ժիր աշխատասեր բանվորներ են։ Երկրագործությունը հայերի մեջ այն աստիճան զարգացած է, որ Ֆաթհ-Ալի շահի առաջին վեզիրը՝ Հաջի Միրզա Աղասին, կամենալով Ատրպատկի պարսիկներին երկրագործության օրինակելի ձևեր ցույց տալ, հրավիրեց խոյեցի հայ գյուղացիներ, այլև հայ դարբիններ և հյուսներ, գութան, արոր, խոփ և բահ շինելու համար։

Երկրագործության գլխավոր ճյուղը նվիրված է ցորյանի և բամբակի մշակության. կտավհատը մշակվում է միայն նրա յուղալի հատիկներից յուղ դուրս բերելու համար, իսկ ձողերի թելանյութը բոլորովին թողվում է անպետք. դրանից օգուտ քաղել դեռ չեն սովորած գյուղացիք։ Կտավհատի յուղը, որ տեղացիք կոչում են ձէթ, գործ է ածվում որպես վառելիք լուսավորության համար, և որպես ուտելիք պաս օրվա համար, այլև նորա յուղով տարին մի քանի անգամ օծում են գոմեշները, նրանց վերայի ուտող միջատները սպանելու և չորքոտանիների կաշին փափկացնելու համար։ Կանեփի հատիկները նույնպես գործ է դրվում յուղ դուրս բերելու համար, իսկ ձողերի թելանյութից դեռ չեն սովորած նուրբ գործվածքներ պատրաստել, շինում են միայն պարաններ և կոշտ գործվածքներ ջուլհների (պարկերի) համար։ Յուղաբեր բերքերի կարգին պատկանում է և գեղչակը, որի յուղը լուսավորության համար է գործ ածվում, և շատ խնայողական է յուր դանդաղ վառվելու համար։ Տաք տեղերում պարարտ հողերի մեջ ցանում են նաև կճղիք, որի յուղը յուր ազնվությամբ պակաս չէ մնում ձիթապտղի յուղից։ Դա գործ է դրվում որպես կերակուր. նրան բանեցնում են նաև ներկարարները (ձիթհանք)։ Ջրավետ երկրներում շատ զար-

գացած է բրինձի մշակութիւնը։ Այդ երկրների կարգին է Ուրմիո գավառը, որտեղից դուրս է գալիս ահագին քանակութեամբ բրինձ։

Բամբակի մշակութիւնը, ի բաց առեալ սառուտ և սառն երկրներից, տափարակ դաշտերի վերա յուր ծաղկեալ դրութեանն է հասել։ Բամբակ ցանելու համար միայն հողը վարում են տղամարդիկ, իսկ մնացեալ բոլոր հոգատարութիւնն մնում է կանանց վերա. նրանք ցանում են, բուսնելուց հետո քաղհան են անում, հասնելուց հետո նրանք են հավաքում կողակները։ Հետո նրանք են մաքրում բամբակը հունդերից իրենց հնաձև շերշերներով։ Թեև փորձում են նորաձև մեքենաներ բամբակը մաքրելու համար, բայց փորձը ցույց տվեց, թեև նոր մեքենաներով գործը արագ է գնում, բայց բամբակի նուրբ թելանյութը կտրատվելով կորցնում է յուր լավ հատկութիւնը։ Բամբակի մեծ մասը վաճառահանվում է, իսկ մի մասից տեղացիք հագուստ են պատրաստում։ Կանայք մանում են թելի իրանց ճաիրեներով, իսկ երբ ձմեռը գալիս է և տղամարդը ազատ է յուր դաշտային պարապմունքներից, այն ժամանակ սարքում է յուր ջուլճակի պարզ գործարանը և բամբակից կտավներ է գործում։ Այս արհեստը գիտե ամեն մի գյուղացի։ Գյուղացու հագուստը ոտքից մինչև գլուխ իր պատրաստած կտավներից է։ Նա փոխում է նրանց գույնը կարմիր և կապույտ ներկերով. և դորա համար կան գյուղերում լեղակի ներկարարներ (բոյախանչի), նույնպես տորոնով կարմիր ներկողներ (շիլաչի)։ Պարսկաստանի կարմիր և կապույտ կտավները այնքան տոկուն գույն ունին, և այնքան լավ են պատրաստվում, որ մեծ քանակութեամբ տարվում է Թիֆլիս, և այստեղից տարածվում է Կովկասի կիսավայրենի ցեղերի և գյուղացիների մեջ։

Հացաբույսերի տեսակներից ցանվում է նաև գարի և կորյակ, վերջինը ցանում են ավելի այն տարիներում, երբ մորեխից վտանգ է սպառնում, որովհետև մորեխը չի ուտում կորյակի բույսը։

Ագարակային բերքերից ավելի մեծ քանակութեամբ մշակվում է սեխ, ձմերուկ և վարունգ. դոցա կարգումն է շաղգամը, կաղամբը, բողկը, ճակնդեղը, ստեպղին (գազար), որոնք գործ են դրվում որպես կերակուր, հում կամ եփած ձևով։ Գետնախնձորի մշակութիւնը մի քանի տեղերում դեռ նոր է սկսվել։

Ագարակային ընդեղենների տեսակից մշակվում են լոբի, ոսպ, բակլա և սիսեռ։ Սիսեռի բույսից ստացվում է մի տեսակ ՔՔու հեղուկ, որ կոչվում է շաքնամ։ Գյուղացիք կարծում են, թե դա մի տեսակ ՔՔու ցող է, որ առավոտները նստում է սիսեռի

բույսերի վրա, և այս պատճառով ամեն օր վաղ առավոտյան սպիտակ մաքուր կտավներ են սփռում բույսերի վրա, կտավը ծծում է ցողը, հետո, քամելով թափվում է կտավից ՔՔու հեղուկը։ Բայց իսկապես ՔՔվութիւնը սիսեռի դեռ չհասած պատյանների մեջն է, և երբ ցողը իջնում է նրանց վրա՝ պատյաններից ՔՔու համ է ստացվում, և այդ լինում է առավելապես այն երկրներում, ուր առավոտյան ցողը առատ է, որպես են—Ուրմիո լճակի շրջակա գավառները։ Սիսեռը բույսերից առնելով ՔՔվութիւնը վնասում է հատիկներին, որոնք ավելի չեն լցնում այլ, մնում են նիհար և փոքրիկ։ Սիսեռի ՔՔուն գործ է դրվում ըմպելիքների համար, երբեմն խառնում են ՔՔոյի մեջ—լիմոնի տեղ։

Այգեգործությունը նույնպես յուր պատվավոր տեղն է բռնում պարսկահայ մշակութիյան մեջ։ Այս ճյուղի մեջ ավելի զարգացած է խաղողի մշակութիյունը, մանավանդ այն մասերում, որ բարեխառն կլիմա ունին։ Դոցա կարգումն է դարձյալ Ուրմիո լճի շրջակա գավառները, մանավանդ Ուրմիան և Մարաղան։ Խաղողից գյուղացիք պատրաստում են այնքան գինի, որքան իրենց պետք է, իսկ մեծ մասը չորացնում են և չամիչ կամ սուլչա պատրաստում, ուրիշ երկիր վաճառահանելու համար։ Ատրպատականի քիշմիշը տարվում է մեծ մասամբ Ռուսաստան, Նիժնի վաճառատեղը և Երևան։ Թեև պարսիկները չեն գնում հայի պատրաստած քիշմիշը, բայց հայ վաճառականներին են ծախում։ Խաղողի **խաղուից** պատրաստում են նաև դոշաբ կամ բաքմազ, որ մի քաղցր, հալած մեղրի նման հյութ է, գործ է ածվում որպես կերակուր։

Մեղվաբուծությունը զարգացած է այն գյուղացիների մեջ միայն, որոնց գյուղերն գտնվում են լեռների ստորոտին կամ լեռնային բարձրավանդակի վրա։

Որպես երկրագործ ժողովուրդ, հայ գյուղացիք անասնապահությամբ շատ են պարապում. պահում են այնքան կովեր և գոմեշներ, որքան բավական է իրանց տնտեսական գործածութիյան համար—յուղ և մածուն ունենալու համար։ Ավելորդ անասուններ պահել չեն էլ կարող այն գյուղացիք, որոնք դաշտաբնակներ են, որովհետև անմշակ հողերը շատ փոքր են անասուններին արածելու համար։ Ոչխարներ չեն պահում, որովհետև խաշնարածութիյան հետ կապակից է չվական կյանքը, այսինքն՝ տարվա տաք եղանակներին ոչխարներ սարը տանել և այնտեղ դարմանել մինչև ձմեռ. իսկ երկրագործ և միևնույն ժամանակ հաստատաբնակ հային դժվար է հեռանալ հողային պարապմունքից։ Այն հայ գյուղացիք,

որոնք սարերի մոտ են, կամ լեռնային բարձրավանդակի վրա են բնակվում, պարապում են նաև խաշնարածութիւնով, որովհետև նոցա շրջապատող բնութիւնը ընծայում է ճոխ արոտամարգեր ոչխարներ պահելու համար։

Խաշնարածների մէջ զարգացած է նաև բուրդից գործվածներ պատրաստելու արհեստը, որ ըստ մեծի մասին կատարվում է կանանց ձեռքով։ Այս գործվածները թեև այնքան նուրբ և գեղեցիկ չեն, որպես պարսիկներինը, բայց հայտնի են իրենց ամրութիւնով և գույների տոկունութիւնով, որպիսին են զանազան տեսակի կարպետներ, թաղիքներ և ավելի բարակ գործվածներ, որոնցից գյուղացիք պատրաստում են վերարկուներ (աբա) և վարտիքներ (շալվար)։ Գորգեր շինել չեն կարողանում։ Շալեղեն գործվածների հետամնացութեան գլխավոր պատճառը այն է, որ հայոց ոչխարների բուրդը և մազը նույն լավ հատկութիւնը չունեն, որպես պարսիկներինը,— կլիմայական աննպաստ պայմանների պատճառով։

Ամեն գյուղերում գտնվում են այնպիսի արհեստավորներ, որ այն գյուղին են պետք. գյուղացիք ոմանն հյուսներ, որոնք շինում են երկրագործական գործիքներ՝ գութան, արոր, որպես և դոներ, լուսամուտներ և այլն։ Գյուղերում կան ռմնաղիրներ, որոնք գլխավորապես շինում են նույնպես երկրագործական անոթներ, որպիսին են՝ խոփ, բահ, շղթա, բրիչ և այլն։ Գյուղերում կան ջաղացպաններ, որ սրում են բթացած աղորիքը։ Գյուղերում կա սափրիչ, որ միևնույն ժամանակ շատ անգամ բժշկի պաշտոն է կատարում։ Ոսկերիչներ, որ ավելի կանանց են ծառայում, գալիս են քաղաքներից և ժամանակավորապես մնում են, դրանց կարգումն են և կլեյկագործներ։

* *
*

Քաղաքներում հայերը համեմատաբար փոքր թվով են բնակվում, և եթե գտնվում են քաղաքներում հայեր, նրանք կամ առանձին և մահմեդականների հետ խառն թաղեր են կազմում քաղաքի պարիսպների մեջ, կամ բնակվում են քաղաքից դուրս առանձին արվարձաններում։ Այդ այն պատճառով է, որ նախ մահմեդականները թույլ չեն տա քրիստոնյա հային իրենց մեջ բնակվելու և իրանց դրացիութեամբ նրանց պղծելու, եթե թույլ ևս տային, հայերին ձեռնտու չէ ցրվել մահմեդականների մեջ և նրանց թաղերում բնակութեան հաստատել, ուր ամեն րոպե կարող էր նրանց վտանգ սպասել։ Այս պատճառով սրանք աշխատել են միշտ ամ-

փոփ դիրք բռնել և միմյանց հետ սեղմված ապրել։ Ամբողջ Պարսկաստանում Թեհրանում միայն հայերը ցրված են զանազան թաղերում և այդ այն պատճառով, որ Պարսկաստանի մայրաքաղաքը ավելի ներողամիտ է դեպի ոչ-մահմեդականները։ Այստեղ հայերն ազատ են այն հալածանքներից, որ պատահում է ուրիշ քաղաքներում։

Քաղաքներում հայերը ըստ մեծի մասին պարապում են զանազան արհեստներով. այս արհեստների մեջ առաջին տեղն է բռնում ոսկերչությունը։ Պարսից հարեմները և կանանց ճոխ զարդարանքը, ոսկու, արծաթի և թանկագին քարերի շռայլաբար գործածությունը միշտ առատ գործ են տալիս հայ ոսկերիչին։ Թեև հրեաները նույնպես պարապում են այս արհեստով, բայց այս ազգի բնական խարդախությունը թույլ չէ տալիս հայերի հետ մրցության անել։ Հայերը գրաված լինելով պարսիկների երաշխավորությունը, ամենահին ժամանակներից շահի դռան զարգարբաշին (ոսկերչապետը) միշտ եղել է հայ, այժմ նույնպես հայ է։ Նորա համար պալատում առանձին գործարան կա, ուր նա աշխատում է միմիայն արքունիքի համար։ Այսպիսի արհեստավորները միշտ արժանացել են խանության աստիճանի և նոցա իրենց արհեստի արտոնությունը անցնում է որդուց-որդի։

Պարսից իշխանները շատերն ունեն տնային ոսկերիչ, որ ամբողջ տարի բանում են միմիայն այս և այն խանի կամ շահզադայի համար։ Պարսիկները առհասարակ սիրում են նայել փայլուն և խայտաճամուկ իրերի վրա։ Մտեք մի պարսիկ իշխանի կամ մինչև անգամ հասարակ հաջու հյուրանոցը, դուք կկարծեք թե դա հադվագյուտ իրեղենների մի խանութ է, ուր դասավորված են գույնըզգույն չինական անոթների, հայելիների, արծաթե աշտանակների և ջահերի մի մեծ հավաքածու։ Այստեղ դուք կտեսնեք քսան-երեսուն հատ արծաթե ղեյլաններ, մի քանի հատ արծաթե սամովար, նույն մետաղից շինված ափսեներ, թեյամաններ և շաքարամաններ, ոսկուց շինված սուրճի փոքրիկ ֆինջաններ (բաժակներ),— մի խոսքով ամբողջ սենյակը վառվում է ճենապակու և թանկագին մետաղների կարասիքով, և այդ բոլորի մեջ փոքր գործ չէ գտնում յուր համար հայ ոսկերիչը։

Պարսիկը, երբ ձեռքում փող ունի, գնում է այսպիսի բաներ, նրա համար մեծ պարծանք է եթե ասեն՝ «տասն հատ արծաթե սամովար ունի». այս պատճառավ նա յուր հարստությունը ի ցույց դուրս բերում։ Բայց երբ բախտը փոխվեցավ, նա սկսում է ծախել

գրավ դնել և սպառել... Բախտի հեղաշրջության հետ անդադար պարսկի տունը լցվում է և դատարկվում է. և ամեն պարագային օգուտ է քաղում հայ ոսկերիչը. նա գնում է եղածը չնչին գնով, կամ նորն է շինում։

Ոսկերչությունից հետո արհեստների մեջ երկրորդ տեղն է բռնում ներկությունը։ Ով որ փոքր ի շատե գաղափար ունի պարսիկների լուսամուտների մասին, կարող է հասկանալ, որ հյուսնությունը հայերի մեջ չափազանց զարգացած է, որ այնքան ճիշտ մաթեմատիկական համաչափությամբ դուրս են բերում իրանց ձեռագործը։ Պարսից ճաշակը այս արհեստի մեջ նույնպես պահպանել է յուր հատկանիշ առանձնությունը. նա չի սիրում, որ արեգակի ճառագայթները իրանց բնական գույներով ներս ցոլան յուր սենյակի մեջ, անպատճառ ցանկանում է նրանց գույն տալ, որպես նա ներկում է յուր մորուքը և մատները։ Պարսիկի այս պահանջը կատարում է հայ հյուսնը. նրա լուսամուտների փանջարաները կազմում է գույնզգույն ապակիների փոքրիկ բանվածներով, որոնք հորինում են զանազան նկարներ, և լույսը այս նկարների միջից անցնում է որպես գույնզգույն ծաղկի փունջերի միջից, և գեղեցիկ ֆանտաստիկական ճառագայթներ է արձակում սենյակի մեջ։

Հայ հյուսնը կամ ատաղձագործը պարապում է միայն նուրբ և բարակ գործվածքներով, իսկ փայտե կոշտ շինվածքները նա թողնում է մահմեդականներին։ Վերջին ժամանակները պարսիկների տներում մուտք գտան նաև եվրոպական կարասիք. այս նորաձևությունը հայերի համար մի նոր գործ բացավ։ Հայ արհեստավորը ավելի շուտ է սովորում այն, ինչ որ եվրոպական է. մինչդեռ պարսիկը չի ուզում փոխել ինչ որ սովորած է յուր պապերից. նույնը պատահեցավ և ղեռնակուրյան մեջ։ Ուր պարսիկները (ծառայողները) սկսան նեղ պանտալոն հագնել և իրանց հագուստները նմանեցնել եվրոպացիներին, հայ ղեռնակները միայն կարողացան նրանց ճաշակին հարմարեցնել մի նորաձև կիսա-եվրոպական և կիսա-պարսկական հագուստ։ Նվ այսօրվա օրս ամենալավ ղեռնակը, որ բանում է շահից սկսյալ մինչև ստոր աստիճանավորների համար՝ հայ է։ Ամեն քաղաքներում հայ ղեռնակների խանութները բազմանալու վրա են և ավելի արդյունավոր է լինում այդ արհեստը, քանի որ հագուստի նորաձևությունը տարածվում է։

Դարբնության մեջ քաղաքներում հայերը ձեռք են առել զինագործությունը։ Ներության զինվորական գործարանների (չաբախանաների) հմուտ արհեստավորները հայեր են։ Հայ զինագործները

աուղորաբար գնում են փոքրիկ քաղաքներ կամ մեծ գյուղեր և այնտեղ մնում են գործելու ժամանակավորապես։ Նրանք գնում են մինչև անգամ զանազան ազատաշրջիկ ցեղերի մեջ, որպիսիք են քուրդերը, քալիչները, գելաքները և այլք և այս ավազակների համար զենք են պատրաստում, նրանց քաբունի հետ այստեղ և այնտեղ քափառելով։ Ջարմանալի է տեսնել մի ազգ, որ գիտե զենք շինելու արհեստը, բայց նրա գործածելը չգիտե...։

Հայերից կաշեգործներ չկան, որպես և կոշկակարներ, քամբ շինողներ։ Կաշիե գործվածները այն տեսակ նյութերի կարգին են պատկանում, որ պարսիկ շաւիաթի համեմատ կարող են պղծություն ընդունել. այս պատճառով պարսիկը կաշվեղեն հայից չէ գնում. թեև Եվրոպայից բերած կոշիկները պարսիկը առնում և հագնում է, բայց այս դեպքում նա չի ուզում մտաբերել, թե նրա պատրաստողը ինչ ազգից է...։ Այնուամենայնիվ հայը կարող է կոշկակարի խանութ ունենալ, երբ նա բաց է անում հայոց քաղում և միայն հայերի համար է բանում։ Այս առանձնական արհեստավորների կարգիցն են սափրիչները. պարսիկը իր մազերը հային կտրել չէ տալիս։ Հայերից չկան քաղաքներում և ներկարարներ. պարսիկը յուր սենյակի պատերը հային ներկել չէ տալիս, եթե սա մի այդպիսի բան աներ, այն ժամանակ չէր կարող աղոթել այն սենյակում, որի պատերը պղծված են հայի ձեռքով։ Այս արհեստը, նույնպես և նկարչությունը շատ առաջ է գնացած պարսիկների մեջ։ Ոչ ոք այնպես գեղեցիկ չէ կարող նկարել սենյակի պատերը, որպես պարսիկը։ Այստեղ մարդ տեսնում է պարսիկին իր երևակայության ճոխ ֆանտազիայով։ Նրա պատերի վրա նկարված է յուր սիրելի ջեննաքը յուր հուրիներով և փերիներով, մշտականաչ արմավենիներ, սիրամարգներ, վարդի թփեր յուր գույնզգույն տոխակներով և քուքաներով, կիսամերկ կանայք կամ ածում են կամ պար են գալիս. մի խոսքով ամեն հրաշալիք, որով միշտ հրապուրվում է արևելքը...։

Անձնատուր եղած երևակայական ցնորամտության, պարսիկ պարզությունը ուշադրություն չէ դարձնում իսկականի վրա. այս պատճառով նրանց նկարների մեջ մարդ երբեք չէ տեսնում բնությունը։ Այսպես է և պարսիկ բանաստեղծությունը, նրա մեջ ամենևին չկան բնության նկարագիրներ, նրա մեջ դուրս բերված անձնավորություններն անգամ մի տեսակ հրեշտակներ են, որ ապրում են բանաստեղծի երևակայության մեջ։

Քաղաքաբնակ հայերի գլխավոր պարապմունքներից մեկն է

գինեգործությունը: Պարսիկներին որպես կրոնով արգելված է ոգելից ըմպելիքների գործածությունը, այնպես էլ արգելված է նոցա պատրաստելը: Այս պատճառով այդ արհեստը մնացել է հայերի սեփականությունը: Ամեն քաղաքներում հայ հասարակության մեծ մասը պարապում է գինեվաճառությամբ. թեև նրանց թույլ տված չէ ազատ և բացարձակ կերպով գինետներ բաց անել, բայց վաճառում են գաղտնի կերպով իրանց տներում:

Մինչև անգամ երկրի քրիստոնեաբնակ մասերում գինետները և գինեվաճառությունը կապված են զանազան անբարոյական գործողությունների հետ: Պարսիկ խմողը խմում է հարբելու չափ և այնուհետև գազան է դառնում...:

Պարսկաստանում այս կերպով արգելված ըմպելիքի վերաբերմամբ զեղծումներ գործողները լինում են ըստ մեծի մասին ժողովրդի անբարոյական և սրիկա դասը,— ուրեմն հասկանալի է, թե ինչ տեսակ մարդիկ կլինեն հայ գինեվաճառի հաճախորդները: Պարսկաստանում պատահած սպանությունների, գողությունների մեծ մասը սկիզբ են առնում գինետներից: Ամենահանգիստ լոքին (սրիկան), որ գինետուն մտնելիս գառնուկի պես հեզ էր, դուրս է գալիս այնտեղից մերկացած դաշույնը ձեռին...: Այս պատճառավ կառավարությունը շատ անգամ կամեցել է արգելել հայերի մի այսպիսի պարապմունքը, բայց հնար չի եղել, հայերը միշտ իրանց արածը արել են, միշտ պատճառ են գտել ասելու. «Թույլ տվեք մեզ ունենալոլ մսավաճառի, մրգավաճառի, խոհարարի և հացթուխի խանութներ, այն ժամանակ մենք կթողնենք գինեվաճառությունը. մի բանով պետք է մեզ ապրելց:

Պետք է ասել, որ հայ ժողովրդի մնացյալ մասը ամենևին գոհ չէ գինեվաճառներից, որովհետև քիչ չէ պատահում, որ նրանց վնասը կրում են իրանք կամ մարդիկ են սպանվում, կամ գողություններ են լինում, այլ ժամանակ մի ամբողջ անմեղ հասարակություն պատասխանատու է լինում գործածած չարիքին:

Պարսկաստանում այժմ խմողների թիվը ավելի շատ է, քան թե քրիստոնյաների մեջ: Արևելցիք սիրում են իրենց ուղեղը գրգռել ոգելից բաներով, այս պատճառավ հնարեցին ափիոն, բանգը և տեսակ-տեսակ մաղուճներ. իսկ այդ բոլորի տեղը այժմ բռնում է առաղը (օղին): Պարսիկը սիրում է խմել թունդ ըմպելի, որ շուտ արբենա: Խմիչքների գործածությունը մտել է մինչև անգամ և հարեմներում. պարսիկ կինը ավելի հրապուրիչ է դառնում, երբ նա արբած է...: Հայ գինեվաճառները սովորել են պատրաստել նրանց

համար քաղցր լիմեոնններ. բացի դրանից նրանք սովորել են պատրաստել ուրիշ տեսակ եվրոպական ըմպելիներ. այժմ Թավրիզի մաստիկան յուր հատկությամբ պակաս չէ եվրոպականից։ Պարսկաստանում խնձորից պատրաստված գինիները հիանալի են։

Պարսիկները իրանք էլ սովորել են գինի շինել. Շիրազի գինին առաջին տեղը կարող է բռնել բոլոր եվրոպական գինիների մեջ։ Նա չի վաճառահանվում, միայն մասնավոր մարդիկ պատրաստել են տալիս և պարսիկ մեծամեծներին ընծա են ուղարկում։

Խոսելով արհեստների վերաբերմամբ, չէ կարելի չհիշել և այն. որ Պարսկաստանում տակավին պահպանվել է արհեստավորների որոշ-որոշ դասեր կազմելու սովորությունը, որի նմանը դեռևս կա Թիֆլիսում ճամբար անունով, այլև Անդրկովկասի ուրիշ քաղաքներում պարսիկներից մնացած։ Բայց հայերը ամեն տեղ չեն մտնում պարսից համքարների մեջ. նրանք միշտ առանձին դասեր են կազմում և ունեն իրանց գլխավորը իրանց ազգից։ Այդ գլխավորները, օրինակ, դերձակապետը (խայաթ-բաշին). ոսկերչապետը (զարգարաբաշին), կառավարության առջև իրանց դասի ներկայացուցիչն են, և նշանակվում են տեղական կառավարությունից։ Դրանց ձեռքով է հավաքվում արհեստավորներից տուրքը, և դրանք են ներկայացնում կառավարությունը։ Արհեստավորների գլխավորը պահպանում է և միաբանությունն յուր դասի մեջ, դատելով և վճռելով արհեստավորների մեջ պատահած վեճերը։

Հայերի գյուղական կառավարությունը։— Հայ գյուղերը լինեն դրանք արքունական թե մասնավոր կալվածատերերի սեփականություն՝ ունեն մի ռայիս (տանուտեր), որին ընտրում են իրանք գյուղացիք։ Տանուտերը ունի մի օգնական, որ կոչվում է զգիր. այս վերջինը գյուղի սատանան է, ամեն ծակը կմտնե, ամեն բան կըլրտնես և ամենի մասին զեկուցում կտա տանուտերին։ Տանուտերը գյուղի ծերակուտի գիտակցությամբ որոշում և բաժանում է հարկերը գյուղացոց վրա, հավաքում է տուրքը, ինքը ստացական է տալիս և ներկայացնում է ուր որ հարկն է։ Տանուտերը է միևնույն ժամանակ գյուղի հաշտարար դատավորը. նա վճռում է գյուղացոց մեջ պատահած վեճերը և պատժում է ոչ ծանր հանցավորներին. իսկ մեծ հանցանքները դատում է կամ գյուղի տերը կամ տեղային կառավարությունը։ Թեև տանուտերը լավ մարդ է՝ գյուղը միշտ շահում է նրա գործունեությունից և անկարգություններ շատ սակավ են պատահում։ Բայց վատ տանուտերը մի վնասակար գործիք է կալվածատիրոջ ձեռքում, որ գոհում է գյուղացոց բարիքը կալվա-

ծատիրոջ շահերին։ Թեև գյուղացիք իրանք են ընտրում տանուտեր, բայց վատ տանուտերին միշտ դժվարանում են փոխել, որովհետև նա վայելում է պաշտպանություն գյուղատիրոջ կողմից, որի շահերին միշտ կուրությամբ ծառայել է։ Տանուտերը իր պաշտոնից հանվելուց հետո—հասարակ գյուղացի է դառնում։

Գյուղերը դատարան չունեն, այսինքն՝ մի հատկացյալ տեղ, ուր հավաքվեին և խորհրդածեին։ Խորհրդածությունները կատարվում են շատ անգամ հրապարակի վրա կամ այս ու այն աղայի դռան առջև։ Շատ անգամ տանուտերը փողոցում ման գալու ժամանակ, կամ գինետան մեջ խմելու ժամանակ և կամ մի տան մեջ հյուր եղած ժամանակ վճիռներ է տալիս։

Քսան կամ երեսուն տարի առաջ դեռ կային մելիքներ, նրանք ժողովրդից չէին ընտրվում, այլ ժառանգական ազնվականներ էին, որոնց տոհմային հնությունը ուներ մի քանի հարյուր տարվա պատմություն։ Մելիքը իշխում էր մի կամ մի քանի գյուղերի վրա, շատ անգամ մի ամբողջ մասի ազգաբնակության վրա։ Նրա իշխանությունը ընդարձակ էր և միապետական։ Մելիքները ունեն ֆարմաններ, շնորհված պարսից շահերից և ոռճիկ էին ստանում կառավարությունից։ Ժողովուրդը հպատակվում էր մելիքին, որպես յուր նահապետին։ Նա ուներ յուր ձեռքի տակ զինված մարդիք, որոնցով կռիվներ էր հայտնում թշնամիներին, արշավանքներ էր գործում, գերիներ և թալաններ բերում։

Մելիքները այն ժամանակներում փայլում էին իրանց իշխանությամբ, երբ ավատական խանությունները Պարսկաստանում դեռ իրանց բոնակալ միապետությունն էին վայելում։ Իսկ Աղա-Մամուդ-խանից սկսյալ, այժմյան տիրող ղաջարյան ցեղի շահերի ժամանակ՝ ավատականությունը սկսեց փոքր առ փոքր քուլանալ, և վերջապես կորցնել յուր նշանակությունը, նրա հետ էլ մելիքները ընկան։

Մելիքների անկման մի երկրորդ պատճառն էլ Պարսկաստանի հայերի գաղթականությունն էր, երբ 1827 թվին քառասուն հազար հայեր անցան դեպի Նախիջևանի և Արարատի կողմերը։ Պարսկաստանում մնացող հայերը թվով քիչանալով—տկարացան և մելիքներն էլ զրկվեցան իրանց ուժերից։ Մինչև գաղթականությունը հոյ քաղաքի զարաբխանան (դրամ կտրելու տունը) և Սալմաստ գավառի մաքսատները—հայերի ձեռքումն էին[1]։

[1] Պարսկաստանում մինչև այսօր շատ քաղաքներում դրամ կտրում են մասնավոր մարդիկ, որ կապալով վարձում են դրամ կտրելու իրավունքը, հա-

Մելիքների մեջ իրանց գերիշխանությամբ առաջին տեղը բռնում էին Ղարաբաղի մելիքները, որոնք օգտվելով երկրի լեռնային և անառապատ բնությունից, շատ անգամ անկախ դրություն են պահպանել։

Ղարադաղը (Հին Փայտակարանը) գտնվում է Ղարաբաղի հանդեպ. այս հայկական երկու գավառները բաժանվում են Երասխ գետով, և մինչև անգամ հայոց թագավորության օրով երբեմն անկախ իշխանություններ են կազմել։

Ղարադաղու մելիքները մեր դարու սկզբներում մտածում էին միանալ Ղարաբաղի մելիքների հետ և իրանցից թոթափել պարսկական լուծը. բայց հայոց անմիաբանությունը չթողեց գործը հաջողի։

Ղարադաղի մելիք-ը-րը ընկան այն ժամանակ, երբ այդ երկիրը մտավ թաթարների մի բարբարոս ցեղ, որ կոչվում է շալաբյանցիք։ Հայոց գյուղերը անցան նրանց խանների ձեռքը, և հայերը փոքր առ փոքր հպատակեցան նրանց։ Շալաբյանցոց հարստահարությունները վերջին ժամանակներում այն աստիճան անգթության հասան, որ Ղարադաղի բնակիչներից շատերը գաղթեցին դեպի Ղարաբաղ, իսկ շատերը բնակություն հաստատեցին Թավրեզ քաղաքում։

վաքում են ուրիշ քաղաքներում կտրված դրամները և իրանք նորից կտրում։ Նրանք շահում են դրամների կշռի և ոսկու ու արծաթի հատկության մեջ. այսինքն՝ առաջվանից փոքր-ինչ թեթև են կտրում և ոսկու կամ արծաթի մեջ ուրիշ մետաղ են խառնում։ Այսպիսով դրամները հետզհետե կորցնում են իրանց արժեքը, թեև միևնույն անուններն են կրում։ Այդ անդադար փոփոխությունը, որ ծառայում է մասնավոր անձանց շահերին միայն, մեծ դժվարություններ է հարուցանում վաճառականության մեջ։ Վաճառականը շատ անգամ այսօր մեկին տված մաքուր արծաթ ունեցող ռդիբդրաճի (այս բառը պարզ չի կարդացվում ձեռագրի մեջ։ Ծան. Աննա Իաֆֆու) տեղ, քանի օրից հետո ստիպված է ընդունել նույն փողը ավելի թեթև կշռով և ավելի անմաքուր արծաթով, մյուս կողմից, մի գավառում կտրված դրամը մյուս գավառում նույն արժեքը չունի, և կամ ամենևին չի ընդունվում։ Այս դժվարությունները բառնալու մտքով վաղուց է, որ Բարձր. դուռը Թեհրան հրավիրեց նվիրապետական դրամահատներ, կամենալով այնտեղ հիմնել ամբողջ Պարսկաստանի համար մի կենտրոնական դրամատուն և դրամների մեջ միակերպություն պահպանել։

[1] Տրդատի քաջ որդի Սանատրուկը Ղարադաղում (Փայտակարանում) կամեցավ առանձին իշխանություն կազմել, որ նոսրով Ը-ի ժամանակ չնչվեցավ. Փայտակարանը մինչև անգամ առանձին կաթողիկոսություն կազմեց դեռ Տրդատի կենդանության ժամանակ, Վրթանեսի օրերով, երբ Գրիգոր-աղա կուշտյալ նոցա հայրապետ ձեռնադրվեցավ։

Ղարադաղը հայտնի է յուր հանքերի հարստությամբ. այնտեղի պղնձի և երկաթի հանքերը, կարելի է ասել, իրանց նմանը շատ քիչ ունեն ամբողջ երկրագնդի վրա։ Մինչև այսօր Ղարադաղի հայերը բովագործում են երկաթի հանքերը. նրանց մեծ մասը դարբիններ են։ Շինում են պայտեր և տանելով զանազան քաղաքներ վաճառում են. դրանով են ապրում շատերը։

Ղարադաղի այն կողմերում, ուր իշնում է դեպի երասխի ափերը, որ տեղացիք կոչում են իրանց բարբառով Արազքար, այսինքն՝ Արազի կամ երասխի ափեր,— ավելի ցած դիրք ունենալով, պահպանում է տաք և խոնավ կլիմա։ Այս տեղերում հին ժամանակներից սկսած, պահպանվել է թթենու մշակությունը և շերամապահությունը. իսկ այժմ այդ արհեստը ավելի զարգացած է տեղացի հայերի մեջ։ Ղարադաղի մետաքսը յուր հատկությամբ միշտ բարձր տեղ է բռնում վաճառականության մեջ։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Նախ քան խոսելը Պարսկաստանի ներկա առևտրական գործունեության մասին, ավելորդ չեմ համարում մի համառոտակի հայացք ձգել նրա այն ժամանակվա դրության վրա, որ երեք քառորդ դարով միայն հեռու է մեզանից։ Այն ժամանակվա Պարսկաստանի ամեն մի փոքրիկ գավառը, ամեն մի նահանգը, ձևացնում էին միմյանցից անկախ առանձին ավատական իշխանություններ, որոնք պատկանում էին զանազան խաներին, բեգերին և այլ կալվածատեր իշխաններին։ Այդ փոքրիկ տերությունները միշտ թշնամական հարաբերությունների մեջ լինելով, կռիվը, արյունահեղությունը, կայքի հափշտակությունը—անդադար և սովորական պատահարներ էին։ Հայտնի բան է, մի այսպիսի ժամանակ, երբ բնակիչները թաքցնում էին իրանց կայքը, և մտածում էին միայն իրենց գլուխը պահպանելու մասին թշնամու սրից, անկարելի էր, և չէր կարող զարգանալ վաճառականությունը։

Երբ Աղա-Մամադ-խան ներքինին 1779 թվին տիրելով պարսիկ գահին, միևնույն ժամանակ նվաճեց ավատական իշխաններին իր միապետության զորության ներքո, նախնի սովորությունները փոքր-ինչ խաղաղվեցան, և նրա հաջորդների՝ Մամադ-շահի ու

Ֆեթ-Ալի-շահի օրերով, ժողովուրդը կարողացավ անվախ ցուցաբերել յուր կայքը, և Շահ-Աբասի ժամանակ ծաղկած[1] և նրանից հետո թառամած վաճառականությունը մի փոքր շունչ առավ, կենդանացավ։

Բայց տակավին նա ուներ խիստ նեղ շրջան, որովհետև Պարսկաստանի վաճառականությունը—ներքին էր, արտասահմանի հետ ոչ մի հարաբերություն չուներ։ Դրա պատճառը պետք է որոնել գլխավորապես այն բանի մեջ, որ մահմեդական պարսկին մեղք էր համարվում ոտք դուրս դնել օտար հողի վրա, որտեղ նա ստիպված կլիներ պղծել՝ գյավուրների հետ հարաբերություն ունենալով, և շարիաթով արգելված նոցա կերակուրները ուտելով։ Այդ համարձակ քայլը արեցին բնիկ հայերը։ Եվրոպական ապրանքը առաջին անգամ նոքա մտցրին Պարսկաստան և Պարսկաստանի մթերքը առաջին անգամ նոքա արտածեցին արտասահման։ Նոցա օրինակը հրապուրեց Եվրոպայի բախտախնդիրներին, երբ նոքա հասկացան, թե հայերը մի փոքրիկ գրչահատ դանակը մինչև քսան ռուբլի էին վաճառում միամիտ պարսիկներին և մի ձեռք անգլիական ֆենջան-նալբաֆիով և մի քանի արշին լեյպցիկի մահուդով գրավում էին գեղասեր խանի գյուղերը։

Այժմյան պարսից արքայի նասր-էդդին շահի թագավորության առաջին տարիներում հայտնվեցան Թավրիզ քաղաքում և մի քանի մեծ և հաստատ եվրոպական տներ։ Այս երևույթը ստիպեց հայերին տեղի տալ եվրոպացիներին առևտրական ասպարեզը, որով-

---

[1] Շահ-Աբաս մեծը տիրելով Անդրկովկասին, տարավ իր հետ վրացիներ և հայեր մեծ թվով։ Հայերին նա բնակեցրեց Սպահան քաղաքի մոտ մի առանձին թաղում, որ կոչեց նոցա հայրենի բնակության տեղի անունով—Ջուլֆա, և շնորհեց նոցա շատ արտոնություններ և ազատություններ, և վաճառականական գործունեության մեջ ընդունակ հայերը, խիստ փոքր ժամանակում ծաղկեցրին տեղային առևտուրը խիստ զորեղ հարաբերություններ ունենալով Հնդկաստանի հետ։ Մի սարսափելի սովի պատճառով նոցա մեծ մասը գաղթեց դեպի Հնդկաստան, և մեծ մասամբ բնակություն հաստատեց Գոմբեյում, Կալկաթայում և Ջավա կղզում։ Այնտեղ ևս հայերը շուտով տիրեցին տեղային վաճառականության ասպարեզը, մինչև անգլիացոց հայտնվելը, որոնց բռնության հետ ազատ մրցություն չկարողացան անել։ Հայերը մի փոքր բնակեն։ Իսկ Սպահանում և նրա շրջակայքում մնացորդ հայերը հետզհետե ենթարկվելով Շահ-Աբասի հաջորդների բռնակալությանցը՝ ազգատացան, միակ բանը, որ կարողացան պահպանել Խլամի հալածանքներից — կրոնն էր, լեզուն, և ամուր եկեղեցական կապը Ս. էջմիածնի հետ։ Բայց վրացիք փոխեցին իրանց կրոնքը և միացան պարսիկների հետ։ Նոցա լեզվի հազիվ նշմարվող հետքերը և մի քանի սովորություններ միայն հիշեցնում են նոցա ծագումը։

հետև նոքա մեծ կապիտալիստներ չլինելով, և ապրանքը երկրորդ և երրորդ ձևոքից առնելով,— չէին կարող ազատ մրցում անել նվրոպայի վաճառականական տների հետ, որոնք կազմակերպված էին մեծ ընկերություններից, և ապրանքները հանում էին ուղղակի աղբյուրներից։ Այդ առևտրական տներից շատերը մինչև այսօր տևում են Թավրեզում։ Նշանավոր են հետևյալ ընկերությունները՝ Բալլի, Սուվաջ-օղլի, և Հանհարթու ցիկլեր՝ զվիցերական տունը։

Թաբրեզը Պարսկաստանի գլխավոր վաճառականական կենտրոնն է, ուր մտնում են մասամբ արտասահմանից ներմուծած ապրանքները, և որտեղ հավաքվելով դուրս են գալիս դեպի արտասահման՝ Պարսկաստանի ապրանքների մեծ մասը։ Այստեղ պիտի խոսեմ գլխավորապես Թաբրիզ քաղաքի վաճառականության մասին։

Վաճառականների ապրանքը զետեղելու համար ծառայում են գլխավորապես քարվանսարաները, որոնց թիվը Թաբրիզում հասնում է մի քանի հարյուրի։ Երկաթուղիներ չկան Պարսկաստանում, ճանապարհների անկարգության պատճառով ուղևորվող ապրանքը բարձում են ձիերի, ջորիների, եզների, ավանակների և ուղտերի վրա։ Վերջինը բանում է տարվա տաք և բարեխառն եղանակներում, իսկ առաջինները՝ միշտ։ Քարավանները կազմվում են միատեսակ անասուններից, որոնք պատկանում են կամ մի մարդու, և կամ մի ընկերության, որ ունի յուր ներկայացուցիչը թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում։

Քարավան-բաշին, այսինքն քարավանի գլխավորը միշտ պատասխանատու է կորած կամ պակասած ապրանքին, բացի թալաններից և բնության վտանգներից։ Պետք է ասել, որ քարավանները վայելում են մեծ հավատք վաճառականների կողմից իրենց սովորական հավատարմությամբ, թեև նոքա ոչինչ երաշխավորություն չունեն այդ մասին։

Առևտուրը Թաբրիզում կատարվում է դալալների միջնորդությամբ, այդ պատճառով ամեն մի աչքի ընկնող առևտրական տուն ունի յուր սեփական դալալը, որ ստանում է մի հայտնի տոկոս Դալալի հաշվեգիրը առնողի և ծախողի մեջ համարվում է որպես անհերքելի մի ապացույց։

Դրամական շրջաբերությունները կատարվում են սարաֆների միջնորդությամբ։ Սարաֆները, որոնց կարելի է համարել փոք-

---

[1] Տեքստում «ցուրտ», Ծանոթ. կազմողների։

րիկ բանկիրներ, հաճախ ընդունում են վաճառականներից գումարներ, և հարկավոր ժամանակ փոխ են տալիս հայտնի տոկոսներով։

Սարաֆությունը կառավարությունից արտոնություն ստացած մի առանձին հիմնարկություն չէ. ամեն մի մարդ կարող է լինել սարաֆ, երբ կամ փող ունի, կամ վարկ։ Այս պատճառով սարաֆը չունենալով բարձրագույն հրամանով հաստատված մի ծրագիր, կամ անակնկալ կերպով սնանկանում է և կամ, եթե վարում է յուր գործը նա անում է շատ կամայականություններ—մի օրվա մեջ քանիցս անգամ կուրսի բարձրանալը և կամ իջնելը կախված է սարաֆների շահասիրությունից։

Վաճառականների մեջ ծագած վեճերը վճռում են թաջիրբաշիների (վաճառականապետների) ձեռքով։ Ամեն մի տերության հպատակները կամ ամեն մի ազգին և կրոնքին պատկանող վաճառականները ունեն իրենց թաջիրբաշիները։ Իսկ եթե վեճը ծագում է զանազան տարբեր կողմերի մեջ, այն ժամանակ քննվում է քաղաքի Նաիբ-ուլ-Մալաբայի դատարանում, որտեղ մասնակցում են նվիրապական կոնսուլները իրենց հպատակների իրավունքները պաշտպանելու համար։

Վեճերը վճռվում են ըստ մեծի մասին իջլասներով (տրետեյսկի սուդով,— արբիտրաժ, միջնորդ դատարանով)։

Պարսիկ բնածին հակումը դեպի շռայլությունը և չքեղությունը շատ կարճ ժամանակում մի սաստիկ զարկ տվեց եվրոպական արդյունաբերության տարածվելուն նոցա երկրում։ Սպահանի զարբաբեները և թավիշները, Ղազբին զանգանի մետաքսեղեն գործվածները, Բլուջերդի նահանգի և Խյուլփեքյանի բամբակեղենի գործվածները և չիթերը խիստ կոշտ և կոպիտ երևացին եվրոպական գործվածների նրբության և գեղեցկության հանդեպ։ Նրանք ընկան և մնացին ժողովրդի ստորին և աղքատ դասի գործածության առարկա։

Միակ մեքենքը, որ մնաց անհաղթելի եվրոպացիներից, էին խալիները, որ փառավոր կերպով արվեստագործում է Խորասանը և շալերը։ Պարսկաստանը ապրանք է ստանում հետևյալ եվրոպական գլխավոր քաղաքներից. Ֆրանսիայում՝ Մարսել և Փարիզ, Անգլիայում՝ Լոնդրա և Մանչեստր, Գերմանիայում՝ Լեյպցիգ, Ավստրիայում՝ Վիեննա, Ռուսաստանում՝ Նիժնի-Նովգորոդ յարմարկան (տրեխվաճառքը), Տաճկաստանում՝ Պոլիս, աստեղից գնում են միայն երկրորդական դասի վաճառականները։

լոնդրայից բերում են ըստ մեծի մասին մահուդեղեն, չինեղեն և բյուրեղյա ամաններ, զենքեր, մանր գործածական իրեր։ Մանչեստրը տալիս է մեծ քանակությամբ բամբակեղեն ապրանք, որպիսի են ամուր գործված և գույնը պահպանող չիթեր և կտավներ։ Մարսելը և Փարիզը տալիս են չիթեղենի ավելի նուրբ և գեղեցիկ տեսակներ, թեև նոքա երկար չեն դիմանում և այլ զալանտերեական ապրանքներ և մետաքսեղեն զարքաբեղեն գեղեցիկ գործվածներ և բրդեղեն ապրանք։ Լեյպցիգից բերում են մահուդի զանազան տեսակներ։ Վիեննան տալիս է գեղեցիկ ֆարֆորի (ճենապակու) ամաններ։ Նիժնիի յարմարկայից բերում են նույնպես ֆարֆորի ամաններ, որոնք արհեստագործության ստորության պատճառով գործ են ածվում միջին կարգի ժողովրդի մեջ։ Այստեղից ստացվում են նաև սամովարներ և երկաթ։

Պարսկաստանում գտնվող եվրոպացի վաճառականները այնքան հմուտ են իրենց գործին, և այնքան լավ հասկացել են ժողովրդի ճաշակը, որ իրենց ներմուծելի ապրանքները պատվիրում են եվրոպական գործարաններին արհեստագործելու պարսից պիտույքների և կենցաղի համաձայն։

Ամեն մի առևտրական տուն ունի յուր առանձին նկարիչը, որ նախշերի օրինակներով պատրաստում են եվրոպական գործարաններում ապրանքները և նրանց ձևերը, որը այնպես շուտ-շուտ փոխվում են և այնքան սրընթաց ընթացք են տալիս առևտրական առաջադիմության, որպես մոդայի փոփոխվելը Եվրոպայում։ Ահա այդ պատճառավ եվրոպական ապրանքը այժմ դարձել է հասարակաց գործածության նյութ Պարսկաստանում։

Միակ տերությունը, որ ետ է մնացել այդ ասպարեզում, որ դեռևս չունի ոչ մի վաճառականական տուն Պարսկաստանում — Ռուսաստանն է, որի ապրանքները իրենց ստոր հատկության և պարսից ճաշակին անհամապատասխան լինելու պատճառով երբեք չեն կարող մրցել եվրոպական մյուս տերությունների վաճառքների հետ։ Եվ եթե Ռուսաստանում արտասահմանյան ապրանքները փոքր ի շատե տեղի են տալիս տեղային արդյունաբերության, գլխավոր պատճառն այն է, որ նրանց գները թանկանում են ծանր մաքսերով և դառնում են ամբոխի ստոր դասի համար անմատչելի. և դրանով ռուսաց ապրանքը օգուտ է քաղում, յուր էժանությամբ լրացնելու չունևորների պահանջը։ Իսկ Պարսկաստանում այդպես չէ։ Մաքսը այնտեղ նախ շատ թեթև է, երկրորդ մաքս վճարվում է ոչ թե մթերքի գնահատության չափով, այլ հակերի քանակության

համարքով։ Թե՛ կապված հակը լինի թանկագին մետաքսեղենից և թե՛ հասարակ կտավից միևնույն մաքսն է վճարվում։ Հակերը, որպես են Եվրոպայում կապված երկաթե կաւզերով, այնպես էլ մըտնում են վաճառականի ամբարը, առանց բացվելու, մաքսատան կնիքը չի դիպչում նրանց։ Ուրեմն Պարսկաստանի մեջ Ռուսաստանի ապրանքը ո՞րպես կարող էր մրցություն անել մյուս եվրոպական ապրանքների հետ, որոնք անհամեմատ ավելի էժանագին են և ավելի լավ հատկություններով։

Ոչ մի երկրում հագուստը այնպես շուտ չէ մաշվում և այնպես շուտ չի փոխվում, որպես Պարսկաստանում։ Թողյալ կանայքը, տղամարդիկ իսկ դեռևս չեն վարժված հագնել ամուր և դիմացկուն բրդեղեն գործվածներ։

Պարսկի հագուստը մեծ մասամբ բաղկացած է բարակ մետաքսեղեն նյութերից, չքեղեն և բրդեղեն գործվածները մեծ մասամբ ստոր կարգի ժողովրդի հագուստն է կազմում։

Պարսիկ կինը թեև դրսում ման է գալիս փաթաթված յուր շարշավի (սփածանելիի) մեջ, թեև նրա զարդարանքը ծածկված է այդ տղամարդերին ոխերիմ սավանի տակ, բայց նրա ամուսինը սիրում է հարեմի պատերի մեջ տեսնելու յուր կինը ամենաշքեղ կերպով զարդարված։ Նրա հագուստը այնքան խայտաճամուկ և վառվռուն է, որպես արևելքի որդու վառ երևակայական բնավորությունը։

Ղորանով արգելված ոգելից ըմպելիքների չգործածելը սաստիկ զարկ տվեց թեյի և շաքարի տարածվելուն Պարսկաստանի մեջ։ Նոքա եղան ընդհանուր գործածություն նյութ, ոչ իբրև հասարակ ըմպելիներ ընտանիքի կենցաղավարության մեջ, այլ որպես հյուրասիրության գլխավոր առարկա։ Պարսիկը պատվում է հյուրին շատ անգամ մինչև տասն բաժակ խիստ թունդ և շաքարով թանձրացրած թեյով։

Թեյը և շաքարը ստացվում են գլխավորապես Մարսելից, Լոնդրայից և Հոլանդիայից։

Հաշված է, որ բոլոր ապրանքները և վաճառականական մթերքը, որ դուրս է գնում Պարսկաստանից, հազիվ է հավասարակշռություն պահում միայն թեյի և շաքարի հետ։ Մնացորդ ապրանքները, որ ներս են մտնում արտասահմանից, բոլորը փող են դուրս տանում։ Ի նկատի առնելով այդ սարսափելի երևույթը, շատ հավանական է նախագուշակել այդ երկրի խիստ մոտավոր աղքատությունը և նրա թշվառ ապագան։

Պարսկաստանից արտասահման վաճառահանված գլխավոր մթերքը հետևյալներն են։— Հում բերքեր. աբրշում (մետաքս) ստացվում է Ռաշտից, Գիլանից և Մազանդարանից, կազմում է Պարսկաստանի գլխավոր հարստությունը և արտահանվում է մեծ մասամբ դեպի Ֆրանսիա։ Բամբակ, նույնպես Մազանդարանից, Քաշանից և Ատրպատականի զանազան մասերից։ Բուրդ և ոչխարի ու տավարի, գոմեշի կաշիներ, և մազոտ գազանների մորթիք,— ստացվում են ամեն տեղ, գլխավորապես խաշնարած ցեղերի մեջ, որպես են քուրդերը, շազազիները, դիլաքները և այլք, որոնք բնակվում են Տաճկաստանի սահմանակից երկրներում և Կասպից ծովի հարավային ափերի մոտ գտնված գավառներում։

Ջոր մրգեղենի ամենաազնիվ տեսակները նույնպես ընդարձակ վաճառականության նյութ են կազմում, որոնք տարվում են Աստրախանից մեծ քանակությամբ դեպի Նիժնի։ Խաղողի տեսակներից ֆիշմիշ, սաբղա, որոնք գլխավորապես բերքերն են Ուրմիո, Մարաղայի և Ուրմիո լճակը շրջապատող երկրների։ Նշենու բոլոր տեսակները, որպես են փուստա, բադամ, փալշը–բադամ և հասարակ նուշ։ Դոցա հետ պետք է հաշվել և չորացած դեղձ, ծիրանի, շլորի և կեռասի չիրերը, որոնք պատրաստվում են Ատրպատականի ամեն գավառներում։

Շիրազը և Քաշանը տալիս են մեծ քանակությամբ թամբաքու, որ տարվում է Տաճկաստան, և օսմանի երկրի բոլոր սրճարանների նարգիլեների ծխախոտը այդ երկրի բերքերից է ստացվում։

Խինա (հինա) արևելքում մազեր և ձեռքեր ներկելու փոխինդ— ստացվում է կենտրոնական Պարսկաստանից և բավական վաճառահանվում է։ Իսկ թիրյաքը հազիվ է բավականանում օրենքով ոգելից ըմպելիքներից զրկված պարսիկներին այդ քույնով գըրգռել իրենց ուղեղը։

Գիլանի անտառները տալիս են փայտի զանազան տեսակներ, որպես են շիմշատ, ընկուզենի, որ հասնում է հսկայական մեծությամբ։ Այդ անտառներում պտղաբերվում են լիմոնի, նարինջի և ապելսինի ամեն տեսակները և ձիթենի։

Քանի տարի առաջ ռուսաստանցի Կոկոռովները այնտեղ հիմնեցին ձիթենուց յուղ դուրս բերելու մի գործարան, բայց մի քանի տարուց հետո թողեցին նրան մեզ անհայտ պատճառներով։

Պարսկաստանի արվեստագործածության ավելի կատարելագործված իրերը խալիները և շալերն են։ Խորասանը և Ֆալահանը տալիս են խալիների ամենալավ տեսակները. վերջինի գործը թեև

ավելի նուրբ և գեղեցիկ է, բայց ամրության և գույների դիմացկունության կողմից, շատ ետ են մնում Խորասանի խալիներից։

Պարսկաստանի շալերը թեև ավելի դիմացկուն են, բայց մինչև այսօր չհասան այն կատարելության, որ ունենային Քաշմիրի և Լահորի շալերի նրբությունը, փափկությունը և գեղեցկությունը, այդ պատճառավ և արժողության մեջ շատ ետ են մնացել։ Շալերի ամենալավ տեսակները գործվում են Մեշեդ քաղաքում։

Սինայի և Սակզի կողմերում գործում են շատ գեղեցիկ կապերտներ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ասում են... Պարսկաստանը ունի մոտ 70 ֆովջ (զորագունդ), ամեն մի ֆովջը բաղկացած է 800 զինվորից, ուրեմն ամբողջ զինվորների թիվը կազմում է 56.000։ Յուրաքանչյուր զինվոր ստանում է տարեկան 5 թուման ռոճիկ. այսինքն՝ օրական 4 կոպեկ, այն ևս այն ժամանակ, երբ զինվորը գնում է մարտի. իսկ զինվորը տանը նստած ժամանակ ոչինչ չի ստանում։

Պարսկաստանը պատերազմներ չէ վարում. ուրեմն զինվորը կարող է միշտ տանը մնալ, և այս չորս կոպեկ թոշակից զրկվել։ Միայն մի քաղաքական նպատակ առիթ է տալիս կառավարությանը զինվորը տեղափոխել մի նահանգից դեպի մյուսը. Ատրպատականից դեպի Արաղստան, Արաղստանից դեպի Խորասան, այնտեղից դեպի Սպահան և այլն։ Դա կոչվում է սաֆար։ Այդ ժամանակ միայն զինվորը իրավունք ունի ստանալու օրական 4 կոպեկ։ Բայց դժբախտ կոպեկը սկսած միֆնջից (գնդապետ) մինչև վերջին դահ-բաշին (տասնապետ) հասնելը ձեռքից-ձեռք աստիճանաբար իջնելով, մնում է երկու կոպեկ, այդ վերջինը ստանում է զինվորը։

Բայց նա ինչո՞վ է ապրում։

Նա ապրում է...

Ճանապարհներում մրգավաճառների քարավաններ են անցնում։ Սարվազը (զինվորը) պատրաստ է կողոպտել։ Նա անցնում է այգիների, բոստանների մոտից, հափշտակում է. ճանապարհի վրա հունձքի արտերը զրկվում են իրանց բերքից, և ճանապարհորդ-քարավանները չեն համարձակվում ուղի ելանել, երբ լսում են

Թե զինվորներ են անցնում։ Սարվազը ուր և գնում է թողնում է իր հետևից ամայություն։ Քաղաքներում ամեն հանցանքի մեջ բռնվող մարդ սարվազն է։ Նա բռնվում է գողության մեջ, աղչիկների, կնիկների, տղաների բռնաբարության մեջ, արբեցողության մեջ և այլն։

Սարվազը մնում է անպատիժ, գնդապետը և մյուս մեծավորները պարտավորված են պաշտպանել սարվազին, եթե չպաշտպանեն նրան, նոքա չեն կարող նորա չորս կոպեկից երկուսը անուշ կերպով ճաշակել...։

Շահի գանձարանից դուրս են գալիս ամեն զինվորի համար այդ չորսական կոպեկները, և ամեն ֆովջի 800 հոգի սարվազի հաշվին։ Արդյոք ունի՞ ամեն մի ֆովջ 800 հոգի սարվազ. կարող է ունենալ, պատասխանում ենք մենք, այդ դժվար բան չէ։

Ամեն մի գլխավոր քաղաք հասնելու ժամանակ, գնդապետը (սարթիբը) յուր ֆովջի համար պիտի տա, որ կոչվում է սաճ։ Նա վարձում է փողոցում մի քանի համալներ, հագցնում է նրանց սարվազների պաշտոնազգեստը, կանգնեցնում է սարվազների շարքում, և նոցանով լրացնում է թիվը։

Ջնայելով այսպիսի չնչին թոշակին, Պարսկաստանում շատերը ցանկանում են սարվազ դառնալ, եթե պարտադիր իսկ չէ ծառայությունը. պատճառը հասկանալի է. սարվազը որպես հիշեցինք վայելում է մի քանի կեղտոտ արտոնություններ։ Ժողովրդի մեջ ամեն մի անբարոյական սրիկան միշտ պատրաստ է սարվազի ֆաճողան վզին ձգել և ամեն տեսակ լրբություններ գործելու իրավունքը ստանալ։ Նշանավոր մարդիկը ևս ցանկանում են իրենց որդիքը տալ սարվազներ լինելու այն նպատակով, որ նոքա ունենալով սարվազներ, մի կողմից, ազատվում են ուրիշ սարվազների հարբստահարությունից, մյուս կողմից, նրանք կարողանում են ճնշել ուրիշներին։

Սարվազների համար չկա որոշ ժամանակ, թե քանի տարի պիտի ծառայեն։ Նա յուր կյանքում մնում է միշտ սարվազ, եթե մի քանի տասնյակ թուման յուր գնդապետին չվճարե, իրան ազատելու համար։

Սարվազների համար զինվորական կրթություն չէ պահանջվում. սարվազը կարող է լինել ամեն մի մարդ, յուր հասակի ամեն մի աստիճանում և կարող է առանց նախապատրաստական մարզության վարել յուր պաշտոնը, փույթ չէ, թե նա չգիտե թե հրացանի գնդակը որտեղից են ձգում և փիստոնը որ կողմից դնում։

Սարվազին չի կարելի ճանաչել, քանի որ նա յուր տանն է. նա ման է գալիս ժողովրդի հասարակ հագուստով։ Նա հագնում է յուր համազգեստը, երբ որևիցե քաղաքի ալակափուլ բակում պիտի տար յուր սանը (համարը)։

Առանց ծիծաղի չէ կարող մարդ նայել մի այսպիսի խառնիճաղանճ բազմության վրա. մինը կարճ, մյուսը երկար փափախով, մինը լապչիով, մյուսը կոշիկով, մինը տրեխով, մյուսը ֆոշերով, և այլն։

Ես ներկա էի մի այսպիսի սանին, երբ սուլթանները (հիսնապետները) խնամքով աշխատում էին ուղիղ կերպով շարել սարվազները. հիսնապետը մի սարվազին ասաց.—

— Ահմադ, ուղիղ կանգնիր։

— Ինչո՞ւ ես միայն,—պատասխանեց Ահմեդը կոշտությամբ.— թող Հասանն էլ ուղիղ կանգնի, որ ես էլ կանգնեմ։

Տասնապետը ասում է մի այլ սարվազին.

— Ղասըմ, ոտքդ ուղիղ դիր։

— Սուտ ասողի հոր գերեզմանը անիծած, եթե ուղիղ չէ,— պատասխանում է Ղասըմը...

Զինվորական հնազանդությունը (դիսցիպլինա) այդ աստիճանումն է պարսից զորքի մեջ։

Ինչ որ վերաբերում է համազգեստի ձևերին, դա կարող է ամենածիծաղելի տարազը դառնալ մասկարադ բալեոում (դիմակահանդեսներում)։

Բայց թե ինչպես են ընտրվում զինվորապետները, բավական է հիշել մի երևելի պատկերահանի մի ծիծաղելի կարիկատուրան։ Նա նկարել է Մադուա Ալի խանի արու սերունդը, որոնք իրանց մոր արգանդից մինչև կեսը ծնված միջոցին հայտնվում էին սարթիփի (գնդապետի) էպոլետները ուսերին կրած, արևի և առյուծի շքանշանը շլինքիցը քարշ ընկած։

Զորապետի որդին դառնում է զորապետ, իշխում է յուր հոր ֆովչերին, եթե նրան այդ պաշտոնը ստանալու համար կինստեր մի քանի հարյուր թուման։ Փողի շնորհիվ նա ոչ միայն կարող է դառնալ սուլթան, յավար, սարհանգ, սարթիփ, միրֆանջ, ամիրբուման և այլն, նույնիսկ ոչինչ չգործած նրան հեշտ է ստանալ փայլուն տիտղոսներ, որպես սուջայվուշ-մուլք (տերության քաջը) մասիրուլ-դովլա (տերության սուրը) կամ մուշարդ-դովլա։

Մի քանի տարի առաջ մի զորապետ Մավրի պատերազմում իր ֆովչերով գերի ընկավ թուրքմենների ձեռքը, կովի դաշտից փախ-

չելու ժամանակ։ Նա հարուստ լինելով կարողացավ ազատել յուր անձը մի քանի հարյուր թումանով։ Բայց Թեհրան գալուց շահից ստացավ սուջայվուշ-դովլա (տերության քաջը) տիտղոսը։

Սարթիբը (ժեներալը) ստանում է պարսից կառավարությունից 800 թուման ռոճիկ, ասել է 2300 ռուբլի ռուսաց փող։ Այդ գումարը Սաֆարի ժամանակ նրա առավոտյան նախաճաշիկի փողը չի լինի։ Նա ծախս է անում մի քանի հազար թուման. այսուամենայնիվ նա չէր հրաժարելու յուր ֆովչից, եթե այդ 800 թուման էլ չտային և իրանից մի քանի հազար ևս պահանջեին։

Ինչո՞ւ։

Ախտ երկար կլիներ մանրամասնաբար գրել այն բոլոր եկամուտների մասին, որ նա շահում է յուր ձեռքում ֆովչ ունենալու միջոցով. բավական է հիշել, որ սարթիբը կալվածատեր է, գյուղեր ունի, ուրեմն և գյուղացի ռայաթներ (հպատակներ) ունի։ Նա գտնվելով զինվորական պաշտոնի մեջ, կարողանում է յուր գյուղորայքը յուր կամքի ուզածին պես կառավարել. այսինքն՝ հարբուսահարել խեղճ շինականներին և ծծել նոցա կենսական ուժի մինչև վերջին կաթիլը։

Մի քանի գաղղիացի մոլաշրջիկ աստիճանավորներ, չգիտեմ ինչ դիպվածով Պարսկաստան գալով, և ռուսաց ապստամբած զորապետ Սամսոնն փոքր ի շատե մտցրին Պարսկաստանում զինվորական կրթության մի քանի հասարակ ձևեր։

Ես տեսա այդ ֆովչերից ամենակրթյալը, որ կոչվում է խասա ֆովչ (ընտիր գունդ). ինձ թվում էր, թե գյուղացի երեխայք հավաքված զինվորական խաղեր էին ներկայացնում։

Քսան տարի առաջ Նասր-էդդին շահը կազմեց մի ֆովչ հայերից և ասորիներից։ Աչքի առաջ ունենալով քրիստոնյաների հավատարմությունը, նա կամենում էր նոցանով շրջապատել յուր պալատը։ Այդ գունդի բոլոր զորապետները գեներալից սկսած մինչև վերջին տասնապետը հայեր էին։

Զարմանալի բան, պարսից զինվորների անբարոյականությունները երևեցան և հայ զինվորների մեջ. նոքա սկսեցին նեղացնել ոչ միայն օտարազգիներին, այլև իրանց համազգիներին. մինչև հայ ժողովուրդը զզվեցավ և խնդրեց բարձրագույն կառավարությանը վերացնել զինվորագրությունը իրանց մեջից։

Սարվազը սաֆարում պարտավոր էր յուր հացը պատրաստի առնել բազարից, այդ պատճառով տերությունը չէ մտածում ունենալ զորքերի համար հացի ամբարներ։

Սարվազը ապրում է յուր տանը, այդ պատճառով տերությունը չէ մտածում շինել նոցա համար մարտկոցներ։

Գլխավոր քաղաքներում, որպիսին են Թեհրան, Թաբրեզ, որտեղ կան գիշերապահ զինվորներ, սարվազների համար շինված են մի տեսակ ասիական քարվանսարաների նման տներ, որոնք կոչվում են սարվազխանաներ։ Մինչև այն աստիճան կեղտոտ, որ նկատված է, խոլերան Պարսկաստանում առաջին անգամ հայտնվում է սարվազխանաներում։

Մի քանի տարի առաջ կառավարությունը սարվազներին ոչինչ բոշակ չէր տալիս։ Երբ սարվազը գնում էր սաֆար, նա ստանում էր հանդիպակաց քաղաքից կամ գյուղից շիլա և սուլսաթ, այսինքն՝ ուտելիք։

Ասել պետք չէ, որ առանց պատճառների ևս ժողովուրդը կողոպտող սարվազները մի այսպիսի առիթով որքան կչարչարեին խեղճ ժողովրդին, մինչև ամիր, նորա հիշատակը ի բարին եղիցե, վերացրուց այդ օրենքը, որ մնացել էր Պարսկաստանի բարբարոսական հնությունից։

Զինվորական երաժշտություն։ Երաժշտություն... Ի՞նչ գրեմ դրա մասին։ Երևակայեցեք սոխակը, ագռավը, կատուն, ավանակը և այլ դոցա նման կենդանիներ հավաքված միասին կամենային երաժշտություն կազմել. նորանցից ամեն մինը առանց տակտի յուր ձայնին զոռ էր տալիս. որպիսի՜ ներդաշնակություն կդուրս գար.— ահա՛ քեզ զինվորական մուզիկան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ,

Կրոնական շարժումներ մահմեդականների մեջ։—Ամերիկացի բողոքական միսիոներներ։—Կաթոլիկ միսիոներներ լազարիաններէ կարգից։—Հայոց եոգևոր կառավարությունը Պարսկաստանում և նորա անբավականացուցիչ ընթացքը։—Հայոց ազգային սանմանադրություն Պարսկաստանում։—Պարսկաստանի ճայոց մտավոր շարժումը և Պավլեժի ազգային դպրոցը։—Ո՞րպես պետք է բարեկարգել Պարսկաստանում վիճակային եոգևոր կառավարությունը։—Պավլեժի ընթերցարանը։

Պարսկաստանում վերջին ժամանակներումս մահմեդականների մեջ հայտնվում են խիստ զգալի կրոնական շարժումներ, որոնք առաջ քաքնված էին հալածանքի երեսից։ Երևան են գալիս զանա-

զան աղանդներ, որոնք յուրյանց բազմաթիվ հետևողներ ունին։ Այս կրոնական հերձվածները մի ազդու բողոք են իսլամի մոլեռանդության դեմ, որ ճնշում է կամքի և մտքի ամեն ազատ ձգտողություն[1]։

Քննելով այս աղանդների բնավորությունը և ոգին, սոցա մեծ մասը հայտնվում են որպես ներհողական։ Բայց ո՞րտեղից է առաջ եկել հերքողական ուղղությունը դեռևս չզարգացած պարսիկների մեջ։

Դա ունի իր բնական պատճառները։

Մի կրոնք որքան հեռանում է ճշմարիտ աստվածապաշտությունից, մի կրոնքի մեջ որքան պակասում են բարոյական և հոգեկան սկզբունքները, այնքան նա դառնում է սնապաշտական և նորա բոլոր վարդապետությունները հիմնված են լինում արտաքին ծեսերի և արարողությանց վերա։

Մի այսպիսի կրոնքով ապրող մարդը, երբ հանկարծ զգում է յուր մոլորությունը, նա մի ծայրահեղությունից թռչում է դեպի մի այլ ծայրահեղություն,— ամենաստոր մոլեռանդությունից նա անցնում է անկրոնության և դառնում է անհավատ, ներհող։

Շատ բնական է, որ մարդու չափազանց խաբված դրությունը ծնեցնում է նորա մեջ կասկած և երկբայություն. բավական է, որ նա հասկանա, թե խաբված է յուր կարծիքների մեջ, որ այնուհետև կորցնե յուր հավատարմությունը դեպի ամեն ճշմարտություն։ Նա միայն հերքում է, փշրում է, ոչնչացնում է ամեն ինչ, որ հին է, բայց թե ինչ պետք է դնե նոցա տեղ, այդ ինքն էլ չգիտե։

Այստեղից հասկանալի է, թե ինչու ամեն մի պարսիկ աղանդավորից հարցնելու ժամանակ, նա չի կարողանում մի որոշ տեղեկություն տալ իր դավանանքի մասին։ Նա միայն բողոքում է հնի դեմ, բայց ինքը մի կազմակերպված վարդապետություն չունի։ Եվ այլ կերպ լինել կարող չէր, որովհետև աղանդներն յուրյանց սկզբնական դրության մեջ միշտ լինում են անմշակ. նորանք զարգանում են, կատարելագործվում են կյանքի և ժամանակի հետ։

Զարմանալին այն է, որ Պարսկաստանում հայտնված աղանդներից մի քանիսը բոլորովին նյութապաշտական են, հիմնված

---

[1] Գ. Բաֆֆիի Պարսկաստանի ճանապարհորդության մեջ ընդարձակ և ավելի մանրամասն տեղեկություններ լինելով մահմեդականների մեջ եղած աղանդների մասին, մենք բավականանում ենք այս հոդվածում միայն ընդհանուր տեսությամբ, ապասելով հիշյալ աշխատության հրատարակությանը, որ արդեն, որպես գիտենք, պատրաստվում է իր ամբողջությամբ «Փորձի» մեջ տպագրելու համար։

ավելի բնական Տշմարտությունների վերա։ Դոցա հետևողները գտնվում են ժողովրդի ավելի զարգացած դասի մեջ։

Նյութապաշտությունը կամ այլ խոսքով բնասպաշտությունը մարդու սկզբնական և վերջնական դավանությունն է։ Նա իր տղայության մեջ, հրապուրվելով բնության ազդու երևույթներով, աստվածացնում է նորանց և պաշտում է որպես կույր հավատացող, իսկ յուր զարգացման աստիճանին հասնելով, պաշտում է նորանց որպես փիլիսոփա։ Բայց ոգիներին կամ աներևույթ էակներին երկրպագություն տալը հիշյալ երկու ծայրերի միջասահմանն է։

Բայց մի աղանդ, որ ավելի ուժ և զորություն է ստացել, չնայելով այն հալածանքներին, որ մինչև անգամ ինկվիզիցիան չի ունեցել իր զոհերի վերա,—է բաբիների աղանդը։ Նորա հետևողներն ամեն քաղաքներում բազմացել են և ժողովրդի ավելի մտածող և ընդունակ մասն են կազմում։ Ջանդիանի սարսափելի կոտորածից հետո՝ այս աղանդը առժամանակ լռեց և թաքուստի մեջ էր պահվում, բայց այս օրերում նա լուր դրոշը կրկին բարձրացրեց Դավրեժ քաղաքում։

Քաղաքի նշանավոր մեջիդներից մեկի դռան վերա, որտեղից իսլամի մեծ մուշտայիդը (հոգևոր գլուխը) ամեն օր անցնում էր նույն մեջիդում իր նամազը կատարելու, կպցրած էր մի հայտարարություն. նորա պարունակությունը խիստ վատահ և վճռական էր։ Բաբիները հայտնում էին, թե յուրյանց աղանդի գլխավոր հեսինակը (մոլլա Մամադալի զանգիանցին, որին պարսիկները 22 տարի առաջ նահատակեցին Դավրեժ քաղաքում) այժմ կենդանի է. նա արդեն հարություն էր առած այն ժամանակ, երբ պարսիկները կարծում էին, թե սպանեցին նորան. թե նա գտնվում է այժմ Աքքա քաղաքում և այնտեղից ուղարկում է հավատացյալներին յուր հրահանգները. թե այժմ բաբիների հասարակությունը պահանջում է, որ իրանք ինքնավարություն ստանան ազատ և առանց արգելքի պաշտել յուրյանց կրոնքը, և այդ սպասում են իսլամի մեծ մուշտայիդից. իսկ հակառակ դեպքում ոչ միայն մուշտայիդի կյանքը ենթարկված կլինի մահվան, այլև իրանք արդեն պատրաստ ունին 10.000 զինյալ տղամարդիկ, որոնք յուրյանց սրով և արյունով պետք է գնեն բաբիության ազատությունը։

Այս հայտարարությունը բոլորովին սարսափի մեջ գցեց քաղաքը. մուշտայիդը մի քանի օր դադարեց մեջիդը գնալուց, այնուհետև նա դուրս էր գալիս շրջապատված զինյալ մարդկանցով։ Բայց թե ինչո՞վ կվերջանա այս խռովությունը, դեռ հայտնի չէ։

Թե հալածանքը սաստկացնում է աղանդների աճելությունը,— դա մի պարզ ճշմարտություն է։ Եվ առաքյալների օրերում, երբ հրեաները ամենայն խստությամբ հալածում էին նոցա քարոզությունները, մի ատյանի մեջ, որ հավաքված էր նորանց դատապարտելու համար, խիստ խելացի կերպով խոսեց հրեաների օրենսուսյց Գամալիելը. «Հեռու կացեք այդ մարդկանցից (առաքյալներից) և թողեք դորանց, պատճառը, որ եթե այդ խորհուրդը և այդ գործը մարդկանցից է, կքանդվի։ Բայց թե որ աստծուց է, չեք կարող քանդել դորանց, գուցե աստուծո դեմ կռիվ անողներ կլինիք»։

Բայց ես ուրիշ կերպ կասեմ.— ամեն մի աղանդ, որ ծագում է մի ժողովրդի մեջ, եթե չի համապատասխանում նույն ժողովրդի կենսական պահանջներին, նա հիմք չունի, ինքն իրան կոչնչանա։

Բայց Պարսկաստանի մեջ աղանդների ոչնչանալը անհնարին է, որովհետև նորանք ժողովրդի բուն պահանջների արտահայտությունն են։ Գուցե նորանք կկերպարանափոխվեն, բայց իրանց իսկությունը կորցնելու չեն։

* *
*

Ոչ սակավ շարժումն է ձգել Պարսկաստանում քրիստոնեական քարոզությունը, որ մուտք է գործել ամերիկացի բողոքական առաքյալների ձեռքով։ Նորանք համարյա թե Պարսկաստանի բոլոր նշանավոր քաղաքներում ունեն իրանց ծածուկ և հայտնի քարոզիչները, սկսյալ Դավրեժից մինչև Բենդիր-Բուշիր։ Քանի օր առաջ այս տեղում գտնված նոցա ժողովարանը գնացի, նա գտանվում է ամենագեղեցիկ և հոյակապ տան մեջ հայոց թաղում։ Ժողովարանի դահլիճը լիքն էր լսողներով երկու սեռից կա. նոցա մեծ մասը մահմեդականներ էին, որոնց թվում կային մի քանի մոլլաներ և սեիդներ (իսլամի մարգարեի որդիներ), իսկ լսողների մնացյալ մասը կազմված էր հայերից և ուրիշ ազգություններից։ Անգլիացի քարոզիչը ամբիոնի վրա խոսում էր իր քարոզը ամենին հասկանալի թուրքաց լեզվով. աղոթքները և երգերը մատուցանում էին դարձյալ նույն լեզվով։

Զարմանալի է, թե որպիսի խորին տպավորություն է անում մինչև անգամ անզգա սրտերի վերա լավ քարոզը։ Ես սկզբում ուշադրությամբ էի լսում, բայց հետո համարյա դադարեցա լսելուց, թեև նա խիստ գեղեցիկ և քաղցր էր։ Ես նույն միջոցին մտածում էի... բայց ի՞նչ էի մտածում... մտածում էի մեր եկեղեցու և մեր եկեղեցականների մասին...

Ես հիշեցի, որ քանի օր առաջ քաղաքի հայոց եկեղեցու քահանաները բողոքել էին սրբազան առաջնորդի մոտ, որպեսզի եկեղեցուն կից ընթերցարանը կիրակի օրերը փակվի, որովհետև ժողովուրդը ընթերցարան գնալով, էլ ժամ չէր գալիս, և քահանաները զրկվում էին յուրյանց շահերից... Նորին սրբազանությունը շատ խելացի կարգադրություն արեց, հրամայեց, որ ընթերցարանը բացվի՝ եկեղեցու մեջ պատարագն ավարտվելուց հետո... Բայց ցավալին այն է, որ դորանով ևս եկեղեցի գնացողների թիվը չբազմացավ... Ինչո՞ւ.— Քահանաները պատասխանում են, թե ժողովուրդն անհավատ է դարձել, կրոնքը և ջերմեռանդությունը նոցա մեջ սառել է... Այս խոսքերը լսվում են ամեն տեղ, ամեն հայ քահանայի բերանից... Բայց ճշմարի՞տ են նրանք։

Ո՛չ։ Մեր ժողովուրդը անհավատ չէ և ոչ սառել է նորա մեջ կրոնական ջերմեռանդությունը, բայց քե նորան չի գրավում յուր մայրենի եկեղեցին, դա ունի յուր առանձին պատճառները։ Վեր առնենք երկու հիմնարկություն՝ մինը եկեղեցին, մյուսը ընթերցարանը, երկուսն էլ մրցություն են անում միմյանց հետ, երկուսի մեջ նույնպես լինում են ընթերցանություններ, բայց մինը տալիս է կենդանի խոսք և մտավոր սնունդ, մյուսը հնչեցնում է գրաբար անճասկանալի և մեռյալ ձայներ միայն... ընթերցարանը հաղթող է հանդիսանում, որովհետև ժողովուրդը նորան հասկանում է և նորանով գրավվում...

Աստվածների տաճարները զանազան ժամանակներում զանազան կերպերով գրավում էին ժողովրդի սիրտը։ Կար ժամանակ (և այժմ Հնդկաստանում նույնն է), երբ մի արձան բազմաթիվ գլուխներով և բազմաթիվ ձեռքերով, որի պարանոցի վերա գալարվել էին վիշապներ, կամ գցած էր մի մանյակ՝ շարած մարդիկների կռոպիներով, որը մի ձեռքով բռնել էր փոքրիկ երեխայի ոտներից և մինչև նորա կեսը կուլ էր տալիս.— այսպիսի աստվածներն յուրյանց հրեշավոր այլանդակությամբ սարսափ էին գցում ռամկի վերա և հետևապես զարթեցնում էին նորա մեջ հարգանք և մոլեռանդություն դեպի յուրյանց սրբարանը։ Բայց երբ որ մարդիկների ճաշակը նրբացավ, երբ նրանք սկսեցին սիրել գեղեցիկը և վսեմը, այն ժամանակ աստվածներն ևս փոխեցին յուրյանց կերպարանքը. նորանք սկսեցին երևալ տաճարների մեջ ավելի գեղեցիկ և վայելուչ կերպով։ Հոմի և Աթենքի գեղարվեստն ստեղծեց աստվածների ամենաբնտիր օրինակներ, և այնուհետև ամբոխը գրավվում էր յուր տաճարների շքեղությամբ, իր աստվածների գեղեցկությամբ։

Քրիստոնեությունն աշխարհ եկավ. նա յուր դրոշի վերա գրած ուներ այս խոսքերը. «աստված հոգի է և նորա երկրպագողներն էլ պետք է որ հոգով և ճշմարտությամբ երկրպագություն տան»։ Բայց քրիստոնեությունը իր պարզությամբ, յուր բոլոր հոգեկան զորությամբ երկար ժամանակ չկարողացավ դարձնել ժողովուրդը դեպի ճշմարիտ աստվածապաշտություն, այն որ մարդու սրտի և հոգու մեջ յուր հիմքն ունի։ Որովհետև ժողովուրդը վաղուց արդեն սովորած էր յուր աստվածը յուր աչքի առջև տեսնել, յուր շրթունքներով և ձեռքերով շոշափել և նորա նյութական մարմինը պաշտել...

Հռոմի եկեղեցին, կռապաշտության այդ վաղեմի վարպետը, սկսյալ Կոռնոսի ժամանակներից, ժողովրդի նյութապաշտության կույր օժանդակ դարձավ, և իր տաճարները զարդարեց այն բոլոր շքեղություններով, որ կարող էր ազդել արտաքին զգայանքների վերա, որ կարող են հրապուրել նորա անհավատությունը խայտաճամուկ երևույթներով միայն։

Բայց ժողովուրդը միշտ միակերպ չի մտածում, նորա ճաշակը կրթվում է, նորա միտքը զարգանում է, և հետևապես նորա պահանջմունքները փոխվում են։ Նա կրոնքի մեջից սկսում է դուրս ձգել այն, որ նյութական է, և որոնում է հոգևորը, այն, որ բարոյական ուժ ունի, այն որ մաքրում և ազնվացնում է բնավորությունը։— Դա աստծո կենդանի խոսքն է. ինչ եկեղեցում նա չի լսում, ժողովուրդը հետզհետե դադարում է այնտեղ մուտք գործելուց... Եվ ի՛նչ եկեղեցի աշխատում է միայն ծեսերի և արարողությունների զորությամբ պահել ժողովուրդը, նա հիմք չունի։

Այժմ ես հասկանում եմ, թե ինչու այս հայերն յուրյանց մայրենի եկեղեցին թողած հավաքվել են այստեղ.— ես կրկին դառնում եմ դեպի բողոքականների ժողովարանը։

Քարոզը վերջացավ մի կարճ մաղթանքով, երգվեցավ մի թեթև երգ, և այնուհետև բազմությունն սկսավ ցրվիլ։ Բայց ոմանք մնացին, երևում էր, որ դորանք եկել էին լոկ հետաքրքրության և մանավանդ վիճելու համար. վերջիններս մահմեդականներ էին։ Վիճաբանության առարկան սկզբում Քրիստոսի աստվածության մասին էր։ Մստեր Ստեյն, ամերիկացի քահանան, թեև երևում էր բավական հմուտ աստվածաբանության մեջ, բայց պարսից և թուրքաց լեզուները լավ չտիրապետելու համար՝ դժվարանում էր պատասխանել։ Նույն միջոցում մի ծերունի մոլլա, որ հեռվից նորան լուռ լսում էր, մոտեցավ վիճողներին և պահանջեց մի պարսկերեն աստվածաշունչ։ Այնուհետև դառնալով դեպի միսիոնարը, նա

խնդրեց, որ թույլ տա յուր փոխարեն պատասխանել։ Միսիոնարը հաճեցավ, վիճաբանությունը տևեց երկար և անդադար փոփոխվում էր մի խնդրից մյուսը։ Բոլորը ինչ որ կարողացա եզրակացնել մոլլայի խոսելուց, այն էր, որ իսլամի այս ծերունի կրոնավորը երկար ժամանակ և խիստ հաստատուն կերպով ուսումնասիրել էր աստվածաշունչը, նորա փաստերը և բերած ապացույցները անկեղծ էին և պինդ համոզմունքից առաջ եկած։ Մոլլային կամակից էին և մի քանի ուրիշ պարսիկ դպիրներ, որոնց թվում կար և մի սեիդ իսլամի մարգարեի սերունդից։ Նրանք գործ էին ածում երկու զենք քրիստոնեությունը պաշտպանելու համար, մինը՝ աստվածաշունչ գիրքը, մյուսը՝ մահմեդականության փտած կազմակերպության ցուցմունքը։

Շատ վտանգավոր բան է, երբ մի կրոնքի ընդդեմ զինվորվում են այն անձինքը, որ իրանք նույն կրոնքի վարդապետներ են. որովհետև նորանք գիտեն և ծանոթ են յուրյանց կրոնքի թույլ կողմերին, ուստի հեշտությամբ կարող են խորտակել նորան։ Եվ այսպես քրիստոնեությունը գտանելով յուրյան հետևողներ մոլլաների մեջ, սպառնում է մեծ վտանգ իսլամին, որ յուր հիմքը պաշտպանում է միայն ժողովրդի մոլեռանդության մեջ։ Այսպես էլ եղավ և քրիստոնեության մեջ. հռովմեական վանքերի ցեխից դուրս եկան այն մարդիկը, որոնք Հռոմի սարսափելի թշնամիքը դարձան. բողոքականությունը նորանց արդյունքն է։

Հետևյալ օրը ես բողոքականների երկսեռ դպրոցը մտա, ուր խառն սովորում էին աղջիկներ և տղաներ. նորանց թվում գտա մի քանի աշակերտներ և աշակերտուհիք թուրքերից, իսկ մնացյալներ հայեր էին։ Առաջին քաղցր տպավորությունը, որ գործում է այցելուի վերա, է ամերիկական մանկավարժության կանոնավոր կազմակերպությունը, մանավանդ մի այնպիսի երկրում, ուր բնիկների երեխաները դեռ սովորում են ժամատների բակերում, տիրացուների ձեռքով, կամ մզկիթների խուցերում տգետ մոլլաների ձեռքով։

Վարժուհին, որ կոչվում էր միս Ջուդի, խիստ պարզ կերպով խոսում էր հայերեն և թուրքերեն. նա գիտեր այդ երկու լեզուների դարուբյունը այնքան, որ կարողանում էր նույն լեզուներով ավանդել աշակերտներին ուսանելի առարկայք։ Թեև աշակերտուհիքը նույն միջոցին պարապված էին ձեռագործներով և աշակերտները գեղագրությամբ, բայց վարժուհին ցանկացավ, որ ես տեսնեի, թե որքան առաջ էին գնացած նորանք հայերենի մեջ։ Եղավ մի փոք-

րիկ հարցաքննություն։ Ճշմարիտն ասած, ես բոլորը գտա զոհացուցիչ, չնայելով, որ երեխայք շատ փոքր էին և նորանցից շատերը երկար ժամանակ չէր, որ մտել էին դպրոցը։

Այնուհետև վարժուհին հայտնեց, թե ինքը շատ ցանկանում է ունենալ հայոց աշխարհաբար լեզվի քերականություն՝ աշակերտներին մայրենի լեզուն կանոնավոր կերպով ուսուցանելու համար, և դիմում էր իմ խորհուրդին, որ նորան մի որևիցե ձեռնարկ առաջարկեմ։ Ես ամաչեցի ասել, թե մեր աշխարհաբարը դեռ բոլորովին մշակված չէ, և մենք աշխարհաբարի կանոնավոր քերականություն չունինք, և առաջարկեցի պ. Պալասանյանի քերականությունը։ Նա իսկույն նշանակեց յուր հիշողության տետրակի մեջ։

Ամո՜թ մեզ համար. ամերիկացուհին մտածում է հայի որդուն կանոնավոր կերպով ուսուցանել յուր մայրենի լեզուն, բայց աշխարհաբարի քերականությունը դեռ բուն հայկական դպրոցներում մուտք գործած չէ...

Չմոռանանք ասել, որ քանի օրից հետո ես ընդունեցի մի քանի խոշոր բամբասանքներ, թե ինչո՞ւ ես մտել էի ֆարմասոնների ժողովարանը,— այստեղ այդպես են կոչում բողոքական քարոզիչներին։— Ողորմելի՜ մարդիկ, դեռ չգիտեն, թե ի՛նչ նշանակություն ունի մտնել թշնամու բանակը և նրա ուժերը կշռել... Այս կեղծավորները, ճշմարիտ է, հայոց եկեղեցու փոշիները յուրյանց ծնորադրությամբ լկստում են, բայց եթե գիտենային թե Հայկի և Արամի ոսկերքը կարող էին մի քանի կոպեկի շահ բերել, միշտ պատրաստ են նորանց գերեզմաններից հանել ու վաճառել...

* *
*

Այսքան խոսելով բողոքական միսիոնարների մասին, չի կարելի և մի քանի խոսք չասել կաթոլիկ կղերի մասին, որոնք հայտնըվել են Պարսկաստանում, որպես լույս և ճշմարտություն տարածողներ։ Եվրոպայում անարգված և յուր ճամարտը կարցրած այդ սևախումբ հասարակությունն այժմ որոնում է յուր զոհերը միամիտ արևելքում։ Նորանք գործում են այստեղ այն, ինչ որ մի քանի դար առաջ անում էին Եվրոպայում։ Որպեսզի ավելի շոշափելի կերպով նկարագրվի դորանց գործունեությունը, իբրև օրինակ ես վեր կառնեմ մի գյուղ, ուր անցյալ ամառ Սալմաստա կողմերում ճանապարհորդությանս ժամանակ առիթ ունեցա գտանվելու։ Այս գյուղը կոչվում է Խոսրովիա. դա ունի մինչև 300 տուն բնակիչներ,

ուր բացի մի քանի հայ լուսավորչական ընտանիքներից մնայ-
յալը, բոլորը կաթոլիկներ են։

Չի կարելի մի ուրիշ տեղում ավելի բացարձակ կերպով նկա-
տել կաթոլիկ կղերի բթամտացնող, ստրկացնող և կենդանի մարդ-
կանցից դիակներ պատրաստող ապդեցությունը, որպես հիշյալ
գյուղում։ Թե որպիսի զենք է գործ դնում հոռվմեական կղերը տի-
րելու իր ժողովրդի սրտի, մտքի և բոլոր զգացմունքների վերա,
դա արդեն հայտնի է, դա կրոնական խայտաճամուկ թևլերով
պատրաստված ուռկանն է, որով որսում է նա յուր զոհերը։ Բայց
այստեղ գործ է դրվում մի ուրիշ և ավելի սարսափելի զենք, որ
բոլորովին ստրկացնում է ժողովրդին կղերի ձեռքում։ Այս վերջինը
կարծես թե բացատրության։

Զարմանալի է, թե որպես կաթոլիկ կղերը գիտե օգուտ քաղել
զանազան հանգամանքներից, երկրի դրությունից, ժողովրդի վի-
ճակից և այլն։ Խոսրովիա գյուղը, որի մասին է մեր խոսքը, Սալ-
մաստա այն գյուղերից մեկն է, ուր ամենասարսափելի կերպով
աճել է վաշխառուների հարստահարությունը։ Կաթոլիկ կղերը հի-
շելով այն առածը, թե «պարտականը պարտատիրոջ գերին էր»,
մտածեց օգուտ քաղել և այն ստրկացնող միջոցից, որի մեջ կային
և նյութական շահեր։

Խոսրովացին միշտ փողի կարոտություն ունի։ Հասկանալի է,
թե ինչ կլինի մի ժողովրդի վիճակը, երբ նա գործում է և վաստա-
կում է միմիայն յուր եկեղեցու և նորա պաշտոնյաների պիտույք-
ները լցուցանելու համար։ Մի գյուղի մեջ, որպես Խոսրովիան է,
կան երկու վանքեր, մեկը կուսանանց, մյուսը աբեղաների. եր-
կուսն էլ լիքն են միաբաններով։ Ժողովուրդն աղքատ է, այսուա-
մենայնիվ նա պետք է լցուցանե այն պարտավորությունները, որ
դնում է նորա վերա եկեղեցին։ Բայց նա ունի ուրիշ պարտավո-
րություններ ևս, նա պետք է հոգա յուր ընտանիքի ապրուստը, նա
պետք է վճարե դիվանի տուրքը և այս տուրքը նույնպես ծանր է և
անտանելի, որպես եկեղեցունը։ Որտեղի՞ց պետք է տա. նորա
երկրագործական վաստակը չէ լրացնում այս բոլոր ծախսերը, մնում
է մի ճար միայն—պարտք անել։ Նա սկսում է մահմեդականներից
պարտքեր անել խիստ ծանր տոկոսներով, յուր այգին, տունը,
պարտեզը գրավ է դնում։ Նա անդադար պարտամուրհակները փո-
փոխում է, տոկոսը տոկոսի վերա բարդվում է. իսկ պարտքերը
հատուցանելու ոչինչ հնար չկա։ Ի՞նչ պետք է անի նա։

Գյուղացոց պարտքերը հասնում են մինչև մի քանի հարյուր,

հազար ռուբլու։ Այն ժամանակ միայն ժողովուրդը հասկանում է յուր կործանումը և սկսում է բողոքել։ Դառն աղքատության ստիպմունքն ավելի զորավոր է լինում, քան կրոնական զգացմունքը, և ժողովուրդը սկսում է կղերի դեմ սպառնալ. «Եթե դուք մեր պարտքերի մասին մի հոգացողություն չանեք, մենք պատրաստ ենք ընդունել բողոքականություն, և բողոքականների առաքելական ընկերությունը կվճարե մեր պարտքերը»։ Աբեղաները նրանց հանգըստացնում են. «Դուք անհոգ կացեք, մենք մարդիկ կուղարկենք դեպի աշխարհի զանազան կողմները, փող կհավաքեն, կբերեն, ձեր պարտքերը կտանք»։

Ժողովուրդն այս հույսով «անհոգ» է մնում... Նա սկսում է ավելի պարտքեր անել, յուրյան ավելի զվարճության տալ, որովհետև մի քանի ամսից հետո, առանց յուր աշխատության, նորա պարտքերը վճարվելու են...

Եվ իրավ, շատ ժամանակ չէ, որ վանքի միաբանության կողմից երեք խումբ մուրացկանների ճանապարհ են ընկնում դեպի աշխարհի զանազան կողմները. մեկը գնում է դեպի Հնդկաստան, մյուսը դեպի Ամերիկա, իսկ երրորդը դեպի Եվրոպայի կաթոլիկ երկրները։ Նորանք յուրյանց ձեռքում ունենում են թղթեր, վկայականներ միաբանության կողմից ստացած, որոնց մեջ ամենասարսափելի գույներով նկարագրված է լինում Պարսկաստանի կաթոլիկ եկեղեցու թշվառությունները, նոցա նյութական չքավորությունը, որ առաջ է եկել պարսիկների և նոցա կառավարության հարստահարությունից (ինչո՞ւ ո՛չ իրանց՝ աբեղաների հարստահարությունից...)։

Ողորմություն հավաքողների խումբերը վերադառնում են. որքա՞ն փող են բերում, հայտնի չէ, միայն կղերն սկսում են այնուհետև գյուղացոց պարտքերը տալ։

Բայց որպե՞ս։

Կղերն սկսում են մի կողմից գնել գյուղացոց կալվածները, որ զանազան վաշխառուների մոտ գրավ դրվելով՝ տիրացել էին, և այսպիսով վանքի միաբանությունը գյուղի ամենաընտիր արտերը և այգիները գցում է յուր ձեռքը։ Մյուս կողմից նա գյուղացիներին փողը տոկոսով է տալիս և նորա մնացյալ կալվածները յուր մոտ գրավ է դնում, և այսպիսով ժողովուրդն յուրյան պարտական անելով, բոլորովին ստրկացնում է...

Գյուղացիք սարսափում են. «այդ ի՞նչ էր, որ դուք մեզ հետ արեցիք»— գոռում են նորանք,—«Փողը եկեղեցու անունով է հա-

վաքված. մենք չենք կարող աստծո գանձանակը վատնել»—պատասխանում են աբեղաները։

Ինձ պատահեց աբեղաների մեկից հարցնել, թե դուք ինչո՞ւ խլեցիք գյուղացիների կալվածները։ Նա խիստ մարդասիրական կերպով պատասխանեց։—«Մենք ինքներս մշակելով այդ հողերը, աշխատում ենք գյուղացիներին երկրագործության կատարելագործված օրինակներ ցույց տալ։ Լավ միտք է, եթե այդպես լիներ։ Բայց կղերը այստեղ մշակում է յուր հողերը թշվառ գյուղացիների քրտինքով, որոնք առաջ նույն հողերի տերերն էին. կղերը այս դեպքում մի հարստահարող կալվածատեր է և ավելի ոչինչ։

Ով շատ բնական է, որ այսպես լիներ. այժմ հռոմեական միաբանություններն, որոնք դեպի արևելք եկած են, որպես քարոզիչներ, Եվրոպայից ավելի նպաստ չեն ստանում, նորանք ստիպված են այդպիսի խարդախ միջոցների դիմել, որովհետև մեջտեղում հացի խնդիր կա[1]։

Հռոմեական աբեղաներն այստեղ խառնվում են յուրյանց ժողովրդի և դատաստանական գործերին. նրանք ժողովրդի կողմից ուղղակի հարաբերություն ունեն դիվանի հետ։ Օրինակ, երբ որ գյուղացին դիվանին պետք է հարկ վճարե, բայց փող չունի, հարկը աբեղաներն են տալիս և գյուղացիներից պարտամուրհակ առնում։ Նորանք գործում են և ուրիշ առաքինական գործեր. օրինակ, երբ որ մի կնոջ ամուսինը գնացել է օտար աշխարհ բախտ որոնելու (տղամարդիկ մեծ մասամբ պանդխտության մեջ են ապրում), և կինը երկար ժամանակ ամուսնից ծախսելու արծաթ չէ ստանում, կղերը նրան փող է տալիս, իհարկե տոկոսով և ամուսնից փող եկած ժամանակ ետ է ստանում։ Երևակայեցեք մի կնոջ վիճակ, որ հանձնած կլինի կաթոլիկ աբեղայի հոգաբարձությանը...

Ես ասացի, թե աբեղաները խառնվում են գյուղացոց և դատաստանական գործերում. որպեսզի ճիշտ գաղափար տամ, թե որպիսի իրավաբանական ճշմարտություններով են վճռվում նոցա մեջ վեճերը, ես կհիշեմ մի դատ։ Երկու կաթոլիկներ կռվում են միմյանց հետ և սաստիկ ծեծվում են։ Կռիվը ծագում է նորանից, որ

---

[1] Հոդվածս վերջացնելու վերա էի, երբ հաստատ աղբյուրներից յուր ստացա, որ Խոսրովիայի կաթոլիկ միաբանությունը գնել է նույն գյուղից ոչ այնքան հեռու մի ամբողջ գյուղ Գուլիզան անունով։ Ես զարմանում եմ, պարսից կառավարությունը, որ արգելած է օտար պետությանց հպատակներին Պարսկաստանում կալվածատեր լինել, ինչպես է թույլ տալիս հռոմեական լազարիստ աբեղաների գյուղեր և ագարակներ գնել...

Մինը հայհոյանք է տալիս մյուսի վաղուց մեռած հորը, իսկ երկրորդը փոխադարձաբար հայհոյում է առաջինի հորը, որ նույնպես մեռած էր։ Մեռելներին հայհոյելը Պարսկաստանում ավելի մեծ հանցանք է համարվում, քան կենդանիներին, բայց բանը նորանումն է, որ մեկի հայրը վախճանվել է, որպես ուղղափառ կաթոլիկ, մյուսի հայրը որպես հերետիկոս-նեստորական։ Կաթոլիկի որդին արդարանում է, որովհետև նա մեղք չէ գործել մի հերետիկոս հայհոյելով, իսկ հերետիկոսի որդին դատապարտվում է, որովհետև նա իրավունք չուներ չար խոսիլ մի ուղղափառ հանգուցեալ դեմ։

Ահա այս գյուղի ժողովուրդն է, որ կազմում է Թիֆլիս քաղաքի թուլուղիների ամբողջ հասարակությունը, որից հարցնելու ժամանակ, թե ի՞նչ ազգից ես, բերանումը միշտ պատրաստ ունի «փռանկ» կամ «կաթոլիկ» բառերը.— Քշվառականը մինչև անգամ մոռացել է յուր ազգությունը...

* *
*

Պարսկաստանում սրից և վաղեմի մահմեդական հալածանքներից զերծ մնացած մի պատառ հայերին այս նոր և ավելի վտանգավոր եվրոպական որսորդներից ազատ պահելու համար գործ դրված միջոցները բոլորովին գոհացուցիչ չեն։ Որովհետև յուր եկեղեցուց հրաժարվիլ ցանկացող և դեպի այլադավանները հարվող մի հայի կրկին դեպի մայրենի փարախը դարձնելու համար՝ մի վարդապետի նզովք, բանադրանք և եկեղեցական արարողություններից զրկելու սպառնալիքը,— այդ բոլորը հին և փտած զենքեր են։ Հասկանալի է, թե ի՞նչ է, որ հային գրավում է դեպի մի օտար եկեղեցու գիրկ, և նորա ճարն անելու է։ Հայտնի բան է, որ փոքր ի շատե խելացի մարդը երբեք չի հեռանա յուր մայրենի եկեղեցուց. հեռանում են միայն տգետները, և նորանք էլ ոչ թե դավանաբանական ճշմարտություններ որոնելու համար, այլ անձնական հաշիվներ ունենալու համար։ Կամ նա որդի ունի; ցանկանում է, որ միսիոնարի մոտ ձրի կրթություն ստանա, կամ դատաստանական վեճ ունի, նորանցից պաշտպանություն է սպասում,[1] կամ աղքատ

[1] *Միսիոնարները յուրյանց դեսպանների և կոնսուլների զորությամբ կարողանում են մեծ դեր խաղալ յուրանց ժողովրդի քաղաքական կյանքի մեջ. նորանք մինչև անգամ կարողանում են փոխել տալ մի երկրի դատավորի, եթե նա յուրյանց նպատակներին հարմար չէր։*

է, փողի կարոտություն ունի, կամ վերջապես զանազան պատճառներով յուր եկեղեցուց զզված է։

Պարսկաստանի հայոց հոգևոր կառավարությունն այսպիսի մի բարձր նշանակություն ունի, որ եթե յուր պարտավորությունները խղճմտաբար կատարելու լինի, նա կարող է լիակատար բավականություն տալ յուր ժողովրդի պահանջներին, որ նա ամենևին դեպի այլադավան եկեղեցիները հարվելու ցանկություն չունենա։

Մեր ասածն ավելի շոշափելի կերպով ապացուցանելու համար, նախ խոսինք այն բանի վերա, թե ինչ նշանակություն ունի Պարսկաստանում հոգևոր կառավարությունը։

Պարսկաստանը յուր ծայրահեղ միապետական կառավարության մեջ դարձյալ չկարողացավ թուլացնել իսլամի հոգևոր—աստվածապետական զորությունը։ Մոլլան միշտ մնաց յուր բարձր նշանակության մեջ որպես կրոնի և սուրբ օրենքի ավանդապահ, որպես մեծ մարգարեի և նրա հաջորդների ներկայացուցիչ, որոնք յուրյանց ձեռքում ունեին ժողովրդի թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր իշխանությունը։ Այս պատճառավ մահմեդական հոգևորականությունը վայելում է խիստ ընդարձակ իրավունքներ ժողովրդի կյանքի մեջ։ Այս իրավունքներից չզրկվեցան և ոչ-մահմեդական ազգերի հոգևոր ներկայացուցիչներն յուրյանց ժողովրդի վերաբերությամբ։ Հայերի հոգևոր առաջնորդը համարվում է հայ ժողովրդի որպես եկեղեցիական, նույնպես և աշխարհային գլխավորը. տերությունը նորան է ճանաչում, որպես ազգի ներկայացուցիչ։ Նա իրավունք ունի միջամտություն գործելու հայերին վերաբերյալ բոլոր գործերի մեջ։

Մի այսպիսի իրավունք վայելում էր մի ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքը, բայց Կ. Պոլսի մտածող հայերն այնքան խոհեմ գտնվեցան, որ պատրիարքի կղերա-միապետական իշխանությունը փոխեցին սահմանադրական վարչության։— Դա մի արտոնություն էր, որ ազգը համարյա անգիտակցաբար ստացավ, այնժամանակվա թուրքաց կառավարության նեղ դրությունից օգուտ քաղելով։ Թեև սահմանադրությունը այն օգուտները չբերեց, որքան կարող էր և որքան սպասվում էր, որովհետև պոլսեցի պոռոտախոս էֆենդիներն այնքան գործ չշինեցին, որքան դատարկ աղմուկներ բարձրացրին, այսուամենայնիվ սահմանադրությունը դարձյալ կըմնա յուր արժանավորության մեջ, որպես մի ձանգոտված, բայց հատու զենք, որ լավ բանեցնողի ձեռքում կսրբվի և կրկին կստանա յուր նշանակությունը։

Այժմ Պարսկաստանի հոգևոր կառավարությունը նույն դրության մեջ է, ինչ դրության մեջ էր պատրիարքի իշխանությունը Կ. Պոլսում սահմանադրությունից առաջ։ Առաջնորդը յուր թեմի սուլթանն է. նա ինչ որ կամենում է, անում է առանց ոչ ոքի հաշիվ ու համար տալու։ Նա ստանում է յուր վիճակի յուրաքանչյուր ընտանիքից (ծուխից) մի նշանակյալ հոգևոր տուրք. նա ստանում է առանձին տուրք մկրտության, պսակի և թաղման համար։ Նա ստանում է վարձ տգետ քահանաներ ձեռնադրելու համար. նա ստանում է և քաղաքավարի «աջահամբույրներ», երբ մեկի դատաստանական գործը դիվանում շինում է, շիտկում է... Նա շատ բաներ է ստանում, և այդ բոլորն այլ խոսքով կոչվում է **հոգևոր պտուղ**[1]...

Բոլորը, ինչ որ ստանում է առաջնորդը, նրա անձնական սեփականությունն է, նա չունի յուր մոտ ոչ կոնսիստորիա և ոչ որևիցե վերադիտողատյան։—Նա վարվում է յուր ժողովրդի հետ այնպես, որպես կապալառուն յուր վարձած այգու հետ, որ եթե պտուղից չկարողանա ավելի շահել, կակսե ծառերի ճյուղերը կըտրտրել և ծածուկ վաճառել...

Թողնենք հարցի նյութական կողմը, դառնանք նորա վարչական նշանակությանը։ Շատ պարզ է, որ միապետությունը, մանավանդ հոգևոր կառավարության մեջ, ավելի բռնապետական կերպարանք է ստանում, երբ իրավունքի լավ կամ վատ գործադրությունը կախումն է ունենում միմիայն մի մարդու կամայականությունից։ Այստեղ գործերի ընթացքը կապված է կառավարող անձի բարոյական հատկությունների հետ, որովհետև նորա իշխանությունը սահմանափակված չէ, և նորա կամայականությունը թե՛ լավության և թե՛ վատության մեջ սահման չունի։ Քննելով մի քանի տասնյակ տարիների Պարսկաստանի հոգևոր առաջնորդների գործունեությունը, ավելի պարզ կերպով երևան է գալիս մեր ասածների ճշմարտությունը. նորանցից ոմանք բնավորապես տրամադրված լինելով դեպի հասարակաց բարին, թողել են բավական ազգօգուտ գործեր, իսկ ոմանք խիստ սև հիշատակներ... Բայց ոմանք եղել են բոլորովին անտարբերներ, ոչ լավն են գործել, ոչ վատը.—այսինքն նույնպես լավերի կարգն են անցնում. որովհետև հայի համար միշտ լավ մարդ է նա, որ վնաս չի տալիս, որպես ճշմարիտ մարդ է նա, որ գող չէ։ Հայը մարդկությունից շատ փոքր

[1] Վիճակային առաջնորդի ստացած հիշյալ հոգևոր արդյունքներից դուրս է այն վարձատրությունը, որ ստանում են քահանաները որպես վարձ յուրյանց եկեղեցիական ծիսակատարությանց համար։

ապահանջմունք ունի. նա չգիտե, որ գող կամ վնասակար չլինելը մեր անձնական պարտավորությունն է, և եթե մենք չենք գողանում, դրանով մի բարի բան չենք գործում։ Մտածության այսպիսի ուրամադրության մեջ գտնվելով մեր ժողովուրդը, նա յուր առաջնորդից ավելի մեծ բան չի պահանջում, նա գոհ է, երբ նա չլիներ գող և հափշտակող։— «Կիրակոսը լավ մարդ է, ասում է հայը, որովհետև Մարտիրոսի փողը նորա ձնոքն ընկավ, բայց չկերավ»։

Բայց նայելով այն դիրքին, որ Պարսկաստանում բռնած են հայոց առաջնորդները, նայելով այն արտոնություններին, որ նրանք վայելում են պետությունից, բոլորովին իրավունք ունինք պահանջել, որ նրանք վարվեցին համաձայն յուրյանց նշանակությանը. նրանք ժողովրդի բարին մտածեին, նորա ժամանակակից պահանջներին բավականություն տային և ոչ միայն յուրյանց քսակը հարստացնելու աշխատեին։ Բայց քանի որ առաջնորդի իրավունքները մի կանոնավոր ձևի մեջ դրված չեն, դոցանից և ոչ միևը սպասել կարելի չէ։

Ի՞նչ ելք կա։

Մեր կարծիքով պետք է հետևել այն օրինակին, ինչ որ արավ Թուրքիայի հայը, պատրիարքի միապետական իշխանությունը փոխելով սահմանադրական վարչության։ Պարսկաստանում դա փըրկարար միջոցներից ամենագլխավորն է։ Բայց հարցը նորանումն է, թե արդյոք հայերին Պարսկաստանում թույլ կտրվի՞ ունենալ ազգային առանձին սահմանադրական վարչություն։ Այդ մասին ոչինչ տարակուս չկա, քանի որ առաջին փորձը աչքի առջև ունինք։ Շատ տարի չէ (1873 թվին), որ Թեհրանի հայերը փորձ փորձեցին ունենալ ազգային սահմանադրական վարչություն, և բարձր կառավարությունը չմերժեց նոցա խնդիրքը, շնորհելով բոլոր արտոնությունները, ինչ որ պետք է մի ազգային ազատ սահմանադրական վարչության։ Բայց եթե գործը չգնաց, և համարյա յուր խանձարուրի մեջ մեռավ, պատճառն այն էր, որ գործիչ անձինք պատրաստված չէին, նրանք սկսեցին և թողեցին, առանց շարունակելու համբերություն ունենալու։ Բացի դրանից, Թեհրանը թեև Պարսկաստանի մայրաքաղաքն է, բայց հայության կենտրոնը չէ, մի այսպիսի գործ պետք էր հիմնել այն տեղում, ուր հայերն ավելի խիտ բնակչություն ունին, ուր նոքա յուրյանց զարգացումով ավելի բարձր են, ուր նոցա նյութական դրությունը ավելի հաջող պայմանների մեջ է։ Այդ մասին ավելի հարմար է Աստրպատականը, և Դավրեժ քաղաքը կարող է նորա կենտրոնը լինել։

Մենք համոզված ենք, որ ազգային սահմանադրությունը սկզբում մի նշանավոր օգուտ չի կարող բերել նաև Ատրպատականում ժողովրդի անպատրաստ լինելու համար։ Դա կլիներ միայն սկսել գործը յուր ժամանակից առաջ, որ անհմուտ գործադրողների ձեռքում խեղաթյուրվելով և այլանդակվելով, մի ավելի հրեշավոր բան պիտի դառնար։

Բայց մենք հայերս առհասարակ նախապատրաստված մարդիկ չենք, մենք սովորում ենք գործել գործի մեջ. օրինակ, մեզանում վարժապետը սովորում է մի առարկա, նույն առարկան ծուռ ու սխալ կերպով աշակերտներին դաս տալով, բժիշկը սովորում է բժշկություն, ավելի մեծ թվով մարդիկ կոտորելով. լրագրապետը սովորում է գրել, հիմար թերթեր դուրս տալով.—ամեն գործ մեզանում այսպես է առաջ գնում...

Թեև մենք ընդդեմ ենք դոնքիշոտության, թեև մենք գիտենք, որ ամեն մի վերանորոգություն որևիցե ժողովրդի կյանքի մեջ լինում է ավելի հիմնավոր և ավելի օգտավետ, երբ ժողովուրդը հասնում է նորան յուր կանոնավոր զարգացումով, հաջորդաբար և ոչ թռիչքներ գործելով,—այսուամենայնիվ, Պարսկաստանում ազգային սահմանադրություն ունենալու խնդրի մեջ մենք խորհուրդ կըտայինք տեղային հայերին՝ ամենայն վստահությամբ դիմել այս գործին։ Ժողովուրդը դորանով շահած կլիներ երկու բան՝ առաջին կանոնավոր ձևերի մեջ կդներ տեղային հոգևոր կառավարությունը, երկրորդ, որ նա առայժմ ստացած կլիներ մի արտոնություն, որ մի քանի տասնյակ տարիներից հետո գուցե դժվար կլիներ ձեռք բերել...

Թեև բավական անբնական երևույթ է տիրող ազգի անկարգ միապետական կառավարության մեջ մի մասնավոր ազգի ունենալ առանձին սահմանադրական վարչություն, բայց այլապես լինելի կարելի չէ, քանի որ որպես Թուրքիայում, նույնպես և Պարսկաստանում տիրապետող ազգերը խիստ թույլ և դանդաղ կերպով են շարժվում, իսկ քրիստոնյաները համեմատաբար խիստ առաջ են գնացած. նորանք սպասել կարող չեն, մինչև մահմեդականները դուրս գալով վաղեմի նախապաշարմունքներից, նորեն ոտք կկոխեին առաջադիմության շավղի վերա։

Բայց որպես և լինելին, պետք է այսքանով ևս գոհ լինել, որ պարսիկ կառավարությունը այժմ յուր ոչ մահմեդական ազգերին չի խնայում որևիցե արտոնություն, որ կարող էր նորանց հանգըստությանը և առաջադիմությանը նպաստել։ Ինչո՞ւ օգուտ չքաղել

ժամանակի բերմունքից, քանի որ գիտենք, թե պետությունները որքան քաղաքակրթվում են (իհարկե կեղծ քաղաքակրթությամբ), որքան զարգանում են, այնքան նրանք ժլատ են լինում յուրյանց հպատակ մանր ազգերին ազատ արտոնություններ շնորհելու...[1]

* *
*

Այժմ դառնանք այն հարցին, թե արդյոք Պարսկաստանի հայերը ցույց տալի՞ս են որևիցե ձգտողություն դեպի ժամանակակից կրթությունը, կամ նոցա մեջ երևո՞ւմ են առաջադիմության նշաններ։

Արդարև, Պարսկաստանի հայի անցյալը անցել է խիստ տխուր հիշատակներով, և նորա ներկան թեև այնքան նախանձելի չէ, բայց նա արդեն պատրաստվում է մի փառավոր ապագայի համար։ Օրինակ առնենք Դավրեժի հայերը և քննենք այս քաղաքի մեբայնոց մտավոր գործունեությունը։ Սկսենք դպրոցից։ Դավրեժի ազգային դպրոցի հիմքը դրեց արժանահիշատակ Սահակ եպիսկոպոս Սաթունյանը 1850 թվին։ Նա կառույց դպրոցի շենքը և ժողովեց այնտեղ հայ մանուկները, որոնցից շատերը մինչև այն օրը մի տիրացուի մոտ այբբեն սովորելու բախտից ևս զուրկ էին։ Սաթունյանը կանգնեց նույն դպրոցի մոտ և մի հոյակապ շինվածք, որպես առաջնորդարան, և առաջնորդի «դուռը» այն օրից պաշտոնական կերպարանք ստացավ, երբ նորանից առաջ անհայտ և բոլորովին աննշան մի բան էր։

Ցավալին այն է, որ հիշյալ հիմնարկություններից հետո Սաթունյանի կյանքը կարճատև նշավ, այդ պատճառավ նա չկարողացավ կատարել յուր խիստ ցանկալի փափագը, այն է՝ դպրոցի գոյությունը պահպանելու համար նորա նյութական դրությունը մշտապես ապահովել։ Բայց նորա մահից հետո դարձյալ մնաց մի գումար, որ դպրոցի սկզբնական հիմնադրամն դարձավ։ Սաթունյանի մահից հետո մինչև այժմ 26 տարվա միջոցում միմյանց հաջորդեցին 6 առաջնորդներ։ Այս «նորին սրբազանություններից» և ոչ մեկը մի քար անգամ չդրեց այն շինվածքի վերա, որի հիմքը

---

[1] *Մենք խոստանում ենք առանձին հոդվածներով ավելի մանրամասն կերպով բացատրել այս հարցը, ցույց տալ նորան իրագործելու միջոցները, և Պարսկաստանում նորան որպիսի կերպարանք տալու ձևը։*

դրել էր Ատրպատականի արժանահիշատակ բարերարը։ Այլ խոսքով, դպրոցը դուցա օրերով ոչ միայն յուր ուսումնական և նյութական վիճակի մեջ առաջ չգնաց, այլ հետզհետե ընկնիլ սկսավ։ Սաթունյանը չինեց դպրոցը, առաջնորդարանը և այլ ազգօգուտ հիմնարկութիւններ,— բոլորը յուր փողով, այսինքն՝ այն փողով, որ նա ստանում էր վիճակից որպես «հոգևոր պատուղ»։ Բայց նա ժողովրդից ստացածը կրկին ժողովրդին ետ դարձրեց, յուրյան չսեփականեց։ Նույն վիճակից նորա հաջորդներն ստանում էին նույնքան, բայց այս վերջիններս «հոգևոր պատուղը» յուրյանց չիբը դրին...

Ճշմարիտ է, եթե Սաթունյանի հաջորդներից ամեն մեկը մի մասնավոր գումար ավելացրած լիներ դպրոցի դրամագլխի վերա, դպրոցը բոլորովին նյութապես ապահովված կլիներ, բայց ընդհակառակն, նորանք այնքան անփույթ գտնվեցան, որ չաշխատեցին մինչև անգամ հանգուցյալի թողած գումարը օրինավոր կերպով շահեցնել, այլ այս և այն մարդու ձեռքը ընկնելով, համարյա ոչընչացավ...

Թողյալ դպրոցի մի այսպիսի անմխիթար նյութական վիճակը, նորա ուսումնական կամ կրթական մասը սարսափելի այլանդակութեան մեջ էր։ Երևակայեցեք ձեզ մի վարժատուն, ուր վարժապետը բոլորովին հարբած է ներս մտնում, աթոռի վերա նստած ժամանակը նորա քունը տանում է,— աշակերտները այս բախտավոր րոպեին էին սպասում։— Նորանք հավաքվում են վարժապետի շորս կողմը, մինը պոչին թել կապած ճանճ է թողնում նորա երեսի վերա, մյուսը մորուքի հետ խաղում է, երրորդը այս խոսքերն է ասում. «վարժապե՛տ, վարժապե՛տ, մի փիալա էլ (բաժակ) համեցե՛ք»։ Երևակայեցեք ձեզ մի վարժատուն, ուր աշակերտը առավոտից մինչև իրիկուն լսում է յուր դաստիարակից այսպիսի խոսքեր. «շուն շան որդի»—«հարամ զադա»—էշի լակոտ» և այլն,— և միշտ ընդունում է յուր մարմնի վերա նորա ձեռքի անտանելի հարվածներ։ Երևակայեցեք, վերջապես, մի վարժատան դրու-

---

[1] Իբրև բացառություն, խղճմտանքի ընդգեմ կլիներ չհիշել Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանցին, որո առաջնորդության օրերով դպրոցը բավականին ծաղկիլ սկսավ, և նորին սրբազանությունը, յուր սեփական փողից մինչև 6000 ռուբլի ծախսելով, անձամբ Թեհրան գնաց, նորին մեծ. շահին ներկայացավ, և դպրոցի համար արքունի հրովարտակ (ֆերման) և կառավարությունից 250 թուման մշտական օժանդակություն ստացավ, որ մինչև այսօր շնորհվում է դպրոցին։

թյուն, ուր ուսման ամբողջ շրջանը «Սաղմոսից» և «Ալլելուարանից» այն կողմ չի անցնում.....

Ի՞նչ էր այս բոլոր անկարգությանց պատճառը։

— Այն, որ դպրոցը գտնվում էր եկեղեցական անմիջական իշխանության ներքո և նա «եկեղեցականացրած» էր...

Բայց Սաթունյանը այս նպատակով չէր շինած դպրոցը. նա չդրոշմեց դպրոցի վերա «հոգևոր» անունը. նորա դպրոցը ճիշտ ժողովրդական էր. նա շինված էր ժողովրդի փողով և ժողովրդի համար և Սաթունյանն ինքը ժողովրդական մարդ էր. նա ոչինչ առիթ չուներ յուր դպրոցը կնքել «հոգևոր» անունով.....

Պարսկաստանում թե՛ աշխարհականը և թե՛ հոգևորականը կարող են մինչև անգամ համալսարան հիմնել առանց ոչ ոքից հարցնելու, մեր բարեսիրտ կառավարությունը այսպիսի բաների մեջ մտնել չի սիրում։

Այո՛, դպրոցը բոլորովին ժողովրդական էր, բայց նորան եկեղեցականացրին, և եկեղեցականացնելով մեռցրին....

Ժողովուրդն այս հասկացավ, բայց հասկացավ խիստ ուշ.... Նա ազատեց առաջնորդի ձեռքից դպրոցի միայն կմախքը... նորան պետք էր նորից շունչ և հոգի տալ,— և այդ վերջինը կարոտ էր դրամի։

Ժողովուրդը, թեև աղքատ, բայց եռանդուն դեպի հասարակաց բարին, սկսեց յուրաքանչյուրի կարողությանը համեմատ հավաքել մի օժանդակություն, դպրոցի նյութական վիճակը բարվոքելու համար[1]։ Բարերար անձանց նվերներն հասան մինչև մի նշանավոր գումարի, որի տոկոսով դպրոցը կարողացավ ունենալ առաջվա տիրացու վարժապետների տեղ մի տեսուչ և յոթն վարժապետներ։ Դպրոցի պահանջների մեջ մտան երկրի պահանջներին համեմատ բացի հայերենից, ֆրանսերեն, ռուսերեն և պարսկերեն լեզուները, և գիտությունից զանազան առարկաներ։ Դպրոցն ունեցավ 5 դասատուն, և բավականին բարեկարգ ձևի մեջ մտավ։ Նորա կառավարությունը հանձնվեցավ ժողովրդից ընտրված հոգաբարձության, որո եռանդուն գործունեությունը առաջին տարվա ընթացքում ցույց

[1] Այս վերանորոգությունը եղավ 1874 թվին Ատրպատականի այժմյան վիճակավորի՝ Անդրեաս եպիսկոպոսի առաջնորդության առաջին տարվա մեջ։ Պետք է հրապարակավ շնորհակալություն հայտնել նորին սրբազնությանը, որ նա ոչ միայն չընդդիմացավ ժողովրդի կամքին, այլ ժամանակի պահանջների հետ հաշվվելով, յուր կողմից ևս բավական օգնեց ժողովրդին դպրոցի գործությունը բարվոքելու համար և քաշալերեց նոցա եռանդը։

տվեց յուր պատկերը։ Առաջին հարցաքննությունը, որ եղավ 1875 թվին, գրավեց մինչև անգամ քաղաքում գտնված եվրոպացիների և եվրոպական կոնսուլների ուշադրությունը, որոնք յուրյանց ներկայությամբ պատվեցին հայ մանուկների ուսման հարցաքննությունը։ Ներկա էր նաև քաղաքի արտաքին գործոց վեզիրի փոխանորդը, որ մինչ այն աստիճան գոհ մնաց, որ նվիրեց դպրոցին մի նշանավոր գումար։

Հիշյալ վերանորոգությունից հետո Դավրեժո ազգային դպրոցը թեև տակավին ունի յուր ինչ-ինչ թերությունները, բայց երկրի դրության նայելով նա կարողացել է դպրոցների կատարելատիպը համարվիլ։ Իբրև ապացույց՝ ես հարկավոր եմ համարում հիշել, որ շատ ժամանակ չէ Դավրեժի արքունի դպրոցի[1] տեսուչը այցելության եկավ մեր դպրոցը, դա էր գեներալ Միրզա-Ջավադ-խանը. գիտե գաղղիերեն և բավականին կրթյալ երիտասարդ է։ Նա տեսնելով հայոց դպրոցը շատ գոհացուցիչ գտավ նորա կազմակերպությունը և պահանջեց ուսումնարանի ծրագիրը։ Այս այցելությունից հետո մի քանի շաբաթ հազիվ էր անցել, որ պատվիլի տեսուչը ուղևորվեցավ դեպի Թեհրան, այն նպատակով, որ այնտեղ աշխատե, գուցե կարողանա փոխել տալ Դավրեժի արքունի դպրոցի ծրագիրը, որ տրված էր լուսավորության վեզիրից։

Բայց մի ուրախալի երևույթ այն է, որ դպրոցը, մանավանդ հայ դպրոցը գրավում է մահմեդական բարձր հոգևորականի ուշադրությունը։ Այս օրերում Դավրեժի մեծ մուշտայիդը, որ կոչվում է Հուջաթ-ուլ-իսլամ (իսլամի հաստատությունը) յուր այցելությամբ նույնպես պատվեց մեր դպրոցը։ Նորին սրբազանությունը մանեկավ բոլոր դասատները, ամենի մեջ հարցրեց ուսանելի առարկաները, քննեց, թե որքան աշակերտները առաջ են գնացած պարսկե-

---

[1] Խոսանալով ուրիշ անգամ ավելի մանրամասն գրել Դավրեժի արքունի դպրոցի մասին, առայժմ այսքանը կասեմ, որ նա ամբողջ Պարսկաստանում գտնված երկու արքունի դպրոցներից երկրորդն է. հիմնվեցավ այս տարի։ Ինչպես մի մարդ երկար ժամանակ սոված մնալով, ձեռն ընկած կերակուրները մի անգամով ուզում է լափել, այնպես էլ եվրոպական կրթության պարսիկները հիմնելով եվրոպական ձևով մի դպրոց (!!!), կամենում են բոլոր ուսմունքները և գիտությունները նորա մեջ ամփոփել։ Այժմ Դավրեժի անգրանիկ արքունի դպրոցի մեջ ինչ ասես դաս են տալիս.— այբ-բեն, փիլիսոփայություն, բժշկություն, ճարտարապետություն, գինվորական կրթություն և շատ այսպիսի ուրիշներ... Այսպիսի մի դպրոցի հետ կարող է համեմատվիլ միայն... և մի հռչակավոր կախարդի (անունը մոռացել եմ) ներկի կարասը, որտեղից նա ամեն գույներ դուրս էր բերում,— կարմիր, սպիտակ, դեղին, սև, կանաչ և այլն։

րենի մեջ և յուր հեռանալու ժամանակ հայտնեց յուր կատարյալ համակրությունը, թե ինքը շատ ուրախ է տեսնելով, որ հայերը կրթության համար այդչափ հոգս են տանում, քանի որ պարսիկները բոլորովին անփույթ են այդ մասին։

* *
*

Այս բոլորից հետո ծագում է մի խնդիր, թե արդյոք Դավրեժի ազգային դպրոցը պիտի կարողանա՞ այս ընթացքը շարունակել, թե ո՛չ։

Ցավելով պետք է պատասխանել, թե՝ ո՛չ, չպիտի կարողանա շարունակել։ Որպես հիշեցինք դպրոցը կառավարվում է գլխավորապես այն գումարի տոկոսով, որ վերջին անգամ բարերար անձինքներից հավաքվեցավ որպես դրամագլուխ։ Այս դրամագլուխը կազմվելուց հետո երկու տարվա հաշիվները ցույց տվին, որ դպրոցի մուտքը չի ծածկում նորա ելքը, այսինքն՝ յուրաքանչյուր տարի ծախսերի մեջ բավականին բաց է մնում և այս բացը ծածկվում է դրամագլխից պակասեցնելով։ Մուտքի և ելքի մի այսպիսի զգալի անհավասարակշռությունն առիթ է տալիս այժմեն մտածել, որ յուրաքանչյուր տարի դրամագլխից անդադար պակասելով, վերջապես կպառավի նա և դպրոցը փակվելու վիճակի կենթարկվի։ Դա շատ ցավալի կորուստ կլիներ, քանի որ մտածում ենք, թե այս դպրոցը բարձր նշանակություն ունի ոչ միայն Ատրպատականի նահանգի համար, այլև ամբողջ Պարսկաստանի համար։

Ի՞նչ պետք է արած։

Զանազան մտածողներ, զանազան միջոցներ են առաջարկում։ Ոմանք ասում են Պարսկաստանի հայոց վիճակը կարեկցական է դիմենք ուրիշ երկրներում հարուստ բարերարների օգնությանը, գուցե նորանք օգնեն մեզ։ Լա՜վ երազ է, եթե բարին կատարի...[1]։ Ոմանք ասում են՝ կրկին ժողովրդից օժանդակություն հավաքենք։—

---

[1] *Շատ անմխիթար մի երևույթ է՝ տեսնել, որ հայոց հարուստները բոլորովին անգգա են դեպի հասարակաց գործը։ Դավրեժի ազգային դպրոցի մասին շատ գրվեցավ լրագրներում, մանավանդ «Մեղուհս» և «Մշակիս մեջ։ Բայց մինչև այսօր չգտնվեցավ մի անձն, որ հետու տեղից մի մասնավոր բան նվիրած լիներ այս դպրոցին։ Ջենք ասում մեծ գումարներ, այլ մինչև անգամ փոքր բաներ, օրպիսի են թուղթ, գրիչ, գրքեր, պատկերներ, նկատողական ուսման համար և այլ ուսումնական պարագայք։ Որովհետև դպրոցը ոչինչ վճար չի առնում աշակերտներից և մինչև անգամ թուղթը, գրիչը և գրքերը նրի է տալիս նորանց։*

Ժողովուրդը աղքատ է, նորան շատ ձանձրացնել չի կարելի, նա որքան կարող էր տվավ։ Ոմանք ասում են,— թե աշակերտների վերա վճար նշանակենք։— Այն ժամանակ աղքատ ծնողներն յուրյանց որդիքը կհանեն և բողոքականների դպրոցը կտան, ուր ամեն ինչ ձրի է։

Ոմանք ասում են, թե դպրոցի ուսումնական շրջանը նեղցնենք, դասատներից մի քանիսը փակենք, ուսուցիչների թիվը պակասեցնենք, որպեսզի ծախսերը փոքրանան,— այն ժամանակ դպրոցը կկորցնի յուր նշանակությունը։ Վերջապես շատ տեսակ խոսքեր են ասվում, բայց մենք դոցա և ոչ մեկը նպաստավոր չենք գտնում։

Ապա ի՞նչ պետք է արած, կհարցնեն մեզ։

Նախ քան ուղղակի պատասխանելը մենք հարկավոր ենք համարում կրկին վերադառնալ դպրոցի սկզբնավորությանը և մեր կողմից առաջարկել մի քանի հարցեր,— ո՞վ հիմնեց այդ դպրոցը։ —Դպրոցը հիմնեց Սաթունյան եպիսկոպոսը։—Ի՞նչ գումարով հիմնեց։—Նա հիմնեց Ատրպատականի վիճակից ստացած հոգևոր արդյունով։—Այժմ այն արդյունքն ո՞ւր է մտնում։— Նա մտնում է այժմյան առաջնորդի քսակը...

Եթե այդ քսակի հարցը վճռվելու լինի, ամեն ինչ պարզված է։

Խոսելով Պարսկաստանի հոգևոր կառավարության մասին, մենք արդեն ցույց տվինք, թե որպիսի աղբյուրներից է գոյանում առաջնորդի «հոգևոր արդյունքը» կամ այն եկամուտը, որը կոչվում է «հոգևոր պտուղ»։ Մենք դարձյալ կհիշենք։ Այս «պտուղն» ստացվում է այն հարկերից, որ առաջնորդը դրել է յուրաքանչյուր տան վերա։ Այս հարկերը նույնպես ստիպողական են, որպես արքունի հարկերը. եթե յուրյանց ժամանակին չստացվին, գործ կդրվին ազդու միջոցներ, որպիսի են՝ փայտ, ծեծ և այլն։ Այս «պտուղն» ստացվում է մկրտության, պսակի և թաղման համար, որ նույնպես եթե յուր ժամանակին չվճարվի, հիշյալ եկեղեցական արարողությունները կմնան անկատար։ Այդ «պտուղն» ստացվում է զանազան աղբյուրներից, որոնք այնքան անվայել են, որ նրանց շոշափելու ցանկություն չունինք... Բացի հիշյալ «պտուղներից», կա մի ուրիշ ևս, որ կոչվում է պրոռսհարկ։ Դա մտնում է Մայր Աթոռի (էջմիածնա) գանձարանը...

Պարսկաստանի հարստահարությանց տակ ճնշված մի ժողովրդի կրկին ծանրաբեռնել այսպիսի հոգևոր տուրքերով, վերջին աստիճանի անխղճություն է, բայց քանի որ ժողովուրդը ստիպված է տալու, թող տա, մենք նորա ջերմեռանդությունը վիրավո-

յելու միտք չունինք։ Բայց մտածո՞ւմ է արդյոք ժողովուրդը, թե յուր տվածը որտեղ է մտնում։— Մտնում է առաջնորդի քսակը...

Դարձյալ քսակի խնդիրը մեջ մտավ։

Հայերի մեջ, որքան հիշում եմ, Պարսկաստանի պես չկա մի վիճակ, որ հոգևոր առաջնորդը, մի արեւելյան միապետի նման, ազատ և անձնիշխան կերպով ժողովրդի վերա հարկեր նշանակեր և այս ու այն եկեղեցական արարողությանց համար առանձին տուրքեր ստանար։ Ջանազան երկրներում կան զանազան ձևով հոգևոր վարչություններ, բայց նոցա և ոչ մեկը Պարսկաստանի ինքնահաճ կամայականությունը չունի։ Մի տեղ՝ օրինակ, Ռուսաստանում, թեմերը ունեն յուրյանց վիճակային կոնսիստորիան, ուր տնօրինվում են բոլոր եկեղեցական գործերը և կանոնավոր հաշվի ու համարի տակ են ընկնում։ Վիճակային հոգևոր արդյունքը նույնպես տնօրինվում է կոնսիստորիայի ձեռքով և յուր նշանակությանը համեմատ գործի է դրվում։ Առաջնորդը, որպես վիճակային հոգևոր կառավարության ներկայացուցիչ, իրավունք չունի գոյացած արդյունքից մի կոպեկ անգամ յուրյան սեփականել։ Նա ունի յուր համար նշանակած ռոճիկ, որով ապրում է։ Կան ուրիշ տեղեր, օրինակ, Տաճկաստան, ուր վիճակային հոգևոր ատյանը յուր ձեռքում ունի վիճակի կառավարությունը։ Բայց Պարսկաստանում չկան դոցա և ոչ մեկը. այստեղ կառավարում է միմիայն առաջնորդը և ամեն ինչ կախում ունի միայն նորա կամքից..

Մի՞թե կարելի է այդ։

Մենք ամենևին չենք դատապարտում այս երևույթը, թե ինչո՞ւ է եղած այսպես. մենք գիտենք, որ Պարսկաստանի միապետության մեջ մի այլ ձևով հոգևոր կառավարություն կազմվել կարող չէր։ Մենք գիտենք, որ հայ կղերը, երբ ազատ է, նա բռնակալ է, և եթե այս կամ այն երկրում սահմանափակված է նորա կամայականությունը, այդ մասին պետք է գոհ լինել բարձրագույն տիրող կառավարությունից։

— Այո՛, հայ կղերը սիրում է ազատություն, բայց նա ցանկանում է ազատությունը միմիայն յուր համար։ Այն ցնո՞րք է, որ շատ անգամ ասում ենք՝ «հայոց եկեղեցին ժողովրդական է». եթե նա մի ժամանակ ժողովրդական էր, դա ուրիշ հարց է, իսկ այժմ այդ չի երևացնում...

Ի՞նչ ելք կա։—

Պետք է վերանորոգել, պետք է ոչնչացնել հին ձևը, և բոլորովին նոր կերպարանք տալ նորան։

Արդարև, մենք սկզբում խոսելով Պարսկաստանի հոգևոր կառավարության բարեկարգելու մասին, առաջարկեցինք սահմանադրական վարչություն. այո՛, բախտավոր կլիներ Պարսկաստանի հայը, եթե մեր երազն իրագործվեր... Բայց քանի, որ գիտենք մեր այստեղի ազգայնոց անհոգությունը, առայժմ մեր կողմից բոլորովին անրջային ցնորք կլինի առաջարկել մի այսպիսի ձեռնարկություն։ Առհասարակ հայերն ապագա պատրաստելու մեջ խիստ անփույթ են, և մանավանդ Պարսկաստանի հայը...

Ուրեմն ի՞նչ պետք է անել—բարեկարգել վիճակային հոգևոր կառավարությունը և նորան յուր այլանդակություններից կանոնավոր ձևերի վերածել,—դա առաջին քայլն է դեպի սահմանադրություն, դորանով ուղին հարթվում է նույն նպատակին հասնելու։

Բայց ո՞րպես բարեկարգել,— այստեղ է գլխավոր հարցը։

Բայց որովհետև բարեկարգության հարցը մի այսպիսի բազադրյալ խնդիր է, որ այժմյան մեր հոդվածի համառոտությունը չի ներում նորան ավելի մանրամասնաբար ընդարձակելը, մենք խոստանում ենք բացատրել դորան մի շարք հոդվածներով։ Իսկ առայժմ կասենք մի քանի ընդհանուր խոսքեր։

Մենք բոլորովին ընդդեմ ենք կոնսիստորիային, կամ մտցնել Պարսկաստանում այն ատենական կազմակերպությունը, որ բաղկացած է լինում միմիայն եկեղեցիականներից՝ որևիցե առաջնորդի նախագահությամբ։ Եվ որովհետև Պարսկաստանի հոգևոր կառավարությունը միացնում է յուր մեջ թե՛ հոգևոր և թե՛ աշխարհային իրավունքները, այս պատճառավ, և նորա կենտրոնական վարչությունը պետք է կազմված լինի թե՛ հոգևորականներից և թե՛ աշխարհականներից.— առաջինները որպես եկեղեցու ներկայացուցիչներ, իսկ վերջինները որպես ժողովրդի ներկայացուցիչներ։ Վիճակային առաջնորդը կլինի ատյանի նախագահ։ իսկ գործերը կվճռվեն ժողովի ընդհանուր հավանությամբ։ Այն ժամանակ բոլոր վիճակային «հոգևոր արդյունքը», որ ստացվում է այլևայլ անուններով, կանոնավոր սահմանի մեջ դրվելով, կհավաքվեն և կմտնեն ազգային կենտրոնական սնդուկը և ոչ առաջնորդի բսակը, որ մինչև այժմ լինում էր։

Հիմա տեսա՞ր. ընթերցող, բսակի հարցը մասամբ վճռվեցավ. բայց կարելի է դու հարցնես՝ ապա առաջնորդն ինչո՞վ պետք է ապրի։— Մենք կսահմանենք նորա համար մի որոշյալ ռոճիկ, որքան կրավականանա մի եկեղեցականի համեստ կեցությանը։ Այսպիսով, մենք շահած կլինենք երկու բան. առաջին՝ վիճակային հո-

գևոր կառավարությունը կարգ-կանոնի մեջ կդրվի, երկրորդ՝ վիճակային «հոգևոր արդյունքը» առաջնորդի քսակից դուրս կորզելով, ավելի ազգօգուտ հիմնարկությանց վերա գործ կածվի։

Ով որովհետև բոլոր մեր այս խորհրդածությունները առաջ եկան Դավրեժու ազգային դպրոցի նյութապես ապահովված չլինելու հարցից, այժմ հարկավոր ենք համարում կրկին վերադառնալ դեպի նույն հարցը։

Վիճակային բոլոր «հոգևոր արդյունքը» հավաքվեցավ կենտրոնական սնդուկի մեջ, առաջնորդի ոռճիկը տվինք, առենական ծախսերն արինք, այժմ սնդուկի մեջ մնում է ավելացած փող[1]։ Ի՞նչ անենք այդ փողը։— Այդ փողով ահա Դավրեժի ազգային ուսումնարանը բոլորովին կապահովենք, և նորա ուսումնական շրջանը ավելի կընդարձակենք։

Այստեղ առաջ է գալիս մի նոր խնդիր, թե ինչո՞ւ միայն Դավրեժի ազգ. ուսումնարանը պետք է շահվի կենտրոնական սնդուկից, իսկ մյուսները զուրկ մնան։

Մյուսները զուրկ չեն մնա, նորանք նույնպես կշահվեն, բայց ուրիշ կերպով։ Դավրեժո ազգային դպրոցը, որպես ամբողջ Ատրպատականի կրթության կենտրոնական աղբյուր, հանձն կառնե զանազան գավառներից ընդունել յուր մեջ աշակերտներ, որոնք կապահովվին ուսումնարանի ծախսով և յուրյանց կրթությունը ստանալուց հետո, կվերադառնան յուրյանց հայրենիքը, այնտեղ կլինեն վարժապետներ կամ քահանաներ։ Այսպիսով գյուղական ուսումնարաններն ազատված կլինեն հիմար տիրացուներից, և գյուղական եկեղեցիներն ազատված կլինեն տգետ քահանաներից։

Բայց բացի կենտրոնական սնդուկից ես մոռացա հիշել արդյունքի մի ուրիշ աղբյուր ևս, որից Դավրեժի ազգային դպրոցը նույնպես կարող է շահվիլ։ Ես, վերևում խոսելով վիճակային այլևայլ հոգևոր տուրքերի մասին, ասացի թե ժողովրդից հավաքվում է մի առանձին տուրք ևս, որ կոչվում է «աթոռահարկ», թե դա մըտնում է էջմիածնա գանձարանը։ Թողյալ այդ, Ատրպատականի երկու վանքերի, այսինքն՝ ս. ս. Թադևոս և Նախավկայի վանքերն ու եկամուտներն դարձյալ նույն գանձարանն են մտնում, էջմիածին են ուղարկվում...

---

[1] Պարսկաստանի երկու վիճակների, այսինքն Ատրպատականի և Արաշխատանի հոգևոր արդյունքն այնպիսի մի գաղտնիք է, որ մինչև այսօր խորին կերպով պահված է եղել քեմական առաջնորդների մոտ. ուրեմն նորա վերաքանութեան վերա ճիշտ դատել անկարելի է, քանի որ աչքի առչև չունինք որևիցե գրավոր ապացույց։

Դիցուք թե ժողովուրդը տգետ չերմեռանդ է, և չէ հասկանում էջմիածինն ի՞նչ իրավունքով է քարշում Պարսկաստանից աղքատ և հազարավոր պետքեր ունեցող ժողովրդի արծաթը։ Ջմռռանաք, որ երկու վանքերից մեկը, այսինքն՝ սուրբ Նախավկայի վանքը ունի մի ամբողջ գյուղ Դարաշամբ անունով. այս գյուղը պատկանում է վանքին, որ նվիրված է պարսից մեծ իշխան Նախը-ուլ-Սալթանա-յից[1]։ Կարծեմ նորին բարձրությունը այն մտքով չնվիրեց այս գյուղը վանքին, որ նորա արդյունքը էջմիածինը տանե. Նա նվիրեց պարսից տերության մեջ գտնված մի վանքի և Պարսկաստանի հայ ժողովրդի պետքի համար գործածելու։

Բացի վերոհիշյալներից կան և ուրիշ կալվածներ ևս, որոնց արդյունքը էջմիածինն է տանում, որոնք, բոլորն էլ ամենայն իրավամբ, պետք է սեփականել Դավրեժի ազգային դպրոցին[2]։

Բայց ո՞վ պետք է իրագործե մեր առաջարկած բարեկարգություններ։— Մենք պատասխանում ենք.— ժողովուրդը։

Այո՛, ժողովուրդը, որովհետև նա է յուր իրավունքների պաշտպանը և տերը. նա պետք է բողոքե յուր վերա գործ դրված անիրավությանց դեմ, և նորա ձայնը այնքան ուժ և զորություն ունի, որքան նորա պահանջը իրավացի է և արդար։

Բայց մեր ժողովուրդը գիտե՞ այդ։— Ո՛չ, դժբախտաբար նա այնպիսի մի թմրյալ վիճակի մեջ է ապրում, որ գուցե չի էլ զգում,

---

[1] Նախը-ուլ-Սալթանա՝ նշանակում է թագավորի փոխանորդը կամ երկրորդականը. այսպես կոչվում էր Աբբաս-Միրզա մեծ իշխանը, որ յուր ժամանակին Պարսկաստանի Բիամրկն էր։ Դա ռուսաց պարսից հետ պատերազմի ժամանակը Պարսկաստանի ամբողջ արևմտյան մասի փոխարքան էր, որ կապից ռուսների հետ Թուրքմենչայի դաշնագրությունը։ Նույն ժամանակ, երբ Պարսկաստանի հայերն սկսեցին գաղթել դեպի Ռուսաստան, Աբաս-Միրզան ամենայն հնարք ի գործ էր դնում, որ արգելե գաղթականությունը. այս պատճառով նա շնորհեց հայերին շատ արտոնություններ, օրինակ, Դավրեժի հայերին բոլորովին ազատ կացուց հարկավորություններից, մելիքներին, տանուտերերին մշտական ռոճիկներ սահմանեց, վիճակային առաջնորդին նույնպես թոշակ նշանակեց, նշանավոր եկեղեցիներին և վանքերին կալվածքներ շնորհեց, որոնց թվումն է և ս. Նախավկայի Ղարաշամբ գյուղը։

[2] Մենք յուսմ ենք, որ Դավրեժի ազգային դպրոցի հոգաբարձությունն արդեն առանձին աղերսագրով դիմել է նորին վեհափառության կաթողիկոսին, խնդրելով, որ ևս ևս ևս

Թե ինքը հարստահարված է... Դուցե նա համոզված է, որ գործերի կարգը հենց այնպես էլ պետք է լիներ, որպես առաջուց դրված է, որպես կա... որովհետև ինքը նորան սովորած է, ինչպես ու սովորած է, թե հորանջելու միջոցին պետք է բերանը խաչակնքել. եթե պատճառը հարցնես, կասե, իմ պապս էլ այսպես էր անում...

Բայց ամեն տեղ ամբոխը չէ, որ ներգործում է, նա շատ անգամ մնում է անտարբեր, ներգործում է միայն նորա ընտրյալ մասը.— մտածողները և հասարակական բանվորները, ով մենք այդ ունինք, դորանցից զուրկ չենք։ Մեզանում ևս կան տղամարդիկ, որոնք թե՛ խոսքով և թե՛ գործքով պատրաստ են պատերազմել ճշմարտության համար... Թողյալ այդ, ժողովուրդն արդեն ունի յուր ներկայացուցիչները,— դա է Դավրեժո ազգային հոգաբարձությունը. նորա ոչ միայն սեփական պարտքն է պաշտպանել ժողովրդի շահերը, այլև իրավունք ևս ունի։

Հուսով ենք, որ Ատրպատականի այժմյան թեմակալ Անդրեաս եպիսկոպոսը, ուշադրության առնելով այս խնդիրը, յուր կողմից չի խնայելու ամեն աշխատություն և ջանք, որպեսզի յուր առաջնորդության օրերով վիճակային հոգևոր կառավարությունը մաքրվի հին կեղտերից և հեռացվի վաղեմի անկարգություններ։ Հուսով ենք, որ նորին սրբազանության օրերով կբարեկարգվի յուրյան հանձնարարված վիճակը, ստանալով մի նոր ձև և կերպարանք, որպես պահանջում է ժամանակը, որպես հարմար է ժողովրդի այժմյան պիտույքներին։ Ով նորին սրբազանության ազնիվ հատկությունները բոլորովին երաշխավորում են մեր հույսը, թե նորա անունը Պարսկաստանի հոգևոր կառավարության բարեկարգության տարեթվի մեջ առաջին տեղը կբռնե։

* *
*

Վերջացնելով մեր հոդվածը չի կարելի մի քանի խոսք չասել Դավրեժի ժողովրդական ընթերցարանի մասին, որ բացվեցավ 1875 թվին։ Դա գտնվում է նույն տան մեջ, ուր գտնվում է քաղաքի ազգային դպրոցը և առաջնորդարանը։ Սկզեցուն շատ մոտ է։

Դավրեժի հայ ժողովրդականք, ապրելով ասիական կյանքո՛վ, չունեին մի տեղ, մի կենտրոն, որ նոքա որոշյալ օրերում հաղորդակցություն ունենային։ Նորանց հարաբերությունները խիստ առանձնական էին։ Նորանք տեսնվում էին միմյանց եկեղեցում, ուր բանավոր հաղորդակցություն նոցա մեջ լինել կարող չէր։ Փողոց-

Ներում առավոտից մինչև երեկո նորանք զբաղված էին յուրյանց գործերով, իսկ տուն դառնալուց հետո խիստ մերձավոր բարեկամները, միայն այն էլ ոչ միշտ, կարող են միմյանց տեսնել։ Եվ այսպես ընկերական կապը նոցա մեջ ամեն կերպով կտրված էր։ Հասարակային տեղեր չկային, ամեն մարդ յուր աշխարհը գտնում էր յուր նեղ ընտանեկան շրջանի մեջ, որից դուրս նորա համար կյանք և լույս չկար...

Ապրելով այսպիսի առանձնական կյանքով, ժողովուրդը մինչ այն աստիճան բթամտացած էր, մինչ այն աստիճան հանգել էր նորա մեջ մարդկային զգացմունքները, որ նա բոլորովին անգգա էր դարձել դեպի հասարակային գործերը. նա չէր հետաքրքրվում, թե յուր հորիզոնից դեպի հեռու կողմերում ի՞նչ են գործում մարդիկ, ի՞նչպես են ապրում և ի՞նչ են մտածում...

Այսպիսի վիճակի մեջ էր ժողովուրդը, երբ մի քանի եռանդոտ երիտասարդներ մտածեցին մի ընթերցարան հիմնել և նրանով առիթ տալ ժողովրդին մի կողմից շուտ-շուտ միմյանց հետ հաղորդակցության կապեր ունենալ, մյուս կողմից զարգացնել նոցա միտքը։

Ընթերցարան բացվեցավ, թողլալ նյութական կողմը, նա սկզբում պետք է հանդիպեր շատ արգելքների, պետք է պատերազմեր հասարակության նախապաշարմանց դեմ։ Ժողովուրդն արհամարհանքով էր նայում այս հիմնարկության վերա, նա ծիծաղում էր. «գիրքը կարդում են աղոթելու համար, և այն կարդում է միայն տեր հայրը, աշխարհականն ինչ գործ ունի գրքի հետ». լրագրության մասին ամենևին գաղափար չունեին, այդ պատճառավ նորա մասին դատել կարող չէին։

Ի նկատի ունենալով այսպիսի տխուր հանգամանքները, ընթերցարանը պետք է հաղթեր մի մեծ դժվարություն. նա չուներ պատրաստի ընթերցասերներ, նա ստիպված էր նորից ընթերցողներ պատրաստել։ Այս նպատակով ընթերցարանն սկզբում ընդունեց մի տեսակ լսարանի կերպարանք, որպեսզի յուր հաճախորդների ճաշակը կրթե, նոցա նախապաշարմունքները ջնջե, նոցա մտածությանց ձևերը փոխե, և նոցա նորանոր գաղափարների հետ ծանոթացնե։ Այս մտքով ընթերցարանը հիմնող երիտասարդները հազար ու մեկ ճարպկություններով մարդիկ էին որսում, այնտեղ բերում։ Մեկն սկսում էր, օրինակ, բարձր ձայնով կարդալ որևիցե լրագրում մի նշանավոր հոդված, մյուսները լսում էին, հոդվածը վերջանալուց հետո հայտնվում էին կարծիքներ, վիճում էին, գա-

տում էին և այս բոլոր մտավոր պատերազմի մեջ մեր ակամա հաճախորդը նկատում էր «չէ՞, ընթերցարանը մի ուրիշը բան է եղել» ասում էր նա յուր մտքում զարմանալով.— էստեղ մարդ շատ բան է սովորում։ Նա հետաքրքրվում էր, սկսում էր այնուհետև ինքը կարդալ, չգիտցած, չհասկացած տեղերը հարցնել և «բան սորվել»։

Այնուհետև այն պարոնները, որ սկզբում ակամա էին բերվում ընթերցարանը, սկսեցին իրանք հաճախել, սկսեցին գրքեր վարձել և տուն տանել կարդալու համար։ «Ինձ մի լավ գիրք տվեք, տանեմ տանը կարդամ»,— ասում էր հաճախորդը, լավ գիրքը ընտրում էր ընթերցարանի կառավարիչը, որովհետև խնդրողը ոչ մի գրքի ծանոթ չէր, և ոչ մի գրքի անուն չգիտեր բացի «Սաղմոսից» և «Ավետարանից»։

Այնուհետև փոստայի ներս գալու օրը մի անհամբեր օր դարձավ։ Հաճախորդները շուտ վերա էին թափվում և հարցնում էին՝ «ի՞նչ նոր բան կա լրագիրների մեջ»։ Յուր պատասխանները հեշտացնելու համար ընթերցարանի վարչությունը ստիպված էր ամենից առաջ ինքն աչքե անցկացնել լրագրերը և ամսագրերը, և նշանակել նոցա ճակատի վերա նշանավոր հոդվածների անունները։

Այսպիսի երևույթները տալիս են մի մխիթարական հույս ստածելու, թե մի ժողովուրդ որքան էլ բթացած լիներ, որքան և անզգայացած լիներ դեպի հասարակային մտածողությունները, այսուամենայնիվ տոկուն և եռանդոտ աշխատությունը կարող է զարթեցնել նորա մեջ կյանք և ազնիվ զգացմունքներ։

Տեսնելով ընթերցարանի այսպիսի հաջող առաջադիմությունը, մենք չենք կարող չհիշել պարոն Հ. Հաչեյանին՝ պոլսեցի ազնիվ նրիտասարդին, որ սկզբից մինչև այժմ տեսուչն է և նորա եռանդոտ հիմնողների պարագլուխն է եղել։ Նորա աշխատությամբ ընթերցարանը մեկ ու կես տարվա ընթացքում ունեցավ 700 հատոր հայերեն, գաղղիերեն, ռուսերեն, հունարեն, անգլիերեն, պարսկերեն, և այլ գրքեր. շարունակ ստանում է 8 օրինակ հայերեն լրագիրներ, 4 օրինակ գաղղիերեն, մեկ օրինակ պարսկերեն, մեկ օրինակ ռուսերեն. ստանում է նաև 5 օրինակ զանազան հայերեն ամսագրեր։

Ընթերցարանը բացի նորանից, որ բավականություն է տալիս հասարակության ընթերցասիրությանը, որպես հիշեցինք, Դավրեժի ազգային դպրոցին կից լինելով, նաև նպաստում է դպրոցին նորա առաջադիմության մեջ։ Ընթերցարանը յուր հաշվով բերել է տալիս բոլոր այն գրքերը, որոնցից վարժապետները և նոցա աշակերտ-

ները կարող են օգուտ քաղել։ Ընթերցարանը օգնում է և Պարսկաստանի հեռավոր քաղաքներին. յուր առացած լրագիրները կարդալուց հետո բոլորովին ձրի ուղարկում է օրինակ Թեհրանի հայոց ընթերցարանին, որ շատ աղքատ վիճակի մեջ է, այլև յուր մեջ գտնված գրքերի ավելորդ օրինակները նույն ընթերցարանին է ընծայում[1]։

Այսպիսի հայրող ընթացքով հուսով ենք, մի քանի տարուց հետո ընթերցարանը յուր կատարելագործված վիճակին կհասնի։ Ի՜նչ հրաշքներ չէ գործում երիտասարդությունը, ժողովրդի թա՜րմ և կենդանի ուժը...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ. դեկտեմբեր

Թեև եղիշեն և առավելապես Սեբէոսը թողել են մեզ բավականին հարուստ տեղեկություններ հին արևապաշտների կրոնքի և նոցա սովորությանց մասին, այնուամենայնիվ, նոքա չեն կարողանում մեր հնախուզի քննադատությանը լիակատար բավականություն տալ։ Նոքա գրել են այնքան, որքան վերաբերում էր յուրյանց աշխատության նյութին։ Իսկ այժմյան գաբրների, որպես հին արևապաշտների, կյանքի ուսումնասիրությունը կլրացնեն այն թե՛ լուծությունները, ինչ որ պակաս է թողել պատմությունը, որովհետև այս ցեղը բոլորովին անփոփոխ է մնացած յուր նախնական դրության մեջ։

Եթե ընդունենք, թե հայոց ապգը առաջ է եկել արիական ցեղերից, թե նա պաշտում էր նույն կրոնքը, ինչ որ այժմ գաբրն է պաշտում, թե նորա լեզուն նույն ծագումիցն է, որով այժմ գաբրն է խոսում,— կհամոզվինք, թե գաբրի կյանքի, գրականության և լեզվի (որ մաքուր պանդիկ բարբառն է) ուսումնասիրությունը խիստ

---

[1] *Շնորհակալություն կ. Պոլսի ազգայիններին. նորանք ցույց տվին խիստ ազնիվ համակրություն դեպի աղքատ Դավրեժի ընթերցարանը, ուղարկելով նորան որպես ընծա 470 հատոր գանազան լեզուներով գրքեր։ Իսկ մեր Ռուսաստանի հայերից չգտնվեցավ և ոչ մեկը, որ մի հատոր գիրք ուղարկած լիներ, բացի մեծապատիվ Մ. Սանասարյանցից, որը յուր հաշվով ուղարկել է տալիս «Մուրճ» ամսագիրը...*

պայծառ լույս կարող էր ձգել մեր հին դյուցազնաբանության վերա, որ դեռ պարզված չէ, մեր լեզվի ֆիլոլոգիայի վերա, որ ամենևին ուսումնասիրված չէ, և հետևապես մեր պատմության վերա, որ շատ տեղերում մութ է։ Որովհետև մեր նախնիքը սկսյալ ամենահին ժամանակներից, անընդհատ հարաբերություններ են ունեցել արիական ցեղերի հետ, որպիսի էին՝ պարսիկները, պարթևները, բակտրիացիք, մարք, և այլն, իսկ այդ ազգերի ներկայացուցիչներն այժմ մնում են Պարսկաստանում յուրյանց նախնական ավանդություններով և սովորություններով։

Մահմեդականությունը պարսից մեջ ոչնչացրեց հին գրականությունը, որպես քրիստոնեությունը մեր մեջ. բայց նրանք ավելի բախտավոր եղան մեզանից նորանով, որ նոցանից պահպանվեցավ մի ցեղ, որ ազատ մնաց մահմեդականությունից և այսպիսով կարողացավ պահպանել յուր հին գրականության մի մասը.— Դոքա գաբրներն են։ Իսկ մեր հեթանոս եղբայրներից դժբախտաբար և ոչ մինը չմնաց մինչև մեր օրերը։

Իսկ այն, որ մենք պետք է որոնեինք մեր հեթանոս եղբայրների մեջ, այժմ կարող ենք գտնել գաբրների մեջ, որովհետև դոքա նույնպես ազգակցություն ունեն մեզ հետ։

Հնդկաստանի պարսիկ արևապաշտների մեջ այժմ կազմվել է մի ընկերություն բարեգործական և ուսումնական նպատակով, և նրանց կողմից ուղարկված է Թեհրան մի գործակալ Մանուչի անունով, որ մի կողմից հոգս է տանում յուրյանց պարսկաստանցի եղբարց՝ գաբրների նյութական կարոտությանը, պաշտպանում է նորանց զանազան հալածանքներից, մյուս կողմից, հավաքում է նրանց մեջ գտնված հին գրքերը։ Մանուչին մեծ եռանդով ուսումնասիրում է Խորենացին և հայոց այլ պատմություններ, որոնք լարող էին պարսից հին պատմության մութ տեղերը պարզել։ Որովհետև իրենք պարսիկները (մահմեդականները) հին պատմություն չունեն, և ոչ հետաքրքրվում են գիտենալ յուրյանց մինչմահմեդական անցյալը։ Ֆրիդովսու գիրքը, որ այդ մասին մի քանի կտգին հարստություն կարող է համարվիլ, այն ևս, որպես առասպելավիպական բանաստեղծություն, զուրկ է պատմական ճշտությունից։ Ուրեմն, մի գաբր ուսումնականի համար, որպես է Մանուչին, խիստ ձեռնտու է որոնել յուր ազգի պատմությունը ավելի հին արևապաշտների և հայոց գրքերի մեջ, քան պարսիկների մեջ. ուր ամեն ինչ, որ հեթանոսական էր, ջնջեց մահմեդականությունը։

Յանկալի կլիներ, որ մերայինք նույնպես հետևեին Մանուչի օրինակին, և փոխադարձաբար սկսեին ուսումնասիրել գաբրների գրականությունը, նոցա լեզուն և ավանդությունները, մեր պատմությունը հարստացնելու, և մեր լեզվի ֆիլոլոգիային նյութ տալու նպատակով։ Իսկ ինչ որ վերաբերում է այս հոդվածի հեղինակին, նա արդեն սկսել է գործել այդ մասին, որքան կներեին հանգամանքները, որքան թույլ կտար յուր գրությունը...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թավրիզ, հունվարի 24

Մինչդեռ Տաճկաստանը յուր հոգեվարքի տագնապի մեջ քրիստոնյաներին նոր արտոնություններ, նոր իրավունքներ է շնորհում, և մահմեդականներին հավասար ազատություններ է տալիս, որ այսպիսյավ յուր գլխի վերա պտտվող փոթորիկը հեռացնե, և կրկին յուր զոհերի արյունը ծծելու բախտին վերադառնա,—Պարսկաստանի մեջ քրիստոնեից դեմ եղած եղեռնագործությունները արըստօրե սարսափելի կերպարանք են ստանում։

Հիշենք մի անցք։

Ղարադաղի Քեյվանու գավառի Սըղըն կոչված հայաբնակ գյուղը դիվանի գրքերում նշանակված ունի 25 թումեն (70 ռուբլ.) արքունի հարկ, որը նա պարտավոր էր վճարել կառավարությանը։ Բայց գյուղի Բաղըր-խան անունով տերը փոխանակ հիշյալ գումարի (70 ռուբլ.) գյուղացիներից մի քանի ամիսների ընթացքում փայտի և մտրակի զորությամբ ստանում է 2550 ռուբլ.։ Այդ բավական չէ, կրկին սկսում է Բաղըր-խանը պահանջել գյուղացիներից 1800 ռուբլ.։ Ծեծը, բանտը և ամենատեսակ չարչարանքները չեն կարողանում դուրս բերել արդեն աղքատացած գյուղացիներից վերջին գումարը։ Չեղած տեղից վճարել մի այսպիսի նշանավոր գումար, անհնարին բան է։ Բռնավորը,— սպառելով յուր բոլոր տանջանքները խեղճ գյուղացիների վերա, երբ տակավին տեսնում է յուր նպատակը չկատարված,—ձեռք է առնում մի ուրիշ միջոց, մի շար միջոց, որի գործ դրվելու ժամանակ, հայը չէ խնայում ոչ միայն յուր գույքը, այլև յուր հոգին... Ջարագործը ձեռնամերձ է լինում գյուղացիների կրոնական սրբություններին...

Ս. ծննդյան օրը, երբ գյուղի ժողովուրդը հավաքված է լինում Լևեղեցում, երբ սեղանի վերա կատարվում է ս. մկրտության խորհուրդը, հանկարծ մի խումբ խանի մարդիկներից թափվում են եկեղեցում։ Նրանք չարդուփշուր են անում խաչերը, խորտակում են բոլոր եկեղեցական սպասները, բռնում են քահանային և ժողովրդի ծերերին, սկսում են ծեծել, սպառնալով, թե բոլորին կմորթեն նույն տաճարի մեջ, եթե չուզենան տալ խանի պահանջած արծաթը։ Սվ մի քանի սրբապիղծ չարագործություններից հետո, որոնց հիշելն անգամ սարսափ է բերում, քահանային մի քանի ծերերի հետ տանում են բանտարկում, իսկ մյուսներին հալոդվում է փախչել։

Կրոնքը հայի զգալի կետն է, նա համբերող է, քանի զրկանքը չէր վերաբերում այս կետին. իսկ երբ թշնամու սրբապիղծ ձեռքը սկսավ այնտեղ ևս շոշափել, այն ժամանակ նորա ստրկացած ոգին պարթնում է, բողոք է բարձրացնում...

Բացի խանի բանտումը բռնվածներից գյուղի բոլոր տղամարդիկը հավաքվում են և ճանապարհ են ընկնում դեպի Դավրեժ քալլաք, բողոքելու այս բռնակալության դեմ։ Նրանց մեծ մասը ցրտի սաստկությունից սառչում են և մնում են ճանապարհի վերա զանազան տեղերում, իսկ 51 հոգի հասնում են Դավրեժ քաղաքը։ Նոքա Անդրեաս արքեպիսկոպոսի առաջնորդությամբ դիմում են Ատրպատականի կառավարության գլխավոր ներկայացուցչի՝ Սահաբ-դիվանի մոտ։ Հայոց առաջնորդը, պատմելով անցքը և նորան առիթ տվող պատճառները, ավելացնում է, եթե գյուղացիներին բավականություն չտրվի, և չարագործը ըստ արժանվույն չպատժվի, նա ստիպված կլինի դիմել Պարսկաստանում գտնված եվրոպական տերությանց միջամտությանը։ Սահաբ-դիվանը հանգստացնում է առաջնորդին և խոստանում է անել պարտ ու պատշաճ տնօրինություններ։ Ճշմարիտ խոստովանել պետք է, որ պետության այս բարձր պաշտոնակալն, յուր Ատրպատական գալու օրից, ամեն գործերի մեջ ցույց է տվել արդարություն և խղճմտանք, և մանավանդ քրիստոնյաներին վերաբերյալ դեպքերում նա միշտ արդարադատ է գտնվում և ողորմած։

Սվ այս դեպքում նորին վսեմության գործ դրած միջոցները բավականին ազդու պետք է համարել։ Նա անցքը մանրամասնաբար Թեհրանի Բարձ. Դռանը հաղորդելեն ետո, խմացում է տալիս նորին բարձրությանը թագավոր ժառանգին, որ նույնպես Դավրեժումն է գտնվում, և երկուքը միասին Ղարադաղ մարդիկ են ուղարկում

սաստիկ հրամանով, որ Բաղրր-խանը բերվի և յուր պատիժը կրե։

Այժմ հարցն դորանումն է, արդյոք կարելի՞ է այս գազանը դուրս քաշել յուր բույնից։ Բաղրր-խանը և նորա նման Ջալաբիան կոչված խաները Ղարադաղի լեռների աստվածներն են, իսկ խեղճ ժողովուրդը — նոցա թշվառ զոհը։ Շատ ժամանակ չէ անցել, որ հայոց եկեղեցվո սրբությունը շան վզից քարշ տվող չարագործը մնաց անպատիժ. նա ևս Ղարադաղի գազաններից էր...

Բայց հուսով ենք, որ նորին վսեմության Սահաբ-Դիվանի օրհրով, այսպիսի եղեռնագործություն, որ պատիվ չեն բերում մի բարեկարգվելու շավղին մեջ ընթացող տերության, բոլորովին բարձած կլինին, խաղաղության մեջ դրվելով գյուղացիների վիճակը, որի գլխավոր պատճառն է հարկերի անկարգ դրությունը և կալվածատերերի հարստահարությունը։

ԳԺՎԱՏՈՒՆ

(Տաճկաստանի մամուլը և գաղթականության խնդիրը)

Ընթերցող, պատահե՞լ է քեզ երբեմն գժատունը մտնել, դու տեսե՞լ ես այս թշվառ օթևանի նույնպես թշվառ հասարակությունը...

Այնտեղ հանդիպում են քեզ մարդիկ, որոնք խոսում են, դատում են, վիճում են, և նոցա խոսակցությունն այնքան կանոնավոր և ոգելից է, որ քո մեջ ակամայից ծնվում է մի այսպիսի միտք՝ «մի՞թե դոքա խելագարներ են, ինչի՞ են բերած այս անբախտները մի այսպիսի տխուր բնակարանի մեջ»։

Հանկարծ դերը փոխվում է...

Դու տեսնում ես նույն փիլիսոփան, որ քեզ հետ խոսում էր, դատում էր ավելի բարձր և վսեմ համամարդկային գաղափարների վերա, նա, որ աշխարհների և ազգերի ճակատագիրն էր վճռում,— յուր խորհրդածությունը վերջացնում է այսպիսի խոսքերով. «պարոն, եթե քո քիթդ մի հատ մուկն յուր պոչիցը կախված լիներ, ա՞խ որքան հեշտ կլիներ նորան քո բերանը մտնելը...

Դու այն ժամանակ միայն համոզվում ես, որ դա խելագար է...

* *
*

Այսպիսի տպավորություն է գործում ընթերցողի վերա, երբ յուր ձեռն է առնում Տաճկաստանի որևիցե լրագիր։ Այսպիսի տպավորություն գործեց իմ վերա Զմյուռնիո «Արևելյան Մամուլի» հունվար ամսո համարի մեջ Մերենց ստորագրությամբ մի նամակ։ Նամակը խիստ երկար և ձիգ էր, որպես երևում էր, ամբողջապես նույնիսկ խմբագրության գործարանի մեջ կարկտած էր... Նամակի գլխավոր նյութը վերաբերում էր **գաղթականության խնդրին**։— Այո՛, մի կարևոր խնդիր, որո մեջ պետք է որոնել հայոց ներկա և անցյալ թշվառությունները։

Պ. Նամակագիրն յուր հոդվածի սկզբում ողջամիտ է և խելացի, որպես մեր գժատան փիլիսոփան։ Նա ցույց է տալիս, թե որպիսի ցավալի հետևանքներ ունեցավ հայերի համար գաղթականությունը։ Նա օրինակ է բերում Վենետիկի, Լիվորնոյի, Ամստերդամի և ամբողջ Լեհաստանի հայերը։ Նա հիշեցնում է «Մշակի» երկու հոդվածները Հնդկաստանի և Պարսկաստանի հայերի մասին, որոնց մեջ ցույց էր տրված տեղային հայերի անբախտ վիճակը և նոցա օրըստօրե սպառումը։

Հանկարծ այս բոլորը մոռանում է նա...

Եվ խոսելով այն երևույթի մասին, թե այսօրվա օրս հայը յուր բնիկ երկրում թշվառ և անգործ է, ուտելու հաց և հանգստություն չունի,—պ. հոդվածագիրն մեջ է բերում հետևյալ խոսքերը.

«Այս վիճակներն (ապրուստի նեղությունը) օրավուր կծանրանան և միայն մեզի համար չեն, և ասոր ապացույցն այլ հայտնի կերևի, երբ անգործացին, գաղղիացին, գերմանացին, իտալացին, կըտեսնենք հայրենիքնին ձգած, մեր երկրներուն մեջ եկած, հացի պատառ մը կփնտրեն, ոմանք յուրյանց արհեստին, ոմանք յուրանց դրամագլխին, ոմանք յուրյանց ճարպիկությանը վստահանալով։ Ինչո՞ւ այս օրինակին չենք մտածեր հետևել մեք ալ, ինչո՞ւ մեր հորիզոնը չենք ուզեր ընդարձակել, շարժելու սովորությունը ինչո՞ւ կորուսեր ենք. պե՞տք է ուրեմն միշտ մեզի սուրի և սովու անտանելի բռնությանց խարազանը, որ կարենանք շարժիլ և ընկնել հեռու աշխարհներ, որպեսզի հաց, հարստություն և մինչև երջանկություն գտնենք...»

Մտածում ես, թե ո՞րտեղ է այն «հացի, հարստության և երջանկության» երկիրը, ուր կամենում է առաջնորդել մեր նոր Մով-

սեսը յուր տառապյալ Իսրայելը։— Հնդկաստանում, դարձյալ նույն երկրում, ուր առաջ նա ողբում էր հայերի ցավալի կորուստը, նա դարձյալ հայերի փրկութիւնը գտնում է գաղթականութեան մեջ...

Ահա նրա խոսքերը.

«Ուրեմն ի՞նչ կարգելէ այսօր այն հայերը, որ իրենց ծնված տեղվանքը կնեղեն ի չքավորութենն կամ ի բռնութենն, անգործութենն կամ ի տառապանաց, երթալ հոն այն տեղվանքը (Հնդկաստան), ուր իրենց ազգակիցքը երբեմն դժնդակ վիճակե մը ազատելու համար դիմեր և երջանկութիւն գտեր են։ (Ակնարկում է Պարսկաստանից դեպի Հնդկաստան առաջուց գաղթող հայերի վերաւ) Երբ այն տեղն և անկից վերջն ալ նաև հոն դեռ բռնութիւն կա եղեր· վասն զի նաև հոն հնդիկ կամ մողոլ երբեմն կրոնամոլութիւն գործածելով, հայ եկեղեցին, իրան գմբեթը կկործանեն եղեր (Սուրաթի մեջ), բայց հիմա թե Բաբելոնի աշտարակի չափ ալ բարձրացնեն ոք, արգելք դնող չկա Անգղիո և Հոլանդիո հովանվույն տակ...»

Որքան հատուկ է Տաճկաստանի լրագրութեանը հրատարակել այսպիսի հիմար, վնասակար և մինչև անգամ խելագար գլուխների մտածութիւնքը, այնքան աննեղելի է «ԵՒրևելյան Մամուլին» որպես մի առողջամիտ ամսագրին, հետևել տգետների օրինակին, որոնք առանց մտածելու առանց նպատակի դուրս են վիժում յուրյանց գլխի ցնորքները։

Ինչ որ օգտակար է մի ազգի համար, շատ անգամ նա լինում է վնասակար մյուս ազգերին։

Անգլիացին, ֆրանսիացին և գերմանացին ուր և գաղթում են, յուրյանց հետ տանում են՝ գիտութիւն, արհեստ, ճարտարութիւն և վերջապես յուրյանց սուրը և քաղաքական դրոշը։ Նոքա նվաճում են մի երկիր, հիմնում են այնտեղ ազատ գաղթաշեներ, և սկսում են օգուտ քաղել երկրի բնական հարստութիւններից։

Բայց ի՞նչ է տանում յուր հետ դեպի օտար աշխարհ հայ գաղթականը։—Նա տանում է յուր հետ յուր անկիրթ գլուխը, յուր պանդխտութեան թուլլ գավազանը և յուր ամեն զորութեան դեմ խոնարհվող ստոկական ոգին.... Ուր և գնում է նա հպատակ է։ Նա պետք է գտնե իրանից մի ավելի թուլլ, թշվառ և տգետ ժողովուրդ, որ կարողանա նորան հարստահարել, նորանից օգուտ քաղել... Այո՛, ա՛յս բախտին հանդիպեցավ մի ժամանակ հայ գաղթականը, նա գտավ Դանգեսի ափերի մոտ իրանից ավելի մի թշվառ ժողովուրդ։ Բայց այն դարն անցավ։ Այժմ այնտեղ անգլիացին հրեղեն

սուրը ձեռին հրեշտակի նման հսկում է, ոչ ոքին թույլ չէ տալիս մոտենալ յուր զոհին...

Զնայելով այն բոլոր վնասներին, որ հայի առջև դնում է յուր անցյալի պատմությունն, նա դարձյալ ձգտում է գաղթել... Հայը յուր հանգստությունը և յուր բարօրությունը միշտ երևակայում է հայրենի երկրի սահմանի դրսում... կարծես, նորա բնիկ երկրի հորիզոնը յուր համար թունավորված լինի...

Հայի մի այսպիսի հատկությունն միտս է բերում մի առակ, որ շատ անգամ լսած եմ իմ պառավ տատիցը։ Նա տալիս էր մի առասպելական թռչունի անունը,— և ծով այն թռչունը լինի հոպոպը,— ասում էր, թե հոպոպը ուր և յուր բույնը դնում էր, փոքր ժամանակից հետո գտնում էր յուր նոր օթևանը, բոլորովին հոտած։ Այս պատճառավ նա ստիպված էր անդադար փոխել յուր բնակարանը, որպեսզի կարողանա մի մաքուր տեղ գտնել։ Մի օր նա խորհրդով դիմեց ծիծեռնակին. «Բարեկամ,—ասաց նորան,—ի սեր աստուծո, ինձ մի ճանապարհ ցույց տվեք, մի՞թե չկա աշխարհի երեսին մի տեղ, ուր կարելի լիներ մաքուր օդ շնչել և հանգիստ լիներ»—«Այստեղ ինչո՞վ է վատ,— հարցուրց ծիծեռնակը սառնությամբ։—Ա՜խ, քույրիկ, ես անբախտ եմ այստեղ, այս երկիրն ինձ համար չէ, ուր և բույնս շինում եմ, քանի մի օրից տեսնում եմ, այնպե՜ս վատ է հոտում, այնպես վա՛տ, որ ոչ միայն անտանելի է ինձ, այլև իմ մանրիկ ճտերին»։— Ուրեմն դարձյալ միտք ունեք գաղթել,—հարցուրց ծիծեռնակը ժպտելով։— Ի՞նչ պետք է արած, քանի որ ապրել չեմ կարող... Ծիծեռնակը յուր գեղեցիկ դեմքը դարձրուց դեպի հոպոպը և ասաց այս խոսքերը։—Ընկեր, փոխանակ անդադար բույնդ փոխելու, ավելի լավ կլիներ, որ խասիաթդ (բնավորությունդ) փոխեիր, որովհետև այդ ժահահոտությունն քո իսկ անձնանմաքրությունից է փչում... Ծի՛ն ոչ, աստուծո աշխարհը և այստեղ մաքուր է և սուրբ...

* *
*

Մենք լենք կամենում հերքել, թե մի երկրի բնական հարստությունները և մինչև անգամ նորա աշխարհագրական դիրքն մեծ ներգործություն ունեն բնակիչների կյանքի և նոցա զարգացման վերա։ Մենք գիտենք, որ կան երկրներ, ուր մարդը յուրյան շրջապատող հանգամանքներից ստիպված է լինել աղքատ թե՛ նյութապես և թե՛ մտավորապես։ Այսուամենայնիվ, Հայաստանը այն երկրների կար-

դին չէ, որ յուր բնակիչներին չկարողանա մատակարարել նոցա կենսական պիտույքները, և ստիպեցնե նրանց յուրյանց ապրուստը որոնել օտար երկրներում։ Հայաստանը ունի կյանքի շատ հարմարություններ, եթե նորա բնակիչները սովորեին աշխատելու և երկրի հարստությունններից օգուտ քաղելու։ Բայց հայը գործել չգիտե, դորա համար նա աղքատ է, դորա համար նա հաց չունի, դորա համար նա թափառում է երկրից երկիր։

Հայը աշխատասեր ժողովուրդ է, այսպես մտածում են շատերն։

Աշխատասիրությունն ոչինչ նշանակություն չունի, երբ նա զուգընթաց առաջ չէ գնում ժամանակի պահանջների և նորա ընդհանուր զարգացման հետ։

Հեռվից դատել Հայաստանը առանց նորա մեջն մտնելու,— շատ հեշտ բան է։ Բայց երբ որ մոտենում ես, սկսում ես բոլորովին այլապես մտածել։

Հայը այսօր հերկում է յուր հողը այնպես, որպես հերկել է յուր պապի՝ Արամի օրերում։ Արհեստը և ճարտարությունը նորա մոտ կրում են յուրյանց վերա հազարավոր տարիների հնության կնիքը, կարծես այդ ազգը մի քայլ անգամ առաջ չէ դրել... Ինձ պատահել է տեսնել Հայաստանում հին փլատակների տակից դուրս եկած խեցեղեն ամաններ,— նույնը այսօր շինում է հայ բրուտը առանց որևիցե զանազանության։ Ինձ պատահել է տեսնել Հայաստանում ամբողջ ժողովուրդը, որ պարապվում էր խաշնարածությամբ։ Այս հովիվ ժողովուրդն դեռ ապրում է յուր նախնական կյանքով. նորա հագուստը ոտքից ցգլուխ կազմված է բուրդից, բոլորը նահապետական պարզ ձևով։ Նորա ոտնամանները (տրեխները) մինչև անգամ հյուսած են այծի մազից։ Եվ մարդ, դառնալով դեպի հնությունը, մտածում է, թե դա նույն հովիվ ժողովուրդն է, որ Հայկի և Արմենակի օրերով թափառում էր Բզնունյաց ծովակի շուրջը յուր անասունների համար ճարակ գտնելու... Ես առիթ եմ ունեցել մտնել նոցա գետնափոր խրճիթների մեջ, որոնք ավելի գազանների որջերի են նման, որոնց մեջ տերը և յուր չորքոտանին միասին և մի հարկի տակն են ապրում։— Ես տեսել եմ նոցա կիսավայրենի նահապետական կյանքը և համաձայնել եմ Քանենոփոնի հետ, մտածելով, եթե այդ հույն պատմաբանը նորից անցնելու լիներ Հայաստանի միջով, նորից նկարագրելու լիներ նորա ընտանեկան կյանքը, դարձյալ նույնը պիտի գտներ, ինչ որ տեսել է 24 և կես դար առաջ...

Նվ այդ անմեղ, պարզամիտ ժողովուրդին խրատում են, որ նա քաղնե հայրենի երկիրը, գնա հեռու, շատ հեռու և օտար աշխարհներում յուր համար ապրուստ որոնե... Նվ այդ ժողովուրդն է, որ այժմ լեցնում է Կ. Պոլսի քարվանսարաները, նավահանգիստները, մաքսատները, և ճամալի ստոր պաշտոն է կատարում,— մի ծառայություն, որ բեռնակիր անասուններին միայն է սեփական... Այդ ժողովուրդն է, որին հանդիպում ես Տաճկաստանի և Եգիպտոսի (որտե՞ղ չկան նրանք...) բոլոր ծովեզերյա քաղաքներում, ուր նոցա գործն է չռփչիություն[1], թուլումբաչիություն[2], և այլ այսպիսի ստոր պարապմունքներ։ Ուր նոցա կերակուրն է՝ զինվորներից ավելցած սոմուներ[3] և մեչիդների միաբանության (սոֆթաների) սեղանից ավելցած փշրանքը[4]։ Ուր նոցա օթևանն է բաղնիքների վառարանի (թուլամբարի) մոխիրները[5]...

Այս ժողովուրդն առյուծի ուժ ունի, բայց գառնուկի սիրտ... Նա յուր բոլոր մարմնական զորությունը սպառում է այն գործի մեջ, որ Նավերից փոխադրում է դեպի գամաք այն ծանրությունները, որին կրակի և օվկիանոսի ուժերն հազիվ կարողանում են դիմանալ... Ինուիյությունը ոչինչ չէ խնայել նրան. նորա մեջ կան հարուստ ու ճոխ զորություններ, բայց դեռ անմշակ...— միակ բանը, որ պակաս է նորան, է կրթությունը. և այդ փոքր բան չէ...

Այս մշեցի, վանեցի, բաղեշցի ժողովուրդն է, որ հայրենիքը ձգած, ցրված է դեպի ամեն կողմ։ Նա քաղնում է յուր տանը ծերունի հայր, պառավ մայր, մանկահասակ ամուսին, փոքրիկ երեխայք,—բոլո՛րն կարոտության մեջ... Նորան խորհուրդ են տալիս գաղթել, նոր աշխարհներ գտնել և բախտ որոնել... Բայց ինչո՞վ և որպես...

---

[1] Չռփչիություն նշանակում է հայ մշակների այն պարապմունքը, որ նոքա քաղաքացվոց տների աղբերը յուրյանց կողովների մեջ առնելով, տանում են ծովը նետում։

[2] Թուլումբաչիությունն է յրկիրների պաշտոնը, որոնք միևնույն ժամանակ ծառայում են որպես հրդեհաշեջներ։

[3] Սոմոն մի տեսակ հացի անուն է, որ տալիս են որպես պաշար Տաճկաստանի զինվորներին. և նոքա սովորություն ունեն վաճառել հացի բարբոսած և անպիտանացած մասը հայ պանդուխտներին։

[4] Տաճկաստանում կան այնպիսի մեչիդներ, ուր դրած են քաղավորների կամ երևելի անձանց շիրմները, այսպիսի մեչիդներում մի դաս մոլլաների գործն է աղոթել այնտեղի ննջեցյալների համար, նոքա կոչվում են ավլթաներ և ստանում են նույն մեչիդի կալքից առատ կերակուր, որի ավելորդը, որպես մի ժամն կերակուր, գնում են հայ մշակներին։

[5] Հայ մշակներն, մանավանդ Տաճկաստանում, մի ուրիշ ժամանակին տեղ

* *
*

Արդարև հայերի գաղթականությունն ունեցել է և ունե յուր պատմական և տեղական պատճառները, բայց եթե խիստ կերպով քննելու լինենք, կտեսնենք, որ ոչ այնքան պարսիկների, մոնղոլների, արաբացվոց և այլ բարբարոսների բռնության խարազանը դուրս է քշել նորանց հայրենի երկրից, որքան նույնիսկ յուրյանց ծուլությունը, անգործունեությունը և կույր կրոնական սնահավատությունը...

Պարսիկը, մոնղոլը, արաբացին կողոպտել է նորա սեփականությունը, հրդեհել է նորա բնակարանը, մոր աչքերի առջև մորթել է նորա երեխան, ոչնչացրել է ամեն ինչ, որ սուրբ է նորա համար և նվիրական,— հայի քահանան մխիթարել է նորան ասելով. «Այդ մեր մեղքերի համար է, որ աստված պատժում է մեզ... Թողնե՛նք այդ երկիրը, նա անիծվա՛ծ է և մեզ համար մի ուրիշ տեղ պըտրենք»... Հայը սրբել է յուր աչքերի արտասուքը և մխիթարվել այդ խոսքերով...

Եվ այժմ շատերն մտածում են, թե ճարտասիարությունն է, որ ստիպեցնում է հային թողնել յուր բնիկ երկիրը։ Այո՛, ասիական Տաճկաստանում քուրդերն հարստահարում են։ Բայց ո՞վ է մեղավոր,— կառավարությունը, պատասխանում են, որովհետև այնքան թույլ է, որ չէ կարողանում զսպել յուր վայրենի հպատակները։

Դիցուք թե կառավարությունը թույլ է, բայց հայը, յուր անձի, ընտանիքի և սեփականության տեր, միթե պարտավոր չէ՞ նոցա պահպանության համար ընդդիմանալ յուր թշնամուն և թույլ չտալ, որ կողոպտեն յուրյան։

Դույության կռվի մեջ ամեն թույլ ուժեր դատապարտված են ոչնչության։ Ցանկանում ես ապրել, սովորիր դեմ դնել այն արգելքներին, որ խանգարում են քո բարօրության։

Իսկ հայը յուր կյանքում միշտ կրավորական դեր է խաղացել...

Ամբողջ ասիական Տաճկաստանի մեջ քուրդերի թիվը հաշվում են 30 հազար հոգի, որոնք որպես անասնապահ և թափառական

չգտնելով գիշերելու համար, տարվա տաք եղանակներում անցուցանում են եկեղեցիների գավիթներում, իսկ ձմեռվա ցրտերի ժամանակ բնակվում են բաղնիքների թուսամբարեներում։ Եթե տարտարոսի վերա կամենք հիշտ գաղափար առանալ, բավական է մի անգամ թուսամբարը տեսնել, ուր բոցը, խեղդող ծուխը և մռնիրը միասին գործում են։ Նա լավ է նորանով միայն, որ տաք է... Այնտեղ է բոլոր պատսպարան չունեցողների օթևանը...

ցեղեր, ցրված են զանազան կողմերում։ Իսկ միմիայն Վանի և Մուշի գավառներում ավելի քան 250 հազար հոգի հայեր կան, և այդ տասնապատիկ թվով ավելի բազմությունը հարստահարվում է մի քանի հազար թափառական քրդերից... Ո՞վ է մեղավորը...

Երբ մարդ անընդունակ է անձնապահպանության, նա կյանքի իրավունք չունի...

Քուրդը որպես մահմեդական, պաշտպանություն է գտնում սիրող կառավարությունից յուր բարբարոսությանց մեջ, իսկ հայը, որպես քրիստոնյա, մնում է անօգնական, նա ստիպված է յուր կրոնքը փոխել, որ մահմեդականներին հավասար արտոնություն ստանա։ Այսպես մտածում են շատերը։ Բայց ոչ, այդ երևույթի պատճառը պետք է որոնել նույնիսկ հայի թուլություններուն մեջ։ Վանի և Մուշի մոտ բնակվում է մի հարևան ազգ, նույնպես քրիստոնյա, որպես հայերը — դոքա են ասորիներն, ավելի փոքրաթիվ, քան թե հայերը։ Ասորին ոչ միայն չէ հարստահարվում քուրդերից, այլ նա յուրյան մինչև անգամ ազատ և անկախ է պահել տերության բռնությունից, որովհետև ասորու մեջ կյանք կա, նա գիտե թե որպե՞ս պետք է վարվել թշնամու հետ...

* *
*

Կարճատես մարդու հայեցողական հորիզոնը շատ նեղ է լինում, նա հեռուն դիտել կարող չէ։ Կարճատեսը հրապուրվում է միայն շլացուցիչ երևույթներով, որոնք խիստ ազդու կերպով ներգործում են նորա տեսանելյաց վերա։ Այդ վիճակի մեջն է գտնվում «Արևելյան Մամուլի» պ. հոդվածագիրն։ Հիշելով մի քանի հայ անուններ, որոնք մի ժամանակ Հնդկաստանում փառք, մեծություն և հարստություն ստացան,— պ. հոդվածագիրն երևակայում է այն անսպառ երանությունները, որ և այժմ սպասում են հայերին Գանգեսի և Բրահմանպուտրայի ափերի մոտ։

Այո՛, հայը, հայտնվելով Հնդկաստանում, այն ժամանակ կարող էր յուր համար մի բախտավոր վիճակ գտնել, որովհետև նա յուր մտավոր զարգացումով ավելի բարձր էր, քան թե շրվառ հրնդկացին, որ դեռ յուր տղայության մեջն էր գտանվում։ Տղաներին խաբելը և նրանց կողոպտելը մի դժվար բան չէ, Բայց երբ հայտնվեցան այնտեղ խարդողների մի ավելի մեծ բազմություն, որոնք յուրյանց արհեստի մեջ ավելի հմուտ և ճարպիկ էին, այն ժամանակ հայերի փառքը նսեմացավ...

Եվ ուրիշ կերպ լինել կարող չէր։

Ազգերի գաղթականության պատմությունն ներկայացնում է մեզ երկու տեսակ բախտախնդիրներ. մեկը որոնում է ոսկի, մյուսն՝ հող։ Օրինակ, սպանիացին աստվածային Կոլոմբոսի հանճարով գտնում է Նոր Աշխարհը, և սկսում է կողոպտել խեղճ հընդկացիների կանանց ոսկի զարդերը, և անթիվ նավերով երկրի հարըստությունները դեպի Սպանիա է կրում։ Այս անսկզբնական հարըստության հեղեղը վերջապես ձգում է նույն ազգին աղքատության մեջ։ Անգլիացին գնում է այնտեղ, ընտրում է երկրի ավելի արգավանդ մասը, և սկսում է մշակել նորան։ Նա գտնում է յուր հարըստությունը բնության մեջ, որ երբեք չէ սպառվում։

«Գանձ գտնող աղքատի որդիքը սոված կմեռնեն». իսկ «քըրտինքով վաստակած հացը չի սպառվի»։

Հայը ուր որ գնում է, պատրաստի ոսկի է որոնում և շատ անգամ գտնում է, որպես գտան սկզբում Հնդկաստան գաղթող հայերը։ Բայց նոցա որդիքն այժմ ուտելու հաց չունեն։ Ինչո՞ւս— Որովհետև ոսկին կապիտալ կամ հարստություն չէ. նա կարող է այսօր լինել և էգուց օդի մեջ ցնդվել... Հնդկաստանցի հայերն մինչև անգամ փչացրին յուրյանց սպահանցի ազգակիցներին, որոնք Պարսկաստանումն էին ապրում։ Նոքա ուզարկում էին առատ ոսկի յուրյանց ազգականներին, որ թողել էին Պարսկաստանում։ Սպահանցի հայը, սովորելով պատրաստի ոսկու գործածությանը, դադարեց գործելուց, ընկավ ծուլության և շռայլության մեջ և վերջապես աղքատացավ, երբ նորա Հնդկաստանից եկող թոշակն դադարեց։

* *
*

«Արևելյան Մամուլի» պ. հոդվածագիրն գաղթականության չահերը ցուցանելու համար՝ օրինակ է բերում հրեաները, որոնք թեև աշխարհի ամեն անկյուններում ցրված են, այսուամենայնիվ, ունեն փառավոր դրություն և կատարյալ երջանկություն են վայելում...

Որպիսի՜ նախանձելի վիճակ...

Բայց մի՞թե հրեան ազգ է, մի՞թե նա կյանք և ապագա ունի...

Այո՛, համեմատության մեջ պ. հոդվածագիրն չէ սխալվածե՝ թե այսօրվա օրս հայերին կամենինք համեմատել որևիցե ազգի հետ, նոցա զուգակշիռը կգտնեինք միմիայն հրեաների մեջ.— մի թափառական ժողովուրդ, որ երկրի վերա ոչինչ հիմք չունի, որպես

այն բույսերը, որոց արմատները խորին կերպով դրված չեն հողի մեջ և հողմի ամենաթեթև փչելուց տարուբերվում են մի կողմից դեպի մյուս կողմ...

Մեր խոսքը բավական երկարացավ, այժմ վերջացնենք։

Մարդու կյանքը կապված է բնության հետ, և նորա մայրը — հողը։ Եթե հայը կամեր կյանք և ապագա ունենալ, նա պետք է յուր ապրուստը հիմնե հաստատուն հողի վերա, և այդ հողը թո՛ղ լինի այն, որ սրբված և գնված է մեր նախահարց արյունով...

ՆԱՄԱԿ ՊԱՐԻԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, մայիսի 22-ին

Այս տարի գարունը սկսվեցավ այստեղ անընդհատ անձրևներով, որոնք խոստանում էին առատ պտղաբերություն։ Ուտելիքները օրըստօրե էժանանում էին։ Բայց մայիսի սկզբներում Պարսկաստանի այլևայլ տեղերում մի ամենասաստիկ կարկուտ եկավ և այնպիսի արագությամբ, որ շատ տեղ 5 րոպե միայն տևելով, մեկ թզաչափ ծածկեց երկրի երեսը։ Կարկուտի հատիկները հասնում էին մեկ ընկույզից ավելի մեծության, նրանք թափեցին ոչ միայն ծառերի պտուղները, այլ նրանց միանգամայն ճյուղակտոր տերևաթափ արեցին։ Օրի մեջ նույն րոպեում գտնված թռչունները սպանվեցան և դաշտերում բազմաթիվ գառներ և ոչխարներ նույնպես կոտորվեցան։ Դավրեժից հեռու տեղերից նույնպես լուրեր են հասնում, որ կարկուտը շատ կողմերում զարկել է։ Մարանդի մեջ երկնքից համարյա խոշոր սառույցի կտորներ են ընկել։ Պատճառած վնասը բազմագումար է։ Օրինակ, Դավրեժի դպրոցին պատկանած այգին կարկուտից առաջ կամենում էին վարձել 85 թումանով, բայց նորանից հետո կես գնով ևս փող տվող չեղավ։

Այստեղ շատ է խոսվում Ռաշա քաղաքում պատահած անցքի մասին, որ իր բարբարոսությամբ ետ չէ մնում Սալոնիկի եղեռնագործությունից։ Այդ անցքը այդպես են պատմում։ Մի պարսիկ կնոջ և մի երիտասարդ հայի մեջ նկատելի են լինում կասկածավոր հարաբերություններ։ Մահմեդական ամբոխը, այս լսելով, կատաղած դիմում է քաղաքի մուշտայիդի մոտ և հայտնում է նորան։ Մուշտայիդը անմիջապես դիմում է մեջիդը և ամբոխը բարձրա-

նալով, խոսում է ժողովրդին, թե որպիսի խստությամբ պատժում է Խալամի օրենքը այդպիսի հանցանքներ և վերջացնում է իր քարոզը ամենասարսափելի կերպով գրգռելով ժողովուրդը, միևնույն ժամանակ կարդալով ողորմելի երիտասարդի մահվան դատավճիռը։ Այնուհետև ամբոխը մի քանի մոլլաների առաջնորդությամբ դուրս է գալիս մեջիդից, և սկսում է որոնել երիտասարդին։ Նորան գտնում են տան մեջ, հարձակվում են և կոտրատելով ու կողոպտելով տան բոլոր կարասիքը, երիտասարդին դուրս են քարշում։ Երիտասարդին բերելով մեջիդի դռանը մի հրապարակի վերա, այն տեղ ժողովուրդը վայրենի կատաղությամբ հարձակվում է նորա վերա և սրերով ծակծկում է... Հետո ոտները մի պարան կապելով, սկսում են քաղաքի բոլոր փողոցներում քարշ տալ։ Աննկարագրելի էր սույն միջոցին ամբոխի դժոխային հոգեզմայլությունը, թե մինչև ո՛ր աստիճան նա բորբոքված, իր սրտի ուրախությունը հայտնում էր հոգևոր երգերով... Այս զոհը իր ցավալի վախճանին հասցնելեն հետո, ամբոխը տակավին չէ հանդարտվում. մահմեդականները գտնում են և հիշյալ կնոջը։ Այս քշվառի մահը էլ ավելի սարսափելի է լինում։ Նորան տանում են քաղաքի հրապարակի վերա, և մինչև կուրծքը թաղում են գետնի մեջ, այնպես որ մարմնի վերևի մասը դրսումն է մնում։ Այնուհետև ամբոխին առաջնորդող մոլլան մոտենում է զոհին և առաջին քարը ինքն գցելով, հրամայում է հետևել իր օրինակին։ Մի րոպեի մեջ խեղճ կնոջ դիակի վերա քարերից մի ահագին բլուր է ձևանում։ Ռաշտի մեջ գտնված ռուսաց, անգլիացոց և ֆրանսիացոց կոնսուլները՝ ոչ մինը չէ համարձակվում իր տանից դուրս գալ. և ճշմարիտ է մահմեդականների այդ սարսափելի մոլեռանդ բորբոքման ժամանակ նոքա կարող էին ենթարկվել Սալոնիկի զոհերի վիճակին։ Հեռագրի թելերը կտրատված լինելով, անհնար է լինում թեհրան լուր տալ, բայց հետևյալ օրը, երբ ժողովրդի կատաղությունը մի փոքր հանդարտվում է, ռուսաց և անգլիացոց կոնսուլները անցքը սուրհանդակով թեհրան իմացում են տալիս։ Քաղաքի դատավորը երկյուղից մի քանի օր շարունակ տանից չէ դուրս գալիս։ Այժմ լսում ենք, որ նորին մեծություն շահը ուղարկել է Ռաշտ մի գունդ զորք և խռովությանը գրգիռ տվող գլխավոր մոլլաները կալանավորվեցան և պետք է թեհրան տարվին, այնտեղ պատժվելու համար։

Մինչև ե՞րբ պետք է շարունակվի Պարսկաստանում մոլլաների այսպիսի մոլեռանդությունը, մինչև ե՞րբ...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, հուլիսի 25-ին

Այս տարի Միջագետի մեջ հայտնված ժանտախտի պատճառով Պարսկաստանի հարաբերությունները Բաղդադի հետ կտրվեցան, պարսիկներին արգելք դրվեցավ այն կողմերում մտնել։ Այս արգելքը զրկեց պարսիկներին մի նշանավոր կրոնական մխիթարությունից, այն է Քարբալայի ուխտագնացությունը, որ կատարվում է Բաղդադից փոքր-ինչ հեռու նաջաֆ կոչված տեղում, ուր դրած են Ալիի նահատակված որդիների Իմամ-Հասանի և Իմամ-Հուսեյնի շիրիմները։

Քարբալայի ուխտագնացությունը պարտավորական է ամեն մի մահմեդականի համար, որ պատկանում է շիա աղանդին։ Եթե մի մահմեդականի ամբողջ հարստությունը հասնում է այն չափին, որ նա կարող է հոգալ ճանապարհի ծախսը, պետք է անպատճառ կատարե յուր ուխտագնացությունը, հակառակ դեպքում նա օրենքի դեմ մեղանչած կհամարվի։ Մի այսպիսի սնահավատությունը ամեն տարի Պարսկաստանի ամենահեռավոր անկյուններից անգամ ուխտավորների հազարավոր կարավաններ քաշում է դեպի իմամների սուրբ շիրիմները և աղքատ, ողորմելի ժողովրդի արծաթը ծախսվում է օտար երկրում։

Թողյալ այդ, պարսիկներն յուրյանց մեռելների դիակներն ևս տանում են Բաղդադ և թաղում են Նաջաֆի հողի մեջ, որ սրբված է իմամների արյունով...

Այս տարի, որպես ասեցինք, ժանտախտի պատճառավ պարսիկները զրկվեցան հիշյալ կրոնական մխիթարություններից։ Բայց իմամներն չուզեցին թողնել Պարսկաստանի ժողովուրդն անխնամ և կարոտության մեջ. նրանք մտածեցին՝ եթե ժողովրդին արգելված է յուրյանց մոտ գալ և յուրյանց ուխտը կատարել, ավելի լավ է, որ իրանք՝ իմամներն տեղափոխվեն ժողովրդի մոտ և նրանց կարոտը լցուցանեն։ Եվ հանկարծ նրանք Բաղդադից գաղթելով հայտնվում են Պարսկաստանի խոյ քաղաքում։

Հիշյալ քաղաքում կա մի վաղեմի մատուռ, որին տեղացիք կոչում են **մաղվարա**, *այնտեղ դրած են մի քանի* **սեիդների**, *այսինքն՝ իմամների* **սերունդների** *շիրիմներ։ Մատուռի միաբանությունը կազմող մոլլաներից մեկն հայտնի տեսիլքի մեջ տեսնում է Բաղդադի իմամներին, որոնք ասում են նրան. «Մենք Քարբալայի իմամներն ենք, մենք չուզեցինք, որ այս տարի պարսիկներն*

գուրկ մնային մեր շնորհներից, և եկանք Պարսկաստան։ Այս մասուն կլինի մեր բնակարանը, այստեղից մենք կթափենք մեր զրույցները ժողովրդի վերա։ Վեր կա՛ց, գնա՛, քարոզիր ժողովրդին, թող բերեն յուրյանց կաղերն, կույրերն ու անդամալույծներն, և նրանք բժշկութիւն կգտնեն»։

Իմամների Խոյ քաղաքում հալտնվելու լուրը կայծակի արագութիւնով տարածվում է մինչև Պարսկաստանի ամենախորին ծայրերը, ամեն կողմից կույրերի, կաղերի, անդամալույծների և զանազան ուխտավորների ահագին բազմութիւն թափվում են դեպի հիշյալ քաղաքը և հրաշալի կերպով բժշկվում են...

Այո՛, բժշկվում են... Թեև բժշկված մեկը ոչ ոք չէ տեսել, բայց ժողովուրդն ստեղծել է բժշկվածների հաղարավոր անծանոթ անուններ և ջերմ ոգևորութիւնով պատմում է բոլոր հրաշքները, որ կատարվեցան նրանց վերա։ Բժշկութիւնը և հրաշքները, որպես միշտ, կատարվում են սնահավատ ժողովրդի բորբոքված երևակայութիւնի մեջ...

Պարսկաստանում այսպիսի երևույթներ պատահում են խիստ հաճախ, բայց նրանց և ոչ մեկը մինչ այս աստիճան ցնորամիտ խաբեութիւն հասած չէ եղել։ Ամեն ընտանիք, որի մեջ գտանվում է ախտավոր մեկը. դիմում է դեպի Խոյ քաղաքը իմամների շնորհը վայելելու և յուր ախտավորը առողջացնելու։ Թեև նրանց բաղձանքը չէ կատարվում, թեև կույրը վերադառնում է յուր տունը դարձյալ կույր աչքերով, այնուամենայնիվ, այսպիսիքը միշտ ունեն մի խոսք յուրյանց կարծիքը արդարացնելու. «Գուցե մեր հավատքը հաստատուն չէր, գուցե մենք ջերմեռանդ հույսով չդիմեցինք իմամի դուռը և նա չկատարեց մեր խնդիրքը»։—«Բայց Քարիմը և Հաշիմը բժշկվեցան, որովհետև նրանց միտքն ուղիղ էր։ Բայց ո՞վքեր են այդ Քարիմը և Հաշիմը, ոչ ոք չէ ճանաչում, ոչ ոք չգիտե, նրանք ապրում են ժողովրդի երևակայութիւնի մեջ...

Այստեղից հասկանալի է, թե ո՞րպես ստեղծվեցան հրաշքները և որպես նրանք կրկնվում են մեր լուսավոր դարումը...

Բայց ցավալին այն է, որ այսպիսի երևույթները միշտ սպառնում են վտանգ տեղային քրիստոնյաներին։ Ժողովուրդը, գրգռված յուր ցնորամիտ մոլեռանդութիւնի մեջ, սկսում է հալածանք բարձրացնել քրիստոնյաների դեմ, ասելով. «անիրավներ, այսքան հրաշքներ տեսնելուց հետո, դուք դարձյալ պիտի մնաք ձեր անհավատութիւնի մեջ»։ Այսպիսով, այսօրվա օրս Խոյ քաղաքի հայերի կյանքը մեծ վտանգի մեջ է։

Կառավարությունը ուշադրություն չէ դարձնում հանգստացնելու անահավատ ժողովրդի ամբոխմունքը, իսկ մոլլաներն յուրյանց կողմից մեծ գրգիռ են տալիս նրան, որովհետև դորա մեջ է նրանց օգուտը, ուխտավորներից նրանք շահում են, նրանք կցանկանային, որ Բաղդադի աներևույթ իմամներն երկար մնային Պարսկաստանում և շարունակեին յուրյանց հրաշագործությունները... Բայց կառավարությունը, եթե խրատված լինի անցյալ փորձերից, նա պետք է ամեն հնարքներ գործ դնե հանգստացնելու ժողովրդի կատաղի հուզմունքը ոչ միայն քրիստոնյաների հանգստությունը պահպանելու համար, այլ նույնիսկ յուր շահերը պահանջում են այդ։ Որովհետև այսպիսի խաբեական երևույթները միշտ ամրապնդում են ռամկին յուր մոլեռանդության մեջ և հետևապես բարձրացնում մոլլաների ազդեցությունը և հարգը, որոնք մոլեռանդության ներկայացուցիչներն են։ Այսպիսով կառավարությունը զրկվում է իրագործելու յուր նպատակը, մոլլաների ազդեցությունը թուլացնելու մասին, որոնք միշտ հակառակ են գնում պետության բարեկարգումների դեմ։

Ի՞նչ խայտառակություն է այդ, մի խաբեբա մոլլայի ինքնահրնար երազի պատճառով ամբողջ Պարսկաստանը տակնուրդա է լինում։ Շինականը, երկրագործը, վաճառականը թողնում են յուրյանց աշխատությունը, բավականին ծախսեր անելով, հեռու տեղերից գալիս են հրաշքներ տեսնելու։ Թողնենք այս իրողության բարոյական կողմը, միթե՞ դա նյութապես չէ վնասում աղքատ և ողորմելի ժողովրդին։

Այժմ ես հասկանում եմ, թե որպես ստեղծվեցան և իրական կերպարանք ստացան հրաշքները...

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 15-ին ներկա 1876 թվի Դավրեժի ազգային-հոգևոր Արամյան դպրոցի հոգաբարձությունը ուղղեց Նորին Վեհափառության կաթողիկոսին ամենայն հայոց հետևյալ աղերսը, ստորագրությամբ նախագահի, Անդրեաս արքեպիսկոպոսի և բոլոր հոգաբարձուների։

Ահա աղերսը՝

«Մայր Աթոռի Գահակալությունը, սկսյալ 1867 թվից, հայկական կյանքի մեջ սկիզբ է դնում մի նոր և փառավոր դարեշրջանի, նոր ուսումը, գիտությունը և հայաստանյայց սուրբ եկեղեցվո բարեկարգությունը ավելի փայլ և պայծառություն ստացավ։ Լուսավորության այդ նոր դարեշրջանը սկսվեցավ այն օրից, երբ սուրբ Լուսավորչի Աթոռը ձերդ վեհափառության վիճակվելու բախտն ունեցավ։

Վեհափառությունդ, քաջ ծանոթ լինելով ժամանակի ոգուն և նորա պահանջներին, գիտելով թե մի մտավորապես ընկած ազգի վերակենդանությունը կայանում է միմիայն նորա կրթության և լուսավորության մեջ,— ամենայն չանք ի գործ դրեց հիմնել Մայր Աթոռի կենտրոնում իմաստության մի տաճար, մի հոյակապ ճեմարան, որտեղից պետք է սփռվեն լուսավորության ճառագայթներն դեպի ամեն կողմեր, ուր կան և ապրում են հայեր։ Դա հսկայական մի գործ է, որի վերա ժամանակը և անաչառ պատմությունը ամենայն պարծանոք պիտի դրոշմե վեհափառիդ հավերժական անունը։

Որպեսզի ուսումը և գիտությունը, որպես լույս և ճշմարտություն, ամեն տեղերում տարածվի հայերի մեջ, ամեն տեղ ներշնչե յուր կենսատու ոգին, վեհափառությունդ գուն գործեց նախ մերձավոր և ամենահեռավոր վիճակներում բարեկարգել դպրոցների դրությունը։ Այդ բարեմասնություններից զուրկ չմնաց և հեռավոր Ատրպատականը։— Դավրիժո ազգային դպրոցի այժմյան բարեկարգ վիճակը ձերդ վեհափառության քաջալերությանը պարտական է։

Թե որպիսի մեծ նշանակություն ունի այդ դպրոցը Պարսկաստանի հայոց այժմյան կարիքների համար, բավական է հիշել այն բազմաթիվ որոգայթները, որոնք ուսման և կրթության անունով այստեղ լարել են այլազավան որսորդները (կաթոլիկ և բողոքական միսիոներները) հայ մանուկները մոլորեցնելու համար։ Այո՛, Դավրիժո ազգային դպրոցը մի հաստատուն պատվար է նոցա բոլոր հարձակումների առաջը առնելու։ Այստեղ հայ մանկտին սովորում է հավատարիմ մնալ յուր մայրենի եկեղեցվույն, սիրել յուր ազգն ու լեզուն, և պատրաստվել հայրենյաց համար պիտանի և գործունյա որդի։

Բայց ցավալին այն է, որ դպրոցի նյութական վիճակը չէ համապատասխանում մինչև անգամ այն ամենաանհրաժեշտ կարիք-

ներին, որոնք նա լցուցանելու ավելի պետք ունի։ Որպես սույն ա-
ւերսագրի հետ ներկայացուցած հաշվեցուցակից վեհափառու-
թյունդ կբարեհաճի նկատել, որ դպրոցը յուր միամյա ելևմտից մեզ
բավականին բաց ունե և նույնը շարունակվելու է և հաջորդ տարի-
ներում, եթե արդյունքի մի նոր աղբյուր չտնօրինվի։ Ի նկատի ունե-
լով մուտքի և ելքի մի այսպիսի զգալի անհավասարակշռությունը,
դպրոցի հոգաբարձությունը այժմ մեծ տագնապի մեջ է, մտածելով,
թե դպրոցի մայր գումարն ամ ըստ ամե պակսելով, վերջապես
կսպառվի, և այնուհետև ուսումնարանը փակվելու վիճակի պետք է
ենթարկվի։

Ուրիշ աղբյուրներ չկան արդյունքի համար և կրկին քաղաքիս
բարերար անձանց նվիրատվությանը դիմել՝ չէ կարելի, որովհետև
նոցա յուրաքանչյուրն յուր կարողության համեմատ, որպես վեհա-
փառությանդ հայտնի է, սկզբանե մի նշանավոր գումար նվիրած
ևն։ Մանավանդ որպես մտածվում է, օրիորդաց ուսումնարան ևս
պիտի հիմնվի, դարձյալ ծանրությունը նույն բարերար անձանց
վերա ընկնելու է, որոց թիվը դժբախտաբար շատ փոքր է։ Աշա-
կերտների վերա նորանոր վճարներ նշանակել անհնար է, որով-
հետև փոքր-ինչ զգալի ծանրությունը կստիպեցնե նոցա աղքատ
ծնողներին մեր դպրոցեն դուրս հանել յուրյանց որդիքը և բողոքա-
կանների վարժատունը հանձնել, ուր ամեն ինչ ձրի է։

Դպրոցի մի այսպիսի անմխիթար նյութական դրությունը ան-
շուշտ ձերդ վեհափառության բազմախնամ ուշադրությունը յուր վե-
րա դարձնելու բախտն պետք է ունենա, որովհետև Պարսկաստանի
փոքրաթիվ հայերը որպես կորուսյալ ոչխարներ արթուն հովվապե-
տիդ կարեկցությանը ավելի շատ կարոտություն ունեն։ Որո վասն
դպրոցի հոգաբարձությունը վստահանում է խոնարհաբար խնդրել,
որ ձերդ վեհափառությունը բարեհաճի Ատրպատականի մի քանի
մասնավոր վանքական և աթոռային մուտքերը տեղային հայերի
սիրտոյից համար գործադրել, հատկացնելով նորանց Դավրիժո
ազգային դպրոցին։

Հիշյալ վանքական և աթոռային մուտքերը, որոց մասին դըպ-
րոցի հոգաբարձությունը, իբրև տեղային ժողովրդի ներկայացու-
ցիչը, խնդրում է ձերդ վեհափառությունից հետևյալքն են. 1. Դո-
խարդանու այգվո եկամուտը. 2. Սուրբ Նախավկայի վանքի եկա-
մուտի մնացորդից 100 ռուբլի. 3. Դավրիժո եկեղեցյաց սուրբ Աթո-
ռի անունով հավաքված գանձանակագրամը։

Հուսով եմք, որ ձերդ վեհափառությունը կհարգի հոգաբարձության ամենախոնարհ աղերսը, որո վասն եմք և մնամք բազմախնամ հովվապետիդ օրհնության և շնորհացն կարոտ։

(Ստորագրություններ)

Պատասխան

...Մինչդեռ Դավրեժեն և վիճակեն նյութական ոչինչ օգուտ չկա և չսպասվեր ևս ստանալ, նկատելով նոցա նյութական վիճակը, սակայն խի՞ղճ է, որ էջմիածնի կալվածքին արդյուներ ևս ինքյանց վնարգարձնել ուզենան և եթե էջմիածին հետզհետե աստի և անտի ունեցած առավել կամ նվազ արդյունքը սմին և նմին քողու, ապա ինքն ինչո՞վ պիտի կառավարվի։

Վ. Ե. ՄԱՆԿՈՒՆԻ

Ընթերցող, դու կարդացի՞ր այս աղերսը, որ ուղղված է նորին վեհափառության կաթողիկոսին ամենայն հայոց, դու տեսա՞ր այն կոշտ լակոնական պատասխանը, որ դարձած է դեպի խնդրատուները։

Աղերսը կատարյալ աղեխս է. այս բառի բուն նշանակությամբ նորա մեջ չկան փաստեր՝ ապացույցներ, որ հաստատում են խնդրատուի իրավունքները, նորա մեջ կան միայն փաղաքշական խոսքեր, խայտաճամուկ գովեստներ, լաց և արտասուք։— Այսպիսի աղերսը ուղղում են միայն ստրուկներն, որովհետև կարծում են, թե այլ ոճով իրանց տիրոջ սիրտը ամոքել կարող չեն...

Պարսկաստանի հայը, դարերով ստրկության մեջ ճնշված հայը՝ լավ սովորած է հիշյալ ոճին, նա չգիտե ի՞նչ է իրավունքը, նա միայն գիտե աղաչել և պաղատել...

Մենք չենք գարմանում աղերսի պարունակության վերա, մեզ զարմացնում է միայն պատասխանը. ուրեմն խոսենք դորա մասին։

Դավրեժու ազգային հոգաբարձությունը վիճակային առաջնորդի հետ միասին ուղղում են ի աղերս դեպի ամենայն հայոց կաթողիկոսը, խնդրելով, որ Պարսկաստանից Ս. էջմիածնա գանձարանը մտնող ինչ-ինչ արդյունքները հատկացվին Դավրեժու ազգային դպրոցին։— Խնդիրը բավականին կարևոր է, և խնդրատուներն հասարակ մարդիկ չեն.— խնդրում են՝ վիճակային առաջնորդն ազգային հոգաբարձության հետ միասին։

Էջմիածնում սինոդ կա։ Վեհ. կաթողիկոսը պետք է աղերսադիրը առաջարկեր սինոդին, որովհետև ուղղակի վերաբերում էր

տուրք աթոռի ելևմտական մասին, և սինողը յուր կողմից քննելով խնդիրը, կամ կընդուներ և կամ կմերժեր։

Բայց այս պաշտոնական ձևերից և ոչ մեկը գործ դրված չէ նոքա։ Ջինի՞ քե վեհ. կաթողիկոսը ոչինչ տեղեկություն չուներ այդ ազերսի վրա։— Պատասխանում է Մանկունին։ Ով է այդ Մանկունին։— Վեհարանի վաղեմի սենեկապետը, որ այսօր եպիսկոպոսական վեղար է կրում։ Շատ լավ, այսպիսի եպիսկոպոսներ, փառք աստուծո, շատ ունենք, մի՞թե նրանց իրավունք է տված ինքնահաճ կերպով ազգային գործերի մեջ մտնել։

Այժմ ես հասկանում եմ այն խոսքը, որ շատերն ասում են, թե էջմիածինը կառավարում է Մանկունին...

Այստեղ զարմանալու ոչինչ չկա. ազգերի պատմության մեջ դա մի նոր բան չէ։ Եղել են ժամանակներ, որ պալատական սենեկապետներն և արքունյաց նաժիշտները մեծ դեր են խաղացել ամբողջ պետությունների ճակատագրի մեջ...

Դառնանք հիմա ազերսագրի այն կետերին, թե որքան իրավացի կամ անիրավ էր ազգ. հոգաբարձության խնդիրը։

1. Ազգ. հոգաբարձությունը խնդրում է ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի արդյունքից 100 ռուբլի (ինչո՞ւ ոչ ամենը) շնորհել Դավրիժո ազգային դպրոցին։

Ինչո՞ւ ոչ ամենը — կրկնում ենք դարձյալ։ Էջմիածինը ի՞նչ իրավունք ունի տանել ս. Նախավկայի վանքի արդյունքը։ Որպեսզի բացատրենք այս հարցը, մենք ստիպված ենք ասել մի ամբողջ պատմություն։

Ռուսաց պարսից հետ պատերազմից հետո, Թուրքմենչայի դաշնագրության համեմատ, պարսից հպատակ հայերին թույլ տրվեցավ գաղթել դեպի Ռուսաստան։ Նույն ժամանակվա Ատրպատականի փոխարքան, որ կոչվում էր Նայբուլ — Սալթանա (Աբբաս-Միրզա մեծ իշխանը) գիտելով հայ հպատակների մեծ նշանակությունը Պարսկաստանի վաճառականության և երկրագործության մեջ, սկսավ ամեն կերպ կողմնակի՝ հնարներ գործ դնել, որպեսզի գաղթականությունը արգելե։ Մեծ իշխանին աջակից էին անգլիական դեսպանատան մի քանի պաշտոնականներ, որոնք պաշտպանում էին այն ժամանակ Պարսկաստանի շահերը։ Գաղթականությունը թեև իսպառ չ'խափանվեցավ, բայց հայերը մասամբ պահվեցան Պարսկաստանում յուրյանց հայրենի հողի վերա։ Այս մնալու պատճառն այն է, որ մեծ իշխանը կարողացավ գրավել հայ ժողովուրդը զանազան առանձնաշնորհումներով. օրինակ, գյուղա-

ցինների հարկերը թեթևացրուց, Դավրեժ քաղաքի հայերին բոլորովին ազատեց հարկատվությունից, շարիաթի անիրավությանց դեմ զանազան ֆերմաներ շնորհեց և գյուղերի նշանակություն ունեցող մելիքներին ու տանուտերերին մշտական ոռճիկ սահմանեց։ Մեծ իշխանը, իմանալով, որ հայերը կապված են ավելի յուրյանց եկեղեցուն և եկեղեցականներին, աշխատեց գրավել և այս կողմը։ Հաֆիվանա եկեղեցուն շնորհեց մի քանի օրավար գետին[2], որպես եկեղեցական կալվածք, որովհետև այս եկեղեցին նույն ժամանակավ առաջնորդարանն էր, և առաջնորդին մշտական ոռճիկ սահմանեց, որը մինչև այսօր ստանում է ամեն մեկ Պարսկաստանի վիճակավորն։— Այժմ մոտեցանք բուն խնդրին. մեծ իշխանը շնորհեց ս. Նախավկայի վանքին մի ամբողջ գյուղ, որ կոչվում է Դարաշամբ, նույն գյուղը, որի մոտ գտանվում է վանքը, որը և մինչև այսօր համարվում է վանքային կալվածք։ Վանքի գլխավոր արդյունքը գոյանում է այս գյուղից և այս արդյունքը մտնում է էջմիածնա գանձարանը, ի՞նչ իրավունքով, հայտնի չէ...

Եթե մենք ուշադրությամբ կարդալու լինենք Մանկունու պատմությանը, նորա մեջ կգտնենք այս խոսքերը. «Մինչդեռ Դավրեժեն և վիճակեն նյութական ոչինչ օգուտ չկա և չպասվեր ևս ստանալ, սակայն խի՞ղճ է, որ էջմիածնի կալվածքին արդյունքը ևս ինքյանց (այսինքն՝ վիճակի հայերին) վերադարձնել ուզենանք։— Այս խոսքերից պարզ երևում է, որ Մանկունին ս. Նախավկային պատկանած Դարաշամբ գյուղը էջմիածնա կալվածք է համարում։ Դա կարելի էր, եթե Մանկունին յուր հրաշագործ զորությամբ հրաշ ան տար երասխ գետին թողնել Պարսկաստանի և Ռուսաստանի սահմանի դիծը և մի քանի տասնյակ մղոն հեռվից հոսել, այն ժամանակ Դարաշամբը կընկներ Ռուսաց հողի վերա, և ավելի մոտենալով էջմիածնին, Մանկունին կարող կլիներ ջնջել վանքի

---

[1] Մահմեդական օրենքով, եթե մի այլազգավան ընդունե իսլամը, նորա ազգականներից որև մեկնելու լինի, ժառանգությունը մահմեդական եղողին կհասնի, քեև մեռանողն ունեներ ուղղակի ժառանգներ։ Այս անկանոնությունը քիչ զրկանք չէր պատճառում հայերին, որոնցից շատերն ընդունում էին իսլամը յուրյանց ազգակիցների կայքը հափշտակելու համար։

[2] Չնայելով, որ պարսից օրենքով բոլորովին արգելված է եկեղեցական կալվածքը, կամ այն, որ կոչվում է վախմիաք, վաճառքի դնել, էջմիածնից Պարսկաստան ուղարկված վիճակային առաջնորդներն սկսեցին վերոհիշյալ կալվածքը փոքր առ փոքր վաճառել. բայց հայտնի չէ նորա փողը սուրբ Աթոռն ուղարկեցին քե յուրյանց քսակը դրին։ Եթե այն հողը մնացած լիներ, կարող էր այժմ նորա եկամտով նույն գյուղում մի օրինավոր վարժարան պահպանվել։

դռան ճակատից այն պարսկերեն հսկա արձանագրությունը, որ ասում է, թե Նախիջուլ-Սալթանան չէ ընծայել Դարաշամբ գյուղը էչմիածնին, այլ ընծայել է նա ս. Նախավկայի վանքին, այն վանքին, որ այսօր Պարսկաստանի հողի վրա է գտնվում, ընծայել է այն վանքի ժողովրդին, որ այսօր Պարսկաստանի հպատակներն են[1]։

Մեր կարծիքով, Դավրեժի ազգային հոգաբարձությունն ամենևին պատճառ չուներ խնդրել էչմիածնից, որ յուրյան, այսինքն՝ Պարսկաստանի ժողովրդին պատկանած մի կալվածքի արդյունքից 100 ռուբլի ողորմություն շնորհեր, քանի որ ինքը հոգաբարձությունը կարող էր բոլորովին դադարեցնել ամբողջ արդյունքի էջմիածին մտնելը։ Եվ եթե օգուտ քաղելով ժողովրդի կուրությունից մինչև այսօր հափշտակվել է արդյունքը,— մենք այդ կոչում ենք կղերական հարստահարություն, ավելի ոչինչ...

Դառնանք այժմ 2-րդ խնդրին։

Դավրեժու ազգ. հոգաբարձությունը խնդրում է Դոխորղանու այգիի արդյոնքը սեփականել Դավրեժի ազգ. դպրոցին։ Մանկունին այդ ևս համարում է էջմիածնա կալվածք, բայց ապացույցներն հայտնի չեն։

Մենք դարձյալ ստիպված ենք ասել մի նոր պատմություն Հայերի Պարսկաստանից գաղթականության մասին։ Հայերի գաղթականությունը Պարսկաստանից այնքան հանկարծակի եղավ, որ նրանք ամենևին չունեցան հնարավորություն վաճառելու յուրյանց կալվածքները, այլ թողեցին մնացող ազգականներին, և եթե դոքա չկային, ընծայեցին տեղային որևիցե եկեղեցուն։ Այսպիսի նվերներից մեկն է Դոխորղանու այգին, որ այսօր էջմիածնա կալվածք է դարձել...

3-րդ խնդիրն ավելի հետաքրքրական է։

Դավրեժու ազգ. հոգաբարձությունը խնդրում է, որ Դավրեժ քաղաքի եկեղեցիների մեջ Մայր աթոռի անունով հավաքված գանձանակագրամը հատկացվի տեղային ազգ. ուսումնարանին։ Բայց Մանկունին ուրանում է, թե «Դավրիժեն և վիճակեն նյութական ուշինչ օգուտ չկա և չսպասվիր ևս ստանալ»։ Ուրեմն էջմիածինը ի՞նչ կարող է տալ, քանի որ ինքը ոչինչ չէ ստանում։

---

[1] Մենք յուր ժամանակին կհրատարակենք հիշյալ արձանագրության ճիշտ օրինակը, նույնպես և Նախիջուլ-Սալթանայի շնորհած արքունական ֆերմանը, ցույց տալու համար, թե մինչև ո՛ր աստիճան էջմիածինը բռնաբարել գիտե իրավունքը և արդարությունը։

Դա կատարյալ ստություն է։

Բայց այստեղ կա մի ուրիշ հարց ևս, որտեղ երևան է գալիս կղերական պատկերը յուր ամբողջ հոգևոր հարստահարությամբ։

Ամեն մարդ գիտե Պարսկաստանի հայոց թշվառությունը, ամեն մարդ գիտե, որ նա աղքատ է, և հայտնի է այդ ողորմելի աղքատության պատճառը։ Նորա ձեռքի բոլոր վաստակը գնում է գանազան տուրճերի։ Նա պետք է տուրք վճարե դիվանին (կառավարությանը)։ Նա պետք է տուրք վճարե կալվածատերին, որի հողը մշակում է։ Նա պետք է տուրք վճարե սարփարաստին և այլն։ Ավելացնենք դոցա վերա և հոգևոր տուրճերը, նա առանձին տուրք է վճարում վիճակային առաջնորդին պահակ, թաղման և մկրտության համար։ Առաջնորդն ստանում է նաև ժողովրդի ծխահամարի թվով մի ուրիշ տուրք ևս, որ կոչվում է «հոգևոր պտուղ»։ Քահանան ստանում է առանձին բոլոր այն ծիսակատարությանց մասին, որ եկեղեցին մատակարարում է յուր ժողովրդին։ Դոցա վերա ավելանում են և գանձանակադրամներն[1], որ եկեղեցիներում հավաքում են էջմիածնի անունով, և աթոռանաւրկը, որ ստացվում է Մայր աթոռի համար։— Այս բոլոր հոգևոր տուրքերն, եթե յուրյանց ժամանակին չվճարվեն, ոչ միայն պարտազանցը զուրկ կմնա եկեղեցվո այս և այն խորհրդից, այլ գործ կգրվին ավելի ազդու միջոցներ, որոնք գործ է դնում դիվանը յուր հարկերը հավաքելու մասին...

Այժմ ո՞վ կարող է մեղադրել մի այսպիսի ժողովրդին, որ ենթարկված է այսպիսի «կղերական հարստահարությանց»։ Ո՞վ կարող է մեղադրել նորան այն մոլորության համար, որ նա յուր մայրենի եկեղեցին թողնելով կամ կաթոլիկ է դառնում, կամ բողոքական և կամ մահմեդական...

Այս բոլորից հետո այժմ հասկանալի է, թե որքան իրավացի է Մանկունու պատասխանը, իսկ այդ պատասխանը մենք համարում ենք էջմիածնա խոսքը, և Դավրեժի հայ հասարակությունն ևս այնպես է ընդունում։

---

[1] *Կար մի ժամանակ, որ Տաճկաստանի բոլոր եկեղեցիներում պտտում էին գանազան գանձանակներ գանազան վանքերի և անապատների անունով, նոցա մեջ ավելի նշանակություն ուներ էջմիածինը. բայց Կ. Պոլսի պատրիարքը բոլորը արգելեց։ Այժմ Պարսկաստանի եկեղեցիներն նույն դրության մեջն են գտնվում, բայց այստեղից ե՞րբ պետք է արգելվի այդ հոգևոր մուրացկանությունը, հայտնի չէ...*

Ի՞նչ էր մնում այնուհետև անել հասարակությանը, նա էջմիածնա դեմ դատ բացելու և յուր իրավունքները պահանջելու ընդունակություն չունի. նրան մնում էր ասել մի բան, թե «մենք այսուհետև էջմիածնա հետ գործ չունենք, մենք կտրում ենք մեր բոլոր կապերը Մայր աթոռի հետ, մենք կհիմնենք Պարսկաստանում մի առանձին հոգևոր կառավարություն, որպես ունի Տաճկաստանը յուր պատրիարքներով և կաթողիկոսներով և էջմիածինը այնուհետև չէ կարող տանել մեր վանքերի արդյունքը...»

Ով այսպես էլ անելու միտք ունի նա։

Այժմ մենք առաջարկում ենք մեր ընթերցողին, որքան էլ զզվելի լիներ «Արարատ» ամսագիրը, առնել մարտ ամսի համարը և կարդալ եր. 82 «Կղերականություն» վերնագրով հոդվածը։ Պ. Հայկորդին, կամենալով ցրել կղերականությունը, միևնույն ժամանակ ինքն չէ զգում, որ յուր գրվածքից փշում է կաթոլիկ-կղերականության խիստ քթված հոտը... Նորա հոդվածի մեջ աչքի են պարկում հետևյալ խոսքերը. «Հայոց ընդհանուր հայրապետությունը,— որո Մայր աթոռը միշտ (**) համարված է Ս. էջմիածինը,— դարավոր ժամանակներե հետե ամեն տերություններե, որոց ձեռքին տակ գտնված են տիրասեր-հայկազունք, ճանաչված է այն ազգին ներկայացուցիչը թե՛ կրոնական և թե՛ քաղաքական նկատմամբ, ուստի և Ս. էջմիածնա Մայրագույն պատրիարքությունը՝ ամենայն հայոց կաթողիկոսությունը այդ յուր պաշտոնը չանացած է հավետ կանոնավոր ու ազդօգուտ կերպով կատարել»։

Թողնենք անցյալը, թողնենք պատմությունը, երբ էջմիածնա կաթողիկոսներն պարսիկ իշխաններից կաշառքով էին հափշտակում Մայր աթոռի գահակալությունը, և պատրաստի փող չունենալով պարտամուրհակներ էին տալիս, և ժամանակին չկարողանալով վճարել, Մայր աթոռի սրբությունքը վաճառվում էին... Թողնենք կեղտոտ անցյալը...

Այժմ ի՞նչ «կանոնավորություն» և ի՞նչ «ազդօգուտ» չանդրություն ես գտնում, ընթերցող, էջմիածնա վարմունքի մեջ դեպի Պարսկաստանի քշվառ ժողովուրդը։ Բողոքական և կաթոլիկ քահանաներն հեռու երկիրներից գալիս են, Պարսկաստանում յուրյանց արծաթը և կյանքը սպառում են, հայերին որսալու համար դպրոցներ են հիմնում։ Բայց էջմիածինը ամբողջ Ատրպատականի մեջ գտնված իսկ հայ դպրոցի արդյունքը տանում է... նորանից խընդրում են նորա մի փոքր մասը գնդյա շնորհել յուրյանց որպես ողորմություն. այն ևս Մանկունու բերանով մերժվում է... Ահա՛, այս-

պես է կատարում Էջմիածնա պատրիարքությունը յուր «կանոնավոր և ազգօգուտ» պաշտոնը դեպի յուր հետ կապված հայ ժողովուրդը...

Մեր ազգի մտածողներին վաղուց զբաղեցնում է մի խնդիր. արդյոք պե՞տք է Էջմիածինը հայոց ընդհանուր ազգի Մայր աթոռը ճանաչել և Տաճկաստանում գտնված պատրիարքությունների և կաթողիկոսությունների իբրև հակաթոռ, և որպես Հայկորդին ասում է՝ չկաթողիկոսություն համարել։ Մենք ցանկություն չունենք այդ հարցը քրքրել՝ որովհետև գիտենք, որ հայոց ազգի կյանքը և նորա ժամանակակից պահանջները իրանք կտնօրինեն յուրյանց գործը։

Բայց մենք կառաջարկենք մի ուրիշ հարց, թե ո՞վ է մեղավոր, որ օտար պետությանց մեջ գտնվող հայերն օրըստօրե յուրյանց կապերն կտրում են Էջմիածնա հետ... Ո՞վ է մեղավոր, որ Պարսկաստանի հայերն այսօրվա օրս մտածում են յուրյանց համար առանձին և Էջմիածնից անկախ հոգևոր կառավարություն կազմել...

Պատասխանը ինքնըստինքյան հասկանալի է...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրեժ, 13 օգոստոսի

Մինչ Տաճկաստանը յուր քրիստոնյա հպատակներին նորանոր արտոնություններ շնորհել, իրավունքի հավասարություն տալ և նրանց վաղեմի ծանր և անտանելի լուծը թեթևացնել է խոստանում, որպեսզի քրիստոնյա պետությունների համակրությունը ստանա և նրանց կողմից իրան սպառնացող վտանգը հեռացնե,— ընդհակառակն Պարսկաստանը յուր քրիստոնյա հպատակների վերաբերությամբ դեռ վաղեմի բարբարոսության մեջն է գտանվում, բարբարոսություններ, որ կրում են իրանց վերա լամկթեմության, չինգիզխանյան դարերի արյունոտ կնիքը...

Հայը Պարսկաստանում ոչինչ բանի տեր չէ. նրա կյանքը, նրա կայքը և նրա ընտանիքը իրան չեն պատկանում։

Նրա կյանքը և մի հավի կյանքը՝ երկուսն էլ միևնույն նշանակություն ունեն։ Որպես մի ժամանակ կատաղի ենիչերին յուր սրբ

զորությունը փորձելու համար հայի գլուխներ էր թոցնում, այնպես էլ պարսիկը յուր հաճույքի համար կարող է մի հայ սպանել և անպատիժ մնալ։

Օվ նրա կայքը, այո՛, իրանը չէ։ Պարսկի տանը ինչ որ պահկաս է, նա առանց պատասխանատվության հափշտակում է և խլում է հայից։ Օվ նրա ընտանիքը նույնպես իրանը չէ. նրա գեղեցիկ աղջիկը և կինը միշտ զոհվում են մահմեդականի կրքերին...

Մեր ասածներն դարտակ խոսքեր չեն, այլ հիմնված են ամենօրյա պատահած անցքերի վերա։ Հիշենք մի քանիսը, որ մոտ օրերի անցքեր են։ Արդեբիլում հայ երիտասարդներն ձիարշավ են ունենում, նրանց մեջ գտանվում է մի թուրք. դա նախանձից գըրգռված, արձակում է յուր հրացանը և սպանում է հայերից մեկին։ Զարագործը թեև բռնվում է, բայց մնում է անպատիժ։ Պաշտում մի հայ երիտասարդ բոլորովին անտեղի կասկածանաց պատճառավ մի թուրք հրապարակական կնոջ հետ, քարկոծվում է կատաղի ամբոխից։ Մարաղայում թուրքերը դաշտից հափշտակում են մի հայ աղջիկ, և նրան շաքաթներով այստեղ և այնտեղ ման ածելեն հետո, երբ գործը դատի է հասնում, համաձայնում են աղջիկը ետ դարձնել յուր ծնողներին միայն այն պայմանով, երբ նրանք կտային մի նշանավոր գումար փոխ։ Ծնողներն աղքատ լինելով, տեղային հայ հասարակութիւնը յուր միջից հավաքում է բավականին գումար, և մոլլաներին ու դատավորին կաշառք տալով, ետ են գնում իրանց անպատված աղջիկը...

Սուլդուզում մի տան մեջ երբ գյուղացի հայերն հավաքված, կատարում էին մի հանգուցելո սուգը, հանկարծ գյուղատեր խանի եղբայրն քսան զինվորված մարդերով պաշարում է տունը և հափշտակում է այնտեղից մի աղջիկ։ Զարագործը յուր անմեղ զոհը մինչև 15 օր յուր կրքերին ծառայեցնելեն հետո, աղջիկը փախչելով ազատվում է, բայց կրկին հափշտակվում է նա...

Թողնենք այդ անիրավություններն, որոնք թեև հաճախ կրկնվում են, բայց դարձյալ պատահական են, դառնանք այն հարստահարություններին, որ կատարվում են մշտական կերպով և հաջորդաբար։

Գյուղացիները սարսափելի թշվառության մեջ են. կալվածատեր խաների հարստահարությունը հասցրել է նրանց վերջին աստիճանի աղքատության։ Խաներն առնում են գյուղացիներից երեքպատիկ, չորեքպատիկ անգամ ավելի տուրք, քան այն գումարը, որ նշանակել էր գյուղի վերա կառավարությունը։ Մենք իբրև օրի-

նակ կվեր առնենք միայն Ղարադաղի Քեյվանի կոչված գավառի 6 հայաբնակ գյուղորայքը։ Ներևակայեցեք, ի՞նչ կլինի մի հայ գյուղացու վիճակը, երբ նա 25 թուման տերությունից նշանակված հարկի փոխարեն վճարել է 700 թուման, դեռևս չէ ազատվում հարկահաններից (Սըղըն գյուղ)։ Ով մնացյալ գյուղորայքն 280 թուման փոխարեն վճարել են 1500 թուման, տակավին պահանջում են նրանցից։

Ինչո՞ւ են տալիս, գուցե կհարցնեն ընթերցողը։

Գյուղացին իր համաձայնությամբ չէ տալիս, այլ նրանից առնում են սարսափելի բռնություններ գործ դնելով, բռնություններ, որ ոչ մի բարբարոսի մտքից անգամ անցած չէ։ Հիշյալ գավառի կառավարիչները՝ Բաղր-խանը և Մահմուդ-խանը, իրանց հանձնված թշվառ հայերը անողորմ կերպով կողոպտելեն հետո, դարձյալ նորանոր հարկեր են պահանջում։ Գյուղացիք այլևս վճարելու կարողություն չունեն, բայց խանը ուշադրություն չէ դարձնում նրանց արտասուքին ու լացին, սկսում է ավելի գազանական միջոցներ գործ դնել, որ ինկվիզիցիան երբեք գործ չէ դրած յուր զոհերի վերա։ Մենք կհիշենք միայն մեկը, թող մնացածի մասին գաղափար ստանա ինքը ընթերցողը։

Բաղր-խանը գյուղացիների բոլոր այն իրեղենները, որոնք որևիցե արժեք ունեին, կողոպտելեն հետո, բռնել է տալիս գյուղի ծերունիներին, զանազան տեսակ չարչարանքներով սկսում է զուտ փող պահանջել։ Օրինակ 70—80 տարեկան ծերերի ամորձիքից ծանր քարեր քարշ տալով, ծեծի և խարազանի զորությամբ ստիպեցնում է նրանց վազ տալ... Տեսեք, ամբողջ մարդկային պատմությունը չունի յուր էջերում չարչարանքի մի այսպիսի սատանայական օրինակ... Երևակայեցեք, թե մինչև ո՞ր աստիճան զարգացած է պարսից մեջ տանջելու արհեստը...

Գյուղացիներից ոմանք հազիվ կարողանում են փախչել և գալ Դավրեժ, և Ատրպատականի առաջնորդի միջնորդությամբ յուրյանց բողոքը հայտնելով բարձր կառավարությանը, այո՛, նրանց վերա տրած դրված զարհուրելի բարբարոսությունները գրավում են կառավարության ուշադրությունը։ Նորին վսեմության՝ Ատրպատականի կառավարչի՝ Սահաբ-դիվանի հրամանով Բաղր-խանը Ղարադաղից բերվում է Դավրեժ։ Գյուղացիների բողոքին խոստանում են լիակատար բավականություն տալ. Բաղր-խանին պատժել, անիրավաբար հափշտակած փողերն ետ առնել և այլն։— Իսկ այդ բոլոր խոստումնքներն իպուր են անցնում, որովհետև Բաղր-խանը

հետևելով Պարսկաստանի սովորական ձևերին, կարողանում է մի քանի հարյուր թոմանով դեպի ինքն գրավել դատավորների որպես օգնությունը, նույնպես և նրանց խղճմտանքը...

Այժմ գյուղացիների վիճակն ավելի անտանելի դարձավ, որովհետև, նրանք իրանց բողոքին բավականություն չստանալեն հետո, այլևս չեն համարձակվում վերադառնալ դեպի իրանց տները, վախենալով, լինչ թե ենթարկվեն իրանց բռնակալի ավելի սարսափելի վրեժխնդրությանը...

Մի քանի ելք միայն կա այս դժոխային դրությունից ազատվելու։ Գյուղացիներն այժմ մտածում են թողնել Պարսկաստանը և գաղթել դեպի ռուսաց հողը։ Երասխ գետը միայն բաժանում է նրանց երկիրը Ղարադաղի գավառից. անցնելով գետը, նրանք ազատված կլինեն, և դա շատ դյուրին է...

Կառավարությունը բոլորովին անհոգ է այդ մասին, նա ամենևին չէ ուզում հասկանալ, որ մի անիրավ Բաղր-խանի և գազան Մահմուդ-խանի պատճառով յուր ժողովուրդը գաղթում է և ցրվում է դեպի օտար երկրներ։ Այսպիսի Բաղր-խաններն ամեն տեղ նույնն են գործում, շատ ժամանակ չէ, մի քանի օր առաջ էր, որ 30 գերդաստան հայեր Սուդուզից գաղթեցին դեպի Երևանու գավառը. և ամեն օր տեսնում ենք, թե որպես Սպահանի հայերն խումբերով գալիս են և գնում են դեպի ռուսաց Հայաստանը։ Շահ Աբասը այս մարդերին Գողթան գավառից տարավ Պարսկաստան այն մտքով, որ յուր երկիրը երկրագործության և վաճառականության մեջ ծաղկեցնեն, և նա չսխալվեցավ։ Բայց նրա հաջորդների սրով խաներն սրով և արյունով դուրս են հալածում իրանց երկրից Պարսկաստանին հազարավոր օգուտներ տված հայերին...

Իսկ այդ բոլորը գործողը չէ բարձր կառավարությունը, նա ոչինչ բանից տեղեկություն չունի... գործում են միայն Բաղր-խանի և Մահմուդ-խանի նման բռնակալներն... Դրանք Ջալաբյան ցեղին են պատկանում, ջալաբյանցի և ավազակ բառերն միևնույն նշանակությունն ունեն Պարսկաստանում։

Համարձակվում ենք նորին վսեմության Սահաբ-դիվանի ուշադրությունը դարձնել հիշյալ իրողությունների վերա, նկատելով, որ նրա կառավարությանը պատիվ չի բերի մեր այս ժամանակում,— երբ ամեն պետություն յուր հպատակների հանգստության համար է մտածում, առանց խորություն դնելու կրոնի և ազգության,— հայերն Պարսկաստանում հարստահարված լինեին Բաղր-խանի և Մահմուդ-խանի նման ավազակներից...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրիժ, օգոստոսի 15

Պարսկաստանում հրաշագործությունները տակավին կրկնվում են, նրանք սկսեցին հայտնվել և ուրիշ քաղաքներում։ Քանի օր առաջ Դավրեժի ամբողջ մահմեդականությունը սարսափելի ոգևորության մեջ էր. գիշերները քաղաքը լուսավորվում էր անհամար հրաշալույցներով. բոլոր կտուրների վերա լինում էին հրախաղություններ և հրացան գործիքների որոտմունքը հանգստություն չէին տալիս։ Մեչիդներից լսելի էին լինում հոգևոր երգեցողություններ, և ամբոխը նրանց մեջ հավաքված, մինչև լույս աղոթում էր...

— Ի՞նչ է պատահել։

— Նոյ հրա՜շք։

Ահա՜ ժողովրդի պատմությունը. յոթանասուն տարվա անդամալույծ մեկը, մի ծերունի մահմեդական, երկար տանջվելով յուր անբախտ դրության մեջ, վճռում է կամ մեռնել և կամ բժշկություն գտնել։ Այս մտքով նա մի գիշեր հրամայում է իրան տանել քաղաքի ուխտատեղիներից մեկում, որ կոչվում է իմամզադա։ Այնտեղ նա յուր վզից մի թոկ է կապում և այնպես քարշ է ընկնում իմամզադայի առաստաղից, աղոթելով, որ կամ խեղդվի, մեռնի և ազատվի, և կամ իմամը նրան բժշկություն շնորհե։ Այս դրության մեջ նրա քունը տանում է։ Հանկարծ նրա կողքը խթում են։ Նա զարթնում է և օդի միջից լսում է մի աներևույթ էակի խոսքերը՝ «վե՛ր կաց, գնա՛, դու բժշկված ես»։

Նրա վզից կապած թոկը ինքն իրան կտրատվում է, անդամալույծը վեր է ցատկում և բոլորովին առողջ ոտերով վազում է մեծ մոլլայի տունը և, պատմում է յուր վերա կատարված հրաշքը... Առավոտյան մեծ մոլլան հայտնում է մյուս մոլլաներին և քաղաքի բոլոր մեչիդները լցվում են բազմութիւնով, որոնց մեջ նրանք սկսում են փառաբանել Մուհամմեդի ալլահը յուր ցույց տված հրաշքի մասին...

Ժողովրդի մոլեռանդությունը հասնում է ծայրահեղության։ Բժշկված անդամալույծը դառնում է բոլոր քաղաքի համար սրբության առարկա։ Նրա մորուքի և գլխի մազերը բաժանվում են չերմեռանդ մահմեդականների մեջ[1]. նրա հագուստը գզգզում են և

[1] Սույն վիճակին ենթարկվեցավ 1855 թվականի սրբազան կովը, որ սպան-

ամեն մի պատառն մի մարդու ձեռքումն է մնում։ Որպես սրբություն և նրա հնացած հողաթափներն անգամ նվիրական առարկաների կարգն են անցնում...

Մե՜ծ էր մահմեդականների ոգևորությունը։ Մենք հայերս հանգստություն չունեինք. փողոցներից անցնելու միջոցին թուրքի փոքրիկ լակոտներն ևս ասում էին մեզ. «էրմենի, ինչո՞ւ չես թուրքանում, որ հոգիդ ու մարմինդ ազատվի»։

Ժողովրդի հոգևոր կատաղությունը կարող էր ավելի վատ հետևանքների հասնել, եթե նորին վսեմությունը՝ Ատրպատականի կուսակալ Սահաբ-դիվանը հուզմունքի առաջն չառներ։ Նա կոչել է տալիս յուր մոտ բժշկված անդամալույծին, և ստուգելով, որ բոլորն շինծու խաբեություն է և ավելի ոչինչ, հրամայում է նրան փայտի կապել։ Եվ բժշկված ոտերին մի քանի հարյուր փայտի հարվածքներ տալով, և այժմ ճշմարիտ անդամալույծ դարձնելով[2], Սահաբ-դիվանը հրամայում է նրան խաղաղից հեռացնել։ Խռովությունը դադարում է։ Որքան ամոթ է մեր դարումը այսպիսի խաբեություններով պարզամիտ ռամկին մոլորության մեջ գցել,—դա ինքնըստինքյան հայտնի է։ Բայց Պարսկաստանում այս երեվույթների հաճախ կրկնվելն ունի յուր առանձին պատճառները։ Հրաշքներն միշտ հայտնվում են որևիցե հասարակական տագնապի միջոցներում, մանավանդ այն ժամանակ, երբ կրոնական հեղափոխություններ են լինում և ժողովրդի մոլեռանդությունն ավելի գրգռված է լինում։ Պարսկաստանում այժմ հայտնված բազմաթիվ աղանդներն, որոնք իսլամին մեծ վտանգ են սպառնում, շատ բնական է, որ հարուցանեին այսպիսի հրաշքներ,— Իսկ այդ բոլորը հին և փտած զենքեր են. ճշմարիտ կրոնքը կարող է պահպանվել միմիայն ճշմարիտ կրթության մեջ։

դանոցեն մասվաճառի ձեռքից փախչելով, Դավրեժի Հազրաթ-Սահարի մեջիդը մտավ։ Ղազրմելի անասունի մազերի ամեն մի հատը մի մահմեդականի ձեռքում մնաց, որպես բժշկության առարկա, մի քանի շաբաթ նա մեջիդում բանկագին խալիների վրա պառկելու բախտն ունեցավ, բայց հետո կրկին դեպի սպանդանոց տարվեցավ...

[2] Որպես երևում է, այդ մարդը երբեք անդամալույծ չէ եղել, այլ մորից կաղ ծնված մեկը, որին երբ ասում էին, Քե դու դարձյալ կաղ ես մնացել, նա պատասխանում էր՝ կաղությունս ինձ խրատի համար Աղից իմամը, որ նրա աքանչելիքը չմոռանամ, բայց մյուս անդամներս բժշկված են...

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ

Մեր հայերի մեջ, ինչպես այժմ մենք նկատում ենք, կան մի քանի դասակարգի պատկանող անձինքներ, որոնք կենտրոնացնում են իրանց մեջ մեր ազգի ներկա և ապագա ուժը. սոցանից առաջինն է վաճառական, երկրորդ՝ արվեստավոր և երրորդ՝ մշակ, այն է՝ հողագործ դասը։ Խոսելով վերջի երկու դասակարգի վրա մենք գիտենք, թե մինչև որ աստիճան խավար, տգետ ողորմելի դրության մեջ են գտնվում այդ երկու դասակարգերը ևս։ Մշակ երկրագործը ընկած է դեռևս յուր հին նախաջրհեղեղյան հնության մեջ, նորա ճակատի վրա պարզ և որոշ կերպով կարդվում են աստվածային այն անեծքը, թե «միմիայն քո ճակատիդ քրտինքով պիտի վաստակես քո հացդ» և ողորմելին հարյուրավոր տարիներից հետո անդադար ու անդադար քրտինքով դառն աշխատանքով վարում և գործում է հողը,— միմիայն յուր օրական ապրուստի համար, նա դեռևս մինչև անգամ տեղեկություն չունի, թե ինչպես ուրիշ լուսավորյալ ազգերը դյուրությամբ և առանց ծանր աշխատանքի շատ կարճ միջոցում գլուխ են հանում այն գործը, որը երկար միջոց և դառն աշխատանք է այժմ իրան։

Յուր մտավոր, գործնական և արհեստական գիտությամբ, մշակ դասից բարձր չէ և արվեստավոր դասը. նույն նահապետական հին դրությունը, նույն անփոփոխ, կոշտ և կոպիտ արհեստը, որի մեջ գտնվելիս է եղել յուրաքանչյուր արհեստի սկզբնապատճառը, նույնությամբ փայլում է այդ դասի վրա։ «Մշակի» ընթերցողները անշուշտ տեղեկացած կլինեն նորա 40 համարում տպված առաջնորդող հոդվածից այդ դասակարգի վերաբերմամբ, այդ առթիվ այլևս ավելորդ է մեզ երկար խոսել, մինչդեռ կովկասյան ամեն մի քաղաքում հայ արհեստավորները գտնվում են միևնույն դրության մեջ։

Այժմ քանի որ ո՛չ արհեստավոր և ո՛չ մշակ դասը կարող են ներկայումս նպաստել մեր ազգի բարոյական գոյությանը, մեր հույսը մնում է միայն ազգի առավել բարձր, առավել զարգացած, այն է՝ վաճառականական դասի վրա. նոքա պիտի լինեն մեր հայտնի ներկայացուցիչքը քաղաքական ազգերի առաջ, նոքա պիտի վերականգնեն մեր ընկած նշանակությունը մյուս ազգերի մոտ, և միևնույն ժամանակ նոքա պիտի լինեն մտրակող ուժը մեր մյուս, այն է՝ արվեստավոր և մշակ դասակարգի։ Այս հարցի մասին քանիցս անգամ կրկնած են մեր պարբերական հրատարակություննե-

րը, որոնց գոռում-գոչումները կարծես ցնդած են օդի մեջ, որպես ձայն բարբառո հանապատի... Ի՛ղ ներվի մեզ այստեղ մի քանի դիտողություններ անել մեր հայերի անցյալ և ներկա վաճառական կյանքից։

Հայկական տարագրության տխուր հիշատակարանները, կարծես չկամենալով բոլորովին խորտակել հայի ինքնասիրությունը, ավանդում են մեզ հայի գաղթականության միակ պարծանքը, այն է՝ նոցա առևտրական նախանձելի ասպարեզը իրան շրջապատող ազգություններից։

Ինչպես հայտնի է գլխավոր գաղթականությունը հայերի կովկասի մեջ սկսում է Բագրատունյաց իշխանության կործանումից հետո, երբ սոքա փախչելով բռնավոր տիրապետողների սրից, առավել հարմար էին գտնում սահմանափակելու իրանց կովկասյան բարձրագագաթ շրջանների մեջ։ Իհարկե, այն ժամանակ կովկասյան ազգաբանությունները լինելով առավել անկիրթ, առավել ստոր մտավոր դրության մեջ, հեշտ էր հայերին շուտով ձեռք բերել այդ երկրի վաճառականությունը։

Հայերը ամրանալով Կովկասի մեջ, նոցա վաճառականական ասպարեզը չէր կարող ընդլայնանալ դեպի օտար մերձակա սահմանները, քանի որ կովկասյան սարերը պատնեշ էին հանդիսանում նոցա հաղորդակցությանը հյուսիսային և արևմտյան ազգությունների հետ։

Ռուսաստանում հայերը հայտնվում են գլխավորապես Պետրոս Մեծի ժամանակից, երբ աշխարհաշեն ինքնակալը ուշք դարձնելով յուր ժողովրդի առաջադիմությանը, հարմար դատեց ուրիշ ազգերի միջնորդությամբ մի խթան պատրաստել յուր ազգի մեծ մասի տգիտությունից արթնանալուն, և ահա այդ է գլխավոր պատճառը, որ հայերին ևս իբրև վաճառականական ազգի արտոնություններ շնորհվեց ազատորեն պարապելու առևտրով հյուսիսի հետ. իհարկե, հայերը այդ միջոցում օգուտ քաղելով, թե՛ այդ և թե՛ նրանից հետո կրկնված արտոնություններից, տարածեցին իրենց առևտրական ասպարեզը Ռուսաստանի զանազան կողմերում և մինչև անգամ Ռուսաստանից դուրս։

Մի խոսքով հայերն այդ ժամանակ կարող էին մեծ դեր խաղալ վաճառականության մեջ, մինչդեռ իրենց շրջապատող ազգությունները իրենցից բարձր մտավոր դրության մեջ չէին գտնվում, նոքա կարող էին լինել վաճառականներ իրենց դարու ոգու համաձայն, գուցե և նախանձելի ուրիշ ազգերից։ Բայց այնուհետև, երբ

ժամանակի հոսանքը մարդկային մտքի հանճարի օգնությամբ մի ահռելի զարկ տալով, թե՛ վաճառականության, թե՛ արհեստին և թե՛ հողագործության, հասցրին նոցա իրենց այժմյան կատարելագործյալ դրության,— հայերը, չհետևելով լուսավորյալ ազգերի առաջխաղացության նախանձելի հատկություններին, մնացին միևնույն հին վաճառականները, որոնցով այժմ լիքն են կովկասի ամեն կողմերը։ Դարերի ընթացքները չունեցան նոցա համար այն փոփոխական ազդեցությունը, որին ենթարկվեցան ուրիշ ազգերը. նոքա սովորած լինելով հնադարյան վաճառականության ոգուն, որի օրենքները կայանում է միմիայն հուզարավոր անուղիղ ճանապարհներով փող ձեռք բերելու, օգուտ քաղելու իրենց ստորադրյալների տգիտությունից, առաջ գնացին այդ ճանապարհով առանց աջ ու ձախ շեղվելու, խուլ մնալով բոլորովին ժամանակի պահանջման ձայնին, սակայն տարաբախտաբար երկար չտևեց նոցա այդ դրությունը, լուսավորյալ վաճառականական դասը ներս խաղաց և դեպի այն ասպարեզը, ուր հայերը օգտվում էին այնքան տարիներից ի վեր, հիմնվեցին ընկերություններ, շինվեցին երկաթուղիներ և հաստատվեցին բանկաներ, հայը, որ համարում էր իրեն ամենից ճարպիկը վաճառականական խաբեբայության մեջ, այժմ գտավ իրա առաջ մի ավելի բարձր զարգացած ճարպիկ գաճակարգ, որի բարոյական ճարպիկության տակ շուտ կարող էր ընկճվել նա։ Այն մասնավոր հողերը, բնության գանձի այն ծածուկ շտեմարանները, որոնք մինչև այն րոպեին հայի համար անգործադրելի էին, շուտով սկսան իրանց գանձերը արտադրել գործունյա ձեռքերի համար։ Հայի համար այդ մի տխուր ներկա էր և ապագան ցավալի անեծքներ թափվեցան երկաթուղիների, բանկաների և այլ ժողովրդական բարեկարգությունների հիմնարկուների վրա. որովհետև բանկաների հաստատվելուց հետո այլ չէին կարող նոքա ծանր անմարսելի տոկոսներով հարստահարել խեղճ հասարակությունը, պակաս վնաս չէր և նոցա երկաթուղու հաստատությունը, որովհետև եվրոպական վաճառականները փոխանակ երկրորդական ձեռքով վաճառելու իրենց ապրանքները ուղղակի իրենք կարող էին ներս բերել և առավել օգտակար կերպով վաճառել։ այդ կերպով հայերի դրությունն օրըստօրե ծանրանում էր, շատերը, որոնք մուք ժամանակներում կարողացել էին ապահովել իրանց վիճակը, բավականացան միմիայն տներ, քարվանսարաներ շինելով, նոցա եկամուտքի օգնությամբ ապատ պահպանել իրենց ապագայի փորձանքներից, շատերն էլ մինչև այսօր արշինը ձեռք-

ներին, սուտ երդումներ բերաններից թափելով, անցնող դարձողի պահլաներն են տանում։

Նկատելով մեր հայ վաճառականների այժմյան դրությունը, մենք ուշք դարձնենք այն երևույթի վրա, ի՞նչ է արդյոք պատճառը, որ օտարերկրացի վաճառականներից շատերը, որոնք ո՛չ ժողովրդի սովորություններին, ո՛չ երկրի դիրքին, և ո՛չ էլ տեղի հատկություններուն հետ ծանոթություն ունենալով, կարողանում են փափուկ կերպով օգտվել մեր հասարակությունից, իսկ տեղացի բնիկ վաճառականները, որոնք սատանայի ծակն անգամ գիտեն, այնքան հետադեմ դրության մեջ են մնում։ Ի՞նչն է պատճառը, որ ֆրանսիացի Բիշարներ, Տոլեններ մեծ գումարներով կարողանում են փող աշխատել, իսկ մեր վաճառականները ամեն օր գանգատվում են թե աշխատանք չկա, խեր-բարաքյաթը վերացել է, և այլն։

Մենք վերև հիշեցինք, որ մինչդեռ ուրիշ ազգերը ամենայն ջանք ի գործ էին դնում, հիմնավոր և պատվավոր վաճառականություն տարածել իրանց ժողովրդի մեջ և այդ առթիվ հիմնվում էին գործարաններ ժողովրդի առօրյա պիտույքը արտադրող առարկաների, ուշք էին դարձնում գլխավորապես ներքին բերքը առավել փոխարինելու արտաքին բերքի հետ, երբ հողագործությունը ևս օրեցօր դարգանում էր, մեր հայերը, սովորած լինելով միմիայն իրարու հարստահարել, ուրիշ երկրների բերքերը երկպատիկ գնով իրանց հասարակության վրա վաճառել, անփույթ անելով իրանց երկրի բերքը, որոնք մեծամեծ օգուտներ էին խոստանում. աշխատող ձեռքերը ուշ չդարձրին երբեք հետևելու նոցա օրինակին, և մնացին այսօր էլ հրեականությանը հատուկ վաճառականներ, կամ պարզ կերպով ասել՝ այժմյան չարչիներ...

Ուրախալի մի երևույթ է, որ վերջին ժամանակներս մի քանի հայ վաճառականներ, թոթափելով իրանցից հնադարյան փոշին, հաստատեցին, թեև օտար հողի մեջ, մի քանի գործարաններ. բայց ի՞նչ օգուտ կարող են ունենալ այդ գործարանները մեզ համար, մինչդեռ մեր հասարակության ոսկիները պիտի քամեն օտար երկրի մեջ։ Վերջապես մի քանի ծաղկով էլ երբեք գարուն չի լինի, պետք է ներգործել կենտրոնի մեջ։ Ինչպես հայտնի է, մեր հասարակությունը յուրաքանչյուր տարի հազարներով ոսկիներ է վճարում գործարաններին բոլոր այն թե՛ անձնական պիտույքը և թե՛ շռայլական ցանկությունները գոհացուցանող առարկաների համար, որոնք զարդարում են Թիֆլիսի մագազինները, ի՞նչ օգուտ չէր ունենալու այդ հասարակությունը, եթե այդպիսի մի քանի գործարան-

Ներ հիմնվեին և Կովկասի մեջ տեղացի բնիկներից, որոնց արտադրությունքը ազատ լինելով մաքսից և ճանապարհի ծախսերից, կարող էին իրանց օգտակար և ժողովրդի ստորին դասի համար ևս դոհացուցիչ և մերձենալի լինել։ այդպիսի մի հաստատություն պակաս օգտավետ ևս չէր լինի այն դասի համար, որ աշխատանքի ուրիշ միջոց չունենալով, ստիպվում է անամոթաբար փողոցներում մուրալ։ Այդ առթիվ «Մշակը» ևս կրկնած է իր ժամանակին։

Վերջացնելով մեր այս հոդվածը չենք կարող լուռ մնալ մի քանի շամախեցի և այլ երկրացի հայ վաճառականների այս տարվա նիժնի-Նովգորոդի տոնավաճառում բռնած ապօրինի ընթացքի մասին, որոնք ռուս վաճառականներից ապրանք առնելով խոստանում են մի քանի օրվա միջոցում իրանց հաշիվները կարգադրել, սակայն մինչև հաշիվները տեսնելը, իրանք անհայտանում են, ո՞վ գիտե սատանայի որ բույրը, ռուսներին ցույց տալով, թե որքան հայերը ճարպիկ են խաբեբայության, անամոթության և այլ այդպիսի նախանձելի ածականներին հարմար հատկությունների մեջ։ Ջմոռանանք ասել, որ այդպիսի ազգապարծանք վաճառականները վաղօրոք կարգադրած լինելով իրանց մտադրությունը, բոլոր իրանց ունեցած ստացվածքները դարձնում են իրանց կնոջ, եղբոր և ուրիշ ազգականների անվան։

«ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ԳԱՎԱՌԱԿԱՆ, ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՑ»[1]

Կ. Պոլիս 1876 թ.

(Պաշտոնական հրատարակությամբ ազգային պատրիարքարանի)

Անցյալ տարվա վերջին ամիսներում Կ. Պոլսում հրատարակվեցավ հիշյալ վերնագրով մի գրքույկ, որ բովանդակում է յուր մեջ ասիական Տաճկաստանի հայ ազգաբնակության վերաբերությամբ

[1] *Այս հոդվածը դեռևս 1877 ամի 10-ին հունվարի ուղարկել էինք «Փորձի» մեծ. խմբագրին, բայց նա իրան միայն հասկանալի պատճառներով թողել էր անտիպ։ Մենք ստիպվեցանք ետ ստանալ։ Այժմ, քեև փոքր-ինչ հնացած, հրատարակում ենք ցույց տալու համար Տաճկաստանի հայոց թշվառ դրությունը մի կողմից և «Փորձի» ուղղությունը նրանց դրության վերաբերյալ մյուս կողմից։*

կատարված գավառական հարստահարություններր։ Դա մի պաշտոնական հրատարակություն է, որ դուրս է բերված Կ. Պոլսի պատրիարքարանի արձանագրություններից և 1876 ամի սեպտեմբերի ներկայացրած է տեղային ազգային ժողովին։

Վարագույրը բարձրացավ, այժմ մենք գիտենք, թե ինչ է կատարվում բեմի վրա...

Մինչև այսօր մենք խիստ աննշան տեղեկություններ ունեինք Կ. Պոլսի պատրիարքարանի, այլ խոսքով, ազգային սահմանադրության գործունեության վրա։ Մինչև այսօր մենք համարյա չգիտեինք, թե Կ. Պոլսի հայոց ազգային վարչությունն որ աստիճան նշանակություն ունի Բ. Դռան առջև, և որ աստիճան ձեռնհաս է նպաստելու արտապոլսական գավառացիների գործերին։—Հիշյալ «Տեղեկագիրքը» տալիս է մեզ թեև շատ տխուր, բայց հետաքրքրական տեղեկություններ։

«Տեղեկագիրքը» բաժանված է երկու մասն։ Առաջին մասը պարունակում է իր մեջ գավառական հարստահարությունների ամբողջ քսան տարվա արձանագրությունների հավաքածուն և ունի այսպիսի վերնագիր՝ «Ա. Տեղեկագիրք գավառական հարստահարութեանց առ Բ. Դուռն հանուն ազգային ժողովո ի 11 ապրիլի 1872»։ «Տեղեկագիրքը» ունի կնիք և ստորագրություն այս անունով՝ պատրիարք Կ. Պոլսի Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյան։

Հիշյալ «Տեղեկագրքի» բովանդակած խնդիրները, որպես ասացինք, դուրս են բերված պատրիարքարանի 20 տարվա արձանագրություններից և հասնում են մինչև 1872 ամի ապրիլի 11-ը։ Իսկ երկրորդ «Տեղեկագիրքը» ունի այսպիսի վերնագիր. «Երկ. Տեղեկագիրք գավառական հարստահարութեանց ի խորհրդարանական համձնախմբէ առ ազգային ժողովն»— Դա պարունակում է իր մեջ 1872 թվից սկսյալ մինչև 1876 սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ 5 տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրություններր։ Ասել է թե, ամբողջ «Տեղեկագիրքը» ներկայացնում է պատրիարքարանի 25 տարվա գործունեությունը։ Թե ինչ չափով և որքան թվով բողոքներ է ստացել պատրիարքարանը գավառներից այս 25 տարվա ընթացքում, հայտնի չէ. հայտնի է միայն, որ 57 զանազան խնդիրների մասին նա պաշտոնական բանակցություն է ունեցել Բ. Դռան հետ։ Դա շատ փոքր թվանշան է, ի նկատի ունենալով այն բազմաթիվ անիրավությունները, որ կատարվում են ասիական Տաճկաստանում, այն ևս 25 տարվա ընթացքում։

Ընթերցողին փոքր-ինչ գաղափար տալու համար, թե ինչպիսի հարստահարություններ են կատարվում ասիական Տաճկաստանում, հարկավոր ենք համարում ծանոթացնել թե՛ առաջին և թե՛ երկրորդ «Տեղեկագրքի» բովանդակության հետ։

Առաջին «Տեղեկագիրքը» պարունակում է իր մեջ հետևյալ խընդիրները։

1) Օրենք և արդարություն գործ դնելու մեջ գավառական պաշտոնակալները ընդհանրապես անփույթ և անտարբեր են մնում։ Եվ իրանց կամայականությանը հետևելով, իրանց հաճույքի համեմատ գեղծանում են բարձրագույն հրամանագրերը հարստահարությունները բառնալու և հարստահարիչները պատժելու մասին։

2) Գավառական արքունի ժողովները թեշխիլաթի[1] օրենքով կազմվելով չար և շահախնդիր անձանց մենավաճառության ապարէզ են դառնում։

3) Գավառացի հայը, մահմեդականների մոլեռանդության ենթակա լինելով, միշտ նախատինքի, քշնամանաց և անպատվության առարկա է դառնում։

4) Արքունի շինվածքների համար հայերին ձրի աշխատեցնում են, և ով որ աշխատելու անկարող է, դրամական անիրավ պահանջմունքի են ենթարկում։

5) Ճանապարհների շինության համար հայերին նույնպես ձրի աշխատեցնում են, և կամ այս պատրվակով նրանց կեղեքում են։

6) Կապալառուները (մուլթեզիմ) փոխանակ բերքի տասանորդը ստանալու, բռնադատելով, նրա տեղը զուտ արծաթ են առնում։

7) Նմանապես իր ընտանիքի ուտեստի համար տան պարտեզի մշակած բերքից ստիպեցնում են տասանորդ վճարել։

8) Բերքից ստացած տասանորդը գյուղացիներին ստիպեցնում են կապալառուի շտեմարանը փոխադրել։

9) Կապալառուն ղիտմամբ իր ժամանակին չգալու համար, բերքը անձրևի տակ մնալով փտում է (որովհետև գյուղացին իրավունք չունի վեր առնել առանց տասանորդը վճարելու)։ Եվ հետո փտած բերքի տասանորդի փոխարեն ողջի արժեքով զուտ արծաթ է առնում։

10) Գյուղացին պարտավորվում է կապալառուին և նրա գործակալներին իր տան մեջ հյուրասիրել և ձրիաբար կերակրել։

---

[1] *Մի տեսակ դատարանի կազմակերպություն խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից կոչվում թեշխիլաթ, որ իսկապես ոչ-մահմեդականները միայն ձևի համար ընտրված կամ կոչված են լինում։*

11) Կապալառուները, երբեմն եզների լուծերի վրա հաշվելով, տասանորդի անունով ապօրեն և ավելորդ ցորյան են առնում գյուղացիներից։

12) Բացի կապալառուների հիշյալ հարստահարություններից, գավառացի հայերին բռնաբարում են վճարել մշակութքյունների համար շաճնալրգ և օլչեֆ-հագգը կոչված արգելյալ տուրքերը[1]։

13) Զինվորական տուրքից՝ մեռնողների, գաղթողների և փախստականների մասը հարկագրում են մնացողներին վճարել[2]։

14) Կալվածական և քաղաքական տուրքերի անդադար բաշխման պատճառով մահմեդականների բեռը հայերն են կրում։

15) Տուրքերի վճարման պատճառով՝ տնային անհրաժեշտ կահ-կարասին,— երկրագործական պարագայքը և մինչև անգամ

---

[1] *Գյուղացի հայերի գլխավոր հարստահարիչները լինում են կապալառուները։ Որովհետև գավառական պաշտոնակալները մշակութքյանց բերքերի տասանորդի վճարը կապալով են տալիս ըստ մեծի մասին իրանց բարեկամներին կամ մերձավոր մեկին, և իրանք գաղտնի կերպով նրանց հետ ընկերանում են։ Երբ որ բերքը ծախվում է, լավ գին ունի, կապալառուն տասանորդը ստանում է առաջվելութքյամբ, իսկ երբ որ բերքը գին չունի, նա քանկ գնահատելով. փորձ է ստանում, որ ամենևին իրավունք չունի։ Բայց գյուղացին ստիպված է խոնարհվել կապալառուի բռնութքյանը, որովհետև եթե հակառակվի, կապալառուն նրա մշակութքյան կալը երեսի վրա կթողնի. ձյունի և անձրևի տակ կփտեցնե, այն ժամանակ ավելի իրավունք կատանա տասանորդի կրկնակի արժեքը արծաթով առնելու, որովհետև բերքը փչացած է։ Եվ տեղային կառավարութքյունը համբերում է կապալառուի բռնակալութքյանը, որովհետև ինքն էլ նրա շահերին ընկեր է։— Իսկ օլչեֆ-հագգը նշանակում է չափելու վարձ, շաճնալրգ նշանակում է աքցանական։*

[2] *Տաճկաստանում հայերը որովհետև գինվոր չեն տալիս, նրա փոխարեն վճարում են մի տուրք, որ կոչվում է բեդել (փոխարեն)։ Այս տուրքը որոշվել է ստանալ հետևյալ եղանակով.— 180 արու անձանց վրա մի գինվոր հաշվելով, նրա փոխարեն պետք է ստացվի գոնե փող 5000 ղուրուշ (300 ռուբլի)։ Այս վճարին մասնակից լինելու բաշխումից դուրս պետք է մնան՝ 15 տարեկանից ցած և 75 տարեկանից վեր անձինք, նաև կղերականներն, աղքատ ու բոլորովին անկարող մարդիկը, և այն անձինքը, որ անհայտացած են։ Բայց տերութքյան հարկահաններն, հիշյալ բացառութքյունները ամենևին նկատի չառնելով և իրանց կամայականութքյունը միայն գործ դնելով, ժողովրդին տուժել են տալիս, որքան և կարողանում են։ Թողյալ այդ, մահմեդականը, որ զինվոր է տալիս, վայելչում է այդ մասին ինչ-ինչ բացառիկ արտոնութքյուններ և առանձնաշնորհութքյուններ։ Բայց հայը, որ զինվորի փոխարեն արժաթ է վճարում, զուրկ է այն արտոնութքյուններից, որ ունի զինվոր տվող մահմեդականը։ Եվ ի նկատի ունենալով այնքան բազմաթիվ գաղթականները ասիական Տաճկաստանից, հասկանալի է, թե որքա՜ն կծանրանա մնացած ժողովրդի վրա զինվորական տուրքը. որովհետև գա ստացվում է ազգահամարի հաշվով։*

բանվոր անասունները — ծախելու են ստիպում, և ոստիկանության ձեռքով ծեծելու, բանտ դնելու խստություններին են ենթարկում չքավոր ժողովուրդը։

16) Կիները և անչափահաս մանուկները բռնաբարվում են մահմեդական կրոնը ընդունելու համար։

17) Ոչ-մահմեդականների վկայությունը չընդունվելով, մահմեդականների հայերի վերաբերությամբ կատարած առևանգություններն, գողություններն և սպանություններն մնում են անպատիժ։

18) Ձիևյալ քրդերի, լեռնաբնակ ցեղերի, չերքեզների և բնիկ թուրք դեհեբեկիների (ինքնիշխան բռնակալ) այլևայլ հարստահարությունների ներքո հայ ժողովուրդը տանջվում է և կեղեքվում է։

19) Կիները, հարսները, այլ և կույս աղջիկները առևանգվելով բռնաբարվում են։

Ահա սրանք են առաջին «Տեղեկագրի» խնդիրներն, որ մինչև 1872 թվականը ամբողջ 20 տարվա ընթացքում պատրիարքարանի և Բարձ. Դռան մեջ պաշտոնական բանակցության նյութ են դարձած եղել։ Բայց Դուռը ի՞նչ հոգացողություններ է արել հարստահարությունները բառնալու համար։

Այս մասին մենք առաջ կբերենք հանձնաժողովի նկատողությունը, որ պատրիարքարանի արձանագրություններից առնելով հաղորդում է ազգային ժողովին. «Հիշյալ «Տեղեկագրի» մատուցած թվականն ի վեր (11 ապրիլ 1872) հարստահարության համար պատրիարքարանն գրված թագրիներն (բողոքագիր) ալ, ինչպես կերևին ձեր հանձնախմբի պատրաստած հավաքածոյեն, կամ պաթթալ ըլլալով (առանց հետևանքի թողնելով, ոչնչացնելով) կամ անպատասխանի թողնելով, և իսթիլամի[1] ապարդյուն դրությամբ հետաձգվելով, և առ առավելն Կենտրոնական Կառավարութենն առ գավառականս ուղղյալ հրամանագրաց անգործադրելի մնալովը՝ մոռացության մեջ թողված են, առանց դարման տանելու ժողովրդյան կրած տառապանաց»։

[1] *Գավառական հարստահարությանց մասին մատուցած մի բողոք շատ անգամ Բարձ. Դուռը դարձնում է նույն գավառի կամ նահանգի կառավարչին ստուգելու կամ վերաքննելու համար. դա մի խորամանկ ձևնարկություն է բողոքարկուները ստելու համար։ Որովհետև երբեք գավառական կառավարիչները չեն ցանկանա արդարացնել բողոքողներին այս մեղադրանքների մեջ, ուր իրանք դատավորներն շատ անգամ խառն են լինում։ Իսթիլամը մի այսպիսի բան է։ Նա կատարվում է առավելապես գործը երկարացնելու և վնչչապես մոռացության անդունդի մեջ ձգելու համար։*

Հանձնաժողովի այս նկատողությունը մեր լեզվով կպարզենք այսպես.— մինչև 1872 թվականը 20 տարվա ընթացքում պատրիարքարանը գավառներից զանազան տեսակ հարստահարությունների մասին ցանգատներ է ստանում, և իր բողոքագրերով (թագրիրներով) հաղորդում է Բարձ. Դռանը և բավարարություն է խնդրում։ Բարձ. Դուռը պատրիարքարանի բողոքները կամ թողնում է առանց հետևանքի, կամ պատասխանի չէ արժանացնում, կամ եթե ընդունվում է և իր կողմից հրամաններ է գրում, այն ժամանակ գավառական պաշտոնակալներն բարձրագույն հրամանագրերը թողնում են առանց հետևանքի։ Եվ այսպես, ժողովրդի վիճակը միշտ մնում է թշվառության մեջ... և պատրիարքարանի բողոքներից ոչ մեկը յուր նպատակին չէ հասնում...

Տաճկաստանի ներկա տագնապի մեջ շատերի հետաքրքրությունը գրաղեցնում է այն հարցը, արդյոք այս տերության վերջին 20 տարվա ընթացքում առաջ է գնացել թե ո՛չ. և կամ նրա կառավարությունը քրիստոնյա հպատակների վերաբերությամբ բարվոքվե՞լ է թե ո՛չ։ Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող և նրա երևակայական առաջադիմությունը հռչակող անձնական հաշիվներով կուրացած մարդիկ հայտնում են, թե այժմ Տաճկաստանը բավական բարեկարգված է և, քրիստոնյա հպատակների դրությունը այժմ համեմատաբար շատ լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա իշատարյալ ազատություն են վայելում և այլն...

Այս բոլորն դարտակ խոսքեր են։

Տաճկաստանը առաջ է գնացել միայն մեկ բանի մեջ՝ այն է՝ յուր արտաքին կևրպարանքը պաճուճել որպես եվրոպական մի պետություն. իսկ սրտով, հոգվով և գործով մնալ միշտ մոնգոլ նույն բնավորությամբ, որպես էր նա երբեմն Թուրանի անապատներում...

Քննելով պատրիարքարանի 25 տարվա արձանագրություններց «Տեղեկագիրքը» մենք ավելի համոզվում ենք այս կարծիքի մեջ, թե տաճկական կառավարությունը ինչ որ էր առաջ համարյա նույնն է մնացել և այսօր, նաև ոչ-մահմեդական ազգերի վիճակը փոխանակ բարվոքվելու՝ հետզհետե վատթարացել է։

Այս իրողությունը ավելի շոշափելի կացուցանելու համար մենք ընթերցողի ուշադրությունը կդարձնենք պատրիարքարանի «երկրորդ տեղեկագրքի» վրա, որ բովանդակում է յուր մեջ Տաճկական Հայաստանի 1872-ից սկսյալ մինչև այսօր, 5 տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրությունները։

Ի՞նչ ենք տեսնում։

«Երկրորդ տեղեկագրքի» մեջ հարստահարությանց խնդիրների թիվը առավելություն է կազմում[1]։ Կնշանակե անիրավություններն հետզհետե սաստկացել են։ Հարստահարություններն ավելի բազմատեսակ են դառնում և իրանց գրեթական բնավորությամբ ավելի սարսափելի են։ Երկու բան մնում են անփոփոխ. մինը՝ կառավարության գործ դրած թույլ միջոցները իրանց անբավարար հետեվանքներով, մյուսը՝ հարստահարությանց կատարված տեղերը[2], որովհետև միշտ նույն անիրավությունները միևնույն կերպով կատարվել են միևնույն տեղերում։ Դա ինչի՞ց է։

Պատճառն շատ պարզ է։ Դրանով բացատրվում է այն հարցը, թե Տաճկաստանը 25 տարվա ընթացքում ո՛րքան է առաջ գնացել— այո՛, նա մե՛ծ առաջադիմություն է գործել ոչ-մահմեդական ազգերը նորանոր ձևերով կեղեքելու, կողոպտելու և անպատվելու մեջ... Եվ որպեսզի ընթերցողը համոզվի այս խոսքերի ճշմարտության մեջ, մենք կդնենք այստեղ պատրիարքարանի երկրորդ տեղեկագրի խնդիրներն, որոնք իրանց բովանդակությամբ ավելի մանրամասն և ավելի որոշ կերպով գրված են[3]։

Հարստահարություններ

1։ Արզրումի կուսակալության ներքո գտնվող Երզնկա գավառի Ղուղուչյանի կայմագամ (նահանգապետ փաշայի փոխանորդ) Շահ-Հուսեյն բռնավորի հարստահարությանց դեմ, սկսյալ Խրիմ-

---

[1] *«Առաջին տեղեկագիրքն» ունի 20 տարվա շրջան և պարունակում է յուր մեջ 19 խնդիրներ միայն, իսկ երկրորդ տեղեկագիրն ունի 5 տարվա շրջան և պարունակում է 38 խնդիրներ։ Բացի դրանից երկրորդ տեղեկագրի մեջ երևան են գալիս նոր տեսակ խնդիրներ, որոնք առաջինի մեջ չկան, այն է՝ 284 գյուղերի և վանքերի կալվածները մահմեդականներից հափշտակելու խնդիրներն։ Եվ չպետք է մոռանալ, որ երկրորդ տեղեկագիրն վերջին ժամանակների գործերն է բովանդակում։*

[2] *Թե՛ առաջին և թե՛ «երկրորդ տեղեկագրքի» մեջ հարստահարությունների կենտրոնը է Վանա ծովակի չորեք կողմում գյուղ գավառները, այսինքն՝ Արզրումի և Տիգրանակերտի նահանգները, Մուշ, Բաղեշ, Վան, Դերջան, Քղի, Հուլթաչան, Չարսանջակ, Մզերտ, Ութսուն և այլ գավառները։*

[3] *Ն. Գոլցի պատրիարքի վերջին անգամ մեծ եպարքոսին (սադրազամին) մատուցած խնդիրների կարգում, որոնցով նա տաճկահպատակ հայերի ցավերին գթարմաններ էր պահրտում, նույն խնդիրների մեջ անցուցած էր նաև Շահ-Հուսեյն չորեքգործի անունը, կարծես, մի մասնավոր անձի հարստահարություններն նույն*

յանի պատրիարքութեան օրերից (1873-ից) մինչև այսօր[1] անդադար բողոքներ են մատուցվել Բարձ. Դռան։ Դուռը խիստ «ազդու» միջոցներ է գործ դրել, որ հեշտալ չարագործը իր պաշտոնից հեռացվի և ժողովրդի հանգստութիւնը հարգվի։ Եվ մեծ էպարքոսը (սադրազամը) նաև արտաքին, ներքին, և այլն և այլն մինիստրներն այս հարցի մասին հինգ փառավոր հրամանագրեր են ուղղել Արզրումի կուսակալ փաշային։ Հրամանագրերի լեզուն բավական խիստ և ազդու էր։ Նրանք հայտնում են, որ «յուր հայրն ու մայրն և կինն սպանող» Շահ Հուսեյնին իր պաշտոնից զրկեն և երզնկայի գավառից հեռացնեն։ Նրանք հայտնում են, որ «հարյուրավոր սպանութիւններ գործող» և «քուրդ ավազակների պարագլուխ դարձած»՝ քրիստոնյա ժողովուրդը կեղեքող՝ Շահ-Հուսեյնին երզնկայից հեռացնեն, և իր բռնակալութեանց համար աքսորյալ հոր պես, որդուն ևս տնհետացնեն...

Հինգ մինիստրների Բարձ. Դռան կողմից ուղղված հրամանագրերի ամբողջ օրինակները դրած են «Տեղեկագրքի» մեջ, և իրանց բովանդակութեամբ, այո՛, խիստ ազդու են և մարդասիրական, որպես լինում են ամեն մի թղթի վրա գրված, բայց ոչինչ գործադրութեան չգտնող բարձրագույն ֆերմաններն, որոնց Դուռը շռայլորէն դուրս է տալիս իր խաբեութեան գործարանից...

Հրամանագրերի յուրաքանչյուրի ներքո դրոշմված կնիքների մեջ կարդացվում են թյուրքիայի այս մեծամեծ մարդերի անունները՝ Ալի, Մահմուդ-Նեգիմ, Միտհաթ, Մուհամմեդ-Ռուշտի, Հուսեին-Ավնի... Հինգն էլ շատ անգամ հասարակ վեզիրից բարձրացել են մինչև սադրազամութեան բարձր աստիճանը։ Բայց ի՞նչ օգուտ բերեցին այս հինգ մինիստրների հրամանագրերն։— Ոչի՛նչ։ Նրանք կ. Պոլսի ն.եղուցեն դեպի Փոքր Ասիա անցնելով, իրանց նշանակութիւնը կորցնում են, և Շահ-Հուսեյին չարագործը մինչև այս օր շարունակում է յուր ավազակութիւնները, որովհետև նա մի ավելի մեծ ավազակի՝ Արզրումի փաշայի, պաշտպանութեան տակ է գտնվում...

կարևորութիւն ունեին, որպես, օրինակ, հայերի ընդհանուր կալվածական հարցը կամ անչափահաս երեխաներին կրոնափոխ անելու խնդիրը...

[1] Տեղեկագրքի մեջ խնդիրներն տարեթվի կարգով դասավորված են, բայց մենք տեղափոխեցինք, ցույց տալու համար, թե ինչ չափով ինչ տեսակ հարցուփորձութիւններ են գործվել։

Այստեղից հասկանալի է, թե ինչու բարձրագույն հրամանագրերն գավառական պաշտոնակալներից շատ անգամ մնում են անգործադրելի։

2. Սպերու գավառի Սասուն ավանի քուրդ բեգերն, տեղային հայերից արքունի տուրքերը բռնությամբ հավաքելով, այլևս իրանց կողմից գանձին չեն ներկայացնում։ Կառավարությունը զինվորներ ուղարկելով, քուրդ բեգերից ետ է ստանում արծաթը։ Բայց հենց որ զինվորներն հեռանում են, քուրդ բեգերն սկսում են իրանց տված արծաթը վերստին հայերից առնել։ Նվ որպեսզի մյուս անգամ այսպիսի անիրավություններ չպատահեն քրդերից, կառավարությունը այնտեղ զորանոց շինելու և մշտական զորք պահելու որոշում է անում, բայց մնում է անգործադրելի։

3. Մուշի հարստահարիչ քուրդ բեգերից Ֆարիզ և յուր եղբայրն կառավարության հրամանով աքսորվում են Գասթամունի, բայց հետո հայտնի չէ ինչ հնարքով ազատություն գտնելով, վերադառնում են և ավելի վրեժխնդրությամբ սկսում են տանջել և կողոպտել հայերին։ Այդ մասին կրկին թագրիրներ են մատուցվում, կըրկին բողոքներ են բարձրանում. բայց բոլորը կամ առանց հետեվանքի են թողնում, կամ «բաթթալ» են անում, այսինքն՝ ոչնչացնում են։

4. Մուշ գավառի Բեռնաշեն, Խութ, Սասուն և Շատախ կոչված երկրների քուրդ հարստահարիչների մասին պատրիարքարանից թագրիր է գրվում, բայց մնում է ապարդյուն։

5. Խարբերդի գավառում Մադեն քաղաքի ճանապարհների ուղղության համար, շինությունների պաշտոնատարներն հայ գյուղացիներին տարապարհակ վարելով (ձրի աշխատացնելով) գործավորների օրական վարձը չեն վճարում։ Բողոք է բարձրանում, բայց արդյունքը հայտնի չէ։

6. Տիգրանակերտի գավառում Սեվերեկ ավանի հայերից զինվորական տուրքի՝ կառավարության հրամանով պակասացրած՝ քառորդ մասի վերջը գործ չդրվելուց հետո, ամբողջությամբ են առնում, բայի դրանից մեռնող և անհայտ եղած անձանց զինվորական տուրքը մնացողներից են պահանջում։ Նաև կառավարության պաշտոնյաներն կալվածների արժեքը խիստ բարձր գնահատելով, չափազանց կալվածական տուրքերով ծանրաբեռնում են ժողովուրդը։ Այլև հանապարհների շինության մեջ ժողովրդին օրենքով սահմանված օրերից ավելի են աշխատացնում։ Բողոք մատուցված է, բայց արդյունքը հայտնի չէ։

7. Վանա կողմերի Հոգվոց վանքը քուրդերն կողոպտում են. եզած-չեզածը տանում են։ Պատրիարքարանը այդ մասին բողոքում է, բայց քագրիր մնում է առանց պատասխանի։

8. Մուշի գավառում Մոտկան երկրի հայոց գյուղերն քրդերից անդադար հարստահարվում են, որոնց մի տարվա կողոպուտը ներկայացնում է հետևյալ թվանշանները. 799 ոչխար, 53 850 ղուրուշ փող (3167 ռուբլի). 1972 բաճման ուտեստ և արմտիք, 121 կտոր հագուստ, 261 ծոփ կարմիր կտավ։ Քագրիր է գրվում, հիշյալ ցուցակը ներկայացնելով բարձր կառավարության, բայց գործը մնում է ապարդյուն։

9. Բիթլիսի (Բաղեշի) գավառում Մահմեդ-բեկ անունով քրդապետ իր 12 երիտասարդների և ազգականների հետ նույն գավառի 32 գյուղերում ամեն տեսակ հարստահարություններ են գործում։ Ժողովրդյան բողոքը տեղային կառավարության կողմից անուշադիր մնալով, և մահմեդականներն ու հայերն միանալով, առանձին բողոքագրով դիմում են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին։ Այս մասին բարձր կառավարությունից հրամանագիր է ուղարկված, բայց այդյունքը հայտնի չէ։

10. Սասունցի քրդերն Մուշի Աղբյուրիկ վանքից յուրաքանչյուր տարի որպես տուրք բռնությամբ առնում են՝ 400 ղուրուշ փող, 4 կով, 20 ոչխար, 4 բաճման ծախախոտ, 4 բաճման յուղ, 5 գրչոցյան։ Եթե վանքը այս բաները չտա, միաբանների կյանքը միշտ վտանգի մեջ է։ Քագրիր գրված է. Բ. Դռնից հրամանագիր ուղարկված է, արդյունքը հայտնի չէ։

11. Տիգրանակերտի Նահանգում մի քանի բռնակալ դերեբեկներ սոսկալի հարստահարություններ են գործում։ Բարձ. Կառավարությունը ժողովրդի և պատրիարքարանի բողոքների համեմատ առանձին քննիչ է ուղարկում։ Բռնակալ դերեբեկների հանցանքներն ստուգվելով, նրանք Տիգրանակերտ են բերվում և նույն քաղաքում մշտապես մնալու որոշում է լինում։ Բայց կառավարության քննիչը հեռացածին պես, բռնակալներն իրանց տեղն են դառնում և ավելի կատաղությամբ սկսում են առաջվա չարագործությունները շարունակել։ Այդ մասին կրկին բողոքներ են բարձրանում, բայց չարագործներն միշտ մնում են անպատիժ։

12. Մարաշի մութասարիֆ (փաշայի փոխանորդ) Սայիդ փաշայի անիրավություններ դեմ ժողովրդից գանգատներ լինելով, և պատրիարքարանի թագրիրների հիման վրա, Բարձ. Կառավարությունը հրամանագիր է ուղարկում տեղային կառավարության

վրա՝ գործը քննելու համար։ Բայց տեղային կառավարությունը փոխանակ քննելու, աշխատում է Սայիդին արդարացնել և հայերին զրպարտիչ ցույց տալ։ Այս մտքով նա մի վկայական (մազբաթա) է պատրաստել տալիս, և մինչև անգամ տեղային առաջնորդական փոխանորդին բռնությամբ ստիպում է, որ նույն վկայականը ստորագրե, որը Սայիդի արդարության համար էր վկայում։ Այս բռնության դեմ բողոքում է պատրիարքարանը. արդյունքը հայտնի չէ։

13. Ագշեհիր քաղաքի հայոց տուրքերը պատկանածից ավելի նշանակելով, ժողովուրդը ծանրաբեռնում են անտանելի վճարներով։ Այդ մասին պատրիարքարանը թագրիր է գրում և անպատասխան է մնում։

14. Կարսի հարստահարիչ քրդերի և Մադենի քուրդ բեգերի հայերին հասուցած վնասների մասին պատրիարքարանը թագրիր է գրում և անպատասխան է մնում։

15. Վանա ոստիկանության հազարապետ Տիլավեր աղայի և նրա ազգականների անիրավությանց դեմ թագրիր է գրվում, մնում է առանց պատասխանի։

16. Զինվորական տուրքի անկանոն բաշխման վրա և հայերից առավելությամբ առնելու մասին թագրիր է գրվում, արդյունքը հայտնի չէ։

17. Սեբաստիո կուսակալության Ներքո Սարմուսակլը գյուղի հայերն հարստահարվում են մահմեդականներից. վերջինների անգթությունը մինչ այն աստիճան է հասնում, որ մի հայ կին բռնությամբ սարը տանելով, և իրանց գազանական կիրքը հագեցնելուց հետո, սպանում են և դիակը գետն են գցում։ Այդ մասին թագրիր է գրվում, Բ. Դռնից հրաման է գնում, բայց արդյունքն հայտնի չէ։

18. Ուրֆայի քաղաքական ատյանում, դատարանի նայիբէֆենդին ներկայացնող քրիստոնյա վկաները մերժում են, հակառակ դատավարության օրինաց, թագրիր գրված է, բայց արդյունքը հայտնի չէ։

Հողային կամ կալվածական խնդիրներ

19. Տիգրանակերտի Սաթը գյուղի հայոց բոլոր արտերը մի մահմեդական կին անիրավությամբ սեփականելով, հայ գյուղացիներին պարտավորեցնում է իրանց մշակության բերքերից բաժին հանել իրան որպես կալվածատիրոջ։ Այդ մասին մի քանի անգամ

թագրիրներ են գրված, որն անպատասխան մնացած է, որն ապարդյուն։

20. Մուշ գավառի Մորնիկ գյուղի հողերը մի մահմեդական հոգևորական (մուֆթի) բռնությամբ տիրում էր նույն միջոցում Արզրումի կուսակալը անձամբ այն կողմերը գալով, և որովհետև Մուշն էլ իր կառավարության տակն էր, գյուղացիների բողոքը հիշյալ հողերի մասին լսելով, մուֆթիի տիրապետելը անիրավացի է համարում, և գյուղացիներին նոր հաստատված կալվածագրեր է տալիս։ Գյուղացիք այսպեսով կրկին տեր են լինում իրանց 40—50 տարի հերկած արտերին։ Բայց Արզրումի կուսակալը փոխվելով, նրա կարգադրությունն էլ հիշյալ հողերի մասին փոխվում է։ Մուֆթիին գյուղացիներից մի քանի հոգի բերել տալով Մուշ քաղաքը, տեղային կառավարության ժողովի մեջ բռնությամբ և սպառնալիքով վկայություն է առնում, թե հողերն պատկանում են մուֆթիին և ոչ գյուղացիներին։ Եվ այսպեսով, նա մյուս անգամ հողերը իր ձեռքն է գցում։ Գյուղացիք այնուհետև սկսում են բողոքել, թե վկայություն տվող միայն երկու գյուղացիներն չեն կարող ամբողջ բնակիչների ներկայացուցիչ համարվել, թե նրանք իրավունք չունեին բոլոր գյուղացոց կողմից մի բան խոսելու և այլն։ Բայց մուֆթիին ազդեցության տեր մեկն լինելով, գյուղացոց բողոքը իրանց երկրում լսելի չէ լինում։ Ախեճերն այնուհետև իրանց կողմից երկու պատգամավոր Կ. Պոլիս են ուղարկում, նրանց տալով նաև իրանց կալվածագրերը և ուրիշ գրավոր ապացույցներ։ Կ. Պոլսում գործը նորից քննվում է, բայց վճիռը հօգուտ մուֆթիին է վերջանում։ Պատրիարքարանը կրկին թագրիր է գրում, հետևանքը հայտնի չէ։

21. Խարբերդի նահանգի Ջարսանջակ գավառի բոլոր հայոց գյուղերի ամբողջ տները, խանութները, պարտեզները, այգիները և արտերը իսակ-բեկ անունով մեկը և մի քանի մահմեդական աղաներ բռնությամբ տիրելով, գյուղացիների վրա որպես կալվածատեր հարկ են նշանակում։ Գյուղացիների բողոքների և պատրիարքարանի թագրիրների հիման վրա Բարձ. Կառավարությունը առանձին մասնաժողով է ուղարկում Ջարսանջակի գավառը այս գործը քննելու համար։ Մասնաժողովը գյուղացիների բողոքը իրավացի գտնելով, և իսակ-բեկի ու մյուսների իրավունքը անհիմն համարելով, յուր տեղեկությունները հաղորդում է Պետական Խորհրդին։ Վերջինը իր կողմից հրամայում է տեղային կառավարությանը աղաների միջամտությունը արգելել և գյուղացիներին հիշյալ կալվածների տեր ճանաչել, այլև նրանց կալվածագրերը նորից

հաստատել։ Բայց կայսերական իրադեյով (հրովարտակ) հաստատված այս որոշումը տեղական կառավարությունից անգործադրելի մնալով, Իսակ-բեկը և մյուս մահմեդական բռնակալները վանազան խարդախ միջոցներով դարձյալ մնում են Ջարսանչակի գյուղերից տեր։ Այս խնդրի մասին այնուհետև մի քանի թագրիրներ են գրվում, բոլորն մնում են ապարդյուն։

22. Սեբաստիո գավառի Յար-Հիսար գյուղի հայերին պատկանող մշակության դաշտերի և արտերի մեջ տեղային մյուդիրը (գավառապետ) չերքեզներ է բնակեցնում և հայ գյուղացիները զրկվում են իրանց հողերից։ Այդ մասին պատրիարքարանից մի քանի անգամ թագրիր է գրվում, բայց Դռան կողմից «բաթալ» է լինում, այսինքն՝ առանց հետևանքի է մնում։

23. Էսկիշեհիրի մեջ մահմեդականները քրիստոնյաներին արգելում են նոր կալվածք գնելու, բնակություն հաստատելու և եկեղեցի շինելու։ Թագրիրներ գրված են, Բ. Դռնից մի քանի անգամ հրամաններ ուղարկված են քրիստոնյաներին նպաստելու նպատակով, բայց արդյունքն հայտնի չէ։

24. Տիգրանակերտի նահանգում Սպահերա ավանի գյուղերը հարստահարող քուրդերի գլխավորներից մեկը՝ Աբդի բեկ անունով, մուդիրության պաշտոն վարելով, սկսում է ժողովուրդը ամեն կերպով կեղեքել։ Այս բռնակալը հափշտակում է հայերից նրանց արտերը, հողերը և անասունները, այլև Հուսպ գյուղի հայոց գերեզմանատունը գրավելով, միջի գտնված եկեղեցին քանդում է և յուր համար տուն է շինել տալիս։ Նմանապես մի քանի ուրիշ քուրդ բեգեր (անունները գրված են) էրուն ավանի գյուղերը հարստահարում են։ Թագրիր գրված է, հրամանագիրը ուղարկված է, արդյունքը հայտնի չէ։

25. Վանա Շատախ գավառում քուրդ բեգերն, որպես երկրի անիշխանության ժամանակ, սկսում են իրանց վաղեմի բարբարոսությունները գործ դնել։ Նրանք հայերին սոսկալի կերպով տանջում են, ստիպեցնելով, որ իրանց տուրք վճարեն, երկեղեցիները քանդում են, պղծություններ են գործում, մշակությունները այրում են և շատ նշանավոր հայեր սպանում են (անունները գրված են)։ Բացի դրանից Շատախու գավառի վեց գյուղերի (անունները գրված են) հայ բնակիչներին դուրս քշելով, քուրդերը իրանք են նրանց մեջ բնակում և նրանց հողերը ամբողջապես իրանց են սեփականացնում։ Թողյալ այդ, ուրիշ 12 գյուղերի արտերը հայերի ձեռքից խլում են քուրդերը։ Հայ ժողովուրդը բողոքելով տեղային կառա-

վարության, նա իր կողմից Աղա-բեկ և Բարսեղյան Մկրտիչ անուն-նով անձինքը քննիչ է ուղարկում։ Քննիչները ստուգելով քրդերի անիրավությունը, հայերի իրավունքը հաստատում են հիշյալ հո-ղերի վերաբերությամբ։ Բայց հետևյալ տարին Ռեշիդ-էֆենդի ասունով մեկը թափուր օրինաց գործադրությանը համար Շատա-խու գավառն ուղարկված լինելով, հայերին պատկանող նույն հո-ղերը գաղտնի կերպով քուրդ բեգերի անունով թափու է անում[1]։ Այս խարդախության համար գյուղացիներից մինչև 200 հոգի դի-մում են Վան քաղաքը և բողոքում են տեղային կառավարությանը, և պատրիարքարանը յուր կողմից առանձին թագրիրով հայտնում է Բարձ. Դռանը, բայց պատասխան չէ ստանում։

26. Ջնջուշի վանքի արտերը կառավարությունը իբրև մանելու՝ ւանալելով, ծախել է տալիս։ Այդ մասին թագրիր է գրվում, ար-դյունքը հայտնի չէ։

27. Արզրումի մեջ թահրիր էվլաֆ (կալվածական արձանա-գրություն) կատարվելու միջոցին, երբ կարգը ազգային դպրոցների և եկեղեցիների կալվածներին է հասնում, տերության պաշտոնյան չէ ուզում սրանց իբրև ազգային կալվածք արձանագրել, ասելով, թե այսպես անելու հրահանգ չունի, այլ յուր պարտավորությունն է յուրաքանչյուր կալվածքի կենդանի տերը գտնել, և նրա սեփակա-նության իրավունքը ստուգելեն հետո, նրա անունով արձանագրել։ Իսկ երբ մի կալվածք անձնավորյալ տեր չունի, պետք է իբրև մանելու նկատել[2]։ Այդ մասին պատրիարքարանից թագրիր գրված է. Բ. Դուռը հետագրել է, որ հիշյալ կալվածները ազգի անունով արձանագրվին, բայց արդյունքը հայտնի չէ։

---

[1] Տաճկաց կառավարությունը անշարժ հողերը մի որոշյալ գնով ժողովրդի վրա ծախում է կամ ավելի ճիշտ կլինի ասել կապալով է տալիս, և յուր կող-մից կալվածագիր է տալիս, դա սովում է թափու անել։ Բայց թափու լինում են այն հողերը միայն, որոնք տեր չունեն և անմշակ են մնացած։

[2] Տաճկաց կառավարությունը վանքային կամ եկեղեցական կալվածք չէ ճանաչում, որովհետև կալվածատեր կարող են լինել միայն անձնավորություն ունեցող անհատները, իսկ վանքը և եկեղեցին նրա կարծիքով իրավաբանական անձնավորություն չէ, ուրեմն և կալվածատեր լինել կարող չէ... Այս պատճառով վանքային կալվածները համարվում են որպես մանելու, այսինքն՝ որոշ տեր չու-նեցող։ Այսպիսի կալվածների տերն ինքն պետությունն է լինում։

[3] Այստեղ դարձյալ նույն խնդիրն է, ինչ որ էր վանքային կալվածների վե-րաբերությամբ։ Մենք շատ հայտնի չենք Թուրքիայի կալվածական օրենքները (եթե ունի նա օրենքներ). բայց չենք կարողանում հասկանալ, թե ինչու մահմեդա-կանի մզկիթը և մադրասան կարող են կալվածք (վաքֆ) ունենալ, բայց հայոց եկեղեցին, վանքը և դպրոցն չեն կարող ունենալ։

28. Տրապիզոնի ս. Փրկիչ վանքի արտերի մեկ մասը Ալի էֆենդի անունով մեկը կամենում է սեփականել։ Թագրիր գրված է այդ մասին. պատասխան առնված չէ։

29. Մադեն քաղաքի Ջերմուկ գյուղի հայոց թաղի մեջ եկեղեցին շինելու արգելք են լինում մահմեդականներն, պատճառելով, թե հայոց թաղի մոտ մզկիթ կա։ Թագրիր գրված է, հրամանագիր ուղարկված է, արդյունքն հայտնի չէ։

Ոճրագործություններ

30. Հալեպի հեռագրատան պաշտոնյա Ասատուր անուն հայազգին հեռագրատան մեջ սպանվում է։ Կառավարությունն հեռագրատան տեսչից պահանջում է ոճրագործին։ Եվ նա Ահմատ անունով հեռագրատան ստոր ծառաներից մեկին ցույց տալով, հայտնում է, թե նա է սպանողը։ Բայց մյուս կողմից տեղական կառավարությունը ձևացյալ մարդասպանին առանց քննության «խենթ» է ասելով, հիվանդանոցն է ուղարկում... Թագրիր գրված է, հրամանագիր ուղարկված է, արդյունքն հայտնի չէ։

31. Վանա Նարեկա վանքի ջրաղացը քուրդերն կողոպտելով, ջաղացպանին սպանում են։ Թագրիր գրված է, Բարձ. Դուռն պատասխան չէ տված։

32. Մուլեզիմ (հիսնապետ) Հասանը Աղթամարա վանքը մրտնելով, միաբաններից Հակոբ վարդապետին սպանում է։ Մի քանի քուրդերն էլ Մինդան գյուղի Տեր-Հովհաննես քահանային են սպանում։ Եվ Աբդուլ-Ֆաթթահ եղեռնագործը նույն կողմերում բոլոր Հայերը կոտորելու սպառնալիք է անում։ Թագրիր գրված է։ Բ. Դռնից հրամանագիր է ուղարկված և հեռագիր է զարկված, արդյունքն հայտնի չէ։

33. Մարաշի մեջ Մենգերյան Հարությունին և Ջամչիկյան Ղազարոսին տեղային մահմեդականներն սպանում են։ Նաև Զեյթունի կայմադամ Դավուդ աղան Հարություն անունով հայ ոստիկանին սպանել է տալիս։ Թագրիր գրված է, Բ. Դռնից հեռագիր զարկված է, բայց արդյունքն հայտնի չէ։

34. Մալաթիո Մոաթաֆա բեկի դեպի հայերն ունեցած մոլեռանդական վարմունքի դեմ և մահմեդական սրիկաների՝ շան վզից խայ կախելով քաղաքի փողոցներում և շուկաներում ման ածելու համար՝ թագրիր գրված է, Բ. Դռնից պատասխան առնված չէ։

35. Բայբուրդ քաղաքի Ռոմելի գյուղացի Մարթա անուն աղջիկը առևանգվում է Սաֆար անունով մի թուրքից։ Հայերի բողոքով աղջիկը տեղային կառավարության ատյանում ներկայացնում են հարցուփորձի համար։ Այնտեղ լինում են Բայբուրդի հայոց երեխիներն, մի քանի հույներ և մահմեդականների գլխավորներն։ Փոխանակ աղջկան թույլ տալու, որ խոստովանվի, արդյոք նա իր հաճությամբն է ընդունել մահմեդականությունը, հանկարծ մահմեդականների մոլեռանդ բազմությունը ներս է թափվում, և սկսում են գոռալ. «Աղջիկն արդեն մահմեդականությունը ընդունած է, կրկին հարցնելու հարկ չկա, և եթե նա՝ մահմեդական չեմ ասե, և դեպի քրիստոնեություն վերադառնա, շարիաթի օրենքով նրան գլխատել պետք է»։ Կատաղի ամբոխը այսպիսի և դրա նման շատ սպառնալիքներ կարդալով, և մորը թույլ չտալով, որ աղջկան մոտենա, խեղճ Մարթային ստիպեցնում են խոստովանել, թե ինքն հաճությամբ է ընդունել մահմեդականությունը, և բռնի կերպով նրան ամուսնացնում են թուրք Սաֆարի հետ։

Բայց Մարթան չկարողանալով մահմեդականի հետ կենակցել, գիշերով փախչում է և յուր մոր տունն է գալիս։ Այս բավական էր քաղաքի մահմեդականությունը կատաղության չափ վրդովմունքի մեջ դցել։ Մոլլաներն քաղաքի մեջ մունետիկ են կանչել տալիս, և մոլեռանդ բազմությունը հավաքում են մադրասաների մեջ, և նրանց գրգռում են, ասելով, թե քրիստոնյաներն մահմեդականություն ընդունող աղջիկը փախցրել են։ Իսկույն երկու հազարի չափ պատաղիներ զենքերով հայոց տների և խանութների վրա են հարձակվում, մեծ մասը կողոպտում են, քանդում, և 30 հոգի հայերից չարաչար վիրավորում են։ Տեղական կառավարությունը կարնո կուսակալին վտանգը հեռագրով իսկույն իմացում է տալիս։ Կուսակալը զորքով այնտեղ է հասնում, խռովությունը դադարեցնում է, և ստուգելով, թե աղջիկն ամենևին քրիստոնեից կողմից փախցրած չէ եղել, մի քանի մարդիկ կարին տանելով բանտարկում է։ Բայց գլխավոր խռովարարներն մնում են անպատիժ և կողոպտված ժողովրդի վնասներին ոչինչ հատուցում չէ լինում։ Այդ մասին մի քանի անգամ թագրիրներ են գրված, բայց ամենևին բարձ. Դռնից պատասխան չէ ստացված։

36. Սեբաստիո մեջ մի հայ մահմեդականություն է ընդունում և իր աղջիկը հետն է տանում։ Բայց աղջիկն որովհետև չափահաս

էր, հոր մոտից փախչում է և ապաստանում է հայոց վանքում։ Մահմեդականներն պնդելով, թե աղջիկն հոր մոտ պետք է մնա, հարձակվում են վանքի վրա, և աղջկան բռնությամբ դուրս են քաշում։ Պատրիարքարանը անդադար թագրիներ է գրում, որ աղջիկը քրիստոնյա մնացած մորը հանձնվի, քանի որ նա հոր կրոնքը ընդունելու միտք չունի։ Բարձ. Դուռը հրաման է գրում, որ աղջիկը նախ թուրքացած հորը հանձնվի և ապա քննություն լինի։ Պատրիարքարանը իր թագրիրները կրկնում է։ Վերջապես, երեք տարուց հետո աղջկան քրիստոնյա մորն են հանձնում քննելու համար, երբ ամեն բանով փոխված էր...

37-րդ խնդիրը Քղիի և Երզնկայի գավառների երևելի չարագործ Շահ-Հուսեյնին է վերաբերում, որի մասին արդեն խոսեցինք։ Այս չարագործի հարցը «Տեղեկագրքի» մեջ շատ տեղ է բռնում։

38-րդ խնդիրը վերաբերում է զինվորական տուրքին, որի մասին փոքր ի շատե տեղեկություն տվեցինք մեր ծանոթության մեջ։

39-րդ խնդիրը վերաբերում է հողային հարցերի, որոնց մասին առանձին պետք է խոսենք, որովհետև այս ամենագլխավոր հարցը, որպես նկատվում է «Տեղեկագրքից», շատ փոքր գրավել է պատրիարքարանի ուշադրությունը...

* *
*

Որպես տեսանք, թե առաջին և թե երկրորդ «Տեղեկագրքի» մեջ զարմանալի խնդիրները, եթե իրանց տեսակին համեմատ դասավորելու լինենք, կստանանք հետևյալ թվանշանները.

— Ամբողջ 58 խնդիրներից 36 վերաբերում են զանազան տեսակ հարստահարությունների, և 12 հողային և կալվածական խնդիրների, 3 ոճրագործության կամ քրեական հանցանքների, իսկ 4 կրոնափոխության, կամ կանանց բռնաբարությունների։ Հիշյալ թվանշաններից դուրս է մնում 263 հայոց գյուղերի և 21 վանքերի հողերի քրդերից և թուրքերից հափշտակելու խնդիրը, որոնց մասին «Տեղեկագրքի» մեջ միայն մեկ ընդհանուր բողոքագիր է երևում, պատրիարքարանի կողմից Բարձ. Դռան մատուցած։ Հողային հարցը, որ հայերի կենսական հարցն է, շատ ուշադրության չէ առնվել, կարծես այդ խնդիրը՝ չէ հետաքրքրել պատրիարքարանին։

Ինչևիցե, խոսենք 58 խնդիրների մասին։ Պատրիարքարանը դրանց համար ամբողջ 25 տարվա ընթացքում անդադար թագրիներ է մատուցել Բարձ. Դռան։ Բայց ի՞նչ արդյունք են ունեցել

պատրիարքարանի պաշտոնական թագրիրներուն— Յուրաքանչյուր թագրիրի ներքո կարդացվում են այսպիսի մակագրություններ.— «Անպատասխան մնացած է»։—«Ապարդյուն մնացած է»։— «Սույն թուգրիրը բաքթալ (առանց հետևանքի) մնացած է»։— «Բարձ. Դռնեն հրամանագիր դրկված է, ինչ արդյունք ունեցած ըլլալն հայտնի չէ»։— Եվ այսպես, թագրիրներից և ոչ մեկը չենք գտնում, որ յուր նպատակին և յուր նշանակությանը հասած լինի։ Կնշանակե, ամբողջ 25 տարվա ընթացքում Բարձ. Դուռը պատրիարքարանի խնդիրներին բավականություն տված չէ։ Դա շատ ցավալի մի երևույթ է, մի երևույթ, որ ցույց է տալիս, թե սուլթանի կառավարությունը ո՛րքան նվազ պաշտպանում է արդարությունը և իրավունքը, և ո՛րքան սակավ հոգս է տանում նա ոչ-մահմեդական ազգերի հանգստությանը և բարօրությանը։

Արդարև, խնդիրների կարգում տեսնվում են մի ֆանիսը, որոնք Դռան բարձրագույն ուշադրությունը իրանց վրա դարձնելով, արժանացել են բարձրագույն հրամանագրերի։ Բայց Շահ-Հուսեյն չարագործի հարցը բավական է ցույց տալու համար, թե բարձրագույն հրամանագրերն ինչ նշանակություն ունեն գավառական հարստահարությունները բառնալու համար։ Ընթերցողն արդեն տեսավ, որ հինգ մեծամեծ սադրազամներ և վեզիրներ, որպես էին Ալի-փաշան, Միտհադը, Հուսեին Ավնին և այլն, իրանց հրամանագրերով չկարողացան Շահ-Հուսեյինի նման մի ավազակապետ հեռացնել յուր հարստահարությանց ասպարեզից։ Եվ ուրիշ կերպ լինել կարող չէր, քանի որ Տաճկաստանի արտակենտրոնական կառավարության մեջ մեծ դեր է խաղում դարաբեկիությունը, այսինքն՝ անձնիշխանությունը մի պաշտոնակալի, որն որքան հեռանում է կենտրոնից՝ կ. Պոլսից, այնքան կամայական և այնքան ապստամբ է դառնում։

Գուցե սուլթանի դուռը շատ անգամ ցանկանում է յուր ոչ-մահմեդական հպատակներին հանգստություն, կյանքի, կայքի և պատվի ապահովություն շնորհել, և աշխատում է բառնալ անիրավությունը, պատժել հարստահարիչներին։ Բայց ի՞նչ օգուտ ունեն բարի ցանկություններն, երբ որ գործադրություն չեն գտնում, երբ որ նահանգական և գավառական պաշտոնակալների կամայականությամբ բոլորը մնում են անգործադրելի։ Սուլթանի Դռան բարձրագույն ֆերմաններն նույն նշանակությունն ունեն հարստահարված ժողովրդի բարօրության համար, ինչ նշանակություն որ ունի տեր-բաթայի գրած թալիսմանը մի հիվանդ երեխայի առողջության

մասին, որը խորին ջերմեռանդությամբ առնում է մայրն և խնամքով դնում է որդու բարձի տակին, որ նա չմեռնի...

Տաճկաստանի գործերի այսպիսի տնկարգ և այլանդակ դրությունը մեզ բնավ չէ զարմացնում, որովհետև նա շատ հատկանիշ է և ծագում է իրերի բնական կարգից։ Որքան էլ աշխատեր, որքան էլ ճգներ Դուրը, և որքան էլ հաճախ իր ֆերմաններով ազատ իրավունք և արդարություն տեղար ժողովրդի վրա,— բոլորն անօգուտ էր։ Որովհետև մենք համոզված ենք, թե վերևից միայն հրաշքներ կարող են գործվիլ, բայց մի երկրի բարեկարգությունը պետք է սկսվի աւմատից։ Ոչինչ ցանք բուսնել չէր կարող, քանի որ հողը պատրաստված չէ։ Այնպես էլ հազարավոր ֆերմաններ միշտ կմնան որպես մեռած տառ, քանի որ ամբոխն յուր կրթությամբ չէ համապատասխանում բարձրագույն նպատակին։

Թողնենք փիլիսոփայությունը։

Անկարելի է, որ բոլոր նահանգական և գավառական բարձր և ստոր պաշտոնակալներն լինեին անհրաժ մարդիկ։ Որպես պատրիարքարանի «Տեղեկս դրքից» ևս երևում է, նրանց մեջ կան և այնպիսիքը, որ աշխատում են գործ դնել բարձրագույն հրամանը, աշխատում են հարստահարիչներին զսպել, բայց և նրանց աշխատությունը մնում է ապարդյուն։ Որովհետև այսպիսիները շատ անգամ իրանց դեմ են հուզում մոլեռանդ մահմեդականության կատաղությունը և այսպիսով չեն կարողանում պահպանել իրանց դիրքը։ Հարստահարիչների գլխավորներն ամեն տեղում երկրի նշանավոր և ազդեցության տեր մարդիկն են, և նրանցից է կախված մի փաշայի կամ մի կուսակալի վիճակը։ Եվ մահմեդական ժողովուրդն յուր շահերով կապված է գլխավոր հարստահարիչների հետ։ Այսպիսի հանգամանքներում ինչ կարող է անել մի թույլ և անզոր տերության նույնպես անզոր պաշտոնակալը. նա ևս ստիպված է գնալ ընդհանուր հոսանքի հետ։ Որովհետև պաշտպանել հարստահարված հային հարստահարող մահմեդականի դեմ՝ նույն է, որպես զրկել վերջինը յուր անհրաժ շահերից, որ մինչև անգամ կրոնքով նրան թույլ տրված է, որը նրա բնավորության մեջ պատմականաբար արմատացած է...

Մահմեդականության գաղափարը կից է հարստահարության գաղափարի հետ, որը կրոնից տարրացել է ամբոխի մեջ։ Ամեն կրոն նույն օրինքներն և վարդապետություններն ընդհանուր մարգասիրական նշանակություն չունեն. այսինքն՝ երբ նա խտրություններ է դնում յուր հավատացյալների և օտարների մեջ։ Սրի-

նակ, այն որ արգելված է մի մահմեդականի դեմ գործելու, շատ անգամ թույլ է տրված գործել, երբ դա վերաբերում է մի այլադավանի։ Մենք կարող ենք հարյուրավոր փաստեր բերել, բայց բավական է հիշել մեկը։ Մահմեդական սրենքով վկայությունը նույն ուժը և զորությունը ունի, որպես գրավոր ապացույցը։ Բայց ոչ-մահմեդական ազգերի վկայությունը մահմեդականի վերաբերությամբ չէ ընդունվում։ Ահա՛ օրենքի այս խտրության տակ կարող են ծածկվել ամեն տեսակ չարագործություններ։ Մահմեդականը մի հայ սպանել է, մի հայ աղջիկ բռնաբարել է, մյուսի այս ինչ բանը գողացել է, և այս բոլորը պատահել են հայոց շրջանում, իհարկե, վկաներն նույնպես հայ կլինեն. բայց նրանց վկայությունները չընդունվելով, հանցանքը մնում է անպատիժ։ Ոչ-մահմեդականի վկայությունն այն ժամանակ միայն կարող է ընդունված լինել, երբ տված կլինի մահմեդականի օգտին։ Եվ այսպես մահմեդական կրոնը գլխավոր արգելատիպներից մեկն է Տաճկաստանում արդարություն և քաղաքացիության հավասարություն մտցնելու։ Այստեղից հասկանալի է, թե ինչո՞ւ Բարձ. Կառավարության, շատ անգամ բոլորովին անկեղծորեն առաջարկած, բարենորոգումները քրիստոնյաների վերաբերությամբ մնում են անկատար։

Եթե պատրիարքարանի «Տեղեկագիրքն» ընդունենք որպես Ասիական Տաճկաստանում հայերի վերաբերությամբ կատարված հանցանքների վիճակագրական արձանագրություն, այն ժամանակ դուրս բերված թվանշաններն մեզ շատ տխուր եզրակացությունների կհասցնեն։ Խոսենք յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին։

Քսանևհինգ տարվա միջոցում կատարված կրոնափոխությունների թիվը (2 հոգի միայն) ամենափոքր տեղն է բռնում պատրիարքարանի արձանագրությանց մեջ։ Դա ինչի՞ց է։ Գուցե ոմանք կմտածեն, թե կրոնափոխություններ սակավ են պատահում և պատրիարքարանին այդ մասին չեն զբաղեցնում։ Ո՛չ, պատահում են, և ավելի մեծ թվով, և եթե պատրիարքարանը այդ մասին ունեցել է երկու խնդիրներ, միայն դա ունի յուր առանձին պատճառները։

Կրոնափոխությունները Ասիական Տաճկաստանում համոզմունքով չեն կատարվում, որովհետև մահմեդականությունն այն առավելությունը չունի, որ քրիստոնյա հայը ցանկանար յուր կրոնը փոխել. այդ մասին բավական է ի նկատի ունենալ անբախտ Մարթայի անցքը։ Կրոնափոխությունները պատահում են բոլ մեծի մասին աղջիկների և կնիկների մեջ հետևյալ պատճառներով.

Ախալքալաքի Տաճկաստանում շատ փոքր է այն գյուղերի թիվը, որոնք ամբողջապես բնակեցրած լինեին հայերով. շատերը խառն են քուրդերի և տաճիկների հետ։ Եվ եթե կան բոլորովին հայաբնակ գյուղեր, նրանց մերձակայքում դրած են մահմեդականներին, իսկ քաղաքներում շատ խառն են բնակվում։ Եվ այսպես, հայերի և մահմեդականների հարաբերություններն անջատված չեն։ Որպիսի՞ հետևանքներ են առաջ գալիս այսպիսի սերտ հարակցություններից։— «Լավ բան է, բայց ախտո՞ս, որ գյավուրին (անհավատին) է պատկանում»— դա մի առած է մահմեդականի լեզվում։ Մահմեդականը միշտ աչք ունի հային պատկանող այն ամեն բանի վրա, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ թանկագին է։ Եվ հայի գեղեցիկ կինը ու աղջիկը չէին կարող չգրավել նրա հրապուրանքը։

Տաճիկը, մանավանդ քուրդն ամեն ինչ ավելի ախորժակով է վայելում, երբ նա գողացված էր։ Գողանալ յուր ամուսին քուրդի համար ոչ միայն պարծանք է համարվում, այլև քաջություն։ Եվ այդ հերոսությանը դոհվում են մեծ մասամբ հայոց գեղուհիները։ Մի երկրորդ, ավելի զորեղ շարժառիթ պատճառ է տալիս նրանց հափշտակությանը, այն է կրոնական մոլեռանդությունը.— գողանալ քրիստոնյա կինը և աղջիկը և նրանց դեպի մահմեդականություն դարձնել, դա հոգևոր վարձատրություն ևս ունի։

Մի անգամ խլվեցավ աղջիկը հայրենական տնակից, այլևս նրան վերադառնալու հույս չկա։ Մահմեդականությունը սարսափելի օրենքներ ունե մի անգամ նրա ծոցը մտնող (եթե բռնությամբ ևս լիներ) և կրկին դեպի հայրենական կրոնը վերադարձող անձի համար։ Հանդիպող մահմեդականն իրավունք ունի սպանելու նրան, Եվ երկյուղը փակում է նրա վերադարձի ճանապարհը։

Իսկ մի երկրորդ մոլեռանդություն նույնիսկ հայերի կողմից ոչ պակաս է քան մահմեդականինը, որ և առավելապես պատճառ է դառնում թշվառ դոհերի կորչելուն։ Մի անգամ մահմեդականի ձեռքն ընկած աղջիկը և կինը համարվում է որպես պղծված մարմին։ Նրանք կորցնում են ազգայինների մեջ իրանց համարումը և պատիվը, և այնուհետև դժվար թե մի հայ տղամարդ կցանկանար այնպիսի մի կնոջ և աղջկա հետ ամուսնական կապ ունենալ։ Այդ գիտեն թշվառ դոհերը... և եթե նրանք այնքան քաջություն ունին, որ կամենում են ազատվել իրանց հափշտակողների ձեռքից, այլևս չեն վերադառնում դեպի իրանց ազգայինները, այլ իրանց նախատինքը ծածկելու համար շատ անգամ անձնասպան են լինում, և կամ հուսահատությունից ստիպված, ակամա կերպով խոնարհվում

ան բռնության առաջ... Եվ այսպես, կրոնափոխությունները կանանց վերաբերությամբ կապված են առևանգության և բռնաբրության հետ։

Այստեղից հայտնի է, թե ինչու կրոնափոխությունների մասին եղած խնդիրները շատ փոքր տեղ են բռնում պատրիարքարանի արձանագրության մեջ։ Որովհետև պատրիարքարանն ինքնակամ գանգատ սկսել չէ կարող, քանի որ ժողովրդի կողմից բողոք չէ լսում, և ժողովուրդը վերոհիշյալ երկու պատճառներով շատ անգամ լռում է դեպքերի մասին։ Եվ եթե Մարթայի դժբախտ անցքը չպատահար Բայբուրդի ամբողջ հայերի կոտորածին, հազիվ թե նա պատրիարքարանի և Արզրումի կուսակալի ուշադրությանը կարժանանար։

Այս մեր դիտողությունները կանացի սեռի մասին են, բայց կրոնափոխությունները տղամարդերի մեջ կատարվում են բոլորովին ուրիշ շարժառիթներից։ Օրինակ, շատ անգամ մի հայ մարդ յուր ազգակիցների հետ վեճեր ունի, դատ ունի, կամ որևիցե ոխակալության համար կամենում է վրեժխնդիր լինել յուր ոսոխից, այսպիսին մահմեդականներից պաշտպանություն գտնելու համար փոխում է յուր կրոնը, որովհետև մահմեդականությունն ավելի իրավունք, ավելի դյուրություն է տալիս նրան շար կրքերը հագեցնելու։ Կամ թե մեկը հանցանք է գործել, փոխելով յուր կրոնը, նա ազատվում է պատժից, և կամ ծույլ ու թշվառ մեկն է, նա յուր օրական հացը գտնում է կրոնափոխության մեջ։ Եվ այսպես, տղամարդերից կրոնափոխ լինողներն ըստ մեծի մասին լինում են շար և անբարոյական մարդիկ, որոնք մահմեդական շրջանի մեջ ավելի հագուրդ են գտնում իրանց մոլություններին։

Ուրիշ պատճառներ մենք չեն ճանաչում կրոնափոխության մասին, որովհետև գիտենք, որ մահմեդականությունը միխիթարներ չունի. նրա հիմքը դրվել է սրով և այժմ պահպանվում է մոլեռանդության մեջ։

Մնում է մի քանի խոսք ասել մանկահասակ պատանիների կրոնափոխության մասին. այդ թշվառներին նույնն է պատահում, ինչ որ պատահում է մանկահասակ օրիորդների հետ, որովհետև երկուսն էլ միևնույն նշանակությունն ունեն մահմեդական աշխարհում...

Կրոնափոխություններից հետո պատրիարքարանի արձանագրության մեջ փոքր տեղ են բռնում սպանությունները (6 հոգի միայն). դա շատ սխալ մի երևույթ է, որով մեկնվում է Տաճ-

կատանի հայի թշվառ դրությունը։ Կրկնում ենք տխուր, այո՛, շա՛տ տխո՛ւր,— և գուցե այս ասացվածը կբարձրացնե մեր դեմ մի այսպիսի հարց. «Ա՛մ՛ԹԵ ցանկալի էր, որ մեծ թվով կոտորեին հայերն Տաճկաստանում»։

Մենք կյանքի և բնության մեջ կատարված երևույթները, թեև վերաբերում ենք մի նախասահմանյալ տեսչության, բայց համոզված ենք, որ ամեն մի երևույթ ունի յուր իրական պատճառները։ Եվ այսպես էլ հայերի մեջ կատարված սպանությունների սակավությունը չենք կարող վերաբերել մահմեդականների գթությանը, թե նրանք ավելի մարդասիրաբար են վարվում հայերի հետ, մինչդեռ իրանց մեջ ավելի մեծ թվով են կոտորում մինը մյուսին։

Պարզենք մեր միտքը։

Մի հասարակության մեջ կատարված հանցանքների թիվը, նրանց բնավորությունը և տեսակը ցույց են տալիս նույն հասարակության նյութական և բարոյական դրությունը։ Եվ հանցանքների պատճառներն ու նրանց շարժառիթներն այնքան զանազանվում են, որքան զանազանվում է մի հասարակության կրթության աստիճանը մյուսից և նրա տնտեսական դրությունը։

Առհասարակ նկատված է, մի հասարակության մեջ ավելի մեծ թվով կատարվում են սպանություններ, երբ աշխատությունը, արդար վաստակը և ապրուստի ապահովությունն ընդհանրացած չէ ժողովրդի բոլոր դասակարգերի մեջ, երբ զորեղն անզորին ճնշում է և խլում է նրա ձեռքի վաստակը։— Ասիական Տաճկաստանն այդ դրության արյունոտ պատկերն է ներկայացնում։ Այստեղ ոչ միայն մասնավոր գողեր և ավազակներ խլում են օտարի բարին, այստեղ ոչ միայն բռնակալ դաբաբեյիներ կողոպտում են ժողովուրդը, այլ ավազակներից կազմված ամբողջ խումբեր (որպես քուրդերի ասպատակներն) արշավանք են գործում երկրի մի կողմից դեպի մյուսը, հափշտակում են և ամեն տեղ տարածում են ավերմունք և աղքատություն։— Մի փոքր ընդդիմադրություն հափշտակվողի կողմից վերջ է տալիս նրա կյանքին, և այստեղից առաջ են գալիս սպանությունները։

Սպանություններն այստեղ պատահում են կայքի հափշտակության և նրա պահպանության համար գործ դրված երկու հակառակ ուժերի մեջ, և որքան սաստիկ է լինում ընդդիմադրությունը, այնքան ահռում է սպանությունների թիվը։

Բայց քննելով պատրիարքարանի արձանագրությանց թվանշանները, մենք բոլորովին հակառակ եզրակացության ենք հաս-

նում։ Նրանցում հարստահարությունների թիվը հարյուրապատիկ ավելի է, քան սպանությունները։ Ի՞նչ է պատճառը։

Մենք ուրիշ պատճառ չենք գտնում, բայց միայն այն, որ հայը Տաճկաստանում ամեններին ընդդիմադրության զորություն չէ ցույց տալիս, նա բոլորովին կրավորական դեր է խաղում. նա թույլ է տալիս քուրդին, տաճկին հափշտակել յուր կինը, յուր աղջիկը, յուր մանկահասակ որդին, միայն յուր անձին չդիպչել... նա թույլ է տալիս հափշտակել յուր ձեռքի վաստակը, խլել յուր պապերից մնացած մի կտոր հողը, միայն յուր կյանքին խնայել... Այսպիսի ստոր և ցած վարմունքի մեջ բնականաբար շատ փոքր թվով կպատահեին սպանություններ, որովհետև հայն յուր ընտանիքը, յուր կայքը, յուր պատիվը և ամեն ինչ որ սուրբ է յուր համար՝ զոհում է միայն յուր կյանքը պահպանելու համար։ Բայց նա կյանքը զոհելու և իրավունքը պահպանելու քաջություն չունի...

Բայց սպանությունները մահմեդականների մեջ ավելի մեծ թվով են պատահում, որովհետև մահմեդականը այնպես չէ վարվում որպես հայը. նա գիտե չարին չարով պատասխանել...

Գուցե ոմանք կնկատեն, թե ի՞նչ կարող է անել ողորմելի հայը, երբ թուրքը և քուրդը սուր ունեն, բայց հայը չունի, նա ի՞նչով կարող է ընդդիմանալ յուր զինվորված թշնամուն։ Նա պետք է խոնարհվի բռնության դեմ և թույլ տա, որ կողոպտեն իրան, որպեսզի իր անձը կենդանի պահե։— Այս բոլորը միամիտ մարդկանների կարծիքն է, որոնք նայում են առաչյոք անարդար երևույթների, որպես վերին տեսչությունից սահմանված օրենքների վրա։ Բայց մենք այս բանին չենք հավատում, որ աստված տաճկի և քուրդի ձեռքում սուր տված լիներ հային կողոպտելու համար, և ոչ էլ մտածում ենք, թե գա ժողովրդի մեղքի համար է, որ աստված պատժում է նրանց...

Հայի ստրկության և նրա այժմյան թուլասրտության պատճառներն այնքան բազմադրյալ են, որ պետք է մեր ամբողջ պատմությունը քրքրել այս հարցը բացատրելու համար։ Բայց դա դուրս է մեր հոդվածի նպատակից։ Այսքանը միայն կասենք. եթե մի հայ, որ յուր գրպանում ունէ մի քանի ոսկի, փոխանակ այն գումարը տալու և մեկնելու, որ կրկինը շահե, եթե նրա մի մասը տա և մի վենք գնե յուր մեկերքը և յուր գլուխը պահպանելու համար, իմ կարծիքով, ոչ ոք նրան չի հրգելի։ Եվ եթե նա այդ չէ անում, այլ հրեայի նման միշտ շահասիրության ետևից է ընկած, ո՞վ է մեղավոր, որ նրան կողոպտում են։

Այն ուրիշ բան է, երբ մի կառավարություն ինքն է պահում գենքը յուր ձեռքում, իրան միայն է սեփականում նրա գործածության իրավունքը, և հետևապես ինքն հսկում է հպատակների հանգըստության և ապահովության վրա, բայց քանի որ Տաճկաստանն այդ անելու դորությունը չունի, այն ժամանակ հպատակների վրա է մնում անձնապաշտպանության հոգսը ինչ կերպով և լիներ։

«Թո՛ղ ուրիշն փրթե, ես խրփշտեմ»,— ասում է հայկական առածը.— դա մի ծույլ ազգի առած է, որի մեջ բովանդակվում է նրա կյանքի ամբողջ վարդապետությունը... Հայը դեռ սպասում է... Հրեայի համբերությամբ սպասում է... եթե ուրիշի արյան գնով քրիստոնյաներին հանգստություն կբաշխվեր, գուցե իրան էլ մի պատառ կգցեին։ Լավ երազ է, եթե ի բարին կատարվի...

Հայն յուր ամբողջ կյանքում այսպես է վարվել.— «Թող ուրիշը փրթե, ես խրփշտեմ» և յուր ստրկությունն այս քաղաքականությանը հետևելու արդյունք է։ Նա այսպես է վարվել ոչ միայն յուր քաղաքական կյանքում, այլև գիտության, արհեստի, ճարտարության մեջ նույնն է եղել.— նա ոչինչ չէ արդյունաբերել, ոչինչ չէ տվել մարդկությանը, այլ միշտ «խրփշտել է ուրիշի փրթածը...» Մենք շատ խիստ չենք դործածի հայի այս վարմունքի դեմ, միայն կասենք, որ մուրացկանությունը ծույլերի հատկանիշն է... և մուրացկանի փորին շատ անգամ չի աջողվի կշտանալ օտարի փշրանքով...

Դառնանք դնպի մեր խոսքը։

Ասեցինք, թե հայերի վերաբերությամբ կատարված սպանությունների փոքր թվանշանները. պատրիարքարանի արձանագրությանց համեմատ, ապացույց են նույնիսկ հայերի թուլությանը և նրանց ստրկային հոգու ցածությանը։ Այս հարցը ավելի պարզելու համար հարկավոր ենք համարում փոքր-ինչ երկար խոսել հարըստահարությունների և կալվածական խնդիրների մասին, որոնք պատրիարքարանի արձանագրությանց մեջ համեմատաբար ավելի մեծ տեղ են բռնում։

* *
*

Հարստահարություններն կատարվում են ըստ մեծի մասին տաճկական Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, և կենտրոնը, որպես երևում է պատրիարքարանի արձանագրություններից, համարելու է Վանա ծովակի շուրջը դրված երկիրները։ Այս երկրներն

են՝ Արզրումի նահանգն յուր գավառներով, Տիգրանակերտի նահանգն յուր գավառներով և Վասպուրականի երկիրն յուր գավառներով։ Դրանք այն երկիրներն են, որոնք ավելի խիտ բնակեցրած են հայերով, և ավելի հեռու դրած են Կ. Պոլսից։

Հարստահարությունները կարելի է երեք տեսակի բաժանել. հարստահարություններ, որ կատարվում են կառավարության պաշտոնակալների կողմից, հարստահարություններ, որ կատարվում են քուրդ դեբեբեյիների (բռնակալ, ապստամբ) և թուրք ազդեցության տեր անձինքների կողմից, հարստահարություններ, որ կատարվում են մահմեդական հասարակ ժողովրդի կողմից։

Կառավարության պաշտոնակալների կողմից եղած հարստահարություններն ըստ մեծի մասին վերաբերում են տերության տուրքերին և հարկահանների անգթությանը։ Տուրքերի տեսակներն և նրանց վճարման ձևերն այնքան զանազան են, որ անկարելի է այդ մասին մի որոշ տեղեկություն տալ։ Որովհետև յուրաքանչյուր երկրում միևնույն տուրքը, թե՛ իր քանակության մեջ և թե՛ նյութի հատուցման մեջ տարբերվում է, ավելի կախումն ունենալով հարկահանների բարոյական հատկությունից, քան թե օրենքի տրամադրությունից։ Բայց ժողովրդի գանգատներն գլխավորապես վերաբերում են տուրքերի անարդար բաշխմանը, որով մահմեդականների հարկերի ծանրությունն ընկնում է հայերի վրա։ Հայը դյուրընտել և հլու բռնակիր է, նա եզի համբերությամբ կրում է յուր ծանրությունը, որքան և անտանելի լիներ նա... իսկ տաճիկը կարող է ըմբոստանալ, կարող է թոթափել իրանից բռնության ձեռքից դրած բեռը...

Զինվորական տուրքը հայերի վերաբերությամբ այն պարտավորություններն կարդիցն է, որ յուր հետ արտոնություններ չունի։ Հայը, որպես մեր նկատողության մեջ հայտնեցինք, զինվորի փոխարեն փուլ վճարելով, չէ վայելում այն բացառիկ իրավունքները, որ շնորհվում է զինվոր տվող մահմեդականին։ Հայի զինվորական տուրքը համարյա մի կերպ տուգանք է, որ նրան տուժել են տալիս, օգուտ քաղելով նրա սխմար ներողամտությունից...

Երբ առաջին անգամ բարձրացավ Տաճկաստանի զինվորագրության հարցը, մեր պարբերական թերթերը դրա վրա երկար վիճեցին։ Ես դեռ հիշում եմ այն հիմար վիճաբանությունները։ Համարյա մեծ մասի խոսքերը հանգում էր այս ասացվածի մեջ. «Հայը թող զինվորի փոխարեն փող տա. նա փողը միշտ կարող է աշխատել, բայց հայի համար թանկ է յուր արյունը»։

Որքա՜ն վախենում է այդ ազգն արյունից, ամենևին չմտածելով, թե փրկությունը արյան մեջն է...

Մեր ազգի պատմությունը մեզ ուսուցանում է, երբ հայերն պարսիկների, մոնղոլների, արաբների և այլ տիրապետող ազգերի զորքի մեջ զինվորներ ունեին, նրանք քիչ չէին պաշտպանում իրենց հայրենիքը նույն ազգերի բարբարոսություններից, որոնց ծառայության մեջ էին։ Այսպես էլ, հայը Տաճկաստանի զինվորության մեջ, եթե ուրիշ օգուտ չտար յուր հայրենիքին, գոնե այսքանը կսովորեր, թե բացի ստրկական խոնարհությունից կա և մի ուրիշ բան անձնապաշտպանության համար՝ զենքը։

Բայց մենք համոզված ենք, եթե հայերն թուրքաց զորքերի մեջ զինվորներ ունենային, այժմ Ասիական Տաճկաստանի հարստահարությունները մեծ մասամբ բարձված կլինեին։ Այս խոսքը երկար բացատրությունների կարոտ չէ։ Ով որ ճանաչում է Տաճկաստանը, ով որ գիտե, թե ի՛նչ աղբյուրներից են ծագում հարստահարությունները, նա ևս մեզ հետ կհամոզվի, թե զինյալ քրդի դեմ միայն զինյալ մարդը կարող է պահպանել յուր կայքը, յուր ընտանիքը, յուր պատիվը և այլն.— եթե ոչ քրդին արքունի ֆերմաններով կարգկանոնի մեջ պահել անկարելի է։

Մեր խոսքը կառավարության պաշտոնակալների հարստահարության մասին էր։ Պատրիարքարանի արձանագրությանց մեջ զինվորական տուրքից հետո ավելի աչքի է զարկում տասանորդի տուրքը, որ սահացվում է մշակության բերքերից։ Այստեղ մշակ մարդու թշվառությունը հասնում է վերջին աստիճանի անկարեկցության։ Գյուղացին ստիպված է երկու տեսակ տուրք վճարել այն հողի համար, որը մշակում է. մինը՝ կալվածական տուրք կամ հողային հարկ, մյուսը՝ մշակած բերքի տասանորդը։ Դա այն ժամանակ է լինում, երբ հողը միմիայն մշակի սեփականությունն է։ Բայց որպես երևում է պատրիարքարանի արձանագրություններից, հայերի սեփականություն եղած հողերը մեծ մասամբ թուրք և քուրդ դերեբեյիները բռնությամբ հափշտակել են։ Այս դեպքում հայը դարձել է դերեբեյիի կամ յուր նոր աղայի ձեռnում ճոճ։ Այժմ նա յուր մշակած հողի համար պարտավոր է վճարել չորս տեսակ տուրքեր, որովհետև երկու աղա ունի, մինը՝ կառավարությունը, մյուսը՝ յուր նոր կալվածատերը։ Նա վճարում է կառավարությանը կալվածական տուրքը և տասանորդը առանձին, բացի դրանից վճարում է կալվածատիրոջը միևնույն հողի համար առանձին կալվածական տուրք և բերքի տասանորդ։ Երևակայեցեք մշակ մարդու դրությու-

նը, և այն ժամանակ հասկանալի կլինի, թե ի՞նչու նա թողնում է յուր արորը, թողնում է հայրենի երկիրը և գաղթում է օտար երկրներում բախտ որոնելու...

Հիշյալ տուրքերի վճարման ձևերը ավելի ևս սաստկացնում են մշակի անբախտությունը։ Կառավարության պաշտոնակալները տասանորդի տուրքը տալիս են կապալով մերձավորներին, և գաղտնի կերպով նրանց հետ ընկեր են դառնում։ Կապալառուն, վարձկանը (մուլթեզիմը), ավազակի չափ անգութ կլինի և հափշտակող, մանավանդ երբ յուր անիրավությանց վրա հսկող պաշտոնեությունն յուր գործունեությանը և յուր շահերուն ընկերակից է։ Պատրիարքարանի արձանագրությունները բավականին ապացույցներ ունեն, թե որպես են կողոպտում կապալառուները։ Նրանք բացի սովորական տասանորդից առնում են շաճնալըգ և օլչեֆ հագգը կոչված արգելված տուրքերը։ Նրանք երբ բերքը գին չէ բերում, թողնում են, մշակի հունձքը փտում է, ոչնչանում է կալի մեջ, և այնուհետև տասանորդի փոխարեն պահանջում են արծաթ փող։ Իսկ երբ որ մշակը փող չունի վճարելու, ծախել են տալիս նրա երկրագործական անհրաժեշտ պարագայքը և նրա անասունները։ Ահա գլխավոր պատճառը, թե ինչու հողագործությունն առաջ չէ գնում Ասիական Տաճկաստանում և ինչու սովը հաճախ կրկնվում է այս երկրում։ Ի՞նչ անե մշակը, երբ ինքն կառավարությունն ուղղակի և անուղղակի կերպով նրա ձեռքի վաստակը հափշտակում է, և եթե մի բան էլ մնացել էր, այն ևս բռնությամբ տիրացած կալվածատերն է տանում։

Մեր հոդվածի համառոտությունը չէ ներում ուրիշ մանրամասնությունների մեջ մտնել. այսքանը միայն կասենք, որ նույն երկրում, միևնույն հողի վրա բնակվող մահմեդական մշակի հետ այս բաները չեն պատահում։

Կառավարության պաշտոնակալների դատաստանական խորությունները մահմեդականների և ոչ-մահմեդականների վերաբերությամբ ոչ սակավ զրկում են հայերին իրանց արդար իրավունքներից, և նրանց մասին կատարված անիրավությունները միշտ մնում են անպատիժ։ Այս հանգամանքներում հայը մի ճար միայն ունի դատավորի արդարությունն յուր կողմը գրավելու. այն է՝ յուր արծաթով ամբոքել նրա կաշառասեր սիրտը։ Իսկ դա խիստ հազիվ է հաջողվում նրան, որովհետև շատ անգամ յուր արծաթով դատավորի քսակը լեցնելեն հետո, նա դարձյալ կորցնում է յուր իրավունքը։ Դատավորը միշտ դեպի այն կողմն է թեքվում, ուր ուժ կա, բայց

Տաճկաստանում ուժ և զորություն ունի միայն մահմեդականը։ Թողյալ այդ, մահմեդականը վայելում է օրինական առանձնաշնորհություններ, որից զուրկ է քրիստոնյան։ Օրինակ, նա կարող է անթիվ վկաններով իրան արդարացնել, բայց հայի վկայությունը չէ ընդունվում։ Եվ վկայությունը մահմեդական օրենսդրության մեջ մեծ դեր է խաղում։ Շատ ժամանակ չէ, որ Կ. Պոլսի լրագրներում կարդացինք մի դեպք, որ պատահել էր Վանա կողմերում։ Մի մահմեդական, առանց գրավոր ապացույցի, միայն սուտ վկաներով մի հայի իրան պարտական էր արել, և բանտ դնել տալով, փողը ստացյավ։ Այսպես ամեն մահմեդական կարող է ցանկացած հային կողոպտել. վկաներ նրա համար պակաս չեն լինի. և ինքն դատավորը հնպաստե նրա չարագործությանը, որովհետև ստացած արծաթի մի մասն էլ իրան է պատկանում...

Մահմեդականը ամեն մի հայի ճակատի վրա կարդում է այս խոսքերը՝ «գյավուր և ռայա»— և այս խոսքերի մեջն է բովանդակվում նրա համոզմունքի ամբողջ վարդապետությունը, թե հայը ուրիշ ոչինչ չէ, բայց միայն աստծուց իրան շնորհված մի որս, որին նա իրավունք ունի ամեն կերպով յուր պիտույքներին ծառայեցնելու... Եվ մահմեդականը չէ սխալվում յուր կարծիքի մեջ, քանի որ հայը յուր կրավորականությամբ արդարացնում է նրա կարծիքը...

Այսքանը բավական է կառավարության պաշտոնակալների մասին, այժմ դառնանք այն հարստահարություններին, որ կատարվում են մասնավոր բռնակալների (դերեբեյիների) և հասարակ ժողովրդի կողմից։

Պատրիարքարանի արձանագրությանց մեջ ավելի մանրամասն տեղեկություններ կան այդ մասին, և պատրիարքարանի Բարձ. Դռան մատուցած բողոքագրերի մեծագույն մասը նվիրված են գավառական հարստահարություններին։ Ընթերցողն արդեն բավական գաղափար ստացած է, թե ինչ տեսակ հարստահարություններ են կատարվում, և մենք դրա վրա երկար խոսելու նպատակ չունենք, միայն կամենում ենք մասնավորապես ցույց տալ այն աղբյուրները, որտեղից ծագում են հարստահարություններն։

Տաճկական Հայաստանի ժողովրդաբնակության մեջ հայերից հետո բազմություն են կազմում Քրդերը, մի ազգ, որ մինչև այսօր ապրում է նախնական կյանքով, մի ազգ, որ արհեստ և երկրագործություն չունի, այլ ավազակությունը համարում է արդար վաստակ և սպանությունը՝ քաջություն։ Քրդերի մեծ մասը վարում են չվա-

կան կյանք և իրանց անասուններով թափառում են հայոց լեռնե-
րում, իսկ շատ փոքր մասը կիսահաստատաբնակ գրություն ունի։
Տաճկական կառավարության թույլ զորություններն անօգուտ եղան
վայրենի քրդերը նվաճելու, և թանգիմաթն յուր բոլոր մարդասի-
րական տրամադրությամբ չկարողացավ մեղմացնել այս բարբա-
րոսների՝ քրիստոնյաների վերաբերությամբ կատարած անգթու-
թյունները։ Քուրդ էշիրաքներն միշտ մնացին անզուսպ և մինչև
այսօր շարունակում են իրանց ավազակությունները[1]։ Այս այսպես
լինելուց հետո կառավարությունը ավելացրեց քրդերի վրա նաև
չերքեզներ, Կովկասի լեռների գազան որդիքը, որոնք իրանց
կյանքի ձևերով շատ չեն զանազանվում քրդերից...

Քրդերի հարստահարությունների մեջ հափշտակությունները,
մանր գողությունները և ավազակությունները այնքան սովորական
են դարձել, որ կարծես, թե ժողովուրդը ընտելացել է նրանց և ար-
տաքո կարգի բան չէ համարում։ Այս պատճառով, հազիվ թե մեկը
վստահանում է բողոք բարձրացնել... «Է՜հ, քուրդ է, նրա գործն այս
է» ասելով, ինքն իրան մխիթարում է։ Եվ ուրիշ ճար չունի ողորմե-
լին, նա ստիպված է լռել, եթե ձայն բարձրացնե, այն քուրդը,
որ այսօր գողացավ նրա ոչխարը կամ եզը, մյուս օրը կկտրե
տիրոջ գլուխը։

Բայց քուրդը յուր արհեստի մեջ ծույլ չէ, նա միշտ չէ բավա-
կանանում մանր գողություններով։ Շատ անգամ բոլորովին կազ-
մակերպված խումբեր, որոնք բաղկանում են հարյուրավոր ձիա-
վորներից, արշավանքներ են գործում և ասպատակում են մի կող-
մից ամբողջ գյուղորայքը, ավար են առնում ոչխարների հոտեր և
այլ անասուններ, և զրկում են գյուղացիներին բոլոր ունեցածից։
Այսպիսի դեպքերում, որ կրկնվում են խիստ հաճախ, արդեն, որ-
պես սովորաբար ասում են, «դանակը ոսկորին է հասնում» և ժողո-
վուրդը ստիպված է բողոք բարձրացնել։ Բայց ո՞ւմ, ո՞վ է նրա

[1] Մինչև այսօր Ասիական Տաճկաստանում, առավելապես Հայաստանի կող-
մերում դեռևս գտնվում են այնպիսի երկրներ, օրինակ, Բուլանըգ, ուր քուրդերն
բոլորովին անկախ և ապստամբ դիրք են պահպանում։ Բուլանըգի Ջաղջա կոչված
քուրդ ցեղի հետ խառն բնակվում են նաև հայեր, որոնք միևնույն վայրենության
մեջ են որպես քուրդերն և իրանց բնավորությամբ չատ չեն զանազանվում։ Այս-
տեղ հայերն էլ քուրդերի հետ ավազակություններ են անում, դեպի զանազան
կողմեր արշավանքներ են գործում, և մինչև անգամ չեն խնայում, եթե պատա-
հելիս լինեն իրանց կրոնակիցներին։ Իսկ Տաճկաստանի և Պարսկաստանի սահ-
մանի գծի վրա բնակված քուրդերը համարյա բոլորն ապստամբ և անզուսպ են,
և անդադար անցնում էն սահմանի գիծը, որ կողմից որ փոքր-ինչ նեղվում են,

ձայնը լսողը։— Եղճալիի ձայնը միշտ մնում է յուր կուրծքի մեջ խեղդված...

Պատրիարքարանի արձանագրություններից երևում է, որ գավառներից եկած բողոքներն առհասարակ վերաբերում են այն տեղերին, որոնք ավելի մոտ են դրված մեծ քաղաքներին, որպիսի են Վանը, Մուշը, Բաղեշը, Տիգրանակերտը, Արզրումը և այլն։ Այդ այն պատճառով չէ, որ մեծ քաղաքների մոտ ավելի շատ են պատահում հարստահարություններ, այլ ընդհակառակն, հարստահարությունները որքան մոտենում են մեծ քաղաքներին, այնքան նվազում են։ Բայց մեծ քաղաքներում հայոց առաջնորդներ կան, նահանգապետ փաշաներ կան, և ժողովուրդն առաջնորդարանի միջնորդությամբ կամ ուղղակի կարողանում է յուր բողոքները հասցնել Կ. Պոլիս։ Բայց անկյուններում, այսինքն՝ կենտրոնական քաղաքներից հեռու գտնված տեղերում ավելի շատ և ավելի անգութ կերպով են կատարվում հարստահարությունները, բայց բոլորը կորչում են անհայտության մեջ։ Որովհետև այն կոմսերի թշվառ ժողովուրդը մինչև անգամ չգիտե, թե Կ. Պոլսում պատրիարքարան կա, սահմանադրություն կա և ինքն կարող է այնտեղ դիմել։

Կ. Պոլսի պատրիարքարանն յուր թույլ սահմանադրական վարչությամբ մինչև այսօր չէ կարողացել յուր պաշտոնեությունը այնքան տարածել, որ կարողանա Ասիական Տաճկաստանի բոլոր հայ ժողովրդաբնակության վրա ազդել։ Եվ այս պատճառով ժողովրդի և ազգային վարչության կենտրոնի մեջ փոխադարձ հարաբերության կապեր չեն կազմվել։ Ես անձամբ առիթ եմ ունեցել լսել թշվառ հայի գանգատներն յուր գրության վրա, երբ նրան ասում ես, թե ինչու՞ չես բողոքում, սովորական պատասխանը լինում է՝ «Ո՞ւմը բողոքեմ...»։ Թշվառականը չգիտե մինչև անգամ, թե հանցավորներ համար դատարաններ կան. նա ճանաչում է մի դատարան միայն, այն է՝ երկինքը...

Եվ ի՞նչ հարկ կա բողոքելու, քանի որ ժողովուրդը փորձված է և գիտե, որ յուր գանգատներով ավելի վատթարացնում է յուր վիճակը։ Որովհետև բողոքներն թե՛ պատրիարքարանի և թե՛ Բարձ. Դռան կողմից որևիցե բավականություն չգտնելով, այսպիսով ավելի վստահություն տված են լինում հարստահարողին հարատևել յուր չարագործություններ մեջ։ Այսպիսով ավելի գրգռվում է բռնակալի վրեժխնդրությունը, և եթե նա առաջ փոքր ի շատե երկյուղ ուներ դատաստանից, այնուհետև բոլորովին միամտանում է, և ավելի վստահությամբ սկսում է տանջել յուր զոհերը։ Այս գրության մեջ

հային մի ելք է մնում — այն է՝ խոնարհվիլ յուր թշնամու անգթությունների առջև և բոլորովին անձնատուր լինել նրա կամքին...

Ահա այստեղից է առաջ գալիս այն դրությունը, որ նկատվում է պատրիարքարանի արձանագրություններից. ամբողջ հայոց գյուղորայք և մինչև անգամ վանքերը ու եկեղեցիները քուրդ դեռեբեյիների, քուրք բռնակալներին և ազդեցություն ունեցող մուֆթիներին ու շեյխերին հարկատու են դառնում։ Դա մի ակամա հարկատվություն է, որ ժողովուրդը ճարահատյալ վճարում է յուր հարստահարողին, որպեսզի իրան հանգիստ թողնե։ Այսպիսով ժողովրդի վրա ծանրանում է երկու տեսակ հարկատվություն, մինը՝ տաճկաց կառավարությանը, մյուսը՝ քուրդ կամ քուրք դեռեբեյիների և ինքնիշխան բռնակալներին։— Այս վիճակին ենթարկվում է ոչ միայն մի ամբողջ հասարակություն, այլև մասնավոր անձինք (մանավանդ երբ փոքր ի շատե ունևոր են), մտնում են այս և այն ազդեցություն ունեցող քուրքի և քուրդի հովանավորության ներքո, որպեսզի ուրիշները նրանց չվնասեն։ Բայց այս պաշտպանությունը շատ թանկ է նստում. պաշտպանյալը թե՛ յուր կալքով և թե՛ յուր պատվով դառնում է յուր աղայի գերին։ Դա մի կամավոր ստրկություն է, որով անդորը հպատակում է հզորին և դառնում է նրա կամքին բոլորովին կրավորական առարկա... Դա ճորտության սկիզբն է, որի տխուր օրինակները տեսնվում են նաև պատրիարքարանի արձանագրությանց մեջ։ Մոգաց կողմերում Տիխիս ավանի քրդերն տեղային հայ գյուղացիներին որպես ճորտ և գերի իրանց մեջ վաճառում են...

* *
*

Տաճկաստանի բարձր կառավարությունը նկատելով, որ քրդերի և ուրիշ վայրենի ցեղերի բարբարոսություններն առաջ են գալիս նրանց թափառական կյանքի բնավորությունից, վերջին ժամանակներում սկսեց աշխատել, որ նրանք թողնեն չվական կյանքը, թողնեն խաշնարածությունը և հաստատ բնակություններ ունենան և սկսեն պարապվել հողագործությամբ։ Կառավարությունն այս դրության մեջ մտածում էր զսպել քրդերին և ուրիշ վայրենի ցեղերին։ Նպատակը վատ չէր, բայց նա սխալվեցավ գործադրության մեջ։ Որովհետև փոխանակ քրդերին Հայաստանի լեռներից հավաքելու և նրանց Տաճկաստանի մի անբնակ կողմում (որպես են Միջագետքի և Ասորեստանի անապատները) գաղթեցնելու, կառավարությունը

նրանց թույլ տվավ հենց Հայաստանում իրանց համար բնակության և մշակության տեղեր բռնել։ Բայց ո՞րպես։

Հողերը հայերի ձեռքումն էին գտնվում, պապերից և հայրերից մնացել էին նրանց որպես ժառանգություն։ Քուրդին դժվար էր փողով հայից հող գնել. որովհետև նա սովորած էր ամեն ինչ բռնությամբ խլել հայից, ինչ որ իրան պետք էր։ Այսպես էլ արեց։ Այստեղից առաջ եկավ հարստահարության մի նոր խնդիր, այն է՝ ճողային կամ կալվածական խնդիրը։

Պատրիարքարանի առաջին «Տեղեկագրքի» արձանագրությանց մեջ, այսինքն մինչև 1872 թվականը, հողային կամ կալվածական խնդիրների մասին ամենևին հիշատակություններ չկան։ Կնշանակե, մինչև վերոհիշյալ թվականը հայերն իրանց հողերի և այլ կալվածների տերն էին։ Դա այն ժամանակին է վերաբերում, երբ քրդերն բոլորովին չվական կյանք էին վարում և տակավին հողի հետ գործ չունեին։ Բայց երբ կառավարության հրամանով նրանք սկսեցին փոքր առ փոքր հաստատ կացություն հիմնել, շատ բնական էր, որ պետք է ծագեր հողային խնդիրը։

Այս խնդիրը, որպես ասեցինք, երևան է գալիս 1872 թվականից հետո և պատրիարքարանի երկրորդ «Տեղեկագրքի» արձանագրությանց մեջ մենք գտնում ենք նրա հիշատակությունը։ Մինչև այնօր հայերի միայն շարժական կայքը հափշտակող քրդերն և այլ վայրենի ցեղերն այնուհետև սկսում են ձեռնամերձ լինել նրանց անշարժ կայքերին։ Նրանք զանազան գավառներում հայերից հափշտակում են մինչև 263 գյուղորայք իրանց պատկանած հողերով։ Գավառների և գյուղերի, նաև հափշտակողների անունները մի ըստ միոջե գրված են «Տեղեկագրքի» մեջ։ Հիշյալ գյուղերից շատերի հայ բնակիչներին քրդերն բոլորովին արտաքսում են և կալվածները սեփականում են իրանց։ Բայց գյուղերի մեկ մասի հայ բնակիչներին իրանց տեղն են թողնում, միայն հողերը նրանց ձեռքից խլելով, իրանք դառնում են կալվածատեր։ Եվ այսպես հայերին հպատակեցնելով քրդերն նրանց հայրենական հողը իրանք մշակել են տալիս, տուրք և տասանորդ են առնում, և մինչև անդամ բերքի կես մասն իրանք են տանում։ Բացի հիշյալ 263 գյուղերից և ավաններից քրդերի ձեռքն են անցնում Ալքորտի գավառի, Ջարսանջակի գավառի և Ջարշամբայի գավառի բազմաթիվ հայաբնակ գյուղերի կալվածները, որոնց անունները նշանակված չեն։

Քրդերը չեն բավականանում հայերի միայն անձնական կալվածքներով, նրանք սկսում են տիրել նաև վանքային կալվածները։

և 21 վանքերի ընդարձակ հողերը զոհ են դառնում նրանց հափըշ-
տակությանը։

Նաև վանքերից շատերը քարուքանդ են անում, և բոլորովին
չնչում են նրանց հիշատակը...

Պետք է ի նկատի ունենալ, որ հիշյալ հափշտակություններ մեջ խառն են՝ ոչ միայն քրդերի հասարակ ժողովուրդը, այլ գլխավորապես նրանց բեգերը, հոգևոր շեյխերն ու մուֆթիները և թուրք պաշտոնակալներ, որոնք իրանց բռնակալության հետ միացրած ունեն և ապահովության կառավարության կողմից։

Բարձր կառավարությունը փոխանակ հիշյալ հափշտակությունների առաջն առնելու, փոխանակ հայ ժողովրդի բողոքները լսելու, խիստ անտարբեր կերպով է նայում այս անիրավություններին վրա։ Կարծես թե, նա ավելի ուրախ էր, որ այդպես էր լինում։ Նա մտածում էր, թե հայը իմ հյուծ հպատակն է, նա եթե հող էլ չունենա, դարձյալ յուր գլուխը կպահե. բայց ապստամբ քրդին պետք է մի ներպով կապել երկրի հետ, որ նա չշարժվի...

Այս կարծիքն առանց ապացույցի չէ, քանի որ տեսնում ենք, որ հայերին պատկանող կալվածների մեծ մասն ինքն կառավարությունը հափշտակելով, տալիս է մահմեդականներին[1]։ Եվ որպեսզի յուր անիրավությանը մի օրինական ձև տա, նա հնարում է թափուի խաբեական օրենքը։ Այս օրենքի հիման վրա ամեն հող, որ մնացել էր մի քանի տարի անմշակ, նա համարվում է մաիլուլ, այսինքն՝ անտեր և կառավարությանը պատկանող։ Այսպիսի հողերն ինքն կառավարությունը գրավելով, շատ չնչին գնով արձանագրում է մահմեդականների վրա և նրանց անունով արքունի կալվածագիր է տալիս։ Այսպիսով հայերը կարող էին դրկվիլ իրանց կալվածների մեծ մասից, ահա՛ պատճառը։

Ընթերցողը գուցե հիշում է, որ հայերը հարկահանների և տասանորդի կապալառուների հարստահարություններից ստիպված, շատ անգամ իրանց հողերն անմշակ թողնելով, գաղթում են դեպի Կ. Պոլիս, կամ մի այլ քաղաք, համալուխյուն և ուրիշ տաժանական աշխատությունով հաց վաստակելու։ Հողը մնում է անտեր,

---

[1] Կառավարության հափշտակած հողերը բոլորովին տարբեր են այն գյուղօրայքից, որոնց մասին հիշվեցավ։ Եվ թափուի օրենքը այնքան խառնիճաղանջ մի բան է, որ ամբողջ հոդվածներ պետք են բացատրելու այս խորամանկ կալվածական օրենքի տրամադրությունները, որով հողը անունով միայն պատկանում է այս և այն մարդուն, բայց իսկապես նա տերության սեփականություն է։

Թեև գաղթականի կամ պանդուխտի ընտանիքը մնացել էր հայրենիքում նույն հողի մոտ, բայց նա կառավարության հայացքով անտեր է համարվում, քանի որ մշակող չունի։ Ի նկատի ունենալով Ասիական Տաճկաստանի այնքան բազմաթիվ հայ գաղթականները, որոնցից միայն 45 հազար հոգի կ. Պոլսոմն է գտնվում, շատ հասկանալի էր, թե որքան հայերին պատկանող հողեր մնացած կլինեն անտեր և անմշակ։ Այսպիսի հողերը տերությունը մաքլուլ համարելով, տալիս է մահմեդականներին և թշվառ հայը պանդխտությունից վերադառնալով, գտնում է իրան զրկված այն միակ հայրական ժառանգությունից, որ նրա վերջին հույսն էր։

Տաճկաց կառավարությունը չէ խնայում մինչև անգամ վանքային և եկեղեցական կալվածներին. վանքը և եկեղեցին նրա օրենքով մի վերացական անձնավորություն է, նա չէ կարող կալվածատեր լինել։ Եվ հայ բարեպաշտների երկար դարերից հետե իրանց նվիրական տեղերին ընծայած հողերը, որոնցով ապահովված էր վանքերի գոյությունը, ընկնում են մահմեդականների ձեռը։ Պետք է գիտենալ հայոց վանքերի այն բազմաթիվ քանակությունը Ասիական Տաճկաստանում, պետք է գիտենալ, թե որքան ընդարձակ տարածությամբ տեղեր պատկանում էին վանքերին, որպեսզի հասկանալի լինի ազգային հարստության այս մեծ կուստը։

Հայը Հայաստանում հազարավոր թշվառություններ կրելով, և ամեն տեսակ հարստահարությունների համբերելով, մի բանով միայն մխիթարում էր իրան, թե նա յուր հայրերի քրտինքով սրբրված հողի տերն է։ Բայց այս մխիթարությունից ևս զրկվեցավ նա։ Մի կողմից քրդերը բռնությամբ խլեցին նրա ձեռքի հողը, մյուս կողմից, ինքը կառավարությունը հափշտակելով, հանձնեց մահմեդականներին։ Էլ ի՞նչ մնաց։

— Հայի ապագան Տաճկաստանումն է,— ասում են կարճատեսները։ Մենք չենք հասկանում, թե ինչ ապագա կարող է լինել մի երկրում, ուր կյանքի և կայքի ապահովություն չկա։ «Հետո լավ կլինի...»— երևակայում են կարճատեսները...

Ով որ չէ խոստովանում մահմեդականության կլանող և ոչընչացնող բնավորությունը, նա ուրանում է պատմությունը, բայց ուրանալ պատմությունը, նշանակում է ուրանալ ճշմարտությունը։

Որևիցե ժողովրդի համար ոչինչ բախտավոր ապագա գուշակել չէ կարելի, քանի որ նրա ապրուստի պահանջները հաստատուն հիմքերի վրա կայացած չեն, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բա-

յատկապես մաշվում է և կլանվում է մի ուրիշ և ավելի զորեղ տարրից։ Ասիական Տաճկաստանի հայը ապահովված դրություն չունի և դրա մեծ ապացույցն այն է, որ նա յուր տան մեջ ապրուստ ճարել չէ կարողանում, և ինչ որ էլ վաստակում է, նրա ձեռքից խլում են, և նա միշտ մնում է աղքատ ու սոված, և միշտ ստիպված է պանդխտության մեջ հաց որոնել։ Տաճկաստանի հայը երբեյալ և տատանյալ վիճակի մեջ է ապրում։ Այսպիսի տունկը արմատ ձգել կարող չէ և շուտով կչորանա...

Մենք ունենք Ասիական Տաճկաստանում ժողովրդի երկու դասեր՝ վաճառականներ և հողագործ մշակներ, վերջինը թե՛ յուր բազմությամբ և թե՛ յուր բարձր նշանակությամբ կազմում է այն, որ կոչում ենք ամբոխ։ Վաճառականն յուր տանը հանգիստ չէ. նա միշտ թափառում է յուր շահերի ետևից. նա այնտեղ է, ուր նրա շահերն են գտնվում։ Վաճառականը հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, ուր արծաթ կա։ Վաճառականը հասարակաց շահերի համար չէ մտածում. նա եսական է։ Մնում է մշակ դասը, որ հասարակության գլխավոր ուժն է կազմում. նա յուր հայրենի երկրում հանգստություն և ապրուստ չգտնելով, յուր կյանքը նույնպես պանդխտության մեջ է անցկացնում, և նրա ամուր ձեռքերը, որ հայրենի հողը պետք է մշակեին, մեծ քաղաքներում զբաղվում են ստոր և ծառայական պարապմունքներով։ Եվ մշակը, արդար երկրագործը, ժողովրդի պարեները հայթայթողը դառնում է համալ. բեռնակիր, գրաստ...

Եվ այսպես Ասիական Տաճկաստանի ժողովրդաբնակության մեծ մասը գաղթականության մեջ է ապրում։ Մի դաս միայն մինչև այսօր մնում էր անշարժ. դրանք էին վանքային աբեղաները։ Բայց երբ վանքերն ենթարկվեցան նույն վիճակին, որպես ժողովուրդը, երբ նրանք էլ զրկվեցան կալվածներից՝ իրանց գլխավոր հարստությունից, այն ժամանակ վանքային միաբանությունները նույնպես ցրվիլ սկսան, և հայոց նվիրական տեղերը մնացին ամայի։

Հողային կամ կալվածական խնդիրը Ասիական Տաճկաստանի հայոց հարստահարությունների մեջ ամենագլխավոր խնդիրն է։ Այս խնդրի նշանակությունն այնքան բարձրանում է, որքան մենք մտածում ենք, թե տաճկաբնակ հայերի մեջ գաղթականությունը դադարեցնելու և ժողովրդին հայրենի հողի վրա ապահով կյանք վարելու միակ միջոցը հանգիստ եկեղեցական է։ Բայց ցավում ենք, նկատելով, որ այս խնդիրը խիստ աննշան տեղ է բռնում պատրիարքարանի «Տեղեկագրքի» մեջ, և պատրիարքարանը

յուր տասն և յոթնամյա սահմանադրական վարչությամբ շատ փոքր ուշադրություն է դարձրել դրա վրա, և համարյա զանցառության է տվել կալվածական խնդիրը, այն խնդիրը, որ հայի կյանքի և մահու խնդիրն է։ Այս խոսքերը զրպարտություն չեն, քանի որ մենք աչքի առջև ունենք պատրիարքարանի արձանագրություններ։ Ամբողջ «Տեղեկագիրքը», որպես հիշած ենք, պարունակում է յուր մեջ պատրիարքարանի 25 տարվա գործունեության շրջանը, այս 25 տարվա մեջ կալվածական հարստահարությունների մասին պատրիարքարանի կողմից, մենք տեսնում ենք, միմիայն մեկ հատ բողոքագիր, որ 1875 թվին հունվարի 3-ին մատուցված է Բարձ. Դռան, այն ևս բավականությունն չէ գտել, և պատրիարքարանը լռել է արնուհետև[1]... Որով ընդհակառակն, տեսնում ենք, կիրակոսի աղչիկը մահմեդականներն առևանգել են, կամ Մարտիրոսի ոչխարները գողացել են, և կամ այս ինչ եկեղեցու խաչը թուրքերը շան վզից քաշ տալով փողոցները ման են ածել,— այսպիսի սկանդալները տարիներով պատրիարքարանի և Բարձ. Դռան մեջ բանակցության նյութ են դարձել... Մենք չենք ասում, թե դրանց մասին պետք էր լռել, բայց և ոչ պետք էր այնքան կարևորություն տալ, որովհետև այսպիսի մասնավոր դեպքերը պատահական են, այսօր կարող են լինել, իսկ վաղը ոչ։ Հայց երբ մահմեդականները գավառների ամբողջ հայ գյուղորայքը իրանց են սեփականացնում,—դա է գլխավոր կենսական հարցը, որովհետև դրանով մի սմբողջ հասարակություն թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մահանում է, և սերնդից սերունդ զրկվում է հացից և հետևապես կյանքից... Բայց պատրիարքարանի ուշադրությունը չէ գրավում այս հարցը...

Այս նկատողություններից հետո, մենք հասնում ենք այն տխուր եզրակացության, թե Կ. Պոլսի պատրիարքարանը և այն, որ կոչվում է ազգային սահմանադրություն, ո՛րքան դատարկ բանեբով են զբաղված եղել և ո՛րքան սակավ հասկացել են ազգի և

---

[1] *Պատրիարքարանի ձեռքով վերջին անգամ որպես Տաճկաստանի հայ ժողովրդյան կողմից մեծ եպարքոսին (սարդազամին) մատուցված խնդիրների կարգում դարձյալ ընդհանուր հողային խնդիրը մոռացված էր. այնտեղ հիշված էր միայն եկեղեցական և վանքային կալվածների հարստահարության մասին։ Մենք զարմանում ենք, եթե Շահ-Հուսեյնի նման մի մասնավոր անձի պաշտոնանկությունը և նրա յուր հայրենիքից տարագրվիլը կարող է հասարակական հարց դառնալ, որքան առավել հողային խնդիրը պետք էր գրավեր ս. պատրիարքի ուշադրությունը։*

ժողովրդի իրական պետքերը... Պողոս վարդապետի գործը, Սսի և Ակթամարա կաթողիկոսների խնդիրները, Կ. Պոլսի ազգային սահմանադրությունը յուր գոյության ամբողջ ընթացքում ծամծմեց, գզգզեց, և համարյա յուր ժամանակի ամենամեծ մասն այսպիսի աննպատակ վիճմունքների մեջ անցկացրեց,— բայց մի անգամ էլ չմտածեց, թե Կ. Պոլսի թուլամբարեներում պառկող 45 հազար վանեցի, մշեցի և այլ գավառական համալները ինչո՞ւ համար են թողել իրանց հայրենիքը։

Թեև մեզ հայտնի էին պոլսեցոց թերևամտությունները, թեև մենք գիտենք, որ նրանք երևակայությամբ են ապրում և ամենևին իրական կետի վրա կանգնած չեն, այնուամենայնիվ Կ. Պոլսի պատրիարքարանի և նրա սահմանադրական վարչության մասին մինչ այս աստիճան աննպաստավոր կարծիք չունեինք։ Բայց պատրիարքարանի «Տեղեկագիրքը» երևան հանեց նրա բոլոր ոչնչությունը։ Թե Տաճկաստանի այժմյան հանգամանքներն առիթ չտային, գուցե մենք երբեք չպիտի տեսնեինք այս «Տեղեկագիրքը». գուցե պատրիարքարանը մինչև հավիտյան պիտի ծածկեր յուր խայտառակությունը, միշտ ինքն իրան խաբելով և միշտ ազգին ցույց տալով, թե մեծ գործ է ընում...

Շատ ժամանակ չէ, որ հրատարակվեցավ այն մեծ խաբեությունը՝ պատրիարքարանի երևելի շրջաբերականը, որի մեջ մոտ 4 միլիոն ժողովրդի ներկայացուցիչը հայտնում էր, թե նա գոհ է «բարեխնամ կառավարությունից»։ Եվ այդ գոհությունը հայտնում էր 25 տարվա ընթացքում հաղարավոր անիրավությանց դեմ միշտ բողոքող և ոչինչ բավականություն չստացող ժողովրդի հոգևոր ղեկավար։ Զարմանալի՜ աչքակապություն...

Արդեն ընթերցողը տեսավ, որ պատրիարքարանի կողմից գավառական հարստահարությանց մասին Բարձ. Դռան մատուցած խնդիրները (թագրիրները), համարյա ոչ մեկն յուր նշանակությանը չէ հասել, կամ մնացել է առանց պատասխանի, կամ թողնվել է առանց հետևանքի, կամ եթե Դռնից հրամանագիր է ստացվել, այն էլ գավառների պաշտոնակալները գրծի չեն դրել. այսպես բոլորն անցել են ապարդյուն... Այստեղից հասկացվում է, թե ինչ նշանակություն ունի հայոց պատրիարքարանը Բարձ. Դռան առջև և ո՛ր չափով Դուռը հոգս է տանում ոչ-մահմեդական ազգերի ապահովության մասին։

Այս այսպես լինելուց հետո մենք պատրիարքարանին հրաշքներ գործել տալու իրավունք չունենք, Բայց մեզ զարմացնում էր

մեկ բան. արդյոք ի նշով էր պարծենում Կ. Պոլսի ազգային սահմանադրությունն յուր 17 տարվա գոռում-գոչումներով, յուր ուրախ կեցցեներով...

Այժմ հասկացանք...

Կ. Պոլսի ազգային սահմանադրությունն ուրիշ ոչինչ չէ եղել, բայց միայն մի մանկական խաղալիք, որ խորամանկ դայակը տալիս է երեխայի ձեռքում, որ նա հանգիստ մնա, որ նրանով զբաղվի, չարություն չգործե... Եվ Կ. Պոլսի տղայամիտ էֆենդիները շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով, և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին իրենց ողորմելի պատրանքը...

Տաճկաց կառավարությունը շատ լավ է ճանաչել յուր հպատակ ազգերի բնավորությունը, նա գիտե, թե ամեն մեկին որպես պետք է խաբել։ Այժմ պատրաստել է նա մի ավելի վիթխարի խաղալիք յուր հպատակների ձեռքը տալու համար՝ յուր պետության մեջ ընդհանուր սահմանադրական վարչություն։— Երկու խոսքով կհայտնենք մեր կարծիքը. «Ծաը յուր շապիկը կփոխե, բայց խասիաթը էլի այն կմնա...»։

Հոդվածս վերջացնելու վրա էի, ստացա մի նամակ, որ վերաբերում էր Վանա հրդեհին. նամակագիրը վանեցի ծանոթներիցս մեկն էր, որ անձամբ ականատես է եղել անցքին։ Թեև Կ. Պոլսի և Թիֆլիսի լրագրներում հրատարակություններ եղան այդ մասին, բայց տեղեկությունները թերի լինելով, հարկավոր համարեցանք այս կտորը որպես հավելված կցել մեր հոդվածի հետ։

Վանա հայերի մեծ մասը բնակվում են Այգեստան կոչված արվարձանում, որ հեռու է բերդից, այսինքն՝ բուն քաղաքից մի քանի ժամվա ճանապարհով։ Այգեստանցիք, թե՛ վաճառականներ և թե՛ արհեստավորներ, խանութներ ունեն բերդի մեջ, վաղ առավոտյան գալիս են քաղաքը, մինչև երեկո զբաղված են առևտուրով և արևը մտնելուց հետո դառնում են իրանց տները։ Խանութները մնում են ճասասների հսկողության ներքո։

Հրդեհից մի քանի շաբաթ առաջ քուրդ բեգերից մեկը բարեկամաբար հայտնում է յուր ծանոթ հայերին, թե այս օրերում մահմեդականների կողմից ձեզ սպառնում է մի մեծ վտանգ։ Հայերն առանց այս խոսքը լսելու ևս ամեն րոպե սպասում էին, թե թուրքերը պետք է կոտորեն նրանց, որովհետև Աբդուլ-Ջեբբահ բեկ չարագործը Տիգրանակերտից վերադառնալով, դեռ վաղուց բոլոր հայերը կոտորելու հրավեր կարդացած էր։

Հայն յուր կյանքից առաջ մտածում է յուր հարստության մա-

սին, որովհետև վերջինը ավելի քանկագին է նրա համար։ Այս սպառնալիքները լսելով, հայերը ոչնչով չեն պատրաստվում գալող վտանգի առաջն առնելու, այլ աշխատում են մի կերպով ազատել իրանց իրեղեններ։ Այգեստանցի հայերը իրանց տներում գտնված քանկագին իրեղենները տանում են քաղաքը և հավաքում են իրանց խանութներում, մտածելով, թե այնտեղ ավելի ապահով կմնան, որովհետև բերդի մեջն է, այնտեղ զինվորներ կան, ոստիկանություն կա և այլն։ Եվ այսպես հայերի բոլոր հարստությունը կենտրոնանում է շուկայում։

Գիշերով հասասները նկատում են, որ զանազան կողմից խանութներից այստեղ և այնտեղ մուխ է դուրս գալիս, հասկանում են, որ կրակ կա։ Նրանք շտապում են խանութատերերին իմացում տալու, բայց ոստիկանությունն արգելում է։ Նույն միջոցին բերդի զորանոցի գլխից լսելի է լինում փողի ձայն. իսկույն զինվորներով շրջապատվում է շուկան։ Զինվորների մեկ մասը բռնում է փողոցների մուտքը և չէ թողնում հայերին, մինչև անգամ խանութատերերին մտնենալ հրդեհի տեղը, իսկ մյուս մասը սկսում է կոտրատել խանութների դռները, ոչ միայն նրանց, որոնցից կրակի նշույլներ էին երևում, այլև այն խանութների, որոնք շատ հեռու էին հրդեհից։ Վերջինների մեջ իրանք զինվորները կրակ են ձգում և մի քանի ժամվա մեջ ամբողջ շուկան բոցավառվում է հրդեհի մեջ։

Բայց ի՞նչ են լինում ապրանքները։

Մեծ մասը զինվորներն ու ոստիկանությունը կողոպտում է։ Եվ դեռ հրդեհը բոլորովին չճարակված, շուկայում հայտնվում է մի խառնիճաղանջ բազմություն—թուրք, քուրդ և այլ գյուղացի մահմեդականներ. դրանք, որպես երևում է, առաջուց տեղեկություն ունեին պատահելու անցքի մասին, և շրջակա գյուղերից հավաքվելով ցերեկով թաքնված են եղել թուրքերի տներում, և զինվորներից ու ոստիկաններից մնացած ապրանքը դրանք են հափշտակում։ Մահմեդականների առջև բաց է լինում կողոպուտի ասպարեզը, մոտ չեն թողնում միայն հայերին։ Նամակագիրը ավելացնում է, թե քաղաքի հարուստ հայ վաճառականներից մեկը մինչև անգամ առաջարկում է 500 լիրա զինվորական գլխավորին, որ իրան թույլ տան յուր խանութից ազատել միայն հաշվի գրքերը և այլ թղթեր, դարձյալ մոտ չեն թողնում։ Այգեստանցի հայերը հրդեհի մասին ոչինչ չեն հասկանում, որովհետև հեռու էին, իսկ այն հայերը, որ բերդի մեջն են բնակվում, նրանց էլ մոտ չեն թողնում։

Եվ այսպես, ապրանքներից ինչ որ քանկագին էր, բոլորը հափշտակվում է, բայց ինչ որ անպետք էր, կրկին ձգվում է կըրակի մեջ։ Եվ որպեսզի հրդեհը հաջող կերպով ճարակվի, ավելացնում են նրա վրա հեշտ վառվող նյութեր, որպիսին են՝ վառոդ, նավթ և այլն։ Կողոպտված ապրանքները մասամբ թաքցնում են թուրքերի տներում և մասամբ կրում են դեպի մոտակա գյուղերը։ Այն գիշեր Ավանց գյուղի նավահանգստի մեջ կանգնած են լինում մի քանի նավակներ, հատկապես այն նպատակով։ Ընդամենը կողոպտվել են 2000 խանութներ, որոնցից 1300-ը կրակից բոլորովին զերծ են մնացած, միայն դռները խորտակել են, իսկ 700-ը այրվել է։ Այս խանութներն ըստ մեծի մասին պատկանում են հայերին, բայց նրանց թվում գտնված թուրքերի խանութները նամակագրի կամքով առաջուց դատարկված են եղել։

Նամակագրի կարծիքով այս անցքը պատահական չէ, այլ առաջուց խորհված և տնօրինված մի դավադրություն է, որի գաղտնիքը պահված է եղել զինվորական պաշտոնեության և տեղային կառավարության երևելի անձինքների մեջ։ Եվ գյուղացի կամ քաղաքացի մահմեդականները, դավադրության հոտը առնելով նշանակյալ գիշերը հավաքված են եղել, որ իրանք էլ մասն ունենան ընդհանուր կողոպուտից։ Եվ թուրք բեկի՝ հրդեհից մի քանի շաբաթ առաջ հայտնված նախազգուշությունն ուրիշ նպատակ չէ ունեցել, բայց միայն այն, որ հայերը երկյուղ կրելով, նաև իրանց տնային հարստությունը հավաքեն շուկայում։ Որովհետև հայ հասարակությունը, թեև մահմեդական ամբոխից կասկածներ ուներ, բայց նա կառավարությունը և նրա զինվորական ուժը միշտ յուր պաշտպան էր համարում։ Այս պատճառով շուկան նրա ապահով տեղն էր, դրված լինելով ոստիկանության և հասասների հսկողության ներքո, և շատ մոտ էր զինվորանոցին, յուր բերդի միջը գտնվելովվ։

Թեև նամակագրի ենթադրությունը դեռևս չապացուցված մի կարծիք է, այսուամենայնիվ, մի քանի փաստեր հաստատում են այս կարծիքը, թե հրդեհը մի հնարած պատրվակ է, հափշտակության մեղադրանքը նրանով ծածկելու համար։ Հրդեհից մի քանի օր առաջ զինվորները գնելիս են եղել մոմպատներ և այլ վառվող նյութեր։ Եվ նույն գիշերվա երեկոյան պահուն, երբ պատահել է հրդեհը, զինվորներից շատերն այս և այն խանութին մոտենալով, ձևացրել են, թե բան են գնում (ճիշտ այն ժամանակ, երբ խանութպաններն իրանց կրպակները կողպելիս են եղել) և աննկատելի կերպով խանութներում այրվող բաներ են ձգել։ Նամակա-

գիրը բերում է մի արդեն հայտնված ապացույց յուր խոսքերին, իբր թե մի վաճառական, երբ խանութը կողպելու վրա էր, մոտենում են նրան երկու զինվորներ, նրանցից մեկը խնդրած ապրանքն յուր ձեռքն առածի պես փախցնում է, խանութպանը նրա ետևից վազելով, կամենում է բռնել և ապրանքը ետ առնել, նույն միջոցին մյուս զինվորն, որ մնացել էր խանութի մոտ, մի փաթաթած բան ձգում է նրա մեջ և հեռանում է։ Վաճառականը վերադառնալով յուր խանութը, գտնում է այնտեղ մի կտավի կտորի մեջ փաթաթված շիկացրած ածուխի կտորներ, որ արդեն սկսել էր վառել յուր փաթեթը և ընկած էր բամբակյա գործվածքների մեջ։

Մյուս ավելի կասկածանք հարուցանող փաստն այն է, որ հափշտակության գլխավոր գործիչները, որ եղել են զինվորները, հրդեհի առավոտը փոխում են և հեռացնում են քաղաքից, նրանց տեղը բերելով նորերին։ Այս փոփոխությունն այլ նպատակ չունի, եթե ոչ ավազակների հետքը կորցնել և Տաճկաստանի այժմյան զինվորական խռովության մեջ թաքցնել չարագործները։

Նամակագրի կարծիքով, այս անցքն առանց նպատակի չէ եղել. իբր թե տաճկաց կառավարությունն յուր այժմյան տագնապի մեջ կասկած է ունեցել Վանա հայերից, չիցե թե ռուսների հետ պատերազմ ծագելու միջոցին նրանք թշնամուն ձեռնտվություն անեն, և այս պատճառով մտածել է առաջուց նյութապես տկարացնել նրանց։ Մեր կարծիքով այս ենթադրությունը անտեղի է, որովհետև տաճկաց կառավարությունը շատ լավ է ճանաչում հայերին, նա գիտե, թե որքան ընտելացած են հայերն յուր բռնակալությանը, նա գիտե, թե որպիսի սիրտ են կրում հայերը... Մենք նայում ենք այս անցքի վրա, որպես մի խորամանկությամբ հնարված հափշտակության վրա, ավելի ոչինչ։

Ընդհանուր վնասի մասին նամակագիրը դժվարանում է հաշիվ տալ, բայց կարծում է, թե շատ մեծ պետք է լինի, քանի որ Վանա վաճառականությունը հայերի ձեռքումն է, և Վանը իր շրջակա գավառների առևտրական կենտրոնն է։

Վանա հրդեհի անցքի մեջ նկատվում է միևնույն երևույթը, ինչ որ տեսանք գավառների բոլոր հարստահարությանց մեջ, ուր սպանություններն ամենափոքր թվանշաններն էին կազմում։ Այստեղ ևս ոչ մի սպանություն չէ պատահում, երևում է, որ հայերն իրանց ճակատագրական թուլասրտությամբ կանգնած, նայելիս են եղել, թե որպես կողոպտում են իրանց... Բայց Վանա մեջ հայերն ավելի բազմաթիվ են քան մահմեդականները... Բայց հայը կյանքի

կովի մեջ ունի յուր առանձին զենքերն յուր կորուստը դարձնելու համար։ Վանեցի հայերը հեռագրում են իրանց Կ. Պոլսում եղած ընկերներին. «մեզ այստեղ կողոպտեցին, դուք էլ այնտեղ ումից որ ապրանք եք առած, փողը մի տվեք...»։

Վանա հրդեհի մասին դրանից ավելի դատել առայժմ անտեղի է, քանի որ գործը բոլորովին պարզված չէ։ Կ. Պոլսի լրագրների մեջ արդեն ծանուցված էր, թե Բարձ. Դռնից առանձին մասնաժողով նշանակված է այս անցքը քննելու համար։ Կսպասենք, մինչև մասնաժողովն յուր գործը վերջացնե, թեև հավատացած ենք, որ ճշմարտությունը ոչ բոլորովին պիտի երևան ելնի։

ԽԱՎԱՐԻ ԱՐԲԱՆՑԱԿՆԵՐԸ

Մարդկության պատմագրությունը մեզ ուսուցանում է, որ ամեն մի հասարակական գործիչ,— երբ նա փոքր ի շատե բարձրանում է նույն հասարակության ստորացած, մինչև գետին հավասարված մակերևույթից, երբ նա աշխատում է վերականգնել նորան և դուրս քաշել անբարոյականության ցեխից,—նա դառնում է ամբոխի հալածանքին առարկա և զոհ նորա խավար նախապաշարմունքներին։ Թողնենք եվրոպական ազգերի կյանքում պատահած բազմաթիվ օրինակները, դառնանք մեր ազգի պատմական անցյալին։ Մեծն Տրդատ, որ մտցրուց Հայաստանում քրիստոնեության լույսը, ստացավ ամբոխից այդ սրբագործության փոխարեն Թունալի բաժակ. նորա մեծ գործակիցը, Սուրբն Գրիգոր, հալածված ժողովրդից, թողած նորան, հեռացավ և յուր ծերության վերջին մխիթարությունը գտավ առանձնակեցության մեջ Մանյա այրերում, ուր և վախճանվեցավ անհայտությամբ։ Արիստակեսը սպանվեցավ, Մեծն Ներսես մահացու թույն ընդունեց և այլն։ Ինչո՞ւ ենք քրքրում պատմության խորքերը, գանք ավելի նոր ժամանակներին։ Կարապետ վարդապետ Շահնազարյանցը մեռավ Փարիզում, Ալամդարյանցը յուր կյանքի մեծ մասը անցրուց աքսորանքներում մեր եկեղեցականների աննեղոտմտությունից։ Ստեփաննոս Շահնազարյանցի և նորա արժանահիշատակ աշխատակցի պատմությունն ամենեցուն հայտնի է, շատ տարիներ չեն անցել, որ մտածում էին «Հյուսիսափայլի» տետրակները հավաքել այրելու համար։

«Հյուսիսափայլի» անկումից հետո տիրեց, եթե կարելի է այսպես կոչել, գրականական մեռելությունը։ Երևեցան մի քանի լրագիր, ամսագիր, բայց նոցա չքանալն այնպես շուտափույթ եղավ, որ յուրյանց հետքն անգամ չթողեցին։ Շնչասպառ «Մեղուն» դեռ յուր դանդաղ ընթացքը շարունակում էր, վերջապես նա էլ ընկավ։

Հայտնվեցավ Կերմանիայից մի ուսանող; նա արհամարհեց փառքը, աստիճանը և աշխարհային բոլոր բարօրությունքը, որոնց հասնելու հարմարություններն ուներ, կամեցավ ծառայել հասարակությանը և յուր ազգին։ Նա հիմնեց մի խմբագրություն։ Երևեցավ «Մշակը»։ Առաջին անգամ մի հայոց թերթ ազդեց ժողովրդի վերա, շարժում ձգեց, վիճաբանություններ հարուցց, գրգռեց ժողովրդի հարցասիրությունը, մի խոսքով՝ էլեկտրական ցնցում տվեց նորա թմրած անշարժությանը։ Այդքանը բավական էր բորբոքել խավարասերների նախանձը։

Ազգի լուսավորությունը և նրա տնտեսական բարօրությունը հաստատուն պահպանել «Մշակի» սուրբ նպատակն է, որին նվիրել է յուր գործունեությունը։ Այս նպատակին հասնելու համար, այո՛, «Մշակը» չի քարոզել փտած ազգասիրություն, այլ ընդհակառակն, անխնա հարձակվել է, մտրակել է ամեն հասարակական, տգեղ երևույթները։ Նա մերկացրել է ժողովրդի կյանքի ամեն մի այլանդակություններր և դառն ատելությամբ պարսավել, պախարակել է նորանց։ Նույնիսկ ատելության մեջ կայացած է եղել նորա սերը դեպի ազգը և դեպի ժողովուրդը։ Ճշմարիտ է, եզվիտական կեղծ ժպիտը երեսին «Մշակը» չէ շողոքորթել ամբոխի հաճույքներին, այդ անում են նոքա, որք ցանկանում են ավելի ևս ծանրացնել ազգի թմրությունը և նորա անշարժությունից ու տգիտությունից օգուտ քաղել։ «Մշակի» ուղղությունը, այո՛ բացասական է, նա խորին ատելությամբ աշխատում է և պիտի աշխատե հեռացնել ամեն մի վնասակար տարր ազգային մարմնից։ Այդ յուրաքանչյուր բարեխիղճ վիրաբույժի պաշտոնն է, որ կտրում է մարմնի փտած և ապականված մասը, նորա կենդանությունը պահպանելու համար։

Նա միշտ պաշտպանել է ազգի լեզուն և նորա գրականությունը։ Նա միշտ աշխատել է ցույց տալ ուղին, որով նա կարող էր հասնել ճշմարիտ գիտության և լուսավորության։ Նորա նյութական և տնտեսական վիճակը բարվոքելու համար ցույց է տվել և պիտի ցույց տա բոլոր միջոցները։ Մեզ մեղադրում են, թե մենք հերքեցինք բոլոր ազգային ուժերը։ Որո՞նք են մեր ուժերը։ Մենք արխ-

տոկրատիա չունենք։ Փառք աստուծո, որ չունենք։ Մենք ունինք վաճառական դաս... Մենք ունինք արհեստավոր դաս, որ այսօրվա օրս էլ կոշիկը այնպես է կարում, ինչպես մի ժամանակ հագնում էր Արամը կամ Արմենակը։ Մենք ունինք երկրագործ դաս, որ մաշվում է յուր նահապետական ծանր աշխատության մեջ և նորա վաստակը խլում են կալվածատերը, մանրավաճառը և այլն։ Բայց ինչ որ վերաբերում է ազգային ոգուն, սրա գործիչ զորությունները մենք չունենք այն հին կամ նոր սերունդ կոչված բաներըմեզանում թե՛ հինը և թե՛ նորը եգիպտական միակերպ մումիաներ են ներկայացնում, այն զանազանությամբ միայն, որ նոր սերունդը բավականին խարդախված, օտարացված և անպիտանացված է, մինչդեռ հինն ապրում է նախկին բնավորությամբ։

Մենք բավականին խաբեցինք մեզ ու մեզ, երեխայի նման ամեն մի ազգային չնչին հայտնություններով ուրախացանք, ոգեվորվեցանք այն բոլոր բաներով, ինչ որ հային էր պատկանում, ատեցինք այն ամենը, ինչ որ օտարինն էր, սիրելի էր մեզ ամեն գործ, ուր հայն էր գործում, թող լիներ նա անօգտավետ, փույթ չէ։ Մեր որդիների անունը Տիգրան, մեր աղջիկների անունը Աշխեն դրեցինք, մեր գրասեղանների առջև «Ոգի Հայաստանի» պատկերը կախեցինք։ Բայց ի՞նչ եղավ այդ մոլի ազգասիրական շրջնորհքների արդյունքը, մի դառն անձնախաբեություն։ Երբ քննեցինք մեզ ու մեզ, տեսանք, որ մի ողորմելի դատարկություն է տիրում մեր կյանքին։

«Օրհնած, ասում էր մեզ, մի քանի տարի առաջ ավելի վատ էր...»։ Հայը միշտ այսպես է մխիթարում յուրյան, նա գոհ է, որ կես քայլ առաջ է գնացել, բայց երևակայել անգամ չէ կարող, թե քանի հազարավոր մղոններով ետ է մնացել զարգացած ազգերից։

Դարձյալ ազգի անշարժության վերա թուխս նստած պատվելիներն, այդ հնդկական վամպիրները, ուզում են ավելի ևս ծանրացնել նորա շունչը, յուրյանց մաշկաթևիկներով զով սփռելով նորա երեսին, որպեսզի կարողանան ավելի հանգիստ կերպով ծծել յուրյանց զոհերի արյունը... Լույսը միշտ ատելի է նորանց, որովհետև չղջիկները սիրում են թափառել խավարի մեջ...։

Ահա, սիրելի ընթերցող, մեր այժմյան հասարակական կյանքի տխուր պատկերը, բայց մենք ունինք մի բան, որ մոռացա քեզ ասել, մի քանի դեռևս անհայտ երիտասարդներ, որոնց հալածում են ազգուրաց, դավաճան, հերետիկոս և այլն անուններով.—դոքա են մեր ուժերը։

ԴԱՏԱՐԿ ՀՈՒՅՍԵՐՈՎ ԵՆՔ ԽԱՂՈՒՄ

Մինչև երխան լաց չէ լինում.
Մայրը ծիծ չէ տալիս։

Առած

Զարմանալի բան է հույսը։

Նա մարդերի մեջ հայտնվում է երկու կերպարանքով. մեկ, որ մարդը գործում է, աշխատում է և ամենևին չէ թուլացնում իր եռանդը, և հույս ունի, որ կհասնի իր նպատակին։ Մյուս, որ մարդը ոչինչ չէ շինում, ծույլ է, հանգիստ իր տեղը նստած է, և հույս ունի, թե մի օր կստանա այն, ինչ որ ցանկանում է։

Մեր խոսքը վերջին տեսակի վրա է։

Կան աղքատներ, որ միշտ երևակայում են, թե մի օր գանձ կգտնեն և կհարստանան։ Դուք քննեցե՛ք մի ստրուկ և ծույլ ժողովրդի առակները, առածները, լեգենդաները ու հեքիաթները, և կտեսնեք, որ նրանց մեծ մասը թափուցած գանձերի վրա է։ Աղքատի երևակայությունը մի ուրիշ բան չէ կարող ստեղծել։ Այնպես էլ քաղցած հավը երազումը կուտ է տեսնում և սկսում է իր ոտները կտցահարել...

Այս տեսակ հույսերը խանգարված երևակայության և ուղեղի հիվանդության ցնորքներ են։ Այս տեսակ հույսերը գժերի երազներ են։

Այս տեսակ հույսերով ապրում են ոչ միայն մասնավոր անհատներ, այլ ամբողջ ժողովուրդներ և ամբողջ ազգեր։ Մինչև այսօր հրեից ազգը սպասում է, թե կհայտնվի մի մարդ, որ կնորոգե սուրբ տաճարը, որ կքարձրացնե Երուսաղեմը իր ավերակների փոշիներից և կվերադարձնե Իսրայելի կորած փառքը։ Այն ժամանակ աշխարհի հզոր թագավորները, մի հասարակ հրեայի փեշից բռնած ողորմություն կխնդրեն...։

Երուսաղեմը ընկավ, Իսրայելը փոշու նման ցրվեցավ բոլոր աշխարհի վերա, բայց Աբրահամի որդիքը տակավին այդ հույսով են ապրում...։

Հույսը այնքան սաստիկ ներգործություն ունի մարդկային եռեվակայության վրա, որ բոլոր ազգերի կրոնքները նրան իրանց գլխավոր հիմունքներից մեկն են դրած։ Նա է ոգևորում նահատակներին համբերությամբ տանել բռնակալ ձեռքից սարսափելի տանջանքերը։ Նա է հանգստացնում վշտակիր ֆամիրի անտանելի ճըգ-

նությունները։ Նա է թելադրում մարդուն գոհել իրական կյանքը, ատել աշխարհը և նրա վայելչությունները, մի գերբնական կյանքի բարությունների սպասել տալով։— Կրոնը, որպես վերացական սահմանադրություն, և վերացական հիմքի վրա է դրված, դա է հույսը։

Հույսը մի անդունդ է, որի անեղրական դատարկության մեջ մարդը մխիթարվում է այն բաներով, որ իսկապես չունի։

Դարտակ հույսը ծուլացնում է մարդուն, խլում է նրանից իր ինքնագործունեությունը և կրկում է տոկուն աշխատութենից։ Դարտակ հույսը մարդուն ամեն բան դրսից է սպասել տալիս. նա չէ թողնում, որ մարդ կանգնի իր սեփական ոտների վրա։—Նա միշտ նեցուկ է որոնում։ Եվ այս պատճառավ մարդկային առաջադիմության մեջ չկա մի ավելի վնասակար բան, քան թե ցնորամիտ հույսը... Նրա խաբեական երազների մեջ,—մարդ զրկվում է իր բոլոր ցանկությունների ստվերների հետ...։

Ինչ որ գործում է դարտակ հույսը մի անհատի կյանքի մեջ, նույնը գործում է նա մի ազգի պատմության մեջ։ Քննեցեք մի ազգի պատմություն և այդ թո՛ղ լինի մեր ազգի պատմությունը, և կտեսնեք, թե ո՛րքան մեծամեծ վնասներ է կրել նա, ո՛րքան կորցրել է դարտակ հույսերից հրապուրված, և տակավին չէ խրատվել իր սխալներով[1]։

Ահա 850 տարի է, որ Հայաստանը մոնգոլական ցեղերի լծի տակ հեծում է. քաղաք չմնաց, որ մի քանի անգամ նրանցից կործանված չլինի. մեր աշխարհում մի քիչ տեղ չմնաց, որ նրանք արյունով չողողեին, տաճար չմնաց, որ նրանք չպղծեին, կամ իրանց կիսալուսինը նրա կաթողիկեի վրա չտնկեին։ Շատ անգամ սմբողջ գավառներ ամայի անապատ դարձան այս բարբարոսների արշավանքներից. շատ անգամ բյուրավոր ընտանիքներ ոչնչացան գերության և հալածանքի մեջ։ Սուլթանները հազարավոր լեզուներ կտրել տվին հայերեն խոսելու համար։ Անգորայի, Տիգրանակերտի Խարբերդի և Փոքր. Ասիայի շատ կողմերում մայրենի լեզուն կորավ հայի բերանից։ Եվ մոնգոլական այլանդակ կերպարանքը գե-

---

[1] Մենք արդեն պատրաստ ունենք մի շարք հոդվածներով համառոտ պատմական տեսություն, Տրդատից սկսած մինչև Ռուբինյանց Թագավորության վերջը, որի մեջ ցույց է տրված, թե ի՛նչ վնասներ կրեցին հայերը, իրանց հույսը երբեմն այս և երբեմն այն պետության վրա դնելով։ Այս աշխատությունը կտպվի «Մշակի» համարներում։

ղեկացավ, կանոնավոր ձև ստացավ հայոց գեղեցկուհիները բըռնությամբ դեպի հարեմ քաշ տալով։—Կրկնում ենք. 850 տարի է, որ թուրքերը կատաղի գազանի նման ուտում, մաշում և սպառում են հայոց ազգի մարմինը, և նա համբերում է...։

Ասում են, պատմական հալածանքները թողնում են պատմական ոխակալություն։ Մի ազգ չէ մոռանում մի ուրիշ ազգի բարբարոսությունները, որ գործել է իր նախնիքների դեմ։ Հույնը, պարսիկը ատում են հայերին, որովհետև հայերը ունեցել են ներքին պապերի հետ փոքրիկ հաշիվներ։ Բայց հայը ոչ ոքին չէ ատում, չնայելով, որ նա բոլոր իր շրջապատող ազգերից հալածանքներ է կրել, հարվածներ է ստացել։ Սև հայի այս ներողամըտությունը առաջ է գալիս ոչ թե նրա քրիստոնեական եղբայրասիրությունից, այլ նրա հոգեկան անզգայությունից...

Դիակները ատելություն չունեն. դիակները լուռ համբերություն ունեն...

Այո՛, 850 տարի է, որ հայը մոնգոլական կրակի մեջ այրվում է և մի ձայն, և մի բողոք չէ բարձրացնում։ Դա հայի մեռելության նշանն է, որ նա պատվի, ինքնասիրության և ազատության զգացում չունի։—Ասում ենք մեռելության, և ոչ ստրկության, որովհետև դրանով չափազանց պատված կլինենք նրան, որովհետև ստրուկը դոնյա իր սրտում թաքցրած ունի մի խուլ ատելություն դեպի իր բռնակալը, և հարմար միջոցում դուրս է ժայթքում։ Բայց հայը այդ էլ չունի։

Հայը ունի այն երազական ցնորքը, որ մենք հույս կոչեցինք, որով ապրում են, որով մխիթարվում են ծույլ և դանդաղկոտ ժողովուրդները, թե մի օր գերբնական կերպով ազատված կլինեն...

* *
*

Ահա՛ զարկեց ժամը և Տաճկաստանի հարստահարված քրիստոնյաների վիճակը պիտի որոշվի։ Քաղաքագետները դրան կոչում են արևելյան հարցի լուծում։ Այս բազմադարյան խճճված հանգույցը պետք է լուծվի սրով։ Հարստահարված ազգերը սուր բարձրացրին և մի հզոր պետություն նրանց պաշտպան հանդիսացավ, կոտորածը սկսվեցավ, և տակավին շարունակվում է...։

Բայց ի՞նչ արավ հայը։

Ոչինչ։ Նա իր տեղում հանգիստ նստեց և խոտի նմա՛ն կռվողների ոտքի տակ տրովեցավ, և նրանց պատերազմական փոշու մեջ

խեղդվեցավ։ Հայի գլխին կատարվեցավ այն առածը, թե «ձին ոե ջորին կռվեցան, էշը մեջտեղում սատկեցավ»։

— Ի՞նչ կարող էր անել հայը,— հարցրեց բարեկամներիցս մեկը, երբ մի օր այս առարկայի վրա խոսում էինք։

— Կարող էր ինքն էլ զենք բարձրացնել,— պատասխանեցի ես։

— Նա այդ բանի մեջ շնորհք չունի։

— Ուրեմն ոչինչ պահանջելու իրավունք ես չունի։

— Ի՞նչու։

— Որովհետև ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրանց ազատությունը սրով պաշտպանել գիտեն։ Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի փրկություն։

— Բայց դուք մոռանում եք ընդհանուր մարդասիրությունը,— ասաց բարեկամս։

— Դա մի ուտկան է, որով որսում են մեզ նման հիմարներին կրկին ստրկացնելու համար։

— Բայց դուք մոռանում եք, որ մեր օգուտը մեր լռության և մեր հանգստության մեջն է...։

— Այդ ես հասկանում եմ, հայը միշտ սովոր է այսպես մտածել. «Թո՛ղ ուրիշները փրթեն, ես կխրփշտեմ»։— Այժմս էլ երևակայում է նա օգուտ քաղել ուրիշի թափած արյունից։

— Բայց ես հույս ունեմ, հաստատ հույս ունեմ,— կրկնեց բարեկամս,— որ այս պատերազմով արևելյան հարցը կլուծվի, և հայն էլ կստանա իր մասն ու բաժինը։

— Դարձյա՜լ հույս... Ռամկորեն ասում են, «հույսը ցանեցին ու տեղումը ոչինչ բուսավ»։

Մեզանից շատերը այդ հույսը ունեն։ Բայց թե ի՞նչ հիմքի վրա է կայացած նա, հայտնի չէ։ Միայն մենք ուրախանում ենք, երբ եվրոպական որևիցե լրագիր հայերի մասին ծուռ ու սխալ կերպով մի բան է հայտնել։ Մխիթարվում ենք, որ եվրոպացին արժան է համարել արհամարհված հայի մասին խոսել։ Մենք մխիթարվում ենք, երբ եվրոպայի որևիցե քաղաքում, մի ժողովի մեջ հայկական հարց է բարձրացել։ Տեսեք, ասում են, մեզ վրա ուշադրություն են դարձնում, մեր բանը պրծած է... Թուրքիայի հայը այսուհետև ազատ է... Մենք ուրախանում ենք, որ սուլթանը հայոց պատրիարքի հետ ողորմածությամբ է խոսացել,— նրան բարձր պատվանշանի է արժանացրել.— այդ բարձրագույն գութը ազգին է վերաբե-

Շա՛տ լավ։ Եվրոպացին խոսում է իր լրագրի մեջ, խոսում է իր ժողովների մեջ, ուան էլ արյուն է թափում, բայց ի՞նչ է անում ինքը հայը։

Նա իր տեղում անհոգ նստած է, նա լուռ է։

Մի լրագիր, մի ազգային թերթ միայն իր բողոքը պատառում է։ Բայց նրա ձայնը կարո՞ղ է հասնել Եվրոպայի ականջներին, քանի որ նույն իսկ հայոց լսելիքը խլացած են նրա համար։ Այս լրագիրը առաջարկեց մի խումբ երիտասարդներ ուղարկել Եվրոպայի գլխավոր քաղաքներում մեր ցավերը հրատարակելու համար։ Կատարվեցա՞վ։ Այս լրագիրը առաջարկեց կազմել մի գիտնական ընկերություն և հայերի բոլոր հարստահարությունները առանձին գրքույկներով և զանազան լեզուներով հրատարակել, ու ամեն տեղ տարածել։ Կատարվեցա՞վ։ Այս լրագիրը հայտնեց, թե հասել է այն ժամանակը, երբ մեր եղբարց փրկության համար հարուստը չպետք է խնայե իր արծաթը, գիտնականը չպետք է խնայե իր հանճարը, եկեղեցականը չպետք է խնայե իր ազդեցությունը ու ջանքը, իսկ աշխարհականը, ոամիկը չպետք է խնայե իր արյունը։ Այս լրագիրը շատ բաներ առաջարկեց, շատ բաներ խոսեց, բայց ի՞նչ արեցին կարդացողները։ Ո՛չինչ։

Ուրեմն ի՞նչ կարող ենք հուսալ քանի որ այսպիսի անդամներից է բաղկացած մեր ազգությունը։ Հարուստը իր փողն է պաշտում։ Գիտնականը եռանդ և անձնազոհություն չունի։ Եկեղեցականը անտարբեր է մնում։ Աշխարհականը, ոամիկը սիրտ չունի, սիրտը մեռած է...։

«Մեր լռության մեջ են մեր շահերը»,—ասում են հիմար իմաստուններ։

Բայց գիտե՞ք հայի առածը՝ «մինչև երեխան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս»։ Եթե այրական քաջություն չունենք, գոնյա երեխայի տրտունջ ունենանք. հապե ոչ, Եվրոպան մեր լռությունը

ղոլորովին ուրիշ կերպ կբացատրե. Նա կմտածե, թե Տաճկաստանի հայը գոհ է իր վիճակից. և իրավունք էլ ունի այսպես մտածելու։

Ո՞ւր մնացին Կ. Պոլսի այն տաք գլուխները, որոնց բերանում անդադար հնչվում էր՝ «ռևոլյուսիոն մը ընելու է» խոսքը։ Ո՞ր ծակը մտան այն ցնորամիտ երդիչները, որոնք իրանց տաղերի մեջ Հայաստանի անկախությունն էին երազում։ Եվ ո՞ր օրվա համար էին այն ֆրանսիագետ և անգլիագետ պարոնների գրիչները, որոնք շատ անգամ մտածում էին այդ լեզուներով լրագիրներ հրատարակել հայոց ցավերը Եվրոպային հայտնելու համար։

Բոլորը լավեցան, երբ տեսան բաշիբոզուկների սվիններր։ Բավական չէ, որ օտարը հայի մասին խոսում է. պետք է նա ևս, եթե չբարձրացրեց իր սուրը, գոնյա բարձրացներ իր ձայնը։ Բայց այս բանի մեջ ևս նա շնորհք չունեցավ։ Մինչև այսօր մի պաշտոնական ձև ունեցող բողոք չհայտնվեցավ հայերի կողմից։ Մինչև այսօր մի ազգային պատգամավորություն չդիմեց ուր որ հարկն էր, ժողովուրդը ոչինչ չարեց. ոչինչ չգործեցին և ժողովրդի ներկայացուցիչները։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը շողոքորթում է, կեղծավորվում է, և հայ եկեղեցականի հատուկ սովորությամբ՝ ազգի շահերը իր փառքին է զոհում։ Պատրիարքը ստիպված է այսպես վարվել, մտածում են կարճատեսները։ Դիցուք թե, նա այնքան անձնազոհություն չունի, որ իր ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար՝ հունաց Գրիգորի նման իր պատրիարքարանի դռանը կախաղան հանվի, դիցուք թե, նրա լեզուն Կ. Պոլսում կապվում է, բայց ո՞վ էր արգելում նրան թողնել Թուրքիայի մայրաքաղաքը, ընտրել մի եվրոպական քաղաք, թող այդ լիներ Լոնդոն, և այնտեղից իր ժողովրդի բողոքներին թարգման լիներ, ուր որ հարկն էր։ Թող պատրիարքարանը նրա ծախսերի համար իր երեք հազար լիրա պարտքի վրա ավելացներ հազար լիրա ևս. պոլսեցիք սովորել են վճարել իրանց պատրիարքարանի պարտքերը։

Բայց ո՛չ, սուլթանի մի ժպիտը պատրիարքին մոռանալ տվեց հայ ժողովրդի արտասուքը և արյունը...։

Ինչո՞ւ ենք մեղադրում պատրիարքին, երբ ընդհանուր հայոց կաթողիկոսը, ազգի հոգևոր ներկայացուցիչը, նույնպես լռությունն է պահպանում։ Մի խնդիր, որ գուցե դարերով այլևս չպետք է կրկնվի, մի խնդիր, որով պետք է վճռվի Տաճկաստանի հայոց

ապագան— ընդհանուր հայոց հայրապետը իրան անտարբեր է պահում դեպի այն, նա, որին միայն է պատկանում ազգի իրավունքների պաշտպանության ձայնը։

Հայոց կաթողիկոսի հայրապետական աթոռը մի ապահով երկրում է դրած, թուրքը նրան երկյուղ չէ կարող սպառնալ. բայց ինչո՞ւ է լուռ։

* *
*

Այսպես չէ, որ մենք ենք մտածում։ Մեզանում կան մի տեսակ կարճատեսներ— դժբախտաբար նրանց թիվը փոքր չէ, որոնք երեվակայում են, թե հայի ապագան Տաճկաստանումն է, թե հայի գոյությունը կապված է թուրքաց կառավարության գոյության հետ։ Նրանք մտածում են, թե այժմյան բարբարոսությունները, հարբուստահարությունները մի օր կվերջանան, երբ թուրքը կքաղաքակրթվի, այն ժամանակ, ասում են, հայը քաղաքացու հավասար իրավունք և ազատ կյանք կվայելե։

Այդ ցնորք է։

Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ, և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա։ Նա այսօր բռնությամբ հայի տղան, աղչիկը և կինը հափշտակում է և մահմեդական է շինում, բայց էգուց այնպիսի հրապուրիչ ձևեր կմտցնե, որ հայերը իրանց կամքով կդիմեն դեպի մահմեդականի մզկիթը։ Նա այսօր ավազակի պես է կողոպտում, բայց էգուց այնպիսի օրենքներ կդնե, որ հայը ամենևին չի էլ զգա, որ իր աշխատության վաստակը մեծ մասամբ մտնում է արքունի գանձարանը։

Եվ ուրիշ կերպ լինել կարելի չէ, քանի որ տիրող ազգը աշխատելու շնորհք չունի, և միայն զենքով իշխելու քաջություն ունի։ Այսպիսի ազգը պահպանում է իր զորությունը հպատակ ազգերի ձեռքի աշխատանքով։ Թուրքը մի զինվորական ազգ է։ Երկրի վաճառականությունը, երկրագործությունը, արհեստը, մշակությունը, բոլորը հպատակ և ոչ-մահմեդական ազգերի ձեռքումն է.— հայտնի բան է, որ դրանք պետք է աշխատեն թուրքի համար։ Թե միշտ այսպես է եղել զինվորական ուժերի վրա հիմնված ազգերի և պետությունների հարաբերությունը իրանց աշխատասեր, բայց անզեն հպատակների հետ,— դա պատմության մեջ մի ապացուցված բան է։

Զինվորական ուժերի վրա հիմնված պետությունը, այլ խոսքով, մի ազգ, որ ամբողջապես բազկացած է զինվորականներից, մի վիթխարի վիշապ է, որ կլանում է, ուտում է, ոչնչացնում է ինչ որ արդյունաբերում է ողորմելի հպատակի աշխատասեր ձեռքը։ Այս վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ իր մարմինը պարարտացնելու համար։

Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը։ Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված։ Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը։

Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ։ Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի։

* *
*

Ժամանակը մոտեցավ, պատերազմը վերջանալու վրա է, բայց հայը տակավին մի նշանավոր տնօրենություն չէ արած իր համար։ Մինչև այսօր փոքր ի շատե աչքի ընկնող բան, որ երևցավ, դա էր Սեթ Աբգարի տետրակը։ Բայց ի՞նչ մեծ նշանակություն կարող է ունենալ մի փոքրիկ տետրակ այնքան դարերի և մանավանդ այժմյան ցավերը արտահայտելու համար, որոնց ամբողջ հատորներով գրքեր չեն բավական։

Մյուս, ինչ որ լսվել է մինչև այսօր, ճանճի բզզոցներ կարելի է համարել, որոնք կարող են միայն ծիծաղ շարժել, և ոչ ցավակցություն։ Եվ ի՞նչ նշանակություն կարող են ունենալ մեր բզզոցները եվրոպական ընդհանուր մարդասիրությունից զուրկ, եսական քաղաքականության առջև, քանի որ սլավոնական ցեղերի քնդանոթների որոտմունքը, և նրանց թափած արյան մրմունջը ազդեցություն չեն գործում։

•

Իսկ այդ պետք չէ, որ հուսահատեցնե մեզ։ Եվ եթե Թուրքիայի հայի դաժանական գրությունը լի բարվոքվի ևս, գոնյա պատմության դատապարտութենից ազատվելու համար, գոնյա ապագա սերունդի մոտ սևերես չմնալու համար մենք պետք է թափենք մեր բոլոր ճիգը ներկա հանգամանքներից օգուտ քաղելու, և եթե չհաջողվի ևս, մեր որդիքը կասեն, թե մեր հայրերը աշխատեցին...

ԻՆՔՆԱԽԱԲԵՒԵՒԹՅՈՒՆ

Ծանի՛ր զինք

Ինքնախաբեութի՛ւն... դա մի շատ հասարակ բառ է, բայց նրա մեջ թաքնված են մարդու բոլոր թշվառութիւնները։ Տեսնում ես մեկը հիմար է, բայց կարծում է, թե խելք ունի։ Մյուսը երկչոտ է, կարծում է, թե առյուծի սիրտ ունի։ Երրորդը ոչինչ չէ սովորել, բայց իրան հանճար է երևակայում։ Չորրորդը չարագործ մեկն է, բայց իրան առաքինութեան տիպար է համարում։— Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեութիւնից։

Ինքնախաբեութիւնը մի աչք միայն ունի և նա ամեն բան լավ կողմից է տեսնում, նրա մյուս աչքը կույր է տգեղութիւններ, այլանդակութիւններ և մոլութիւններ տեսնելու համար։ Եվ այս պատճառով այն թշվառականը, որ մի այդպիսի ողորմելի դրութեան մեջ է գտնվում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետև իր մեջ թերութիւններ չէ տեսնում։ Եվ դրա համար նա միշտ անշարժ է մնում. ոչ մի ձգտում դեպի առաջադիմութիւն և ոչ մի պահանջ կյանքից չունի.— իրան ամեն բանով լիացած է համարում։

Ինքնախաբեութիւնը բարոյական ինքնասպանութիւն է. մի մեռելութիւն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգիստ են...

* *
*

Ինքնախաբեության հակառակն է ինքնաճանաչութիւնը, նրա հայրը նախանձն է, իսկ մայրը՝ դժգոհութիւնը։ Նա ոչինչ բանով բավական չէ։ Նա շատ բան ունի, բայց միշտ մտածում է, թե սակավ ունի։ Նա միշտ դեպի վեր է նայում, աշխատում է բարձրանալ։ Նա ըմբռնել է ընդհանուր մարդկային կատարելութիւնները. նա ծանոթ է բարձր և վսեմ գաղափարների հետ, և իրան համեմատելով կատարելագործված ընդհանրութեան հետ, գտնում է շատ փոքր և փոքր...։ Դրա համար միշտ դժգոհ է։ Նա կրկնում է Սոկրատեսի հետ. «Ես միայն մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ չգիտեմ»։ Այդ խոսքի մեջն է ինքնաճանաչութեան բոլոր վսեմութիւնը։

Երանելի է այն մարդը, որ այսպես է գգում։ Այստեղից է առաջ գալիս ոտկուն աշխատութիւնը, դա է ոգևորում մարդուն

դեպի անդադար առաջադիմություն. դա է ծնում հանճարները, արհեստը, գիտությունը և աշխարհի բարօրությունը։

Դժգոհությունը իր վիճակից՝ մի ազնիվ գրգիռ է, որ տանում է դեպի նրա բարվոքումը։

* *
*

Որպիսի բնավորություններ հայտնվում են անհատների մեջ, նույնպիսիք և հայտնվում են ամբողջ ժողովուրդների և ազգերի մեջ։ Որովհետև բոլորը կազմված է մասներից, ինչ որ մասներն են, այն և բոլորն է։

Կան ազգեր, որ շատ գոհ են իրանց վիճակից, կարծում են, թե ամեն բան ունեն և իրանց թերությունները չեն տեսնում։ Կան նաև ազգեր, որքան առաջ են գնում, որքան արդյունաբերում են, որքան կատարելագործվում են,— այնքան դժգոհ են։

Խոսենք մեզ վրա։

Մենք գտնվում ենք կատարյալ իմիննախաբեական վիճակի մեջ։

Ընտանիքը, ազգայնության հիմքը, սկսել է մեզանում փտել, այլասերակվել,—մի կողմից շռայլությունը, մյուս կողմից անբարոյականությունը օրըստօրե ոչնչացնում են նրա մեջ ինչ որ բարի է, ինչ որ ազնիվ է։ Նա կորցրել է իր նահապետական պարզությունը, և նոր, այսպես կոչված եվրոպական կրթութենից՝ սեփականել է միայն վատ կողմերը։—Ո՛չ, ասում են, այդպես չէ, մի բան, որով կարող է պարծենալ հայը, դա է նրա ընտանեկան սրբությունը, որի մեջ տիրում է խնայողություն, անդամների առաքինական ներդաշնակություն և այլն։

Մեր լեզուն, ասում ենք, սկսել է կորչել ազգի բերանից. Տաճկաստանի հայը տաճկերեն է խոսում, Ռուսաստանի հայը ռուսերեն է խոսում, Պարսկաստանի հայը պարսկերեն, Հնդկաստանի հայը անգլերեն. և ամենավտանգավորն այն է, որ այդ ախտը սկսում է ընտանիքից։—Ո՛չ, պատասխանում են, այդպես չէ, մեր լեզվով Ադամն ու Նոյն էին խոսում, ի՞նչ հայ կա, որ իր լեզուն չգիտենա։

Մեր գրականությունը աղքատ է, ասում ենք, ժողովուրդը զուրկ է մնում մտավոր սնունդից. պահանջում ենք մեր հասարակութենից ընթերցանություն, բայց նրան գիրք չենք տալիս։—Իսկույն ցույց են տալիս Ղեղհեն և Խորենացին։ էլ ի՞նչ։—Մի քանի էլ կրոնական գրքեր։

Մեր դպրոցները, ասում ենք, ամենաթշվառ դրության մեջ են, նոր իմաստակների ձեռքում խաղալիք են դարձել։ Նրանք կորցրել են հին ձևը, որն թեև փտած էր, բայց ինքնուրույն էր և գարևոր փորձերի վրա էր հիմնված։—Ո՛չ, այդպես չէ, պատասխանում են, և իսկույն ցույց են տալիս քեզ եվրոպական մանկավարժությունը։ Թեև այդ եվրոպական մանկավարժությունն ասած բանը այնքան են հասկանում մեր վարժապետները, որքան հասկանում են մեր աղջիկները եվրոպական մոդայով ձևած մի հագուստ, որ պատրաստ գնել էին Ֆրանսուհի դերձակից։

Մեր եկեղեցին այլանդակվել է, ասում ենք, փոխել է իր նախնական պարզ կերպարանքը, դարձել է ծիսապաշտության, շքեղասիրության և անհավատության մի գործարան։—Դու անկրոն ես, անհավատ ես, պատասխանում են, եկեղեցու սրբության դեմ չէ կարելի խոսել, մեր եկեղեցու նման ազատ եկեղեցի չկա։

Մեր եկեղեցական կառավարությունը, ասում ենք, դարձել է բաշիբոզուկների վարչություն. կամայականությունը տիրում է կարգի և կանոնների վրա. անարժանները առաջ են գնում, արժանավորները ճնշվում են։—Իսկույն ստանում ես միևնույն հիմար պատասխանը, թե դու կրոնի դեմ ես խոսում, և հետն էլ ավելացնում են մի քանի հայհոյանքներ։

Մեր եկեղեցականները, ասում ենք, դարձել են անպիտան մշակներ. նրանց գիտությունը, նրանց վարքը չէ համապատասխանում իրանց հանձն առած պաշտոնին։ Նրանք ավելի գայթակղեցնում են մեր ժողովուրդը, քան թե նրան մի բարոյական և հոգևոր ուղղություն են տալիս։—Իսկույն քեզ ցույց կտան Ներսես Մեծին, Սահակ Պարթևին և Մեսրոպին։ Իսկ այժմյանննե՞րը։—Այժմյաննեերը քավում են իրանց մեղքերը հների աշխատությամբ...։

Մեր լրագրությունը, ամսագրերը և եռամսյա հանդեսները, ասում ենք, փոխանակ արթնացնելու ժողովուրդը իր նախապաշարմունքներից, փոխանակ նոր և թարմ մտածությունների հետ ծանոթացնելու, փոխանակ նրան դեպի ուղիղ ճանապարհը առաջնորդելու—ավելի մոլորեցնում են, ավելի թմրեցնում են նրան իր անշարժության մեջ։—Այսպես պետք է կրթել ժողովուրդը, պատասխանում են քեզ։

Վերջապես ամեն բան մեզանում լավ է գնում...։ Խոսում ես տնտեսական անկարգության վրա, վաճառականության անկանոնության վրա, երկրագործության հետամնացության վրա, արհեստի նահապետական դրության վրա, գյուղացու՝ մշակ դասի ողոր-

մելի վիճակի վրա, մի խոսքով, ամեն բանի վրա, ինչ որ պետք է մարդուն,—միևնույն պատասխանն ես ստանում, ամեն ինչ լավ է մեզանում...։

Այս բոլորը առաջ է գալիս ինֆնախաբեութենից. այս բոլորը առաջ է գալիս այն միակողմանի հայացքից, որ մենք ամեն բան լավ կողմից ենք տեսնում։

* *
*

Ինքնախաբեությունը մեզանում ծնեց մի տեսակ «ազգասեր-ներ», որոնց վրա մինչև այսօր ո՛չ մեր վիպասանները, ո՛չ մեր թատրոնական բեմը և ո՛չ էլ մեր լրագրությունը ուշադրություն չեն դարձրել։ Դրանց նշանաբանը բովանդակվում է այս սկզբունքի մեջ։ «ինչ որ հայկական է, այն լավ է»։

Այս տեսակ «ազգասերները» մի կատարելագործված տիպ են ներկայացնում մեր հասարակության մեջ, որոնք, կարծես, պատկանում են մի առանձին շկոլայի, որի հիմնադիրը հայտնի չէ։

Դրանք, արդարև, սիրում են ազգը, որպես մի երիտասարդ սիրահարված է լինում մի օրիորդի վրա, որն նրան ամենևին չէ ճանաչում, որը նրա բերանից մի խոսք անգամ չէ լսել, որը նրա կողմից ոչ մի շնորհ չէ տեսել։ Բայց նա սիրում է...։ Օրիորդի հիմարություններն անգամ սիրելի են նրան...։

Նրանք սիրում են... վրդովվում են... ոգևորվում են... և ամեն կիրք իրանց սրտի մեջն է մնում։ Նրանք ազգը գտնում են իրանց սենյակի չորս պատերի մեջ. դրսում նրա հետ հարաբերություն չունեն։ Որպես մեր երևակայական սիրահարը իր սիրուհին իր գլխի մեջն ունի։

Այս տեսակ «ազգասերներին» ծանոթ չէ «գործը»։ Բայց նրանք մեծ բարիք գործած են համարում ազգին, երբ խոսում են նրա վրա, և խոսում են միշտ իրանց նմաններուի հետ. նրանց ձայնը օտարը չէ լսում։ Նրանք չունեն մինչև անգամ այն բանը, որ կոչվում է ցանկություն. որովհետև մի բան ցանկանալու համար պետք է մի բան պահանջել. բայց նրանք պահանջմունք ևս չունեն։ Նրանք բավական են այն բոլորով, ինչ որ կա արդեն, ինչ որ թողել են մեր պապերը։ Իսկ մի նոր բան անելու համար դեռ սպասում են...

Նրանց խոսքը — գովասանությունն է։ Գովել, ոգևորվել, ուրախանալ ազգի չունեցած կատարելություններով,—այդ է նրանց սիրո երևակայական առարկան։ Եվ միշտ վրդովվում են, դավաճան,

ուրացող են համարում այն մարդուն, որ համարձակվում է ազգի այս և այն թերությունները նկատել, կամ նրա նախապաշարմունքի դեմ խոսել։ «Դու մեր ունեցածը քանդում ես» ասում են։

Այս տեսակ «ազգասերներ» կան, գոյություն ունեն, բայց աչքի չեն երևում։ Նրանք ըստ մեծի մասին առանձնական կյանք են վարում։ Նրանք քուրմերի բնավորություն ունեն, սիրում են վարագույրի ետևում թաքնված մնալ և երբեմն պատգամներ խոսել։ Նրանց խոսքերի մեջ իմաստ չկա, բայց միևնույն ժամանակ բազմիմաստ են, որպես մարգարեի խոսք, որ միշտ մեկնության կարոտ է...։

Նրանք չեն սիրում ազգային գործերի մեջ մտնել. որովհետև միշտ երևակայում են, որ իրանք մի «մեծ» բան պիտի անեն, որի ժամանակը չէ հասել... և միշտ իրանց աչքի առջև արգելքներ են տեսնում։ Այլև արհամարհում են այժմյան գործիչների գործը, համարելով երեխայական խաղ։ Լուռ ժպիտը նրանց երեսից պակաս չէ, երբ լսում են որևիցե դատողություն մի նորելուկից, և նայում են նրա վրա, որպես մի զարգացած մարդ նայում է փոքրիկ մանուկի ծուռ ու սխալ թոթովանքին։ Իրանք միշտ լուռ են, շատ բան գիտեն, բայց չեն խոսում...։

Նրանք միշտ ոգևորվում են անցյալով. Վարդանը, Ավարայրի դաշտը, Անին նրանց խոսակցության նյութն է։ Թուրքիայում և Կ. Պոլսի ազգային սահմանադրության մեջ տեսնում են մեծ ապագա, և հայոց փրկությունը գտնում են հայոց եկեղեցու մեջ։

Այս «ազգասերները» իրանց տեսակի կատարելագործված տիպն են, որոնք ճանճարներ են համարվում։ Նրանք բարի մարդիկ են, բայց վտանգավոր են։ Կույր սերը միշտ վնասակար է լինում. որովհետև միշտ լավն է տեսնում, վատը չէ նկատում։

Բայց կա և երկրորդական տեսակը, որն առաջինի կեղծ պատճենն է։ Դրանք խարդախ մարդիկ են, որ ազգասիրական դիմակի ներքո թաքցնում են շահեկան նպատակներ։ Այսպիսիները խառնվում են գործի մեջ։ Նրանք լինում են՝ դպրոցների հոգաբարձուներ, եկեղեցիների գանձապետներ, հարուստ որբերի խնամակալներ, բարեգործական նպատակով նվիրված գումարների կտակակատարներ, առաջնորդ-սրբազանների խնկարկուներ, աղքատ դերասաններ պաշտպաններ, միևնույն դպրոցի մեջ մշտական և ժառանգական վարժապետներ, և երբեմն լրագիրների և ամսագրերի խմբագիրներ։ Այս տեսակ ազգասերների թվումն են և այն բարեբարեները, որոնք միշտ կողոպտել են, հափշտակել են և հազարումեկ

կերպ ավազակությամբ հարստություն են դիզել.— և վերջ ի վերջո ցանկանում են լավ մարդ ձևանալ, և իրանց կեղտոտ անցյալը ծածկել ազգասիրական քողով։

Այս տեսակ «ազգասերը» սիրում է ազգը նրան կողոպտելու համար, որպես վամպիրը թմրեցնելով է ծծում իր զոհի արյունը։ Նա կխոսի քեզ հետ միշտ հայերեն լեզվով, կաշխատե հեռու մնալ օտարազգի բառերից. և միշտ (բայց խոսքերով միայն) բարի ցանկություններ կհայտնե իր «սիրելի» և «պատվական» ազգի մասին։ Ա՛խ ու ո՛հը նրա բերանից պակաս չեն, երբ լսում է ազգի թշվառությունը, և շատ անգամ արտասուք է երևում նրա աչքերում, երբ կարդում է «Վերք Հայաստանին»։ Նրա բարկությանը չափ չկա, երբ ազգի մասին թշնամանք և հայհոյանք է լսում, և առում է այն բոլորին, որոնք հայ չեն։—Այս բոլորը անում է նա, բայց եթե գիտենա, թե Հայկի ոսկորներին մի քանի կոպեկ փող կտան, իսկույն գերեզմանից կհանե ու կծախե...։

* *
*

Ընթերցող, դու բավական ծանոթացար մեր նկարած երկու տիպերի հետ—փտած և կեղծ ազգասերների հետ,—կամենում ե՞ս այժմ քեզ անձնապես ծանոթացնեմ նրանց մեկի հետ, և դու քեզ բոլորին ճանաչած համարիր, որովհետև ամենքը շատ քիչ տարբերությամբ միմյանց նման են։

Դա վերջին տեսակիցն է։

Ահա՛ մտնում ենք նրա մենարանը, այստեղ է գործում ազգի երևելի մտածողը։ Մեծ գրասեղանի հանդեպ, նույնպես մեծ բազկաթոռի վրա նստած է նա։ Նա մի հաստլիկ մարդ է, խոսում է նույնպես հաստլիկ ձայնով. թշերը նույնպես հաստլիկ են և թունդ-կարմիր գույն ունեն։ Երևում է, ազգասերի փորը միշտ կուշտ է եղել. նա շատ առողջ է, թեև գլխի մազերը սպիտակել են։

Գրասեղանի դեմ ու դեմ (ազգասերի աչքի առջև) սև շրջանակի մեջ, կախված է մի խորհրդավոր պատկեր, որ ներկայացնում է մի հերարձակ կույս, որ նստած է փլատակների վրա։ Նրա շուրջը թափված են խորտակված գավազաններ, փշրված դրոշներ և զանազան զենքեր։ Իսկ ինքը կույսը, ծնոտին նեցուկ տված, գեղեցիկ գլուխը մի կողմ թեքած, տխուր կերպով նայում է Հայաստանի ավերակներին...։ Այս պատկերից փոքր-ինչ հեռու, ազգասերի աջ ու ձախ կողմերում, պատից քաշ են ընկած

Երկու ուրիշ պատկերներ ոսկեզօծ շրջանակներով։ Դրանցից մեկը Հայկն է, իսկ մյուսը՝ Վարդան Մամիկոնյանը։ Հայկի պատկերի ներքև պատի վրա մեխած է հին Հայաստանի քարտեզը։

Գրասեղանի վրա ածած են շատ թղթեր, որոնց վրա, քամին չցրվելու համար, դրած է մի աղյուսանման բան. դա մոզայիկներով զարդարած մի կրային բաղադրություն է, որ բերած է Անիի ավերակներից։

Մի անկյունում մեծ պահարանի մեջ շարած են գրքեր Վեննտիկի ոսկեզօծ կազմերով. կարծես, շնորհքի համար դասված լինեն։ Սենյակը զարդարած է արևելյան ճաշակով. փռած են գորգեր, դրած է թախտ և երևում են մութաքաներ։

Ազգասերը լուռ է. նրա բազմահոգ դեմքը ցույց է տալիս, որ զբաղված է։

Ահա՛ ներս վազեցին սենյակի մեջ երկու հրեշտակի նման փոքրիկ երեխաներ։ «Պապաշա, պապաշա», կոչելով, նրանցից մեկը թռավ հոր ծնկների վրա և փաթաթվեցավ նրա վզովը։ Իսկ մյուս մանուկը փորձ փորձեց հետևել եղբորը, բայց գլորվեցավ հատակի վրա։ Հայրը բարձրացրեց նրան և համբուրեց։

Երեխաներից մեկի անունը Լևոն է, մյուսինը՝ Ռուբեն։ Հայրը մեծ ծառայություն է արել ազգին, որ կենդանացրել է այդ պատմական անունները...։

— Ինչո՞ւ հայերեն չեն խոսում,— հարցնում ես ազգասերից։

— Մայրերի ու աղախինների հետ այսպես են սորված... ես էլ ժամանակ չունեմ դրանցով զբաղվելու,—պատասխանում է նա։

Երեխաները խլում են գրասեղանի վրայից «Մեղուի» վերջին համարը, որ տանեն իրանց համար «փոռան» շինեն։ Հայրը կոչում է, որ ետ բերեն, բայց չարաճճիները անհայտանում են։

* *
*

Ընթերցող, այս բոլորը քեզ վրա կարծեմ լավ տպավորություն գործեց. արտաքին ցույցերը բավական գրավիչ տեսար. այժմ մտնենք ազգասերի ներսը—սրտի մեջ։

Ես կսկսեմ խոսակցությունը, դու միայն լսիր։

— Դուք, երևի, «Մշակ» չե՞ք ստանում,—հարցնում եմ ես։

— Մի՞թե արժե փող կորցնել...— պատասխանում է նա արհամարհական ձայնով։—Այս լրագրի վրա թքել միայն կարելի է և ոչ կարդալ։

— Երևի, դուք կարդում ե՞ք,—իսկույն հարցնում է նա։

— Այո՛, և շատ սիրով։

— Այդ ձեզանից չէի՛ սպասում...

— Ինչո՞ւ։

— Տղաբա՛յր պատվական, էլ ի՞նչ մնաց, որ չխայտառակեց նա.— ընտանիք, կրոն, եկեղեցի։— Նա ուրացավ մեր ազգի բոլոր ազնիվ կողմերը. էլ մուր չմնաց, որ չքսեց նրա վրա։ Նա մեզ խայտառակեց, խպատ խայտառակեց...։

— Ինչո՞ւ չխայտառակել, երբ խայտառակելու բաներ կան։

— Մի՞թե կարելի է այդ։ Ասենք թե լինեին մեր մեջ թերություններ, մի՞թե կարելի է ամեն ինչ հրապարակ հանել։

— Այսպես վարվում են միայն այն հիմար հիվանդները, որ թաքցնելով իրանց ցավերը, աշխատում են առողջ ձևանալ։ Մեր թերությունները ծածկելով ի՞նչ շինեցինք մինչև այսօր։

— Գոնյա մեր պատիվը պահեցինք։ Օտարներն մեր պակասությունները չհասկացան։

— Օտարներն մեզ նման կույր չեն...

Նա սկսեց թղթերի մեջ մի բան որոնել։

— Ահա՛ ձեզ ցույց կտամ Մ. Պետերբուրգից ստացած պ. Կովյանի նամակը... ի՞նչ պատվական դատողություններ, ի՞նչ պատվական խորհրդածություն... Որտե՞ղ կորավ... Սաշա,— կոչեց նա ծառային։

— Նեղություն մի կրեք. Ս. Պետերբուրգի «պատվական խորհըրդածությունները» ինձ պետք չեն. առանց ձեր կարդալու, ես կարող եմ ասել, թե ինչ գրված կլինի այն նամակի մեջ։

Նա դառնում է դեպի ինձ։

— Ուրեմն ասացեք, խնդրեմ, պետք չէ՞ թքել մի այսպիսի լրագրի վրա, որ բացատում է մեր լավ կողմերը, հերքում է և ամեն ինչ քանդում է, տակնուվրա է անում։ Այդ ո՞ւմ դուր է գալիս, ո՞վ չէ բարկանում։

— Դա շատ բնական է. փորձեցեք երկու աչքերով կույր մեկին ասել՝ դուք կույր եք. նա իսկույն կբարկանա, թեև հայտնեցիք մի անհերքելի ճշմարտություն։

Նա տաքացավ։

— Դա զզվելի է... միշտ գովել պետք է, խրախուսել պետք է, քաջալերել պետք է. դուք միայն հուսահատեցնում եք... դուք ամեն բան սև գունով եք տեսնում... կյանք, ուժ ուրանում եք ազգի մեջ...։

— Կրթությանն այդ հին և փտած եղանակը արդեն ցույց տվեց

իր արդյունքը։ Կ. Պոլսի հոսհոսների լրագրությունը մինչև այսօր այդ ձևին էր հետևում, նա միշտ գովում էր, նա միշտ ոգևորվում էր, ցույց տալով, թե ամեն բան ունենն, ամեն բան պատրաստ է։ Բայց հանգամանքները ցույց տվեցին, թե նրանք ինչ տեսակ ժողովուրդ պատրաստեցին։ Տաճկահայոց ոչնչությունը հայտնվեցավ։

Ազգասերի նետը, կարծես, քարին դիպավ. նա կանգ առավ և սկսեց մտածել։

Ես շարունակեցի.

— Նույնը անում էին մեզանում և մինչև այսօր. «ինչ որ հայկական է, այն լավ է».— այս էր մեր ազգ սիրողների սկզբունքը։— Հայ վաճառականը խաբեբայությամբ է վարում իր առևտուրը։— Պետք է գովել նրան, այդ գողություն չէ, որովհետև գործողը հայ է։ Հայ ընտանիքը օրըստօրե քայքայվում է բարոյական փտության մեջ։— Վնաս չունի. որովհետև մեր ազգի ընտանիքն է, նրան վատ ասել չի լինի։ Հայ եկեղեցականները դարձել են ավազակներ։— Պետք է գովել նրանց, որովհետև մեր հոգևոր հայրերն են, մեր կրոնի ավանդապահներն են...։ Ի՞նչ խոսքս երկարացնեմ, դուք ամեն աղբ, ամեն կեղտ, ամեն ապականություն գովում էիք, և գովում եք, որովհետև հայի աղբ է...

— Ի՞նչ վնաս տվեցինք մեր գովություններով։

— Այն վնասը, որ դուք խաբեցիք ազգը և գովաբանելով նրա հիմարությունները, նրա անպիտանությունները, ափիմ տվեցիք անպիտանությանը մնալ միշտ անպիտանություն։ Դուք ազգի աչքերը փակեցիք իր այլանդակությունը չտեսնելու համար։

— Իսկ դուք, որ պախարակում եք, ֆանդում եք, ոչնչացնում եք, նրա տեղը ի՞նչ եք դնում։

— Մենք այգեպանի պաշտոն ենք կատարում։ Այգեպանը, երբ անխնա կտրում է ծառի չորացած, փտած և ավելորդ ճղները, չէ մտածում նրանց տեղը մի նոր ճյուղ կպցնել. որովհետև գիտե, որ նորը ինքն իրան կբուսնի, եթե ծառի մեջ կյանք կա, ուժ կա և հողի մեջ արմատ ունի...։

Խոսակցությունը ընդհատվում է։ Դատարանի ծառան ներս է բերում մի հրավիրաթուղթ և ստորագրել է տալիս։

— Ի՞նչ գործերի համար եք կանչված։

— Դարձյալ այն անիծված կտակի համար է...

Ազգասերը մոռացավ սերն էլ, ազգն էլ, վարդանն էլ, Հայկն էլ։ Նա կանգնեց այս խոսքերով.

— Ներողություն, ես փաստաբանիս մոտ պետք է գնամ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱԿԵՑՆԵՐ

Վերջին տասը տարվա ընթացքում դպրոցները մեզանում զարմանալի արագությամբ աճել սկսան. նորերը ավելցան, իսկ հները աշխատեցին փոքր ի շատե կանոնավոր կերպարանք ստանալ։ Եվ մինչև անգամ աղքատ գյուղացին իր որդիքը տիրացուների և տերտերների տներից հեռացրեց, և մտածեց իր եկեղեցուն կից փոքրիկ վարժարան ունենալ[1]։

Դա գեղեցիկ երևույթ էր. դա ժողովրդի մտավոր շարժողության նշան էր, որ աշխատում էր ժամանակի պահանջների համեմատ վարվել։

Բայց մյուս կողմից, աչքի է զարկում մի շատ տխուր երևույթ։ Երբ որ քննում ենք «Մշակի» և «Մեղուի» մեջ վերջին տարիներում տպված բազմաթիվ թղթակցությունները դպրոցների մասին, տեսնում ենք, որ ամեն տեղ, ամեն դպրոցներում, միևնույն անախորժ և վնասակար երևույթները կրկնվում են անդադար։ Ի՞նչ։— Անհամաձայնություն դպրոցների հոգաբարձության և տեղային հոգևոր իշխանության ներկայացուցչի մեջ. անհամաձայնություն տեսչի և հոգաբարձության մեջ. անհամաձայնություն վարժապետների և տեսչի մեջ. անհամաձայնություն հոգաբարձուների և վարժապետների մեջ.— մի խոսքով դպրոցների չորս գործիչները, այսինքն՝ հոգևոր իշխանության ներկայացուցիչը, ժողովրդի կողմից ընտրված հոգաբարձությունը, տեսուչը և վարժապետները՝ անդադար կռվում են միմյանց հետ և առիթ են տալիս անվերջ խռովությունների, որոնք դպրոցի գավթից անցնում են ժողովրդի մեջ և հարուցանում են կուսակցությունների միմյանց դեմ հուզմունքը...

Դրանք շատ ցավալի երևույթներ են, որոնց մասին մեր լրագրությունը ավելի սյարապվել է անցքերի նկարագրություններով, քան թե նրանց արտադրիչ պատճառների քննություններով։

Եվ հիշյալ խռովությունների ու անհամաձայնությունների մեջ

---

[1] Իսկ այն դպրոցները, որոնք պահպանվում էին վանքերի հաշվով վանքերի մեջ, կամ նրանց մերձակա գյուղերում, փակվեցան եմմարանի եղեալուց հետո։ Պատճառը այսպես են մեկնում, թե վանքերի արդյունքը ս. էջմիածինը սկսեց տանել եմմարանի համար և դպրոցները զրկվեցան իրանց գոյությունը պահպանելու միջոցներից։ Մի քրագ վառեցին և շատերը հանգցրին... Թեև այն փոքրիկ տարրական դպրոցները ավելի մեծ նշանակություն ունեին աղքատ գյուղացիների համար, քան թե եմմարանը։

պետք է որոնել մեր դպրոցների հետամնացությունը, որ նրանք ամենևին չեն հասնում նպատակի, և չեն կարողանում տալ ժողովրդին այն, ինչ որ նրան պետք է. և ժողովուրդը ստիպված է դարձյալ իր որդիների մտավոր սնունդը որոնել օտար աղբյուրներում:

Հայտնի բան է, դպրոցների կյանքում մի այնպիսի նշանավոր փոփոխություն, որ եղավ վերջին տարիների ընթացքում, չէր կարող անցնել առանց ներքին կռիվների և առանց աղմուկի: Բայց ցավալին այն է, որ կռիվը, աղմուկը ավելի կրքերի և դրա ու նրա շահերին են ծառայել, քան թե որևիցե գաղափարի, որ վերաբերում էր բուն հիմնարկության բարեկարգությանը:

Այս գործին ավելի ձեռնհաս եղող անձինքների վրա, որպիսի են մեր պ.պ. թեմական տեսուչները, պարտավորություն դնելով պարզել վերոհիշյալ տխուր երևույթների պատճառները, մենք կվեր առնենք մի ճյուղը միայն, այսինքն՝ վարժապետներին, և կխոսենք նրանց մասին:

* *
*

Մեր խոսքը գավառական վարժապետների մասին է:

Գավառական վարժապետները ըստ մեծի մասին կանչվում են Թիֆլիսից դպրոցների հոգաբարձության հրավերքով: Հոգաբարձուները վաճառական մարդիկ լինելով, վարժապետների ընտրության մեջ վարվում են ճիշտ այն կերպով, ինչ կերպով որ վարվում են իրանց առևտուրի մեջ: Օրինակ, նրանց մեկին պետք է շաքար. գրում է իր Թիֆլիսի գործակատարին, թե 100 պուդ շաքար ու՛ռ և ուղարկիր: Գործակատարը գնում է այնքան արկղներ, որոնք պարունակում են իրանց մեջ շաքարի պահանջված քանակությունը, և ուղարկում է, առանց յուրաքանչյուր արկղը առանձին-առանձին նայելու, որովհետև վստահություն ունի ծախողի հավատարմության վրա:

Հոգաբարձուն գրում է իր գործակատարին կամ ծանոթ մեկ վաճառականին, թե մի վարժապետ ուղարկիր (կարծես, դա էլ բազարում ծախվող մթերք է): Ի՞նչ անե խեղճ վաճառականը. իրա խելքի բան չէ. իրան անծանոթ մի ապրանք է վարժապետը,— այստեղ է հարցնում, այնտեղ է հարցնում, և շատ-շատ մի հայտարարություն է տպել տալիս «Մեղուի» կամ «Մշակի» մեջ:

Քարվանսարաների պուճախները պտրելով, հայտնվում է վաճառականի մոտ մի անծանոթ պարոն:— Ես վարժապետ եմ,— լի-

նում է նրա առաջին խոսքը։— Հա՛, ինձ էլ մի վարժապետ է պետք,— ասում է վաճառականը և խնդրում է նստել։ Վաճառականը հայտնում է, թե ինչ առարկայի համար է պահանջվում վարժապետը։ Իսկ պարոն ցանկացողը ցույց է տալիս, թե ինքը ոչ միայն պահանջված առարկան, այլ «ամեն բան» կարող է դաս տալ և ավելացնում է մի քանի հրաշալիք իր անցյալ գործունեությունից։ Պայմանների մեջ հաշտվում են և պարոն վարժապետը կանխիկ ստանում է մի գումար, իր պատառոտած կոշիկները և մաշված հագուստը փոխում է, և ճանապարհ է ընկնում։

Նա հասնում է նշանակված տեղը։ Հոգաբարձությունը մի քանի ամսից հետո կամ տարվա կեսին հասկանում է պարոնի անընդունակությունը։ Բայց ի՞նչ կարող է անել. պ. խաբեբան մի կամ երկու տարով հաստատ պայման է կապել. տուգանք է նշանակել, կանխիկ փող է ստացել. ի՞նչպես արտաքսել նրան. և կամ ո՞ւմը դնել նրա տեղ...։ Դպրոցը ստիպված է քաշ գալ մի անպիտանի հետ, մինչև ժամանակի լրանալը...

Վարժապետների մեծ մասը այսպես են ընտրվում։

* *
*

Իսկ այն դպրոցներում, որ ունեն տեսուչներ, վարժապետներ հրավիրվում են ավելի տեսչի ընտրությամբ։ Չխոսելով տեսուչների ի՛նչ տեսակ մարդիկ լինելու վրա, այսքանը միայն կասենք, որ այս պարոնները իրանց հանձնված դպրոցների վրա կատարելապես տիրելու համար աշխատում են շրջապատվել իրանց սրտին մոտ եղող մարդիկներով—կույր հնազանդներով։ Այնքան վնաս չուներ, եթե ընտրեին իրենց գաղափարակիցները, այսպիսով գոնյա դպրոցը կպահպաներ իր ուղղությունը և միակերպությունը։ Բայց այստեղ ուսումնական նպատակը կուլ է դնում վարչականի մեջ,—տեսուչը վարվում է դպրոցի հետ այնպես, որպես մի պաշտոնական անձն, որ աշխատում է իր ստորադրյալները իր շահերին համապատասխանող մարդիկ լինեն...։ Նա շուտով հավաքում է իր թևի տակ հին ծանոթներին, բարեկամներին, և դպրոցը դառնում է գանազան շահախնդիրների համար հացի գործարան։

Իհարկե, այդ նպատակների մեջ չէ կարող օրինավոր ընտրություն լինել, քանի որ ցանկացող վարժապետների մեջ ազատ մրցություն չէ լինում. և տեսչի ընտրած վարժապետը նույնը կլինի,

ինչ որ էր պարոն հոգաբարձուի գործակալի ուղարկածը և գուցե ավելի վատ, և ավելի խարդախ մեկը։

Ով վնասակարն այն է, որ տեսուչները շատ անգամ իրանց այս ինչ բարեկամին, որպես հարմար գործիք, ձեռքի տակ ունենալու մտքով և կամ նրա համար ապրուստի մի աղբյուր բաց անելու համար, մտցնում են դպրոցի մեջ նոր-նոր առարկաներ, որ ավելորդ են, և այսպիսով դպրոցի պրոգրաման հարմարեցնում են ոչ թե դպրոցի պահանջներին, այլ իրանց ցանկացած մարդիկների ընդունակությանը։ Ով այսպես էլ է պատահում, որ տեսուչը մի նոր վարժապետի համար տեղ բաց անելու մտքով, շատ անգամ ստիպված է հեռացնել մի հին վարժապետ, որ գուցե ավելի ընդունակ էր իր գործին։ Նա մի կերպով հաջողեցնում է։ Բայց նոր մտնողը չգիտե այն առարկան, ինչ որ հինն էր դաս տալիս, փույթ չէ, նա կարող է պարապել այն առարկայով, ինչ որ ինքը գիտե,— և հին առարկան դուրս է ընկնում դպրոցի պրոգրամայից...։

Ով այսպեսով, տեսչի իր պաշտոնի մեջ մտած օրից, նրա և հին վարժապետների մեջ սկսվում է մի ներքին կռիվ, որ պատճառ է տալիս անվերջ խռովությունների, որովհետև հներն էլ ունեն իրանց հին կապերը՝ կամ մի քանի ձայն ունեցող հոգաբարձուների հետ, կամ սրբազանի հետ, և կամ ժողովրդի մեջ նշանավոր, ու միևնույն ժամանակ դպրոցի վրա ազդեցություն ունեցող անձինքների հետ։ Այս տեսակ վարժապետները հին ծառեր են, թեև ծերացած, բայց հողի մեջ խորին արմատ ունեն ձգած, նրանց տեղից շարժելը հեշտ բան չէ։

Բայց որովհետև մեր տեսուչների կյանքը շատ կարճ է լինում, նրանց հեռացնելուց հետո՝ հեռացվում է և նրանց կուսակիցների ամբողջ խումբը։ Դպրոցը ենթարկվում է նոր փոփոխությունների...

* *
*

Շատ անգամ հոգաբարձուները կամ նրանց մի մասը, նույնն են անում, ինչ որ անում է տեսուչը, այսինքն՝ մտցնում են դպրոցի մեջ մի մարդ, որ իրանց ավելի մոտ էր, որ կարողացել էր կողմնակի միջոցներով նրանց հաճությունը գրավել։ Այստեղից առաջ է գալիս նույնպես անհաշտություն, կամ հոգաբարձուների միմյանց դեմ և կամ նրանց ու տեսչի մեջ, եթե վերջինս առաջինների հետ համաձայն չէր։

Շատ անգամ տեղային հոգևոր իշխանության ներկայացուցիչն է անում միևնույն բանը, աշխատելով մտցնել դպրոցի մեջ մի մարդ, որ նրան ամենայն ջերմեռանդությամբ խնկարկում է, և այս ու այն լրագրում, կեղծ անուններով, գովասանական նամակներ է հրատարակում սրբազանի, կամ գերապատիվ հայր-սուրբի չգործած ազգօգուտ գործերի մասին։— Դարձյալ խռովություններ են ծագում...։

Շատ անգամ նույնը անում է մի «աղա», որն ամենևին դպրոցի վարչության հետ կապ չունի, բայց ժողովրդի մեջ մեծ հեղինակություն ունի։ Նա իր աղքատ բարեկամի համար հաց գտնելու մտքով, իսկույն խրում է նրան դպրոցի մեջ։ Եվ կամ ցած շողոքորթի մեկը կարողանում է «աղային» փառաբանությունը հրապուրել և նրա մեջ պաշտպանություն գտնել։ «Աղան» ամեն ինչ կքանդե, դպրոցը տակնուվրա կանե, եթե իր ցույց տված մարդուն չընդունեն իբրև վարժապետ։ Թող նա լիներ հիմար և անընդունակ մեկը, բայց ո՞վ կարող է ընդդիմանալ, երբ որ «աղան» հրամայում է...։ Դարձյա՜լ խռովություններ... Որովհետև «աղաները» միշտ ունենում են ուրիշ «աղաներ» որպես հակառակորդներ։

Հիշյալ կրքերից ազատ չեն մնում և լրագիրների[1] ու ամսագրերի խմբագիրները և դասագրքերի հեղինակները։ Շատ անգամ գավառներից դրանց են դիմում վարժապետների համար. և այդ պարոնները գավառներում գործակալներ և թղթակիցներ ունենալու համար՝ իսկույն խրում են պահանջված տեղում իրանց ցանկացած մարդը։

* *
*

Վարժապետների վերաբերությամբ դպրոցների գործը ոչ սակավ խառնում են և քահանաները, որոնք իրանց բազմամյա խարդախություններով մի տեսակ համարում են ստացել ժողովրդի մեջ։ Դրանք միշտ ունենում են իրանց ձեռքի տակ մի զորեղ կուսակցություն։ Ամեն տեղ դրանք նման են միմյանց և ծառայում են որպես հարմար գործիք «աղաների» և հոգևոր իշխանության ներկայացուցչի ձեռքում։ Վերջինը կարոտություն ունի նրանց մեջ, որովհետև հմուտ ոrսnrդներ են...։ իսկ առաջինները կարոտություն

---

[1] «Մշակը» որովհետև սկսյալ իր հրատարակման օրից միշտ հեռու է պահել իրան ստիպանոք տարածվելու միջոցներից, այս պատճառով և միշտ ազատ է մնացել հիշյալ ախտից։

ունեն, որովհետև լավ լրտեսներ են...: Որպես ժողովրդի մոտ մարդիկ, որպես ամեն ծակ մտնողներ, այս քահանաները կարողանում են ամեն տեղից խաբարներ բերել և մեծ ինտրիգներ սարքել: Իսկ շատ տեղերում նրանք այն աստիճան բռնանում են և ազդեցության տեր են դառնում, մինչև նույնիսկ առաջնորդը կամ փոխ-առաջնորդը մի տեսակ կախումն են ստանում նրանցից, և ստիպված են նրանց կամքով վարվել,— հակառակ դեպքում տեր-հայրը պատրաստ է ժողովրդի մեջ մի մեծ փոթորիկ հարուցանել և հետո առաջնորդին էջմիածնի ճանապարհը ցույց տալ...

* *
*

Ես նպատակ չունեմ մատնանիշ անել որևէ անձի վրա, փառք աստուծո, այսպիսի քահանաների թիվը այնքան շատ է մեզանում, որ փաստերի կարոտություն չկա: Բայց այսքանը կասեմ, որ ոչ ոք այնքան վտանգավոր չէ ժողովրդի համար, որպես խորամանկ և խռովարար քահանան: Եթե այս հատկությունները լինեին մի «աղայի» մեջ, ժողովուրդը կարող էր իր հարաբերությունները կտրել նրա հետ, բայց ի՞նչ անե նա քահանայի հետ, քանի որ կապված է նրա հետ կրոնական կապերով և միշտ նրա մեջ կարոտություն ունի: Եվ շատ անգամ անկարելի է լինում հեռացնել այսպիսիներին, որովհետև նրանք, որպես ասացինք, ունեն իրանց ձեռքի տակ մի զորեղ կուսակցություն, և բացի սրանից, ունեն ծածուկ կապեր էջմիածնի այս ու այն սրբազանի հետ... Նրանց կապերի մասին չէ մեր խոսքը, մենք պետք է խոսենք, թե որպես խառնում են դպրոցների գործերը:

Այս տարի, իմ Թիֆլիսում եղած ժամանակ, գավառակսն ուսուցիչների մեծ մասը հավաքվել էին այնտեղ, որովհետև արձակուրդի ժամանակ էր: Մենք շատ անգամ հանդիպում էինք «Եվրոպա» հյուրանոցում կամ Շենինգի մոտ: Համարյա ամենի բերանից միևնույն գանգատները էին լսվում.— ամեն տեղ բռնացել է մի չարագործ քահանա և դպրոցի վերաբերությամբ ինչ անկարգություններ ասես, անում է: Նա վարժապետներ է դնում, վարժապետներ է փոխում, չնայելով, որ ինքը դպրոցի կառավարության մեջ գործ չունեցող մի մարդ է: Եթե ուրիշ կերպով նրան չհաջողվի, այն ժամանակ նա ունի իր ձեռքում մի հեշտ միջոց հեռացնելու իր ուզած վարժապետին,— բավական է որ տարածե

ժողովրդի մեջ, թե այս մարդը անկրոն է, խաչին կամ պատին չէ հավատում... պրծա՜վ գնաց...

Մի քանիսի համար պատմում էին, թե սովորություն ունեն վարժապետի ոռճիկից ծածուկ «տասնորդ» վեր առնել, եթե վերջինս չհոժարվի վճարել, պետք է թողնեն դպրոցը։ Հակառակ դեպքում, տեր-հայրը կարող է նրան հազար ու մեկ կերպով վնասել։ Մեկի համար ասում էին, թե մինչև անգամ իր ձեռքի տակ ունի սրիկաներ, որոնք պատրաստ են տեր հոր ամեն տեսակ հրամաններդը կատարելու, որքան և ավազակային կամ եղեռնական լինեին։

Մենք լսել էինք, թե քահանաները մոցիոլոգություն են անում, և թե՛ աղջկա, թե՛ տղայի կողմից առատ «աջահամբույր» են ստանում. մենք լսել էինք, որ քահանաները մինչև անգամ կավատություն են անում, բայց չէինք լսել, որ քահանան մի վարժապետի պաշտոն գտնելու համար աչք դներ նրա ողորմելի ոռճիկին։

Մենք մեր ընթերցողին ցույց տվեցինք, թե որպես են վարվում վարժապետների ընտրության մեջ դպրոցների կառավարության հինգ գլխավոր գործիչներն,— այսինքն՝ հոգաբարձությունը, տեսուչը, հոգևոր իշխանության ներկայացուցիչը, «աղաները» և խոհվարար քահանաները։ Այժմ խոսենք այն բանի վրա, թե ի՞նչ հետեվանք են ունենում այս տեսակ ընտրությունները։

Շա՛տ հասկանալի է, թե ի՛նչ.—նախ, դպրոցը չէ ծառայում իր բուն նշանակությանը, իր իսկական նպատակին, այլ նա դառնում է զանազան կրքերի խաղալիք։ Նա դառնում է մի հիմնարկություն, որի միջից կռիվը, խռովությունը անպակաս են լինում։ Երկրորդ, տարակույս չկա, որ շահեկան նպատակներով ընտրված վարժապետներ չեն կարող իրանց պաշտոնին ընդունակ մարդիկ լինել.— բայց այս վարժապետները առաջ են բերում ուրիշ շատ անկարգություններ ևս։ Ի՞նչ։

Ինձ պատահել է քննել մի քանի դպրոցների ծրագիրները. ի՞նչ եք կարծում, այդ ողորմելի ծրագիրները յուրաքանչյուր տարվա ընթացքում, և երբեմն միևնույն տարվա մեջ երկու անգամ փոխվել են։ Ծրագրիրները անդադար փոխվել են, որքան անգամ փոխվել են վերոհիշյալ հանգամանքներով վարժապետները։ Նոր մտած վարժապետները, իրանց նախորդների անընդունակությունը ցույց տալու համար, սկսել են իրանց խելքին զոռ տալ մի նոր ձև և մի նոր պրոգրամա մտցնել։ Եվ այսպես. հին վարժապետների հիմնածը միշտ նորերն քանդելով, առիթ են տվել անվերջ փոփոխություններին։ Վարժապետները չեն ենթարկվել դպրոցի մեջ ընդունված մի

որոշ պրոգրամայի կանոններին, այլ միշտ պրոգրաման է ենթարկվել վարժապետների կամայականությանը։— Այսպիսի դեպքերում, հայտնի բան է, դպրոցը կկորցնէ իր նշանակությունը և մի որոշ նպատակի ծառայել կարող չէ։

Այս դրության մեջ շատ հասկանալի է և աշակերտների վիճակը, նրանք անդադար պետք է փոխեն իրանց ուսանելի առարկաները,— մեկը պետք է կիսատ թողնէն և մյուսը սկսեն, և շատ անգամ ստիպված պիտի լինին միևնույն առարկան զանազան վարժապետից զանազան կերպով սովորել։ Նոր վարժապետը, ասելով, թե իր նախորդը չէ հասկացել, վատ է դաս տվել,— միշտ սկսում է գլխից, և սկսում է բոլորովին ուրիշ եղանակով։ Որքա՞ն դժվար է աշակերտին մոռանալ տալ մի առարկա, որի վրա տարիներով տանջվել է, և նույնը նորից սկսել նոր ձևով։

Նոր վարժապետը չէ շարունակում հնի սկսածը, այլ միշտ վերադառնում է սկզբին։ Այդ առաջանում է վարժապետների տարբեր կրթութենից, որոնք չեն ենթարկվում մի որոշ մանկավարժական եղանակի, այլ ամեն մեկը ուսուցանում է որպես ինքն է սովորել։ Եվ չէր կարող լինել նրանց դասատվության եղանակների մեջ միակերպություն, որովհետև չեն պատկանում մի որոշ շկոլայի։

Վարժապետների այս տեսակ վարմունքը առաջանում է շատ անգամ նրանից, որ երբեմն ինքը վարժապետը չգիտե իր առարկան և կամենում է շաղատանությամբ անցկացնել.— նրան հեշտ է մի առարկա գլխից սկսել, քան թե շարունակել, որովհետև, երբ գլխից է սկսում, ինքն փոքր առ փոքր սովորելով, կարողանում է դաս տալ։ Այս տեսակ վարժապետները, որպես ռամկորեն ասում են, իրանց «գալլաքութիւնը» ողորմելի դպրոցի գլխի վրա են սկսում սովորել. և կարողանում են շարունակել, որովհետև նրանց վրա կոնտրոլ չկա. նրանք դպրոցի վարչության մեջ պաշտպաններ ունեն, և իրանց «խաթրի» համար են պաշտոն տվել...

Եվ այսպես, նոր վարժապետը միշտ հնի աշխատությունը մերժում է և ուսման ընթացքը խանգարում է։ Աշակերտի հավատարմությունը և սերը դեպի իր ուսանելի առարկան կորչում է, որովհետև նրան անդադար ասում են, թե քեզ ծուռն են սովորեցրել, պետք է նորից սովորես։ Եվ յուրաքանչյուր վարժապետ, մի կամ երկու տարի մի դպրոցում մնալով, ամեն ինչ քանդում է, տանկնուվրա է անում, և վերջը զզվեցնելով, թողնում և հեռանում է։ Եվ եթե նրանից հետո եկողը մի խղճմտանքով մարդ է լինում, նա հազիվ թե կարողանում է իր նախորդի քանդածները շինել...

* *
*

Վերոհիշյալ հանգամանքների մեջ, իհարկե, դպրոցներում ոչ միայն ուսանելի առարկաների համակարգությունն և մինը մյուսին համապատասխան ներդաշնակությունն չէ կարող լինել,— այլ դպրոցները մինչև անգամ չեն կարող տալ ժողովրդին և այն բանը, որ կոչվում է հասարակ դպրություն կամ գրագիտություն (грамотность)։ Այսպիսի դպրոցները միշտ զուրկ կմնան որոշ ուղղությունից, և ուսանելի առարկաների մեջ ներքին կապ չէ կարող լինել, այլ նրանք այնպես խառնիխուռն կերպով ածված կլինեն ողորմելի աշակերտների գլխում, որպես անկապ մթերք։ Այլևս չեմ խոսում վարժապետների մանկավարժական եղանակների վրա, որոց ամեն մինը իր էշը իր եղանակովն է քշում...

Մեզանում մի առած կա, թե «ագռավն ուզեց կաքավի երիշով (ընթացքով) գնալ, իր երիշն էլ կորցրեց»։— Միշտ այդպես է լինում, երբ մարդ իր սովորականը թողնում է, և նախ քան սովորելու օտարի վարմունքի ձևերը, սկսում է ինքն էլ նույն ձևերով ընթանալ։ Նա ծիծաղ է շարժում և ավելի ոչինչ։

Նոր, եվրոպական կոչված մանկավարժական արհեստի մեջ մեր վարժապետները միևնույնն են անում.— իրանք դեռ սովորելու կարոտ ուսուցչի պաշտոն են հանձն առնում։ Իսկ արտաքին ցույցերով միայն կամենում են նմանվել, թե հմուտ մանկավարժներ են. իսկ նմանվելն ցած կապիկություն է, որ միայն կարող է ծիծաղ շարժել։

Խոսելով առհասարակ մեր վարժապետների վրա, չէ կարելի չնկատել մի խոշոր երևույթ, որը խիստ անմխիթար տպավորություն է գործում։ Մեր մեջ մինչև այսօր հայտնված, և իրանց գործին փոքր ի շատե հմուտ ու խղճմտանքով վարժապետների թիվը այնքան փոքր է, որ կարելի է մատներով համբարել.— Բեգնազարյանց, Աղայանց, Ղուկասյանց, Տեր-Ղևոնդյանց, Պռոշյանց, Գալաանյանց, Բարխուդարյանց, Շահվերդյանց, Չիգիրանյանց, Մ. Սիմոնյանց և մի քանի ուրիշներ։ Այդ պարոնները, բացի երկուսից, ո՛չ մասնագետներ են և ո՛չ բարձր ուսում ստացած համալսարանականներ.— դրանք ավելի ժողովրդական թերուսներ են։ Եվ զարմանալին այն է, որ գրականության մեջ գարձյալ միևնույն անձինքն են հայտնվում.— ունեն ինքնուրույն և թարգմանական աշխատություններ, գրում են լրագիրների և ամսագիրների մեջ, և իրանք ոչ այս և ոչ այն մանկավարժ-արհեստագետի աշակերտ լինելով,

տվեցին մեր դպրոցներին մի քանի դասագրքեր։ Որո հակառակ, բարձր ուսում ստացած մանկավարժ-մասնագետներից մինչև այսօր ոչ մեկը չհայտնվեցավ ոչ վարժապետական ասպարեզում և ոչ գրականության մեջ։ Այստեղ ճշմարտվում է «մշակի» այն կարծիքը, որ ժողովրդական թերուսների մեջ գտնվում է ուժ, եռանդ և ապագա...։ Ցույց տալու համար, թե այդ այդպես է, մենք հարկավոր ենք համարում փոքր-ինչ պարզել, թե ի՞նչ է մասնագետը և ի՞նչ է թերուսը։

* *
*

Մասնագետը փոխաբերական ձևով խոսելով, մի շտեմարան է, որի մեջ ամբարված են իր արհեստի վերաբերյալ զանազան մթերք, որոնք օտարի արդյունաբերության գործ են։ Նրա գլուխը մի պարկ է, որ լցրած է նույն մթերքով։ Եթե թափ տվեցիր պարկը—դատարկ կմնա։ Նա խոսում է, դատում է, վճռում է միշտ **օտարի խելքով**, *ինքը սեփական դատողություն չունի։ Նա միշտ գրքերի հեղինակների անուններ է հիշում,— նա միշտ վկայություններ է բերում, իսկ իր կարծիքը չէ հայտնում։ Նա պատերազմում է արհեստական զենքով. ա՛ռ նրա ձեռքից զենքը,— նա կդառնա մի թույլ արարած...։*

Մասնագետը զգույշ է և երկչոտ. նա իր սեփական ուժերի վրա ինքնավստահություն չունի։ Երբ պետք է նրան մի բան գրել, խնդույն սկսում է գրքերը փորփրել, որ նրանց միջից մտքեր դուրս բերե. և այս պատճառով նրա գրվածքը լինում է կցկտուր և շատ անգամ մթին ու անկապ։ Նա կարող է լավ թարգմանել և օտարի աշխատություններից ծաղկաքաղ անել, բայց ոչ ստեղծել։ Նրա մեջ ինքնուրույնություն չկա։ Եվ այս է պատճառը, երբ մասնագետը անգործությունից մոռանում է իր սովորածը, նա շատ չէ զանազանվում հասարակ և տգետ մարդիկներից։

(Մեր խոսքերը այն անձանց ավելի հասկանալի կլինին, որոնք մտածել են մեր այժմյան բարձր ուսում ստացած երիտասարդներից ստեղծել մի տիպ և ներկայացնել կամ բեմի վրա և կամ վեպի մեջ։ Ամենևին չէ աջողվում մի այսպիսի աշխատություն, որովհետև նրանք կատարելագործված տիպեր չեն,— նրանք կեղծ բաներ են։ Նրանք ոտոշ գույն չունեն, միայն խայտաճամուկ երևույթներ ունեն, որոնք աչք են շլացնում... և այդ խայտաճամուկ գույները, կարծես, զարդարանքի համար են, և ժամանակը շուտով հնացնում է նրանց...)։

Բոլորովին սխալ և միակողմանի կլիներ մեր դատողությունը,

Եթե այսքանը միայն լիներ մեր կարծիքը մասնագետների մասին՝ լինում են բացառություններ, ուր բարձր ուսում ստացած մասնագետը սեփականում է իրան գիտությունը, լավ մարսում է նրան, և անցնելով հեղինակությունների վարդապետական սահմանից,— իր համար կազմում է մի ինքնուրույն և որոշ տեսություն՝ Այնուհետև նա իր սեփական հայացքն ունի իրերի վրա և դատում է իր խելքով: Եվ դրանց միջից ծնում են հանճարներ: Բայց զարմանալին այն է, որ եթե բաժանելու լինենք այսպիսիների թիվը, դարձյալ մեծամասնությունը կմնա ժողովրդական, և ժողովրդի ստոր դասից բարձրացած մարդիկների կողմը: Այդ այն պատճառով է, որ ժողովրդական մարդը, եթե կարելի է այսպես ասել, հղացած է մտնում գիտության մեջ. և գիտությունը միայն կատարելագործում է ծնունդը: Ժողովրդական մարդը նախ քան ոտք դնելը դպրոցի շեմքի վրա ունի իր աշխարհատեսությունը և գիտակցությունների հարուստ մթերք, որոնք թեև անմշակ են լինում, թեև իրանց սաղմնական վիճակի մեջ են գտնվում, բայց գիտության լույսի տակ բուսնում, աճում և հասունանում են: Այս է պատճառը, որ ժողովրդի միջից դուրս եկած բարձր ուսում ստացած մարդիկ լինում են ընդարձակ հայացքի տեր և ունենում են բազմակողմանի հմտություններ:

* *
*

Այժմ խոսենք, թե ինչ է թերուսը:

Թերուսը շատ նման է բարձր ուսում ստացած ժողովրդական մարդուն, այն զանազանությամբ միայն, որ դրա մեջ գիտությունը, ժողովրդական հմտությունների հետ համեմատելով, շատ փոքր մաս է կազմում: Այլ կերպ խոսելով, թերուսը մի տեսակ բաղադրություն է, որի մեջ սեփական խելքը միացել է գիտությունից ստացած ճշմարտությունների հետ, թեև վերջիններս առաջինի փոքր մասն են կազմում:

Բայց բնության օրենք է, երբ մարդու որևէ անդամը, կամ զգայարանքը խանգարված ու թուլլ է լինում, մնացածները ավելի զարգանում են և փոխարինում են նրան: Կույր մարդիկը կարողանում են Հանաչել մեկին ոտքերի ձայնից, և ճանաչել կեղծ դրամը մատների շոշափելով: Խուլ ու մունջերի տեսանելիքը այնքան զարգանում է, որ նրանք դառնում են մի տեսակ ֆիզիոգնոմներ, և նայելով մարդու երեսին, հասկանում են նրա միտքը: Ձեռք չունեցող մարդկանց ոտների մատները այնքան զարգանում են, որ կարո-

զանում են նրանցով գրել ու նկարել։ Ինչ որ լինում է մարմնական կազմվածքի մեջ, նույնը և լինում է մարդու մտավոր կառոդությունների մեջ։ Անգլագետները զարմանալի հիշողություն ունեն. մի անգրագետ վաճառական կարողանում է իր բոլոր հաշիվները մրտքումը պահել։ Ռամիկ երկրագործները ավելի լավ են գուշակում եղանակների փոփոխությունը, քան թե մի հմուտ օդերևութաբան (մետեորոլոգ)։

Այսպես է զարգանում և Թերուսը։

Նա պատրաստի գիտությունից այնքան չէ ստանում, որ իրան բավականություն տա, և այս պատճառով նրա խելքը, դատողությունները և բոլոր մտավոր զորությունները ավելի ինքնուրույն կերպով զարգանում են։

Ռամրի մի փոքրիկ մասը թթվեցնում է ամբողջ զանգվածը։ Գիտությունը, թեև փոքր չափով ստացած, նույն ներգործությունն է անում Թերուսի մեջ։ Բավական է, որ նա ըմբռնում է մի փոքրիկ նշույլ գիտության լույսից.—այդ նշույլը նրա մեջ լայնանում է, և ընդարձակվելով, դեպի ամեն կողմ շառավիղներ է ձգում։

Թերուսը պատրաստի ճող ունի և հողը ժողովրդական կյանքից ստացած ունակությունն է, որի մեջ ընկած ամեն սերմ անպտուղ չէ մնում։

Թերուսը մի պատվաստված ծառ է, որի վրա վայրենի դրության մեջ ուժեղ և առողջ էր, խորին արմատներ ուներ արձակած մայր հողի մեջ։ Նա քաղցր պտուղներ է տալիս, և նրա պտուղները ախորժելի են ավելի այն պատճառով, որ իրանց բնական և ինքնուրույն գույն, համ և հոտ ունեն։

Թերուսը, ավելի կատարելագործվելով, դառնում է մի տեսակ **իճճենուս փիլիսոփա**, որը ընդհանուր մարդկային ճշմարտությունները դուրս է բերում իր սեփական աշխատանքով, իր մտածություններով ու փորձերով։ Շատ անգամ նա սխալներ է գործում և խոշոր սխալներ, բայց որպես նրա ճիշտ գաղափարները իր առողջ դատողության արդյունք են, այնպես էլ գործած սխալները իր սխալներն են, օտարի խելքը չէ սխալեցնում նրան։ Նա շատ անգամ սայթաքում է, ընկնում է, որովհետև իր սեփական ոտների վրա է քայլում, վարձկան ձի չէ նստած։ Նա մարդկային հնդինակությունների հետ գործ չունի և գուցե չի էլ ճանաչում նրանց։ Նա հետևում է մեկ հեղինակության միայն—դա է բնության համաչխարհական գիրքը։ Այս հսկայական գրքից քաղում է նա ինչ որ իրան պետք է։

Նա հետազոտում է, ճանաչում է մարդկությունը, մարդկության սրտի և կյանքի մեջ ուսումնասիրելով նրա պետքերը։ Նրա արտահայտած մտքերը մարդկության մտածությունների եզրակացություններն են, նրա ձայնը ժողովրդի սրտիցն է բխում։ Ինքն ժողովրդին է պատկանում և իր մեջ բովանդակում է ամբողջ ժողովուրդը։— Նա դառնում է մարգարե, պատգամախոս և արտահայտում է ժողովրդի պահանջները։

Բայց մենք այսպիսի իմիներ չունենք և չենք էլ ունեցել,— դրանք այն մարդիկն են, որ կոչվում են տաղանդներ, ժողովրդական բանաստեղծներ և փիլիսոփաներ։

Մենք ունենք անհատ թերուսներ միայն, որոնք մի խառնուրդ են գիտության և ժողովրդական մարդիկների, իրանց անզարգացած դրության մեջ։ Այդ մարդիկը օգտավետ են լինում նրանով, որ զուրկ չեն առողջ և ինքնուրույն մտածողությունից, և զորեղ ընդունակություն ունենալով, շուտով ըմբռնում են ամեն մի լուսավոր գաղափար։ Եվ այդ է պատճառը, որ նրանք մի զարգացած մարդու ազդեցության տակ, կամ մի զարգացած շրջանի մեջ՝ այնքան զարգանում են, որ երևելի մարդիկ են դառնում։ Մեզանում այս տեսակ շրջաններից առաջին օրինակը տվեց «Մշակի» խմբագրատունը, նա պատրաստեց և պատրաստում է մարդիկ, որոնք ապագա են խոստանում...։

Ոչ ոք այնքան ճարպկությամբ չէ սեփականում և չէ յուրացնում ուրիշի մտածության ծնունդը, որպես թերուսը։ Եվ եթե քննելու լինենք մեր թերուսների գրավոր աշխատությունները, կտեսնենք, որ նրանք հետևողություններ են, միայն վարպետ կերպով ձևակերպած։ Թերուսը և սահմանափակ մասնագետը նրանով են միայն զանազանվում, որ առաջինը բանեցնում է իր խելքը, իսկ երկրորդը՝ օտարի խելքը։

Թերուսը նոր ատամներ և լավ ախորժակ ունի. նա ամեն բան մարսում է։ Դուք տվեցեք նրան մտքեր միայն, նա իսկույն մի բան կշարադրե։ Եվ այս է պատճառը, որ նրանց գրվածքները լինում են բազմակողմանի. նրանք ամեն բանի վրա դատում են, ամեն բանի վրա գրում են և ամեն բանի մեջ խրվում են...։

Եվ շատ զարմանք չէ, երբ տեսնում ենք, որ մեր թե՛ գրական և թե՝ ուսումնարանական ասպարեզներում ավելի թերուսներն են դեր խաղում։ Դրանք կարող են օգտավետ լինել, որովհետև իրանք ճանաչել են ժողովրդին և ժողովուրդն էլ հասկանում է նրանց լեզուն։ — Միայն թե շառլատաններ չլինեն...

ԴԵՒԵՎ ՈՒՇ ՉԷ

Այժմ ինչ որ խոսենք, ինչ որ գրենք,— այդ կդառնա որպես եվրոպացին ասում է՝ «ընթրիքից հետո մանանեխ» և կամ որպես մենք ասիացիքս ասում ենք՝ «հարսանիքից հետո զուռնա»:— Մեր խոսքը տարաժամ կլինի։

Ներկա պատերազմիս սկզբից մեզանից շատերը հույս ունեին, թե տաճկական Հայաստանը զուրկ չի մնա այն արտոնութիւններից և այն իրավունքներից մեկից, որոնց համար պատերազմը հրատարակվեցավ, և որոնք պետք է տրվեին Թուրքիայի լծի տակ ճնշված քրիստոնյաներին։ Իսկ այժմ գործից երևում է, թե հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու.— շատ-շատ տաճկական Հայաստանի ռուսաց զորքերով գրավված մասը կմիանա Կովկասի հետ, բայց մնացած մեծ մասը դարձյալ կմնա Թուրքերի ձեռքում, գուցե մի քանի խոստմունքներով, որպես միշտ եղել են մինչև այսօր և միշտ մնացել են որպես մեռյալ տառ...

Ինչո՞ւ հայերի վրա ուշադրություն չդարձրին, մի՞թե նրանց դարերով թափած արյունը, արտասուքը և մահմեդականներից կրած բարբարոսությունները իրավունք չէին տալիս որ նրանք ևս արժանանային Եվրոպայի գթությանը—թե նրանք էլ դժբախտ են և գտնվում են ավելի սարսափելի դրության մեջ, քան թե սլավոնական ցեղերը Բալկանի թերակղզում:— Ահա՛ մի հարց, որ պարզել պետք է։

Ընդհանուր մարդասիրական կետից նայելով, և քրիստոնեական եղբայրասիրության զգացմամբ, պետք է, որ հայերի վրա ևս ուշադրություն դարձնեին։ Իսկ քաղաքականության կետից նայելով,

ոչ ոք պարտական չէր հայերի համար մտածել, քանի որ իրանք հայերը անշարժ մնացին և իրանց համար չմտածեցին։

Գերեզմանների վրա ոչ ոք ուշադրություն չէ դարձնում, որովհետև նրանք լուռ են, գոհ են իրանց վիճակից։ Այնպես էլ մեկը պարտական չէ ուրիշի փորի համար հոգալ, քանի որ նա չէ հայտնում, թե ինքը քաղցած է...

Այսուամենայնիվ հայերի վրա ուշադրություն դարձրին, հայերի վրա խոսեցին, և մինչև անգամ հայերին դրդեցին, որ իրանք էլ խոսեն, իրանք էլ բողոք բարձրացնեն, —բայց հայերը միշտ լուռ մնացին...

* * *

Մեր անցյալ հոդվածում[1] մասամբ բացատրեցինք հայերի լռության պատճառը, բայց կա դեռևս շատ բան բացատրելու։— Հայերի լռությունը երկու բանով կարելի է մեկնել, կամ նրանք գոհ են իրանց վիճակից, և կամ չեն ճանկանում իրանց դրությունը, իրանց ինչ վիճակի մեջ լինելը։

Չէ կարելի մտածել, թե հայերը գոհ լինեին իրանց վիճակից, որովհետև անկարելի է գոհ լինել մի այնպիսի վիճակից, ուր կյանքի, կայքի և ընտանիքի ապահովություն չկա, ուր մարդու աշխատության արդյունքը հափշտակվում է բռնի ձեռքով, ուր նրա պատիվը շների հետ է հավասարված, ուր ամեն ինչ, որ նրա համար սուրբ է և նվիրական, հալածվում է, պղծվում է և կույր մոլեռանդության զոհ է դառնում։— Անկարելի է գոհ լինել մի այսպիսի վիճակից։ Պետք է բոլորովին զուրկ լինի մարդ զգացողությունից, որ չհասկանա մի այսպիսի դրության սարսափելի դառնությունը. բայց մենք Թուրքիայի հայերին այս աստիճան մեռելության մեջ չենք դնում։

Մեր երկրորդ կարծիքը, թե նրանք չեն հասկանում իրանց դրությունը, ինքնըստինքյան լուծվում է առաջինի մեջ,— այսինքն եթե գոհ չեն, ուրեմն հասկանում են իրանց վիճակը, եթե չհասկանային, կատարյալ դիակներ կլինեին, որոնց այրում են, մոխիր են դարձնում, բայց նրանք ոչինչ չեն զգում...

Այժմ ծագում է մի նոր հարց. ի՞նչու բողոք չբարձրացրին, եթե գոհ չէին իրանց վիճակից։

---

[1] Տե՛ս «Դարտակ հոլյսերով ենք խաբվում» հոդվածը։ Ծանոթ. կազմողների։

Բողոքը կարող էր հայտնվել երկու կերպով. կամ իրանք էլ սլավոնական ցեղերի նման զենք վեր առնեին, և փոխանակ իրանց տան ծածկի տակ քրդերի սրից կոտորվելու, պատերազմի դաշտում մեռնեին,— և կամ գրավոր կերպով իրանց բողոքը հայտնեին ուր որ հարկն էր։ Առաջին գործողության մեջ նրանք անընդունակ էին, իսկ երկրորդը ոչ ոք չէր արգելում։

Բայց ո՞վ պետք է տար գրավոր բողոքներ։

Հայտնի բան է, Աղբակա հայերը, որոնց 24 գյուղերը մոխիր ըարձան, քահանաները ձողերի վրա բարձրացան, կոտորվեցան, չարդվեցան, և կանայք ու աղջիկները Քելալեդդինի ու շեյխ Բաթուլլայի զորքերի ձեռքով գերի գնացին,— Աղբակա ողորմելի հայերը, որ այժմ Պարսկաստանում մուրացկանությամբ են ապրում, ընդունակ չէին բողոք բարձրացնելու։ Նույնը չէին կարող անել և վանա հայերը, որոնց հրդեհած քաղաքի ծուխը դեռևս բարձրանում է բազմաթիվ անբախտացած ընտանիքների սրտերից... նույնը չէին կարող անել և Բայազետի ու Ալաշկերտի հայերը, որոնց վիճակը ամենից հայտնի է։ Այլևս չեմ խոսում Մուշի, Բաղեշի, Տիգրանակերտի և տաճկական Հայաստանի ուրիշ շատ հայերի մասին, որոնց ոչ մեկը ազատ չմնաց մահմեդականների բարբարոսություններից։

* *
*

Ուրեմն ո՞վ պիտի խոսեր, ո՞վ պիտի բողոք բարձրացներ։

Այդ լինում է երկու կերպով։ Երբ մի ժողովուրդ այնքան զարգացած է, որ հասկանում է իր իրավունքները և հասկանում է, որ ինքն բռնաբարվում է,— և միևնույն ժամանակ այնքան պատրաստված է, որ կարող է ընդդիմադրել բռնակալի կամայականությանը,— ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, Թե՛ զենքով և Թե՛ խոսքով։ Այդ լինում է հեղափոխական ցույցերով, և դրան ասում ենք, Թե ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում,— ցածից վեր է բարձրանում։

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ, և գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է իր ցավերը, բայց դարման անելու շնորհ չունի,— այն ժամանակ նրան իր Թշվառ վիճակից ազատելու հոգսը վերևից դնպի ցած է իջնում։ Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած և գործունյա դասերը։ Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրավորական դեր է խաղում։

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներգործական։

Թուրքիայի հայերի վերաբերութիւնամբ գլխավոր կենտրոնը, որտեղից պետք է հայտնվեր բողոքը, Կ. Պոլիսն է։ Այնտեղ է դրած հայոց պատրիարքի աթոռը, այնտեղ է գտնվում ազգային ժողովը և այնտեղ են լինում մտածող ու բանիմաց գլուխները։

Բայց ի՞նչ էր պատճառը, որ Կ. Պոլսից ևս ոչինչ բողոք չհայտնվեցավ։

Այս հարցը պարզելու համար մենք ստիպված ենք փոքր-ինչ խոսել այն բանի վրա, թե որպիսի անձնավորութիւններից են բաղկացած Կ. Պոլսում այն մարդիկը, որ կոչվում են գործիչներ, առաջադեմ մարդիկ և ազգի սանձը կառավարող մարդիկ։

* *
*

Ի բաց առյալ ամբոխը, որ բաղկացած է վաճառականներից, արհեստավորներից և գաղթական մշակներից,— Կ. Պոլսում գլխավորապես երկու գործող կուսակցութիւններ կան, մեկը՝ հին ամիրայական կուսակցութիւնը, մյուսը՝ նոր սերունդը։ Դրանք մի ժամանակ, այսինքն ազգ. սահմանադրութեան հիմնվելու սկզբներում, խավարյալների և լուսավորյալների անուն էին կրում։

Քննենք յուրաքանչյուր կուսակցութիւնը առանձին։

Նախ և առաջ պետք է հասկանալ, թե ո՞րտեղից առաջ եկան ամիրաները, և ի՞նչ էին նրանք։

Դեռ մեզանից կես դար առաջ Թուրքիայի պետութիւնը գավառների (վիլայեթների կամ սանջակների) կառավարութեան մեջ այս ձևն էր բռնած, որ յուրաքանչյուր գավառի արքունի տուրքը տալիս էր կապալով մի փաշայի։ Եվ որովհետև կառավարութիւնը վստահութիւն չուներ, թե փաշան իր ժամանակին կհասցնե գանձարանին հարկերի նշանակյալ քանակութիւնը, այս պատճառով փաշան ստիպված էր իր կողմից ներկայացնել Դռանը մի երաշխավոր։ Այս երաշխավորութիւնը հանձն էին առնում հայ սարաֆներ (սեղանավորներ)։ Դրանք մի տեսակ ընկերներ էին կապալառու փաշայի հետ, որը միևնույն ժամանակ իր գավառի թե՛ դատավորը և թե՛ վարձակալն էր։

Փաշան վարվում էր իրան հանձնված գավառի ժողովրդի հետ որպես ամեն մի կապալառու,— կողոպտում էր, հափշտակում էր և ամեն տեսակ հարստահարութիւններով մաշում էր նրանց։ Նա իր կողոպուտը, որ մեծ մասամբ հափշտակված էր լինում ողորմելի

հայերից, ուղարկում էր իր երաշխավորին՝ հայ սեղանավորին, իսկ վերջինս պետք է ներկայացներ Ք. Դռանը։

Բայց հայ սեղանավորը ուներ իր առանձին հաշիվները Դռան հետ,— սկսյալ սուլթանի հարեմի ծախսերից, մինչև զորքերի և կառավարության այլևայլ պետքերի ծախսերը, նրանց ձեռքումն էին։ Եվ այս պատճառով երաշխավոր սեղանավորը՝ իր երաշխավորության վրա առած փաշայի պարտքերի փոխարեն շատ անգամ զուտ փող չէր ներկայացնում գանձարանին, այլ տալիս էր միայն ստացականներ իր հին պահանջների մասին, որ ուներ Դռնից։

Դրամական այս տեսակ շրջանառությունները, թե՛ Դռան և թե՛ կառավարության նշանավոր գործավարների հետ, տալիս է հայ սեղանավորին մեծամեծ շահեր, և այս շահերը այնքան ավելի առատ էին լինում, որքան բխում էին անմաքուր և պղտոր աղբյուրներից[1]։

Անդադար Դռան հետ հաշիվներ ու հարաբերություններ ունենալով,—ահա այդ կապալառու սարաֆներն, այդ հայի անվանը նախատինք բերող վաշխառու հրեաներն էին, որ արժանացան ամիրայության պատվանունի...։

Որպես Դռան մերձավորներ, ամիրաները մեծ ազդեցություն ունեին ազգային գործերի մեջ. համարյա ամեն գործ կախումն ուներ նրանց կամայականություններից։ Ամիրայի մի լոկ խոսքը օրենք էր, նրա հրամանները կատարվում էին ժողովրդի կողմից ամենայն հնազանդությամբ։ Ամիրաները իրավունքներ էին բանեցնում ոչ միայն Կ. Պոլսում, այլև գավառներում։ Արդեն ընթերցողը տեսավ, թե ինչ կապեր ունեին նրանք գավառները կառավարող փաշաների հետ, որոնց ձեռքով և ամեն բանի մեջ խառնվում էին։

Հայտնի բան է, իրավունքները, որ նրանք բանեցնում էին, պաշտոնապես չէր տրված իրանց, այլ գործում որպես մարդիկ, որ օգուտ քաղել գիտեն ժամանակի հանգամանքներից,— այսպիսով, կառավարության ընդհանուր անկարգության մեջ հանդիսանում էին որպես մի-մի բռնակալներ, թեև իրանց բռնակալությունը կարող էին գործ դնել դեպի իրանց ողորմելի ազգայինները միայն, իսկ դեպի օտարազգիք նույնքան ցած էին և գետնաքարշ։

---

[1] Հայոց դրամատերերը, իրանց գումարները մի այսպիսի կեղտոտ շրջանառության մեջ դնելով, հեռու մնացին ազատ վաճառականությունից, և այդ ասպարեզը մնաց հուլների ձեռքում։ Որովհետև հուլները Դռան վստահություն գրաված չլինելով, չկարողացան նրա հետ դրամական հաշիվների մեջ մտնել կամ հայերի հետ մրցության անել, որոնք իրանց անազնվությամբ կարողացել էին հրապուրել թուրքերին։

Եղել են բացառություններ, որ ամիրաների մեջ գտնվել են բարի և ազգասեր մարդիկ, բայց եթե խիստ քննելու լինես, հազիվ թե այդ լավ համարվածներն ևս ապատ կմնան արատներից։

Կ. Պոլսի պատրիարքը, որպես ժողովրդի գլուխ և ներկայացուցիչ միշտ կախումն է ունեցել ամիրաներից և սերտ կերպով կապված է եղել նրանց հետ։ Նրանք վարվել են որպես սանիկ և սանեաեայր, որովհետև երկուսի շահերն էլ համաձայն լծորդություն էին պահանջում։ Պատրիարքը կարողություն ուներ ամիրաների մեջ, որովհետև իր հարաբերությունները Դռան հետ նրանց ձեռքով պետք է պահպաներ։ Եվ այս պատճառով ամիրաները պատրիարքարանի մեջ միշտ բարձր ձայներ էին վայելում։ Եվ պատրիարքը իր դիրքը պահպանել չէր կարող, եթե ամիրաների հետ համակից չլիներ։

Փոխվելով Թուրքիայի վարչության ձևերը, տարաֆները կորցրին իրանց նշանակությունը, բայց ամիրայությունը մնաց, թեև ուրիշ կերպարանքով։ Ամիրաները, որոնց ավելացան էֆենդիները, իրենց հին հարաբերությանց առիթով ծանոթացած լինելով Դռան թուղթյուններուի հետ, կարողացան զանազան պաշտոններ հանձն առնել և ամեն գործի մեջ ցույց տալ մեծ առաջադիմություն։ Այս պաշտոնակալներն ըստ մեծի մասին հին տարաֆների և կապալառուների որդիք լինելով, ահագին հարստության հետ ժառանգել էին և իրանց նախահարց բնավորությունը, թե ինչո՛վ կարելի է հաճոյանալ կառավարությանը, և նրա գործերի մեջ մտնել։— Դուռը անազնիվ գործիքներ էր որոնում, և նրա նպատակներին կատարելապես համապատասխանում էին հայ ծառայողները...

Հույները հայերի հետ և տերության պաշտոնների վերաբերությամբ մրցություն անել չկարողացան, որովհետև նրանք հայերի նման անազնիվ չէին, և չէին կարող կեղտոտ գործիք դառնալ։ Բայց շատերը ուրիշ կերպով են մեկնում, թե հույները չէին վայելում կառավարության վստահությունը, իսկ հայերը իրանց հավատարմությամբ արժանացած էին Դռան առանձին համակրության։ Այդ իրավ է, միայն պետք էր հասկանալ, թե ի՛նչ է նշանակում հավատարմությունը պաշտոնի մեջ դեպի մի անկարգ կառավարություն, որ արտաքին խարուսիկ ձևերի տակ միշտ իր հպատակների արյունն է ծծում։ Մի այսպիսի հավատարմության նույն նշանակությունն ունի, որպես մի խումբ ավազակների հավատարմությունը դեպի իրանց պետը կամ գլխավորը։

Այժմ կարծեմ ընթերցողին հասկանալի եղավ, թե ինչ տեսակ անձինքներից է բաղկացած Կ. Պոլսում այն կուսակցությունը, որ մենք իր հին անունով կոչեցինք ամիրաների կուսակցություն, մի տեսակ մարդիկներ, որ անունով միայն հայ են, իսկ սրտով թուրքից ավելի թուրք,— և իրանց անձնական շահերը պահպանելու համար, հայտնի բան է, նրանք կցանկանային միշտ կանգուն տեսնել Թուրքիան իր կառավարության անկարգ այլանդակության մեջ։ Եվ այս տեսակ մարդիկներից, հասկանալի է, որ չէր կարելի սպասել, որ նրանք բողոք բարձրացնեին, և հայ ժողովրդի հառաչանքներին քարգման լինեին։

Դառնանք դեպի մեր կուսակցությունները։

Կ. Պոլսում կա և մի ռուսական կուսակցություն, որը մեր նկարագրած կուսակցության հակակշիռն է կազմում։ Այս կուսակցությունը ավելի զորություն ստացավ Իգնատիևի դեսպանության օրերում։ Նրանք մտածում էին, թե հայերը կարող են ազատվել Թուրքիայի հարստահարություններից, —դա կարող է լինել միայն ռուսների պաշտպանությամբ, և իրանց փրկությունը որոնում են միայն ռուսաց դրոշի տակ, ցանկանալով, կամ տաճկական Հայաստանը Կովկասի հետ միացած տեսնել, և կամ Թուրքիայի հպատակ մնալով, Ռուսաստանի հովանավորությունը վայելել։

Թե մինչև ո՛ր աստիճան ճիշտ են այս կուսակցության ակընկալությունները, մենք ավելորդ ենք համարում քննել, միայն կասենք, որ նա ունի իր ընդդիմակալ մի ուրիշ կուսակցություն, որը հակակիր է դեպի Ռուսաստանը։ Այս հակակրությունը առաջ եկավ Ալի և Ֆուադ փաշաների ազդեցությունից հայերի վրա, և մասամբ Նապոլեոնի քաղաքականութենից Թուրքիայում, որի հետևանքն եղավ անջատել Տաճկաստանի հայերին Ռուսաստանի հայերից և նրանց ներքին կապը խզել։ Որովհետև նրանք սկսեցին համարել Ռուսաստանի հայերին կորած, և ամեն վատահություն կորցնելով դեպի իրանց ազգայինները, մտածեցին աշխատել, որ վիճակակից չլինեն նրանց գրությանը[1]։ Եվ այս տեսակ կարծիքից Ռուսաստանի հայերի վերաբերությամբ՝ առաջ եկավ այն, որ նրանք սկսեցին ավելի սերտ կերպով կապվել Թուրքիայի հետ, և իրանց բարօրությունը նրանից սպասել։

---

[1] Կ. Պոլսում դեռ պատերազմից առաջ հրատարակված «Շահեն ի Սիբիր» կոչված գիրքը կատարյալ արտահայտությունն է հիշյալ կուսակցության։ Մենք ուրիշ ժամանակ առիթ կունենանք խոսել այդ գրքի մասին։

Այս վերջին կուսակցությունը նրանով է միայն զանազանվում բուն թուրքասերներից (տերության հայ պաշտոնակալներից), որ դրանք սրտով ատում են թուրքերին, դժգոհ են դեպի նրա բարբարոսությունները, միայն մտածում են, թե բոլոր անկարգությունները ժամանակավոր են, թե հայոց ազգը համբերելով, կարող է հասնել մի բախտավոր ապագայի, երբ թուրքերը կքաղաքակրթվին, և Տաճկաստանի ընդհանուր հպատակների վրա կտիրե ազատ իրավունքը ու արդարությունը...։

* *
*

Մեր նկարագրած երեք կուսակցություններից երևաց, որ առաջինը, այսինքն՝ թուրքաց պաշտոնների մեջ ծառայողներն, ճիշտ կատարում են այն առածի իմաստը, թե «ում հացը որ ուտում են, նրա շահերի համար էլ հաշում են»։ Այսպիսի մարդիկ անձնական շահեր միայն ունեն, ընդհանուր, ազգային շահը անհասկանալի է նրանց։ Երկրորդ կուսակցությունը ամեն ինչ ռուսներից է սպասում։ Իսկ երրորդը ոչ միայն ռուսներից ակնկալություն չունի, այլ մտածելով, թե ամեն մի քրիստոնյա պետության իր հոգու համար, դեպի հայերը օգնության ձեռք չի մեկնի,— այս կուսակցությունը ավելի սերտ կերպով կպած է Թուրքիային, հայ ժողովրդի ապագա բախտավորությունը թուրքերի քաղաքակրթության մեջ որոնելով։

Բայց կա մի ուրիշ կուսակցություն ևս՝— նոր սերունդը, որ մի ժամանակ լուսավորյալների անուն էր կրում։ Այս կուսակցությունը Կ. Պոլսի մտածող դասի մեջ թարմ ուժն է կազմում։ Բայց որպես առհասարակ լինում է, երբ տակավին հների ազդեցությունը առաջնակարգ դեր է խաղում, այնպես էլ նոր սերունդը դեռևս իր տակը և անորոշ դրության մեջն է, դեռևս մի կազմակերպված ձև չէ ստացել, այս պատճառով սխալ կլիներ ասել, թե նրանք կուսակցություն են կազմում։ Նրանց չէ աջողվել մինչև այսօր բարձր դիրքերի վրա կանգնել, թե ազգային և թե պետության մեծ գործերի մեջ մտնել, որպեսզի սրտի և մտածության հետ միանար նրանց մեջ և իշխանությունը, որով կարողանային ավելի ազդու կերպով ներգործել։

Դրանք առհասարակ նյութական կողմից աղքատ, իսկ բարոյապես և մտավորական կողմից հարուստ մարդիկ են։ Դրանք դեռևս դեգերում են այս շրջանների շուրջը, որպես՝ թատրոնը, խմբագրատունը, դպրոցները և քչերին աջողվել է անդամ լինել ազգա-

յին ժողովի մեջ։ Ֆրանսիական թեթև կրթությունը տվել է նրանց բնավորությանը թեթև լինել, աշխույժ ունենալ, եռանդոտ լինել,— բայց ոչ տոկուն, խորամիտ ու հեռատես լինել։ Այս մարդիկը շուտ հափշտակվող, շուտ ոգևորվող և շուտ տաքացող մարդիկ են, բայց միևնույն ժամանակ շուտ սառչող են։ Այս տեսակ հատկություններըը, իրավ է, պատրաստում են հեղափոխականներ, բայց չեն պատրաստում ասպարեզ դուրս եկող հերոսներ։

Այս մարդիկը ազնիվ են և բարեմիտ. ցանկանում են, որ հայն էլ թոթափե Թուրքիայի լուծը, ազատ դրություն ունենա, և իր ազատության մեջ զարգանալ ու առաջադիմել սկսե։— Իսկ այդ վիճակին հասնելու եղանակների մեջ ոչ միայն անփորձ են, այլ անընդունակ են։ Ներկա հանգամանքները բոլորովին երևան հանեցին նրանց անընդունակությունները, որ իրանց ձեռքում ունենալով թատրոնական բեմը, լրագրությունը և դպրոցները, դարձյալ չկարողացան մի հաստատուն հող պատրաստել, որի վրա ոտը դնելով, վեր բարձրանար Թուրքիայի հայը իր ընկած դրությունից...։

Բայց կա. Կ. Պոլսում և մի ժողովրդական տարր, որ ներկայացանում է մշակ դասը։ Դրանք ըստ մեծի մասին Հայաստանից եկած գաղթականներն են, որ մայրաքաղաքում կատարում են ճնշալի, բուլումբաջիի, չոփչիի–ջրկիւղ, դայըկչու և ուրիշ շատ ստոր ծառայություններ։ Հայրենիքից հեռացած, այդ պանդուխտ հերոսներն են, որ ամեն անգամ մի ազգային ծանր հարց բարձրանալիս, շրջապատում են պատրիարքարանի չորս կողմը, դռներ և պատուհաններ են փշրում, աղմուկ բարձրացնում և արդարություն են խնդրում։ Այս թշվառ մշակները հայրենիքից դառն աղքատության հետ բերել են իրանց սրտի մեջ խորին վերքեր, որ գործել է մահմեդականի բռնակալ ձեռքը և այս պատճառով նրանց ավելի զգալի է Թուրքերի անտանելի լուծը։ Եվ ամեն բան կորցրած լինելով,— տուն, տեղ, հայրենիք,— նրանք այլևս ոչինչ կորցնելու չունեն, և առանց երկյուղի բողոք են բարձրացնում, ու իրանց թշվառ, անտեր ընտանիքների համար ազատություն են խնդրում, պատրիարքի օձիքից բռնելով...։

* *
*

«Մշակի» վերջին համարներից երևաց, որ Կ. Պոլսի պատրիարքը, գուցե անգլիական դեսպանի դրդելուց թելադրված, ներկայացրեց ազգային ժողովին մի ծրագիր, որով առաջարկում էր և

Հայերի համար խնդրել այն արտոնություններից մեկը, որ պիտի վայելեն սլավոնական ցեղերը Բալկանի թերակղզու վրա։ Ազգային ժողովը մերժեց պատրիարքի առաջարկությունը, հայտնի չէ ինչ հիմնավոր փաստերով։

Որքան մեզ հայտնի է, ազգային ժողովը ի նկատի է ունեցել այն, թե արևմտյան եվրոպական պետություններուն յուրաքանչյուրը առևելյան հարց պատրվակով միայն իրանց սեփական շահերն են որոնում,— և որովհետև Հայաստանի ազատությունը որևիցե կերպով նրանց շահերը չէ շոշափում, ուրեմն հայերի առաջարկությունը կմնար առանց հետևանքի կազմվելիք կոնֆերենցիայի մեջ։

Մենք չենք խոսում, թե որքան սխալ է այդ դատողությունը, միայն կասենք, թե Անգլիան կցանկանար Հայաստանը ազատ տեսնել, քան թե նրան մի ուրիշ պետության հետ խառնված տեսնել,— մենք հարկավոր չենք համարում նաև բացատրել, թե ինչ շահ ունի Անգլիան,— բայց դիցուք թե ուղիղ է ազգային ժողովի դատողությունը, որով նա մերժում է պատրիարքի ծրագիրը, միայն մի հարց առաջարկենք՝ ի՞նչ կկորցներ ազգային ժողովը, եթե կազմվելիք կոնֆերենցիային մի հայկական խնդիր առաջարկիր։

Մեզ կպատասխանեն, թե ազգային ժողովի ձայնը իր նպատակին չէր հասնի, և այնուհետև հայերը կկորցնեին իրենց հավատարիմ հպատակության համարումը և կասկածելի կդառնային Թուրքերի աչքում։ Մեզ կպատասխանեն գուցե մի ավելի ծայրահեղ բան, թե Թուրքերը հայերին ապստամբ համարելով, կսկսեին նրանց կոտորել Կ. Պոլսի մեջ։

Հավատարիմ հպատակությունը մի այնպիսի պետության վերաբերությամբ, որպես Թուրքիան է, նշանակում է կույր հնազանդություն, այսինքն՝ անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսություններըև հայերը մինչև այսօր իրանց հավատարիմ հպատակությամբ ոչինչ չշահեցին, միայն ծանրացրին իրանց ստրկության շղթաները։ Որովհետև բռնակալ պետությունները ավելի ակնածություն ունեն դեպի այն ազգերը, որոնք անհավատարիմ կամ կասկածավոր են, և այնպիսիների ձայնը կտրելու համար միշտ աշխատում են գրավել նրանց այս և այն պահանջները կատարելով։ Իսկ հավատարիմների վրա նայում են որպես մորթված զոհերի վրա... Այս խոսքերը ապացուցանելու համար բավական է օրինակ վեր առնել Թուրքիայի հույներին, որոնք միշտ կասկածելի են եղել կառավարության աչքում, և միշտ ավելի պատվավոր են եղել, քան թե հայերը և միշտ առաջադիմ։

Իսկ ինչ վերաբերում է մյուս հարցին, թե գուցե Թուրքերը գայրանալով կկոտորեին հայերին,— նախ, այսպիսի բան պատահել չէր կարող, քանի որ Անգլիայի նավատորմը կանգնած է Կ. Պոլսի պարիսպների տակ քրիստոնյաներին մահմեդականների բարբարոսությունից վերծ պահելու անունով։ Բայց եթե պատահեր էս մի այդպիսի անցք, որ հայերին կոտորեին,— նույնիսկ կոտրածի միջից կրարձրանար նրանց ազատությունը, որովհետև ուրանց արյուն, առանց զոհերի փրկություն չէ լինում...

Ուրեմն ժամանակ է, որ Կ. Պոլսի ազգային ժողովը իր պատրիարքի հետ գործե մի վճռական բայլ, տարտամ երկմտությունը այսպիսի հանգամանքներում ոչինչ օգուտ չէ կարող բերել։ Կոնֆերենցիան այսօր թե վաղը կկազմվի, եթե այս անգամ էլ չհաջողվեցավ բարձրացնել մի ճայկական հարց, այնուհետև Տաճկաստանի հայերի ապագան պետք է կորած համարել։

Դեռևս ուշ չէ։ Բայց երկար հապաղումը կկատարե հայերի գլխին ավետարանական այն առակը, թե «փեսան կգա, պատրաստները կմտնեն նրա հետ հարսանիքը, դռները կփակվեն, հետո կգան ինձար կույսերը, դուռը կբախեն ու կասեն. «բա՛ց մեզ, տեր», իսկ նրանց կպատասխանեն.— «չեմ ճանաչում ձեզ»...

Վերջացնելով մեր հոդվածը, այդ հարցն ենք դնում.— մի՞թե ընդհանուր հայոց վեհ. կաթողիկոսը պետք է անտարբեր մնա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վ. Ագուլիս, 11 նուեմբեր

Ես ստացա զանազան քաղաքներից մի քանի նամակներ շատ ստորագրություններով, որոնց մեջ համակրություն էին հայտնում «Ջալալեդդինի» վեպի վերաբերությամբ։ Հայ հեղինակի համար դա էլ մեծ մխիթարություն է, որ իր աշխատությունը գնահատվում է, եթե ոչ նյութապես, գոնե բարոյապես։ Ես ուրախ եմ տեսնելով, որ ստորագրությունների մեծ մասը պատկանում է նոր սերնդին, ռեալական գիմնազիոնի ուսանողներին.— երբ հեղինակի խոսքը արձագանք է գտնում մանուկ սրտերի մեջ, նա երջանիկ է...— Սերմը բարեբեր հողի վրա է ընկնում։

Սեղմում եմ ձեր ձեռքը, ո՛վ ապագայի թա՛ղմ հուլսեր, դուք ողջ լինե՛ք։

Ի՞ՆՉ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Եթե ներկան անցյալի շարունակությունն է, եթե ներկան ուղղելու համար պետք է օգուտ քաղել անցյալից, այդ կետից նայելով, մենք չենք սխալվի, եթե ասենք՝ Կ. Պոլսի պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը», որ պարունակում է իր մեջ Տաճկական Հայաստանի ամբողջ քառորդ դարի գործերի արձանագրությունները,— բավական է առաջնորդ լինելու համար, թե ո՛րպիսի վերանորոգություններ պետք է պահանջե Կ. Պոլսի հայոց պատրիարքը, որպեսզի այսուհետև հայերի վիճակն ապահով լինի և նրանք ազատվեն մինչև այսօր գործված անիրավություններից։

Քննելով պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը», մենք գտնում ենք, որ նա բովանդակում է իր մեջ գլխավորապես հետևյալ չորս կետերը. ա) անապահովություն ապրուստի և սեփականության, բ) անապահովություն կյանքի, գ) անարդարություն դատաստանի մեջ և իր իրավունքի պաշտպանության, դ) անապահովություն ազգային առանձնություններին։— Ուրեմն Տաճկաստանի հայերի վիճակը բարվոքելու համար գործ դրվելի վերանորոգություններն այն ժամանակ միայն կարող են նպատակահարմար լինել, երբ լիակատար բավականություն կտան վերոհիշյալ չորս կետերի բարվոքմանը։

Խոսենք յուրաքանչյուրի վրա առանձին։

Ա. Մենք ապրուստի և սեփականության անապահովություն *չենք համարում այն դեպքերը, որ հային հարստահարում են, նրա աշխատության արդյունքը նրա ձեռքից խլում են, և նա մշտապես ենթարկված է զանազան բռնաբարություններ և ավազակություններ,— ոչ, Տաճկաստանում սեփականության ապահովությունը և հետևապես ապրուստի դժվարությունը կայանում է գլխավորապես այն բանի մեջ, որ հայը հող չունի, այս պատճառով նա կյանքի հաստատուն հիմք չունի։ Հողի վերաբերությամբ մահմեդականի օրենքը բովանդակվում է այս վարդապետության մեջ. «Ամբողջ տիեզերքն աստծուն է պատկանում, սուլթանը աստծու խալիֆան կամ ներկայացուցիչն է երկրի վրա, իսկ հողը նրա սեփականությունն է»։ Այստեղից առաջ է գալիս այն ծիծաղելի սնահավատությունը, իբր թե մի երկիր, որի վրա ոտք է կոխում իսլամի թագավորը, պետք է նրան պատկանի։*

Հողի վերաբերությամբ բոլոր կալվածական օրենքները բխում են վերոհիշյալ վարդապետությունից. սուլթանը հողի տերն է, իսկ երկրագործը, մշակ դասը— նրա վարձկանը կամ կապալառուն։ Հայը հող ունենալու համար պետք է վարձե կառավարությունից, կամ տաճկական ասացվածքով խոսելով,— պետք է թափու անե. և այն օրից դադարում է նրա իրավունքը իր վարձած հողի վրա, երբ օրենքի պահանջած ժամանակներում չէ նորոգում իր կալվածագիրը, կամ չէ կատարում այս և այն պարտավորությունները, իսկ մի այսպիսի կալվածագիր պայմանագրի զորություն ունի, ավելի ոչինչ։

Այսպիսով ոչինչ չէ կապում երկրագործ դասին երկրի հետ և հետևապես մշակության կամ աշխատության հետ։ Եվ ի նկատի ունենալով այն անտանելի պայմանները, որով ծանրաբեռնվում է մշակը մի կտոր հող վարելու համար, շատ հասկանալի է լինում, թե ինչու նա թողնում է հայրենի երկիրը և հազարներով գաղթում է օտարության մեջ ապրուստ որոնելու։ Ուրեմն հային իր հայրենի երկրի հետ կապելու համար, գաղթականությունը դադարեցնելու համար, միակ և ամենակարևոր միջոցն է նրան իրավունք տալ ազատ կալվածատեր լինելու, որ նա, որպես սեփականություն իր հողն ունենա և նրանից ամեն կերպով օգտվելու իրավունք ունենա։ Դրանով կարելի է միայն հնար տալ գյուղացուն իր աշխատությամբ իր ապրուստը հայթայթելու։ Նա չպիտի լինի վարձակալ, այլ հողը պիտի լինի նրա համար մի հաստատուն ժառանգություն, որ անցնում է սերունդից սերունդ, որը նա կարող էր գնել, վաճառել, գրավ դնել, մի խոսքով, վարվել նրա հետ որպես իրան պատկանող սեփականության հետ։— Այդ պետք է լինի հայոց պատրիարքի պահանջելի գլխավոր վերանորոգություններից մեկը, եթե նա ցանկանում է, որ հայը արմատ ձգե Հայաստանի հողի վրա, պետք է նրա տերը լինի, պետք է նրանից ծծե իր սնունդը, որպես մանուկը մոր ստինքներից։ Իսկ ինչ վերաբերում է մուլթեզիմների (կապալառուների) հարստահարություններին, հարկերի ծանրությանը, որոնցով կողոպտվում է մշակ դասը, ինչ որ վերաբերում է զանազան բռնակալների և դերեբեկիների կեղեքումներին,— մենք համարում ենք այդ բոլորը ժամանակավոր անկարգություններ, որոնցից ազատ չեն մնում նույնիսկ մահմեդականները, և որոնք Թուրքիայի ընդհանուր բարենորոգումների ժամանակ միայն կարող են կարգի և օրինավորության մեջ դրվել։

Բ. Հայերի կյանքի անապահովությունը, քրդերից, չերքեզներից

և զանազան վայրենի ցեղերից անդադար կեղեքվիլը, որպես Սան-Ստեֆանոյի դաշնադրության 16-րդ հոդվածի, նույնպես և Բերլինի ավազաժողովի վճռի 61-րդ հոդվածի գլխավոր հիմունքն է կազմում։ Բայց որքան էլ աշխատե Թուրքիայի կառավարությունը՝ պահպանել անզեն հայերին զինյալ մահմեդականների բարբարոսություններից, անկարելի է, որովհետև իր բոլոր զինվորական ուժը, որով պետք է զսպել նրանց, նույնիսկ բարբարոսներից է կազմված։ Ուրեմն հայերին պետք է թույլ տված, որ իրանք պաշտպանեն, և այդ այլ կերպ լինել կարող չէ, բայց միայն իրավունք տալ, որ հայերը զեմ կրեն որպես իրանց դրացի ազգերը, և բացի դրանից, Թուրքիայի զինվորության մեջ իրանք էլ մասնակցեն։ Պետք է հայը ինքը հնար ունենա իր անձը պահպանելու, երբ կառավարությունը անկարող է։ Ով որ ծանոթ է Թուրքիայի կազմակերպությանը, մեզ հետ կհամաձայնվի, որ այդ երկրում անկարելի է ապրել և իր գոյությունը պահպանել առանց զենքի։ Թուրքիան բնակեցրած է այնպիսի ցեղերով, որոնք իրանց մեջ մշտապես կռվում են, որոնք միմյանց հետ մրցում են սրով միայն։ Ի՞նչով կարող է ընդդիմադրել նրանց անզեն հայը։

Գալով Թուրքիայի զինվորության մեջ մասնակցելուն, դա պետք է հայերի գլխավոր պարտավորություններից մեկը լինի ոչ միայն որպես Թուրքիայի հպատակ և քաղաքացի,— այլ մի այդպիսի ծառայությունը կազատեր նրանց պատերազմի ժամանակ արտաքին, իսկ խաղաղության ժամանակ ներքին թշնամիներից։ Հայերը առանց դրան էլ զինվորական տուրք են վճարում Թուրքիայի կառավարությանը և նույն տուրքով կարող են պահպանվել մի ազգային միլիցիա։ Ինչո՞ւ անպատճառ միլիցիա։ Ինչո՞ւ հայերը չպիտի մասնակցեն Թուրքիայի ընդհանուր զինվորագրության մեջ. կհարցնեն մեզանից։

Որքան մեզ հայտնի է, Թուրքիայի մասնավոր ազգերից և ոչ մեկը, որպես են՝ քրդերը, չերքեզները, արաբները և այլն, չեն մասնակցում Թուրքիայի զինվորագրությանը և չեն մտնում նրա կանոնավոր զորքերի թվում, այլ կազմում են առանձին միլիցիաներ, որոնք պատերազմից հետո դառնում են իրանց տները։ Ավելի ևս հայերին անկարելի է որպես զինվոր մտնել Թուրքերի կանոնավոր զորքերի մեջ, որովհետև զանազան կրոնական խտրություններ թույլ չեն տալիս այդ երկու ազգերին միմյանց հետ խառնվել, միմյանց հետ սերտ հարաբերություն ունենալ. և մինչև անգամ Թուրք զինվորը չի ցանկանա իր մեջ ընդունել ոչ-մահմեդականին։

Եթե հայերից պահանջվեն կանոնավոր զինվորներ և ոչ միլիցիա, այն ժամանակ ևս հայոց զինվորները պետք է առանձին գունդեր կազմեն Թուրքաց բանակի մեջ իրանց հայ զորապետներով։ Այսպես է եղել միշտ։ Արշակունյաց պետությունը վերջանալուց հետո, Հայաստանի ամբողջ մարզպանության գարերում, պարսիկների, այլև արաբացոց և Թաթարների տիրապետության ժամանակներում, և մինչև անգամ հույների ժամանակ,— միշտ հայոց զինվորները օտարազգիների բանակի մեջ առանձին գունդեր էին կազմում իրանց զորապետներով[1]։ Նրանք իրանց հետ ման էին ածում մինչև անգամ քահանաներ և եկեղեցական խորան։

Հայերին զանազան վայրենի ցեղերից պաշտպանելու համար կառավարության կողմից գործ դրված ամեն հսկողություն անօգուտ է, պետք է նրան հնար տալ, որ ինքն իր գլուխը պահպանե, և դա կլինի այն ժամանակ, երբ նա զենք կրելու իրավունք կունենա։ Այդ այլ բան կլիներ, երբ կառավարությունը իր բոլոր հպատակներին զինաթափ կաներ և ամեն անհատ նրա հովանավորության ներքո պաշտպանություն և կյանքի ապահովություն կգտներ։ Բայց Թուրքիայի կառավարությունը ոչ կարող է և ոչ կցանկանա այդպես անել։ Երբ սրանից մի քանի տարի առաջ խոսք եղավ քրդերին զինաթափ անել, այն ժամանակվա Թուրքիայի երևելի պետական մարդիկներից մեկը՝ Ալի փաշան ասաց.— «պետք չէ, քրդերը միշտ պատրաստի զորք են մեզ համար»։— Այո՛, պատրաստի զորք են, որ անգեն հպատակների հաշվով են ապրում. կառավարությունը պետք է օգուտ քաղե նրանցից, որպես և վերջին պատերազմի ժամանակ երևաց։

Մեր կողմից ավելորդ կլիներ խորհուրդ տալ, քանի որ գիտենք Կ. Պոլսի պատրիարքարանը լավ հասկացել է հայկական միլիցիայի կարևորությունը երկիրը ներքին թշնամիներից պահպանելու համար, և Բեռլինի ավազաժողովին մատուցած ծրագրի մեջ, այդ հարցը անցուցած էր նրա խնդիրների կարգում։ Միայն պետք է այժմ դարձյալ նույնը պահանջել, որ հայերը փոխանակ զինվորական հարկ վճարելու, նույն տուրքով պահեին իրանց երկրում միլիցիաներ, որոնք խաղաղության ժամանակ պահպանեին երկիրը ներքին

---

[1] *Նորին մեծության պարսից շահի ժամանակ, երբ հայերից զինվորներ առնվեցան, դարձյալ առանձին գունդեր կազմվեցան հայ զորապետների զորավարության ներքո։ Նույնիսկ պարսիկները թույլ չտվեցին, որ քրիստոնյա հայը խառնվեր իրանց հետ։*

հարձակումներից, իսկ պատերազմի ժամանակ օգնեին պետությանը։ Այլ կերպ ապահովություն քրդերի, չերքեզների և ուրիշ վայրենի ցեղերի բարբարոսություններից մենք չենք ճանաչում։

Գ. Թուրքիայի մեջ ոչ-մահմեդականների վերաբերությամբ իրավունքի պաշտպանության և դատաստանի մեջ անարդարությունն կտիրե միշտ, քանի որ դատավարության մեջ տիրում է շարիաթի օրենքը։ Եթե մտածենք, թե ոչ մի օրենք չէ կարող մշտական լինել, այլ նա պետք է հետզհետե փոփոխվի և կատարելագործվի, և որքան նորանոր ձևեր են ստանում նրա պետքերն ու պահանջները,— կարող ենք համարձակ ասել, որ շարիաթի այսքան դարերի ընթացքում հնացած և մաշված օրենքներն անբավարար և անհամապատասխան են ոչ միայն ոչ-մահմեդականների համար, այլ նույնիսկ մահմեդականների վերաբերությամբ, որոնց կյանքի նահապետական պարզ ձևերը շատ և շատ փոխվել են սկսյալ այն օրից, երբ այդ օրենքները հրատարակվեցան իսլամի մարգարեի բերանով և ամփոփվեցան ղորանի մեջ։ Անփոփոխ և մշտական օրենքները, որ տրվում են աստվածապետական ժողովուրդներին, ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ, մի ծանր կապանք, որ կաշկանդում է, քարացնում է ազգերը հավիտենական անշարժության մեջ։

Դժվար է պահանջել Թուրքիայից, որ նա փոխեր շարիաթը, որովհետև նա սերտ կապ ունի մահմեդականի կրոնի հետ, բայց կարելի է պահանջել, որ հայերի և առհասարակ ոչ-մահմեդականների վերաբերությամբ նա մնար անգործադրելի։ Ուրիշ կերպ անկարելի է, քանի որ այդ օրենքն իր մեջ ունի շատ սկզբունքներ, որ հակառակ են հավասարության գաղափարին, որ խորություն են դնում այն բոլոր ազգերի վերաբերությամբ, որոնք չեն պատկանում իսլամին։ Եթե մինչև այսօր սուլթանների հրատարակած բոլոր խաթթիները և ֆերմանները մնացել են անգործադրելի, պատճառը շարիաթի զորեղ ընդդիմադրությունն է և ոչ այլ ինչ։

Ուրեմն ի՞նչ միջոց կա շարիաթից ազատվելու։

Ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ Թուրքիայի կառավարությունը դեռ շատ առաջ մտածել է, որքան կարելի է, ազատ կացուցանել ոչ-մահմեդականներին և առավելապես հայերին շարիաթի կապանքներից։ Այդ երևում է այն արտոնությունից, որ Թուրքիան շնորհեց հայերին սահմանադրական վարչություն, բացի դրանից, գավառներում կազմվեցան խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից առանձին մեջլիսներ (ժողովներ) նրանց գործերը քննելու համար, որ այլևս ոչ-մահմեդականները

գործ չունենան ուլեմների և զադիների հետ։ Այսուամենայնիվ, թե սահմանադրությունը և թե գավառական մեջլիսները չկարողացան բավականություն տալ հայերին։ Ի՞նչու։ Որովհետև հայոց ազգային սահմանադրությունը ուներ ավելի կրոնական բնավորություն, նա չէր անցնում բուն ազգային գործերի սահմանից, որպիսին են դպրոց, եկեղեցի և այլն։ Իսկ գավառական մեջլիսները իրանց անկարգ կազմակերպությամբ ոչինչ օգուտ չէին բերում։

Մեր կարծիքով հայերին թուրքերի կառավարության դատաստանական անիրավությունից ազատելու համար նոր բան պահանջել ժամանակ չէր, գուցե չէին տա և։ Հարկավոր է պահանջել, որ լրացնեն, կատարելագործեն այն արտոնությունները, ինչ որ մի անգամ շնորհված էր հայերին, թեև անկատար կերպով։ Մենք դարձյալ ի նկատի ունենք ազգային սահմանադրությունը և գավառական մեջլիսները։

Եթե հայոց ազգային սահմանադրությունը ընդլայնե իր նեղ շրջանը նոր իրավունքներով, եթե տրվին նրան և քաղաքական իրավունքներ,— եթե նա Կ. Պոլսի պարիսպներից դուրս գալով, տարածվի բոլոր հայաբնակ գավառներում,— այնուհետև մի այսպիսի վարչություն կարող էր հայերի թե եկեղեցական, թե քաղաքական և թե քրեական բոլոր գործերին բավականություն տալ, և հայերը ավելի պատրաստված լինելով մի այսպիսի վարչության համար, իրանց գործերը իրանց մեջ իրանց ձեռքով կվճռեին։ Բայց այս այսպես լինելուց հետո ծագում է մի հարց. ի՞նչպես և ո՞րտեղ պիտի վճռվեն այն գործերը, որ հայը ունի մահմեդականի հետ։

— Գավառական մեջլիսներում։

Գավառական մեջլիսների նպատակը որպես վերևում հայտնեցինք, եղել է վճռել զանազան ազգությունների գործերը, և այս մտքով հիշյալ դատարանների անդամներն ընտրվում էին խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից։ Բայց եթե մինչև այսօր նրանք իրանց նպատակին չծառայեցին, պատճառն այն էր, որ մեջլիսները զուրկ էին որևիցե որոշ օրենսդրությունից, գրավոր ոչինչ չկար, գործերի քննությունը լինում էր բերանացի կերպով և վճիռները կայանում էին միայն ձայների վրա, ոչ թե նրանց բազմությանը նայելով, այլ թե ձայնավորը որպիսի դիրք էր բռնած ժողովի մեջ։ Այսպիսի հանգամանքներում, հայտնի բան է, կամայականությունը մեծ դեր պիտի խաղար և գործերը պիտի վճռվին այն անձանց օգտին, որոնք ժողովի մեջ զորեղ պաշտպաններ ունեին. իսկ զորեղ պաշտպաններ կարող էին լինել մահմեդականները,

որովհետև ոչ-մահմեդականները միայն ձևի համար այնտեղ նըստած էին լինում։

Այստեղից երևում է, որ Թուրքիայի կառավարությունը սկիզբը դրած է այն հիմնարկութիւնների, որ պետք է բարվոքեին ոչ-մահմեդականների վիճակը, բայց անկարգ և անկանոն կերպով։ Նա շնորհել է հայերին ազգային սահմանադրութիւն, բայց անկատար. նա հիմնել է զանազան ազգութիւններից խառն մեջլիսներ, բայց առանց օրենքի։

Այսպիսի խառն մահմեդականներից և ոչ-մահմեդականներից կազմված մեջլիսներն այն ժամանակ միայն կարող են նպատակահարմար լինել, երբ կհիմնվեն եվրոպական օրենսդրութեան սկզբունքների վրա, երբ բոլորովին նոր կազմակերպութիւն կստանան։ Այսպիսի մի դատարանի պահանջ կար հայոց պատգամավորների Բեռլինի ավագաժողովին ներկայացրած ծրագրի մեջ, բայց նա բուն հայկական էր։ Մեր կարծիքով, պետք չէ վախեցնել Թուրքիային, իբր թե նրանից նոր բան է պահանջվում, հարկավոր է միայն արդեն հաստատված նորոգվածների ձևը փոխել,— այս քաղաքականութեանը պետք է հետևի Կ. Պոլսի պատրիարքարանն իր պահանջելի վերանորոգութիւնների մեջ։— Ընդարձակվելով հայոց ազգային սահմանադրութեան սահմանափակ շրջանը նոր իրավունքներով և տարածվելով բոլոր հայաբնակ գավառներում, այդ բավական կլիներ հայերին հնար տալ իրանց գործերը իրանց ձեռքով վճռելու, իսկ վերանորոգվելով գավառական մեջլիսները, կդյուրացնեին նրան դատաստանական հարաբերութիւններն օտարազգիների հետ։

Դ. Անապահովութիւն ազգային առանձնութիւնների։ Խոսելով ազգային առանձնութիւնների վրա, Թուրքիայի հայի վիճակը մեր առջև խիստ տխուր գույներով է նկարվում։ Մինչև այսօր մենք սխալ կարծիքի մեջ էինք. մենք այսպես էինք մտածում. «Հայոց ազգը մի կրոնական ազգ է, նրա հիմքը դրած է իր եկեղեցու վրա, իսկ մեր եկեղեցին կարող է ավելի հաստատուն մնալ Թուրքիայում, ուրեմն այստեղ կարող է պահպանվել և մեր ազգութիւնը»։—«Թե մեր ազգը այսօր գոյութիւն ունի, դրանով մենք պարտական ենք մահմեդականութեանը»,—ասում էր մեր երևելի մտածողներից մեկը։

Մենք ծողնում ենք վիճել այս կարծիքի դեմ, թեև հայը ամենևին կրոնական ազգ չէ, և ծողնում ենք հերքել մի այսպիսի երեխայական դատողութիւն, թեև լոկ կրոնքով մի ազգ մշտապես

պահպանվել չէ կարող, և քե եկեղեցին խիստ խախուտ հիմք է ազգության գոյությունը պահպանելու,— և ընդունում ենք, որ հայը իր կրոնով և եկեղեցիով կարող է միշտ հայ մնալ։ Բայց ո՞րտեղ հայոց կրոնը և եկեղեցին այնքան վտանգի ենթակա են, որքան Թուրքիայում։

Քե ի՛նչպես է կլանում մահմեդականությունը քրիստոնյա ժողովուրդներին, բավական է աչքի առաջ ունենալ այն բազմաթիվ մահմեդականացած հայոց գյուղորայքը, որ այժմ կարելի է տեսնել Փոքր Ասիայի ամեն կողմերում։ Բայց Թուրքիայում կա մի ավելի սաստիկ վտանգ հայոց եկեղեցուն քրիստոնյա միսիոներներից, որոնք ավելի ճարպիկ են, քան մահմեդականները, որոնք քարոզներով են կրոնափոխ անում, իսկ թուրքը բռնությամբ։ Ոչ մի երկրում կաթոլիկությունը և բողոքականությունն այնքան տարածված չէ հայերի մեջ, որքան Տաճկաստանում. համարյա ամեն տեղ մտել են նրանց քարոզիչները։ Էլ ի՞նչ խելքով ենք մտածում, քե մեր եկեղեցին Թուրքիայում ապահով դրության մեջ է, կրոնափոխությունն այսուհետև ավելի կասատկանա, երբ անգլիացիները Փոքր Ասիան իրանց հովանավորության տակ առնելով, կմտցնեն հայերի մեջ իրանց միսիոներներին[1]։ Մինչև այսօր հայտնված քարոզիչներն ամերիկացիք էին, այսուհետև կավելանան և անգլիականները, իսկ այդ վերջիններն ավելի հեշտ կերպով որսալ կարող են, քանի որ գիտենք, որ կրոնափոխ եղող հայերը ավելի եվրոպացիներից մահմեդականների հալածանքներից դեմ պաշտպանություն գտնելու համար են հեռանում մայրենի եկեղեցուց. և պաշտպանել անգլիացիները միշտ կարող են իրանց նոր հավատակիցներին։

Թուրքիայի խորամանկ քաղաքականությունը կարծես լավ էր ըմբռնել, քե ի՛նչ նշանակություն ունի կրոնափոխությունը հպատակ քրիստոնյա ազգությունների մեջ։ Նա տեսնելով, օրինակ, հայերին մի կրոնական ժողովուրդ, որ ուրիշ հիմք չէ ճանաչում իր ազգության բացի եկեղեցին, միշտ աշխատել է զբաղեցնել նրանց կրոնական երկպառակություններով, միշտ աշխատել է քակտել նրանց միությունը, թույլ տալով տարածվել հայերի մեջ կա-

---

1 Դեռ ռուս-թուրքական պատերազմից առաջ ինձ պատահեց Թավրիզում խոսել մի անգլիացի քահանայի հետ, որ վերադառնում էր Տաճկական Հայաստանից. նա հայտնեց, քե Լոնդոնում նպատակ կա քարոզիչների մի առաքելություն ուղարկել Հայաստան։ Այդ մարդը ուղարկվել էր հետազոտել հողը...

թոլիկութեան և բողոքականութեան։ Հին սուլթաններն ազգայնութեան ավելի հիմնական արմատին էին զարկում—լեզվին, և որի պատճառով հայտնվեցան այնքան բազմաթիվ տաճկախոս և քրդախոս հայեր, որ մինչև այսօր էլ կան, թեև հայոց եկեղեցուն են պատկանում։ Իսկ վերջին սուլթանների ժամանակ սկսեցին քրիստոնյա ժողովուրդների ուժերը թուլացնել և նրանց ազգային միութիւնը բաժանել կրոնական հերձվածներով։

Թուրքիայի քաղաքականութիւնը չէր բավականանում, որ հայերից նոր եկեղեցիներ էին բաժանվում, այլ աշխատում էր այդ վերջիններէի մեջ ևս հերձվածներ տարածել, որպես եղավ հայ-բողոքականների և հայ-կաթոլիկների մեջ։ Այդ մասին բավական է հիշել հասունյանների և հակահասունյանների կռիվը, որ մի քանի տարիներ տևեց, և եթե կառավարութիւնը օգնեց հակահասունյաններին, ոչ նրանց ավելի ազատամիտ ձգտումների համար էր, այլ որ նրանք մի նոր հերձված էին կազմում հայ-կաթոլիկների մեջ, մի չափով տկարացնում էին նրանց ուժերը։ Այժմ լսում ենք կրկին ներս թողեցին Հասունին Կ. Պոլիս, երևի հին երկպառակութիւնները նորոգելու համար։

Առհասարակ Թուրքիայի քաղաքագիտութիւնը մենք շատ միամիտ ենք համարում, քան թե չնայելով, որ նա իր մոնգոլական խաբեութեան վրա պատվաստել է բյուզանդական խորամանկութիւնը։ Նա գիտե իր հպատակ ժողովուրդների մեջ միշտ խռովութիւններ սերմանել, նրանց միութեան կապերը խզել։ Ով որ ուսումնասիրել է Կ. Պոլսի հայոց լրագրութիւնը, կհիշե, որ Երուսաղեմի ս. Հակոբա վանքը մի երկպառութեան խնձոր է Կ. Պոլսի հայոց և հունաց պատրիարքարանների մեջ. ամեն տարի սուրբ Հարութեան տոնին ի՛նչ անկարգութիւններ են պատահում հայ և հույն աբեղաների մեջ, շատ անգամ կռիվներն արյունահեղութեան են հասնում, բայց այսքան տարիների ընթացքում կառավարութիւնը վերջ դրե՞ց նրանց վեճերին, թեև չնչին բաներ են։

Այժմ կարծեմ ընթերցողը մեզ հետ կհամաձայնի, թե ինչ վտանգ է սպառնում հայոց եկեղեցուն Թուրքիայում, և եթե դա պետք է լինի ազգի գոյութիւնը պահպանող հիմունքը, նրա կյանքը խիստ երկբայական է... Բեռլինի դաշնագրի համեմատ Թուրքիայի խոստացած «կրոնի ազատութիւնը» մի նոր ասպարեզ պիտի բաց անե եվրոպացի քարոզիչների առջև, և հայերը Փոքր Ասիային հովանավորող անգլիացիներից պաշտպանութիւն գտնելու հուսով պիտի զոհեն իրանց կրոնը. ո՞վ կարող է մրցութիւն անել նրանց

հետ,—մեր անհոգ հոգևորականությո՞ւնը, թե մեր թեթևսոլիկ ուսումնականները...— Ո՛չ ոք մեր կարծիքով։ Այժմ կմնա Թուրքիայի հային թողնել եկեղեցին, թողնել կրոնն անհատների խղճի վրա և ձեռք մեկնել հայ-կաթոլիկին, հայ-բողոքականին և հայ-մահմեդականին, ասել նրանց. «մենք եղբայրներ ենք, մենք միասին պետք է բաժանենք մեր ներկան և ապագան, թող եկեղեցին բաժանե մեզ, միացնենք մեր ուժերը և միասին գործենք»։

Վերջացնելով մեր հոդվածը, կհամառոտենք մեր կարծիքն այս խոսքերով. այժմ, որ Կ. Պոլսի պատրիարքը վրաղված է Թուրքիայի հայերին տրվելի վերանորոգություններով, նախ և առաջ պետք է միանա հայ-կաթոլիկների և հայ-բողոքականների ներկայացուցիչների հետ, և որպես ընդհանուր ազգային գործ, գլխավորապես պետք է ի նկատի ունենա հետևյալ պահանջները. ա. երկրագործը, գյուղացին սեփական հող ունենա և նրան ապահովություն տրվի ազատ մնալ հին բռնավորների, հարստահարիչների ավազակություններից։ Բ. հայերը իրավունք ունենան զենք կրելու, որպես իրանց դրացի ազգերը, և փոխանակ զինվորական տուրք վճարելու, նույն վճարով կազմեն ազգային միլիցիա զանազան վայրենի ցեղերից—քրդերից, չերքեզներից—իրանց կյանքը և կայքը պահպանելու համար։ Գ. Հայոց ազգային սահմանադրությունը, նոր իրավունքներով և արտոնություններով կատարելագործվելով, տարածվի բոլոր հայաբնակ գավառներում։ Դ. Ազգը և ազգային առանձնությունները պահպանելու համար այնպիսի կարգադրություններ լինեն, որ սահման դրվի մահմեդականների մոլեռանդությանը, և բռնի հավատափոխություններին, առևանգություններին վերջ դրվի։ Այլև վանքերի և ազգային դպրոցների առաջադիմությունը սահմանափակող Թուրքիայի գործ դրած խորամանկ միջոցները հեռացվին, որ ուսումը և կրթությունը անարգել ընթացք ստանա։

Ժամանակ է թոթափել հին նախապաշարմունքների փոշին, ժամանակ է ձեռք առնել դպրոցը, որպես մի նոր կապ մեր և մեզանից օտարացած ազգայինների մեջ,—որպես մի նոր ավազան, ուր հայ-կաթոլիկը, հայ-մահմեդականը և հայ-բողոքականը կմկրկրտվեն նոր հոգով և նոր կյանքով և կդրոշմվեն ազգայնության անունով.—դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանեց եկեղեցու ավազանը...

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ

Հայդուկ բառը չէ նշանակում գող, ավազակ, կամ վտարանդի հէուզակներ. դա նուլն նշանակութլունն ունի, ինչ որ էին հունաց կլիֆտները նրանց ապստամբութլան ժամանակ, կամ...[1] սուլիոտները։ Հայդուկը բնական արտահայտութլուն է բռնակալութլան լծի տակ ճնշված, հարստահարութլունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի։ Հայդուկը տորուկի բողոքն է իշխողի բարբարոսութլան դեմ։ Նա թողնում է ընտանեական օջախը, որ իր համար պղծված էր, նա թողնում է յուր հասարակութլունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում, և այնտեղ, որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին, սկսում է տիրել ամայութլան վրա։ Բնութլունը միանում է հաջող ձեռքի հետ, և հայդուկը իր որջից մահ և սարսափ է սպառնում իր շրջակայքի վրա։ Իրավ, նա մորթում է, կողոպտում է, այրում է մարդկանց բնակարանները, բայց այդ բոլորը գործում է, որպես նեղված ժողովրդի բարկութլան ոգին, որ վրեժխնդրութլան մեջ բավականութլուն է գտնում։

Հայդուգը հասարակ ավազակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակութլան ագահութլունից դրդված, կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը,—այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք և ազատութլան բաղձանք։ Հայդուկի գործունեութլութլունը հեղափոխական բնավորութլուն է ստանում այս կողմից, որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին, և ուխտում է ամբողջ պատժել անիրավութլունը։ Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից—ահա դրանք են նրա ցանկութլունները. սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ։

Մեզանում դեռ գրականութլունն ուշադրութլուն չէ դարձրել այս տեսակ երևութլթների վրա. հայդուկները, ավազակները մեզ մոտ դեռ չեն մտել վեպերի կամ բեմական գրվածքների մեջ, թեև նրանք խիստ հաճախ հայտնվել են և անհետացել ժամանակի հոսանքի հետ։ Հայդուկը և ավազակը չեն ճանաչվել մեզանում որ-

---

[1] Բնագրում պակասում է մի բառ։ Ծանոթ. «Արաքս» ամսագրի խմբ.»

պես պատմական անձնավորություններ,— որպես հանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանգած քաջագնական կյանքից։

Մի գրող միայն, հանգուցյալ Աբովյանը, իր գրքի մեջ դուրս բերեց այդ կենդանի ժողովրդական տարրը,— նրա Աղասին իր խմբով ուրիշ ոչինչ չէ եթե ոչ հայդուկների մի հրոսակ։

Դեռևս մոտ ժամանակներում հայտնվեցան եթե ոչ հայդուկներ, բայց նշանավոր ավազակներ, որպես էին՝ Ղարաբաղցի Քեշիշօղլին, երևելի Ադիկյոսպել պարսկի ընկերը, Սզիկը, Սզնակը, Քոչոն, Ասատ-բեկի ընկերը։ Դրանց գործերի մեջ որքան լսել եմ, կա շատ ինչ բանաստեղծական և վիպական։ Բայց նրանց մոտ ծանոթները գոնյա չգրեցին նրանց կենսագրությունը։ Հայ ավազակապետները ռուսաց և պարսից պատերազմի ժամանակ, ռուսաց և տաճկաց պատերազմների ժամանակ, միշտ մեծ դեր են խաղացել հայ գեներալների ձեռքերի տակ, որպես էին Մադաթովը, Բեբութովը, և այս վերջին պատերազմում Լորիս Մելիքովը ու Տեր-Ղուկասովը։

Տեսնելով, թե ինչ տպավորություն գործեց իմ «Ջալալեդդին» փոքրիկ վեպիկը ընթերցողների վրա, ես քաջալերվեցա իմ վաղվա գրած մի աշխատությունը լույս ընծայել, որ կրում է անունս «Հայդուկներ»։ Դա, որպես կտեսնի ընթերցողը՝ հայդուկների մի խումբի հիշատակարանն է, որ գոյություն է ունեցել մոտ 70 տարի առաջ, որի մասին դեռ երեխայությունից ես շատ ավանդություններ էի լսել՝ իմ հայրենիքում, և որի մասին տեղական լեգենդական զրույցները դեռ չեն կորել Վասպուրականի հայ ժողովրդի բերանից։

Ես նպատակ չունեի այսպես շուտ հրատարակելու այս աշխատությունը, ի նկատի ունենալով մի քանի թերություններ, որ պետք էր լրացնել, կրկին ճանապարհորդելով Վանի, Մուշի և առհասարակ Վասպուրականի կողմը, ուր հանդիսանում են մեր հայդուկները. ինձ պետք էին մի քանի վիպագրական ճիշտ տեղեկություններ, որոնք թռել էին իմ հիշողությունից, դեռ 15 տարի առաջ ճանապարհորդած լինելով այն կողմերում։ Իսկ այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե մեզանում պակաս չեն եղել տղամարդիկ, որ չղգային թուրքերի լծի դառնությունը և չաշխատեին ազատ լինել։

Ես իմ աշխատությանը հիշատակարանի ձև տվի, որովհետև նրանք քաղել եմ մի իննսունամյա ծերունու պատմությունից, որ պահված էր նրա հիշողության մեջ, և որ ինքն իմ նկարագրած խմբի նշանավոր անդամներից մեկն է եղել։

ՀԱՅ ԿԻՆԸ

«Կինը է այն առանցքը, որի շուրջը պտտվում է ընդհակերքությունը»:

Ինձ շատ անգամ պատահել է կարդալ հատ ու կտոր հոդվածներ հայ կնոջ մասին, շատ անգամ տեսել եմ նրա նկարագիրը փոքրիկ վեպիկների մեջ, բայց այդ բոլորն այն աստիճան անկատար են եղել և այն աստիճան հարևանցիորեն ներկայացրել են նրա տիպը, որ հազիվ թե ընթերցողը կարող էր ծանոթանալ ընդհանուր գծերի հետ: Առհասարակ շատ սխալ կարծիքներ են կազմվել արևելքի կանանց մասին ընդհանրապես, իսկ մեր մեջ հայ կնոջ մասին մասնավորապես: Մինչև անգամ նշանավոր հեղինակները, կամ պոեզիայով հափշտակված, նրանց պատկերացնում են որպես հարեմի զարդարանք, որպես ընտանեական սրբարանի կուռք, և կամ բոլորովին արհամարհելով, «ստրուկ» բառը տեղի և անտեղի կըպցընում են նրանց ճակատին: Եթե «կինը է մարդկային ընկերության գլխավոր քաղաքակրթիչ տարերքից մեկը»,—որպես ասում են գիտնականները,—ուրեմն պետք է լավ ուսումնասիրել նրան: Եվ այդ կլինի իմ հետազոտության նպատակը:

Ա

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Ես սկսում եմ գյուղացի կնոջից և գլխավորապես ի նկատի ունեմ Կովկասի հայ ազգաբնակությունը: Բայց խնդիրն ինքնըստինքյան շատ դժվարին է, մանավանդ այն պատճառով, որ Կովկասի հայ ժողովուրդը բաղկանում է զանազան տարերքից—առավել Տաճկաստանի, Պարսկաստանի և ուրիշ երկրների գաղթականներից, որոնց մեջ որքան խառնուրդներ կան, այնքան ավելի բազմատեսակություն կա թե՛ բարքերի, թե՛ սովորությունների և թե դեմքերի վերաբերությամբ:

Կյանքը դեռ բոլորովին չէ միակերպվել, և այս պատճառով անհնարին է մի որոշ դասակարգի ներքո զետեղել ամենին: Բայց բացառությունները միայն ցույց տալով, մենք դարձյալ կստանանք մի ամբողջ նկարագիր, որովհետև ընդհանուր գծերը բոլոր

գյուղացի կանանց մոտ, իրանց պատմական հատկանիշներով համարյա մնացել են միևնույնը։

Շատ անգամ մարդ զարմանում է, մտնելով մի մեծ գյուղական ընտանիք. նա բաղկանում է քսան, երեսուն և երբեմն քառասուն հոգուց—դա մի փոքրիկ պետություն է, որի մեջ տիրում է խորին ներդաշնակություն։ Ալևոր պապերը դարևոր հասակներով—թվով մի քանի եղբայրներ—դեռ կենդանի են. կենդանի են և ծերունի պառավները։ Նրանց շրջապատել են որդիները, թոռները, ծոռները,—մի քանի սերունդ իրանց կնիկներով և զավակներով։ Ընտանիքի պետը համարվում է նա, որ հասակով ամենից ավագն է, այսինքն «մեծ պապը». բոլոր անդամները հպատակում են նրա հեղինակությանը։ Նրանից հետո երկրորդ տեղն է բռնում մեծ տատը, որի իշխանությունը տարածվում է ավելի կանանց հասարակության վրա։ Եվ եթե դրանք չկային, «մեծ պապին» հաջորդում է եղբայրներից երեցը, իսկ պառավ տատին մեծ հարսը, այսինքն երեց եղբոր կինը։ Հնազանդությունը մինը մյուսին ընտանիքի փոքրիկից սկսվում է աստիճանաբար դեպի բարձր, մինչև հասնում է այն անձինքներին, որ համարվում են գերդաստանի գլխավորները։ Կանանց սեռը (բացի պառավ տատից) զրկված է ձայնի իրավունքից։ Այդ նախադասությունը պետք է հասկանալ իր բառացի նշանակությամբ. նրանք ոչ միայն չեն կարող խորհրդակցել տան պետքերի մասին, այլ խոսելն անգամ արգելված է նրանց։

Այդ ընդհանուր նկատողությունից հետո ընտանիքի կազմակերպության մասին, ես դառնում եմ դեպի գեղչկուհին, սկսելով նրա ծնունդից։

Գեղչկուհին չէ ծնում դաշտումը, բաց օդի ներքո, խոտի դեզի տակ, թուփերի կամ արտի մեջ, և երկունքից հետո անմիջապես սկսում իր աշխատությունը, որպես այդ լինում է մինչև անգամ բավական քաղաքակիրթ ազգերի գյուղացիների մեջ։ Ծնունդը մոտենալու ժամանակ մոր վրա խնամք են տանում, նրան հեռու են պահում ծանր աշխատություններից, թույլ չեն տալիս, որ շալակ վեր առնե, կամ աղբյուրից ջուր բերե։ Երբ ծնավ, մինչև մանուկի մկրտվելը, որ սովորաբար տևում է ութն օր, մայրն անկողնի մեջ պառկած է մնում։ Եթե ծնունդը տղա էր, նրա անկողինը շրջապատում են մի խումբ պառավներ, որոնք գործ են դնում իրանց ամբողջ կախարդական արհեստը մոր և նորածին մանուկի կյանքն անվնաս պահելու «չարքերից», «ալքերից», «քաջքերից», «դևե-

րից», «մեզնից աղեկներից», «սատանաներից» և այլն։ Մանուկի օրորոցը նույնպես զրահավորում են բժժանքներով, հուռութքներով, մահկներով և մինչև անգամ տերտերի գրած «բրքիկներով»։ Իսկ աղջիկը վուրկ է մնում այդ նախախնամություններից։ Գյուղացին ծնունդի վրա չէ նայում որպես մի բնական երևույթի վրա, այլ նրա մասին ունի բազմաթիվ նախապաշարմունքներ։ Կնոջ անպիտղաբերությունը նախատինք է համարվում և այս պատճառով ամեն մի ծնունդ, մանավանդ տղայինը, թե աղամարդի և թե բարեկամների կողմից ընդունվում է ուրախությամբ։ Մորը կերակրում են արտաքո կարգի սննդարար կերակուրներով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է մեղրով պատրաստած ձվածեղը, որը նա ստանում է հարևաններից։ Իսկ աղջկա ծնունդը հանդիպում է խուլ դժգոհության, բարեկամները չեն գնում շնորհավորելու, կամ որպես ասում են՝ «աչքալուսանք» տալու ծնողներին։ Մեր գեղչկուհիքն ըստ մեծի մասին պտղաբեր են լինում, նրանք ծնում են երբեմն մինչև 40—45 տարեկան հասակը։ Ամուլ կինը պատիվ չուներ որպես ընտանիքի, նույնպես և հասարակության մեջ. նրա վրա նայում են որպես չբերք կովի վրա։ Գյուղացին շատ անգամ պարծենում է իր որդիների բազմությունով, որպես իր կապիտալով։ Եվ որքան ավելի աճում է կնոջ զավակների թիվը, այնքան նա կշիռ և իրավասություն է ստանում ընտանիքի մեջ. «Ես տասն տղամարդի մայր եմ»—լսվում է շատ անգամ նրա բերանից։ Բայց ափսո՜ս, որ երեխաների չափազանց մահացությունը, որ առաջ է գալիս վատ պահպանելուց, չեն բախտավորացնում ամեն մայրերին։

Մայրն ինքն է ծիծ տալիս զավակին, իսկ եթե նա տկար էր, կամ կաթը պակաս էր, օգնում են հարևան կնիկները։ Մինչև հետո մայրը մինչև [1]առասուն օր ցերեկով իր օթևանից ոտքը դուրս չէ դնում, «արևի երես չէ տեսնում», այլ «քառասունք» է պահում։ Նա դուրս է գալիս, երբ արեգակը մայր է մտնում, մութը բավական պատում է, այն ժամանակ կտուրի վրա կամ բակումը կարող է մեն գալ, բայց հարևանի տունը գնալ չէ կարող։ «Քառասունքն» ունի խորհրդական նշանակություն ծննդաբերության վերաբերությամբ, որը կապված է գանազան սնոտիապատումների հետ։ Բայց թեև դա մի կողմից վնասում է կնոջ առողջությանը, մինչև քառասուն օր փակված պահելով տան չորս պատերի մեջ, իսկ

---

1 «Քառասունքի» սովորությունն այժմ շատ տեղերում անհետանալու վրա է։

մյուս կողմից. բավական նպաստում է մորն ամբացնելու իր ըստպահված ուժերը և հետու մնալու դաշտային ծանր աշխատութիւններից, որ կարող էին վնասել նրան ծնունդից հետո։

«Աղջկա երեսը պինդ կլինի,—ասում է գյուղացին,—նրան ե-թե ջրաղացի քարի տակն էլ գցես, էլի ոյզ կդուրս գա»։ Այս պատճառով նրան համարյա թե թողնում են բախտի կամքին։ Աղջկա խնամատարութիւնը սկսյալ ծնունդից այն չէ, ինչ որ տղաներինը։ Նրան շատ անգամ ձգում են տանը բոլորովին մենակ, կապած օրորոցի մեջ. մայրը չէ վեր առնում իր հետ, որ չխանգարեր դաշտային գործերում, ողորմելին ամբողջ օրը ճչում է, աղաղակում է, մինչև ձայնը իսպառ կտրվում է։ Խիստ սակավ է պատահում, որ հարևանի կինը նրան օգնութիւն հասներ։ Պատահում է ևս, որ փոքրիկ երեխան օրորոց էլ չունի, նրան թողեցին տանը քնած մի շորի կտորի վրա, հանկարծ նա զարթնում է և լաց է լինում. մայրը չկա. նա սկսում է սողալ հատակի վրա, կարծես թե պտրելու մորը, և այսպես հասնում է թոնրի մոտ, մի շարժում բավական է, որ նա ընկնի այդ կրակի խորի մեջ... Ինձ շատ անգամ է պատահել տեսնել գյուղերում կիսով չափ խորոված երեխաներ, կամ չափահասներ, որոնց երեսի և ձեռների վրա դեռ երևում են վերքի նըշանները. երբ հարցնում ես պատճառը, պատասխանում են, թե երեխայութիւնս ժամանակ ընկել եմ թոնիրի մեջ։ Ընկնողները մեծ մասամբ ածուխ են դառնում։ Բայց աղջկա մահը, ինչ կերպով և հասնելու լիներ, պատճառում է ծնողներին ներքին բավականութիւն։ Ավելորդ բերը հեռացվում է ընտանիքից։

Երբ երեխան մեկ տարին լրացնում է, մայրը նրան իր հետ է առնում, երբ պետք էր գնալ դուրսը գործելու։ Այդ նրան շատ զվարճացնում է։ Նստած մի ծառի ներքո, դալար խոտերի վրա, նա հանդարտ և հետաքրքիր աչիկներով նայում է մոր աշխատութիւնը։ Շատ անգամ անձրևը և կարկուտը պատահում են նրան նույն դրութեան մեջ, և փոքրիկ գեղջկուհին երեխայութիւնից սկսում է սովորել եղանակների խստութիւններին։ Ամեն անգամ, երբ լաց է լինում նա, մայրը աշխատում է հանգստացնել ապտակներով։ Մի անգամ ես ուխթ ունեցա հարցնել մորից, որ սաստիկ ծեծում էր երեխային, անդադար կրկնելով՝ «սո՛ւս», «սո՛ւս», թե ի՞նչու է այնպես վարվում։ Նա բավական սառնասրտութեամբ պատասխանեց. «ծեծում եմ, որ ձենը կտրի»։ Թեև ցավի սաստկութիւնից նա ավելի լաց էր լինում, ավելի ճիչ էր բարձրացնում, բայց մայրը չէր ուզում հանկանալ, թե ինքն է պատճառը։ Բայց աղջիկը շուտով

է հաշտվում իր վիճակի հետ. նա մանկությունից հասկանում է, թե ինքն իրավունք չունի պահանջել որ իր հետ մեղմ լինեին, քաղցրությամբ վարվեին, որովհետև նա աղջիկ է։

Երբ փոքրիկ գեղջկուհին սկսում է ոտքի վրա կանգնել, մանգալ, մայրը այլևս չէ նայում նրա վրա. «նա իր գլուխը կպահեց,— ասում են և թույլ են տալիս մենակ տնից դուրս գալ և գյուղական երեխաների հետ խաղալ փոշիների և ցեխերի մեջ։ Փույթ չէ, եթե ամբողջ օրը նա չէր վերադառնա, նրան մինչև անգամ մոռանում են, և ուրախ են, որ տանը մոր գործերը չէր խանգարում։ Իսկ 4—5 տարեկան հասակում նրան արգելում են տղաների հետ խաղալ։ Գյուղերում շատ անգամ պատահում են բոլորովին մերկ երեխաներ, որ թափառում են փողոցներում արեգակի այրող ճառագայթների ներքո, կամ թավալվում են ճահիճների ումորուտների (лужа) մեջ. բայց նրանց թվում հազիվ թե կարելի է մի աղջիկ տեսնել նույն դրության մեջ։ Սեռական խտրությունները, սկսյալ մանկությունից, սովորեցնում են փոքրիկ աղջիկներին տղաների մոտ արձակ չլինել։ Ո՞վ չէ տեսել Թիֆլիսում, Սաղի վրա, մալականի աղջիկները և կնիկները, տղամարդերի հետ խառն, բազմության աչքի առջև, լողանում են կուր գետի մեջ։ Բայց մեր գյուղերում անկարելի է տեսնել, որ մինչև անգամ 4—5 տարեկան աղջիկներն իրանց հասակակից տղաների հետ լողանային առվակների մեջ։ Աղջիկները լողանում են իրանց սեռակիցների հետ և ընտրում են առհասարակ ծածուկ տեղեր, կամ երբ մութը բավական պատել էր երկրի վրա։ Տղաները, թեև ավելի սիրվում են ծնողներից, բայց միշտ կտեսնեք նրանց կիսամերկ, կեղտոտ և պատառոտած շորերով։ Բայց աղջիկը, չնայելով իր ստոր նշանակությանը, համեմատաբար ավելի մաքուր հագնված է լինում, նրա վրա մերկությունն չէ նշմարվում. այս դեպքում ծնողները նրան չեն զրկում։

Աղջիկն արդեն յոթ-ութ տարեկան է. հասել է ժամանակը, որ պետք է մի բան սովորի։ Դժբախտաբար մեր գյուղերում դեռ չկան աղջկանց դպրոցներ և եղածներն այնքան փոքրաթիվ են, որ պետք է բացառություն համարել։ Նրանց ուղարկում են շատ գյուղերում մի տեսակ կանանց մոտ, որ կոչվում են «ուստա» (վարպետ), որոնք վարժուհու պաշտոն են կատարում։ Վարժուհու մոտ օրվա մեծ մասը աշակերտուհիները զբաղված են լինում նրա տնային գործերով. դա մի կողմից վարժեցնում է նրանց տնտեսության մեջ։ Երբ գործերը վերջացել էին, վարպետուհին նստեցնում է նրանց իր բոլորտիքը և սովորեցնում է կարել, հյուսել և ուրիշ ձեռագոր-

ծուխ չունենան։ Կարդալ նրա մոտ չեն սովորում, որովհետև խիստ հազիվ է պատահում, որ այդ տեսակ վարժուհիները գրագետ լինեին։ Վարպետուհին և դաստիարակի պաշտոն է կատարում, ծեծում է և պատժում է իր սանիկներին, երբ նկատում է մի անկարգություն։ Ամեն մի այսպիսի վարժուհու մոտ հավաքված են լինում հնգից մինչև տասն կամ ավելի աշակերտուհիներ, որոնց ծնողներից ստանում է նա իբրև վարձ տոն օրերում զանազան ընծաներ։ Այստեղ աղջիկը պատրաստում է այն բոլոր հագուստները և ուրիշ ձեռագործները, որ պսակվելու ժամանակ պետք է օժիտը կազմեին։ Եվ այս պատճառով վարժուհին ստանում է առանձին պարգև փեսայի կողմից, երբ հարսանիքի ժամանակ նորահարսի ձեռագործները հանդեսի էին տրվում և կնիկներից հավանություն էին գտնում։ Վարժուհիները լինում են ըստ մեծի մասին փորձված և հասակ առած կանայք. նրանք շատ անգամ գործելու միջոցին իրանց սանիկների ուշադրությունը զբաղեցնում են հեքիաթներով, առակներով և առածներով. իսկ երբեմն բացատրում են աշակերտուհիներին զբաղեցնող երևույթները, կամ մեկնում են երազներ։ Այս շկոլայից նրանց գլուխները լեցվում են անթիվ նախապաշարմունքներով։ Աղջիկները երթևեկում են վարժուհու մոտ մինչև իրանց մարդի գնալը։ Պատահում է, որ աղջիկներին վարժուհու մոտ չեն ուղարկում. նրանք սովորում են տանը կամ մոր և կամ հարսներից մեկի դաստիարակության ներքո և կամ ոչինչ չեն սովորում։

Չէ կարելի մի քանի խոսք չասել գյուղական օրիորդաց դպրոցների մասին։ Նրանց երկու տեսակի կարելի է բաժանել. մեկը շատ չէ զանազանվում մեր վերոհիշյալ վարպետուհու դպրոցից. մի կին, որ հազիվ գիտե գրել-կարդալ, հավաքում է իր մոտ աղջիկներ և սկսում է ուսում տալ. նրանք նստած են լինում հատակի վրա, նույնպես շարված վարժուհու բոլորտիքը, կամ խոսում են, կամ կարդում են։ Մյուսը, որ կոչում ենք կանոնավոր դպրոց, ուր աշակերտուհիները երկար նստարանների վրա են սովորում, կավիճով են գրում, ուր վարժուհին միայն հսկող է, իսկ դաս են տալիս վարժապետները—այսպիսի դպրոցներ մի քանի գյուղերում միայն կարելի է գտնել։ Առհասարակ գյուղացին նայում է դպրոցին որպես մի անբարոյականացնող հիմնարկության վրա։ Այս կարծիքին պատճառ է տվել նախ ընտանեական փակ կյանքը, որ չէ ներում հասակ առած աղջկան հրապարակ հանել, երկրորդ դպրոցում սովորած աղջկա անմիաբանությունն ընտանիքի նահապետական

պայմանների հետ, իսկ երրորդ, դպրոցների վատ կազմակերպությունը և մասամբ վարժապետների գալթակղեցուցիչ վարքը։ Ոչինչ այնպես չէ կոտրում մի լավ հիմնարկության նշանակությունը ամակի աչքում, որպես նրա մեջ գործողների չար օրինակը։ Գյուղացին իր աղջիկը տալիս է դպրոցը շատ փոքր հասակում, այսինքն այն հասակում, որ նրան կարելի է ամեն մարդու մոտ թողնել։ Բայց հենց որ աղջկա կուրծքը բարձրանում է, նա 12—13 տարեկան է դառնում, իսկույն դուրս է բերում, ամենևին չնայելով թե ոչինչ չէ սովորել։ Նա սովորում է, իրավ, մասնավոր գրել կարդալ, որը հոր տունը դառնալուց հետո անգործածությունից համարյա մոռանում է։ Խիստ սակավ են այն դպրոցները, ուր ուսուցանում են հաշվել, աշխարհագրություն և քրիստոնեական վարդապետություն։ Մեր գյուղական դպրոցների անբավականացուցիչ վիճակը գլխավորապես այն բանի մեջ պետք է որոնել, որ թե աշակերտները և թե աշակերտուհիքը երկար չեն մնում դպրոցում։ Վերջիններին, այսինքն աշակերտուհիներին շուտ դուրս տանելու պատճառը հայտնի է, բայց տղաներինը բոլորովին այլ է, ծնողքը կամենում են օգուտ քաղել նրանց աշխատությունից իրանց գյուղատնտեսական գործերում, և այս պատճառով տարվա այն եղանակներում, երբ դաշտումը աշխատություն կա, մանուկներին չեն թողնում դրպրոցում։ Նա սովորում է գլխավորապես ձմեռը, և տարվա մնացած ժամանակում սովորածը մոռանում է։

Աղջիկից շատ գործ չէ պահանջում գյուղացին, միայն մտածում է շուտ մարդու տալ։ Թե դպրոցը նպատակահարմար լիներ, գյուղացին կցանկանար, որ իր զավակն այնտեղ պահվեր մինչև պսակվելը։ Նա կթողներ աղջկան դպրոցում, որպես մինչև մարդու գնալը թողնում է վերև հիշած վարպետուհու մոտ, և բնավ կասկած չէր ունենա, թե իր զավակը կփչանա այնտեղ։ Բայց ինչ պետք է արած, որ աղջկանց դպրոցները նպատակահարմար լինեին։ Իմ կարծիքով կրթության գործի մեջ պետք է ի նկատի ունենալ ժողովրդի սովորությունները, քանի որ ժողովուրդը դեռ անպատշաճ է համարում իբ աղջկա վիճակը տղամարդ-վարժապետի ձեռքը հանձնել, քանի որ այս վերջինն այնքան անընդունակ է, որ իր պաշվությամբ չէ կարողանում ոամկի վստահությունը շահել. մնում է մի հնար գյուղացի աղջիկներին դպրոցի հետ կապելու, այն է, որ փոխանակ տղամարդերի, կանայք լինեին նրանց ուսուցիչները։ Ես այդ փորձով գիտեմ, որ կանանց մոտ գյուղացի աղջիկներն ավելի լավ են սովորում և ավելի ազատ են զգում իրանց, մինչդեռ

տղամարդերի մոտ սեղմված են և անհամարձակ, մանավանդ կոշտ-կոպիտ մեր «խալֆաներին» մոտ, որ պատժական քանոնը ձեռքից չեն գցում, չնայելով, որ քնքուշ սեռի հետ գործ ունեն։ Ես դեռ մի օրիորդաց դպրոց եմ ճանաչում, ուր նախակրթարանի մեջ միայն աղջիկները տղաների հետ խառն են սովորում, բայց բարձր դասարաններում բաժանվում են։ Ցանկալի կլիներ, որ բոլոր գյուղական դպրոցներում աղջիկները և տղաները միասին սովորեին. դա երկու օգուտ կունենար, առաջինը, որ ժողովուրդը փոխանակ երկու դպրոցների կպահեր մեկը միայն և ազատ կմնար ավելորդ ծախսերից, իսկ երկրորդը, աղջիկները և տղաները միասին սովորելով, կընտելանային միմյանց, այսպիսով կ'կազմվեր նրանց մեջ քույր-եղբայրությունը, կլինեին մեկ ընտանիքի-դպրոցի զավակներ, և դա միայն կարող է փշրել մեր մեջ տիրող հին նախապաշարմունքի կապանքը, որ աղջկանից պատրաստում է կանանոցի գերի և խլում է նրանց տղամարդի հասարակությունից։ Եվ այս տեսակ խառն երկսեռ դպրոցներն ավելի լավ կլինեին, որ կանանց ձեռքը հանձնվեին։ Մեր գյուղերում բարոյականության դեմ ամենևին վտանգ չէ կարելի սպասել դպրոցների հիշյալ կազմակերպությունից, որովհետև թե՛ աշակերտները և թե՛ աշակերտուհիները շատ փոքրիկներ են լինում, բացի դրանից, գյուղական երեխաներն ավելի անմեղ և համեստ են լինում, քան թե քաղաքացիները։

Խոսենք այն ժամանակի մասին, երբ ծնողքը փոքրիկ աղջկան դուրս են տանում դպրոցից, կամ վերև հիշած վարժապետուհու տնից։ Դա նրա հասակի փոթորկային ժամանակն է։ Աղջիկն այժմ 13—14 տարեկան է։ Այդ տարիներում հասունանում է նա և մնակ տնից դուրս չեն թողնում։ Նա գնում է այգին, պարտեզը, դաշտը մոր հետ միասին, կամ տան հարսներից մեկի հետ։ Միշտ երկու հսկող աչքեր անպակաս են նրա մոտից։ Նա գնում է աղբյուրից ջուր բերելու հարևանների աղջիկների հետ. մի քանիսը միայն հավաքվում են և խումբ են կազմում, դրա համար որոշված են վաղ առավոտյան և երեկոյան պահերը, երբ փողոցները դատարկ էին մարդիկներից։ Հսկողությունը թեև կատարվում է խրոտությամբ, բայց աղջիկը չէ նեղանում, և ոչ կարող է երևակայել, թե դա անվայելուչ էր։ Նա այնպես համոզված է, թե այլ կերպ լինել անկարելի էր, թե իր հասակում անպատշաճ էր աղջկան մինակ տնից դուրս գալ կամ հեռու տեղ գնալ, և անտրտունջ խոնարհ-

վում է սովորության առջև։ Աղջիկը միշտ իրան այն դալար ծառի դրության մեջ է զգում, որ առանց նեցուկի իսկույն ցած կընկնի։

Բայց կան գյուղեր, ուր համեմատաբար արձակ է կյանքը, այստեղ ամենայնիվ չենք տեսնի հասակ առած աղջկան մինակ դաշտումը, բացառությունները շատ աննշան են։

Իսկ ինչ որ վերաբերում է ընտանեական կրթությանը, նա միանգամայն պայմանավորվում է աղջկա ապագայի հետ—նրանց նախապատրաստում են մի կրավորական էակ, որպիսին պետք էր մի նահապետական գերդաստանի անդամ լինելու համար։ Հնազանդությունը, լռությունը, ամոթխածությունը և պարկեշտությունը նրա վարքի անպայման օրենքներն են։ Նա տնեցիների հետ շատ սակավ է խոսում, իսկ օտարների հետ ամենևին չէ խոսում։ «Այնքան լավ աղջիկ է, որ միսը կտրես, ձայն չի հանի»—դա ամենամեծ գովասանքն է նրա բարքի մասին։ Բոլորովին չինեյական տրպավորություն է գործում, երբ հանդիպում ես գյուղացի աղջկան մինակ կամ մոր հետ փողոցում գնալիս, նա աչքերը գցած ունի դեպի գետին, մարդի երեսին ուղիղ չէ նայում, այլ մի կողմ է քաշվում, կանգնում է, խորին կերպով գլուխ է տալիս, և սպասում է մինչև տղամարդն անցնի։ Փույթ չէ, եթե նա անծանոթ մարդ լիներ։ Այսպես վարվում են և ամենափոքրիկները և հասակավոր կնիկները։ Մի գյուղում ինձ պատմեցին, թե աղջիկներն ու կնիկներն առաջ ավելի համեստ էին, երբ փողոցում տղամարդիկ հանդիպում էին, բացի գլուխ տալը, մոտենում էին և նրա ձեռքը համբուրում էին։ Այդ արդեն չափից դուրս է, որ մեր պարտավորությունը նրանք կատարեին։

Աղջիկից շատ սակավ են պահանջում դրսի գործերը, նա ավելի աշխատում է տնային տնտեսության մեջ, կամ որպես ասում են, պտտվում է «օջախի» չորս կողմը։ Այդ բանի մեջ նա հլու սպասուհի է. նրան միայն հրամայում են «այս բե՛ր» և «այն տա՛ր». իսկ միջամտություն գործել կերակուրների պատրաստության մեջ, նա չէ կարող, այդ իրավունքը պատկանում է հասակավոր կնիկներին։ Գյուղական խոհանոցի ցուցակը բավական ընդարձակ է, քան թե առհասարակ լինում է գյուղերում. բոլոր ուտիսվա կերակուրներն ունեն իրանց համապատասխանող պասվա կերակուրները։ Կանոնավոր տնտեսությունը բավական զարգացած է մեր գյուղերում, և դյուղացին, երբ կարողությունը ներում է, երբեք իր ընտանիքը կամ իր հյուրերին չէ զրկում ճոխ սեղանից, թեև նա միշտ մնում է խնայող։ Տնտեսությունից շատ բան է սովորում աղջիկն ընտա-

նիքի մեջ նկատողական կերպով, և երբեմն նրան թույլ են տալիս պրակտիկաներ անել։ Եթե նա եղել է դպրոցում, հոր տունը դառնալուց հետո գրքերը ծալում է և մի կողմ է դնում, բայց կարը, ձևը, հյուսելը նա շարունակում է ավելի եռանդով։

Ես դառնում եմ դեպի բարոյականությունը։ Երբ աղջկա հասակը տասնից անցնում է, նա սկսում է իր վրա մտածել. երբ տնից դուրս է գալիս՝ մազերը սանրված են լինում, աչքերը սուրմայած, նա բավական մաքուր հագնված և լվացված է լինում։ Բայց անձնատուր լինել կրքերի, նա երբեք չէ կարող։ Կյանքը սաստիկ անազատ է։ Աղջիկը կամ միշտ տանն է լինում, կամ եթե թույլ են տալիս դուրս գալ, նա առանց հսկողության չէ։ Այսպիսի պայմաններում, հասկանալի է, որ նա միջոց չի ունենա տղաների հետ արձակ հարաբերություններ ունենալ։ Ուրիշ ազգերի գյուղերում այսպես չէ. օրինակ, ռուսների մեջ հասակ առած աղջիկները կատարում են շատ դաշտային գործեր. նրանք գնում են խոտհունձ, գնում են արտը խուրձեր հավաքելու, անտառում մինակ սունկ են հավաքում, արածացնում են կովեր և հորթեր, և արձակ դաշտերի կամ անտառների թաքստյան խուլ տեղերում միշտ հանդիպում են տղաների։

Մեր գյուղերում այսպես չէ։ Ընտանեական խիստ պայմաններն աղջկան երկաթի վանդակի մեջ են պահում։ Նա սիրո վրա մտածելու ոչ ժամանակ ունի և ոչ կարող է։ Թեև հասակը և բնազդումը շատ բան ուսուցել են նրան, բայց նա խեղդում է իր կըրքերը սրտի մեջ։ Լինում են խիստ հազիվ դեպքեր, որ աղջիկը զոհ է դառնում կրքերի, և եթե նա մայր էր, իր նախատինքը թաքցնում է ինքնասպանությամբ։ Իրան թունավորելը կամ խեղդամահ լինելը հասակ առած աղջիկների մեջ պատահում է երբեմն։

Կյանքի պայմանները չեն մոտեցնում տղաների և աղջիկներին մեկ-մեկու հետ։ Մեր գյուղերում չէ կարելի տեսնել, որ հասակ առած աղջիկներ խառն տղաների հետ խաղային փողոցներում կամ հրապարակների վրա, և կամ նստած միասին, գյուղական սովորության համեմատ, խոսակցեին տան դռների առջև։ Աղջիկները միշտ խաղում են իրանց սեռակիցների հետ, այն ևս ծածուկ տեղերում, հեռու տղամարդի աչքից։ Եկեղեցին, որ պիտի միացներ նրանց, ենթարկվում է ընտանիքի սովորության պայմաններին. տղամարդերի և կանանց տեղերը որոշված են։ Թողյալ այդ, եկեղեցին հաճախում են պառավները միայն, իսկ աղջիկները և մանկահասակ կիները գյուղերում եկեղեցին գնում են տարվա մեջ մի

քանի անգամ միայն, այսինքն՝ զատկին, երբ պետք էր հաղորդվել։ Ուրիշ հասարակական հանդեսներ չկան։ Երկու դեպքում միայն աղջիկները և տղաները կարող են տեսնել միմյանց, մեկը հարսանիքներում, մյուսը, եկեղեցիների տոնախմբության, կամ ուխտագնացությունների ժամանակ։ Երկուսն էլ շատ նման են միմյանց՝ թե հարսանիքը և թե եկեղեցու տոնախմբությունը։ Ածում են, երգում են, պար են գալիս—կյանքը փոքր-ինչ արձակ շրջանակի մեջ է մտնում։ Բայց այդ դեպքերում ևս աղջիկը դարձյալ ազատ չէ, նա կարող է պար բռնել, երգել միայն իր ազգականների կամ մերձավոր բարեկամների հետ։ Աղջիկն այն ազատությունն է վայելում միայն, որ դեռ կին չդարձած, նրա երեսը չէ ծածկվում քողով, նրա աչքերը բաց են, կարող է նայել մեկի վրա, և կարող են ուրիշները տեսնել նրա դեմքը։ Այդ հնար է տալիս տղային գողանալ նրա դեմքից մի ծածուկ հայացք, մի ժպիտ... և իսկույն կազմվում է լուռ սիրահարությունը, թեև խիստ սակավ է պատահում, որ նրանք այնուհետև բախտ ունենային մյուս անգամ հանդիպել միմյանց, կամ պսակվել։

Վեպերում կարելի է տեսնել մեր գյուղական աղջիկների սիրահարությունները, բայց կյանքի մեջ դա սակավ է պատահում։ Եվ եթե լինում են դեպքեր, գործը վերջանում է առևանգությունով, այսինքն տղայի՝ աղջկան հոր տնից գողանալով, և առանց ծնողների կամքի, պսակվելով։ Այսպիսի հանգամանքներում ժողովրդական բոմանտիզմը խիստ խստությամբ է վերաբերվում դեպի սերը.—սիրահարների վարքը կծու պարսավներով երգվում է ժողովրդի բերանում։

Գյուղերում ամուսնությունները կատարվում են հաշիվներով։ Պսակվողների բախտը կարգադրում են ծնողները, որպես ցանկանում են։ Աղջկա և տղայի զգացմունքը տեղիք չունի գործի մեջ։ Պսակները լինում են միշտ հավասարը հավասարի հետ (կարողության կողմից) և ավելի աղջկա ծնողքը աշխատում են, որ իրանց զավակը մեծ տան հարս լինի։ Այսուամենայնիվ, այդ ցանկությունը մնում է լուռ, ամոթ կհամարվեր, եթե աղջկա ընտանիքի կողմից առաջարկություն լիներ։ Բանակցությունն սկսվում է փեսայի հոր կողմից զանազան պատգամավորների միջոցով, և աղջկա հայրը մինչև համաձայնելը իրանից բավական խնդրել է տալիս։ Ամուսնությունները կատարվում են առհասարակ մինչև 15 տարեկան հասակը։ Գյուղերում հազիվ կարելի է տեսնել 18—20 տարեկան աղջիկներ, և եթե կային այսպիսիներ, անպատճառ նրանք խուլ ոե

մունջեր են, կամ խելագարներ։ Առհասարակ գյուղացին աղջկան երկար չէ պահում, աշխատում է շուտ ազատվել նրանից, որ իրան շատ զբաղեցնում է։ «Աղջիկը այն տեսակ պտուղ է, որ հասնելու ժամանակ փշանում է»,— ասում է գյուղական առածը։

Որովհետև ամուսնությունները միշտ հաշիվներով են լինում, այս պատճառով շատ անգամ պատահում են խիստ տարապայմանի պահներ։ Օրինակ, աղջկա հայրը մի «լավ» փեսա չկորցնելու համար իր 5—6 տարեկան երեխան տալիս է մի չափահաս մարդու, կամ ընդհակառակն, իր 15 տարեկան աղջիկը ամուսնացնում է մի 4 տարեկան տղայի հետ։ Ով մեր գյուղական քահանաները միշտ պատրաստ են մի քանի արաուով այսպիսի պսակներ անել։ Որբեմն նշանում են աղջկան, երբ նա դեռ օրորոցումն էր, դա կոչվում է «թուրքերեն բառով «բեշիկքաամա»՝ այսինքն օրորոցում կտրած կամ վերջացրած։ Դուք չեք զարմանա, եթե ասեմ, որ երբեմն աղջկան նշանում են, երբ նա մոր արգանդից դեռ լույս աշխարհ չէր մտել։ Փեսայի հայրը ուխտ է դնում աղջկա հոր հետ, ասելով «եթե քո կինը աղջիկ ծնե, նա պետք է իմ որդու հարսը լինի»։ Շատ անգամ երկու ընտանիքների մեջ հին տոհմային թշնամությունները վերջանում են միմյանց աղջիկ տալով կամ առնելով[1]։ Երբ աղջիկն

[1] Մի ծերունի Սյունյաց երկրից պատմում էր, թե ինքը տեսել է, որ Վարթաղի գյուղերում աղջիկներին մի ժամանակ պսակում էին գեղի վրա։ Ինձ ծիծաղելի երևաց այդ խոսքը։ Բայց երբ նա բացատրեց պատճառը, ես համոզվեցա, թե կարող էր այսպես լինել։ Պարսկիների բռնակալության ժամանակ, երբ խաների առևանգում էին հայոց աղջիկներին, որը գեղեցիկ էր, ծնողները շտապում էին նրանց շուտով պսակել տալ մի տղայի հետ, որովհետև ամուսնացած կնոջը չէին հափշտակում, այլ իրանց հարեմի համար ընտրում էին միայն կույս աղջիկներ։ Պատահում էր, այն տղան, որի հետ կամենում էին պսակել աղջկան, գտնվում էր հեռու գյուղում, կամ պանդխտության մեջ, և պսակի խորհրդին ներկա լինել չէր կարող։ Այն ժամանակ փեսան իր փոխարեն ուղարկում էր իր գդակը, որը մի ձողի գլխին ցցելով. հարսի հետ տանում էին եկեղեցին և կատարում էին ամուսնության խորհուրդը։ Այդ բանը, առաջ գալով դեպքերի տարաբնությունից, հետզհետե սովորությունների կարգն անցավ։ Ռամկի մեջ առհասարակ գդակը գլխի կամ անձնավորության նշանակություն ունի.— «Գդակդ քեզ հարամ ըլի», «գդակդ քաղեմ», «գդակդ արնով տեսնեմ»— այդ անեծքները սովորական են գյուղացիների մեջ։ Ինձ պատահել է տեսնել գյուղական խնդույքներում, երբ կռնականներից մեկը գուրս էր գնում, գդակը դնում էր իր նստած տեղը, որ մյուսները երևակայեն, թե նա ներկա էր։ Մարդուն ամեն մի պատկանող իրը՝ նրա անձնավորության տեղ ընդունելու շատ օրինակներ կան։ Տեսնում ես, մի գյուղացի իր ծառային կամ որդուն ուղարկում է մի ուրիշ գյուղացու մոտ գործով. պատգամավորը հայտնում է նրա կամքը, ավելացնելով. «Ծիծե չես հավատում, ահ'ս հորս մորուքի սանդրը»։ Շատերը սանդրի փոխարեն ուղարկում են մորուքից մի մազ։

այսպիսի նյութական հաշիվների առարկա է դառնում, շատ հասկանալի է, թե նա որպիսի բախտի կհանդիպի, կամ ինչ կլինի նրա դրությունը ամուսնությունից հետո։ Ես ինքս վկա եմ եղել մի ե-ղեռնագործության, որ կատարվեցավ մի գյուղում. մի հասակ առած աղջիկ տվել էին մի փոքրիկ տղայի, որ մի հարուստ տան միակ ժառանգն էր։ Աղջիկը մի գիշեր անկողնի մեջ խեղդում է նրան։ Բժիշկները քննելով աղջկան, գտան նրա մեջ խելագարության նշաններ, որ առաջ էին եկել սեռական բորբոքումից ուղեղի վրա։

Աղջիկներն առհասարակ վաղ են մարդու գնում և այդ գլխավորապես պահպանում է նրանց բարքի ապականությունից։ Օժիտի սովորությունը դեռ մտած չլինելով մեր գյուղերում, բավական հեշտացնում է ծնողներին կատարել իրանց ցանկությունը, աղջիկներին շուտով ամուսնացնելու։ Շատ տեղերում դեռ մնացել է այն հին սովորությունը, որ աղջկա հայրը փոխանակ ինքը տալու, ըստանում է փեսայի հորից փող կամ ուրիշ մթերք։ Դրա մեջ շատերը տեսնում են մի բարբարոսական առևտուր, իբր թե հայրը վաճառում է իր զավակը։ Բայց այդպես չէ։ Փեսայի հորից ստացածը ծախսում է աղջկա հայրը, գնում է զանազան հագուստներ և կարասիք, որը իր հետն է տանում նորահարսը դարձյալ փեսայի տունը։ Աղջկա հայրը ոչինչ չէ շահում, գուցե մի բան էլ ավելի իր քսակից է դնում։ Առհասարակ ամուսնությունը, որպես մի նշանավոր պայման ընկերական կյանքի, արտահայտվում է մեր ռամկի մեջ այնպիսի ձևերով, որ ցույց են տալիս նրա խորին հասարակական նշանակությունը։ Ժողովուրդը համարում է նրան ընդհանուրի գործ, և այդ դեպքում երևան է գալիս մինը մյուսին օգնելու փոխադարձ համերաշխությունը։ Ես կպարզեմ այդ ավելի որոշ կերպով։ Գյուղական հարսանիքները կատարվում են ձմեռը, երբ գինին հասունանում է, երբ գյուղացիք անգործ են և կարող են ազատ կերպով զվարճանալ։ Հարսանիքները հին սովորության համեմատ տևում են յոթն օր յոթը գիշեր. այժմ թեև թեթևացել են, բայց դարձյալ ծանր են, առավելապես աղքատների համար։ Մի քանի օր գյուղի ամբողջ հասարակությունն ուտում, խմում և քեֆ է անում հարսանիքի տանը։ Հարսանիքի հանդիսակատարությունը կապված է բազմաթիվ ծեսերի և արարողությունների հետ։ Ամոթ է համարվում, եթե մեկը հետ կմնար հասարակաց սովորությունից։ Ով սովորության հետևելը կարող էր պատճառել կատարյալ չքավորություն, եթե հասարակությունը չօգներ։ Ով ահա ի՛նչ է լինում. աղջիկա հայրը, որպես հիշեցի, այնքան ստանում է փեսայի

Հորից, որ համարյա ծածկում է իր ծախսերը, իսկ փեսայի հայրը ստանում է նվերներ ըստ մեծի մասին փողով իր դրացիներից, որ ընծայվում են հարսի անունով։ Դրանով նա ազատվում է հարսանիքի ծախսերից և այսպիսով մի զույգ պսակվում են հասարակության փողով, թեև փողը ստացվում է կողմնակի կերպով։

Կին լինելուց հետո աղջիկն իր ազատությունը բոլորովին կորցնում է։ Հոր տանը թեև նուլնպես ճնշված էր, բայց դարձյալ ուրախ էր, որովհետև յուրայիններն մոտ էր գտնվում։ Այժմ ընկել է նա մի անծանոթ շրջանի մեջ, ուր ամեն ինչ նրան օտար է։ Նույնիսկ փեսային նա նոր է տեսնում և տեսնում է միայն գիշերով։ Հոր տան ճնշումներն այստեղ ավելի բարդվում և բաղադրյալ են դառնում։ Այնտեղ նա իրավունք չուներ միայն օտարների հետ խոսելու, իսկ այստեղ չէ կարող ոչ ոքի հետ խոսել։ Իր փեսայի հետ նա խոսում է գաղտնի, երբ մի երրորդ անձն ներկա չէր, իսկ ընտանիքի մյուս անդամների հետ (բացի երեխաներից) խոսում է պոնտոմիմայով։ Հոր տանը նրա երեսը բաց էր, կարող էր ազատ նայել դեպի աստուծո աշխարհը, իսկ այստեղ նրա դեմքը ծածկված է քանձր կարմիր քողով, ոչ ոքի ցույց տալ չէ կարող, մինչև անգամ իր փեսային, եթե նրա մոտ մի օտար մարդ կար։ Կնոջ համար ասել՝ «երեսը բացված կին է», գյուղացու լեզվում միևնույն նշանակությունն ունի, որպես ասել՝ լիրբ է, անզգամ է։ Կնոջ այս «չխոսկանությունը»[1], այդ փորձությունը հին սովորությունների համեմատ շարունակվում էր յոթը տարի, երբ այդ շրջանն անցնում էր, հասակավոր կնիկները հավաքվում էին և հանդիսավոր կերպով նրա «քողը փոխում էին», այսինքն կարմիր քողի փոխարեն ձգում էին նրա երեսի վրա սպիտակը, և այն օրից նա արտոնություն էր ստանում երեսը կիսով չափով բաց անել, և ընտանիքի մի քանի անդամների հետ խոսել, բայց ոչ սկեսուրի և սկեսրարի հետ։ Այժմ հիշյալ պաշտոնական ձևերը շատ տեղերում չեն կատարվում, այլ երբ կինը մի քանի զավակների մայր է դառնում, երբ նա իր մանկությունը անց է կացնում, այն ժամանակ կարմիր քողի փոխարեն սպիտակն է կրում, բերանը փոքր առ փոքր բաց է լինում, և կարողանում է իր դեմքը, եթե ոչ օտարներին, գոնյա իր մերձավոր բարեկամներին ցույց տալ։ Կարճ ասած, կինը այն ժամանակ միայն հասարակության անդամ է դառնում (իր նեղ մտքով), երբ պառավում է։

[1] Հունաստանում կար մի դպրոց, ուր աշակերտները մի որոշյալ ժամանակ պետք է միայն լուռ լսեին, խոսելու իրավունք չունեին։

Խոսելով հարսանիքի միայն տնտեսական կողմերի վրա, ես մոռացա մի բան։ Առհասարակ գյուղական հարսանիքն այնքան հետաքրքիր խորհուրդներ ունի, որ պետք է նրա մասին մի փոքր մանրամասն խոսել, բայց դա իմ հետազոտության նպատակից դուրս լինելով, ես չեմ կարող լուսել այն բանի մասին, որ վերաբերում է կին լինող աղջկա բարոյականությանը։

Ես կրկին վերադառնում եմ այն ժամանակին, երբ աղջիկը կին է դառնում։ Հարսի մորը փոխարինում է սկեսուրը։ Անձինքը փոխվում են, բայց դերերը մնում են միևնույնը։ Սկեսուրը մայր է դառնում, այն զանազանությամբ միայն, որ նրա մեջ մայրական գութը բոլորովին բացակա է գտնվում։ Դա ավելի խիստ է, ավելի պահանջող է և ավելի դիտող է։ Ամբողջ օրը նա մրթմրթում է, ներան գոհացնել անփորձ հարսը երբեք չէ կարող։ Պառավները դյուրագրգիռ են լինում, և նա միշտ բարկանում է։ Ոսկրների հետ նրա մեջ քարացել է և սիրտը։ Առավոտից մինչև կես-գիշեր հարսը պտտվում է սկեսրոջ շուրջը, նրա զանազան հրամանները կատարելով։ Նա չէ կարող մի նշան անգամ ցույց տալ հոգնելու կամ դժգոհության։ Ամբողջ օրը նա անց է կացնում ոտքի վրա, իսկ գիշերն իր անկողինն է մտնում, երբ ընտանիքի բոլոր անդամները քնած էին. նա պետք է ամենի տեղերը պատրաստե, ամենին հանգստացնե։ Վաղ առավոտյան նա ոտքի վրա է, երբ բոլորը դեռ քնած էին։ Սկեսուրը զարթնելով, անպատշաճ է, որ նրան անկողնի մեջ տեսնե։ Նա այն աստիճան համբերող է լինում, որ շատ անգամ բավական ծանր հիվանդություններ տանում է ոտքի վրա, առանց պառկելու։ Նա ոչ ոքին չէ հայտնում իր տկարության մասին, գուցե գիտե ամուսին այրը, բայց նա նույնպես լռում է։ Հիվանդության պատճառով չգործելը՝ գյուղացի կնոջ մասին համարվում է ծուլության նշան։ Ամուսին այրը չէ կարող պաշտպան հանդիսանալ կնոջ տանջանքները թեթևացնելու համար։ Եվ մի՞թե նա կարող է հասկանալ, թե նրա կրածները տանջանք է.—այդ զգացմունքը չէ տված գյուղացի մարդուն. նա վարվում է կնոջ հետ նույն անգթությամբ, որպես իր վարող եզան կամ գոմեշի հետ։

Ամուսնության առաջին տարիներում հարսի գործունեությունն ավելի սահմանափակվում է տնային տնտեսության նեղ շրջանում, նրան խիստ սակավ են դուրս թողնում։ Թե նա այգին, պարտեզը կամ դաշտն է գնում, պառավ սկեսուրը կամ մեծ հարսներից մեկն իր հետն են լինում։ Այսպիսի հանգամանքներում հասկանալի է մանկահասակ հարսի բարոյականությունը։ Այս ասելով

Ես նպատակ չունեմ պաշտպանել այն միտքը, թե հարեմական դրությունը կարող էր բարոյականություն պահպանել։ Բայց միևնույն ժամանակ պետք է նկատել, որ սիրահարությունների համար բավական ժամանակ և ազատություն հարկավոր է, որոնցից զուրկ է գյուղացի կինը։ Հոգնած և միշտ աշխատող մարմինը հեշտասիրություն չէ զգում[1]։ Գյուղերում կինն այնքան սեղմված է, որ ոչինչ ծածուկ չէ մնում։ Կնոջ մի համարձակ նայվածքը, մի բառը օտար տղամարդի հետ, իսկույն բամբասանքի առարկա է դառնում։ Ամուսնական անհավատարմությունը խիստ հազվագյուտ է գյուղերում, և եթե լինում են օրինակներ, պատժվում են մահով. խանդոտ տղամարդը ծածուկ կամ հայտնի սպանում է նրան, և հասարակաց կարծիքն արդարացնում է այդ եղեռնագործությունը։ Իսկ եթե ամուսինը համբերում է կնոջ անառակությունը, նրա ընտանիքը դուրս է ձգվում գյուղական հասարակությունից։ Դրանք զետեղվում են քաղաքներում։ Պետք է հիշել և այն, որ գյուղացի կինը սիրել չգիտե. նա միշտ երկու ծայրերի վրա է կանգնում, կամ լինում է հասարակաց կին, կամ իր ամուսնի կինը—սիրականներ պահելու նա ոչ շնորհք և ոչ հարմարություն ունի։ Նրա հարաբերություններն իր տղամարդի հետ նույնպես չէ կարելի ասել, թե սիրային բնավորություն ունեն.— որպես նրա ձեռքերը կոշտացել են աշխատության մեջ, այնպես էլ սիրտը կորցրել է իր զգայականությունը։ Դուք չեք տեսնի գյուղացի կնկան, որ նա մինչև անգամ իր շատ մերձավոր բարեկամուհիների մոտ խոսեր ամուսնի վրա։ Չէր նրա մասին խոսք է բացվում, կինը համարձակություն չունի նրա անունն անգամ բացարձակ կերպով արտասանելու, այլ միշտ գործ է ածում «նա» դերանունը, կամ այսպիսի խոսք՝ «Ստեփանի հայրը», դրանով հասկանում են, որ իր մարդուն է ակնարկում, որովհետև Ստեփանը նրա որդին է։

Բայց պետք է նկատել և այն, որ բարքերի մաքրությունն առավելապես պահպանվում է այն գյուղերում, որոնք հեռու են քաղաքներից և որոնք մեծ ճանապարհների վրա դրված չեն։ Օտար ազգերը մտցրին մեր գյուղերում և օտար մոլություններ, որոնք առաջ ծանոթ չէին։ Այն օրից, որ գյուղերում հայտնվեցան գինեվաճառի դուքանները, անբարոյականության ժանտախտը տարածվել սկսեց, թեև ոչ ոք չէ տեսել, որ գյուղացի կինը մտներ դուքանը

---

[1] Բացի դրանից, ընտանիքն այնպիսի խիստ բարոյական և հաստատուն հիմունքների վրա է կազմված, որ կինը չէր կարող թեթև վարքի տեր լինել։

խմելու համար, կամ արբած ընկած լիներ փողոցում։ Բայց դուքանները քաշում են դեպի գյուղերը այնպիսի օտար և խորթ հասարակություն, որոնցից մեր կանայք լավ բան սովորել չէին կարող... Եվ այդ անբարոյականացնող հիմնարկությունները լինում են միայն մեծ ճանապարհների վրա եղած գյուղերում։

Ես եղել եմ Պարսկաստանում և Տաճկաստանում, այնտեղի գյուղացի հայ կանայք համեմատաբար ավելի բարոյական են, քան թե այստեղիները։ Ի՞նչով մեկնել այս երևույթը։ Իմ կարծիքով ուրիշ պատճառ չկա, քան թե այն, որ այնտեղ հայը կարողանում է պահպանել ընտանեկան մաքրությունն իր վաղեմի սրբության մեջ, թեև լինում են մահմեդականների կողմից առևանգություններ, բռնաբարություններ, բայց այդ դեպքերն ավելի առիթ են տալիս պահպանելու կնոջ անմատչելիությունը։ Բռնությունն առաջ է բերում ինքնապահպանություն, իսկ վտանգավոր է այն ազատությունը, որ իր հետ բերում է բարքերի ապականություն։ Այստեղ այդ կրիզիսի մեջն է գտնվում հասարակությունը։

Ես այժմ դառնում եմ դեպի կնոջ աշխատությունը, թե ինչով է օգնում նա տղամարդին գյուղատնտեսական գործերում։ Նորահարսի աշխատություններն ավելի թեթև են լինում, համեմատելով հասակ առած կնիկների աշխատության հետ։ Պառավ սկեսուրները նրանց շատ չեն նեղացնում դրսի գործերով և ավելի բանեցնում են տնային տնտեսության մեջ։ Այդ առաջ է գալիս մասամբ այն սովորությունից, որ մանկահասակ հարսին իսկույն դուրս թողնելը կարող էր վնասակար ազդեցություն ունենալ նրա վարքի վրա։ Այսուամենայնիվ, կանանց աշխատություններն ամեն տեղ միևնույնը չեն, նրանք փոխվում են, նայելով տեղային պահանջներին։ Այն գյուղերում, ուր բամբակի մշակություն կա, օրինակ, Երևանի նահանգում, կնիկները բոլորովին խեղդված են աշխատություններով, բամբակի մշակության մեծ մասը նրանց վրա է. «քաղհան» են անում, հավաքում են հասունացած կոզակները, մաքրում են բամբակը կեղևից և կորիզներից, նրանից թել են մանում և այլն։ Այն գյուղերում, ուր այգեգործությունը զարգացած է, կնիկները դարձյալ շատ գործ ունեն. պտուղներ հավաքելը, չորացնելը, խաղողի քաղելը, բոլորը նրանց գործն է։ Ագարակային բերքերի, պարտեզների, բանջարանոցների մշակությունը նույնպես կնոջ գործ է։ Կինը չէ մասնակցում միայն մանգաղի, բահի և արորի գործածության մեջ։ Տեղերի հարմարության համեմատ կնոջ աշխատությունն ավելի բարդվում է և բազմատեսակ է դառնում։ Մեր գյուղացին

ծույլ չէ և ոչ ագետ, նա չէ բավականանում գյուղատնտեսության մի ճյուղովն միայն,երբ հող ունի և տեղային պայմանները ներում են, նա ընդարձակում է իր տնտեսությունը, միևնույն ժամանակ նա երկրագործ է, ցանում է ցորյան, գարի, կտավհատ, քունջութ, կանեփ, գերչակ և այլն, և միևնույն ժամանակ այգեգործ է, գինեգործ է, անասնապահ է,—այդ բոլորը ավելացնում են կնոջ աշխատությունը։ Գյուղերում, ուր վարում են կիսախաշնարածական և կիսաերկրագործական կյանք, կնոջ աշխատությունն ավելի բարդվում է. անասունների դարմանելը համարյա նրա վրա է մնում։ Նրանք կթում են կաթը, յուղ և պանիր են պատրաստում. նրանք խուզում են ոչխարները, բուրդից թել մանում, և իրանց ամուսինների համար հագուստ պատրաստում։ Մի քանի տեղերում կինն արհեստագործում է գեղեցիկ գորգեր, կապերտներ և շալեր, որ վաճառականության նյութ է դառնում։ Մեծ տարբերություն կա լեռնային և տափարակային տեղերի մեջ կնոջ թե կյանքի ձևերի և թե պարապմունքի վերաբերությամբ։ Լեռնային սարավանդների վրա կյանքը դեռ չէ փոխվել իր նախնական ձևերից. մարդը դեռ ավելի հովիվ է, քան հողագործ։ Իսկ կինն ավելի մոտ է բնությանը։ Այստեղ նա ապրում է կատարյալ նահապետական պարզության մեջ։ Բայց դաշտային տեղերում, տափարակների վրա, կուլտուրայի ազդեցության ներքո, կնոջ աշխատությունը և կենցաղավարության եղանակը փոխվում են և ավելի բազմատեսակ են դառնում։

Առհասարակ խոսելով, գեղջկուհին շատ է գործում, բայց նա աշխատում է ոչ իբրև ստրկուհի, որին մտրակով վարում են դաշտը, այլ որպես ընտանիքի անդամ, որի հոգսերը նա բաժանում է։ Նա գիտակցաբար է գործում, և այդ է, որ չէ հոգնեցնում նրան։ Նա գիտե, որ ապրուստն աշխատության է պահանջում, և չէ ցանկանում բոլորը ձգել տղամարդի վրա։ Տնտեսության մեջ կնոջ և տղամարդի աշխատություններն այն աստիճան որոշված են, որ ամեն մինը ճանաչում է իր պարտավորությունը, և երբեք միմյանց չեն խանգարում, և ոչ հարստահարում։ Կանայք ընտանեկան խիստ պայմանների մեջ մշակել են որոշ օրենքներ և կանոններ, որ պահպանվում են սրբությամբ։ Եվ եթե մենք ունենք այսօր գյուղացիներ, որ 50 և 100 հազարների տեր են, այդ պետք է որոնել նրանց տոկուն և անընդհատ աշխատության մեջ։ Մեր գյուղացին ամբողջ տարին գործում է, մինչև անգամ տիրոջ հանգստության օրերը նա չէ պահում։ Ձմեռը միայն կարողանում է նրան

քշել տան ծածկի տակ, բայց այստեղ ևս անգործ չէ մնում։ Այսպիսի շարժուն գործունեությունը նրան ետ է պահում շատ մոլություններից և անձնատուր չէ լինում արաղի և արբեցության։ Խնայողությունը, ապագայի հոգսը, որպես ամեն հայ մարդու, նույնպես և գյուղացու տնտեսության հատկանիշն է։ Բայց զարմանալի տարբերություն է տեսնվում Վրաստանի հայ գյուղացիների և նրանց մեջ, որ մի ժամանակ պարսից տիրապետության ներքո են եղել. առաջինների մեջ նշմարվում է վրացու ծուլությունը և անհոգությունը, թեև համեմատաբար դարձյալ բարձր են վրացուց։

Ճորտությունը խլում է գյուղացուց աշխատության եռանդը, նրա ինքնագործունեությունը, և միևնույն ժամանակ փչացնում ընտանիքի բարոյականությունը։ Ճորտությունը պատրաստում է գյուղացուց անասուն իր կատարյալ նշանակությամբ։ Այդ նշանները դեռ մնում են թե վրացի և թե ռուս գյուղացու վրա։ Բայց հայը ոչ մի ազգի տիրապետության ժամանակ ճորտ չէ եղել, և այդ է պատճառը, որ նա համեմատաբար ավելի շատ է զարգացել ինքնագործունեության մեջ։ Մեր գյուղացի կինը գիտե արհեստագործել մինչև անգամ տնտեսական այն անհրաժեշտ պիտույքները, որ ուրիշ երկրներում ստացվում են գործարաններից, օրինակ, պանիր մակարդել, սապոն պատրաստել, մոմ թափել, միս ապխտել, մեղուներ խնամել և այլն։ Նա ծանոթ է մի քանի ներկերի հետ, որ ստանում են հանքերից, արմատներից և բույսերից։ Նա ծանոթ է մի քանի բժշկական դեղերի և հնարների հետ, և հարկավորված ժամանակ ինքն է հոգ տանում զավակների հիվանդությանը։ Բայց պետք չէ մոռանալ և այն, որ զանազան խուլ տեղերում, այսինքն ճանապարհների հաղորդակցությունից դուրս, տակավին հանդիպում են գյուղեր, որոնց մեջ կյանքը դեռ գտնվում է եթե չասենք իր նախնական վիճակի մեջ, բայց կրում է խորին նահապետական կերպարանք։ Մարդիկ բնակվում են Քսենոփոնի նկարագրած գետնափորերի մեջ։ Բայց դրանք այլևս գազաններ չեն. ոտում են հաց և մարմինները ծածկված են ըստ մեծի մասին իրանց ձեռքով արհեստագործած հագուստներով. շատերը նրանցից սեփականության տերեր են։

Այժմ ես դառնում եմ դեպի գեղչկուհու մտավոր զարգացումը։ Ընթերցողը թող հիշե այս հետազոտության սկզբում դրած փոքրիկ նկարագիրը, որ պատկերացնում էր գյուղական ընտանիքի կազմակերպությունը։ Կինը հպատակում է տղամարդին անպայման հնազանդությամբ, իսկ ընտանիքի բոլոր անդամները խոնարհվում

են գերդաստանի երեցների առջև։ Կնոջ դերը բոլորովին կրավորական է, իսկ տղամարդինը—ներգործական։ Այդ դեպքում հասկանալի է, որ կինը չէր կարող ազդող լինել և փափկացնել տղամարդի բարքի կոշտությունը։ Տղամարդը միշտ իրան բարձր է դնում կնկանից, և միշտ այն համոզմունքն ունի, թե «կնկա ծամը երկայն է, բայց խելքը—կարճ»։ Տղամարդը կատարյալ տեր է, իսկ կինը հպատակ։ Այսուամենայնիվ, նա չէ ծեծում կնկան.—ծեծը և կռիվն առաջ են գալիս ավելի այն ժամանակ, երբ կինը իրան հավասար աստիճանի մեջ է դնում տղամարդի հետ։ Ընտանիքի կազմակերպությունը, որ ենթարկում է կնոջն անպայման հնազանդության, որ խլում է նրանից ամեն ազատություն, որ ստիպեցնում է կուրորեն հետևել բոլոր ընդունված ծեսերին և սովորություններին—մի այսպիսի խիստ միապետական կազմակերպությունը անկարելի է որ չհասցներ կնոջը միակողմանիության, անշարժության և վերջապես—բթամտության։ Ավելացնենք աշխատությունը, անդադար և միակերպ աշխատությունը, որ չինում է կնկանից մի մեքենա, մի ողորմելի կրավորական էակ,—այն ժամանակ կպարզվի նրա մտավոր վիճակը։ Ամեն մի կին իր մոր շարունակությունն է. նա անփոփոխ ավանդում է իր հաջորդին այն, ինչ որ ստացել էր մորից։ Կնոջ խելքը և միտքը այսպիսի պայմաններում զարգանալ կարող չէ։ Անընդհատ և դժնդակ աշխատությունը, բացի խելքից, չէր կարող չազդել գյուղացի կնոջ և մարմնական կազմվածքի վրա։ Նա խիստ շուտով է կորցնում իր թարմությունը. դեռ երեսուն չհասած, նա արդեն պառավել է։ Եվ ի՞նչն է ստիպում նրան պահպանել իր կանացիությունը. ամուսին այրը գործ է պահանջում և ոչ գեղեցկություն։ Խիստ սակավ կարելի է տեսնել, որ մինչև անգամ բավական կարողություն ունեցող տան կինը լավ հագնված լիներ։ Առհասարակ այն կինը, որ իրան մաքուր է պահում և լվացվում է, համարվում է կասկածավոր։ Մինչև այսօր գյուղերում կոշիկներն ընդունված են որպես զարդ և ոչ ոտնամաններ։ Մոտեցեք գյուղացի կնոջը, իսկույն ձեր քթին կխփե մի վատ հոտ։ Ի՞նչից է այդ։ Ամեն օր թոնիրը վառում են կերակուրի և հաց թխելու համար, ամեն օր ամբողջ տունը լցվում է աթարի կծու ծխով և մխով։ Խեղճ կինն այդ ծուխի մեջ ապուխտ է դառնում։ Հայ կնոջ աչքերը, որ բնությունից այնքան գեղեցիկ են, բոլորովին փչանում են ծխի և փոշու մեջ և դուք շատ սակավ կտեսնեք առողջ աչքեր։ Ծանր աշխատության և ընտանիքի ճնշման ներքո, կինը բոլորովին կորցնում է իր ուրախությունը. նրա երեսին

երբեք ծիծաղ չեք տեսնի. նա միշտ տխուր է։ Նրա մեջ չկա բնավորության և այն զվարթությունը, որ հատուկ է մինչև անգամ վայրենիներին։ Ով գործ է ունեցել գյուղացի կնոջ հետ, գիտե, որ նրա մեջ սիրտը մեռած է...

/ Քաղաքներին մերձավոր գյուղերը, հարաբերություն ունենալով քաղաքացիների և համեմատաբար ավելի զարգացած հասարակության հետ, ցույց են տալիս մի քանի փոփոխության նշաններ։ Քաղաքի մոլությունները ներս են սողում գյուղական համեստ խրճիթներում նորաձևությունների հետ։ Թեյի գործածության հետ մտնում է և յուրկաների գործածությունը։ Կնիկների երեսները կամաց-կամաց բացվում են, նրանց բերանի փականքը բացվում է։ Հասկանալի է վտանգը, երբ կյանքի այլափոխությունը սկսվում է հագուստից և կերակուրներից։ Այս տեսակ կանայք, որոնց կարելի է կոչել գյուղական մոդնի խանումներ, մի ծիծաղելի խառնուրդ են ներկայացնում. նրանք «ոչ հայի խունկ են, ոչ թուրքի nıqwarlık»[1]։ Խոսացրու նրան, կտեսնես, որ նա ոչնչով չէ տարբերվում մյուս գռեհիկներից, բացի մի քանի լրբություններից, որ չես տեսնի իր նախնական ձևի մեջ մնացած կնոջ մոտ։

Այս բոլորից հետո կա մի բան, որ մեծ ապագա է խոստանում։ Գյուղացու ընտանեական կյանքն իր հաստատուն հիմունքներով և իր բարոյական զորությամբ մի շատ արգավանդ հող է կրթության գործի համար։ Նրա մեջ կան անմշակ, բայց հարուստ ընդունակություններ։ Ես ոչ մի ուրիշ պատճառ չեմ ճանաչում, որ պահպանեց հային իր աննախանձելի պատմության երեսից,—բայց միայն ընտանիքի բարոյական զորությունն իր որոշ առանձնություններով։ Դարերի ստրկությունը և ճնշումը չէ քարացրել նրան այն աստիճան, որ անընդունակ լիներ մի նոր փոփոխության. այլ ընդհակառակն, կյանքի կռվի մրցությունը շինել է նրանից բավական գործնական մարդ։ Նա չափազանց էլաստիկային և դյուրաթեք բնավորություն ունի։ Այս պատճառով մենք չենք կարող ասել, թե ունենք գյուղական հասարակություն, այդ բառի ճիշտ նշանակությամբ։ Մեր գյուղացին գիտե հանգամանքներից օգուտ քաղել, նա կյանքի պայմանների հետ այնպես շուտ հաշտվում է, և հարմարությանը նայելով, այնքան ճարպիկ կերպով փոխում է իր պարապ-

---

[1] Մի տեսակ բույսի սերմ է, որ մահմեդականները ծխում են գերեզմանների վրա, որը խիստ անախորժ հոտ ունի։

մունքների ձևը, որ այսօր նա հողագործ է, մյուս օրը վաճառական է դառնում, հետո արհեստավոր և այլն։ Եվ ամեն գործի մեջ նրան հետևում է կինը։ Դուք կտեսնեք մեր գյուղացիներից ոչ միայն հարուստ վաճառականներ և արհեստավորներ, այլ ծառայողներ, աստիճանավորներ, բժիշկներ, վարժապետներ և պրոֆեսորներ։ Մինչ հզոր պետությունները դժվարանում են պարտադիր ուսումը մտցնել իրանց գյուղացիների մեջ, մերոնք արդեն դպրոցներ ունեն, կամ մտածում են ունենալ։ Մի առաջնորդող, մի օրինակ բավական է, որ նա հասկանա կրթության օգուտը։ Բայց բոլորի վրա գործնական և շահի կետից է նայում։ Օրինակ, տեսնում է, որ դրացու որդին մի վաճառականի մոտ ծառա մտնելով, վերջը գործակատար դարձավ և հարստացավ,—ինքն էլ է աշխատում որդուն վաճառականի հանձնել։ Կամ մեկի որդին գավառական դպրոցում սովորելով, վերջը ծառայող դարձավ, ինքն էլ է նրա օրինակին հետևում։ Մեր գյուղացի կինը կամ աղջիկը, ամենևին չեք տեսնի, որ քաղաք գնալով, ազախին դառնային. որբ և բոլորովին անտեր աղջիկները բացառություն են.—գնում են քաղաք տղաները միայն, այն ևս ոչ քիչ տներում սպասավորության անելու համար, այլ վաճառականի կամ արհեստավորի մոտ մտնելու համար։ Մեր գյուղացին բազմատեսակ ընդունակություններ ունի. այդ նրա գլխավոր հատկանիշն է։ Դրանից են առաջ գալիս այն երևույթները, որ տնտեսությունը և կյանքի եղանակները չափազանց տարբերվում են միմյանցից։ Դա լավ նշան է։ Տեսնում ես գյուղեր, ուր ամբողջ բնակիչները պարապում են վաճառականությունով, թեև այդ գյուղը ոչ կենտրոն է և ոչ վաճառականության հարմարություն ունի։ Բայց ի՞նչպես եղավ։ Գյուղացիներից մեկը վաճառականության մեջ բախտ գտավ, և բոլորը հետևեցին նրա օրինակին։ Նրանք տարածվում են Ռուսաստանի և Եվրոպայի զանազան քաղաքներ, խոսում են զանազան լեզուներով, և երբեմն միայն վերադառնում են ցիլինդրներով և ոսկյա շղթաներով իրանց կարոտ մնացած ընտանիքը տեսնելու համար։ Շատ անգամ 5—6—10 տարի է տևում նրանց պանդխտությունը և ողորմելի կինը համբերում է առանց տղամարդի, միշտ անարատ պահելով իր ամուսնական հավատարմությունը։ Եվ նկատել եմ, կանայքը, որ դատապարտված են այդ վիճակին, ըստ մեծի մասին մեռնում են բարակացավով։ Չոկերը կարող են այս դասակարգի օրինակ լինել։ Կան գյուղեր, ուր բնակիչների մեծ մասը հյուսն, ոսկերիչ, որմնադիր և ուրիշ արհեստավորներ են, որոնց պարապմունքն իրանց տեղում գործադրություն

չգտնելով, թափառում են քաղաքից քաղաք։ Մինչև անգամ ամենաանբարոյական օրինակները մի ամբողջ գյուղի հասարակության մի կեղտոտ գործով են զբաղեցնում. «խաչագողները» հայտնի են արդեն... Այդ բոլորը կյանքի նշաններ են, բայց վատն այն է, որ գյուղացին, հենց որ փոքր ի շատե փող է ձեռք գցում, տեղափոխվում է դեպի քաղաքը։ Գյուղական ապագրեզը նեղ է գտնում իր ընդարձակ գործունեության համար։ Այն ժամանակ միայն գյուղացին իր կանոնավոր և նորմալ դրության մեջ կմտներ, երբ ճանապարհների հաղորդակցությունը կհեշտանա. գյուղատնտեսությունը նոր ձև կստանա, փոխելով իր նահապետական կերպարանքը։

Պետք չէ մոռանալ և դպրոցի անբարոյականացնող ազդեցությունը։ Երևակայեցեք աղջկա դրությունը, որ նա մանկությունից փակված է եղել տան պատերի մեջ, որ նա երբեք տնից դուրս չէ եկել առանց մոր, որ նա մարդերից այնպես է վախում, որպես գայլերից—հանկարծ նրան մենակ դուրս են թողնում, որպես թռչունը վանդակից։ Նրա ծնողները ծառա կամ աղախին չունեն, նա մենակ պետք է գնա դպրոցը, որ շատ անգամ հեռու է գտնվում։ Արտաքին աշխարհը—փողոցը—այն աստիճան ավերված և անկանոն է, որ չէր կարող վնասակար ազդեցություն չանել նրա վրա, գավառական քաղաքներն ըստ մեծի մասին խառն լինելով մահմեդականների հետ, աղջիկը մինչև դպրոց հասնելը լսում է հազարավոր վատ խոսքեր թուրքի տղաներից (հայ տղերքն էլ նրանցից պակաս չեն)։ Սկզբում նա երկչոտ է լինում, ուշադրություն չէ դարձնում, անց է կենում։ Հետո փոքր առ փոքր սիրտ է առնում, սկսում է պատասխանել... Այս հանգամանքներն ի նկատի ունենալով, ես հասնում եմ այն ցավալի համոզմունքին, թե աղջիկը, որ դպրոցի երես չէ տեսնում, ավելի բախտավոր է, թեև նա մնում է տգետ, բայց պահում է իր բարոյականությունն անարատ։ Այլևս չեմ ասում, թե թերի և աննպատակ ուսումը միշտ վնասակար է լինում։ Բարեբախտաբար մեր գավառական քաղաքներում դեռ չկան կարելու արհեստանոցներ. Թիֆլիսում այժմ սովորության մեջ մտած կարուհիների մագազիններն ավելի մեծ թվով փչացնում են աղջիկներին...

Երբ աղջիկը դառնում է 14—15 տարեկան, ծնողները մտածում են նրան մարդու տալ։ Օժիտի սովորությունը սկսված լինելով գավառական քաղաքներում, որքան ընդհանրանում է նա, այնքան ավելի ծանրանում է աղջկա վիճակը աղքատ ընտանիքի վրա։ Աշ-

խատում են շուտ ազատվել այդ բեռնից։ Այս պատճառով, աղջկա մահը շատ անգամ հանդիպում է ծնողների ներքին հոժարությանը, որ թեթևացնում է նրանց մի մեծ հոգսից։ Գյուղացիները բախտավոր են այդ մասին. այնտեղ փեսայի հորից փող են ստանում։ Վատն այն է, որ աղջկան քույլ չեն տալիս ինքն իր ապագան տնօրինելու. նա գուցե կգտներ մեկին, կընկներ նրա գիրկը, և առանց ծնողներին ծախսեր պատճառելու, կպսակվեր նրա հետ։ Այս պայմանում ևս հոր և մոր կամքը գերակշռություն ունի. նրանք պետք է տնօրինեն աղջկա բախտը, նրանք պետք է գտնեն իրանց հավանած և սրտի ուզած մի փեսա։ Բայց աղջկան «իրանց սրտի ուզած» մարդուն տալու համար փող պետք է. առհասարակ արհեստավորները փող չեն ունենում։ Նրանք կամ պետք է պարտք անեն օժիտ պատրաստելու համար, կամ պետք է աղջկան գցեն առաջին հանդիպող անպիտանի ձեռքը, եթե նա սակավ փող էր պահանջում։ Ըստ մեծի մասին պատահում է վերջինը։ Սերն ամենևին դեր չէ խաղում արհեստավորների ամուսնության մեջ. և ո՞րտեղ կարելի էր սիրել, երբ աղջիկները տղաների հետ բնավ չեն տեսնվում։ Ջարսավճեռի սովորությունը դեռ ոչ բոլորովին վերացել է գավառական քաղաքներից. աղջիկը տնից դուրս է գալիս ոտքից ցգուխ ծածկված սպիտակ սփածանելիների մեջ։ Արհեստավորի աղջիկը տալիս են արհեստավորի տղային. շատ անգամ նա պսակվում է իր հոր աշկերտի հետ, եթե այդ վերջինը դուր էր եկել իր վարպետին, կամ խոստանում էր լավ ապագա։ Խիստ սակավ է պատահում, որ նա պսակվեր մանր վաճառականի հետ։ Աղջիկը տեսնում է իր փեսային այն օրը, երբ նրան տարել էին եկեղեցի պսակելու, այնտեղ միայն քահանան ձևի համար հարցնում է նրա հոժարությունը, արդյոք սիրո՞ւմ էր իր փեսային, արդյոք համաձա՞յն էր կին լինելու... Աղջիկը ոչինչ չէ պատասխանում, միայն հավանական շարժում է անում գլխով։ Բայց եթե նա չգիտեր այդ, կամ առաջուց չէին սովորեցրել, մի կին ետևից նրա գլուխը ձեռքով դեպի ցած է խոնարհեցնում, որ նշանակում է «այո՛»... «համաձայն եմ»։

Կին լինելուց հետո նրա վիճակն ավելի վատթարանում է. նա միանգամայն կորցնում է և այն փոքրիկ ազատությունը, որ վայելում էր առաջ։ Գավառական քաղաքներում, ավելի ժողովրդի ստոր և միջին դասերի մեջ, կնոջ պահպանությունը դեռ կրում է իր վրա շատ հարեմական առանձնություններ. նրա վրա ավելի խիստ են հսկում, քան թե գյուղերում, ուր տնտեսական աշխատությունները

շատ անգամ նրան տունից դուրս են կոչում արտը, այգին, կամ դաշտում բանելու, որտեղ նա գոնյա արձակ աշխարհ է տեսնում։ Բայց այստեղ կնոջ աշխարհը փակված է տան պատերի մեջ, և ոչ ոքի հետ հարաբերություն չունի։ Նա ապրում է բանտի մեջ, կամ ավելի փափուկ լեզվով խոսելով, որպես մի ծաղիկ թառամում է ապակյա գրվանի ներքո, առանց լույսի և առանց օդի։ Եվ իրավ, դուք չեք տեսնի մի կին արհեստավորների մեջ, որ երեսին գույն ունենար, նա միշտ դեղնած է լինում, շրթունքները ցամաքած, որպես տենդոտ, և աչքերը մարած։ Հասարակաց զբոսանքի և զվարճության տեղերը, եթե կային այսպիսիները գավառական քաղաքներում, դեռ մատչելի չեն ժողովրդի աղքատ դասին. արհեստավորն իր կնոջը բաց չէ թողնում հաճախել այնպիսի տեղեր, որոնք իր կարծիքով անառակների համար են։ Կինը մաշվում է տան մեջ. նրա մեծ զվարճությունն այն է, որ երբեմն նստում է լուսամուտի առջև և նայում է փողոցի անցուդարձին. բայց փողոցի վրա բաց արած լուսամուտներ բոլոր տները չունեն։ Նա տեսնվում է խիստ հազիվ անգամ մերձավոր ազգականների հետ. կյանքը շատ առանձնացած է, որովհետև բարեկամների հետ հարաբերություն պահպանելը պահանջում է ծախսեր, պետք է մի բանով գոհացնել հյուրերին։

Ընտանիքի կազմակերպությունը և նրա սովորությունները համարյա նույնն են, որպես գյուղերում, միայն այստեղ ավելի որոշ ձև են ստացել։ Նույնպես գերդաստանի հայրը բարձր հեղինակություն ունի, նույնպես կինը ստորադրվում է իր տղամարդին ամենայն հնազանդությամբ, նույնպես օտար տղամարդի հետ չէ խոսում նա և ոչ երևում է մի ուրիշ մարդու աչքին։ Իր ամուսնի հետ տեսնվում է նա միայն գիշերով, երբ վերադառնում է նա խանութից բոլորովին հոգնած և շուտով պառկում է հանգստանալու։ Մի բան կարող էր նրան մոլորեցնել ուղիղ ճանապարհից, այն է, տարածվող շռայլությունը, որ սկսել է մուտք գործել և արհեստավորի համեստ խրճիթում։ Բայց շահվել ուրիշից իր պաճուճանքի և զարդարանքի համար նա չէ կարող, որովհետև մի ավելորդ բան նրա վրա, որ ամուսնի գնածը չէր, իսկույն կարող էր նկատելի լինել մարդու աչքին։ Գավառական քաղաքներում յուրաքանչյուր ընտանիքի առանձին տուն ունենալը, և մի ամբողջ տան մեջ միմիայն մեկ ընտանիքի բնակվելը բավական պահպանում է կնոջ բարոյականությունը։ Առհասարակ նկատված է, կինը ավելի շուտ է փչանում այն ժամանակ, երբ բազմաթիվ ընտանիքներ ածած են մի-

մյանց վրա միևնույն տան մեջ, և շատ սեղմված կերպով բնակվում են գանազան կացարաններում։ Մեր գավառներում անկարելի է տեսնել, որ երկու ընտանիք միևնույն տան մեջ բնակվեին. ընտանեկան պայմանները չեն ներում մի այսպիսի խառնակություն։ Դա ունեցավ իր օգուտն այն կողմից, որ ամեն մարդ, որքան էլ աղքատ լիներ նա, աշխատեց առանձին տուն ունենալ։ Այդ մասին պետք է շնորհակալ լինել պարսիկներից, թե չէ շուտով կկազմվեր մեր մեջ անտուն, անտեղ պրոլետարիատ։

Եթե արհեստավորների կնիկների մեջ կարելի էր գտնել մեկին, որ մեղանչեր ամուսնական հավատարմության դեմ, կարող եմ հաստատ ասել, որ հանցավորը տղամարդ ամուսինն է։ Նա կամ արբեցող է, կամ չափազանց ծույլ և անպիտան. օրվա վաստակը գիշերը վատնում է գինեվաճառի մոտ, թողնում է կնոջը տանը քաղցած, և ամենևին չէ մտածում կիսամերկ երեխաների վրա։ Նա շաբաթներով տան երես չէ տեսնում. ո՞րտեղ է անցկացնում, հայտնի չէ, և երբեմն հարբած տուն է դառնում, կարծես նրա համար միայն, որ կնոջը մի լավ ծեծե։ Երբեմն զավակները վկա են լինում սարսափելի տեսարանների իրանց ծնողների մեջ, և այստեղից դրվում է նրանց փչանալու սկիզբը։ Բայց չկա մի ավելի երջանիկ, մի ավելի խաղաղ շրջան, որպես աշխատասեր և արդար արհեստավորի ընտանիքը.—ժրաջան կինը տան և երեխաների հոգսն է քաշում, պահում է նրանց մաքուր և առողջ, մարդը գործում է արհեստանոցում. նրանք ապրում են գոհ և անվրդով կյանքով. խնայողությունը իրանց տնտեսության գլխավոր օրենքն է, մտածում են զավակների վրա և ետ են գցում փոքրիկ գումար սև օրվա ապրուստի համար։

Բայց լինում են ցավալի դեպքեր։ Կինը, բացի տնային տնտեսությունից, որ արհեստավորի ընտանիքում այնքան ծանր չէ, ուրիշ ոչինչով չէ օգնում տղամարդին, այսինքն, նա չէ սովորել որևիցե բան, որ կարողանար ինքն ևս ազատ կերպով փող վաստակել։ Ընդունված սովորությունները և հասարակական կյանքի պայմանները թույլ չեն տվել նրան ընտանեկան օջախից դուրս մի ուրիշ գործով զբաղվելու։ Ընտանիքի գլխավոր աշխատողը, նրա ապրուստը հայթայթողը մնում է տղամարդը։ Քանի որ նա կենդանի է, կինը բախտավոր է, նա աշխատում է, և ընտանիքը պահում է։ Իսկ երբ տղամարդը մեռավ, առանց թողնելու որևիցե կարողություն, այն ժամանակ կինը իր ապրուստը շարունակելու համար ունի մի ճանապարհ միայն, կամաց-կամաց դիմել դեպի մահ։ Ըստ մեծի

մասին այդ պատահում է... Աղքատությունը սարսափելի զոհեր է առնում։

Արհեստավորի կնոջ վիճակը բարձրացնելու համար և նրա ապրուստն ապահովելու համար այնքան պետք չէ ուսումը, որը ոչինչով նրան հաց տալ չէ կարող, որքան պետք է սովորեցնել մի արհեստ, որ նրանով ապրել կարողանար։ Այդ միայն կարող է բարձրացնել կնոջ վիճակը և նրան հավասար աստիճանի վրա դնել տղամարդի հետ։ Երբ կինը ազատ պարապմունք ունի, երբ նա էլ իր կողմից օգնում է ընտանիքին, այսպիսով նա կախում չի ունենա տղամարդից, և կգցե իր վզից նրա բռնության կոպիտ լուծը։ Տղամարդն էլ իր կողմից կունենա դեպի նա, բացի սերից, մի առանձին պատիվ, երբ կգտնի նրա մեջ մի լավ աշխատակից։ Այսպիսի կինը միշտ ազատ կմնա այն ախտից, որի մեջ գցում է նրան աղքատությունն ամուսնի մահից հետո. նա կարող կլինի արդար և աշխատասեր կերպով հայթայթել իր հացը։ Բացի դրանից, երբ կինը մի բան գիտե, երբ նա ունի իր մեջ կենդանի կապիտալ, այն ժամանակ նա կարողություն չի ունենա մեռած կապիտալով-օժիտով իր համար փեսա գնել. ամեն մարդ կցանկանա իր վիճակը մի այնպիսի ընկերուհու հետ կապել։ Բայց արհեստավորի կնոջն իր այժմյան վշտալի դրությունից ազատելու համար, նախ և առաջ պետք է փոխել հասարակական հիմար նախապաշարմունքները, և պետք է նրան դուրս քաշել ընտանիքի փակված շրջանից։

Բ

Մինչև այստեղ ինչ որ խոսվեցավ արհեստավորների մասին, վերաբերում էր գավառներին միայն, բայց չէ կարելի մի քանի խոսք չասել և Թիֆլիսի արհեստավորների կանանց մասին, ուր կյանքը և նրա պահանջները բոլորովին տարբերվում են, ուր կինն այն չէ, ինչ որ է գավառներում։

Թիֆլիսը, որպես Կովկասի քաղաքակրթության կենտրոն, միևնույն ժամանակ է և մոլության կենտրոն, այստեղ դարբնվում են ամեն տեսակ ախտեր և տարածվում են դեպի գավառները։ Այդ փոքրիկ քաղաքը ներկայացնում է մի ամբողջ Բաբելոն, ուր Եվրոպան, Ասիան և Կովկասն իր վայրենիներով—բոլորը զետեղված միասին, ներկայացնում են մի զարմանալի խառնափնթորություն։ Տիպերի բազմատեսակությունն առաջ է բերում բնավորու-

բյունների և սովորությունների անթիվ տարբերություններ, որոնց հետազոտելը չափազանց դժվարին է։ Ընտանիքի նահապետական կազմակերպությունը քայքայված է։ Ոչինչ ավելի վնասակար չէ կարող լինել, քան թե այն, երբ հանկարծ քանդվում են դարերով հաստատված և կյանքի մեջ մտած սովորությունները, և առանց փոխարինվելու նոր և ավելի բարոյական հիմունքներով, նրանց տեղը դրվում է կատարյալ համարձակություն—Այդ կրիզիսի մեջն է գտնվում Թիֆլիսի հայ կնոջ վիճակը։ Ընտանիքի փակված շրջանից հանկարծ նրան բաց են թողնում դեպի լայն աշխարհ, առանց նախապես աշխարհի հետ վարվելու պետքերը նրան սովորեցնելուս։ Խիստ հեշտ է լինում որսալ այն թռչուններին, որ երկար ժամանակ վանդակի մեջ էին պահվել...

Այդ կարճ, բայց ընդհանուր նկատողությունից հետո ես անցնում եմ դեպի արհեստավորի կինը։

Արհեստավորի կյանքի մեջ նկատվում է երկու տեսակ մրցություն. մեկը, երբ ասիական արհեստի մրցությունը եվրոպականի հետ, մյուսը, նահապետական կյանքի մեջ սնված նրա կնոջ մրցությունը նոր սովորությունների հետ։ Երկուսն էլ, որպես փտած հնոտիք, ընկնելու և անհետանալու վրա են. նորը տիրապետում է։

Արհեստավորներին, մանրավաճառներին, առևտրական գործակատարներին, մանր աստիճանավորներին, և զանազան առեներական տեղերի ստոր ծառայողներին կարելի է գետեղել մի դասակարգության ներքո և կոչել միջին դաս[1], կնոջ դրությունն ամենի մոտ, աննշան տարբերություններով, միևնույն է։ Բայց ես գլխավորապես ի նկատի ունեմ արհեստավորներին և մանրավաճառներին։ Բարքերի մաքրությունը վերաբերական է. կան մաքուրներ և կան անմաքուրներ. պետք է խոստովանել, որ վերջիններիի թիվը առավելություն է կազմում. և վատն այն է, որ հետզհետե աճելու վրա է։ Արհեստավորները և մանրավաճառները Թիֆլիսում, իրանց գավառացի համարվեստների նման սեփական տներ չունեն. այստեղ ըստ մեծի մասին բնակվում են վարձով. ամենաբախտավոր

---

[1] Իսկապես մեր քաղաքներում ժողովրդական դասակարգերը դեռ լավ չեն կազմակերպված, որոշ ձև չեն ստացել։ Unser դաս, որի ներկայացուցիչներն են մշակները, և առհասարակ պրոլետարիատը, չունենք. ժողովրդի դասակարգությունը սկսվում է միջին դասից և վերջանում է կարողության տեր բուրժուայով, որի ներկայացուցիչներն են գլխավորապես հարուստ վաճառականները և մասնավորապես մեծ աստիճանավոր ծառայողները — դրանց պետք է կոչել բարձր դաս։ Արիստոկրատիա չկա։

երկու սենյակ ունի։ Ամուսին այրը գործում է առանձին, բազարում, իր խանութի մեջ։ Կինը մենակ մնում է տանը։ Աղջիկը ծնվում է նեղ սենյակում, որ զրկված է թե օդից և թե լույսից։ Մոդոները միշտ վրդովմունքով են հանդիպում նրա աշխարհ գալուն, որ բերում է իր հետ հոգսերի մի ահագին ծանրություն։ Փոքրիկ գերդաստանը, որ հազիվհազ քարշ է տալիս իր տնտեսությունը, պետք է սնուցանե նրան, հսկե նրա վրա, մի բան սովորեցնե, և վերջապես մարդու տա։ Դա ամենից դժվարն է։ Եթե մայրը բավական առողջ է, ինքն է ծիծ տալիս փոքրիկին, իսկ եթե կաթ չունի, կերակրում են այծի կաթով։ Միջոցները չեն ներում ծծմայր վարձել։ Նեղ և խեղդված սենյակում, ուր ամեն ինչ խառնված է մինը մյուսի հետ, մանուկը մեծանում է ամեն կեղտոտության մեջ։ Գյուղերում երեխան ավելի բախտավոր է, չի նեղվում, այլ արձակ օդի մեջ բավական լայն ասպարեզ ունի։ Այստեղ բնակարանը, որ ընդամենը երկու քայլ լայնություն ունի, դառնում է կատարյալ լվացքի փոս. պետք է լողացնել մանուկին, ամեն օր տասն անգամ փոխել նրա շորերը։ Երբ աղջիկը դառնում է երկու-երեք տարեկան, իսկույն դուրս է փախչում իր բանտից. փողոցն ավելի է հրապուրում նրան, այնտեղ կարող է ազատ շունչ քաշել։ Մայրն ուրախ է լինում նրա բացակայությամբ, որ տան կարգը չէ խանգարում, չէ կոտրում։ Իսկ դրսում ի՞նչ է անում—գլուխը քարին։

Երբ աղջիկը դառնում է վեց, յոթը տարեկան, մայրը թույլ է տալիս վազել իրանց փողոցի փուրունչու մոտ, երբ պետք էր հաց գնել, կամ միս տալ խորովելու։ Նրան ուղարկում են և մերձավոր մանրավաճառի մոտ, երբ պետք էր շաքար գնել։ Երբեմն նրան թույլ են տալիս նստել փողոցի բաց դռան շեմքի վրա և նայել անցուդարձին, այդ ավելի զվարճացնում է. տանը չափազանց նեղ է և տխուր։ Եվ այսպես, նրա առաջին դաստիարակությունը սկսվում է փողոցից։

Եթե տունը մոտ էր եկեղեցուն, և այնտեղ գտնվում էր ծխական դպրոց, մայրը ուղարկում է աղջկան կարդալու, երբ ժամանակը հասնում է։ Բարձր դպրոցներում տալու միջոցներ չկան։ Առանդ աղախնի և առանց ծառայի նա կարողանում է ամեն օր հաճախել դպրոց, որովհետև բավական վարժված է փողոցին։ Դպրոցում սովորեցնում են նրան ամեն բանից շատ փոքր, որ ասել է, ոչինչ չեն սովորացնում։ Այդ ոչինչ. մայրն ունի իր առանձին փառասիրությունը. նա ուսման վրա շատ էլ ուշադրություն չէ դարձնում. բավական է միայն, որ իր աղջկան տեսնում է դպրոցական համազ-

գետի մեջ, կրում է գրքերով լի պայուսակ, խառնում է իր մայրենի լեզվի հետ օտարազգի բառեր, և ավարտելուց հետո, որպես ուսյալ և լուսավորված, իրավունք կունենա փոխանակ «թավսակրավիի» իր գլխին ծածկել «շլյապա»։

Ես վեր առեցի խիստ մասնավոր օրինակ. արհեստավորների կամ մանրավաճառների աղջիկների մեծ մասը դպրոցի երես չեն տեսնում, այլ մեծանում են առանց մի բան սովորելու։ Նրանց կարելի՞ է ճանաչել գլխի ծածկոցներից, թե որն է կրում շլյապա և որը թավսակրավի։ Թե այսպես և թե այնպես, տարբերությունը միայն հագուստի մեջն է, բայց կրթությունով մինը մյուսից չէ որոշվում։

Ահա աղջիկը տասնվեց և տասնյոթն տարեկան է։ Այդ շատ վտանգավոր մի հասակ է։ Նրա վրա հսկում է և մտածում է մայրը միայն. հայրը ուշադրություն չէ դարձնում, և կարելի է ասել, որ քչնամաբար է նայում նրա վրա, որպես մի գող, որ վաղ թե ուշ պետք է նրա տունը կողոպտեր։ Աղջիկը դեռ բավական ամոթխած է և երկչոտ. պետք է «բացել» նրան, աշխարհ մտցնել։ Մայրը առաջնորդում է։ Սկզբում նրան թույլ են տալիս կտուրի վրա, իր հասակակիցների հետ, ածել, «լեզգեվար» պար գալ և «տաշի» խփել։ Հետո մայրը տանում է իր հետ ուր և գնում է, երբեմն բարեկամների մոտ, երբեմն բազարը, երբ պետք է մի նոր հագուստ գնել։ Լինում են և որոշված այցելություններ. օրինակ, շաբաթ երիկոները գնալ Բեթղեհեմ համբուրելու, այս և այն եկեղեցու տոնախմբությանը (օբա) ներկա գտնվել և այլն։ Դրանք մի տեսակ աշխարհհանդեսներ են, ուր աղջիկները դրվում են ցույցի համար, երբեմն դուրս են բերում նրան հասարակաց զբոսարանի այգին, բայց թատրոն չեն տանում։ Շատ ծիծաղելի մի հակապատկեր է ներկայանում, երբ տեսնում ես մորը, շատ անգամ փաթաթված սպիտակ «ղադիփի» մեջ, ման է ածում վերջին մոդայի ձևով հագնված աղջկան։ Ցամաք փայտը նեցուկ են տվել դալար տունկին, որ չծռվի։

Տան մեջ աղջիկը բավական համեստ է և գործունյա. նա հագնվում է հասարակ կերպով, գլխին ծածկում է մի թաշկինակ, կամ բոլորովին բաց է թողնում, աշխատում է խոհանոցում և չէ արհամարհում մինչև անգամ լվացք անել։ Այսպես նա բավական սովորում է տնտեսություն։ Միւս ժամանակներում, կամ կարում է և կամ հյուսում է։ Մոր դաստիարակությունը գլխավորապես կայանում է այն բանի մեջ, որ անընդհատ հսկում է նրա վրա։ Բայց նա այնքան անփորձ չէ, որքան կարծվում է։ Դպրոցում նա բա-

վական բան է լսել և սովորել. հարևանի աղջիկներն ամեն գաղտնիք բացատրել են նրան։ Նա միայն ձևանում է, թե ոչինչ չգիտե, և պահում է իրան, որովհետև համոզված է, թե «կոտրած ամանը գին չի ունենա», և պահպանում է իր անարատությունը, մինչև ամուսնությունը կշնորհեր նրան ազատություն։ Շատ անգամ իրանք, մայրերը փչացնում են աղջկան, երբ նրա ներկայությամբ, ուրիշ կնիկների հետ բաց են անում ամենակեղտոտ բամբասանքներ այս և այն աղջկա վարքի մասին։ Ամեն ինչ ներշնչում է նորահաս աղջկա մեջ պսակվելու սաստիկ ցանկություն, բայց նա ակամա թաքցնում է, սպասելով իր դառն ճակատագրին։

Մեծ դժվարություններ կան արհեստավորի, և առհասարակ ժողովրդի միջին դասի համար լավ կերպով տնօրինելու աղջկա ապագան։ Մնողների դժգոհությունը չափ անցնում է։ Հայրը հանդիմանում է աղջկան, թե իր համար պետք է կատարյալ չքավորություն պատճառե, իսկ մայրը պաշտպանում է աղջկան։ Ամեն անգամ, ամեն մի նոր հագուստի գնելը մեծ աղմուկ է բարձրացնում ծնողների մեջ։ Աղջիկը հասկանում է իր վիճակի անտանելիությունը և երբեմն մահը օգնության է կանչում։ Մայրը, որպես կին, ավելի լավ է հասկանում կնոջ պահանջը. որոնում է արժանավոր փեսա, ցանկանում է, որ նա հարուստ լիներ, կամ գոնյա ապահովված դրություն ունենար։ Հայրը ցանկանում է գցել առաջին հանդիպողի ձեռքը, միայն թե ինքն ազատվի։ Ամենից ավելի շտապում են եղբայրները, եթե կային հասած եղբայրներ, որովհետև մտածում են, թե «քույրը նրանց բախտի վրա էր նստել, մինչև նրան գլխից ոադ չանեին, իրանք չէին կարող պսակվել»։ Բայց մայրն ավելի փորձված է. նա աշխատում է ընտրությունների մեջ չսխալվելու։ Երբեմն գործի մեջ խառնվում է և սերը։ Բայց նա ոչինչ հետևանք ունենալ չէ կարող, եթե մայրն ավելի գործնական կետից չէ արտահայտում դատեր հոգեկան զգացմունքը։ Երբեմն գործը վերջանում է, բոլորովին հուսս դնելով հաջողության վրա։ Հայտնվում է մի անծանոթ, որի ով և ինչ տեղից լինելը հայտնի չէ, և խնդրում է աղջկա ձեռքը։ Մնողները օգուտ քաղելով այն հանգամանքից, որ դա փող չէ պահանջում, կամ պահանջում է շատ չնչին բան, իսկույն որսում են փեսային։ Այսպիսի ընտրություններ երբեմն վերջանում են սկանդալով, երբ իմացվում է, թե նորափեսան մի քանի տեղերում պսակված է եղել...

Թե այսպես և թե այնպես աղջիկը մարդու է գնում. ընտանիքի վրայից ծանր բեռը բարձվում է։ Սակավ անգամ նա տանում

է իր հետ հինգ հարյուր կամ հազար ռուբլի. երբեմն միայն հագուստներ և մի քանի կարասիքներ. Այդ չնչին գներով նա գնում է իր համար և չնչին փնսու։ Հարսանիքի հանդեսից անմիջապես հետո փեսան շարունակում է իր գործը, դիմում է խանութը կամ արհեստանոցը։ Օվ սկսվում է վշտալի կյանքը։

Մանկահասակ կինը երբեմն լինում է լավ տանտիրկին, նայելով թե որպիսի մարդի էր հանդիպել նա։ Սկզբում մայրը հաճախ այցելում է անփորձ աղջկա մոտ, խրատում է նրան իր նոր տնտեսության այս և այն կարգադրություններների մեջ։ Հետո փոքր առ փոքր մոռանում է նրան և բոլորովին ձգում են իր կամքին։ Այժմ մանկահասակ կինը թեև աղքատ է, բայց դարձյալ գոհ է, որովհետև ինքնագլուխ է։ Սկեսուրը, եթե կենդանի է նա, չէ փոխարինում իր մորը, չէ նեղացնում նրան, երբեմն ինքն է ծեծում պառավին։ Նրա տնտեսությունը լինում է իր մոր տնտեսության կրկնությունը. միևնույն փոքրիկ և նեղ սենյակը, միևնույն անհարմարությունները տիրում են և այստեղ։ Ամուսին այրը բազարի մարդ է, առավոտյան մութին գնում է խանութը և գիշերվա մութին վերադառնում է տուն։ Նա ճաշում է խանութում, առանց կնոջ վրա մտածելու, թե ինչ պիտի ուտե։ Կյուրակե օրերը միայն խոհանոցի օջախներում կրակ է ձգվում. ամբողջ շաբաթ կինը անց է կացնում ցամաք հացով։ Ոչինչ այնքան սարսափելի չէ լինում որպես թաքնված աղքատությունը, որը դրսից հրապուրիչ երևույթ ունի, բայց ներսից մաշում է ընտանիքի կյանքը։

Օրերն անցնում են օրերի հետևից, միօրինակ և անգործ կյանքը սկսում է ծանրանալ մանկահասակ կնոջ սրտի վրա։ Տանը նա ոչինչ պարապմունք չունի, ոչինչ չէ զբաղեցնում նրան։ Անգործության մեջ զարթնում են բոլոր ախտերը։ Պետք է մի բանով զբաղվել և վերջապես զվարճանալ։ Իր հոր տան մեջ մի կողմից երջանիկ էր. մայրը ման էր ածում նրան, ցույց էր տալիս աշխարհին։ Մայրը նրա համար մի լավ ընկեր և բարեկամ էր։ Այդ կարևկցությունները նա չէ գտնում իր տղամարդի մեջ։ Սառնությունը առաջ է գալիս ինքն իրան։ Միջին դասի մարդիկը սովորություն չունեն զբաղեցնել իրանց կնիկներին. դուք չեք տեսնի նրանց միասին փողոցում, կամ որևիցե զբոսանքի տեղում։ Մանկահասակ սիրտն անունդ է պահանջում։ Սկզբում նա տանից դուրս է գալիս իր հարևան կնիկներից մեկի հետ. հետո—մենակ։ Այդ առաջին քայլն է, որ տանում է նրան դեպի մոլորություն։ Ամուսին այրը տան մարդ չէ, նա չի էլ կարող գիտենալ, թե կինը ինչպես

է անցկացնում իր օրը։ Նա ամբողջապես խրված է իր բազարային գործերի մեջ, կնոջ վրա չէ, մտածում։ Կինը դառնում է խորամանկ և խիստ վարպետությամբ տանում է իր գործը։ Նա գիտե մարդու որոշված ժամերը, երբ բազարից տուն է դառնում. և սկսում է կեղծավորել նրա առջև, խաբել նրան։ Իհարկե, կինը չէր ընկնի այդ փորձանքների մեջ, եթե նրա կյանքի պայմաններն ուրիշ տեսակ կարգադրված լինեին։ Նա մտավ ամուսնի տունը, որպես անմեղ և անարատ աղջիկ, բայց գտավ այնտեղ կատարյալ դատարկություն։ Նրան գործ չտվեցին, նրան չզբաղեցրին—աշխատությունը կարող էր փրկել նրան, բայց այդ չկար։ Անգործ և արձակ կյանքի մեջ աճեցին զգայական ախտեր։ Բայց կա ևս մի ուրիշ բան, որ դնում է կնոջը մոլորության ճանապարհի վրա։ Սարսափելի հետևանքներ ունեն կյանքի ահագին պետուրը, երբ նրանց բավականություն տալու միջոցները սուղ էին։ Կինն առաջին զոհն է դառնում աղքատության, որովհետև ավելի հակումն ունի դեպի պերճասիրություն և առհասարակ շռայլություն։ Գավառացի կինը բախտավոր է այդ դեպքում. այնտեղ կյանքի պահանջները թեթև են. բացի դրանից, դեռևս տիրող արևելյան փակ կյանքի շնորհիվ կինը կարողանում է իր աղքատությունը թաքցնել տան չորս պատերի մեջ, նրան չեն տեսնում։ Բայց այստեղ կյանքն ավելի արձակ է. կինը պետք է իրան ցույց տա աշխարհին, իսկ աշխարհը սիրում է նրան տեսնել միշտ զուգված, զարդարված։ Ես վկա եմ եղել մի քանի թշվառ դեպքերի Թիֆլիսում, թե որպես կինը սկզբում բոլորովին անարատ և մաքուր վարքով, հանգամանքներից ստիպված, ընկել է ապականության մեջ։ Նա ավելի բարեհաջող պայմաններում կարող էր պահպանել իր բարքի մաքրությունը։ Մի անգամ ընկավ նա, այլևս իրան պահել չէ կարող. գլորվում է դեպի ցած և ցած. կյանքը ետևից մղում է նրան դեպի ամոթալի կործանումը, մինչև բոլորովին խրում է ցեխի մեջ։ Նույն ցեխի մեջ և մեռնում է նա։

Անարդարություն կլիներ բոլորովին սև գծերով վերջացնել իմ նկարագիրը Թիֆլիսի միջին դասի կանանց մասին, ես պետք է ամբողջացնեմ իմ պատկերը, ձգելով նրա վրա մի քանի լուսավոր շուքեր։

Լինում են և բախտավոր ամուսնություններ։ Մանկահասակ կինն իր հերթում դառնում է մայր։ Եթե նրա առաջին ծնունդը աղջիկ էր, դա ավելի շուտով ներշնչում է նրա մեջ այն խելամտու-

թյունը, թե պետք էր մտածել երեխայի ապագայի մասին։ Իր անցյալ վշտալի կյանքը թողել է նրա մեջ փորձերի մի ամբողջ շարք. նա գիտե, թե ինչ դժվարություններով ինքը կարողացավ պսակվել, կին դառնալ։ Նույն դժվարությունները սպասում են և նորածին մանկան։ Եվ այն օրից սկսում է տնօրինել իր ջավակի օժիտը։ Եթե նրա առաջին ծնունդը տղա էր, դարձյալ գիտե, որ նրա կրթությունը սակավ հոգսեր, սակավ ծախսեր չէ պահանջում. պետք է դպրոց տալ և մի բան սովորեցնել։ Եվ այսպես, խնայողությունը ընտրում է նա որպես գլխավոր օրենք իր փոքրիկ տնտեսության մեջ։ Նա այնքան խելացի է լինում և այնքան բարոյական ուժ է ունենում, որ բոլորովին «բր ձեռքն է առնում» տղամարդին։ Որբեմն ետ է պահում նրան շռայլ կյանքից կամ խմելուց, թելադրում է «փող ետ գցել»։ Իր հասարակական դրությունը, իհարկե, չէ ներում, որ ինքն էլ մի կողմից օգներ ամուսնին հարստանալու նպատակի մեջ և բազարումը նրան գործակից լիներ։ Պատերազմելու համար ընդունված նախապաշարմունքների դեմ դեռ անզոր է նա։ Բայց տան մեջ ամենայն եռանդով աշխատում է։ Ամբողջ գիշերը նա անց է կացնում ասեղով, բացի մասնավոր կարերից, որ ընդունում է հարուստ տների տիկիններից, նա վեր է առնում կարելու հագուստներ և մոդային մագազիններից—բոլորը պատրաստում է տանը։ Ոչ մի շորի կտոր անպետք չէ կորչում նրա ձեռքում. ամեն մի հնոտիք շուտ է տալիս, ձևը փոխում է, և վերջապես նրանից մի նոր հագուստ է պատրաստում իրա կամ երեխաների համար։ Ախտո՛ս, որ ժրաջան կնիկների տնային աշխատությունների պրոգրաման շատ ընդարձակ չէ,— կարել, հյուսել, նախշել—այսքանով վերջանում է նրանց գործունեությունը։ Այսուամենայնիվ, ես տեսել եմ կնիկներ, որ կարելով մի ամբողջ ընտանիք էին պահում. տեսել եմ աղջիկներ, որ կարելով փող էին աշխատել, իրանց համար օժիտ պատրաստել, որ մարդու գնան։ Ժրաջան կինն այնքան թեթևացնում է իր ամուսնի հոգսերը, որ նա չգիտե, թե ինչպես է առաջ գնում փոքրիկ տնտեսությունը. երեխաները միշտ մաքուր են և առողջ, և ամեն ինչ տան մեջ կարգին է։ Ամենաանակնկալ հյուրեր պատահելիս, միշտ տանտիկինը պահած ունի առատ պաշար նրանց զարմացնելու համար։ Տան մեջ ամեն բան կա, ոչինչ պակաս չէ, և գլխավորն այն է, որ մեծ մասը գնել է ու պատրաստել կինը։ Երբ կինն իր նյութական օժանդակություններով օգնում է ընտանիքին, նրա բարոյական ազդեցությունն ավելի կշիռ է ստանում։ Այն ժամանակ նա մտնում է իր ուղիղ դերի մեջ, դառ-

նում է քաղաքակրթող տարր, եթե ոչ դրսի աշխարհի մեջ, գոնյա իր ներսի աշխարհում—ընտանիքի մեջ։

Կրկնում եմ, դպրոցը, միայն դպրոցը չէ կարող բարձրացնել ժողովրդի միջին դասի կնոջ նշանակությունը։ Ապրուստն այստեղ կապված է ծանր կենսական անհրաժեշտությունների հետ, որ պահանջում են կնոջ գործակցությունը։ Պետք է ընդունակ կացուցանել նրան գործելու, աշխատելու և իր ձեռքի վաստակով կերակրելու իր զավակները։ Ես հեռու եմ պահում ինձ այն ծայրահեղություններից, որ կինը բժիշկ լիներ, գրող լիներ, կամ դատավոր լիներ, այլ ավելի կցանկանայի, որ նա մի լավ խանութպան կամ լավ տանտիկին լիներ։ Ոչինչ այնպես ետ չէ պահում կնոջը կործանումից, որպես արդար և ջանասեր աշխատություն։ Քանի որ մենք կնայենք կնոջը։ ըրպես մի հեշտասիրության առարկայի վրա, այնքան կըստորացնենք նրա բարձր նշանակությունը։ Կինը որպես բաժանում է իր ամուսնի սերը, այնպես էլ բաժանորդ պետք է լինի նրա աշխատությանը։ Մեղավորը տղամարդն է, որ նրան գործ չէ հանձնում։ Ո՞վ կարող է լինել այնքան հավատարիմ հաշվապահ կամ գործակատար մի մանրավաճառի խանութում, որպես իր կինը։ Լավ կինը մի մեծ երաշխավորություն է առևտրական ֆիրմայի համար. ոչ ոք նրա նման չէ կարող գրավել և գոհացնել հաճախորդներին. այսքանն բավական է, որ տղամարդիկ այնքան շատախոս և ժլատ չեն լինում, երբ մի բան գնում են կնոջից։ Ո՞վ կարող է այնպես լավ կառավարել մի կոշկակարի արհեստանոցը, որպես վարպետի կինը։ Ես ճանաչում եմ մի կոշկակարի կնոջ միայն, որ իր ամուսնի հետ ապրում էր խանութում։ Նա պատրաստում էր կոշիկների երեսները. կարի մեքենան բավական հեշտացրել էր նրա գործը։ Առևտուրն ընթանում էր արագ և արդյունավոր կերպով, և խաղաղ ու բախտավոր ապրում էր փոքրիկ ընտանիքը։ Մի՞թե կինը չէր կարող գործ գտնել իր դերձակ ամուսնի խանութում. կարն իսկապես կնոջ գործ է։ Ի՞նչ անե կինը, երբ նրան անգործ ձգում են տանը և թող են տալիս անձնատուր լինել իր կրքերին։ Տվեցեք նրան աշխատություն և նա չի ընկնի բարոյական փտության մեջ։ Աշխատության մեջ միշտ թարմ և զվարթ կպահվի նրա սիրտը։ Եթե Թիֆլիսում միջին դասի կինն անկման վիճակի մեջ է, ես գլխավոր պատճառը գտնում եմ նրա անգործության մեջ։ Այդ դասը դեռ բոլորովին փչացած չէ, կարելի է բարձրացնել նրան, միայն պետք էր կնոջ համար պարապմունք գտնել։ Ես գոնյա հասկանում եմ գավառներում այդ դասին վերաբերող կնոջ պարտավորությունը. այնտեղ նրա երեսին պարզ

ասում են. «տե՛ս, քո աշխարհն այս տունն է, իսկ քո սահմանը, այս տան չորս պատերն. դու այս տան լավ կարասիներից մեկն ես, նիստ, կեր, խմիր, բայց ոտքդ տնից դուրս չպիտի դնեաս»։ Այդ դրության մեջ կինը թեև բթամտանում է, անաանանում է, բայց պարզ յալ մնում է կին իր նեղ նշանակությամբ։ Բայց Թիֆլիսում կյանքը և նրա պահանջները բավական փոխվել են, նա հեռացել է արևելքից, բայց դեռ չէ մոտեցել արևմուտքին։ Կինն այստեղ հագել է եվրոպացու հագուստը, բայց դեռ չէ ստացել նրա կրթությունը։ Ես շատ հեռու չեմ գնում, թե ինչ է կատարվում եվրոպայում, բայց առանց անուններ հիշելու ցույց կտամ մի քանի եվրոպացի կնիկներ Թիֆլիսում, որոնք առաջ ծամածռություններ (парикмахерша) էին, քաղցրավենիք շինողներ էին, և մեկը մի հայ ընտանիքի դաստիարակուհի էր, իսկ այժմ հարստացել են, առևտրական մեծ տներ են բաց արել, գործարաններ ունեն։

Իմ հետազոտությունը վերջացնում եմ Թիֆլիսի և գավառական միջին դասի կանանց վերաբերյալ, մնում է մի քանի խոսք ավելացնել նրանց ծերության մասին։ Որպես առհասարակ կնոջ վիճակը, այնպես էլ պառավների դրությունը համեմատաբար շատ տարբեր են գավառներում և Թիֆլիսում։ Գավառներում, երբ կինը ծերանում է, որպես մի պատկառելի հնության, ավելի հարգանքով են վարվում նրա հետ, մանավանդ, երբ նա երախտիք ուներ ընտանիքի վրա։ Որդիքը աշխատում են չվիրավորել նրան, մանկահասակ հարսները խոնարհվում են նրա առջև։ Գերդաստանի բոլոր անդամները ցանկանում են, որ նա օրհնություն բերանումը մեռնի. նրա անեծքից վախենում են։ Այդ հասակում պառավից գործ չեն պահանջում, այլ թույլ են տալիս առավոտ և երեկո եկեղեցի գնալ, իր հոգու և իր որդիների համար աղոթելու։ Նրան չեն զրկում մանավոր ծախսերից, որ պատկերների համար մոմ գներ և քահանայի սիրտը շահեր (առհասարակ մեր կանայքը սկսում են եկեղեցի հաճախել, երբ մոտենում են գերեզմանին. մանկահասակ կնիկներից չէ պահանջվում ջերմեռանդ լինել, ժամ գնալ, աղոթել)։ Թիֆլիսում, ընդհակառակն, կինը խիստ թշվառ ծերություն է ունենում։ Որդիքը վարվում են նրա հետ անգութ կերպով, իսկ հարսները ծեծում են։ Ես տեսել եմ մի քանի օրինակներ, որ որդիները պառավ մորը տնից արտաքսել են առանց պատառ հացի։ Մայրը ստիպվել է դիմել դատաստանի և որդիներից ապրուստ պահանջել, որ քաղցած չմեռնի։ Պետք է բավական բարեխիղճ համարել այն որդուն, որ հոժարել էր հանձնել պառավ մորը մի աղքատ ընտանիքում ամսական 15

ռուբլիով կերակրելու համար։ Մի սարկավագի ընտանիքում պատահեց ինձ տեսնել մի այսպիսի պառավ, որի որդիների համար ասում էին, թե հարուստ են, երկու տներ ունեն։ Պառավների այդ ցավալի վիճակն իմ կարծիքով առաջ է գալիս այն հանգամանքից, որ նրանք, իբրև հին սերունդի մնացորդներ, անտանելի են լինում ընտանիքի մեջ, որ արդեն փոխել էր իր նահապետական կերպարանքը։ Նրանց կոիվը «մողնի» հարսների հետ ծագում է գլխավորապես այդ հանգամանքից։ Որդին բռնում է իր կնոջ կողմը և մորը արտաքսում է։ Մնողներն իրանց աղջիկը մարդու տալու ժամանակ միշտ հաշվի մեջ են դնում այն հարմարությունը, որ փեսան մայր չունի։ «Մենակ տղա է, ասում են մայր չունի»։ Մնողներն այդ դեպքում ի նկատի ունեն,որ մայր չլինելու պատճառով իրանց աղջիկը կարող էր կատարելապես տիրել փեսայի տան վրա, իսկ հարսըն իր կողմից ուրիշ հաշիվ ունի, որ ազատ կլինի, իր վրա հսկող չի լինի։ Գավառներում, ընդհանրապես, ուրախ են լինում, երբ պառավ մայրը կար, մտածում են, որ նա խնամք կտաներ անփորձ հարսի վրա. և նրանք միշտ հաշտ են ապրում, որովհետև թե հինը և թե նորը շատ նման են լինում մեկմեկու։ Բայց Թիֆլիսում ես որքան անարգված լիներ պառավ մոր ծերությունը, և որքան հոժարությամբ հանդիպում են նրա մահվանը, այսուամենայնիվ, նրա թաղումը կատարվում է բավական հանդիսավոր կերպով. այն ժամանակ միայն ցույց են տալիս, թե պատվում են նրան։ Այդ, իհարկե, առաջ է գալիս այն սովորությունից, որ մարդիկ եկեղեցական խորհուրդները գործ են դնում իրանց փառասիրությունը հագեցնելու համար։

Խոսենք Թիֆլիսի ունևոր ընտանիքի աղջկա մանկության վրա։ Երկու տարեկան հասակում ծծմայրը նրան տանում է որևիցե հասարակական այգի ման ածելու։ Եթե նա առաջին աղջիկ ծնունդն է, բախտավոր է լինում, սիրվում է, և հենց ծնած օրից վայելում է ճոխություն։ Դեռ չորս տարեկան չեղած,մայրը նրան հագցնում է բոլորովին ֆանտաստիկական զգեստներ և տանում է կլուբը, երբ լինում է «ընտանեկան գիշեր» կամ երբ տալիս են մանկական բալ։ Ամառը նրան տանում են Կոջոր կամ մի ուրիշ ամարանոց, ուր նրա քնքուշ դեմքը մի փոքր այրվում է արեգակի և արձակ օդի տակ։ Աշունքին նա դառնում է տուն, բավական լցված։

Դեռ հինգ կամ վեց տարեկան չեղած, նա հայտնվում է իր մոր հյուրերի հասարակության մեջ, երբ նա տալիս էր «վեչեր», ուր ֆինիկները հավաքված, կամ լոտո են խաղում, կամ թուղթ։ Մայրը

զմայլվում է, տեսնելով, որ աղջիկը փոքրիկ ծառայություններ է անում հյուրերին. լոտոյի համար լոբի է բերում, կամ հավաքում է վեր թափված կարտերը։ Ամբողջ ժամերով աղջիկը անքուն նստած, նայում է նրանց խաղին, և լսում է նրանց շատ անգամ անպատշաճ խոսակցությունները և ժպտում է։ Դա էլ մի տեսակ կրթություն է, որ ստացվում է օրինակից։ Մոր հասարակության մեջ երբեմն հայտնվում է մի երիտասարդ, որ բրդում է կոպիտ կատակներ. նա իրան ձևացնում է, թե սիրահարված է փոքրիկ աղջկա վրա և իրան կոչում է նրա ապագա փեսան։

Վերջապես հասնում է ուսման ժամանակը։ Պետք է նկատել, որ Թիֆլիսի հարուստ ընտանիքներում սպասավորները և սպասուհիքը բոլորը օտարազգիներ են. ծառաները վրացի կամ իմերել, ծծմայրը օսեթուհի, իսկ վերջին ժամանակներում սովորության մեջ մտան և ռուս աղախինները։ Երեխաների սկզբնական կրթությունը համաբար հանձնված է նրանց ձեռքը։ Աղջիկը ծծմայրից սովորում է վրացերենը, իսկ ռուս աղախինը ուսուցել է նրան ռուսաց լեզուն։ Մայրենի լեզվից նա մի բառ չգիտե, որովհետև այդ լեզվով ընտանիքի մեջ ոչ ոք չէ խոսում։ Օտար լեզուների մեջ ունեցած պրակտիկան բավական հեշտացնում է նրան սովորել օտարազգի դպրոցներում։ Հայոց ծխական դպրոցներն անպատշաճ են համարվում։ Աղջկան տալիս են կամ պանսիոն բավական թանկ գնով, կամ իգական գիմնազիան։ Սակավ է պատահում, որ տանը հրավիրեին վարժապետ։

Պանսիոնում թեթև կերպով սովորեցնում են աշակերտուհուն օտար լեզվով կարդալ և սխալներով գրել. փոքր-ինչ տեղեկություն են տալիս պատմությունից, աշխարհագրությունից և քվաբանությունից։ Բնական գիտությունների հետ հազիվ թե ծանոթացնում են, իսկ կյանքի գործնական կողմերի հետ նա մնում է բոլորովին անծանոթ։ Այն, որ սովորում է կյանքի համար, սահմանափակվում է մի քանի սալոնական սովորություններով, թե որպես պատշաճ է պահել իրան հասարակության մեջ, որպես գլուխ տալ և այլն։ Ավելացնում են դրանց վրա պարը և պիանոյի վրա ածելը, որ միշտ ամաչում է նա օտարների մոտ ածելիս։ Բայց ինչ որ գլխավորն է, դա է պանսիոնի մեջ տիրող ոգին և ուղղությունը, որ ներշնչում է նրա մեջ միայն թեթևամտություններ... Աղջիկը կորցնում է ինքնուրույնությունը և բնական նրա մեջ ոչինչ չէ մնում։ Ամեն ինչ նրա մոտ կեղծ է լինում, թե ձայնը, թե խոսելու ձևը, թե աչքերի հայացքը և թե ժպիտը։ Հիմնավոր նրա մեջ ոչինչ չկա. բոլորը դար-

դակ է, Քե սիրտը և Քե գլուխը։ Եվ ուրիշ կերպ լինել կարող չէր, արևմտյան կրթությունը նա ստանում է երկրորդական ձեռքից...

Պանսիոնից առնում են «մոդնի» աղջկան, երբ մարդու տալու ժամանակը մոտենում է։ Դպրոցի կրթությունը լրացնում է մայրը։ Երևակայեցեք ձեզ մի մայր, որ հանկարծ արևելյան կյանքից արևմտյանի մեջ էր ընկել—փակ ընտանիքից դեպի արձակ աշխարհ էր դուրս եկել։ Տարբերությունն ահագին է։ Կինը, որ պատրաստված չէ աշխարհի համար, որ ծանոթ չէ ժողովրդի հետ, որ չգիտե կյանքի արտաքին պայմանները, միշտ անզոր կլինի վտանգների դեմ։ Դրանով պետք է բացատրել շատ մայրերի վարքը...

Ազատվելով պանսիոնից, աղջիկը բոլորովին մի կողմ է ձգում գրքերը, նա սիրում է նայել ավելի «մոդնի ժուռնալներին» վրա։ Բայց լինում են այնպիսիները, որ սկսում են կարդալ այն գրքերը, որ պանսիոնում արգելված էին։ Նրանք դառնում են ավելի սանտիմենտալային և ավելի ցնորամիտ։ Քերի ուսումը և անհիմն կրթությունը երբեմն առաջ են բերում տարապայման անձնավորություններ, այս պատճառով զարմանալի չէ տեսնել, որ մեր Քերուսներից հայտնվում են երբեմն «նիհիլիստականներ»։ Ծայրահեղությունները շոշափում են միմյանց։ Տգետ, սնահավատ, նախապաշարմունքներով լի խավար ընտանիքը տալիս է շատ անգամ ծայրահեղ ազատամիտներ, երբ կրթության լույսը մոտեցնում ես նրան։ Բայց այսպիսիների թիվը մեր աղջիկների մեջ շատ փոքր է։ Ես առիթ եմ ունեցել միայն մեկի հետ ծանոթ լինելու։ Մինչև այսօր չեմ կարող երևակայել մի ուրիշ ողորմելի արարած, որ նրա նման մտավոր հիվանդության մեջ ընկած լիներ։ Ես հարգում էի նրան, որովհետև նա ներկայանում էր որպես մի բողոք ընտանիքի հնացած նախապաշարմունքների դեմ, բայց ցավում էի, որ այնքան դարտակ էր։

Ընտանիքն ավելի է փչացնում անմեղ աղջկան, քան Քե պանսիոնը։ Մնողների բարքերի կոպտությունը, վայրենությունը, կյանքի համարձակությունը, վատ օրինակ—ահա՛ ընտանիքի այն պայմանները, որոնց մեջ կազմվում է աղջկա բնավորությունը սկսյալ նրա մանուկ հասակից։ Աղջիկը հոր երեսը համարյա չէ տեսնում. նա առավոտյան դիմում է իր գործին, երբ բոլորը քնած էին. ամբողջ ցերեկը անց է կացնում խանութում կամ կանտորում։ Երբ գիշերը խանութը կողպվում է, այնտեղից ուղղակի դիմում է կլուբը Քուղք խաղալու և վերադառնում է տուն այն ժամանակ, երբ բոլորը նույնպես քնած էին։ Լինում են գիշերներ, որ նա չի էլ վերա-

դառնում... Հայրը զվարճանում է դրսում, իսկ մայրը տանը «վեչերներ» է սարքում և լոտոն ու թղթախաղերը նրա սալոնից անպակաս են լինում։ Աղջիկը սկսում է կամաց-կամաց մասնակցել մոր զվարճություններին, և եթե կին հյուրերի հետ հրավիրված էին տղամարդիկ (որ առանց նրանց չէ լինում), աղջիկը սկսում է ցույց տալ իր բոլոր շնորհքը՝ «կոկետություն» անել նրանց հետ, և զվարճախոսությունն ընդունում է վերին աստիճանի ցինիկյան կերպարանք։

Շռայլություն և բարքերի համարձակություն—ահա՛ երկու ախտեր, որ փտեցնում են մեր բարձր և հարուստ դասի ընտանիքի բարոյական հիմքը։ Ես ուրիշ կերպով չեմ կարող բացատրել այդ երևույթների պատճառները. բայց միայն նրանով, որ Թիֆլիսի մեր բոլոր հարուստները, ինչպես ասում են, «նորաքսակ» մարդիկ են, այսինքն ժառանգությամբ չեն ստացել իրանց հարստությունը, այլ վաստակել են բախտի կամ հանգամանքների հաջողությամբ, և շատ անգամ անազնիվ միջոցներով։ Աղքատությունից հանկարծ հարըստության տեր են դարձել։ Այսպիսի մարդիկ չէին կարող անօրինել մի կանոնավոր տնտեսություն և մի վայելուչ ընտանեկան կյանք։ Շռայլությունը միշտ կից է լինում հանկարծահաս հարստության հետ և այս պատճառով նա երկրորդ սերունդին չէ հասնում։ Վայելուչ կյանքը—լի ամեն բավականություններով, բայց միևնույն ժամանակ չափավոր սահմանի մեջ—կազմվում է այն ժամանակ, երբ հարստությունն անցնում է մի քանի սերունդ։ Ես մի շատ հասարակ օրինակով կպարզեմ իմ միտքը, գցեցեք մի քաղցած հավ մի ցորենով լիքը ամբարի մեջ, ի՞նչ կտեսնեք. նա կսկսե ոչ այնքան ուտել, որքան քթով անել և ոտներով ցորյանը ցրիվ տալ այս կողմ և այն կողմ։ Նոր հարստացած աղքատն այդ հավի նման է լինում։ Միևնույն օրինակով կարելի է բացատրել և կնոջ բարքի համարձակությունը։ Կինը, արևելյան փակ կյանքի մեջ ճնշված կինը, որին հանկարծ տալիս են ազատություն (դա էլ մի տեսակ հարըստություն է) չէ կարող օրինավոր կերպով գործադրել իր ազատությունը, չէ կարող վայելել նրան որպես հարկն է։

Բավական հեռացա նպատակիցս։ Կրկին վերադառնալով դեպի գյուղական ընտանիքը, իմ նկարագիրը վերջացած կլինի։ Կարդալով այս հետազոտությունն ինքնըստինքյան ծագում է հարց, արդյոք ի՞նչից առաջ եկավ կնոջ մի այսպիսի վիրավորական վիճակը, որ նա ձայն չունի ոչ ընտանիքի և ոչ հասարակության մեջ, որ նա պահվում է անմատչելի ծածկոցի տակ, որպես մի նյութ, որին

արտաքին ատմոսֆերայի ազդեցությունը կարող էր փչացնել, որ նա իր անձի տերը չէ, այլ գործ են ածում նրան որպես մի սեփականություն, որ ուրիշին էր պատկանում, և վերջապես, որ նա իբրև մարդ զրկված է մարդկային ամեն իրավունքներից։ Այդ հարցերի լուծումը շատ դժվար է, մանավանդ այն պատճառով, որ պատմությունը մեր հին ընտանեկան կյանքից ամենևին տեղեկություն չէ տալիս։ Շատերը կարծում են, թե կնոջ այս դրությունը կազմվեցավ մահմեդական ազդեցության ներքո, ոմանք տղամարդի բռնաճիրությունն են պատճառ բերում։ Բայց իմ կարծիքով, հայ ընտանիքի կազմակերպությունը չէր կարող մի ուրիշ տեսակ վիճակ ստեղծել կնոջ համար, քան թե այն, որ այժմ կա։ Նրա կացությունն այն աստիճան համապատասխանում է իր շրջանին, որ ստիպված ես մտածել, եթե այլ կերպ լիներ, անպատշաճ կլիներ։ Երևակայեցեք ձեզ մի գյուղական ընտանիք, որ բաղկացած է քսան—երեսուն կամ ավելի անդամներից. մի քանի ամուսնացած եղբայրներ միասին են ապրում. նրանց որդիները նույնպես կնիկներ ունեն. տունը լցված է զանազան հասակի երեխաներով. հենց դա մի փոքրիկ պետություն է, ուր մարդիկ կապված են իրար հետ ընդհանուր շահերով։ Մի այսպիսի ընտանիքի ամբողջությունը և ներդաշնակությունը պահպանելու համար, արևելյան հայացքով, շատ բնական էր, որ կնիկներին ձայն և իրավունք չտրվեր։ Երկպառությունը եղբայրների մեջ միշտ ծագում է կնիկների անհամաձայնությունից։ Կինը չափազանց բծախնդիր և նախանձոտ է։ Տղամարդը մտածեց նրա բերանը փակել, որ ընտանիքի կապերը չքանդվեն։ Կնոջ դրության մյուս մանրամասն ևս բնականաբար առաջ եկան միևնույն ընտանեկան պայմաններից, որ պահանջում են նրանից անպայման հնազանդություն։ Իհարկե, կնոջ դրության վրա փոքր չազդեց և արտաքին աշխարհը. տիրող ազգերի բռնաբարությունները ստիպեցին քողի տակ պահել նրան։ Մի արաբական խալիֆա ասում է. «Երկու բան պետք է ծածուկ պահեք օտարի աչքից, մեկը փողը, մյուսը—կինը»։ Այդ խրատը արևելքի պահանջն էր։

Կասեք, ի՞նչ հարկ կար, որ անպատճառ մի քանի եղբայրներ անբաժան ապրեին, երբ կարող էր յուրաքանչյուրը մի առանձին ընտանիք կազմել։ Աշխատանքի բաժանումը պահանջում է հիմնել մի այսպիսի, եթե կարելի է ասել, ընտանեկան ասոցիացիա։ Գյուղական ընտանիքն անպատճառ պետք է շատ աշխատողձեռքեր ունենա իր բազմատեսակ գործերի համար։ Ավելացրեք դրա վրա և այն հանգամանքը, որ մեր գյուղացին ապրել է միշտ բար-

բարոս և ավազակ ցեղերի բռնության ներքո. արտաքին ճնշումը ստիպում էր, որ մոտ ազգականները սեղմվեին միմյանց հետ և կազմեին մի մեծ ամբողջ, ոչ միայն ավելի աշխատող ձեռքեր ունենալու համար, այլ մի մեծ ուժ կազմելու համար, և կռվելով աշխատության արդյունքը հափշտակությունից ազատ պահելու համար։ Դա նահապետական դրության պահանջն էր։ Մեր նախապապ Հայկի ընտանիքը բաղկացած էր 300 հոգուց։

Այժմ, որ ազատություն է տիրում և կյանքի պայմանները փոխվում են, նրա հետ էլ ընտանիքի կազմակերպությունը փոքր առ փոքր ուրիշ ձև է ստանում. գերդաստանի անդամների թիվը պակասում է, եղբայրները պսակվելուց հետո բաժանվում են։ Եվ, այստեղից կնոջ վիճակը մասամբ կփոխվի։ Ի՞նչու։ Նրա համար, որ եթե նրանից պահանջում էին հնազանդություն, պահանջում էին լուռ լինել, դա գլխավորապես այն նպատակով էր, որ պահպանվի ընտանիքի ներդաշնակությունը, որ բաղկացած էր շատ անդամներից։ Բայց եթե այր ու կին ու իրանց զավակները մի փոքրիկ ընտանիք են կազմում, այն ժամանակ տղամարդը նրա հետ շատ խիստ չի լինի, և ինքն իր շահերով միակ կնոջ հետ կապված լինելով, նրա վրա կնայի որպես իր ընկերի վրա, և նրան իրավունքներ ու ազատություն կտա։ Եվ կինը, այսպիսով ընտանիքի մեջ փոխելով իր դրությունը, նրա հասարակական դրությունն էլ կփոխվի։ Այս դատողությունները գուցե խորթ երևան, բայց պետք է խորամուխ լինել գյուղական գերդաստանի մեջ, այն ժամանակ կհամոզվի մարդ, թե այդ այդպես է։ Որքան էլ սիրելու լիներ տղամարդն իր կնոջը, որքան էլ ցանկանալու լիներ նրան լավ և հանգիստ պահել, դարձյալ չէր կարող, որովհետև աշխատանքի բաժանումն ընտանիքի մեջ պահանջում է, որ բոլորը հավասար գործեին։ Եթե ամուսինը մի փոքր խնայեր իր կնոջը, իսկույն կգրգռեր իր եղբոր կնոջ նախանձը. և դրանով եղբայրների մեջ համաձայնությունը կխանգարվեր։ Բայց այդ պահել չէր կարող, եթե բոլոր ամուսնացած եղբայրները միասին չեն բնակվում։

Ընտանիքի նույնիսկ կազմակերպությունը պահանջում էր մրցընկել գերդաստանի մեջ միապետական սիստեմա, հանձնելով իշխանությունն այն անձի ձեռքը, որ բոլորից երեցն էր հասակով և բարոյապես հեղինակություն ուներ։ Իհարկե, կինը, որպես ֆիզիկապես մի թուլլ արարած, պետք է երկրորդական տեղ բռներ այդ ընկերության մեջ, ուր պահանջվում է ավելի մարմնական ուժ։ Իսկ

կինն իր դրության այդ ձևի մեջ, թեև դարերով անցկացրուց շատ դժնդակ օրեր, բայց կարողացավ պահպանել իր բարքի մաքրությունը, և առանց փչացնելու հասցրուց իրան մեր ժամանակին։ Այժմ ունենք ձեռքում մի անարատ և դեռ չձևակերպված տարր, որ սովորել է ընդունել ինչ որ լավ է, ինչ որ օգտավետ է, տե՛ւր նրան ուսում, և նա կլինի քաղաքակրթող տարր, որպես մինչև այսօր եղել է ընտանիքի բարոյական հիմքը և նրա աշխատությունները բաժանող անդամը։ Մեծ բարեփոխություն արած կլինի կնոջ սեռին այն մարդը, որ լուսավորության կայծը կմտցնի ամենախուլ գյուղական խրճիթներում. այդ լուսը միայն կարող է նրան առաջնորդել և դուրս բերելով տնային փակ շրջանից, կանե նրան հասարակական ընկերության անդամ։

Ես սկսեցի գեղչկուհու ծնունդից. պետք է վերջացնեմ նրա մահով։ Այժմ մնում է խոսել նրա ծերության մասին։ Գյուղացի կինը որքան հնանում է, այնքան անտիկային բնավորություն է ստանում. և որքան հիմարանում է, այնքան խելացի է համարվում։ Տարիների բարդության հետ ավելանում է և նրա հեղինակությունը։ Այդ հասակում որդիքն ավելի պատկառանքով են նայում նրան, հարսներն աշխատում են չվշտացնել։ Մերունի ծնողների թե անեծքը և թե օրհնությունը մեծ նշանակություն ունեն ոամկի մոտ։ Պառավից աշխատություն չեն պահանջում, թողնում են, որ հանգստանա։ Այդ հասակում նա գործում է ավելի եկեղեցում, քան թե տան մեջ։ Նա նախապատրաստվում է գերեզմանի համար։ Պառավի ջերմեռանդությունը հասնում է մինչև խելագարության. նա լինում է չափազանց անահավատ։ Մանկության օրերում և միջին հասակում նա ժամանակ չուներ մտածելու հոգու և երկնքի համար. կյանքն ավելի շատ էր պահանջում։ Տարվա մեջ մի քանի անգամ եկեղեցի գնալով և հաղորդվելով, նա իր պարտքը վճարում էր։ Այժմ հանգամանքները փոխվեցան։ Այսուամենայնիվ տան մեջ դարձյալ նա հանգիստ չէ մնում. ոսկրացած ձեռները չեն սովորել անգործ մնալ։ Նա է հսկում խոհանոցի վրա, բաժանում է կերակուրները, մառանի բալանիներն իր մոտ է պահում, և նրա դիտող աչքերը չեն թողնում մի բան իզուր կորչել։ Պառավը որովհետև պառավելով կրկին երեխայանում է, այս պատճառով լինում է նա մի լավ ընկեր երեխաների համար, զբաղեցնում է նրանց, պահպանում է, օրոր է կարդում և երբեմն հեքիաթներ է ասում։ Երեխաներն ընտանիքի մեջ չունեն մի ավելի մտերիմ բարեկամ, մի ավելի հզոր պաշտպան, որպես պառավ տատը։ Սպառող կյանքը և նոր սկսվող կյանքը մո-

տենում են և գրկում են միմյանց։ «Տան ծերը տան խէյր-բարաքյաթն (օրհնութիւնն) էր»,—ասում է ռամիկը և շատ ցավում է, երբ նա պակասում է տնից։ Ամենաաղքատ գյուղացին աշխատում է պառավ մոր թաղումը հանդիսավոր կացուցանել, ոչինչ չպակսեցնելով ընդունված սովորութիւններից։ Նա արժանավոր կերպով վարձատրում է քահանային, «հոգեհաց» է տալիս գյուղական հասարակութիւնը և «հոգեբաժին» է տալիս հոգևոր կառավարութեան գործակալին։ Պառավի մահն ավելի քանկ է նստում, քան թե նրա մի քանի տասն տարիների կյանքը։ Չեք գտնի մի գյուղացի, որ իր մոր գերեզմանը թողներ առանց տապանաքարի, որ ամեն տարի նրա շիրիմը օրհնել չտար. կամ քահանային փող չվճարեր «հոգվոց» կարդալու համար։ Հայը առհասարակ հարգում է գերեզմանը—երկընքի այդ նախագավիթը, բայց մի բան, որ արժանավոր կերպով չէ գնահատում, դա է—կյանքը։

Գ

ՔԱՂԱՔԱՑՈՒՀԻՆ

Քաղաքում շատ բան փոխվում է։ Իմ խոսքը գավառական քաղաքների մասին է։

Մեր գավառական քաղաքներում չկա արիստոկրատիա, չկա պրոլետարիատ և չունենք մշակ դաս, ինչ որ հասկացվում է Եվրոպայում այդ անունով։ Մենք ունենք միայն վաճառականներ և արհեստավորներ, ունենք և ծառայողներ ու եկեղեցականներ, եթե վերջինները կարելի էր դասակարգ համարել։ Ես սկսում եմ արհեստավորի կնոջից։

Փոքրիկ մանրավաճառները և արհեստավորները շատ նման են մեկմեկու, կնոջ դրութիւնը երկուսի ընտանիքում ևս միևնույն է։ Մեր քաղաքներում հարյուրավոր արհեստավորների ընտանիքներ չեն ածած միմյանց վրա և միևնույն տան մեջ, այլ բոլորն առանձին տներ ունեն։ Կյանքի պայմանները թույլ չեն տալիս, որ մի քանի ընտանիքներ մեկ բնակարանում ապրեին։ Քաղաքացին իր տունը վարձով է տալիս այն ժամանակ, երբ իր համար ավելորդ էր, այսինքն, երբ մի քանի տներ ուներ։ Կանոնոցն ըստ մեծի մասին տների առանձին բաժնումն է գտնվում։ Ընտանիքի անդամների թիվը համեմատաբար փոքր է լինում, քան թե գյուղերում։ Այստեղ եղբայրները հենց որ պսակվեցան, խիստ սակավ է պատահում, որ միասին ապրեին։

Քաղաքացի արհեստավորն ավելի թշվառ է, քան գյուղացի երկրագործը։ Կյանքի պետքերը շատ են, քան թե նրանց լցուցանելու միջոցները։ Արհեստավորի հին, ասիական ձևով պատրաստած արդյունաբերությունը օրըստօրե գործածությունից ընկնելով, պատճառ է տալիս նրա դառն չքավորությանը։ Ընտանիքի հայրը վաղ առավոտյան գնում է իր խանութը և վերադառնում է մութ գիշերով. նա տանում է իր հետ որդիներից, որը կարող էր իրան օգնել։ Կինը չէ մասնակցում ամուսնի արհեստին և ոչ կարող է օգնել նրան։ Այդ կարելի էր, եթե արհեստանոցը միևնույն տան մեջ լիներ, ուր նրանք բնակվում էին, բայց նա գտնվում է բազարում, և կնոջ համար բազար դուրս գալ անպատշաճ էր. շատ անգամ նա չգիտե, թե ամուսինը որտեղ է գործում, և երբեք չէ տեսել նրա արհեստանոցը։ Եվ այսպես, արհեստավորն առավոտյան գնում է իր գործին, կինը մնում է տան մեջ մենակ։ Նա ոչ սպասավոր ունի և ոչ աղախին. ինքն իր տան ծառայողն է, և եթե չուներ նա հասած աղջիկ, որ օգներ իրան, տնային գործերը բոլորն ինքն է կատարում։ Պառավ սկեսուրը միայն հրամայող է, և շատ անգամ խանգարում է նրան իր անտեղի պահանջներով, քան թե օգնում է։

Աղջիկն այստեղ ևս ծնվում է միևնույն հանգամանքների մեջ, որպես գյուղերում, և եթե նկարագրեինք նրա որպես աշխարհ գալը և ընդունելությունը պետք է շատ բան նորից կրկնեինք։ Մայրն ինքն է կերակրում նորածին աղջկան, ինքն է հոգ տանում նրա մաքրության վրա, որ սկզբում շատ խնամք է պահանջում։ Միևնույն ժամանակ նա պետք է օջախը վառե, կերակուր պատրաստե, և ամուսնի համար դուքանը ճաշ ուղարկե։ Փոքրիկ աղջիկը միշտ խանգարում է, այս պատճառով նրան շատ անգամ հենց օրորոցի մեջ ծեծում են, որ ձայնը կտրի, աղաղակ չբարձրացնե։ Եվ երբեմն խմեցնում են կաթնով եփած խաշխաշ, որ քնե և չխանգարե մորը. Քմրությունն և ապշությունն ափիոնի հետ փոքր հասակից մըտնում է նրա ուղեղի մեջ։

Աղջկա վիճակը փոխվում է, երբ նա ազատվում է օրորոցից, երբ այլևս չէ կերակրվում մոր ստինքով, և երբ կարողանում է սողալ, կամ չորս թաթիկների վրա քաշ գալ, և կամ պատերը բռնելով ման գալ։ Այժմ նա ինքն իրան կարող է կառավարել։ Նա երբեմն դուրս է գալիս բակը և ամողջ օրը թավալվում է հողերի և ցեխերի մեջ։ Մայրը մասամբ ուրախ է, որ նրա երեսը չէ տեսնում, և երբեմն գտնում է նրան դռում քնած սառը գետնի վրա, կամ խըրված ցեխի մեջ։ Տան շեմքից ոտքը դուրս դնել և փողոցը գնալ նա

չէ կարող, որովհետև դուռը միշտ կողպված է լինում. բայց բակը նրա խաղերի համար բավական ընդարձակ ասպարեզ է, մանավանդ երբ զարդարած է լինում պարտեզը, որը գավառական քաղաքներում ընտանիքների միակ մխիթարությունն է։

Դեռ հինգ տարեկան հասակը չհասած, մայրը ստիպեցնում է նրան կատարել այս և այն տնային գործը, օգնել իրան։ Ամեն մի անուշադրություն հանդիպում է ծանր ապտակների։ Այդ հասակում նրան թույլ են տալիս գնալ մերձավոր հարևանի տունը, երբ պետք էր մի բան փոխ առնել։ Իսկ երբ դառնում է նա տասն կամ տասներկու տարեկան, այնուհետև տան դռները փակվում են նրա ֆռչև։ Խիստ հազիվ անգամ մոր հետ նա ազգականների մոտ է գնում։ Գյուղացի աղջիկն այդ դեպքում ավելի բախտավոր է. նա ապրում է ավելի արձակ աշխարհում. և շատ անգամ, թեև ոչ առանց հսկողության, գնում է այգին, պարտեզը, դաշտը, սարը և շատ բան սովորում է բնությունից։ Բայց արհեստավորի աղջկա աշխարհայեցողությունն իր չափազանց նեղ շրջանի մեջ մնում է խիստ սահմանափակ և միակողմանի։ Փակված տան չորս պատերի խուլ առանձնության մեջ, փակվում է և նրա մտավոր զարգացումը։ Թեև մայրն աշխատում է նրան մի բան սովորեցնել, բայց բոլոր նրա դաստիարակությունը բարոյական բնավորություն ունի, կըրթող, զարգացուցիչ նրա մեջ ոչինչ չկա։ Աղջիկը միշտ լսում է միևնույն խրատները, թե պետք է խոնարհ լինի, հնազանդ լինի, սակավ խոսի, ամենևին չծիծաղե, տղամարդերի երեսին չնայե, պառավ կնիկների ձեռքը համբուրե և այլն։ Նրա միտքը, սիրտը և հոգին ճնշում են հին նախապաշարմունքների ներքո, և խլում են նրանից ամեն մի ազատ, ինքնուրույն զարգացում։ Նա դառնում է մտավորապես իդիոտ, բայց բարոյապես—հրեշտակ։

Աղջկանց դպրոցներ գավառական քաղաքներում չկան, կամ եղածները դեռ մատչելի չեն ժողովրդի աղքատ դասին։ Թողյալ այդ, ստոր դասը դեռ նայում է դպրոցին որպես մի անբարոյականացնող հրմնարկության։ Այդ կարծիքը ստեղծել է ռամկի մտքում նույն ինքը դպրոցը։ Եվ եթե հաջողվում է արհեստավորի աղջկան դըպրոց մտնել, ընտանիքի բռնակալությունը շարունակում է դպրոցը։ Վարժապետը և վարժուհին վարվում են նրա հետ նույնպես կոշտ-կոպիտ կերպով, և երբեմն ապտակներով, որպես տանը վարվում էր մայրը կամ հայրը։ Ծնողներից նա չտեսավ որևիցե զարգացնող և կատարելագործող օրինակ, իսկ չոր ու ցամաք ուսումը չէ տալիս սնունդ ոչ նրա մտքին և ոչ հոգուն։ Աղջիկը տարիներով երթևեկում

է դպրոցը կատարյալ տգիտության մեջ, և վնասակարն այն է, որ թերի և անկարող ուսումը, արգելք դնելով բնական զարգացմանը, շինում է նրանից բթամիտ։

Բայց մայրը, ինչ վարքի տեր և լիներ նա, դարձյալ աշխատում է աղչկա սանձը իր ձեռքում պահել։ Ոչինչ օրինակ այնքան կորըստաբեր լինել կարող չէ, քան թե այն, որ մարդ խրատում է ուրիշին այն առաքինությունները, որ ինքը չէ կատարում։ Այստեղից առաջ է գալիս մոր և աղչկա մեջ հարաբերությունների մի կեղծ խարդավանք, որով մինը մյուսին խաբում է։ Բայց աղչիկն ավելի վարպետ է լինում։

Դպրոցից դուրս բերելեն հետո, աշխատում են աղչկան շուտով մարդու տալ։ Օժիտի քանակությունն առաջուց հրապարակվում է, թե քանի հազար է. նրա համեմատ որոնում են փեսա։ Մայրը սկըսում է այնուհետև աղչկան ցույց տալ աշխարհին, այցելություններ են անում, տանում է նրան բալ, թատրոն, «կրուժոկ» և դրանց նման տեղեր։ Աղչիկը միշտ իրան նեղված է գտնում անկիրթ, անտաշ մոր մոտ, որ ամեն տեղ հետևում է նրան, որպես մի սև ստվեր, բայց թաքցնում է իր տհաճությունը։ Հայրն ամենևին չէ խառնվում գործի մեջ. նա իրան հեռու է պահում։ Դուք չեք տեսնի հարուստ հայրերից մեկին, որ իր աղչկա հետ ման գալիս լիներ փողոցում։ Այս դեպքում հայը պահպանել է իր ասիականությունն այլևս կնոջ վերաբերությամբ։

Ամուսնությունները լինում են ըստ մեծի մասին հավասարը հավասարի հետ (նյութական կարողության կողմից)։ Առաջ գերադասում էին աստիճանը, «ամունդիրը», բայց հիմա աստիճանավորին բանի տեղ չեն դնում, եթե փող չունի կամ որևիցե բարձր դիրք բռնած չէ։ Մի ժամանակ էլ մոդայի մեջ մտան օտարազգի փեսաները, բայց հիմա նրանք էլ կորցրել են իրանց վարկը, որովհետև համարյա բոլոր ամուսնությունները օտարազգիների հետ անբախտ եղան։ Փեսան աղչկա բերած փողը կերավ և նրան քաղցած թողեց։ Մնողները սկսեցին ափսոսալ ոչ թե աղչկան, որ մի անպիտանի ձեռքում մաշվում էր, այլ իրանց տված փողին։ Եվ այսպես, ամուսնության մեջ գլխավոր դերը խաղում է հաշիվը և ամուսնական կապը դառնում է փողը։ Ամենևին չեք տեսնի, որ մի աղչիկ, մի քանի տասն հազար օժիտով, պսակվեր մի գեղեցիկ և առողջ երիտասարդի հետ, որ միայն ուսում ուներ, բայց փող կամ պաշտոն չուներ։ Եվ ընդհակառակը, շատ կտեսնեք այնպիսի փեսաներ, որ ամուսին լինելու ընդունակությունը կորցրել էին, որ կյանքը սպառել էին

վատ կացութեան մեջ, բայց պսակվում են աղջիկներից ամենագեղեցիկի հետ, որովհետև փող ունեն։ Սերն ամենևին դեր չունի այս դասի ամուսնութեան մեջ. և եթե հայտնվում է նա, առաջ է բերում այնպիսի մի բոման, որ ոչ մի գրիչը հարգող բոմանիստ չէր ցանկանա նկարել նրան։ Շատ ցավալի է լինում աղջկա դրութիւնը, երբ նա միայն փողով պետք է իր համար ամուսին գտներ։ Այդ դեպքում նրա անձնական արժանավորութիւնները բոլորովին իրանց նշանակութիւնը կորցնում են։ Գուցե նա գեղեցիկ էր, գուցե խելացի էր, և կարող էր լավ կին լինել, բայց փեսաները նրա մոտով անցնում են կարծես արհամարհելով։ Նա մնում է որպես մի անվաճառ ապրանք, որ խանութպանի լեզվով կոչվում է «փասմանդա»[1]։ Տարիների հետ նրա բնավորութիւնը փոխվում է։ Կապիկը որքան պառավում է, այնքան չարանում է։ Պառավ աղջիկը սեփականացնում է մաղձոտ բնավորութիւն։ Նա դառնում է և նախանձոտ, մանավանդ երբ տեսնում է, որ վատերը փողով մարդիկ են գնում։ Մի հարստից, որ կաղ աղջիկ ուներ, հարցրին. «ի՞նչպես պետք է մարդու տաս աղջիկդ»։ Նա պատասխանեց. «Հիսուն հազար ռուբլի կդնեմ ոտքերի տակը, երկուսն էլ կդրստվին»։

Վերջապես աղջիկը մարդի է գնում։ Կին լինելուց հետո սկըսվում է նոր կյանք։ Առաջին ամիսներից հետո անցնում է ամուսնական սիրո առաջին ջերմութիւնը։ Այնուհետև սառնութիւնն աննկատելի կերպով մեջ է մտնում։ Այր և կնոջ հարաբերութիւնները պաշտոնական ձև են ընդունում։ Դեպքերն առաջ են բերում սոսկալի պայթյումը։ Հետո սկսվում է ընտանեական դժոխքը։ Եվ այդ ծագում է խիստ բնական կերպով։ Ամուսին այրն ունի իր պարապմունքը, իր արտաքին բարեկամները և բարեկամուհիքը. նա ունի իր առանձին զվարճութիւնները, գնում է կլուբ և ուրիշ այսպիսի տեղեր։ Նա այնքան զբաղված է լինում իրմով, որ համարյա մոռանում է, թե կին ունի։ Կինն էլ իր կողմից պետք է իր համար կյանք տնօրինե։ Այս բանի մեջ նրան առաջնորդում է մոր օրինակը։ Նա անում է այն, ինչ որ տեսել ու սովորել է մորից։ Այցելութիւններ է անում, զբոսանքի է գնում, տանը երեկոյներ է սարքում, քրև է գալիս մագազիններում, զբաղվում է ավելի իր պշրանքներով, քան թե զավակներով, իսկ տնտեսութիւնը մնում է ավազակ ծառաների և աղախինների կամքին։ Ամառն անց է կացնում ամառանոցում, իսկ ձմեռը սկսվում է միևնույն կյանքը։ Տարիներն անցնում են միմյանց ետևից, միօրինակ և աննպատակ զվարճութիւնները սաս-

[1] *Փասմանդա նշանակում է ցած մնացած կամ ետ ընկած։*

տիկ հոգնեցնում են նրան։ Այլևս ի՞նչ անեն. ամեն բան փորձել, ամեն բան մաշել է նա։ Վերջին տարիներում սովորության մեջ մտավ արտասահմանը. կնիկները սկսեցին ձգել ամուսիններին և հեռու օտարության մեջ թաքցնել իրանց ամոթը։ Այս բոլորի մեջ ես մեղադրում եմ տղամարդին, նա ինքն է առիթ տալիս նրան վատ լինելու։

Պատահում են բախտավոր ամուսնություններ։ Տղամարդը զբաղվում է իր գործերով, աշխատում է ընդարձակել իր ասպարեզը։ Կինը կառավարում է տունը և նրանից դարձնում է մի փոքրիկ դրախտ։ Երկուսն էլ օգնում են միմյանց. մեկը, որպես դրսի մարդ, մյուսը, որպես ներսի մարդ։ Կյանքը սահում է իր խաղաղ ընթացքով և լի ամեն վայելչություններով։ Ջավակները թովում են ծնողների բոլորտիքը մաքուր, առողջ, որպես հրեշտակներ։ Ամեն ինչ դրվում է կարգի և օրինակության ներքո։ Ամուսնական ներդաշնակությունը լինում է հիմքն ընտանիքի բարօրության, իսկ բարոյականությունը—նրա մեջ տիրող ոգին։

Մինչև այստեղ ինչ որ խոսեցի Թիֆլիսի հարուստ կամ բարձր անվանված դասի մասին, վերաբերում էր խոշոր վաճառականներին, նշանավոր կապալառուներին, բանկիրներին, կալվածատերերին, բախտախնդիր սպեկուլյատորներին, և առհասարակ այն հասարակությանը, որ մեծ կարողության հետ ունի և մեծամեծ մոլություններ։ Մնում է մի քանի խոսք ասել աստիճանավորների կնիկների մասին։ Այստեղ ընտանեկան կյանքը գտնվում է իր այլափոխության տագնապի մեջ. դեռևս անձև և անկերպարան է նա։ Ոչինչ այնքան անշնորհք և անարգ չէ լինում, որպես մի կացություն, որ ոչ այս է և ոչ այն։ Օտարացումը գտնվում է իր տգետ այլանդակության մեջ։ Ընտանիքը խլվելով մայրենի բնական հողից, դեռևս հաստատ հիմք չէ ձգել օտար հողի վրա։ Նա տատանվում է որպես մի ծառ, որ արմատ չունի։ Դրանից հետևում է նրա գոսդյումը։ Եթե ավելացնենք և «չինովնիկության» ոգին, որ մտնում է ընտանիքի մեջ, շատ հասկանալի կլինի նրա դրությունը։ Այդ հասարակության մեջ չքավորությունը կապված է լինում մեծ ծախսերի և շռայլության հետ, որոնք պատճառ են տալիս անբարոյական ձեռնարկությունների նրանց լցուցանելու համար։ Արդարև, այստեղ տղամարդը դեռևս բոլորովին չի կորցրել իր ասիական կատաղի խանդը, որ հոժարվեր կնոջը բարեկամացնել իր մեծավորի հետ, իր ասպարեզը լայնացնելու համար. բայց ուրիշ ցածությունների դեմ նա անզոր է։ Այստեղ նույնպես կնոջ բարքերի աստիճանը

վերաբերական է. կան մաքուրներ և կան անմաքուրներ։ Աղջկան փոքր հասակից կրթում են, տաշում են, կոկում են, աշխատելով տալ նրան այն փայլը ավելի «бонтон» լինելու համար։ Նա դառնում է մի «մոդնի կուկլա» որն ոչ սիրտ ունի և ոչ միտք։ Գիտե, արդարև, վարվել, գիտե ծեքծեքվել, գիտե կաշաղակի նման շատախոսել, բայց չգիտե մտածել։ Նրա ամբողջ գոյության մեջ տիրում է դատարկություն։ Ծնողներն իրանք են տնօրինում նրա ամուսնական բախտը։ Կին լինելուց հետո, ամուսնից շուտով ձանձրանում է, որովհետև նրա սիրտը չէ սովորել երկար սիրել մեկին։ Եվ առաջ է գալիս մի ծիծաղելի վեպ։

Այսուամենայնիվ, այս հասարակութեան մեջ կան ծնողներ, որոնք դեռ պահպանել են իրանց հայկական խելքը և սովորութեյունները, և որոնք խնայողութեյամբ շինել են լավ կարողութեյուն, և սնուցանում են լավ աղջիկներ։ Այս կարգի մարդկանց վերաբերում են գավառներից Թիֆլիս տեղափոխված և դեռ չփչացած ընտանիքները, և մասամբ տոհմային ազնվականները։ Դրանք ապրում են այն աստիճան պարզ, համեստ, հասարակ, և միևնույն ժամանակ վայելուչ կյանքով, որը չեք տեսնի նոր հարստացած վաճառականների մեջ։ Վերջիններն իրանց հարստութեյան հետ ունեն մի տեսակ ցուցամոլութեյուն, որով աշխատում են միշտ աչքի ընկնել։ Նորելուկներն առհասարակ քիթը բարձր են պահում։ Բայց հին և հիմնավոր ընտանիքների մեջ, որոնց սովորաբար կոչում են «օջախի որդիք», օրինավորութեյունը, պատշաճավորութեյունն ավանդվել է սերունդից սերունդ տոհմային գերազանցութեյան հետ։ Աղջկա ուսումն այստեղ նույնպես ստացվում է միևնույն աղբյուրներից, ուր սովորում են հարուստ վաճառականների աղջիկները։ Բայց որովհետև աղջիկն ընտանիքի մեջ սկզբից փչացած չէ, դպրոցն իր ավերիչ ներգործութեյամբ շատ չէ ազդում նրա վրա։ Ավարտելուց հետո դպրոցի թերութեյունները լրացնում են տանը, հրավիրելով տնային վարժապետ մայրենի լեզվի համար, այլև օտարերկրյա լեզուների համար, որպես են ֆրանսերենը և գերմաներենը, հրավիրում են և մուզիկայի վարժապետ։ Այս տեսակ կրթութեյուն ստացած աղջիկը, թեև այնքան ինքնակամ չէ լինում, որ իր համար փեսա ընտրեր, և պսակվում է ծնողների համաձայնութեյամբ, բայց միշտ լավ կին է լինում։ Նրանք երբեմն մարդի են գնում առանց օժիտի, եթե ծնողները հարուստ չէին։ Դա մի շատ ուրախալի երևույթ է, որ աղջկա անձնական արժանավորութեյունը գնահատվում է։ Նրանց վրա պսակվում են այնպիսի ուսումնական

երիտասարդներ, որոնք թեև փող չունեն, բայց հարուստ ապագայի հույս ունեն։ Դրանց մեջ կարելի է տեսնել բախտավոր ամուսնության բոլոր վսեմությունը։

Թիֆլիսի հարուստ դասի մեջ կնոջ ծերությունն այնքան ցավալի չէ լինում։ Պառավի տարիների հետ մոռացվում է և նրա անցյալը. նա դառնում է ավելի բարեպաշտ և սկսում է հաճախել եկեղեցիները։ Տան մեջ նրա վրա նայում են, որպես մի հին կարասիի վրա, որ երկար ծառայելով, մի տեսակ նվիրականություն էր ստացել, որին չեն կամենում դեն գցել, բայց չեն էլ ցանկանում, որ շատ աչքի երևար։ Նրան պահում են որպես մի հնոտիք։ Ցանկալի մահն օգնության է հասնում պառավին։ Դատարկ կյանքից նա անցնում է դեպի գերեզմանի դատարկությունը։ Որդիները նրա թաղումը կատարում են հանդեսով և մոտ ազգականները սև են հագնում։

Դ

Այժմ դառնում եմ դեպի գավառները։

Գավառներում ինքնըստինքյան հասկանալի է, որ կյանքի պայմանները փոխվում են։ Մեծ տարբերություն կա Թիֆլիսի բարձր դասի և գավառական քաղաքների նույն դասին պատկանող կնիկների մեջ։ Ընտանիքը շատ չէ հեռացել նահապետականությունից և դեռևս գտնվում է իր արևելյան կազմակերպության մեջ։ Աղջկան մեծացնում են ավելի սաստիկ հսկողությունների ներքո։ Ես պետք է շատ բան նորից կրկնեի, եթե մանրամասնությունների մեջ մտնեի, որովհետև կյանքը և կնոջ դրությունն այստեղ ավելի չէ տարբերվում թե բարձր և թե միջին դասի մեջ, որի մասին խոսեցի իմ հետազոտության նախընթաց գլուխներում։ Զանազանությունը միայն նրանումն է, որ մեկն ապրում է ապահով վիճակի մեջ, իսկ մյուսն իր վշտալի կացության հետ կրում է և աղքատության դառնությունը։

Գավառներում պանսիոն կամ որևիցե բարձր ուսումնական հիմնարկություն չկա։ Եթե հրավիրում են տնային վարժապետ, դասատվության ժամանակ աշակերտուհու մայրն ուսուցչի կողքին նստած է լինում։ Իսկ եթե նրան ուղարկում են ծխական դպրոց, առանց սպասավորի չէ գնում։ Բայց մեծ մասամբ աղջկան մեծացնում են առանց ուսում տալու, կատարյալ տգիտության մեջ։ Եվ տգիտությունը լինում է նրա անմեղության գլխավոր պայմանը։

Նա չէ ստանում և աշխարհային կրթություն. նրան ոչ մի տեղ չեն տանում, օտարներին ցույց չեն տալիս և միշտ հեռու են պահում տղամարդի հասարակությունից։ Նա մնում է դանդաղկոտ, ամոթխած, երկչոտ և լի ամեն նախապաշարմունքներով։

Մնողները տալիս են աղջկան իրանց ընտրած փեսային, և օժիտի սովորությունը շատ ծանր չլինելով, փեսա գտնելը միշտ հեշտ է լինում։ Եթե հայրը հարուստ էր, կամ ազդեցություն ունեցող մեկն էր, ամեն երիտասարդ ցանկանում է նրան փեսա դառնալ, կողմնակի կերպով նրանից օգուտ քաղելու համար։ Մեր մեջ վաղուց հարց է բարձրացել, թե աղջկան թույլ չեն տալիս ազատ կամքով իր ամուսնական վիճակը տնօրինելու։ Մի՞թե նա կամք ունի։ Նրան այն աստիճան միամիտ, անփորձ և կյանքի հետ անծանոթ են մեծացրել, որ էթե նրան իր կամքին թողնեին, առաջին պատահած շարլատանը կարող էր խաբել և անբախտացնել նրան։ Մնողները գոնյա ճանաչում են աշխարհը և գիտեն նրա պահանջները, աշխատում են իրանց զավակին մի հուսալի և ապահով մարդու ձեռքը տալ։ Այնուհետև աղջիկը, որպես եղել էր իր հոր և մոր խոնարհ զավակը, այնպես էլ դառնում է իր տղամարդի հնազանդ և հլու ամուսինը։ Խիստ հազիվ դեպքեր առաջ են բերում անհամաձայնություն, և ամուսնական անհավատարմությունը նույնպես հազվագյուտ երևույթ է գավառներում։

Կին լինելուց հետո նա իսպառ կորցնում է իր ազատությունը։ Նրան պահում են փակված, տան չորս պատերի մեջ և ոչ ոքի ցույց չեն տալիս։ Նա իրավունք չունի բացի իր տղամարդից մի օտարի հետ ոչ տեսնվելու և ոչ խոսելու։ Նա տեսնվում է և խոսում է, այն ևս խիստ սակավ անգամ, միայն իր ամենամերձավոր ազգականների հետ, որպես են հայրը, մայրը, քույրը, եղբայրը և այլն։ Նա չէ խոսում և իր ամուսնի հոր, նրա եղբոր և նրա ազգականների հետ արական սեռից։ Բացի ընտանեկան նեղ շրջանից, արտաքին աշխարհում կինը տեղ չունի գավառների մեջ։ Թատրոն, բալ, «կրուժոկ» և մինչև անգամ ամենահասարակ զվարճության տեղեր չկան։ Հասարակաց այգիները տղամարդերի համար են։ Կինը զրկված է բոլոր արտաքին վայելչություններից։ Նա իրավունք չունի այլև իր ներքին շրջանի մեջ, ընտանեկան «օջախում» մի ուրախ օր անցկացնելու «վեչերներ» տալ չէ կարող։ Եվ եթե լինում են երբեմն հրավերներ, այն ևս ամենամերձավոր բարեկամների կնիկներն են կանչվում. ոչ մի տղամարդ նրանց «մեջլիսի» մեջ մասնակցել չէ կարող, և մինչև անգամ տանտիկնոջ ամուսին այրն այն օրն իր

տունը չէ մտնում, երբ տանը կին հյուրեր կային։ Սակավ է պըզ-
րանքը, սակավ է զարդարանքը։ Փակված տան մեջ ո՞ւմը պետք է
իրան ցույց տա կինը։ Եվ այդ հեռու է պահում նրան շռայլությու-
նից։ Չկա դատարկաշրջիկ կյանք, որ սարսափելի կերպով տանում
է կնոջը դեպի մոլորություն։ Նա ապրում է որպես մի ողորմելի
միայնակյաց, և ճգնում է տնային լռության մեջ։ Խիստ հավիվ
անգամ նա երկչոտ դեմքով լուսամուտից նայում է դեպի փողոցը,
երբ պատահել էր մի օտարոտի աղմուկ։ Այս պայմանների մեջ,
թեև գավառացի կինն իր նազելությամբ չէ քաղցրացնում տղամար-
դի սիրտը, թեև նա առհասարակ զուրկ է լինում այն հրապուրիչ
հատկությունից, որ կոչվում է կանացիություն, բայց տնտեսության
մեջ, իբրև անխոնջ տանտիրկին, նա հրաշալի է։ Եվ այդքանն է պա-
հանջում նրանից տղամարդը։

Պատահում են և օտարոտի երևույթներ։ Տեսնում ես մի վա-
ճառական, որ եղել էր Թիֆլիսում, Մոսկվայում, կամ իր գործերով
ընկել էր արտասահման։ Տեղային կնիկները նրա մեջ առաջ են
բերում մի տեսակ ազատամտություն։ «Ինչո՞ւ իմ կինս էլ դրանց
նման չպիտի լինի», մտածում է վաճառականը։ Նա կարծում է,
թե բավական էր, որ կինն այնպես հագնվեր, որպես մի ֆրանսու-
հի, և իսկույն նրա նման կլիներ։ Ապսպրում է հագուստներ վերջին
մոդայի ձևով և վերադառնում է տուն։ Կինը հագնելու եղանակն
անգամ չգիտե. մարդը օգնում է նրան, որքան իրան հայտնի է։ Եվ
հանկարծ «մոդնի կապիկը» սկսում է հայտնվել փողոցներում,
մտնում է զանազան շրջանների մեջ։ Նա ինքը շատ գոհ չէ իր այ-
լափոխությունից. նեղվում է, կարմրում է, քրտնում է, և կարծում
է, թե ամբողջ աշխարհը ծիծաղում է իր վրա։ Բայց ի՞նչ անե.
մարդը ցանկանում է, որ նա քաղաքակրթված կին լիներ։ Դա կա-
տարյալ տանջանք է։ Ով որ տեսել էր մոդնի մագազիններում դրած
«մանեկենը», որ գործ են ածում զգեստներ չափելու և փորձելու
համար, կարող է մի ճիշտ նմանություն գտնել դրա և մեր գավա-
ռացի «մոդնի» տիկնոջ մեջ, որն այնքան է հասկանում իր նոր հան-
դերձի գործածությունը, որքան հասկանում է փայտից շինած «մա-
նեկենը»։ Ես նախապաշարմունքով չեմ նայում երևույթի վրա։ Ես
սիրում եմ կնոջ «կրացիան», սիրում եմ նրա նազելությունը։ Բայց
չեմ կարող չվրդովվել, երբ կնոջն անփորձ, անպատրաստ բաղ են
թողնում դեպի աշխարհ։ Այսպիսի կինն առաջին զոհն է դառնում
կյանքի հանդուգն այլափոխության։ Ես կարող եմ մատներով հա-
շարել շատ օրչնակներ, բայց ի՞նչ հարկավոր է. կենցաղավարու-

թյան ընդհանուր օրենքները սաստիկ պատժում են, երբ կինը ներանց դեմ զեղծումներ է գործում։ Մի մարդ, երբ երկար ժամանակ պահվել էր մութ սենյակում, երբ հանկարծ նրան դուրս են թողնում լույսի մեջ, նրա աչքերը լավ չեն տեսնում, շլանում են, և նա ընկնում է։ Նույնը պատահում է տան մեջ փակված կնոջ հետ։

Գավառներում աստիճանավորի կամ կառավարության պաշտոնյայի ընտանիքը բավական տարբերվում է հարուստ վաճառականի և կալվածատերի ընտանիքից։ Այստեղ աշխատում են կյանքին տալ, որքան կարելի է, եվրոպական ձև։ Ծառայող հայրը ինչ որ տեսել էր իր ռուս մեծավորի տանը, նույնը աշխատում է մտցնել և իր ընտանիքի մեջ։ Աղչկան, եթե հոր կարողությունը նեղում է, ուղարկում են Թիֆլիս որևէ պանսիոնում սովորելու համար։ Նա վերադառնում է, իր հետ բերելով Թիֆլիսի մոլությունները։ Հայրը խոսում է նրա հետ ռուսերեն, իսկ մայրը ներողամտությամբ է նայում իր դստեր թեթևամտություններին վրա, կարծելով, թե «ուսյալ» օրիորդն այնպես պետք է լինի։ Բարեկամներիցս մեկը, որ ֆրանսերեն լեզվի վարժապետ էր, պատմում էր, թե ինքն առիթ ունեցավ ծանոթանալ մի օրիորդի հետ, որ բնակվում էր մի փոքրիկ գյուղաքաղաքում, որովհետև այնտեղից էր։ Օրիորդի հայրը տերության ծառայության մեջ այնքան վարպետ էր գտնվել, որ դիզել էր բավական փող, և կարողացել էր աղչկան Թիֆլիս ուղարկել, ուր նա ուսում էր ստացել։ Բարեկամս խոստովանվում էր, թե օրիորդը չէր սիրում նրան, բայց ուներ դեպի նա մի առանձին հակրություն այն պատճառով միայն, որ երիտասարդը խոսում էր ֆրանսերեն և երկար ժամանակ ապրել էր Փարիզում։ Նա հավատացնում էր, թե ինքը Փարիզի ամենացած «գրիզետկաներից» մեկը է տեսել մի աղչիկ, որ նրա նման արձակ վարքի տեր լիներ։ Օրիորդն աշխատում էր ազատամիտ ձևանալ և հեռու ամեն նախապաշարմունքներից և իր ազատամտությունը ցույց էր տալիս նրանով, որ շատ անգամ ընդունում էր երիտասարդին իր քնարանում, և ինքը մահճակալի վրա պառկած, ոտները հենարանի վրա ցցած, խոսում էր նրա հետ Վոլթերի և Ռուսոյի վրա, որոնց մտքերի հետ ամենևին ծանոթ չէր։ Ահա այսպես փչացնելով աղչկան, գցում են ավառական համեստ քաղաքը։ Գալիս է ժամանակը, որ պետք է հարդու տալ։ Մի վաճառական տղա, թեև հարուստ, անարժան է համարվում «ուսյալ» և «կրթյալ» օրիորդին ամուսին լինելու։ (Ճշմարիտ մեր մեջը մնա, վաճառականն ամենևին չէ էլ ցանկանա նրա ամուսին լինել)։ Տալիս են «մունդիր» ունեցող մարդու։ Որովհետև

այսպիսիների թիվը շատ սակավ է, ուրեմն ընտրության մեջ խիստ չեն վարվում. գյուղ են առաջին պատահողի ձեռքը։ Կին լինելուց հետո «ուսյալը» շրջապատում է իրան քաղաքի ծառայողներով, ինչ ազգից և լինեին նրանք—հայ, թուրք, ռուս և այլն։ Բոլորը հավաքվում են նրա սալոնում և թուղթ են խաղում։ Ուրիշ զվարճություն չկա։ Եթե ամուսին այրը լավ խաղացող է, կամ գիտե վարպետությամբ կարտերը «շինել», լավ օգուտ է քաղում իր կնոջ «ֆիրմայից», ամեն գիշեր կողոպտելով իր հյուրերին։ Ես մի գիշեր առիթ եմ ունեցել գավառում պատահել մի այսպիսի ընտանիքում. ոչինչ շրջան այնքան զզվելի չէր կարող լինել, քան թե այն։ Ինձ վրա նայում էին որպես մի տխմարի վրա, որովհետև խաղալ չգիտեի։ Բայց դատարկ կյանքը շուտով ձանձրացնում է մեր «ուսյալին»։ Գավառական փոքրիկ քաղաքը խիստ նեղ է գտնում իր ասպարեզի և բավականությունների համար։ Այս պատճառով երբեմն գնում է Թիֆլիս իր հին բարեկամների և բարեկամուհիների հետ տեսնվելու համար։ Ով ամեն անգամին ապսպրում է իր համար նոր զգեստներ, որովհետև իր քաղաքում դերձակը «մոդային» հետ ծանոթ չէր։ Նա ամեն անգամ վերադառնում է մի նոր շքով։

Բայց այսպիսիներին պետք է բացառություն համարել, որովհետև նրանց թիվը շատ փոքր է։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ իմ վերևում նկարած տիպը Թիֆլիսի պտուղ է, որտեղից կեղծ կրթությունը, որպես պղտոր աղբյուրից, հոսում է դեպի գավառները։ Բայց առհասարակ գավառացի կինը չունի այն համարձակությունները։ Այստեղ կինը, որքան էլ հարուստ, որքան էլ բարձր տան հարսն լիներ, ապրում է փակված կյանքի մեջ, և շատ վախենում է բամբասանքից։ Մեծ քաղաքներում ոչ ոք ուշադրություն չէ դարձնում, թե ինչ է գործում նա գրացին. բայց գավառական փոքրիկ քաղաքում կնոջ ամեն մի սխալ քայլը գրգռում է ընդհանուր հետաքրքրություն։ Նա իսկույն դառնում է մեղադրանքի առարկա, երբ նկատում են նրա մոտ արևից տարապայման վարմունք։ Նրանք կսկսեն մատով ցույց տալ, նրա մասին կշարադրեն զանազան պատմություններ, և պատահած ժամանակ, կհանդիմանեն տղամարդին, թե քո կինն անառակ է։ Այս պատճառով գավառացի կինը չէ համարձակվում ոտքը դուրս դնել ընդհանուր սովորությունից։ Շատ էլ ցանկանար, ո՞վ կթողներ։ Նկատված է, եթե տղամարդը, հետևելով մեծ քաղաքների օրինակին, կամենում է կնոջը փոքր-ինչ ազատություն տալ, նրան աշխարհ դուրս բերել, ընտանիքի մեջ ծագում է մի մեծ փո-

Թորիկ, եթե նրա մեջ կային դեռ պառավ մայր և ծերունի հայր։ Հին և նոր սերնդի կռիվը դեռ չէ վերջացել։ Եվ եթե գերեզմանը կծածկեր այդ հներին, նախապաշարմունքը և վաղեմի սովորությունը դարձյալ ընդ երկար կպահեին կնոջն իր կաշկանդյալ վիճակի մեջ։ Ես ճանաչում եմ շատ գավառացի վաճառականներ, որոնք գործով իրանց կնիկների հետ բնակվում են Թիֆլիսում։ Այստեղ նա ման է ածում իր կինը, տանում է զանազան զվարճության տեղեր, և տանը նրան չէ թաքցնում իր հյուրերից։ Բայց եթե միևնույն մարդուն իր բարեկամը կպատահի գավառում, նա կնոջն այլևս ցույց չի տա։ Ինչու եմ օրինակ բերում վաճառականին։ Բարձր ուսում ստացած երիտասարդը, որ նույնպես ուսյալ կին ուներ, գավառ վերադառնալիս, ենթարկվում է միևնույն ընտանեկան պայմաններին, եթե չէր ցանկանում հասարակաց բամբասանքի առարկա դառնալ։

Ընտանիքը և կյանքը դարերով մշակել են այնպիսի սովորություններ, որոնք երկաթի օրենքի զորություն են ստացել։ Հեշտ չէ միանգամով նրանց խորտակել։ Կնոջ դերը և տղամարդի դերը բոլորովին որոշված են։ Կինն իշխում է տան վրա, չորս պատերի մեջ, և միանգամայն անձնատուր է լինում իր զավակներին, սպասավորներին և խոհանոցին։ Տղամարդը գործում է դրսում։ Կնոջ և տղամարդի գործունեությունն այն աստիճան բաժանված են միմյանցից, որ առաջինն ամենևին չգիտե, թե ինչ է շինում իր ամուսինը դրսում։ Եվ այս պատճառով, նա ձգում է իրանից ամեն պատասխանատվություն տղամարդի գործերի հաջողության մասին։ Քանի տղամարդն աշխատում է, վաստակում է, բերում է, միասին վայելում են։ Իսկ երբ նա աղքատացավ, այնուհետև կինը լինում է նրա անբախտության անտրտունջ բաժանորդը։ Կնոջ և տղամարդի մեջ ընկերական կապ չկա։ Կա միայն կրոնի— ամուսնական կապ։ Որպես գործով բաժանված են նրանք միմյանցից, այնպես էլ բաժանված են և հասարակական կյանքով։ Ամուսին այրը, երբ պատահում է փողոցում իր կնոջը, երեսը շուռ է տալիս և անցնում է, կարծես չէ ճանաչում նրան։ Երբ կնոջ գործունեությունը սահմանափակվում է ընտանեկան «օջախի» շուրջը—ահա՛ այս է, որ նրան փոքրացնում է և շինում է բոլորովին կրավորական էակ։ Կինն այն ժամանակ միայն կմտներ իր մեծ դերի մեջ, և այն ժամանակ կդառնար քաղաքակրթող տարր, երբ կրոնի ամուսնական կապի հետ, նրա և տղամարդի մեջ կկազմվեր և ընկերական կապ, մինը մյուսին փոխադարձ համերաշխությամբ, կյանքի բոլոր պա-

քեզի մեջ։ Բայց քանի որ մենք կնոջ կրթությունը սկսում ենք նրանից, որ պատրաստում ենք նրան հանդես դուրս բերել, ցույց տալ աշխարհին որպես մի դեղեցիկ բան, միշտ սխալանքի մեջ կընկնենք։ Կնոջ գործակցությունն իր տղամարդի հետ այն աստիճան կտրված է լինում, որ եթե ամուսին այրը հանկարծ մեռնում է, նրա որդիքը մնում են առանց մի պատառ հացի։ Ահագին հարստությունը, երբ հուսալի ձեռքերում չէր գտնվում, մի քանի տարվա մեջ ոչնչանում է, կողոպտվում է։ Կինը, որովհետև անտեղյակ է լինում ամուսնի գործերին, տգետ և անփորձ է լինում, այս պատճառով չէ կարողանում պահպանել նրա թողած ժառանգությունը։ Այսպիսի օրինակներ շատ են եղել. բայց դեռևս չէ տեսնվել մի օրինակ, որ ամուսնի մեռնելուց հետո կինը շարունակեր նրա գործը, մահվան հետ և նրա ֆիրման ծածկվում է։ Գյուղացի կինն այդ դեպքում ավելի բարձր է. մարդու մեռնելուց հետո նա շարունակում է երկրագործությունը և կերակրում է նրա թողած որբերին, որովհետև նա նույն գործին սկզբից ծանոթ էր, նրա մեջ աշխատել էր։

Մնում է ավելացնել մի քանի խոսք գավառական կնոջ մտավոր զարգացման մասին։ Մի՛ մոռացեք, որ խոսքս բարձր դասի մասին է։ Փակ կյաքի մեջ, ընտանեկան նեղ շրջանում նրա աշխարհայեցողությունը մնացել է չափազանց սահմանափակ։ Տղամարդը մի կողմից իրավունք ունի, որ նրան ոչ ոքի ցույց չէ տալիս, իրան չխայտառակելու համար։ Ես առիթ եմ ունեցել ծանոթանալ մի քանի գավառացի կնիկների հետ. ահա այն տպավորությունները, որ երբեք մոռանալ չեմ կարող։ Մտնում ես, դիցուք Քն, մի հարուստ վաճառականի տունը, աղան տանը չէ, քեզ ընդունում է կինը, երբ իմանում է, որ գործով ես եկել, և մանավանդ շատ անգամ քեզ տեսել էր իրանց տանը, փոքր-ինչ ընտելացել էր, ընտելացել էիր և դու։ Քեզ հրավիրում են հյուրանոցը. դու նստում ես առանց տանտիկնոջ կողմից քեզ տեղ ցույց տալու, իսկ նա ոտքի վրա կանգնած է մնում։ Պետք է դու մի քանի անգամ ասես, խնդրես նրան, որ նստե։ Նա որոշում է միշտ քեզանից ցած նստել և հեռու։ Եթե դու չխոսես, նա ամբողջ ժամերով լուռ կնստի։ Ստիպված ես զրաղեցնել տիկնոջը։ Անկարելի է նրա հետ որևիցե խոսակցություն շարունակել, պետք է անդադար մի առարկայից թռչել դեպի մյուսը։ Այսպիսով խոսակցությունը կընդունե հարց-պատասխանի ձև։ Դու նրան միայն հարցեր կառաջարկես, նա ֆետա երկու բառով մի պատասխան և կլռե։ Խոսել նա չգիտե, բառերը միշտ պակասում են նրա մոտ այն ժամանակ, երբ խոսում

էր իրան ծանոթ ամենահասարակ մի առարկայի վրա։ Նրա լեզվի բառարանն այնքան աղքատ է, որպես այդ լինում է երեխաների կամ վայրենիների մոտ։ Երբ դու խոսում ես, նա միշտ ցած է նայում. նա իր երեսը չէ բարձրացնում և ինքը խոսելիս։ Միշտ մատներով անգիտակցաբար խաղում է զգեստի որևիցե մասնի հետ։ Երբ պատահմամբ նրա աչքերը հանդիպում են քո աչքերին, խեղճ թշերի վրա հայտնվում է վարդագույն ներկ։ Փորձում ես պատմել նրան ծիծաղելի անեկդոտներ, նա երբեմն ժպտում է, բայց չէ ծիծաղում։ Ոչինչ բանով նրան հետաքրքրել չես կարող։ Երբ նա մենակ է քեզ հետ, կարծես, նեղվում է, և միշտ առիթ է որոնում դուրս փախչելու։ Մի երրորդ անձն, թող թե նա փոքրիկ երեխա լիներ, որպես պաշտպան, կարող էր հանգստացնել նրան։ Դեպքեր շատ են եղել, որ մի պատվավոր կին զոհ է գնացել իր ամոթխածութեյանը։ Նա այնքան համարձակութեյուն չէ ունեցել ընդդիմադրելու մի լրբի դռնժուանութեյանը։ Դժվար կարելի է գտնել մի կին, որ իր զգացմունքը, թե՛ սերը, թե՛ տխրութեյունը և թե բարկութեյունը կարողանար արտահայտել լեզվով։ Այսպիսի դեպքերում նա միայն գործ է ածում միավանկ ձայնարկութեյուններ։ (Դա անասունների զգացմունք արտահայտելու ձևն է)։ Ծվ կամ լուռ արտասուքը լինում է նրա սրտի թարգմանը։ Բայց արտասուքը բազմիմաստ նշանակութեյուն ունի։ Գավառացի կինը, որպես չէ նշանավորվում իր մտքի և խելքի առաձգականութեյամբ, այնպես էլ նա զուրկ է մարմնի դյուրաթեքութեյամբ, անդամների համարձակութեյամբ։ Նա շարժվում է ամբողջ մարմնով, ինչպես մի արձան։ Ծվ արձանի նման սառն ու անարյուն է նա։

Գավառներում չեք տեսնի, որ կինը տղամարդի մոտ երգեր կամ նրա հետ պար բռներ։ «Յալլիի» սովորութեյունը պահվել է մի քանի տեղերում միայն, առավելապես գյուղերում։ Իսկ այն գավառական քաղաքներում, որպես են Նուխին, Բաքուն և Շամախին, ուր հայ կինը դեռ թուրք կնոջ հագուստ ունի, նա սեփականացրել է իրան բոլոր հարեմական սովորութեյունները։ Կնիկները, որ պար են գալիս միայն հարսանիքների մեջ, առանձին հավաքվում են մի սենյակում, լուսամուտների վարագույրները իջեցնում են, իրանց մոտ են կանչում «սազանդարներին», ածել են տալիս, և պար են գալիս։ Ոչ մի տղամարդի աչք նրանց վրա նայել չէ կարող։ Իսկ հին ժամանակներում, որպես պատմում են, ածողներին ևս իրանց մոտ չէին թողնում, որովհետև տղամարդիկ էին, այլ նրանց կանգնեցնում էին դահլիճի մի առանձին մասնում, որ բաժանված էր պա-

րահանդեսի տեղից վարագույրով. կնիկները միայն նվագարանի ձայնն էին լսում, բայց ածողներին չէին տեսնում։ Դա կատարյալ մահմեդական սովորություն էր։

Տարիների ընթացքի հետ, գավառական կինը, երբ հնանում է, երբ կորցնում է իր կանացիությունը, այն ժամանակ ստանում է մի տեսակ առնականություն, այն ժամանակ միայն մարդ է դառնում և խառնվում է մարդկային հասարակության մեջ։ Նրան այդ հասակում կարելի է տեսնել, նրա հետ կարելի է խոսել։ Նա այլևս կին չէ, այլ իրան կոչում է ամենի «մայրիկը»։ Եվ այսպես, կինն այն ժամանակ միայն մտնում է իր հասարակական դերի մեջ, երբ պառավում է, ասել է թե երբ կրկին երեխայանում է։ Կյանքի երկու ծայրերում—տղայության և ծերության հասակում—նա մատչելի է լինում. երկուսն էլ շատ նման են մեկմեկու։ Գավառացի կնոջ ծերությունը, ինչպես առհասարակ նահապետական ընտանիքների մեջ, պատվավոր է լինում։ Նրա ձեռքը համբուրվում է և ամեն ոք դիմում է նրանից օրհնություն առնելու։ Որդիները սում են նրա խրատները, իսկ հարսներն ավելի հպատակում են նրա հեղինակությանը։ Նրա մահն անկեղծ ցավ է պատճառում ազգականներին, իսկ թաղումը կատարվում է հանդեսով։

Ե

Վերջացնում եմ իմ հետազոտությունը մի քանի ընդհանուր նկատողություններով։ Ես սկսեցի գյուղացի կնոջից և ապա անցա դեպի քաղաքացի կինը, նկարեցի նրա տիպերը գավառներում ընդհանրապես, իսկ Թիֆլիսում մասնավորապես։ Ջանց չարեցի նաև պատկերացնել կինը ժողովրդի յուրաքանչյուր դասակարգի մեջ առանձին կերպով։ Հիշյալ հետազոտության մեջ, եթե հայ կնոջ նմանեցնենք մի ծառի, նա այսպիսի կերպարանք կստանա—հողը արգավանդ է, ծառի արմատն առողջ է, բունը՝ նույնպես, բունից բաժանված ճղները դարձյալ պահպանել են իրանց թարմությունը, իսկ ծառի վերին մասի ոստերը—նրա բարձր կատարը սկսել է գոսանալ, տերևները դեղնել են և մասամբ թափվել են, այնտեղ կենդանությունը վերջացել է։ Դա մի հակաբնական երևույթ է։ Ծառի հիվանդությունը սկսվել է գլխից։ Եվ գուցե հատուկ է մեր ժողովրդին միայն, որպես արդարացնում է դրան հայկական առածը, թե «ձուկը գլխից կհոտի»։ Պարզ խոսենք։

Կինը ժողովրդի ստոր դասի մեջ (որի ներկայացուցիչն է մեզանում գյուղացին) ցույց է տալիս կենդանություն. նա թեև ռամիկ է, տգետ է, նախապաշարմունքներով լի է, բայց ավելի աշխատասեր է, ավելի գործունյա է, և պահպանել է իր բարոյական մաքրությունը: Դա ծառի արմատն է: Կինը, ժողովրդի միջին դասում, փակվում է տան չորս պատերի մեջ, և իր գործունեությունը սահմանափակում է միայն տնային «օջախի» շուրջը. բարոյականությունը այստեղ ևս գտնվում է իր սրբության մեջ, բայց զարգացման մակերևույթը չէ բարձրանում: Դա ծառի բունն է: Կինը ժողովրդի բարձր դասի մեջ, գավառներում շատ չէ տարբերվում միջին դասից, և գրեթե միևնույն հատկություններն է կրում. բարոյականությունն այստեղ ևս պահպանվում է կնոջ բանտարկության մեջ: Դա ծառի ճյուղն է: Իսկ Թիֆլիսում, ժողովրդի բարձր դասակարգի մեջ, արդեն սկսվում է կնոջ բարոյական չքավորությունը: Ապականությունը տիրում է այնտեղ, և կինը գտնվում է իր գոսացած դրության մեջ: Դա ծառի կատարն է:

Նկատելի է և մի ուրիշ երևույթ: Կինը, սկսյալ ժողովրդի ստոր դասակարգից, որքան աստիճանաբար բարձրանում է, որքան նա ծանոթանում է աշխարհի հետ և որքան նա մտտենում է գիտության լույսին, այնքան ավելի անպիտանանում է, և այնքան ավելի սեփականացնում է իրան այնպիսի հատկություններ, որ բարոյական չեն: Թողյալ այդ, կինը ժողովրդի ստոր և միջին դասերի մեջ պահպանել է իր ցեղական առանձնությունները, հավատարիմ է մնացել իր ազգային անհատականությանը, խոսում է մայրենի լեզվով, հարգում է վաղեմի ավանդությունները, ավելի մոտ է և եկեղեցուն, և չէ հեռացել այն սովորություններից, որով ապրել են նրա մայրերը: Որի ընդհակառակն, կինը բարձր դասի մեջ (բացի գավառներից) արդեն սկսել է օտարանալ, չէ խոսում մայրենի լեզվով, հեռանում է եկեղեցուց, և զզվանքով է նայում ազգային ավանդությունների վրա: Այսպիսի տխուր երևույթները տեսնելույց հետո ի՞նչ ասենք. արդյոք կրթությունը վնասակա՞ր էր, թե կինն իր մեջ հիմք, ամրություն չուներ, և կրթության լույսը ու ջերմությունը նրան մոտեցրածին պես, նա լուծվեցավ, իր բաղադրությունը փոխեց: Ոչ այն և ոչ այս, կասեմ ես. պատճառները պետք է ուրիշ բանի մեջ որոնել...

Դրությունը բոլորովին հուսահատական չէ: Կանացի ամրոխը պահպանել է իր անարատությունը, իր կատարյալ մաքրության

մեջ. դա, թեև անմշակ, բայց չափազանց արգավանդ հող է, որ հմուտ երկրագործի ձեռքում կարող է հրաշալի պտուղներ ընծայել։ Փույթ չէ, եթե ամբոխի մակերևույթից բարձրացած առանձին մասերը ցույց են տալիս մի քանի փտության նշաններ—դրանք կամ ժամանակով կփոխվեն դեպի լավը, և կամ կտրվելով կհեռանան մարմնի ամբողջությունից... Բայց միևնույն ժամանակ ցավալի է տեսնել, որ ժողովրդի բարձր դասի մեջ, ուր կինը թե իր դիրքով և թե կրթությամբ նշանավոր տեղ էր բռնում, փոխանակ բարոյապես ներգործելու իրանից ցած աստիճանների վրա դրված իր սեռակից քույրերի վրա—նա ինքը դառնում է վատ օրինակ, նա ինքը տարածում է շռայլություն և բարքերի ապականություն։

Այլևս որտե՞ղ է մնում կնոջ բարձր, քաղաքակրթիչ նշանակությունը, ո՞ւր է նրա կենսագործող հեղինակությունը ոչ միայն ընտանեկան նեղ շրջանում, այլև ժամանակակից հասարակության վրա։ Իմ կարծիքով հայ կինն այդ աստիճանին հասնել չէ կարող, քանի որ նա փակված կմնա տան պատերի մեջ։ Մինչև այսօր, երբ կինն ասիական կյանքով էր ապրում, երբ հայը մահմեդականի հպատակ էր, մասամբ նպատակահարմար էր նրան արգելված պահել։ Իսկ այժմ կյանքի պայմանները փոխվել են. պետք է բաց անել կանանոցի դռները։ Մինչև այսօր կնոջ կրքերը զսպվում էին, նրա բարոյականությունը պահպանվում էր փակ կյանքի մեջ մի կողմից, տգիտության մեջ՝ մյուս կողմից։ Կարո՞ղ է արդյոք միշտ շարունակվել այդ դրությունը։ Այժմ պահպանել կնոջ բարոյականությունը կանանոցի բանտարկության մեջ նույնն է, որպես զսպել մի գազանի վայրենությունը երկաթի վանդակի մեջ։ Դուրս հանեցեք նրան վանդակից, իսկույն գործ կդնե իր չարությունը։ Ով իմ հետազոտության մեջ շատ անգամ ցույց տվեցի, որ կինը հենց որ իր բանտարկված վիճակից ազատվում է, ընկնում է զանազան ախտերի մեջ։ Ուրեմն ի՞նչ պետք է անել, երբ թե կանանոցը և թե դրսի աշխարհը միօրինակ վատ են ներգործում նրա վրա—մեկը բթամտացնում է, խլում է նրանից ամեն հոգեկան զորություն, իսկ մյուսը անբարոյական է դարձնում։ Այդ հարցին ես շատ անգամ եմ պատասխանել իր տեղում, իմ հետազոտության մեջ, թե պետք է նախ քան կնոջն աշխարհ դուրս հանելը, նրան նախապատրաստել աշխարհի համար, և դրա մեջ պետք է լինի կնոջ կրթության բուն խորհուրդը։ Գուցե կնկատեն, թե կինն աշխարհի համար պատրաստվում է, նրան ուսումնասիրում է, հենց աշխարհի մեջ

ընկնելով՝ ես կպատասխանեմ, այն ժամանակ նա պետք է անցկացնե ապականության մի պերիոդ և ինքն անցկենա զանազան ախտերի միջից, մինչև փորձվի, մինչև խելքը գլուխը գա...—կնոջ ազատություն, կնոջ անկախություն (эманципация), կնոջ հավասարություն, դրանք շատ գեղեցիկ բառեր են, բայց դեռ լուսավոր ազգերի մեջ ևս կենսական անվճիռ հարցերի կարգումն են գրտնվում։

Իմ հոդվածի նպատակից դուրս լինելով խոսել հիշյալ խնդրի վրա, կրկին դառնում եմ դեպի հայ կինը։ Գուցե ընթերցողը նկատեց, որ հայ կինը ոչ մի դասակարգի մեջ չէ հայտնվում որպես հասարակական գործիչ, որպես ազդող տարր, և որպես քաղաքակրթության ղեկավար։ Նրա շրջանը ներկայացնում է դատարկ կյանքի ամենատգեղ և ամենավատ օրինակները։ Դեռևս նրա սալոնը չէ հանդիսացնում մի կենտրոն, ուր հավաքվելով հասարակական գործիչ ուժերը, կինն իր խելքով և քաղցրությամբ ոգևորեր նրանց, ներշնչելով նրանց մեջ եռանդ և վստահություն։ Ես ճանաչում եմ երկու կանայք միայն Թիֆլիսում, որոնց սալոնները ծառայում էին որպես կենտրոն երիտասարդության։ Մեկը վախճանված է (Քո՛ղ օրհնյալ լինի նրա հիշատակը), իսկ մյուսը դեռ կենդանի է։ Առաջինը կարելի է համարել որպես ջերմ խնամակալուհի մի ուսուցչական խմբի, որոնց ջանքով կենդանացրուց մի օրիորդական դպրոց։ Այդ առաջին օրինակն էր, որ կինը հանդես դուրս եկավ իբրև պաշտպան կրթության գործի։ Իսկ երկրորդը, որ ինքը պարապել էր գրականությամբ, որ գիտեր զանազան լեզուներ, աշխատում էր լինել միջին կապ մեր մանուկ ինտելիգենցիայի ցրված ուժերի մեջ։ Բայց ցավալի է ասել, որ երիտասարդությունն այն աստիճան անպատրաստ գտնվեցավ, որ հարգելի տիկնոջ սալոնը շուտով փակվեցավ նրանց առջև։

Մեր զարգացած կանայք կարող են ունենալ միայն գրականական սալոններ, բայց մեր գրականությամբ պարապվող երիտասարդությունը դեռևս այն աստիճան անկիրթ է, որ հազիվ թե իր պատիվը հասկացող մի տիկին կցանկանար նրանց առջև բաց անել իր դռները։ Կնոջ սալոնի ազդեցությունը գործող երիտասարդության վրա հազարավոր օրինակներով ապացուցված է լուսավոր ազգերի մեջ։ Այնտեղ ոչ միայն ոգևորվում է բանաստեղծը, ոչ միայն կրթվում է վիպասանի ճաշակը, և ոչ միայն պարզվում են պուբլիցիստի հայացքները, այլ այնտեղից ոգի են առնում երևելի

քաղաքական մարդիկը։ Մեզանում գրողներն ապրում են առանձնացած խմբերով և տեսնվում են ավելի կաֆեներում։ Թե որևիցե կին ընդուներ այս և այն խումբը, դուրս կգար խիստ նեղ շրջան, և այն դեպքում նրա սալոնը կծառայեր որպես գործիք մի կուսակցության, որը մեր մեջ կազմվում է ոչ թե գաղափարի անունով, այլ շահասիրական ինտերեսներով։

Կինն իր նուրբ խելքով և հրապուրիչ բնավորությամբ կարող էր լինել մի լավ կապ գործող ուժերի մեջ։ Նրա սալոնում կարող էին մշակվել և հասունանալ ամեն տեսակ հասարակական խնդիրներ։ Եվ կինը կարող էր առաջնորդել և խրախուսա տալ գործող անձնիքներին։ Եվ դրանումն է բուլանդակվում կնոջ բարձր նշանակությունը, երբ նա կմասնակցեր հասարակական կյանքին, իր ձեռքում որպես գործիք վարելով տղամարդին։ Եվ ոչ միայն ժողովրդի բարձր դասի մեջ, այլ իջնելով դեպի ցած, նրա բոլոր ծալքերում, կինը կարող էր հայտնվել որպես ազդող ոգի, որպես ներգործող ուժ, Թե խոշոր և Թե մանր բաների մեջ։ Ահա՛ դրանումն է նրա մեծ հասարակական կոչումը։

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Մտադրված լինելով նկարել մի փոքր ի շատե ամբողջ պատկեր մեր ժողովրդի կյանքից, ես հարկավոր եմ համարում «Հայ կինը» հոդվածից հետո հետազոտել հայ երիտասարդությունը։ Թե ընդունում ենք, Թե երիտասարդությունը է այն թարմ ուժը—այն մանուկ և աճող զորությունը, որից կախված է ժողովրդի առաջադիմությունը և հատկապես նրա ապագան, պետք է լավ ուսումնասիրենք այդ տարրը։ Իմ հետազոտության մեջ ես հետևելու եմ միևնույն եղանակին, որպես էր «Հայ կինը», այսինքն անցնելով մասնավորից դեպի ընդհանուրը, և գյուղական ազգաբնակությունից բարձրանալով դեպի քաղաքացիները, ես կաշխատեմ ներկայացնել մեր երիտասարդությունը ժողովրդի ամեն մի դասակարգի մեջ առանձնապես։ Ես պիտի վեր առնեմ Ռուսաստանի, և գլխավորապես Կովկասի հայ երիտասարդությունը։

Ա

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Սկսում եմ ծնունդից։

Գյուղացի ծնողները միշտ ուրախությամբ են հանդիպում տղա մանուկի աշխարհ գալուն. ծնվում է նոր ուժ, ընտանիքի մեջ ավելանում են նոր աշխատող ձեռքեր։ Եթե հայրը տանը չէր, եթե նա գործում էր դաշտում, բարեկամները վազում են նրա մոտ, «ավետիքը» են տանում, և ականջներիցը բռնելով, «մուշտուլուղ»[1] են պահանջում։ Տերտերն իր մաշտոցով իսկույն դիմում է մոր մոտ, օրհնում է նրան և նորածնին, և «փարատում է» տունը։ Պառավ կնիկները գնում են մոր անկողնի մոտ մի սուր կամ պողվատի կտորներ, որ չար ոգիները չվնասեին նրան։ Կրոնը և սնահավատությունը միացած, գործ են դնում իրանց բոլոր զորությունը, որ պահպանվի նոր սկսվող կյանքը։

Երբ մայրը երկար ժամանակ տղա չէ բերում, դա համարվում է աստուծո մի առանձին պատիժը. ծնողները դիմում են սրբերի բարեխոսությանը, իսկ երբ այդ էլ չէ օգնում, դիմում են կախարդներին։ Գյուղերում շատ անգամ կարելի է տեսնել տղաներ չկտրված երկար մազերով, որ աղչիկների նման հյուսած գիսակներ ունեին. դրանք ուխտյալ, կամ այս և այն տաճարին նվիրված մանուկներ են, որովհետև աշխարհ էին եկել սրբերի շնորհիվ։ Ամեն մի սրբից շնորհված մանուկը համարվում է նրա «ղուլը» (ճորտ) և կրում է նույն սրբի անունը։ Բայց պետք էր ճորտին թափել իր ճորտությունից, և այս մտքով նվիրված մանուկին մինչև յոթ տարի ուխտ են տանում բարերար սրբի տաճարը նրա տոնախմբության օրում, և ամեն անգամ տղայի փոխարեն զոհում են մի ոչխար։ Երբ տարիների խորհրդավոր թիվը լրանում է, մանուկի մազերը կրտրում են։ Տղաների տաճարներին ընծայումը հայտնի է մեր պատմության մեջ նրա միֆական ժամանակներից, երբ Անուշավանը նվիրվեցավ Արմավիրի սոսիներին։

Երբ նորածինը տկար էր երևում, նրան եկեղեցի չեն տանում մկրտելու համար, այլ այդ խորհուրդը կատարում են տանը օջախի (թոնրի) մոտ, խմոր հունցելու տաշտի մեջ, և մկրտության ջրով

---

[1] *Իսկապես մյուժդալուղ է, որ նշանակում է այն ընծան, որ տալիս են ավետիք կամ բարի խաբար բերողներին։*

սրսկում են ամբողջ տունը։ Նրա վրից քաշ են տալիս մի փոքրիկ խաչ, իսկ գդակի վրա շատ անգամ կարելի է տեսնել կարած արծաթյա մանիկ (կիսալուսին), որ ազատ էր պահում նրա անձը չար աչքից և չար ոգիներից։ Հուլունքներով զարդարած բազբանդները (բազկակապ), որ կապում են տղայի թևքերի վրա, նույնպես կախարդական նշանակություն ունեն։ Գինտերը տղա մանուկների համար միևնույն զարդն են համարվում, որպես աղջիկների համար։ Բայց գնտեր արևելքում կրում են կնիկները և ստրուկները միայն, —երկու արարածներ, որոնց վիճակը շատ չէ տարբերվում միմյանցից... Երեխան փոքր հասակից սկսում է տեսնել նյութական և շոշափելի առարկաների մեջ աներևույթ զորության ներկայությունը, մինչև արծաթյա մահիկից նա հասնում է ամենաբարձրյալի գաղափարին։ Նրա կյանքի մեջ կատարվում է այն, ինչ որ կատարվում է ամբողջ մարդկության կյանքի մեջ—տղայության պերիոդի նյութապաշտությունից անցնել զարգացած պերիոդի ոգեպաշտությանը։

Երբ մանուկը դառնում է 3—4 տարեկան, երբ սկսում է խոսել, մտածել, վազվզել և փոքրիկ չարություններ գործել, այն ժամանակից սկսվում է նրա ընտանեկան դաստիարակությունը։ Երկու գլխավոր ուժեր ներգործում են մանուկին չափի և պատշաճի մեջ պահելու համար, մեկը՝ ֆիզիքական կոպիտ ուժը՝ ծեծը, իսկ մյուսը՝ բարոյական ուժը, որ արտահայտվում է **երկյուղի և խոստման** մեջ։ Պատիժ և խոստում—ահա՛ երկու գործիչներ, որ իշխում են մարդու բարոյականության վրա, սկսյալ երեխայությունից մինչև նրա մահը։ Ծեծել, պատժել երեխային, որ չարություն չգործե, կամ խոստանալ նրան զանազան հրապուրիչ բաներ, որ իրան կարգին պահե—դրանք գլխավոր միջոցներ են հոգատար ծնողների կողմից երեխային խրատելու համար։ Բայց միևնույն միջոցները գործ են դրվում և ոգիների անուններով։ Երկյուղ տալ երեխային դևի, չար սատանայի, ալքերի, խլվլիկի, մարդագայլի, դերվիշի և այլ սարսափելի անուններով, և միևնույն ժամանակ հրապուրել նրան աստուծո, հրեշտակների և սրբերի խոստումներով—այդ բոլորն ավելի նուրբ միջոցներ են երեխային կրթելու համար։ Այս տպավորությունները մնում են մանուկի մեջ մինչև նա իր հասակը առնում է, ծերանում է, և նրա հետ գերեզման են մտնում։ Երեխան սովորում է վատ բան չգործել, ոչ թե նրա համար, որ վատը վատ է, այլ նրա համար, որ ծնողները կպատժեն նրան՝ կամ ծեծելով, և կամ զրկելով մի լավ բանից։ Նրա ամբողջ կյանքում այդ մտքերն

իշխում են նրա վրա։ Նա սովորում է չար բան չգործել, ոչ թե նրա համար, որ իբրև մարդ, և իբրև մարդկային ընկերության անդամ պարտավոր էր բարի լինել, այլ վախենում է իշխանությունից՝ երկնքի և աշխարհի իշխանությունից, վախենում է այն տանջանքներից, որ սպառնում են այդ երկու իշխանությունները, և վախենում է զրկվել այն խոստումներից, որ արել էին նրան։

Դաստիարակության այդ բթացնող սպանիչ եղանակն այն հետևանքն է ունենում, որ ոչ միայն խլում է մանուկից նրա ինքնուրույն, ազատ զարգացումը, և ոչ միայն բարոյապես մեռցնում է նրան, այլ նա իր ամբողջ կյանքում մնում է երկչոտ, թուլասիրտ, խոնարհվող և գլուխը ծռող ամեն մի զորության առջև։ Նա դառնում է մի բարոյական մեքենա, որ բարի է նրա համար միայն, որ վախենում է չպատժվել չար լինելուց։ Իսկ երբ այդ վախը, այդ երկյուղն անհետանում են նրա սրտից, էլ ոչինչ չէ մնում նրան օրինավորության մեջ պահելու համար և նա դառնում է ամենասարսափելի անբարոյական։

Ինչ որ ավելի ցավալին է, դա է գյուղական մանուկների սաստիկ մահացությունը։ Թեև այդ մասին չունենք վիճակագրական տեղեկություններ, բայց կարելի է ասել, որ նրանց մեծ մասը մեռնում են մոտավորապես դեռ հինգ տարեկանին չհասած, այնուհետև, որպես ինքը գյուղացին ասում է՝ «երեխան շապիկը պատռում է», այսինքն՝ աճում է, մեծանում է, և կարող է դիմանալ կյանքի խիստ պայմաններին։ Երեխաների բազմաթիվ մահացության գլխավոր պատճառը պետք է որոնել նրանց վատ պահպանության մեջ։ Մեր գյուղացիներն ավելի հոգ են տանում իրանց փոքրիկ անասուններին, քան թե որդիներին։ Անասունների վիճակն իրանցից կախում ունի, բայց որդիների հոգսը թողնում են աստուծո վրա։ Որպեսզի կարողանամ մի փոքրիկ գաղափար տալ, թե որպիսի շրջանի և պայմանների մեջ է սկսվում մանուկի կյանքը, հարկավոր եմ համարում մի քանի մանրամասնություններ մեջ մտնել։ Երևակայեցեք ձեզ մի խոնավ և գետնափոր խրճիթ, առանց օդի և առանց լույսի, որ ինքնըստինքյան սպանիչ ազդեցություն ունի երեխայի դեռ տկար կազմվածքի վրա, որը տակավին չէր սորված կեցության վնասակար խստություններին։ Մահճակալ կոչված կարասին բոլորովին անծանոթ բան է այս խրճիթներում. մի տախտակի կտոր անգամ չեք տեսնի, որ ձգած լիներ հատակի վրա. երեխան պառկում է սառն, խոնավ և մերկ գետնի վրա, փաթաթված ցնցոտիների մեջ։ Ջսորված մարդը կարող էր

իսկույն ռևմատիզմ ստանալ։ Ավելացրեք դրանց վրա վատ կերակրելը. սովորություն չէ երեխային սեղան նստեցնել։ Նա ուտում է ոտքի վրա ինչ որ ձեռքն ընկնում է։ Ավելացրեք վատ հագուստը, տարվա բոլոր եղանակներում կարելի է տեսնել նրան միևնույն հագուստով, որ հազիվ ծածկում է մարմինը։ Այդ լինում է ոչ թե աղքատների մեջ միայն, այլ հարուստներն անգամ խիստ փոքր հոգ են տանում որդիներին լավ կերակրելու և եղանակների համեմատ հագցնելու մասին։ Իսկ ինչ վերաբերում է կեղտոտության, այդ արդեն չափն անցնում է։ Դրա մեջ մեղավոր են գլխավորապես մայրերը, որ իրանք էլ, քիչ է պատահում, որ ամեն առավոտ իրանց ձեռները և երեսները լվանային։ Բայց երեխան ամբողջ օրը նրանց աչքի առջև թավալվում է ցեխերի մեջ, «վնաս չունի, թող չանը պնդանա», ասում են, և ուշադրություն չեն դարձնում։ Բայց կա և մի գլխավոր պատճառ, որ ավելի մեծ դեր է խաղում գյուղական երեխաների մահացության մեջ։ Մեզանում ոչ մի գյուղ չեք գտնի, որ բժիշկ ունենար։ Վիճակային բժիշկներն այցելություն են գործում մի գյուղ այն ժամանակ միայն, երբ պատահել էր մի սպանություն և պետք էր պաշտոնական քննություն անել։ Նրանք հիվանդների հետ գործ չունեն։ Պատահում է, որ գյուղացու երեխան հիվանդանում է. ծնողները նրա վրա ուշադրություն չեն դարձնում, և անմիջական օգնության չեն դիմում, քանի որ նա ոտքի վրա էր, բայց երբ ուժերը թուլացան, երբ պառկեց, այն ժամանակ միայն համարում են նրան հիվանդ։ Սովորական միջոցները, որ գործ են դնում բժշկության մեջ, են ֆլյուինների և գրքացների կախարդությունները, կամ մի քանի տնային դարմաններ, որ անխտիր ամեն հիվանդության համար բանեցնում են. այժմ հիվանդի բախտին էր կախված, թե որքան գործ դրած հնարները կօգնեին նրան։ Ահա այսպիսի փորձությունների միջից է անցնում գյուղացի մանուկը. բայց երբ մի անգամ ազատվեցավ նա, երբ տարիքը առեց, այնուհետև նրա կազմվածքը կարողանում է պատերազմել սարսափելի խստությունների դեմ։

Ընտանիքի ճնշումն ամենափոքր հասակից պատրաստում է մանուկին լինել ճկուն, ծալվող և համբերող։ Ամոթխածությունը, միամտությունը և մինչև խուլումունջության հասցրած լռությունը համարվում են նրա մեջ պարկեշտության նշաններ։ Նա դառնում է դանդաղկոտ, աշխույժը և եռանդը խեղդվում են նրա մեջ, և դեռ չմանկացած, ծերանում է նա։ Չեք տեսնի գյուղացի մանուկի մեջ այն մշտազվարճ կենդանությունն, այն ուրախ, մշտաժիժաղ դեմ-

քը, որ հատուկ է նրա հասակին, նա միշտ տխուր է, և միշտ, կարծես, մի բանի վրա մտածում է։ Դանդաղկոտությունը տիրում է նրա ամբողջ գոյության վրա. նրա քայլերի, նրա ամեն մի շարժվածքի մեջ չէ նկատվում ոչ մի համարձակություն, և նա զուրկ է մնում այն սատանայական ճարպիկ չարաճճիությունից, որ տալիս է մանուկի բնավորությանն ավելի կենդանություն։

Ոչինչ այնպես չեն արգելում երեխային, որպես խաղը, մինչև անգամ ամենահամեստ խաղը։ Խաղամոլ երեխան ոչ սակավ անգամ պատժվում է իր անմեղ զվարճությունների համար։ Բայց մանկական բնավորությունը երբեմն ելք է գտնում խոտորվելու ծնողների խստությունից և իր պարապ ժամերը նվիրելու զանազան խաղերի։ Ես մեջ կբերեմ մի քանի տեսակ խաղերի նկարագիրը, ցույց տալու համար, թե այդ խաղերը նոր հնարված չեն, այլ մնացել են հայերի հոյակապ անցյալից, երբ մեր նախնիքն մի առանձին հոգ էին տանում իրանց զավակներին կրթելու մարմնամարզական վարժությունների մեջ։ Մուշտեկոիվն այն պատմական խաղերից մեկն է, երբ զենքերը տակավին կատարելագործված չէին, և մարդը ստիպված էր իր զորավոր բազուկները կրթելու, որ հարկադրված ժամանակում գործ դներ իր թշնամու դեմ։ Երեխաները երկու խմբերի բաժանված, հարձակվում են միմյանց դեմ, և մուշտիների (բռունցքների) հարվածներով աշխատում են հետ մղել հակառակորդին, և երբ մի խումբը նահանջում էր մյուսին իր բըռնած դիրքից, հաղթությունը տարած էր համարում։

Գոտելախտին նույն պատերազմական բնավորությունն ունի, որպես մուշտեկոիվը, այն զանազանությամբ միայն, որ մանուկները մուշտիների փոխարեն գործ են դնում իրանց գոտիներից ոլորած լախտերը։

Արթուրման (*ոստնուլ*) և **վազը** (*վազ տալը*) այն մարզությունների տեսակներիցն են, որոնց մեջ մի ժամանակ վարժվում էին և սպարտացոց մանուկները։ Արթուրման կատարվում է թռչելով մի որոշյալ բարձրության վրայից. մանուկներից մեկը կռացած դիրք է ընդունում և բոլոր մնացածները նրա վրայից թռչում են. հետո բարձրությունը փոքր առ փոքր ավելանում է, այսինքն՝ կռացած մանուկը հետզհետե ուղիղ դիրք բռնելով, վերջը բոլորովին կանգնած ձև է տալիս իրան. այն ժամանակ թռչում են նրա գլխի վրայից։ Բայց խաղի գլխավոր պայմանը նրա մեջն է, որ թռչելու միջոցին թռչողը չպիտի դիպչի այն առարկային, որի վրայից թռչում է։

Վազը կամ վազ տալն այն ձևով, որ կատարվում է մեր մա-

նուկների մեջ, մի դժվարին վարժություն է թոքերը զարգացնելու և ոտներին արագաշարժություն տալու համար։ Որոշվում է մի ապարեզ, որի ծայրին դրած էր մի նշան, և մինչև նշանակած կետն ապարեզի բոլոր տարածությունը, սաստիկ վազելով, պիտի անցնե մրցողն այն պայմանով, որ ամենևին շունչ չպիտի առնե. և որպեսզի մյուսներին հայտնի լինի, թե նա շունչ չէ առնում, պետք է վազելու միջոցին անընդհատ կերպով արձակե մի տեսակ ձայն։ Մականախաղը (հոլ) խաղում էին մեր նախարարների որդիքն անգամ. երեխաները երկու խումբ բաժանված, յուրաքանչյուրն ունի ձեռքին բռնած մի երկայն փայտ (վարոց), որը կեռ ծայր ունի, և փայտի կեռ ծայրովն ամեն մեկն աշխատում է հափշտակել իր հակառակորդից նույնպես փայտից շինած մի գնդակ, որ ձգած է գետնի վրա, և այնպես, մինը մյուսից խլելով, գնդակը քշում են դեպի հակառակ կողմը, մինչև հասցնում են նշանակված տեղը։ Այս խաղը հին ժամանակներում խաղում էին ձիու վրա նստած, և նույնպես մականուններով, որ նշանակում է կեռ ծայր ունեցող փայտ կամ գավազան։ Գնդախաղի տեսակները զանազան են, որոնցից նշանավոր է մազուն[1]. դա իսկապես բիլիարդի խաղն է, միայն դեռ իր նահապետական ձևի մեջ մնացած։ Մազուի գնդակները շինված են լինում գունավոր գրանիտից, և ձեռքով գլորում են հարթ գետնի վրա, աշխատելով գնդակները միմյանց դիպցնել, և ձգել գետնի վրա փորած փոքրիկ փոսերի մեջ։ Տուշը (չիլիկաջոխին) առաջին փորձն է նետաձգություն սովորելու։ Փայտից շինված նետեր և աղեղներ մինչև այսօր գործ են ածում մեր երեխաները։ Պարսաֆարով (շուլդուր) նրանք խիստ ճարպիկ կերպով դիպցնում են նպատակին։ Ջիրիդը[2] դեռևս հիշեցնում է հին նիզակախաղը. զարգացած պատանիներն այդ խաղը խաղում են ձիու վրա նստած։ Մնացած խաղերի մեջ նշանավոր են ճանը (վեգ) և դամաճ (շաշուքար). վերջինը շախմատի խաղի նմանություն ունի և խաղում են ավելի զարգացած տղաները։

Խաղերի տեսակներն այնքան զանազան են հայ մանուկների մոտ, որ առանձին ուսումնասիրության արժանի են, բայց ես մի փոքրիկ գաղափար տալու համար բավականանում եմ այդքանով միայն։ Պետք է նկատել, որ ինչպես վերևում հիշեցի, ծնողները սաստիկ արգելում են խաղը, և եթե մանուկները ժամանակ են

---

1 Մազու նշանակում է գիտոր, որ փոքրիկ գնդակի նմանություն ունի։

2 Ջիրիդ կամ չիդդա նշանակում է նիզակ, տեգ, մզրախ։

գտնում խաղալու, դա կատարվում է որպես կոնտրաբանդա։ Գյուղացին այնքան պետք ունի օգնականի, որ ամենափոքր հասակից սովորեցնում է իր մանուկին աշխատության, որ նա գնահատե ժամանակը և հեռու մնա դատարկությունից։ Պետք է օգուտ քաղել փոքրիկ ուժից, և աշխատությունների ծանրությունը համեմատաբար աճում է նրա տարիների հետ։ 5—6 տարեկան հասակում նրան սովորեցնում են կատարել տնային թեթև ծառայություններ. 8—10 տարեկան հասակում նրան կարելի է տեսնել կալի մեջ, նստած կամնասյալի վրա, քշում է եզները։ 12 տարեկան հասակում նա արածացնում է հորթերը, գառները կամ նստած լծան վրա, օգնում է իր հորը գութանը վարելիս. իսկ 15 տարեկան հասակում նա իր ձեռքն է առնում բահը և մանգաղը։ Ոչինչ այնքան չէ կարող զարմացնել ժողովրդի ստոր դասի վիճակով հետաքրքրվողներին, որպես գյուղացի մանուկի աշխատասիրությունը։ Նա ամբողջ տարին անգործ չէ մնում, տարվա ամեն մի եղանակում նրա հասակի և ուժի համեմատ գործեր կան։ Տղայությունից սնվելով և աճելով խիստ պայմանների մեջ, նա հեռու է մնում փափկությունից և թուլացնող քնքշություններից. անձրևը, կարկուտը, ձյունը, ամառվա տոթը, ձմեռվա ցուրտը միօրինակ այրում են նրան, թրծում են, մխում են և տալիս են նրա կազմվածքին ուժ և երկաթի ամրություն։ Ամեն պայմանները պատրաստում են նրան վշտալի կյանքին դիմանալու համար։

Ֆիզիքական կրթության հետ լծորդաբար տարվում է մանուկի և բարոյական կրթությունը, որ պայմանավորվում է գլխավորապես խոնարհության, համբերության և միամտության մեջ։ Ամենափոքր հասակից նա գիտե, թե պետք էր տերտերի աչը համբուրել, հասակավոր մարդերին գլուխ տալ և պառավ տատին ու ծերունի պապին չբարկացնել։ Նա գիտե, թե տանը հյուր նկած ժամանակ պետք էր սեղանի մոտ սպասավորել, կամ ձեռքերը սրտին դրած և կանգնած սպասել հոր հրամաններին, մինչև հյուրերը ուտեին, խմեին, հետո նրանց ձեռքերի վրա պետք էր ջուր ածել, որ նրանք լվացվեին և այլն։ Ընտանիքի մեջ ամենի առջև խոնարհվում է նա բացի իր քույրերից։ Ծնողների գործ դրած խստությունն աղչիկ զավակի և տղա մանուկի մեջ շատ վաղ զգալ է տալիս վերջինին իր գերազանցությունը. նա սկսում է բռնանալ քրոջ վրա և երբեմն ծեծել նրան։ Ծեծելով քրոջը, նա սովորում է ծեծել և իր կնոջը։ Տղամարդի բռնակալությունը տակար սեռի վրա սկսվում է երեխայությունից։

Գյուղացի մանուկը խիստ փոքր հասակից անձնատուր է լինում ցնորամտության։ Նախապաշարմունքներով և անհավատությամբ լի ընտանիքն ազդում է նրա մեջ ֆանտազիայի սաստիկ զարգանալուն։ Ամեն մի հասարակ երևույթ բացատրվում է նրան առասպելական առեղծվածներով։ Երազը, կայծակը, ամպի որոտը, ցոլացող աստղը, արեգակի և լուսնի խավարումը, թաթառը, և մինչև անգամ կատվի մռնչյունը, բուի կռնչյունը նրա համար ունեն խորհրդավոր և գերբնական նշանակություններ։ Պառավ մամիկի հրաշալի հեքիաթները վառում են, բորբոքում են նրա երևակայությունը շարժական դրախտների, կաքնի աղբյուրների, խոսող տունկերի, յոթն գլխանի դիվերի՝, վիշապների, հուրիների և փերիների պատմություններով։ Ես բախտ եմ ունեցել երկու տարի մի մեծ գյուղում վարժապետ լինելու։ Շարադրության առաջին դասերը ես տալիս էի, որ աշակերտները և աշակերտուհիները գրեին իրանց լսած առածները և առակները. երբ մի փոքր զարգանում էին, ես գրել էի տալիս իրանց գիտցած հեքիաթները։ Որքա՜ն շատ հեքիաթներ իմանում էին նրանք։ Ամենահմուտ վիպասանը չէր կարող այնպես պարզ, այնպես բնական խոսքերով շարադրել մի հեքիաթ, որպես գրում է մանուկը. նրա տղա հասակին խիստ հատուկ է մարդկության տղայամտության ստեղծագործությունը։

Եվ զարմանալի չէ տեսնել, որ բացի կլիմայական պայմաններից, կան և ուրիշ շարժառիթներ, որոնք նպաստում են մանուկի շուտ հասունությանը։ 15—16 տարեկան հասակում նրա մեջ արդեն զարթնում են կրքերը. սիրուն աղջիկ տեսնելիս նրա սիրտը բաբախում է, և սկսում է իր ընկերների հետ գաղտնի խոսել կնիկների վրա։ Բայց ընտանեկան խիստ օրենքները, գյուղացի կնիկների անմատչելիությունը դեռևս երկար պահում են նրա նոր բորբոքվող սիրտը մանկական անմեղ ողջախոհության մեջ։

Նյանքը ոչ բոլորովին զուրկ է մեր գյուղացի մանուկների համար հոգեկան և մտավոր սնունդից, որ մատակարարում է նրան ժողովրդական բանաստեղծությունը, որ դեռևս պահպանված է իր մաքուր, լուսապայծառ պարզության մեջ։ Գողթանի հին երգիչներին, հայոց հին վիպասաններին այժմ փոխարինում են աղջներ։ Նա իր սազով շրջում է գյուղից գյուղ, երգում է և վեպեր է պատ-

---

[1] Դիվ բառը պետք չէ շփոթել մեր դևի հետ, որ ընդունված է շար ոգու նշանակությամբ. դիվը հեքիաթների մեջ պետք է հասկանալ այն մտքով, ինչ նշանակություն որ ունի այս բառը պարսից լեզվում, այսինքն՝ հսկա, փառևան։

ժամ։ Գյուղերում շատ անգամ կարելի է տեսնել աշղին, ամառային լոռնակա գիշերների պահուն, հրապարակի վրա, արձակ, աստղալից երկնքի տակ, սազը ձեռին, խորին ոգևորության մեջ երգում է, ածում է և պատմում է մի վեպ լի հերոսական և սիրահարական արկածներով։ Գյուղացիները նրա շուրջը հավաքված, նստել են մերկ գետնի վրա և ուշադրությամբ լսում են սիրելի երգչին։

Գյուղական կյանքում շատ բաներ նպաստում են մանուկներին, որ նրանք չլինեին անզգա, անսիրտ, դարտակ և զուրկ մարդկային ազնիվ կրքերից։ Ամեն գյուղերում գտնվում են մի տեսակ տեղեր, որ ուրիշ խոսքով կարելի է կոչել գյուղական կլուբներ, իսկ գյուղացիներն անվանում են օդա[1]։ Օդան ախոռատան մի բաժանված մասն է, որ ունի իր մեջ վառարան, հատակը ծածկված է հարդով, որի վրա սփռված են հասիրներ (փսիաթ) և որը ձմեռը խիստ տաք է լինում անասունների շնչառությունից և խիստ հարմար ժողովարան է գյուղացիների համար։ Ամենամաքուր օդա ունենում են գյուղի տանուտերը կամ փոքր ի շատե կարողություն ունեցող գյուղացիները։ Բայց գլխավոր կենտրոն լինում է տանուտերի օդան. այստեղ հավաքվում են գյուղացիները և անց են կացնում ձմեռվա երկար գիշերները։ Այստեղ լինում են ամեն տեսակ խոսակցություններ, դատում են իրանց հասարակական գործերի վրա, պատմում են իրանց կյանքում պատահած զանազան արկածներ, կատակներ և սրախոսություններ են անում, առակներ և առածներ են ասում, և երբեմն գյուղական տերտերը կամ տիրացուն իրանց խելքին զոռ են տալիս և սկսում են խոսել սրբերի, հրեշտակների, սատանաների, դժոխքի, արքայության վերջին դատաստանի մասին այնպիսի առասպելական ավանդություններ, որ ոչ մեկ գրքի մեջ չեք գտնի։ Մանուկ սերունդը, թեև չէ մասնակցում ծերունիների զրույցներին, բայց հավաքված նրանց շուրջը, լսում է նրանց իմաստալից խոսակցությունները։

Օդաներն ավելի կյանք են ստանում, երբ այնտեղ հայտնվում են աշղները։ Այդ կույր Հոմերոսները, որ մի ժամանակ իրանց երգերով զմայլեցնում էին մեր թագավորների և նախարարների պալատները, այժմ զվարճացնում են գյուղացու ձմեռային օդան։ Աշուղը գիտե հարյուրավոր բերանացի վեպեր, որոնք դեռ ոչ թղթի վրա են գրվել և ոչ տպագրության մամուլի տակ են ճնշվել։ Նրա վեպերը երգախառն են լինում, և որպես արևելյան բորբոքված

1 Օդա՝ սամկորեն օթաղ կամ գրոց օթյակ բառերի նշանակությունն ունի։

Ֆանտազիայի ծնունդ, բովանդակում են իրանց մեջ սեր և հրաշալի արկածներ։ Նա միանգամ սկսած վեպը հազիվ կարողանում է վերջացնել մի քանի գիշերվա մեջ։ Գյուղացի մանուկները գտնում են աշղի վեպերի մեջ այն կենսատու աղբյուրը, որ կազդուրում է նրանց ոգին, ազնվացնում է սիրտը, և վառում է նրանց զգացմունքները մի սրբազան ջերմությամբ։ Գյուղացի մանուկն այնքան անգամ լսել է աշղի վեպերը, որ մեծ մասն ինքն էլ գիտե։ Նա գիտե արկածախնդիր Քյորօղլիի արշավանքները, գիտե Քարամի և Ասլիի սիրահարությունները, Աշղ Ղարիբի և Շահսանամի վառված սերը, Լեյլիի և Մաջնումի անձնազոհությունները. Շահ Սմայիլի քաջագործությունները, Ցարհադի անբախտ սերը— հարյուրավոր այսպիսի րոմաններ գիտե նա։ Այժմյան աշղների երգերը մի բերանացի հավաքածու են իրանցից առաջ եղած երգիչների, և ամեն մի երգ կրում է իր վերջում հեղինակի անունը և այս պատճառով ամեն մի երգ զանազանվում է իր բնավորությամբ. մի մասը քնարերգություն (լիրիկա) է, մի մասը փիլիսոփայական և ըստ մեծի մասին միստիքական հայեցվածներ է բովանդակում, մի մասը խրատական կամ բարոյագիտական բնավորություն ունի, իսկ պարսավաբանական, հեգնական, ծաղրական երգերը կրում են իրանց մեջ թեև կոշտ, բայց խիստ կենդանի սրամտություններ, թե որպես կծել և կատակել գիտե արևելքցին։ Այս բոլորն ազդում են մանուկների սրտի վրա և թողնում են նրանց մեջ անջնջելի տպավորություններ։ Աշղն ավելի մեծ պաշտոն է կատարում ժողովրդի ստոր դասի կրթության, մտավոր և բարոյական ուղղության մեջ, քան թե տերտերը, որի չոր ու ցամաք քարոզները միայն սառցնում են, քարացնում են սրտերը։

Զարմանալի է, թե ո՛րպիսի եռանդով մեր գյուղացիներն աշխատում են, որ իրանց զավակներն ուսում ստանային։ Մի անբացատրելի զորություն մղում է նրանց դեպի այդ ցանկությունը։ Մեզ մոտ գյուղ չեք գտնի, որ եկեղեցուն կից մի փոքրիկ դպրոց չունենար, և ուր որ այդ չկար, մանուկները հավաքվում են գյուղի քահանայի կամ տիրացուի մոտ։ Տարվա երեք եղանակներում—գարունը, ամառը և աշունը—մանուկները զբաղված են լինում գյուղատնտեսական գործերով, և ժամանակ չեն գտնում դպրոց գնալու, իսկ ձմեռը նրանք ավելի ազատ են տնտեսական հոգսերից և սկսում են սովորել։ Բայց կան այնպիսի գյուղեր, որոնց թիվը սակավ չէ, որ ունեն կանոնավոր դպրոցներ, որոնց մեջ մանուկները սովորում են ամբողջ տարին, բացի ամառվա երկու տաք ամիսներից։

Մեր գյուղացիները, մանավանդ վերջին տասն տարվա ընթացքում, այն աստիճան հասկացել են ուսման կարևորությունը, որ ամեն զոհաբերություն հանձն են առնում, որ որքան կարելի է, իրանց զրպրոցները կանոնավոր վիճակի մեջ դնեին։ Շատերը, որոնց նյութական դրությունը ներում է, չեն բավականանում գյուղական դպրոցներով և ուղարկում են իրանց զավակներին մերձավոր քաղաքները, կամ Թիֆլիս, Մոսկվա, Ս. Պետերբուրգ և մինչև անգամ արտասահման, բարձր, համալսարանական կրթություն ստանալու։ Եվ մեր գյուղացիներից կարելի է տեսնել բազմաթիվ բժիշկներ, իրավաբաններ, տնտեսագետներ, գիտության ամեն մեկ ճյուղի մեջ ավարտածներ, և մինչև անգամ պրոֆեսորներ և բարձրաստիճան եկեղեցականներ։ Առհասարակ խոսելով, պետք է ասած, որ մեր գյուղացին բոլորովին ազատ է այն նախապաշարմունքից, թե որդին պետք է լինի հոր կյանքի շարունակությունը, և քնավ չպիտի շեղվեր այն ճանապարհից, որով ապրել էին նրա պապերը։ Նա, կարծես, բնազդումով զգում է իր վիճակի դաժանությունը և ցանկանում է որդու համար մի ավելի լավ վիճակ։ Այդ վիճակը նրա կարծիքով կարելի է գտնել միմիայն ուսման և կրթության մեջ։ Վերջին աղքատն անգամ այսպես է մտածում։ Ինձ շատ է պատահել, երբ ցանկացել եմ գյուղացի մանուկներից սպասավոր վարձել, տեսնում ես, մի հեռու և անհայտ գյուղից հայրը բերում է իր որդին, երբ հարցնում ես, թե ո՞րքան պետք է վճարել, նա պատասխանում է. «աղա, ոչինչ չեմ ուզում, ծող ձրի ծառայե, մ՛այն դուք սովորեցրեք որդուս գրել և կարդալ»։

Խոսելով առհասարակ գյուղական մանուկների կրթության վրա, ես ստիպված եմ փոքր-ինչ շեղվել իմ հետազոտության նպատակից և ցույց տալ, թե ինչ են դուրս բերում մանուկները գյուղական բազմաթիվ դպրոցներից։ Եթե ընդունում ենք, թե ուսումը և կրթությունը պետք է համապատասխանեն յուրաքանչյուր դասի իրական պահանջներին, և պետք է լրացնեն այն, ինչ որ պակաս է նրան—այս կետից նայելով, մեր գյուղական դպրոցները բոլորովին ապարդյուն և մինչև անգամ վնասակար կգտնենք։ Գյուղացին գործ ունի հողի և անասունների հետ։ Արդյոք դպրոցը տալի՞ս է նրա որդուն փոքր-ինչ տեղեկություն, թե՛ որպես պետք էր խնամել անասուններին, որ նրանք աճեին, բազմանային և աշխվացնեին իրանց տեղը։ Արդյոք դպրոցը ծանոթացնո՞ւմ է նրա որդուն հողի որպիսության հետ և բույսերի լավ մշակելու պայմանների հետ։ Դրանցից ոչ մեկը չէ անում դպրոցը։ Նա սովորեցնում է մանուկներին գրել, կարդալ,

հաշվել, կրոն և այլն, որոնց մեջ մեծ պետք չունի գյուղացու զավակը։ Այբուբենը սոված փորին հաց չէ տալիս։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ իմ խոսքը կանոնավոր գյուղատնտեսական դպրոցների մասին չէ, որ շատ ցանկալի էր, եթե մի խումբ գյուղերի կենտրոնում գոնե մի հատ գոնվեր, ես խոսում եմ գյուղատնտեսական բոլորովին մասնավոր և տարրական հմտությունների մասին, որ ամենահասարակ վարժապետը կարող էր քաղել զանազան գրքերից և հաղորդեր իր աշակերտներին։ Դուցե ինձ կնկատեն, թե մենք այսպիսի վարժապետներ չունենք։ Մենք իսկապես ոչ մի առարկայի համար պատրաստված գյուղական վարժապետներ չունենք. նրանք իրանք իրանց պատրաստում են, իսկ եթե կպահանջվի նրանցից, կարող են սովորել և շատ բան գյուղատնտեսության մասին։ Այն ևս պետք է ի նկատի ունենալ, որ մեր գյուղերում վճարում են վարժապետին ավելի շատ, քան թե մի վարժապետ ստանում է, օրինակ, Գերմանիայի մի գյուղում։ Ուրեմն կարելի է լավ ընտրություն անել ուսուցիչների մեջ։

Այլ է, եթե գյուղական դպրոցներն այն աստիճան զարգացնեին մանուկներին, որ նրանք ավարտելուց հետո կարողանային ամեն գրքեր կարդալ, հասկանալ. կարողանային ինքնակրթությամբ իրանց տնտեսության վերաբերությամբ հմտություններ ստանալ։ Այդ անել անկարող են նրանք, որովհետև դպրոցներից խիստ փոքր գիտություն են դուրս բերում։ Բայց այդ փոքր գիտությունն ավելի խանգարում է նրանց օրինավոր գյուղացիներ լինել, քան թե նպաստում էր։ Կիսակատար և թերի կրթությունը միշտ հպարտացնում է ուսանողներին։ Մանուկները մի բան սովորելով, լավ ևս է ասել՝ ոչինչ չսովորելով, սկսում են այնուհետև արհամարհանքով նայել իրանց ծնողների պարապմունքի վրա. նրանք դառնում են մի տեսակ թշվառ արարածներ, որ կորցնում են իրանց հակումը դեպի ծնողների ապրուստի ավանդական եղանակը, և մի նոր ձև, մի նոր եղանակ էլ չեն սովորում, և այսպիսով մնում են «ավարտ»՝ այսինքն՝ մոլորված—ոչ այս և ոչ այն։ Գյուղը սկսում է անտանելի լինել նրանց, և միակ ելքը, որ գտնում են իրանց դժվար դրությունից դուրս գալու համար, այն է, որ դիմում են դեպի օտար երկրներ նոր ապրուստ գտնելու։ Ահա ինչով է բացատրվում գյուղացի մանուկների սաստիկ գաղթականությունը դեպի քաղաքները։ Այս դեպքում մեծ աղեղցություն է գործում օրինակը։ Այս ինչ գյուղացու որդին, ուսում ստանալով, դարձավ աստիճանավոր, բժիշկ, վարժապետ, բարձրաստիճան եկեղեցական, կամ հարուստ վաճա-

ական—մյուսներն աշխատում են, որ իրանք էլ միևնույն բախտավորությանը հասնեին։ Այստեղից առաջ է գալիս գյուղացի մանուկների սաստիկ հոսանքը դեպի մեծավաճառ և հեռավոր քաղաքները։ Մի գաղտնի և մանուկի համար անհասկանալի դրություն քաշում է նրան դեպի քաղաքը. նա դիմում է այնտեղ լի անորոշ հույսերով, ինքնավստահ, և միանգամայն հանձնված իր բախտին։ Տարակույս չկա, որ այսպիսի անփորձ և անմեղ բախտախնդիրներից ոմանք անտարբերությունից, ոմանք խնամակալ չունենալով, ընկնում են քաղաքների մոլորություններ մեջ և դառնում են թշվառ արարածներ, բայց մեծ մասը հասնում են իրանց նպատակին։

Գալով քաղաքը, գյուղացի մանուկն անպատճառ ունի մի նպատակ։ Եթե ցանկանում է նա վաճառական դառնալ, մտնում է մի վաճառականի մոտ որպես «դուքանի աշակերտ». նա ոչինչ վարձ չէ պահանջում, միայն թե տային նրան հաց և հագուստ։ Երբեմն մինչև տասն տարի անտանելի նեղություններ համբերելով, վերջապես նա փոքրիկ գումարի տեր է դառնում և սկսում է իր համար մի առանձին առևտուր անել։ Նա բացի սովորելուց առևտրական եղանակները, միևնույն ժամանակ ստանում է վարպետից նրա բարոյականության լավ կամ վատ հատկություններ։ Միևնույն կերպով են սկսում իրանց ասպարեզը և այն մանուկները, որոնք ցանկանում են որևիցե արհեստ սովորել. աշկերտությունից անհնարին նեղությամբ հասնում են վարպետության։ Քաղաքների թե վաճառականները, թե արհեստավորները մեծ հոժարությամբ ընդունում են իրանց մոտ գյուղացի մանուկներին, որովհետև նրանք հավատարիմ են լինում, չեն գողանում, և շուտ սովորելով, օգուտ են տալիս իրանց վարպետներին։

Որպես հայ աղջիկներից չէ կարելի գտնել աղախիններ, այնպես էլ հայ մանուկներից չէ կարելի գտնել տան սպասավորներ։ Բացառությունները խիստ աննշան են։ Եթե հայ մանուկը մտնում է մեկի մոտ ծառայելու, անպատճառ նպատակ ունի մի բան սովորել, որ կազատեր նրան ստոր պարապմունքից։

Ոչ սակավ հետաքրքրության արժանի է, թե որպիսի եռանդով, որպիսի անձնվիրությամբ և առանց բնավ միջոցների գյուղացի մանուկը քաղաքում աշխատում է ուսում ստանալ։ Դա մի կատարյալ նահատակություն է, որի մասին կխոսեմ իր տեղում, երբ կնկարագրվի առհասարակ մեր ուսանողների դրությունը։

Գյուղացի մանուկների սաստիկ հոսանքը դեպի քաղաքները զրկում է գյուղական ժողովրդին իր թարմ ուժերից և թուլացնում է

նրա աճելությունը։ Մանուկը քաղաքում սովորելով որևիցե արհեստ, կամ վաճառականություն, և կամ ուսումնական դառնալով, այլևս սովորելով քաղաքի կյանքին և հնշտություններին, այլևս չի վերադառնում իր հայրենական տունը, որովհետև իր արհեստը, իր գիտությունը գյուղում գործադրություն չեն գտնում։ Նա բնակություն է հաստատում քաղաքում, այնտեղ ամուսնանում է, և այնտեղ էլ ապրում է մինչև իր կյանքի վերջը։ Երբեմն միայն գնում է տեսնելու իր ծնողներին և ազգականներին, և եթե իր դրությունը ներում էր, ծնողներին, քույրերին, եղբայրներին իր մոտ է բերել տալիս, և այսպես գյուղական հասարակությունը զրկվում է մի ծուխից։ Բայց որքան այդպիսի ծուխեր են մարում ամեն տարի։

Գյուղական մանկտու ւսստիկ հոսանքը դեպի քաղաքները, թեև, որպես հիշեցի, մի կողմից զրկում է գյուղացուն իր թարմ ուժերից, բայց մյուս կողմից մտցնում է գյուղերի մեջ նոր կյանք, նոր քաղաքակրթված տարր։ Քիչ չէ պատահում, այն երիտասարդները, որոնք քաղաքներում զարգացել էին, աչքները բացվել էին, և հասկացել էին կյանքի նպատակը ու պահանջները, կրկին վերադառնում են գյուղը, հորդորում են իրանց հայրենակիցներին կրթության գործի մեջ, դպրոցներ հիմնել տալով, և նրանց հասարակական կյանքի և տնտեսության մեջ նոր ձևեր, նոր բարվոքումներ մտցնելով։ Օրինակներ շատ են եղել, որ մի գյուղացի պատանի, մանկության հասակում քաղաքը գնալով, այնտեղ մնալով և հարստանալով, գարձյալ չէ մոռացել իր ծնված տեղը, և հայրենասիրական զգացմունքից դրդված, կամ բոլորովին իր ծախսով, կամ օժանդակություններ հավաքելով, հիմնել է իր հայրենի գյուղում մի դպրոց, և կամ օգնել է իր հայրենակիցներին այս և այն տնտեսական գործի մեջ։ Այսպիսով գյուղացիները դուրս են գալիս իրանց անշարժությունից և իրանցից բաժանված ուժերն առաջնորդում են նրանց դեպի առաջադիմություն։

Գյուղացի մանկտին չափազանց առաձգական և դյուրաթեք բնավորություն ունի. նա շատ չէ ենթարկվում պապերից մնացած ավանդական սովորություններին ոչ միայն կյանքի մեջ, բայց և պարապմունքների մեջ։ Նրա մոտ չէ կարելի տեսնել այն քաստայական ջոկությունը, որ պահում է գյուղացուն իր անփոփոխ, անշարժ և քարացած միակերպության մեջ։ Բավական էր մի օրինակ, բավական էր, որ հանգամանքները նպաստեին նրան, նա արդեն փոխում է իր կացության ձևերը։ Այս է պատճառը, որ մենք չունենք գյուղական ազգաբնակություն իր նեղ նշանակությամբ վեր առած։

Տեսնում ես, նա պարապում է հողի մշակութ֊յամբ, այգեպանու֊թ֊յամբ, անասնապահութ֊յամբ և այլն, իսկ միևնույն ժամանակ վա֊ճառականութ֊յուն է անում, մտնում է արքունական կապալների մեջ, և հենց որ փողի տեր դարձավ, էլ չես ճանաչի երեկվա կոշտ, գեհենիկ գյուղացուն, նա ոտքից գլուխ փոխվում է, և ցույց է տա֊լիս բոլոր ձևերը փոքր ի շատե կրթված քաղաքացու։ Ես կբերեմ մի համեմատութ֊յուն։ Վեր առնենք օրինակի համար ռուս մուժիկին, նա որքան էլ հարստանա, մինչև անգամ միլիոնի տեր դառնա, դարձ֊յալ կմնա նույն մուժիկը, դարձյալ կտեսնես նրան ահագին մորու֊քով, ուղիղ կտրած երկայն մազերով, կարմիր չթեղեն շապիկով, մինչև ծնկները վեր քաշած կոպիտ կոշիկներով, և ուսերի վրա ձգած տուլուպով. թե քաղաքում և թե գյուղում նա միևնույն հագուստն է կրում, միևնույն ռամկական լեզվով է խոսում, և միևնույն կեռպով թեքվում է, մինչև գետին խոնարհվում է և գլուխ է տալիս, երբ գործ ունես մի դեղին կոճակավոր մունդիրի հետ։ Հարստութ֊յունն և մի֊ջոցները չեն փոխում նրան. բնակվում է սովորական խրճիթի մեջ, ուտում է իր «ըշչին» փայտե ամանի մեջ, փայտե գդալով, խմում է արաղ և «կրվաս», հաստացնում է փորը, օրըստօրե բթանում է, հի֊մարանում է։ Բայց մեր նորահաս գյուղացին այսպես չէ։ Նյութա֊կան միջոցների համեմատ նա փոխում է և ապրուստի ու կացու֊թ֊յան ձևերը։ Ես տեսել եմ գյուղացի երիտասարդներ ցիլինդրով, գունավոր նուրբ ձեռնոցներով, օսլայած սպիտակ շապիկներով, հագնված որպես մի փարիզյան ֆրանտ, մատին դրած ունի բրի֊լիանտ մատանի, ոսկի ժամացույցով, խոսում է զանազան լեզուներ֊ով, լրագրեր է կարդում, եղել է եվրոպական զանազան քաղաք֊ներում, դատում է պոլիտիկայի վրա, բնակվում է ճաշակով կահա֊վորված տան մեջ, որի լուսամուտները զարդարած են գույնզգույն ծաղիկների թաղարներով։ Իհարկե, բացառութ֊յունը մեծ է, մանա֊վանդ այն գյուղերի վերաբերութ֊յամբ, որ հեռու են քաղաքներից և մեծ ճանապարհներից, որ ընկած են խուլ անտառների, անմատ֊չելի լեռների և անհայտ ձորերի մեջ։

Անցնում եմ դեպի այն երիտասարդութ֊յունը, որ գյուղից դուրս չէ եկել, քաղաք չէ տեսել, որ դեռ պահպանել է իր պապերի ընտա֊նեկան և ավանդական հատկանիշները։

Բարոյականութ֊յունը մանուկ սերնդի մեջ պահպանելու համար գյուղացի ծնողներն աշխատում են շուտով ամուսնացնել իրանց որ֊դիներին։ 15—16 տարեկան հասակում նրանք արդեն կնոջ տեր են, իսկ դեռ քսան տարեկան չեղած, զավակներ ունեն։ Սովորած լինե֊

լով ամեն պետքերի մեջ ընդունել ծնողների հաճույքները, և՛ կնոջ ընտրության մեջ պատանին խոնարհվում է նրանց կամքին։ Նա իր սրտից չէ հարցնում՝ արդյոք սիրո՞ւմ է աղջկան։ Թե ոչ, և կամաակամա հաշտվում է անհրաժեշտության հետ։ Եվ ի՞նչով կարող էր նա հասկանալ կնոջ լավ կամ վատ հատկությունները, քանի որ նա երբեք կնոջ հասարակության մեջ չէր գտնվել, չէր փորձել, և չգիտեր, թե ինչպես է լինում կնոջ սերը։ Պսակեցին նրան մի աղջկա հետ, լավ թե վատ, միևնույն է նրա համար—այս է, որ կա—մտածում է նա, նրանով գոհանում է և նրա մեջ գտնում է իր բավականությունները։ Եթե հայրը գնել էր մի նոր ձի, որդին շուտով կարող էր հասկանալ, թե որքան այդ անասունը կարող էր հարմարվել գործին, որովհետև շատ այդպիսիները փորձել էր նա, բայց կնոջ հետ գործ չէր ունեցել, կինը նրա համար մի անծանոթ առարկա էր։

Կինն առհասարակ խիստ աննշան դեր է խաղում գյուղական երիտասարդության վիճակի մեջ։ Նա ապրում է փակված տան չորս պատերի մեջ և պահպանվում է սաստիկ հսկողության ներքո։ Եվ եթե պատահում է, որ նա տնից դուրս է գալիս, հարևանի տղան իրավունք չունի մոտենալ նրան կամ խոսել նրա հետ։ Եվ ի՞նչ հաճույուն կարող էր գտնել երիտասարդությունը կանանց հասարակության մեջ, երբ նրանցից կտրված էր, և երբ ամբողջ գյուղի մեջ չէր կարելի գտնել մի կամ երկու կին, որ թեթև վարքի տեր լինեին։ Ես ականատես եմ եղել մի ծիծաղելի հանդեսի, թե որպիսի խայտառակությամբ գյուղական հասարակությունից արտաքսում էին մի կնոջ։ Նրան նստեցրել էին էշի վրա դեպի հակառակ կողմը, այսինքն երեսը դարձրած դեպի գավակը, և նոխտայի (երասանակ) փոխարեն ձեռքումը բռնել էին տվել էշի ագին։ Կնոջ գլուխը բոլորովին բաց էր և առանց ծածկոցի, ծամերը սափրել էին, իսկ երեսը սևացրած էր մուրով։ Մի մարդ քաշում էր էշի նոխտան, իսկ երկու մարդիկ առջևն ընկած, մեկը թմբուկ էր ածում, իսկ մյուսը՝ զուռնա։ Բազմությունն աղաղակներով և կատակներով ճանապարհ էր դնում ողորմելի հանցավորին դեպի գյուղից դուրս։

Պետք է նկատել, որ բարոյականությունը պահպանելու համար գործ դրված այսպիսի խիստ միջոցներն այժմ օրըստօրե թուլանալու վրա են։ Բարքերի ապականությունը, որպես ժանտախտ, սկսել է վարակել գյուղական մաքուր պահված ժողովուրդը։ Այս ախտից զերծ մնացել են այն գյուղերը միայն, որոնք առանձնացած են և քաղաքների հետ հաղորդակցություն չունեն և որոնք սալդաթի կամ աֆիցերի երես դեռ չեն տեսել։

Պատահում է ավելի զգայուն բնավորություն, որ իսկապես սիրում է, սիրում է մի աղջկա, որին տեսել էր, որի հետ զուցե ունեցել էր մի քանի գաղտնի խոսակցություններ։ Բայց որդինների սերը երբեք չէ մտնում ամուսնական հաշիվների մեջ, որոնք միանգամայն կախված են ծնողների կամքից։ Որպես որդին չէ կարող ուտել այն կերակուրը, որից ինքը ախորժում է, այլ պետք է ուտի այն, որ մայրը նրա համար պատրաստում է, որպես որդին չէ կարող հագնել այն հագուստը, որ ինքը ցանկանում է, այլ պետք է հագնե այն, որ հայրը նրա համար գնում է—այնպես էլ պատանին չէ կարող կին ունենալ այն աղջկան, որին ինքը սիրում է, այլ նրան, որին ծնողներն ընտրում են։ Այս պարագաներիս մեջ խիստ հատկանիշ է այն պսակը, որ տեղի էր ունեցել մի գյուղում. քահանան հարցնում է պատանուց, ցույց տալով նորահարսի վրա, թե «տե՞ր ես, սիրում ե՞սս։ «Հայրս գիտե, տերտեր, նրանից հարցրուս»,— պատասխանում է պատանին։

Առհասարակ սերը գյուղացի պատանիների և աղջիկների մեջ լոկ բանաստեղծական ֆանտազիա է, որ վերջին տարիներում նյութ դարձավ մի քանի անշնորհք և անհամ վեպիկների, բայց կյանքի մեջ նա չկա։ Վեր առեք մեր բոլոր ժողովրդական երգերը և աշղների վեպերը, նրանց մեջ չեք գտնի իսկական սեր իր հոգեբանական ճշգրիտ կողմերով։ Բանաստեղծը խորին հիացմունքով գովում է կնոջ թուխ մազերը, կարմիր թշերը, սևորակ աչքերը, չինարի պես ձգված հասակը, մարգարտի նման ճերմակ ատամները, և այլն, մի խոսքով, նա հափշտակված է կնոջ արտաքին գեղեցկություններով միայն, բայց նրա հոգու և սրտի մեջ ոչինչ չէ տեսնում, նրա բնավորության, բարքի և վարքի մեջ ոչինչ գրավիչ բան չէ նկատում։ Դա շատ բնական է։ Ի՞նչպես կարող էր սիրողը թափանցել կնոջ սրտի և հոգու մեջ, երբ նրա հետ հարաբերություն չէր ունեցել, նրա բերնից մի բառ անգամ չէր լսել։ Իսկ հարաբերությունները մեր գյուղերում տղաների և աղջիկների մեջ միանգամայն կտրված են։ Տղային գրավում է աղջկա արտաքին ֆիգուրան միայն, երբ հեռվից հեռու տեսնում է նրան, ինչպես շատ մարդ կարող է հափշտակվել մի գեղեցիկ արձանի արտաքին կերպարանքով, բայց հոգին և սիրտը քննել չէ կարող, որովհետև նա սիրտ չունի, որովհետև նրա լեզուն չէ խոսում։ Բայց հոգու արտահայտություններն արտաքին կերպարանքի վրա տեսնելու համար պետք է ունենալ բավական կրթված ճաշակ և նուրբ դիտողություն, որոնցից զուրկ է գյուղացին։

Տարվա երեք եղանակներում — գարունը, ամառը և աշունը — գյուղացին այնքան զբաղված է իր մշակութիւններով, որ ամենևին ժամանակ չունի իր սրտի հետ խոսելու. այն ժամանակ գործում են նրա ֆիզիքական ուժերը միայն, իսկ հոգին մնում է անգործ։ Բայց ձմեռը մի փոքր հանգստանում է նա, և դատարկության մեջ զարթնում են զգայական կրքերը։ Ձմեռը կատարվում են գյուղական հարսանիքները, որ մոտեցնում են տղամարդերին կնիկների հետ։ Գյուղական հարսանիքն ամբողջ գյուղի հարսանիքն է. վերջին աղքատը մասնակցում է այդ ընդհանուր ուրախութեանը, կերակրվում է նրա սեղանից և խմում է նրա գինին։ Գյուղական հարսանիքը մի մեծ մխիթարութիւն է, մանավանդ ջահել աղջիկների և պատանիների համար, որոնք շատ զուրկ են մնում ուրախալի հանդեսներից։ Հարսանիքը, նայելով փեսայի հոր կարողութեանը, տևում է մի քանի օրեր. առհասարակ երեք օրից պակաս չէ լինում։ Ցերեկներն անց են կացնում ուտելով և խմելով, իսկ գիշերները՝ նվագարաններ ածելով, պար գալով և երգելով։ Ձեռնաբռնուկ խաղը (չալլի) այն բարերար խաղերից մեկն է, որ առիթ է տալիս տղամարդերին շոշափել մի կնոջ ձեռք։ Բայց այստեղ ևս հայկական պարկեշտութիւնը դրել է իր խիստ սահմանները։ Պարի մեջ տղամարդն իրավունք չունի բռնել մի օտար կնոջ ձեռքը, նա անպատճառ պետք է ընտրե իր մոտ ազգականներից, կամ իր քրոջը, կամ մորաքրոջը և այլն։ Ամուսնավոր կնիկները բոլորը դիմակավորված են լինում, այսինքն երեսները ծածկված է լինում քանձր և անթափանցելի քողով, ոչինչ չէ կարելի տեսնել։ Բայց ազատ աղջիկների երեսները բաց են լինում։ Կին և տղամարդ, աղջիկ և պատանի միմյանց ձեռքից բռնած, կազմում են մի երկար շղթա, որ զանազան ուղղութեամբ պտտվում է ընդարձակ տան մեջ։ Սազանդարների ածելու եղանակով շարժվում են պարողները, լուռ ու մունջ կերպով, կարծես, կատարվում է մի բալետ իր խորհրդավոր պոնտոմիմայով։ Այն գյուղերում, ուր ժողովուրդը դեռևս գտնվում է նահապետական պարզութեյան մեջ, տղամարդերի հարաբերութիւնը կնոջ հետ ավելի արձակ է, և հարսանիքների մեջ կամ զանազան տոնական հանդեսներում պարերը և խաղերն ավելի զվարճալի կերպարանք են ստանում։

Հարսանիքի ժամանակ հայկական ավանդութիւնները երևան են գալիս իրանց նախնական պարզ կերպարանքով. հետաքրքիր աչքը կարող է տեսնել նրանց մեջ ժողովրդական հանճարի շատ ստեղծագործութիւնները, որ այժմ կորչելու, անհետանալու վրա

են։ Թեև ունեցել ենք մենք մի ժամանակ թատերական ներկայացումներ, եթե մեր նախնիքներն ևս զվարճացել են իրանց էսքիլեսների, Սոֆոկլեսների և Էվրիպիդեսների արարչություններով—այժմ նրանցից ոչինչ չէ մնացել, այժմ նրանց նշույլները միայն մնացել են գյուղական ժողովրդի մեջ, որ հայտնվում են զանազան հանդեսներում։ Հարսանիքի համար ընտրում են առհասարակ ընդարձակ տներ, որ բավական լիներ բազմության համար։ Եթե հարսանիքատիրոջ բնակարանը փոքր էր, դրացին տալիս է նրան իր տունը։ Ամեն գիշեր սովորական կերուխումը, ուրախությունները և պարերը վերջանալեն հետո, լինում են մի տեսակ թատերական ներկայացումներ, որ ոամկի լեզվով կոչվում է օյին (խաղ)։ Դերասանների պաշտոն կատարում են գլխավորապես սազանդարները (նվագածուներ)։ Ներկայացնում են ժողովրդի կյանքից առած ծիծաղաշարժ պատկերներ, երբեմն առանց բովանդակության և երբեմն իրանց տգեղությամբ անցնում են բարոյականության չափը։ Բայց այդ կոշտ, կոպիտ և անմշակ վոդեվիլները սաստիկ ազդում են մանուկ սրտերի վրա։ Մանկտին նրանց մեջ տեսնում է այն գաղտնիքները, որոնք իր համար առաջ անորոշ էին, անբացատրելի էին։

Վերջապես պատանին ամուսնանում է։ Հարսանիքի ուրախությունները շուտով անցնում են, որպես թե ոչինչ չէր պատահել և մյուս օրը նորափեսան սկսում է իր սովորական պարապմունքը։ Կրկին սկսվում է տաժանական կյանքը։ Երկու նորապսակ ամուսինների հարաբերությունները հենց առաջին օրից խիստ օտարոտի ձև են ստանում։ Գյուղացու ընտանեկան պայմաններին անծանոթ մարդը, տեսնելով նրանց, կկարծե, թե նրանք խռովել են, կամ միմյանց հետ անհաշտ են ապրում։ Դրսումը միասին չեն հայտնվում, իսկ տան մեջ միմյանց հետ չեն խոսում։ Հարսն իր քողը չէ բարձրացնում և երեսը չէ ցույց տալիս փեսային, եթե այնտեղ ներկա էր ընտանիքի անդամներից մեկը։ Միասին չեն ճաշում, ընթրիք չեն ուտում. որդին ուտում է հոր հետ, իսկ հարսը՝ սկեսրոջ հետ։ Գյուղերում կանանց սեռի սեղանը տղամարդերից բաժանված է։ Այսպես անցնում են տարիներ և շատ տարիներ. հարսը տեսնվում է իր ամուսնի հետ կամ գաղտնի, կամ գիշերը, երբ բոլորը քնած էին։

Ամուսնությունից հետո երիտասարդի վիճակը փոխվում է ընտանիքի մեջ. հայրը նրա հետ այլևս խստությամբ չէ վարվում, իսկ մայրը հարգում է։ Նա այժմ այր է և ոչ տղա։ Նրա խոսքերը, նրա կարծիքները բանի տեղ են դնում, և նա սկսում է ձայն տալ ընտա-

նեկան խորհուրդների մեջ։ Բայց աստիճանը հարաբերությունների մեջ չէ փոխվում, մնում է միևնույնը։ Խորհուրդների մեջ գերակըշռում է ավելի հասակավորի կարծիքը։ Եթե նոր ամուսնացածը կրտսեր որդի էր, խնարհվում է երեց եղբորը, իսկ երեց եղբայրը՝ հորը։ Ընտանիքի գլխավորությունը պատկանում է նրան։ Հոր մահից հետո նրա տեղը բռնում է անդրանիկ որդին։ Որպես կրտսեր եղբայրը հնազանդվում է երեց եղբորը, այնպես էլ կրտսեր եղբոր կինը պետք է հնազանդվի երեց եղբոր կնոջը։ Ինձ շատ է պատահել տեսնել գյուղերում, երբ երեց եղբայրն իր հյուրի հետ սեղան էր նստել, կրտսեր եղբայրը ոտքի վրա ծառայում էր նրանց։ Փոքր եղբայրն այն աստիճան պատկառում է և հարգում է մեծ եղբորը, որ աստիճան հարգում է և իր հորը։ Նրա ներկայությամբ չէ ծխում, գինի կամ արաղ չէ խմում, թեև մեծ եղբայրը գիտե բոլորը, և առհասարակ մատների միջից է նայում իրանից փոքրի այս տեսակ համեստությունների վրա։

Հոր կենդանության ժամանակ որդիների մեջ բաժանում լինել կարող չէ. եթե նրանցից մեկն անհնազանդ էր գտնվում և խանգարում էր ընտանեկան կարգերի ներդաշնակությունն, արտաքսվում է ժառանգությունից զրկված։ Հոր մահից հետո եղբայրները երկար շարունակում են դարձյալ միասին ապրել, մինչև նրանք ևս ունենում են որդիներ, որոնց ամուսնացնում են և թոռների տեր են լինում։ Տունը լցվում է ահագին բազմությամբ, գերդաստանը ստվարանում է և ընտանիքի կազմակերպությունն ավելի բաղադրյալ ձև է ստանում։ Ըրբ հին սերունդն անցնում է, մնում են չահիլներն, այդ ժամանակ առաջ է գալիս բաժանմունքը. հանկարծ մեկ մասնատված գերդաստանից կազմվում են 5—6 ընտանիքներ։ Բայց նկատողության արժանի է այն, որ գյուղացի հայրերը չափազանց հեռատես են լինում և իրանց կենդանության ժամանակ կարգադրում են այն բոլորը, ինչ որ պետք էր որդիների ապագա տնտեսության և ապրուստի համար։ Օրինակ, մեկ հայր ուներ երեք որդի, գիտեր, որ իր մահից հետո, վաղ թե ուշ, նրանք կբաժանվեն, նա աշխատում է չինել յուրաքանչյուրի համար մի առանձին խրճիթ, և եթե իր միջոցները չէին ներում այդ անել, նա գոնե տալիս է իր տան չինությանն այնպիսի ձև, որ կարելի լիներ երեք հավասար մասերի բաժանել, որ հետո երեք որդիների համար հարմար բնակարաններ լիներին։ Գյուղերում առվորաբար լսվում է՝ այն ինչ աղաչի յոթը չրաղացները, յոթը օրավար հողը, յոթը այգիները, յոթը հոտ ոչխարները և այլն. իսկույն կարելի էր եզրակացնել, թե նա

ունեցել է յոթը որդի, և ամեն մեկի համար առաջուց տնօրինել է ինչնուն կայքերը, որ եղբայրներից յուրաքանչյուրը հավասար չափով ստանար հոր ժառանգությունից իր բաժինը։ Բայց սթե՛ հայրն այնքան աղքատ էր, որ իր կենդանության ժամանակ չկարողացավ տնօրինել որդիների համար մի ապահով ապագա, նրանից հետո որդիներն այնքան ժամանակ միմյանց հետ անբաժան ապրում են, միասին աշխատում են, մինչև կարողանում են վաստակել այնքան, որ բավական կլիներ յուրաքանչյուրի կանոնավոր տնտեսության համար, եթե հարկավոր կլիներ բաժանվել միմյանցից։

Այսքանը բավական համարելով երիտասարդների ընտանեկան հարաբերությունների մասին, այժմ դառնում եմ դեպի նրանց հասարակական գործունեությունը։

Այն գյուղերում, ուր նահապետական սովորությունները դեռ տիրում են կյանքի մեջ, երիտասարդությունը չէ մասնակցում հասարակական գործերում։ Որպես ընտանիքի մեջ, այնպես էլ հասարակական գործերի մեջ ձայն ունեն ազսախկալները (սպիտակ մորուք ունեցողները) միայն։ Օրինակ, պետք էր հարկերը բաժանել ծուխերի կամ կայքերի վրա, պետք էր շրերին հերթ նշանակել, եկեղեցու երեսփոխանի հաշիվը տեսնել, կամ պետք էր այս և այն հանցավորին պատժել, մի խոսքով բոլոր գյուղական գործերի համար հավաքվում են «սպիտակամորուքները», ժողով են կազմում, խոսում են, դատում են և վճռում են։ Բայց նույն օրից, երբ գյուղերում հիմնվեցան կանոնավոր շինական դատարաններ, երբ նրանց տրվեցան որոշյալ օրենքներ, և երբ կանցելարիական ֆորմալիստությունը մերժեց սպիտակամորուքների բերանացի դատավճիռները— այն օրից ծերերի դարն անցավ և ասպարեզը մնաց երիտասարդներին։ Որովհետև շինական դատարաններում մասնակցելու համար, պետք է փոքր ի շատե գրագետ լինել, պետք է փոքր ի շատե ծանոթ լինել օրենքների հետ, և վերջապես պետք է կանոնավոր խոսել գիտենալ, բայց դրանցից զուրկ են ծերունիները։ Ես ա՛րիթ եմ ունեցել մի քանի անգամ ներկա լինել շինական դատարաններում ժողովների վիճաբանություններին. նախագահում է տանուտերը, խոսել ցանկացողները ձայն են խնդրում, միմյանց չեն խանգարում, չեն ընդմիջում, վերջապես տեսնում ես մարդիկ, որ հասկանում են իրանց պետքերը, և վիճաբանությունների մեջ տիրում է ավելի առողջ դատողությունը, թեև պարզ և համեստ կերպով, և ոչ սոփեստական պերճախոսությունը, որ շատ անգամ կարելի է նկատել մեր քաղաքների դումաների մեջ։

Այսուամենայնիվ, հին սերունդը դեռ ոչ բոլորովին կորցրել է իր նշանակությունը։ Երբ պատահում են գյուղում զանազան հրավերքներ, օրինակ, երբ կնունքաճաշ են տալիս, երբ մի հանգուցյալի համար հոգեհաց են տալիս, երբ մի տան մեջ նավասարդին հարիսա էին եփել, կամ զավուրմայի համար մորթած ոչխարներից խաշ էին պատրաստել—միշտ հրավիրում են ծերունիներին, իսկ երիտասարդներին չեն կանչում։ Եթե հրավերքներում պատահում են երիտասարդներ, նրանք ծերերի հետ սեղան նստելու համարձակություն չունեն, այլ նրանց պատվելու համար ոտքի վրա սպասավորություն են անում։ Երիտասարդներն իրանց զվարճությունը գըտնում են իրանց շրջանի մեջ. հավաքվում են միասին, գնում են գյուղից դուրս, առանձնանում են մի այգու կամ մի ձորի մեջ և այնտեղ քեֆ են անում, բայց տանը հյուրեր հրավիրելու իրավունք չունեն, քանի որ դեռ կենդանի էր ծերունի հայրը։ Հայրերն առհասարակ չեն ներում որդու անձնիշխանությունն ընտանիքի մեջ, իսկ դրսումը, եթե մի լավ բան անում է նա, չեն արգելում, որովհետև որդու փառքը, որդու ստացած գովասանությունները դարձյալ իրանց են վերաբերում։ Այս է պատճառը, որ նրանք երբեմն անում են այն մեծ զիջողությունը, երիտասարդ որդիներին թույլ տալով իրանց հաճույքների համեմատ վարվել։

Անցնում եմ դեպի գյուղական երիտասարդության մտավոր, հոգեկան և առհասարակ կուլտուրական առանձնությունները։

Տեղագրական և կլիմայական պայմանները Հայաստանում, ավելի քան թե ուրիշ տեղ, արտահայտում են իրանց ազդեցությունը ժողովրդի մտավոր, հոգեկան և առհասարակ կուլտուրական առանձնությունների վրա։ Այս կետից նայելով մեր գյուղական ազգաբնակությունը կարելի է երկու որոշ խմբերի բաժանել՝ լեռնաբնակներ և դաշտաբնակներ։ Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձին։

Լեռնաբնակները, թե հովիտների մեջ, թե ձորերում, թե բարձրավանդակների վրա և թե անտառներում, դեռ ապրում են գետնափոր խրճիթների մեջ, որոնք ավելի գազանների որջի են նման, քան թե մարդկային բնակության։ Խրճիթը բաժանված է երկու մասերի, մեկի մեջ կենում են անասունները, մյուսի մեջ տերերը։ Մշտավառ խարույկը—տնային օջախը—հարաժամ ծխում է բնակարանի կենտրոնում, որ սփռում է իր շուրջը լույս և ջերմություն։ Գլխավոր պարապմունքն անասնապահությունն է։ Անասունը մատակարարում է նրանց ամեն ինչ, որ պետք էր ապրուստի համար՝ կրա-

կուր, հագուստ և վառելիք։ Հագուստի համար գործվածներ պատրաստում են կնիկները բուրդից և իր բնական գույնով, որ շատ տեղերում բավական նրբության է հասցրած։ Մսակերությունը սովորական եղած չէ, կերակրվում են անասունների կաթով, մածնով, յուղով, պանրով և բանջարեղեններով միայն։ Ձմեռը բավական երկարատև լինելով, իսկ տարվա մյուս եղանակները ցուրտ, այս պատճառով երկրագործությունը զարգացած չէ. մշակում են ցորյան, գարի և հաճար միայն։ Մշակության համար մեծ աշխատություն պետք չէ, որ զարգացներ մեծ հմտություններ. թեթև արորով փոքր-ինչ խրխրում են լեռների հողով պատած կուրծքը, ցանում են և քողնում են բնության կամքին. անձրևը ինքը ջրում է, և արեգակի անզոր ճառագայթները բուսցնում են։ Շատ անգամ վաղահաս ձմեռը ձյունով ծածկում է դեռ չհասունացած հունձքը, և գյուղացին ուտելու հաց չունի։ Կյանքը նահապետական է։ Մարդը դեռ չէ տաշվել, չէ կոկվել. դեռ պահպանել է իր նախնական կոշտությունը՝ թե լեզվի, թե մտածության և թե կենցաղավարության մեջ։ Կյանքի պահանջները խիստ սակավ են, մարդը բավականանում է փոքրով, և չափավոր կարիքը չէ ստիպում շատ մտածել։ Գոհությունը վիճակից տիրում է կյանքի վրա անշարժության հետ միասին։

Երիտասարդությունը լեռնաբնակների մեջ նշանավոր է իր տիպական հատկանիշներով։ Նա, որպես բնության ազատ զավակ, դաշտեցիների նման ցած, խորամանկ և տափակ բնավորություն չունի։ Լեռնցի երիտասարդությունը նույնպես պարզամիտ, նույնպես կոշտ-կոպիտ, նույնպես անխորտակելի և նույնպես վայրենի է, որպես ինքը լեռը։ Նա ծանոթ է զենքերի հետ, որսում է անասուններ, պատերազմում է գազանների հետ, և հարկավորված դնքում, չէ խնայում իր զենքը գործ դնել և իր նման մարդերի դեմ։ Մեր բոլոր նշանավոր ավազակները, որոնց քաջագործությունները հերոսության են հասնում, լեռնցիներ են եղել։ Հայոց անկախությունը մինչև մեր մոտ ժամանակները պահպանվեցավ Ղարաբաղի լեռներում։ Դավիթ-բեկը, մեր 18-րդ դարու հերոսը, նույն տեղացի էր։ Նշանավորն այն է, որ այդ քաջ և կազմվածքով, հոգով, ուղղով առողջ և զորավոր երիտասարդներից առաջ են գալիս երևելի մարդիկ, երբ դեպքերը գցել էին մեկին կրթության ճանապարհի վրա, և նա համալսարանական բարձր ուսում էր ստացել։

Խոսենք դաշտաբնակների մասին։

Բոլորովին հակառակ պատկեր են ներկայացնում դաշտա-

բնակները։ Նրանք գետնափոր խրճիթներում չեն ապրում, բնակվում են կավաշեն կամ քարաշեն տներում, որոնք բավական բարձր են գետնի մակերևույթից։ Անասունների ախոռատունը միացած չէ տերերի բնակարանի հետ։ Ուտում են մսեղեն կերակուրներ և հագնում են գունավոր գործվածքներ, որ արդյունաբերվում է ոչ թե իրանց կնիկների աշխատասեր ձեռքով, այլ եվրոպական ֆաբրիկաների շոգիով։ Բնավորությամբ, որպես հիշեցի, նման են իրանց բնակած դաշտերի տափարակությանը—նույնպես ցած, նույնպես հարթած և նույնպես տափակ են, բայց կրթությամբ և խելքով՝ բարձր են, քան թե լեռնաբնակները։ Ջենք չեն սիրում, վառոդից վախենում են, երկաթը գործ են ածում միայն բահի, մանգաղի և խոփի համար։ Երկաթով պատերազմում են հողի հետ։ Դաշտեցիքը չվեցին մեզ ոչ մի ավազակ և ոչ էլ մի քաջ մարդ, միայն հասցրին բարեսիրտ երկրագործներ և խորամանկ վաճառականներ։ Գյուղատնտեսական մշակությունների մեջ աշխատության գլխավոր ծանրությունը բառնում է իր վրա երիտասարդությունը։ Ալևոր հորը, հասակն առած եղբորը շատ չեն բանեցնում, խնայում են որպես խնայում են երկրագործական ծերացած անասուններին։ Հասկանալի է, որ դաշտային տափարակ երկրների վրա, ուր հողն արգավանդ է, ուր ջուրն առատ է, ուր բավական տաք է լինում, ուր ձմեռը երկարատև չէ, գյուղատնտեսական պարապմունքներն ավելի բաղադրյալ ձև են ստանում։ Այս է պատճառը, որ մեր դաշտաբնակների ձեռքում երկրագործությունն իր բոլոր ճյուղերի մեջ բավական ծաղկած և զարգացած վիճակի է հասել։ Գյուղային մշակում է ընդեղենների և հացահատիկների բոլոր տեսակները, մշակում է զանազան ագարակային բանջարեղեններ և սեխանոցի պըտուղներ։ Ջրավետ տեղերում բրնձի մշակությունը կատարելագործության է հասցրած։ Բայց բամբակի և մետաքսի մշակությունը գյուղական հարստության ամենամեծ մասն է կազմում։ Այգեգործությունը նույնպես ծաղկած վիճակի է հասցրած, մրգեղենների ամեն տեսակները հիանալի են. խաղողը որքան ազնվացրած է, այնքան գինին շատ տեղերում դեռ կատարելագործված չէ։ Անասնապահությամբ չեն պարապում, որովհետև երկիրը մշակված լինելով, արոտատեղիներ չկան։ Պատահում են այնքան անասուններ, որքան պետք է իրանց վարուցանքի և տնտեսության համար։

Այժմ ինքնըստինքյան հասկանալի է, որ մեր դաշտաբնակ գյուղացիները թե կրթությունով, թե մտավոր զարգացումով և թե նյութական կարողությունով գերազանցում են լեռնաբնակներից,

բայց չունեն այս վերջիններիս ոչ բարքի մաքրությունը, ոչ հոգու ազնվությունը, ոչ մարմնի առողջությունը և ոչ սրտի քաջությունը։ Մի սաստիկ բաղձանք հարստանալու և խիստ շուտ հարստանալու թույացնում է նրանց մեջ բարոյական կողմերը և ամեն ինչ զոհում է ագահության։ Նրանք բավական չեն իրանց վիճակով և միշտ բողոքում են, թե սակավ ունեն։ Բայց մի փոքր հարստացան թե չէ, թողնում են գյուղը և տեղափոխվում են դեպի քաղաքը։ Այնտեղ այլևս չես կարող ճանաչել մեր գյուղացուն։ Բայց պետք չէ մոռանալ, որ այս դեպքում մեծ պատճառ է տալիս հողերի անձկությունը։ Մեր գյուղերում հողը բնակիչների թվի համեմատ այնքան սահմանափակ է, որ չէ բավականացնում նրանց ընդարձակ գործունեությանը։ Շատերն այժմ սկսել են գնել կալվածատեր խաների, բեգերի և վրաց ազնվականների հողերը, որոնք խաղաքղթի և շռայլության մեջ սպառում են իրանց հարստությունը, և կալվածներն անցնում են մի ժամանակ նրանցից ճնշված հայ գյուղացու ձեռքը։ Ամեն տեղ նշմարվում է մի տեսակ ձգտում դեպի նյութական հարստություն, որ առհասարակ հայի դարևոր հատկանիշն է եղել։

Ես սկսեցի գյուղացի մարդու երեխայությունից, կվերջացնեմ մի քանի խոսքով նրա ծերության մասին։ Երբ հասնում է խորին ծերության, գյուղացի հայրը շատ չէ խառնվում ընտանեկան և տնտեսական գործերի մեջ, նա թողնում է, որ «ջահիլները» անեն, «րպես խելքները կտրում է։ Երբեմն բարի խրատներ և խորհուրդներ է տալիս, բայց պահանջումներ չէ անում։ Այդ հասակում նա համաձա խոսում է տերտերի հետ, մոտենում է եկեղեցուն և առավոտ ու երեկո ժամից հետ չէ մնում։ Տան մեջ նրա վրա նայում են որպես մի հյուրի վրա, որ եթե երկար մնալու լիներ, կարող էր ձանձրացնել։ Բայց նա դարձյալ չէ հրաժարվում իր հեղինակությունից, գոնե ազդելով բարոյական կողմից։ Գերդաստանի մեջ հարգանք է վայելում, և գյուղի մեջ համարվում է պատկառելի անձնավորություն։ Եթե ծերունին փոքր ի շատե կարողության տեր մարդ էր, նա ընդունվում է որպես հասարակության հայր։ Երբ նա նստած էր իր տան դռան մոտ «տեր ողորմյա» էր քաշում և սառած անդամները չերմացնում էր արեգակի ճառագայթներով, գյուղացի կնիկները չեն համարձակվում այն կողմով անց կենալ, որ նրանց չտեսնե ծերունին։ Երբ նա նկատում է մանուկներին դրսում որևիցե անկարգություն անելիս, ում զավակները որ լինեին նրանք, իրան իրավունք է համարում մոտենալ, հանդիմանել և երբեմն ա-

կանջներից բռնել ու ձիգ տալ։ Փողոցով անցնելիս, նստած երիտասարդները ոտքի են կանգնում նրա առջև։ Նրա աչքը համբուրվում է, որպես քահանայի ձեռք. ամեն ոք նրան «պափի» կամ «պապի» է կոչում և ցանկանում է լսել նրա խորհուրդները։

Մեր ալևորներն իսկապես այնքան հիմար են լինում, որպես առհասարակ լինում է շատ ալգերի մեջ ծերացած մարդը։ Կյանքի մեջ այնքան տանջվել է նա, այնքան մաքառել է դժվարությունների դեմ, որ նրա մտածությունները դարձել են մի տեսակ ճշմարտություններ, որ հետևանք էին դառն փորձերի։ Այս հատկություններն ավելի երևում են այն ալևորների մեջ, որ մնացել են պարսկական տիրապետության ժամանակներից։ Ես առիթ եմ ունեցել մեծ բավականությամբ խոսակցել շատ գյուղացի ալևորների հետ, որոնք բոլորովին անգրագետ մարդիկ են եղել։ Նրանց հայացքները կյանքի պայմանների վրա այն աստիճան ուղիղ են լինում, որ բոլորովին զարմանք են պատճառում։ Մի պարզ առածով, մի խորհրդավոր առակով, մի կարճ նախադասությամբ նրանք այնքան խորին միտք են հայտնում, որ հազիվ թե մի փիլիսոփա կարող էր բացատրել իր բոլոր մթին ֆրազների ուժով։ Առողջ դատողություն— ահա՛ հատկանիշը մեր գյուղական ծերունիների մտավոր կարողության, իհարկե այն առարկաների վերաբերությամբ, որ ծանոթ էր նրանց։

Համարյա բոլոր գյուղացի հայրերը մեռնում են առանց կտակ թողնելու, իսկ այդ ժառանգներին խռովություն չէ պատճառում։ Վաղեմի սովորություններ ընդունված են որպես օրենք. ամեն մեկը ստանում է իր բաժինը։

Բ

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ[1]

Կյանքը մեր գավառական քաղաքներում շատ նման է միմյանց, բավական է վերցնել մի քաղաքի երիտասարդությունը, և մյուսների մասին կստանանք համամման տեղեկություն։

Այստեղ ավելի պարզ կերպով աչքի է զարկում այն սթափումը, որ նշմարեցինք գյուղերում։ Ամեն ինչ մի անհայտ խթանով ձգե-

[1] *Գավառական քաղաքներ ես կոչում եմ Թիֆլիսի վերաբերությամբ մնացած բոլոր քաղաքները։*

տում է դեպի նորը, դեպի ավելի վայելուչը։ Տարակույս չկա, որ ամեն մի փոփոխություն կյանքի մեջ, որ ինքնուրույնաբար չէ ծագում նույնիսկ կյանքի փոքր առ փոքր և հաջորդաբար քաղաքակրթվելուց, այլ միանգամով ընդունում է ամեն ինչ դրսից և օրինակից—մի այսպիսի կապկությունը շատ անգամ կարող է ձգնել և ծուռ ճանապարհի վրա։ Այդ դեպքում քաղաքների վիճակի մեջ մեծ դեր է խաղում Թիֆլիսը։

Միայն մի քանի գավառական քաղաքներ ունեն արքունի գիմնազիաներ, մյուսները պրոգիմնազիաներ, իսկ մեծ մասը տարրական միջնակարգ դպրոցներ։ Բացի հիշյալներից, համարյա բոլոր քաղաքներում հայերն ունեն իրանց ազգային կամ թեմական կամ ծխական դպրոցները։ Վերջինները լցված են լուսավորչական հայերով միայն, օտարազգիներ, կաթոլիկ կամ բողոքական հայեր չեն ընդունվում։ Արքունական դպրոցների մեջ նույնպես հայ աշակերտների թիվը մեծամասնություն է կազմում. կարելի է մոտավորապես ասել, որ 10 ուսանողից 9-ը հայ է։ Բայց պետք է գիտենալ, որ ռուսական Հայաստանի քաղաքներից շատերի մեջ, որպես են՝ Հին-Նախիջևանը, Օրդուբադը, Շուշին, Գանձակ, Շամախի, Նուխի, Բաքու, Դերբենդ, մահմեդականները, եթե մեծամասնություն չեն կազմում, գոնե թվով հայերից շատ պակաս չեն, այսուամենայնիվ նրանց զավակները դպրոցների մեջ ամենաչնչին տեղն են բռնում։ Կրոնական մոլեռանդությունն առաջնակարգ դեր է խաղում այստեղ։ Ջարմանալին այն չէ, որ դպրոցները լցված են ըստ մեծի մասին հայ աշակերտներով, այլ այն, թե որպես այդ ողորմելի հիմնարկություններից դուրս են գալիս նշանավոր մարդիկ, որ սովորել էին միայն ռուսերեն գրել, կարդալ և սխալներով խոսել։ Ես ճանաչում եմ նահանգական դատարանի նախագահ, հաշտարար դատավորներ, նոտարիուսներ, և այլ բարձր պաշտոնավարներ, որոնք բացի գավառական միջնակարգ դպրոցներից, մի այլ տեղ չեն սովորել։ Հասկանալի է, որ դրանք իրանց առաջադիմությունով պարտական են ոչ թե դպրոցներին, այլ իրանց սեփական աշխատությանը, որ սկսելով ստոր ծառայություններից, և գործնականապես վարժվելով, զարգանալով, վերջապես ծերության հասակում հասել են բարձր պաշտոնների։

Դժվար է որոշել, թե ո՛ր դասակարգի մանուկները հաճախում են արքունական և ո՛րը բուն ազգային դպրոցները, բայց այսքանը հայտնի է, որ արքունական դպրոցները մտնում են գլխավորապես որդիները մանր աստիճանավորների, որոնց ծնողները միջոց չու-

Նեին Նրանց Թիֆլիս ուղարկելու, որ պահանջում է մեծ ծախսեր։ Իսկ մեր քեմական և ծխական դպրոցները մտնում են որդիները վաճառականների և արհեստավորների, որոնք շատ պետք ունեն ուսւսց լեզվի մեջ, և կամենում են շարունակել իրանց հորերի պարապմունքները։ Բայց լինում են և այնպիսիները, որոնց թիվը փոքր չէ, որոնք ազգային վարժարաններում պատրաստվելով, մտնում են արքունական դպրոցները։

Բոլոր աշակերտները բնակվում են իրանց ծնողների հետ և բացի հոր տնից և ուսումնարանից մի ուրիշ տեղ չեն ճանաչում, շատ-շատ կարելի է տեսնել նրանց հասարակաց այգում, խումբով նստած իշոտիքի վրա, անշարժ նայում են զբոսնողներին։ Մինչև անգամ մերձակա գյուղերից եկած աշակերտները չեն վարձում առանձին սենյակներ բնակության համար, այլ կենում են մի բարեկամի կամ ծանոթի ընտանիքի մեջ։ Ծնողները վճարում են, գյուղից ուղարկելով յուղ, պանիր, ալյուր և այլն։ Շատ գյուղացի աշակերտներ, որոնց ծնողները բոլորովին աղքատ են, վճարում են իրանց ծառայությամբ։ Դա մի զարմանալի միջոց է ուսում առնելու, որով հայտնվում է այն սաստիկ ծարավը, որ քաշում է մեր մանուկներին դեպի դպրոցը։ Գյուղից եկած աշակերտը մտնում է մի ընտանիքի մեջ որպես ծառա, առավոտյան վաղ վեր է կենում, տնային գործերը կատարում է, հետո գնում է վարժատուն, այնտեղ մնում է մինչև ճաշ, և վերադառնալով, կրկին շարունակում է իր տնային ծառայությունները. ե՞րբ է պատրաստում նա իր դասերը—դա մի հրաշք է, միայն գոհ է, որ նրան տալիս են մի կտոր հաց, հագցնում են տան հնոտիքներով, թեև պատահած ժամանակը սաստիկ ծեծում են, եթե գտնում են որևիցե զանցառություն իր պարտավորությունների մեջ։ Այսպես է սկսում գյուղացի աղքատ ուսանողը, և պատերազմելով ահագին դժվարությունների հետ, հասնում է մինչև համալսարան։

Գավառներում ծնողները սաստիկ խիստ են դեպի ուսանող աշակերտը. նրան պահում են զգույշ հսկողության ներքո, որպես մի աղջիկ, և դրսումը կորցրած ամեն մի ավելորդ րոպեի համար հաշիվ են պահանջում։ Միջոց ունեցող հայրերը որդուն առանց սպասավորի դպրոց չեն ուղարկում, և նա երեխայությունից սովորում է այն բանին, որ միշտ մեկը պետք է առաջնորդեր նրան կյանքի մեջ։ Այսպես, բարոյականության հետ պահպանվում է և աշակերտի անծանոթությունն աշխարհի հետ։ Ամենահարուստ աղայի որդին գրպանում չունի մի կոպեկ ծախսելու համար, և այդ,

որ կարծիքով, կպահեր նրան շռայլությունից, բայց որդին երբեմն ստրջելու փող է գտնում... Ո՞րտեղից. աստված գիտե...

Գավառական քաղաքներում նշմարվում է նույնը, ինչ որ տեսանք գյուղերում, այսինքն, թե մանուկների և թե ծնողների մեջ մի աստիճ բաղձանք դեպի բարձրը և դեպի ավելի կատարյալը։ Վարտեվով տեղային տարրական դպրոցում, աշակերտն աշխատում է դիմել Թիֆլիս, ինչ հնարքով ա լիներ, մտնել այնտեղի գիմազիաներից մեկի մեջ, և հետո Մոսկվայում կամ Պետերբուրգում ամալսարանական բարձր ուսում ստանալ։ Բայց ոչ բոլոր ծնողներն ունեն այնքան նյութական միջոցներ, որ կարողանային հոգալ բդու ծախսերը. այն ժամանակ ապրուստի հոգսն ընկնում է որե վրա։ Ես ծանոթ եմ եղել Թիֆլիսում մի քանի գավառացի աղատ գիմնազիստների հետ, որոնց աշխատությունները և անձնարկությունը կատարյալ հերոսության են հասնում։ Ինակվում են ի քանի հոգի միասին մի խոնավ և նեղ սենյակում, առանց սպասավորի, կերակրվում են օրը մի անգամ ամենաէժանագին հյուրատոցում, շատ անգամ ամբողջ օրեր անց են կացնում մի կտոր երիկ ուտելով. բայց դարձյալ միշտ կտեսնեք նրանց ուրախ և գոունակ դեմքով։ Գիմնազիայից տուն դառնալով, նրանք շտապով աշում են, հետո տարածվում են քաղաքի մեջ, ընտանիքներում ամ մասնավոր դպրոցներում դասեր տալու։ Շատ անգամ նրանց շակերտները մեկը մյուսից կես վերստ կամ ավելի հեռավորության վրա են գտնվում, բայց այդ հոգ չէ, միայն թե դասեր լիներին։ Ամբողջ ճաշից հետո պտտելով քաղաքի մեկ ծայրից մինչև մյուսը, երադառնում են տուն ուշ-գիշերային պահուն, բոլորովին ուժաատ։ Մի կամ երկու գավաթ թեյը սև հացով կազդուրում է նրանց. ետևից սկսում են պատրաստել իրանց սեփական դասերը։ Ամառային արձակուրդները մեծ հունձք են ընծայում գավառացի ղքատ գիմնազիստներին։ Նրանք պատրաստում են զանազան պրոցների այս և այն դասատունը մտնելու համար աշակերտներ և հող են ստանում։ Այսպես մի կողմից իրանց ապրուստը հայթայթելով, մի կողմից իրանք սովորելով, մյուս կողմից ուրիշներին սովորեցնելով, աղքատ գիմնազիստները շարունակում են իրանց ուսումը։ Միևնույն ժամանակ նրանք չեն զրկում իրանց մի քանի ավականություններից, որպես են՝ երբեմն թատրոն գնալ, տեսնել մի լավ պիեսա, լսել մի նշանավոր երաժշտի, հասարակաց գրադարանից գիրք վեր առնել, կամ ընկերությամբ վճարելով, ստանալ մի րագիր, ամսագիր և այլն։ Լինում են և այնպիսի երախտավորներ,

որ իրանց վաստակած փողի ավելորդով օգնում են ընկերներին, կամ ուղարկում են իրանց չքավոր ծնողներին, որոնց թողել էին հայրենիքում։ Հայանի բան է, որ միջոց ունեցող գիմնազիստները, որոնք ստանում են ծնողներից ամսական 50—60 ռուբլի, բոլորովին տարբեր պայմանների մեջ են սովորում։ Լավ կահավորված սենյակ, լավ ճաշ, զանազան տեսակ զվարճությունները և զբոսանքները նրանցից շատ ժամանակ են խլում, և այս պատճառով նրանք լինում են ավելի թույլ ուսանողներ, քան թե իրանց աղքատ հայրենակիցները։

Ես դառնում եմ դեպի այն աշակերտները, որոնք ուսանելու համար Թիֆլիս կամ ուրիշ քաղաքներ չեն գնում, այլ ավարտելով գավառական միջնակարգ դպրոցներում, մնում են այնտեղ և գործում են իրանց հայրենիքում։

Մեր ժամանակից 20—30 տարի առաջ, և կարելի է ասել այն օրից, երբ ռուսները տիրապետեցին Կովկասը, հայ երիտասարդության առջև բացվեցավ մի ընդարձակ ասպարեզ։ Նոր տիրապետողներն անծանոթ լինելով երկրին և տեղային պայմաններին, և որ ավելի կարևորն է, իրանցից պատրաստի մարդիկ չունենալով, որ գիտենային զանազան ցեղերի լեզուները, կարոտ էին տեղային գործիչների՝ նոր կառավարության բոլոր հիմնարկությունների մեջ։ Հայերի մեջ գտան ընդունակ գործիչներ։ Փոքր ի շատե ռուսերեն խոսող երիտասարդը, փոքր ի շատե ռուսերեն գրել-կարդալ իմացողը ստացավ տեղ, պաշտոն և ծառայություն։ Դատարանները, պոլիցիաները, գանձատները, պոստերը և մաքսատները լցվեցան հայերով։ Ժամանակի սաստիկ պահանջը խորություն չէր գնում ոչ անձերի և ոչ ընդունակությունների մեջ, բավական էր, որ գործը գյուլա էին տանում»։ Այսպես շատերը հարստացան, շատերը բարձր աստիճանի հասան։

Բայց հետզհետե պահանջը պակսելով, կառավարության հիմնարկություններն ավելի կանոնավոր ձև ստանալով, ծառայել ցանկացողներից պահանջվեցավ մի որոշ չափով գիտություն։ Այժմ կարելի է հասկանալ, թե գավառական դպրոցներից դուրս բերած ողորմելի գիտության համեմատ ստացած պաշտոնն ինչ կլինի։ Համարյա բոլոր ավարտողները սկսում են գրագրությունից կամ ստոր պաշտոններից։ Սարսափելի բան է ամբողջ կյանքում, թեքված լինել գրասեղանի վրա, գրել և միշտ գրել։ Մարդը դառնում է կատարյալ մեքենա, երբ աշխատում է ձեռքը միայն, իսկ գլուխը մնում է անգործ։ Այստեղից հասկանալի է այն իդիոտության հա-

սած բժամտությունը մեր ծառայողների, որ իսկույն աչքի է զարկում, երբ նրանց հետ խոսում ես։ Մշտապես թեքված լինելով գրասեղանի վրա, նրա իրանը նույնպես ծալված դիրք է ստանում — այդ ներգործությունն անցնում է սրտի, հոգու և ամբողջ բնավորության վրա։ Նրա մեջ ուղիղ ոչինչ չէ մնում։ Մաստիկ դյուրաթեք է լինում նա. ամեն հոդմից շարժվում է և ամեն ճնշման ներքո խոնարհվում է։ Այդ հատկությունները նպաստում են նրա առաջադիմությանը, և քիչ է պատահում, որ ծերության հասակում դառնում է ստոլնաչալնիկի օգնական, կամ մի ավելի բարձր պաշտոն է ձեռք գցում։

Դատաստանական բարենորոգումներից հետո՝ ռուսերեն խոսել և գրել-կարդալ իմացող երիտասարդների համար բացվեցավ մի նոր ասպարեզ ևս, ավելի ազատ և ավելի շահավետ։ Թոլորը վարակվեցան փաստաբանության ախտով և սկսեցին սերտել օրենքների ստատուտներ։ Շատերն առանց ամենափոքր տեղեկության ունենալու իրավաբանությունից, ընդունում էին մեծ-մեծ գործեր։ Դրանք ավելի թարգմաններ էին իրանց հավատարմատարների կողմից, քան թե փաստաբաններ։ Ժողովուրդը չգիտեր դատարանի բնույն, ստիպված էր խոսող վարձել։ Բայց այս տեսակ անկիրթ, անուս փաստաբանների հաջողությունը մի քանի տարի միայն տևեց, երբ սկսեցին նրանցից պահանջել մի որոշ չափով գիտություն և վկայական։ Մեծ մասը զրկվեցավ իր պարապմունքից և ասպարեզը մնաց բարձր ուսում ստացածներին։

Գավառական դպրոցներում ավարտող երիտասարդներից ոչ բոլորը մտնում են արքունական ծառայությունների մեջ։ Ստոլ պաշտոնով, չնչին ռոճիկ ստանալով, դժվար է ամբողջ ընտանիք պահել։ Նրանք տեսնում են, որ վաղեմի ժամանակների շահերը չեն մնացել, և ինչպես ասում են՝ «խերը դուրս է եկել»։ Իսկ զինվորական ծառայության մեջ մտնողները բոլորովին աննշան թիվ են կազմում։ Շատերը սկսում են վաճառականություն անել, ձեռք են զարկում կապալների, կամ ազգային դպրոցներում վարժապետություն են անում։ Սակավ է և այսպիսիների թիվը, որ քահանա դառնային, կամ մտնեին մի վանքի մեջ վարդապետ լինելու համար։ Առհասարակ պետք է ասել, որ գավառական դպրոցների պուղները խիստ փոքր առաջադիմություն են գործում կյանքի մեջ։ Այժմ օրըստօրե սահմանափակվում է այն բախտավորների ասպարեզը, որոնք շատ փոքր գիտությամբ, կամ ոչինչ գիտության չունենալով, կարողանում էին առաջ գնալ։ Ես չեմ խոսում մի քա-

Նի անհատների մասին, որոնք ինքնակրթությամբ և բնական խելքով իրանց համար ճանապարհ են բաց անում առաջ գնալու։

Այժմ խոսենք գավառացի ուսանողների մասին, որոնք դիմում են Մոսկվա, Պետերբուրգ, արտասահման, և համալսարանական բարձր ուսում ստանալով, վերադառնում են դեպի իրանց հայրենիքը։

Գավառացի ուսանողները գլխավորապես ավարտում են իրավաբանական և բժշկական ֆակուլտետներում. երկու մասնագիտություններ, որոնց մասին այժմ մեծ պահանջ կա։ Վերադառնալով իրանց հայրենիքը, փոքրիկ քաղաքի տժգույն և տխուր կյանքը կարծես շուտով ձանձրացնում է նրանց. մի քանի ամիսներ որպես հյուր մնում են ծնողների մոտ, հետո գնում են Թիֆլիս, ուր կյանքն ավելի վայելուչ պայմանների մեջ է դրված, ուր ասպարեզը լայն է, ուր վերջապես կարող են մի հարուստ աղջկա հետ պսակվել։ Կարծես նրանք այնքան մեծ և խոշոր մարդիկ լինեին, որ փոքրիկ քաղաքներում չեն զետեղվում։ Խիստ սակավներին միայն պատահում է մնալ գավառներում, բայց նրանք ևս իրանց կնիկները բերում են Թիֆլիսից, հայրենիքում իրանց զույգը չեն գտնում։ Իրավաբանները կամ պարապում են փաստաբանությունով, կամ նահանգական դատարանի անդամի պաշտոն են վարում, կամ բաց են անում նոտարիուսի կանտորա և կամ հաշտարար դատավոր են դառնում որևիցե փոքրիկ քաղաքում։ Բժիշկները չեն պարապում ազատ պրակտիկայով, այլ արքունական պաշտոնի մեջ են վարում իրանց ծառայությունը։

Բայց ինչ որ ավելի աչքի է զարկում, այն է, որ այդ բարձր ուսում ստացած երիտասարդները գավառներում շուտով ենթարկվում են շրջանին, այն աստիճան փոխում են իրանց գույնը, որ չես կարող ճանաչել, թե մի ժամանակ դրանք ուսանողներ են եղել։ Ես մի քանիսներին միայն ճանաչում եմ, որոնք իսկապես չեն կորցրել իրանց արժանավորությունները, գործում են, աշխատում են, և ցույց են տալիս կենդանության նշույլներ։ Բայց մեծ մասն այն աստիճան վայրենացել և բթամտացել են, որ կարծես թե, ապրում են մի առանձնացած կղզու մեջ, որը բոլորովին կտրված էր ուսումնական աշխարհից։ Ոչինչ չեն կարդում, ոչ մի ժամանակակից հարցով չեն հետաքրքրվում, ուտում են, խմում են, քնում են, հաստատնում են, և պատահած ժամանակ արհամարհանքով ժպտում են, երբ խոսում ես նրանց հետ մի ազգային կամ հասարակական խնդրի վրա, կարծես, կամենալով ասել, թե «մենք ամեն բան փոր-

ձեցինք, այստեղ ոչինչ չէ կարելի շինել»։ Մեր դպրոցները, մեր եկեղեցին, մեր նոր լեզուն, մեր լրագրությունը, մեր նոր ծաղկող գրականությունն այն աստիճան բարկացնում են նրանց, որ մինչև անգամ ասել են տալիս, թե «խենթացել եք, ո՞ւմ համար եք աշխատում, ո՞ւմ համար եք գրում, եթե մեզ համար է, մենք ամեն բան գիտենք, իսկ եթե ամբոխի համար է, նա չէ կարդում»։ Անցնում են տարիներ, բարձր ուսում ստացած երիտասարդն ալևորվում է, պառավում է, բայց դարձյալ նա իրան երևակայում է նոր մտքի, նոր գաղափարների ներկայացուցիչ, չնայելով, որ նրա շուրջը ամեն ինչ փոխվել էր, իսկ ինքն անշարժ, անփոփոխ մնացել էր իր տեղում, առաջադիմության մի քայլ անգամ չանելով։

Կհաղորդեմ մի քանի գծեր առհասարակ գավառական երիտասարդության կյանքից։

Հասարակական կյանքը գավառական քաղաքներում, եթե չասեմ բոլորովին քարացած է, բայց և չէ արտահայտում այն կենդանությունը, որ կարելի է տեսնել փոքր ի շատե զարգացած հասարակության մեջ։ Գավառները դեռ չեն թոթափել իրանցից հին պարսկական փոշին, ասիականությունը դեռ տիրում է իր բոլոր այլանդակ ձևերի մեջ։ Ամեն մարդ իր տխրությունը և իր զվարճություններն անց է կացնում իր տան չորս պատերի մեջ։ Նա իր զգացմունքները չէ բաժանում հասարակության հետ։ Ամեն մարդ իր շահերի համար է աշխատում, իսկ հասարակաց շահերի վրա չէ մտածում։ Այստեղից ինքնըստինքյան առաջ է գալիս անհատների առանձնությունը, և մի ընդհանուր կապ չէ ամբողջացնում նրանց այն միության մեջ, որ կոչվում է հասարակական կյանք։ Այս բանին փոքր արգելք չէ լինում և այն, որ հասարակությունը կազմված է տարբեր ցեղերից, որոնք բոլորովին բաժանված են միմյանցից թե լեզվով, թե կրոնով, թե սովորություններով և թե իրանց շահերով։

Երիտասարդությունն անց է կացնում իր օրերը կատարյալ դատարկության մեջ, եթե նա իր գործերով զբաղված չէր, ուրիշ մի զվարճություն չկա, որ պարապ ժամանակում զբաղեցներ նրան։ Մի քանի քաղաքներում վերջին տարիներում միայն հայտնվեցան հասարակաց պարտեզներ, ուր ծառերը դեռ ստվեր չեն ձգում, և ճեմելիքները ծածկված են խոտերով։ Խիստ սակավ երեկոներ կարելի է տեսնել այնտեղ մի ծառայող ռուս զբոսնում է իր կնոջ հետ. տեղացի կնիկները տան մեջ փակված են, նրանց դուրս չեն թողնում։ Վաճառական և արհեստավոր մարդիկ չեք տեսնի այդ պար-

տեղներում, նրանք ամբողջ օրը զբաղված են իրանց գործերով, երեկոյան խանութները կկողպեն, կգնան կմտնեն իրանց տունը, դռները կփակեն։ Ժողովրդի այդ դասերն առողջության վրա չեն մտածում։ Պարտեզներում կարելի է տեսնել երբեմն մի քանի ծառայողներ, և մանր աստիճանավորներ միայն, և երբեմն դպրոցների վարժապետներին, երբ մանավանդ ածվում էր զինվորական մուզիկա։

Կաֆեներ և հյուրանոցներ կամ բոլորովին չկան գավառական քաղաքներում, կամ եթե պատահում են այսպիսիները, նրանք ծառայում են անցուդարձ անող օտարականների համար միայն, երբ ցանկանում էին բավական քանկ գնով մի փոքր ի շատե մաքուր տեղ գտնել օթևանելու։ Ասիական հին քարվանսարաները դեռ չեն կորցրել իրանց նշանակությունը. նրանք ծառայում են և որպես մթերանոց ապրանքների, և՛ որպես հյուրանոց նույն ապրանքները կրող անասունների և վաճառականների։ Վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ այն քաղաքներում, որ ավելի մոտ էին կովի դաշտին, որպես են՝ Երևանը, Ալեքսանդրապոլը, հայտնվեցան բազմաթիվ հյուրանոցներ, որոնք անմիջապես փակվեցան պատերազմը վերջանալուց հետո։ Կաֆեն և հյուրանոցը դեռ ժողովրդի պահանջ չեն դարձել գավառներում. բնիկներից ոչ ոք այնտեղ չէ մտնում, չէ ճաշում. ամեն մարդ ունի իր խոհանոցը. իսկ մի քանի ծառայող ռուսներով հյուրանոց պահպանել անկարելի է։ Պետք է ասած, որ նրանք էլ ենթարկվում են տեղային սովորություններին։ Եվ այսպես, հիշյալ հիմնարկությունները կամ գոյություն չունեն, կամ եթե գտնվում են, երիտասարդությունը նրանց մեջ չէ խրմբվում։ Միայն Ալեքսանդրապոլում կարելի է տեսնել մի տեսակ կաֆեներ տաճկական ձևով, ուր կարելի է նարգիլե ծխել և փոքրիկ ֆինջաններով դառն սուրճ խմել։ Այնտեղ հայտնվում է երբեմն մի թափառական երգիչ, ածում է թամբուրայի վրա և երգում է։ Դա տաճկական սրճանոց է, որ բերել էին իրանց հետ այդ քաղաքի դաղթական բնակիչները Թուրքիայի Հայաստանից։ Ուրիշ հիմնարկություններ ես չեմ ճանաչում, ուր կարելի լիներ հավաքվել, խոսակցել և ժամանակ անցկացնել, բացի գինետներից։ Այդ անբարոյականացնող հիմնարկությունները մեծ դեր են խաղում գավառացիների կյանքի մեջ։

Վերջին տարիներում միայն մի քանի քաղաքներում հիմնվեցան կլուբներ, որոնք միացնում են իրանց մեջ և հյուրանոց, ուր կարելի է կերակուր գտնել, եթե մի ժամ առաջ կպատվիրեիր պատ-

բաստել։ Կլուբները դարձյալ բնիկների պահանջներից առաջ չեն եկել, նրանց հիմնողները կամ ինիսիատիվ տվողները եղել են ռուս և օտարազգի ծառայողները, որոնց պետք էր մի կենտրոն հավաքվելու համար։ Բայց որովհետև միայն փոքրաթիվ ռուսներով կլուբները պահպանվել կարող չէին, այս պատճառով և հայ ծառայողներն իրանց ռուս մեծավորների «խաթրը չկոտրելու համար», հարկադրված անդամ են գրվել։ Թե այսպիս և թե այնպես, կլուբները, իրանց որոշյալ պայմանների պատճառով, հասարակաց հիմնաքարկուբյուն չէ կարելի համարել, որովհետև նրանք մատչելի չեն այս և այն վիճակի մեջ գտնվող երիտասարդներին, եթե անդամակցուբյուն ունենալու միջոցներ չունեին։ Այս բոլորից կարելի է եզրակացնել, թե ինչ տեսակ հասարակուբյուն է հավաքվում կլուբներում—միայն զինվորական և քաղաքական ծառայողներ, անգործ ազնվականներ, երբեմն վարժապետներ, բայց ոչ երբեք մի վաճառական կամ արհեստավոր մարդ։ Այնտեղ հավաքվում են միմիայն քուղթ և բիլիարդ խաղալու համար։ Թեև մի առանձին սենյակում ձևի համար գրասեղանի վրա ածած են մի քանի լրագրներ, բայց նրանց ոչ ոք չէ նայում։ Թղթախաղը որպես ժանտախտ տարածված է գավառներում, մանավանդ այն հասարակուբյան մեջ, որ համարվում է ընտրյալ, բարձր հասարակուբյուն։ Եվ այդ շատ բնական է, քանի որ ուրիշ զբաղմունք չկա. պետք է մի բանով սպանել ժամանակը։ Բայց մեծ մասը ընտրել է թղթախաղը որպես ապրուստի միջոց։ Կլուբներում շատ անգամ ամբողջ գիշերները լուսացնում են խաղալով։ Շատ անգամ խաղում են առանց գրպանում մի կոպեկ փող ունենալու—պարտքով միայն։ Ամսական 15 ռուբլի ստացողը մեկ գիշերվա մեջ տանել է տալիս մի քանի հարյուրներ։ Ո՞րտեղից պետք է վճարի։ Աստված գիտե։ Կլուբներում երբեմն լինում են պարահանդեսներ, ուր պարում են գլխավորապես ռուս կամ օտարազգի աստիճանավորների կանայքը, որոնք այնքան սակավ են թվով, որ հազիվ 10 կավալերին հասնում է մի դամա։

Գավառներում թատրոններ չկան. շատ-շատ ամեն տարի լինում է սիրողների մի կամ երկու ներկայացում բարեգործական նպատակով։ Տոմսակները զոռով են ծախվում։

Հասարակաց գրադարան կամ ընթերցարաններ չկան։ Ինձ պատահել է տեսնել մի քանի քաղաքներում բուն հայոց ընթերցարաններ, բայց երբեք չեմ տեսել, որ մի մարդ այնտեղ նստած կարդալիս լիներ։ Եվ ի՞նչպես կարելի է այդ ողորմելի հիմնարկուբյուններն ընթերցարաններ կոչել, ուր բացի մի քանի հնացած դրքերից,

բացի երկու-երեք լրագրից կարդալու համար ուրիշ բան չես գտնի։ Գրավաճառանոց ոչ մի քաղաքում չկա, եթե հարկավոր էր մի գիրք, պետք է բերել տալ Թիֆլիսից։

Կինը, որպես գյուղերում, այնպես էլ գավառական քաղաքներում բոլորովին ուրիշ դեր է խաղում երիտասարդների կյանքի մեջ։ Կարելի է կարճապես ասել, որ նրանք բացի իրանց մայրերից և քույրերից ուրիշ կնոջ երես չեն տեսնում։ Եղբայրը եղբոր կնոջ հետ խոսակցելու իրավունք չունի։ Այստեղից հասկանալի է, որ օտար ընտանիքների մեջ մտնելիս, երիտասարդները միայն կարող են տղամարդերի հետ տեսնվել։ Հարեմական դրությունը դեռ տիրում է ընտանիքի մեջ։ Թողյալ այդ, երիտասարդները մուտք չունեն օտար ընտանիքների մեջ, եթե մերձավոր ազգական չլիներ։ Գավառներում մի բարեկամի կամ ծանոթի տուն կարող ես մտնել այն ժամանակ միայն, երբ քեզ հյուր են կանչում։ Գործի համար կարելի է տեսնվել փողոցում կամ բազարում, ուր կարող ես ուզած մարդիդ միշտ գտնել։ Եթե մի երիտասարդ սկսում է հաճախել որեվիցե տուն, իսկույն աչքի է զարկում, իսկույն կասկածանքով են նայում՝ «այստեղ մի բան կաս, մտածում է ամեն մարդ։ Ջամուսնացած երիտասարդը վարում է կատարյալ ամուրի կյանք։ Գավառներում բացարձակ ախտեր չկան։ Խիստ սակավ է այն կնիկների թիվը, որ թեթև վարքի տեր լինեին։ Մնում են «համբերատար տները», ուր չես գտնի երկու կամ երեք կին ամբողջ քաղաքի համար։ Այստեղ մտնում է երիտասարդը մեծ երկյուղով, ամաչում է ոչ միայն ծնողներից, այլև մինչև անգամ իր մտերիմ ընկերներից։ Հասարակությունը խիստ սուր աչքով է նայում դեպի այս տեսակ մոլություններ։ Եթե պատահում է մի կին, որ փոքր ի շատե շեղված լիներ բարոյական ճանապարհից, անպատճառ նա եկած պիտի լիներ Թիֆլիսից։ Այսպիսիները լինում են ըստ մեծի մասին եկվոր ռուս ծառայողների աղախինները, որ չեն ցանկանում հետևել տերերին՝ նրանց վերադարձի ժամանակ։ Տեղային հայ կնիկները չեն մտնում հասարակաց տները. եթե պատահում է մեկին մեղանչել, այդ անում է նա ծածկաբար։ Իսկ մահմեդական կնիկներին միշտ սպասում է մահ իրանց հավատակիցների կողմից, երբ ոչ մահմեդականների հետ հարաբերություն են ունենում։ Կրոնական ֆանատիզմը մեծ վիհ է ձգել հավորդակցությունների մեջ։

Վերջացնում եմ գավառացիների մասին, ձգելով մի թեթև հայացք նրանց հասարակական, ազգային և կրոնական հատկանիշների վրա։

Առհասարակ պետք է ասել, որ գավառներում դեռ նոր է սկսվել նոր սերունդի մաքառումը հնի դեմ։ Հաջողությունը նորերի կողմն է. հները հետզհետե կորցնում են իրանց բռնած դիրքերը, որոնց վրա դարերով ամրացած, իշխում էին։ Ժամանակը, կյանքի այժմյան պայմանները, որոնց մեջ անընդունակ են հները, և մտավոր զարգացումը նպաստում են նոր սերնդի հաղթությանը։ Ոչ միայն ապագան դրանց է պատկանում, այլև ձեռք են ձգել և ներկայի մի մասը։ Առաջ որդին հորից խորհուրդներ էր հարցնում, այժմ հայրը ստիպված է որդու հետ մասլահաթներ անել։ Գործը, իրավ է, դանդաղ է ընթանում, բայց հաջողությունը մեծ ապագա է խոստանում։

Երիտասարդությունն այժմ աշխատում է իր տիրապետության ներքո առնել հասարակաց առաջադիմության երկու գլխավոր գործիչները՝ ընտանիքը և դպրոցը։ Ընտանիքի մեջ նա ջանք է անում վերանորոգություններ մտցնել, իսկ դպրոցի հոգաբարձությունն իր ձեռքն առնել։ Այդ անում է նա գուցե առանց նախատեսության, առանց սկզբից խորհած նպատակների, և միայն դրդվելով իր հասակին հատուկ զգացմունքներից, բայց հետևանքը բարի է։ Ընտանիքի վերանորոգությունը սկսվում է կնոջ դրությունից. նոր պսակված երիտասարդն աշխատում է իր ամուսնին փոքր ի շատե ազատ վիճակի մեջ դնել. փոխում է նրա հագուստի հին ձևերը, ցանկանում է, որ նրա հետ վարվեին որպես մարդու հետ, և պատահած ժամանակ նրան չէ թաքցնում իր բարեկամներից։ Օրինակները սակավ են, բայց այդ սակավ օրինակները բազմաթիվ հետևողներ են գտնում։ Նույնը անում է երիտասարդը և իր քույրերի վերաբերությամբ։ Երբեմն պատահում են ընդդիմադրություններ. ալևոր ծնողները հակառակում են, և երիտասարդը ստիպված է լինում թողնել իր հայրենական տունը և առանձին բնակվել։

Հասարակական գործերում բացի դպրոցից, երիտասարդությունը մի ուրիշ հող չունի։ Բայց պետք է նկատել, որպես ընտանիքի մեջ դեռևս իր հեղինակությունը չի կորցրել ծերունի հայրը, այնպես էլ հասարակական գործերում դեռևս մեծ նշանակություն ունի աղան և աղայությունը։ Դպրոցների հոգաբարձությունից խիստ դժվար է լինում հեռացնել այդ հիմար, տգետ և բոլորովին անգրագետ փառասերներին, որոնք բացի վնասից և խռովություններից, մի այլ օգուտ չեն բերում։ Բայց երիտասարդությունը փոքր առ փոքր հաղթող է հանդիսանում և իր ձեռքն է ձգում դպրոցները։

Խոսելով դպրոցների հոգաբարձության վրա, ես չեմ կարող չհիշել վարժապետներին, որոնք ներկայացնում են գավառական քաղաքների մտավոր զորության գլխավոր մասը։ Ամեն տեղ դպրոցների սաստիկ բազմացնելու և նոր դասատներ բացվելու համեմատ, պատրաստի վարժապետների թիվը շատ փոքր լինելով, յուրաքանչյուր բախտախնդիր, յուրաքանչյուր անուս տիրացուն մուտք է գտնում գավառական դպրոցներում։ Թիֆլիսում անգործ թափառող անջողակները վազում են դեպի գավառները և իրանց ձեռքն են առնում կրթության գործը։ Հայտնի է, որ մարդիկ, որոնք իրանց գիտությամբ չէին կարող ասպարեզ բաց անել, միշտ դիմում են խարդախ և անազնիվ միջոցների։ Դրանով կարելի է բացատրել, թե ինչու ինտրիգան և խռովությունները միշտ անպակաս են լինում գավառական դպրոցներից։ Այստեղից հասկանալի է, թե ինչ բարոյական ազդեցություն կարող էր ունենալ վարժապետն իր աշակերտների վրա, որոնք ամեն օր լսում են նրա մասին շատ գայթակղական խոսքեր, նկատում են նրա մոլի վարքը, ականատես են լինում նրա կռիվներին իր ընկերների հետ։ Վարժապետի բարոյականությունն ազդում է նույնիսկ ժողովրդի վրա, որ քննում է նրա յուրաքանչյուր քայլը, և որի վարմունքը չէր կարող անհայտ մնալ փոքրիկ քաղաքում, ուր բամբասանքը հասարակաց խոսակցության գլխավոր նյութն է կազմում։

Մի քանի խոսք գավառների մտավորապես զարգացած երիտասարդության մասին, որոնք ներկայացնում են, եթե այսպես կարելի է կոչել, գավառների ինտելիգենցիան։ Բարձր ուսում ստացած համալսարանական երիտասարդությունը, որպես նկատեցի այս գլխի մեջ, իրան հեռու է պահում ազգային գործերից, նա ապրում է իր համար, հասարակությունը չէ հետաքրքրում նրան։ Նրանք անպատվություն են համարում թղթակցել որևիցե հայոց լրագրի (պետք է խոստովանել, որ շնորհք էլ չունեն), աշխատակցել մի ամսագրի, կամ հրատարակել մի փոքրիկ գրքույկ։ Ուսումը նրանց ոչինչ չէ արդյունաբերում։ Բացառությունները խիստ մասնավոր են։ Փոքր ի շատե կենդանություն երևում է ոչ մի բարձր դպրոցում շրջարտած, ինքնուս երիտասարդների մեջ. դրանք են, որ ամեն բանի վրա գրում են, ամեն բանի վրա դատում են, շատ անգամ ծուռ և սխալ կերպով, բայց գրում են, քանի որ ուրիշ լավը չկա։ Դրանք գործում են, որքան կարող է գործել մի մարդ, որ բնական խելք և սաստիկ եռանդ ունի, բայց մի նշանավոր բան արդյունաբերելու համար պակասում է նրան հիմնավոր գիտությունը։

Կրոնական զգացմունք ավելի վատ է պահված գավառներում։ Երիտասարդությունը թեև չէ համակրում եկեղեցականին, բայց սիրում է իր եկեղեցին։ Սնահավատությունը երիտասարդների մեջ կորցրել է իր նշանակությունը, նախապաշարմունքները չեն կաշկանդում նրան։ Շատերի մեջ հայտնվում է բողոք դեպի եկեղեցական այս և այն ծիսապաշտությունը։ Բայց դարձյալ նրանք հաճախում են հանդեսներին, որովհետև կարծում են, թե այդ բոլորը դեռևս հարկավոր են անզարգացած ժողովուրդն իր եկեղեցու հետ կապված և հայության մեջ հաստատուն պահելու համար։ Ազգայնության գաղափարն ավելի զարգացած է գավառական երիտասարդության մեջ. նա հասնում է մինչև ազգասիրական մոլեռանդության։ Բացի մի քանի սարսեռ ծառայողներից, բացի մի քանի մանր աստիճանավորներից, չեք գտնի մեկին, որ ամոթ համարեր հայերեն խոսելը։ Որպես հայ հասարակության մեջ, այնպես էլ ընտանիքներում տիրապետում է մայրենի լեզուն։ Բայց չեմ կարող չհիշել հայերի այն ընդհանուր մոլությունը, որ սովորական է դարձել և մեր գավառներում. տեսնում ես մի տեղ, մի ժողովի մեջ, մի խմբի մեջ տասն հայ, իսկ նրանց թվում մի օտարազգի, անպատճառ տասը հոգի հայերը կսկսեն մեկ օտարականի լեզվով խոսել, ինչ ազգից և լիներ նա։ Չգիտեմ ե՞րբ պետք է հայն ազգային հպարտություն ունենա։

Գ

ՈՒՍԱՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Իսկապես մենք չունենք այն տարրը, որ հասկացվում է բառերովս **ուսանող** կամ **ուսանողություն**։ Ասելով գերմանական ուսանողություն, ֆրանսիական ուսանողություն, մենք իսկույն ըմբռնում ենք մի միտք բոլորովին որոշ և կազմակերպված տիպերի մասին, որ հայտնի են իրանց գաղափարներով, ձգտումներով և հատկանիշ առանձնահատկություններով։ Բայց հայ ուսանող ասելով, մենք հասկանում ենք միայն բարձր ուսում ստացած երիտասարդ, որ սովորել էր այս և այն համալսարանում—և ավելի ոչինչ։ Այդ տարրը մեզանում մի որոշ ձև չէ ստացել. նա դեռ իր քաղաքական դրության մեջն է գտնվում։ Եվ շատ բնական է, որովհետև մի ազգ, որ սեպհական համալսարան չունի, և չի էլ կարող ունենալ իր հետագա

ուսանողությունը։ Փիտությունն, արդարև համազգային սեպհականություն է, բայց ոգին, որ համալսարանի մթնոլորտը ներշնչում է ուսանողի մեջ և տալիս է նրա բնավորության մի որոշ գույն— դա առանձնական նշանակություն ունի։ Այդ պատճառով շատ դժվարին է ներկայացնել հայ ուսանողությունը որպես մի կազմակերպված մարմին և նկարել նրա պատկերն իր ամբողջական ձևի մեջ, քանի որ նրանք ուսանում են զանազան պետությունների զանազան համալսարաններում։ Այսուամենայնիվ, ես կաշխատեմ իմ ընթերցողներին մոտավորապես ծանոթացնել այդ հասարակության հետ, որ համարվում է նոր սերնդի ներկայացուցիչը[1]։

Հայ ուսանողները սովորում են մեծ մասամբ Ռուսաստանի համալսարաններում և ընտրում են գլխավորապես Մ. Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանները, իսկ փոքր թվով դիմում են արտասահման՝ Գերմանիա, Ֆրանսիա և Ջվիցերիա։ Սկսենք առաջ Ռուսաստանի ուսանողների մասին։

Ես ի նկատի ունեմ երկու մայրաքաղաքների՝ այսինքն Մ. Պետերբուրգի և Մոսկվայի ուսանողներին։ Հայ ընտանիքի մեջ սեղմված և փոքրիկ գավառական քաղաքներում դեռ աչքերը չբացված երիտասարդը հանկարծ ընկնում է մեծ աշխարհի ծովի մեջ։ Ընկերները վարձում են նրա համար մի կահավորված սենյակ, և նա սկզբում, կարծես, վախենում է դրսի լույսից և պատվում է իր հարազգիների նեղ շրջանի մեջ։ Բավական պատրաստված չլինելով կյանքի համար, նա իրան միշտ հեռու է պահում հասարակությունից, ռուս կամ օտարազգի ուսանողների հետ հարաբերություն չէ կազմում, նրանց ընտանիքների մեջ չէ մտնում, և հայ ընտանիքներից հազիվ է պատահում, որ իրանց մոտ ուսանողներ ընդունեին, եթե տանը հասած աղջիկ չունեին, որին դժվար էր մայրաքաղաքում «խարշել»։ Երբեմն նա տեսնվում է հայ հասարակության հետ, երբ ազգասիրությունից դրդված, կիրակի կամ տոն օրերում հայոց եկեղեցի է գնում։ Եվ այսպես բնականաբար կազմվում է հայ ուսանողների նեղ և սահմանափակ շրջանը, որ միշտ առանձնացած և անխառն է մնում օտար տարրերից։ Ոմանք մեր ազգասերներից խիստ գոհացուցիչ են գտնում այդ դրությունը, համոզվելով, թե այսպիսով հայ ուսանողները պահպանում են իրանց

[1] Ես իմ տեղեկություններն առհասարակ ուսանողական կյանքի մասին քաղել եմ գանազան դրքերից, իսկ ինչ որ վերաբերում է հայ ուսանողներին, այդ վերաբերել եմ իմ բարեկամներից։

հայութիւնը և չեն օտարանում։ Բայց իմ կարծիքով, կյանքի մեջ կուլ չգնալու համար պետք է մտնել նույնիսկ կյանքի մեջ, որպես ծովի մեջ լինելու համար պետք է անպատճառ ջրի մեջ մրտնել և լողալ սովորել...

Այսպես առանձնացած կյանք վարելով, իրանց նեղ հայկական շրջանից չդուրս գալով, օտարազգի ուսանողներից և օտարազգի ընտանիքներից միշտ իրանց հեռու պահելով, հայ ուսանողները, թեև պահպանում են իրանց ցեղական հատկութիւնները, բայց միևնույն ժամանակ չեն փոխում իրանց բնավորութիւնը և իրանց վարքը, որ շատ կարոտ էին քաղաքակրթվելու։ Բացի դրանից, նրանք մտավորապես ևս չեն զարգանում։ Ուսանողն ավելի շատ բան սովորում է դրսի աշխարհից, քան թե համալսարանի ամբիոնից։ Կյանքը—ահա՛ մարդու գլխավոր վարժապետը։ Ով որ իրեն հեռու է պահում կյանքից, մնում է անկիրթ, անտաշ և վայրենի։ Դրանով կարելի է բացատրել հայ ուսանողների նեղ աշխարհահայեցողութիւնը, որ միշտ սահմանափակված է մնում նախասահմանումների շրջանակի մեջ։

Ես հիշեցի հայկական ուսանողների, հայկական շրջան և այլն, բայց իսկապես այդ էլ չկա։ Ի՞նչ շրջան կարող է կազմվել հայ ուսանողների մեջ, քանի որ նրանց մեջ ոչինչ կապ չկա, քանի որ ոչ մի ընդհանուր միտք և ոչ մի ընդհանուր նպատակ չէ միացնում նրանց։ Նրանք միայն հայրենակցական և ազգակցական կապեր ունեն, և ավելի ոչինչ։ Հայ ուսանողը երբեմն հայ ընկերի մոտ է գնում, նրա հետ տեսնվում է, նրա հետ ժամանակ է անցկացնում, որովհետև մի ուրիշին չէ ճանաչում։ Իսկ նա իր ներքին կյանքի մեջ ևս բոլորովին առանձնացած է ապրում, առանց սերտ հարաբերութիւններ ունենալու նույնիսկ իր ազգայինների հետ։ Կարճ ասեմ, նա իր բավականութիւնները, իր զվարճութիւնները և իր զարգացումը գտնում է իր սենյակի չորս պատերի մեջ։ Բացառութիւնները խիստ աննշան են։

Կբերեմ մի քանի պատկերներ նրանց կյանքից։

Մտնում ես ուսանողի սենյակը, այնտեղ կտեսնես մի քանի աթոռներ, մահճակալ և գրասեղան, որի վրա մի թղթի կտոր անգամ չես գտնի գրելու համար։ Թանաքամանի մեջ մի անգամ ածված մելանը վաղուց է ցամաքել։ Գրքեր չես տեսնի։ Գրասեղանի վրա դրած են մի քանի վիմագրութեամբ տպված տետրակներ միայն՝ դրանք պրոֆեսորի լեկցիաների տետրակներն են, որոնց վրա մի թիզ փոշի է նստած, երևի ուսանողի ձեռքը վաղուց չէ դիպել

նրանց։ Սենյակի մեջ աչքի են ընկնում կանացի պաճուճանքներ, ժապավենի կտորներ, երկայն գուլպաներ և այլն։ Դրանք ի՞նչ են շինում այնտեղ։ Ուսանողը սիրուհու հետ է ապրում։

Եթե տեսնենք, թե ինչ տեսակ կնիկներ դեր են խաղում ուսանողների կյանքի մեջ, հասկանալի կլինի նրանց քաղաքակրթության աստիճանը։ Մոսկվայում և Պետերբուրգում կա մի ամբողջ դաս աղչիկների, որոնք կոչվում են սպիտակեղենների կարուհիք (белошвейка). այդ ողորմելի արարածները մոդնի մագազինների գործավորներ են, որոնք երբ ձանձրանում են աշխատությունից, մտնում են ուսանողի մենարանը զվարճանալու համար։ Մի կեղծ սեր կապում է ուսանողին այդ աղչիկների հետ, որոնք այնքան անգամ խաբված են երիտասարդներից, որ իրանք էլ այլևս չեն հավատում սերին։ Ուսանողն անդադար փոխում է նրանց, որպես հնացած կոշիկներ։ Բայց լինում են այնպիսի միամիտներ, որոնք խաբվելով երիտասարդի խոստումնքներից, իսկապես սիրում են նրան։ Երիտասարդը տարիներով ապրում է նրա հետ, ավարտում է իր ուսումը և վերադառնում է իր հայրենիքը, իսկ սիրուհուն, որպես մի լաթի կտոր, ձգում է մի կողմ, առանց խղճահարվելու և առանց բնավ մտածելու, թե ում խնամակալությանն է թողնում իր սիրո պտուղները... Գնացող ընկերոջ սիրուհին մնում է մնացողին, և այսպես նա անցնում է ձեռքից ձեռք և երբեք չէ դուրս գալիս ուսանողների աշխարհից։

Իմ վերևի նկարագրությունը դեռ բավական ազնիվ ձևն է ուսանողների հարաբերության կանանց հետ։ Բայց լինում են և այնպիսի փշացած բնավորություններ, որ հաճախում են և հասարակաց տները։ Մեկն այս ասպարեզի հերոսներից ինձ պատմում էր, թե ինքն ամբողջ օրը քնում էր, իսկ գիշերը սկսում էր ամենաբարձր հասարակաց տնից, ուր կարելի էր գտնել պիանո, լավ նախաճաշիկ և նուրբ ըմպելիքներ, և առավոտյան վերջացնում էր այն ցած և կեղտոտ տներով, ուր բավական էր հինգ կոպեկ միայն ծախսել։— Ինչո՞ւ,—հարցրի ես։—Այնպես, այդ զվարճություն էր պատճառում ինձ,— պատասխանեց նա։ Բայց պատահում են և այնպիսի անազնիվներ, որ գտնում են մի պառավ, բայց հարուստ այրի կին և ապրում են նրա հետ և նրա հաշվով։

Ուրիշ զվարճություններից, որ կարող էին կրթողական ազդեցություն ունենալ, զուրկ են հայ ուսանողները։ Թատրոն հազիվ են գնում, թատրոնով հետաքրքրվում են այն ժամանակ միայն, երբ պետք էր տեսնել մի սիրուն պարուհի, կամ լսել մի հռչակավոր

երգչուհու։ Կաֆեներում ժամանակ չեն անցկացնում, այլ իրանց հայկական սովորությամբ հավաքվում են մի ընկերոջ սենյակը, «տնավարին» կերպով արաղ են խմում, ծխում են և թուղթ են խաղում.—արաղը և թղթախաղը, ահա գլխավոր պարապմունքները, որ զբաղեցնում են ուսանողներին։ Այսպիսի շրջաններում, որոնք խաղալու փող չունեն, նստում են, կամ ապուր կերպով նայում են խաղացողների գործողությանը, և կամ մի կողմ քաշված, խոսում են, վիճում են բոլորովին իրանց անծանոթ, բոլորովին չսովորած և չկարդացած առարկաների վրա։ Հյուրանոց մտնում են միայն ճաշելու համար և անմիջապես դուրս են գալիս։ Ուսանողը երբեմն ամբողջ ամիսներ ուտում է մի հյուրանոցում պարտքով. երբ պարտքը շատացավ և անկարող էր վճարել, փոխում է հյուրանոցը, գնում է մի նորը, ուր նրան չեն ճանաչում և նոր կրեդիտ է բաց անում։

Հայ ուսանողներն առհասարակ փոքր են սովորում, ոչ թե այն պատճառով, որ նրանցից շատ ժամանակ է խլում արաղը, թղթախաղը և սիրուհին, ոչ, այլ ընդհանրապես ծույլ են։ Եվ ամենամեծ է այն ուսանողների թիվը, որոնք ճշտությամբ հաճախում են դասախոսություններ լսելու. ոմանք գնում են շաբաթը մի անգամ, ոմանք ամիսը մի անգամ, իսկ ոմանք ամենևին չեն գնում։ Մեծ մասը, համարյա 10-ից 8-ը լսում են դասախոսություններ իրավաբանական և բժշկական ֆակուլտետներում։ Մի բան, որ ավելի հատկանիշ է Ռուսաստանի մեր ուսանողներին, այն է, որ նրանց չէ հրապուրում գիտության սերը, այլ ընտրում են այս և այն մասնագիտությունը որպես միջոց կյանքի մեջ ասպարեզ բացելու և ապագայում իրանց համար որևիցե դրություն հաստատելու։ Ավելի պարզ ասած, նրանք սովորում են դիպլոմի համար։ Բայց դիպլոմ ստանալու համար մեծ գիտություն, մեծ աշխատություն պետք չէ, բավական էր տարին մի քանի անգամ դասախոսություններ լսել, հետո սերտել մի քանի տետրակներ և քննություն տալ։ Որպես համբակի սերտողությամբ լցնում է իր գլխում ուսանողը գիտության պաշարն այդ ողորմելի վիմագրական տետրակներից, այսպես էլ շուտով դուրս է թռչում նրա գլխից, երբ թողնում է համալսարանը։ Բայց դիպլոմն իր զորությունը չէ կորցնում։ Իսկ խոսքը բժիշկների մասին չէ, որոնցից պահանջվում է մի որոշ չափով գործնական աշխատություններ, բայց մնացյալ մասնագիտությունների մեջ գլխավորապես գործ է կատարում հիշողությունը, աշակերտի սերտողությունը, և ոչ թե գիտության յուրացնելը, կամ ուրիշ խոսքով՝ մար-

սելը։ Եվ ի՞նչով կարող էր հարստացնել ուսանողն իր մտավոր պաշարը, երբ նա իր մասնագիտությանը վերաբերյալ ոչ մի ուրիշ գիրք չէ կարդում, այլևս չեմ խոսում այն զանցառության վրա, որ նա հետաքրքրվեր զանազան գիտություններով, որոնք իր մասնագիտության հետ կապ չունեին։

Ռուսաստանի հայ ուսանողը ոչինչով չէ զանազանվում հայ վաճառականից։ Երևակայեցեք ձեզ մի թիֆլիսեցի, որ գնացել էր Մոսկվա. նա առնում է այն ապրանքները միայն, ինչ որ պետք էր իր կրպակի համար, ինչ որ ինքը ծախում էր, ինչ որ իր վաճառականության մասնաբաժինն էր կազմում. բայց ուրիշ ինչ էր վաճառվում առևտրական հրապարակի վրա, որոնցից դարձյալ կարելի էր շահվել,— նրանցով չէ հետաքրքրվում, նույն կերպով վարվում է և հայ ուսանողը. նա բացի իր մասնագիտությունից ուրիշ գիտություններով չէ հետաքրքրվում։ Այս է պատճառը, որ մեր ուսանողներից չեն հայտնվում զորավոր տաղանդներ կամ փոքր ի շատե գիտնականներ։ Հայ ուսանողի ամբողջ գործունեությունը պայմանավորվում է մի հաշիվի մեջ, սկզբից նախագծած մի վաճառականական հաշիվի մեջ, որ հասցնում է նպատակին։ Այս հաշիվից դուրս նա ուրիշ բան չէ ճանաչում։ Գիտությանը վերաբերվում է նա բոլորովին նրա պաշտոնական կողմից։ Նա հաշվել է, թե բժիշկ, փաստաբան, նոտար լինելու համար պետք է այսչափ գիտություն, որ կարողանա դիպլոմ ստանալ, և այն չափից չէ անց կենում։

Ուսանող մանկտին ամեն ազգի մեջ և ամեն ժամանակներում եղել է ազատության սիրահար, բռնության թշնամի, առաջադիմության առաջնորդ և լուսավորության առաքյալ։ Նա պաշտպան է հանդիսացել նեղյալին և պահանջել է արդարություն մարդկանց հարաբերությունների մեջ։ Նա ցանկացել է ընդհանուր մարդկային բարին, ցանկացել է, որ մարդն ապրեր հանգիստ, գոհ և հարստահարիչ ձեռքը չհափշտակեր նրա օրական հացը։ Բայց հայ ուսանողը չափազանց եսական է. նա երբեք չէ հափշտակվում ընդհանուր մարդասիրական բարձր գաղափարներով։ Նա մինչև անգամ չէ մտածում իր ազգի վրա, այլ մտածում է իր անձի մասին միայն։ Իդեալ կոչված բանը նրա համար չկա. նա սաստիկ նյութապաշտ է։

Եվ ո՞րտեղից կարող էր նա հրապուրվել բարձր գաղափարներով, երբ գրքեր չէ կարդացել, ծանոթ է մի քանի հեղինակների անուններին հետ, առանց նրանց գործերի հետ ծանոթ լինելու. լրագրության չէ հետևում. և ամենևին չէ հետաքրքրվում, թե ինչ է կա-

տարվում իր շուրջը, կամ ի՞նչ են անում զանազան ազգեր զանազան երկրներում։ Այս է պատճառը, որ հայ ուսանողի աշխարհայեցողության շրջանակը մնում է խիստ նեղ, և նա այնքան փոքր ծանոթ է ժողովուրդների պատմության և նրանց կենցաղավարության պայմանների հետ, որ իր վարդացումով շատ չէ զանազանվում մի հասարակ գիմնազիստից։ Բայց գտնվում են և այնպիսի խենթեր, որոնք գրավվում են բուն ռուս ուսանողների մեջ բորբոքվող մի քանի նոր գաղափարներով, որպես անմիտ թիթեռը հափշտակվում է ճրագի լույսով և այրում է իր թևիկները...

Ավելորդ չէր լինի համեմատության համար հիշել մի քանի գծեր ռուս ուսանողների մասին։

Ռուս ուսանողները, իրավ է, նույնպես ծուլ են, ընտրած մասնագիտությանը չեն հետևում, վատ են սովորում, բայց նրանք ունեն մի առավելություն, որ զուրկ են հայ ուսանողները։ Ռուս ուսանողները շատ կարդում են, եթե ոչ գիտնական գրքեր, գոնե տենդենցիայով գրված րոմաններ, կրիտիկաներ, փիլիսոփայություններ, հետևում են ժամանակակից մտքերի և շարժումների, և հետաքրքրվում են ժողովրդի ստոր դասի վիճակով, զբաղվում են քաղաքական մտքերով։ Կա և մի ուրիշ բան, որ ռուս ուսանողների գլխավոր հատկանիշն է, և որով որոշվում են նրանք եվրոպական բոլոր ուսանողներից, այն է, որ ռուս ուսանողը խիստ բարձր կարծիք ունի կնոջ վրա։ Նա կնոջ մեջ տեսնում է մի զորություն, որ մեծ դեր պիտի խաղա ժողովուրդների քաղաքակրթության մեջ, և ամեն ջանքով աշխատում է մշակել, զարգացնել այդ զորությունը։ Այս պատճառով նա ոչ միայն մեծ նշանակություն է տալիս կնոջ դաստիարակությանը, այլ ինքն ընտանիքների մեջ մտնելով, միսիոնարի եռանդով աշխատում է առանձնապես ազդել, ներգործել կնոջ վրա, զարգացնել նրա միտքը և ծանոթացնել ժամանակի ոգու հետ։ Այս է պատճառը, որ նա իրան հեռու չէ պահում ընտանիքներից։ Տեսնում եք մի ուսանող որևիցե ընտանիքի մեջ ծանոթանում է մի մանկահասակ աղջկա հետ, հենց որ նկատեց նրա մեջ ընդունակության մի նշույլ, իսկույն կսկսե ինքնակոչ վարժապետի դեր կատարել։ Նա այնքան շատ կարդացել է, այնքան բազմակողմանի հմտություններ ունի, որ աղջիկը երբեք նրանից չէ ձանձրանա։ Ազդեցությունը սկսվում է անզգալի կերպով։ Ուսանողը վաղ կամ ուշ և այն գրատունը, կբերե նրա համար նոր գրքեր. ցույց կտա, թե այս ինչ ամսագրի մեջ մի հետաքրքիր հոդված է տպված, որ արժեր կարդալ, շատ անգամ ինքը կնստե, կկարդա նրա հա-

մար, կբացատրեն, կվիճեն նրա հետ, վերջապես այնքան կաշխատեն, մինչև աղջիկա միտքը բոլորովին կդարձնեն ուսումնասիրության վրա։ Եթե աղջիկը միջոցներ չուներ, նա իր վերջին կոպեկները կզոհեր նրա համար զանազան ուսումնական պարագաներ գնելով, ի չխնայի ոչ ժամանակ և ոչ աշխատություն նրան զարգացնելու համար։ Պատահում է, որ աղջիկը բոլորովին անբախտանում է ուսանողի ազդեցության տակ, այսուամենայնիվ, նրանից պատրաստվում է մի էակ, որ հակառակ է ընթանում հասարակական նախապաշարմունքների դեմ։ Ուսանողների ազդեցությունն է պատճառը, որ այժմ բազմաթիվ ռուս աղջիկներ եվրոպական զանազան ուսումնական հիմնարկությունների մեջ դասախոսություններ են լսում։

Բայց հայ ուսանողը կնոջ վրա բոլորովին ասիական կետից է նայում։ Ապրելով իր հայրենակիցների նեղ շրջանում, և ուրիշ խմբերի մեջ չմտնելով, նա գոնե չէ ստանում այն արտաքին փայլը, որ տալիս է մարդուն մեծ աշխարհի քաղաքակրթությունը։ Դրսից նա երևում է իր կոպտությամբ և անշնորհք դանդաղկոտությամբ, իսկ ներսից՝ խորին դատարկությամբ։ Նա այնքան սակավ է կարդացել, այնքան սակավ ծանոթ է, թե ինչ է կատարվում իր շուրջը, որ անընդունակ է վարել որևիցե լուրջ և բաղադրյալ վիճաբանություն։ Մի քանի սերտած և «մոդնի» ֆրազներից հետո նրա գիտության պաշարը սպառվում է և սկսում է դուրս տալ ծիծաղելի հիմարություններ։

Ես նկարագրեցի Ռուսաստանի հայ ուսանողներին, բոլորովին նրանց մեջին կողմերը վեր առնելով, բայց անարդարություն կլիներ ասել, թե բոլորը ծույլ են, բոլորը ոչինչ չեն սովորում, բոլորն անբարոյական են և այլն։ Կան և ճշմարիտ աշխատասեր ուսանողներ, բայց դժբախտաբար այսպիսիների թիվն այնքան փոքր է, որ պետք է բացառություն համարել։ Դժվար է ճշտությամբ որոշել, թե մեր ժողովրդի ո՞ր դասակարգին են պատկանում լավ ուսանողները։ Միայն մի երևույթ, որ ճշմարիտ է, այն է, որ գյուղացիները գերազանցում են գավառացիներից, գավառացիները թիֆլիսեցիներից, իսկ աղքատները՝ հարուստներից։ Ինչի՞ց է այդ, արդյոք ընտանեկան կրթությունի՞ց, թե առանձին ֆիզիոլոգիական պատճառներից, ես պարզապես բացատրել չեմ կարող։ Բայց հասկանալի են պատճառները, թե ինչու աղքատ երիտասարդներն ավելի հաջողակ ուսանողներ են լինում, քան թե հարուստները։ Իսկ այն, որ գյուղացի և գավառացի երիտասարդները միշտ գերազան-

ցում են բուն Թիֆլիսեցիներից, ես այդ երևույթին մի ուրիշ պատճառ չեմ գտնում, բացի նրանից, որ գավառացիների և գյուղացիների ընտանեկան կրթությունն ավելի լավ պայմաններով է կատարվում. նրանք երեխայությունից սովորում են աշխատության, և որ ամենագլխավորն է, նրանք ունեն բարոյական հաստատուն հիմք, մինչդեռ Թիֆլիսեցի երիտասարդը հենց ընտանիքից փչացած է դուրս գալիս թե բարոյապես և թե մտավորապես։ Միևնույն կերպով կարելի է բացատրել և այն երևույթը, որ Թիֆլիսեցի երիտասարդը Ռուսաստանի դպրոցներում բոլորովին օտարանում է, որովհետև հենց սկզբից անունով միայն հայ էր, չէր սովորել իր մայրենի լեզուն, չէր կրում իր ազգի ցեղական առանձնություններ։ Բայց մի երևանցի, մի ղարաբաղցի և մի լոռեցի երիտասարդ, որ կըրթվել էր բուն հայկական ընտանիքում, որ գիտեր իր մայրենի լեզուն, երբեք չէ օտարանում, այլ ընդհակառակն, ավելի հաստատվում է իր ազգայնության մեջ։

Գավառացի և գյուղացի ուսանողները լինում են կամ բոլորովին աղքատ, կամ փոքր միջոցներ ունեցող երիտասարդներ։ Անկարելի է նկարագրել, թե որպիսի դժվարությունների դեմ պատերազմելով, աղքատ ուսանողը կարողանում է ավարտել իր ուսումը։ Նրա տոկունությունը, եռանդը, անձնազոհությունը հասնում է կատարյալ նահատակության։ Երևակայեցեք կյանքի բոլոր դժուարությունը Մոսկվայի կամ Պետերբուրգի նման քաղաքներում, ուր փոքր ի շատե համեստ ապրուստը պահանջում է ամսական գոնե 30 ռուբլի, իսկ նա կառավարվում է 10 կամ 15 ռուբլիով։ Եվ այդ ողորմելի գումարը նա պիտի ձեռք բերե ահագին դժվարություններով։ Ես ճանաչում եմ մի քանի խեղճ ուսանողներ, որոնք ամառվա արձակուրդների ժամանակ գալիս էին Թիֆլիս դասեր գտնելու, կամ պարապելու մի հարստի երեխաների հետ ամառանոցում, և այսպիսով փող էին վաստակում, և կրկին վերադառնում էին Մոսկվա կամ Պետերբուրգ շարունակելու իրանց ուսումը։ Եվ այսպիսիները լինում են ամենալավ ավարտողներն իրանց մասնագիտությունից։

Ցույց տալով հայ ուսանողների թույլ և զորավոր կողմերը, ավելորդ չէր լինի ասել մի քանի խոսք ևս նրանց ընդհանուր գաղափարների մասին։

Միանգամայն անարդար կլիներ ասել, թե բոլոր հայ ուսանողների ձգտումները միայն առանձնական և նյութական նպատակ ունեն, թե նրանց մեջ չկային բարի երիտասարդներ ազնիվ ցան-

կութիւններով։ Կան շատ ուսանողներ, որոնք հափշտակվում են եթե ոչ ընդհանուր մարդասիրական գաղափարներով, գոնե նեղ ազգասիրական բաղձանքներով։ Նրանք հավաքվում են միասին, ծխում են, վիճում են և տնօրինում են իրենց «սիրելի ազգի» համար մի լավ ապագա։ Սկսում են սովորել հայոց լեզուն, ծանոթանալ նրա գրականութեան հետ և ուսումնասիրել նրա պետքերը, և լի բարի ցանկութիւններով վերադառնում են իրանց հայրենիքը գործելու համար։ Մենք մյուս անգամ կտեսնվենք այդ պարոնների հետ կյանքի մեջ, թե ո՛ր աստիճան նրանք հավատարիմ են մնում իրանց ուխտին։ Այժմ վերջացնում եմ իմ նկարագիրը Մոսկվայի և Ս. Պետերբուրգի ուսանողների մասին, ավելացնելով մի քանի խոսք նրանց ժողովների վերաբերութեամբ։

Վաղուց է, որ Մոսկվայի և Ս. Պետերբուրգի ուսանողներն ունեն մի տեսակ ժողովներ, կազմել են մի տեսակ եղբայրութիւն, բոլորովին բարեգործական նպատակով։ Նրանք ունեն առանձին կասսա, որի մեջ հավաքվում են ուսանողների նվերներն իրանց չքավոր ընկերներին օգնելու համար։ Մի համակրական գործ, որ կատարել են հայ ուսանողները—այդ է։ Բայց ցավալի է տեսնել, այն ուսանողները, որ մի ժամանակ վայելել էին հիշյալ կասսաների օժանդակութիւնը, ավարտելուց և կյանքի մեջ մտնելուց հետո բոլորովին մոռանում են անցյալը։ Ինձ պատահել է լսել շատ տրտունջներ, թե այսինչ ուսանողն այսքան հարյուր ռուբլի պարտ է մնացել ուսանողական կասսային, իսկ վերադարձնելու մասին չէ մտածում, թեև այժմ տարեկան մի քանի հազար ռուբլի եկամուտ ունի։ Ինձ հայտնի են մինչև անգամ այդ ապերախտների անուններն...[1]։

Հայ ուսանողները բացի Ռուսաստանի երկու մայրաքաղաքների համալսարաններից փոքր թվով դիմում են Օդեսա, Կիև, Կազան և Դորպատ։ Դրանք չեն զանազանվում առանձին հատկանիշներով, բայց նույնը չէ կարելի ասել Դորպատի ուսանողների մասին։ Դորպատի համալսարանը, եթե չեմ սխալվում, առաջինը եղավ, որ քաշեց դեպի ինքը հայ ուսանողներին, և ճանապարհը դեպի այդ ռուս-գերմանական քաղաքը բաց արեց Աբովյանցը. նրան հետևեցին շատերը, իսկ այժմ համարյա թե դադարել են Դորպատ

[1] Մինչև այսօր մենք չունենք որևիցե գրվածք հայ ուսանողների մասին, բացի դոք. Գ. Արծրունիի «Այնտեղ և այստեղ» վեպիկը, որ մի գեղեցիկ պատկեր է Ռուսաստանի ուսանողների կյանքից։ Այս աշխատութիւնը տպվեցավ «Մշակի» մեջ և թարգմանվեցավ ռուսաց լեզվով։

գնալուց։ Դորպատի համալսարանը տվեց մեզ երկու նշանավոր մարդիկ՝ Աբովյանցին և Նազարյանցին։ Բայց պետք չէ մոռանալ և այն, որ առհասարակ Դորպատի ուսանողներն ունեն մի առանձին հատկանիշ գույն, որով որոշվում են ռուսաց մյուս համալսարանների հայ ուսանողներից։ Մի տեսակ ծածկամտություն, մի տեսակ քրմական ֆանատիկոսություն, մի տեսակ կույր համառություն տիրում է նրանց ամբողջ մտավոր կարողության վրա։ Նրանք փոքր ի շատե կարդացել են և առանց համողմունքի մարդիկ չեն, բայց իրանց համոզմունքների մեջ այն աստիճան կամակոր են, որ դա պահում է նրանց միշտ քարացած անշարժության մեջ։ Այդ պատճառով զարմանալի չէ տեսնել, որ Դորպատից ավարտողները մեր ազգային, հասարակական և եկեղեցական խնդիրների վերաբերությամբ համարյա բոլորն էլ պահպանողականներ են։ Ինչ որ ավելի աչքի է զարկում, այդ է նրանց թթու ազգասիրությունը, որ չեն թաքցնում երևան հանել, երբ այդ ցուցամոլությունը չէր պահանջում նրանցից որևիցե աշխատություն կամ զոհ։

Դառնում եմ դեպի արտասահմանյան ուսանողները։

Ռուսաստանի սահմաններից դուրս հայ ուսանողները դիմում են մեծ մասամբ Գերմանիա, իսկ մասնավորապես Ֆրանսիա և Ջվիցերիա։ Սկսենք Գերմանիայից։

Հայ ուսանողը դիմում է Գերմանիայի այս և այն համալսարանական քաղաքն առանց մի բան գերմաներեն գիտենալու։ Նա վարձում է մի ընտանիքի մեջ բնակություն, ուր վեց ամսից հետո սովորում է թթե ոչ վարժ խոսել, բայց հասկանում է լսածը։ Տարին չլրացած, նա համարձակ կարող է հաճախել իր ընտրած մասնագիտությունից դասախոսություններ լսելու։ Սկզբից քննություն տալ չէ պահանջվում, բավական է, որ ուսանողը հայտնում է համալսարանի վարչությանն իր ցանկությունը մտնել ուսանողների թվում, հետո նրա անունը գրվում է վարչության գրքի մեջ (матрикулярная книга)։ Գերմանական համալսարանն ազատ հիմնարկություն է. նրա կազմակերպության մեջ չեն տիրում այն պաշտոնական խիստ ձևերը, որ կարելի է բացատրել բառով ար-ֆունակաճություն (казенщина)։ Ուսանողին տված է կատարյալ ազատություն թե առարկայի և թե պրոֆեսորի ընտրության մեջ. նշանակված կուրսեր և քննություններ չկան. ուսանողը ինքն է տնօրինում իր ժամանակը, որի ընթացքում նա մտադիր է սովորել։ Թթե հանգամանքները չեն ներում, նա կարող է ընդհատել իր ուսումը և ամիսներից կամ տարիներից հետո կրկին շարու-

նակել։ Շատ անգամ միևնույն ուսանողն իր ընտրած առարկայից լսում է զանազան պրոֆեսորների մոտ, զանազան քաղաքներում. այստեղից առաջ է գալիս ուսանողների գաղթականություն մի համալսարանական քաղաքից դեպի մյուսը—Բեռլին, Լայպցիգ, Մյունխեն, Հայդելբերգ, Իենա և այլն։ Այդ նպաստում է ուսանողին ծանոթանալ զանազան գիտնականների հայացքների հետ իր ընտրած առարկայի վերաբերությամբ։ Լսելով զանազան պրոֆեսորներին, զանազան համալսարաններում, ուսանողը կարող է վերջապես ընտրել մեկը և այն համալսարանում քննություն տալ. այդ մասին արգելք չկա, բավական է, որ նա ցույց տար իր թղթերը, թե այս ինչ պրոֆեսորների մոտ այսքան ժամանակ լսել է։ Շատ անգամ պատահում է, որ մի ուսանող, բացի իր ընտրած մասնագիտությունից, լսում է և մի քանի ուրիշ առարկաներ. պատմաբանը կամ ֆիլոլոգը միևնույն ժամանակ հաճախում է լսել մի նշանավոր նատուրալիստին, կամ նատուրալիստը գնում է լսելու մի երևելի փիլիսոփային։ Եվ այսպես, ամեն մի լսող կարող է ազատ կերպով ուսումնասիրել իր ընտրած արհեստի բոլոր հայտնի ավտորիտետներին։

Պրոֆեսորի հարաբերություններն ուսանողի հետ ընտանեկան բնավորություն ունեն։ Նա չէ վարվում որպես մի զորապետ իր սոլդատների հետ։ Նրա տունը մատչելի է ամեն մի ուսանողին, որ դիմում էր նրա մոտ որևիցե խորհրդի համար։ Այս է պատճառը, որ գերմանական պրոֆեսորը, գերմանական համալսարանը չէ վախեցնում ուսանողներին. և ոչ մի ազգի մեջ պրոֆեսորն այնքան հարգված և այնքան սիրված չէ իր լսողներից, որպես Գերմանիայում։ Նկատված է, որ պրոֆեսորներն ավելի մեծ ուշադրություն դարձնում են օտարազգի ուսանողներին, քան թե բուն գերմանացի ուսանողների վրա, որոնք գիտեն իրանց գործը և շատ կարոտ չեն նրանց խնամատարությանը։

Համալսարանական պարապմունքները լինում են գլխավորապես դասախոսություններ, որ լսում են ուսանողները, վճարելով մի նշանակված վարձ իրանց պրոֆեսորին, այլև մասնավոր հետազոտություններ և փորձեր լաբորատորիաներում պրոֆեսորի աշակցությամբ, և վերջապես սեմինարիաներ, որ կատարվում են ուսանողների վարժության համար։ Սեմինարիաները որոշվում են նրանով, որ պրոֆեսորը տալիս է իր լսողներին մի հարց նրանց մասնագիտության վերաբերությամբ մշակելու համար, ուսանողները պատրաստում են և նրանցից մեկը բարձրանում է ամբիոնի վրա և խո-

սում է։ Պրոֆեսորն այդ միջոցին նստած է լինում մյուս ուսանողների շարքում, լսում է և նշանակում է իր նկատողությունները և միևնույնը անում են և մյուս ուսանողները։ Հետո յուրաքանչյուրն իր կողմից հարցեր է առաջարկում և ամենքին պետք է պատասխանե դասախոսը։

Գերմանական համալսարաններում ամեն ինչ առաջնորդում է ուսանողին դեպի արհեստի և գիտության խորին ուսումնասիրությունը։ Ջմռռանանք պրոֆեսորի զանազան զբոսանքները և քննական հետազոտությունները (экскурсия) իր լսողների հետ։ Ուսանողը հույս չէ դնում պրոֆեսորի լիտոգրաֆիական տետրակների վրա, որպես լինում է այդ Ռուսաստանում, որ նա ամբողջ տարին անգործ մնա, և հետո շտապով թուխակի նման սերտե քննության համար, և այնուհետև շուտով մոռանա։ Ամեն մի ուսանող զգում է գիտության սաստիկ պահանջը, և նրա բոլոր ըղձապատը, ուր չես գտնի մի անգործ մարդ, հարկադրում է նրան աշխատել և անդադար աշխատել։ Առանց գիտության դժվար է ապրիլ այնտեղ, ուր յուրաքանչյուր ոք ունի մի նշանավոր պաշար գիտության. մըրցությունը սաստիկ է։

Գերմանական ուսանողը չէ բավականանում նրանով, ինչ որ սովորում է համալսարանի ամբիոնից. նա կարդում է համալսյա բոլոր նշանավոր հեղինակությունները, որ վերաբերում էին իր առարկային։ Այդ բավական չէ, նա հաճախում է զանազան ուսումնական հիմնարկությունների մեջ։ Դիցուք թե մի ուսանող ընտրել էր իր մասնագիտության համար քաղաքական տնտեսությունը. միևնույն ժամանակ նա անդամ է դառնում զանազան ժողովների և զանազան ընկերությունների, որպես են՝ աշխարհագրական, բժշկական, երաժշտական, հնագիտական, և այլն։ Միևնույն ժամանակ կարելի է տեսնել նրան մի դրասան մեջ քրքրում է հին ձեռագիրներ, ուսումնասիրում է մի անծանոթ արևելյան լեզու, կամ թանգարանի մեջ քննում է հին դրամներ և կամ հետաքրքրվում է զանազան հազվագյուտ բաներով։ Այս բոլոր աշխատություններից հետո, նա ժամանակ է գտնում պարապելու մարմնամարզությամբ, վարժվելու զինավարժության մեջ, կամ զվարճանալու որսորդությունով։ Օրերը, ժամերը, րոպեները նրա մոտ այնպես հաշված են, որ նա ամեն ժամանակի համար զրաղմունք ունի։ Եվ այս է պատճառը, որ գերմանական ուսանողն ունի չափից դուրս բազմակողմանի հմտություններ։ Ամբողջ օրն աշխատելով մի բան սովորել, նա դարձյալ իրան հետ չէ պահում սովորական զվարճու-

թյուններից. նրան կտեսնես մի հյուրանոցում, շրջապատված իր ընկերներով, գարեջուր է խմում, խոսում է, դատում է և վիճում է։ Մի բան, որ չէ հետաքրքրում գերմանական ուսանողին, այդ է՝ զբաղվել պոլիտիկայով։ Նա քաղաքական պրոպագանդիստ չէ, բայց հասարակական գործիչ է։ Նա սիրում է երկու բան. գիտությունն և գարեջուրը։

Կինը մի առանձին դեր չէ խաղում գերմանական ուսանողի կյանքի մեջ։ Նա ոչ թույլ է տալիս իրան ֆրանսիական ուսանողի նման գրիզետների հետ բուլվարները չափչփել, և ոչ ռուսական ուսանողի նման սիրուհու հետ է ապրում։ Նա իր կրքերի մեջ չափավոր է և համեստ, բացարձակ ախտերով չէ հրապուրվում։ Այս է պատճառը, որ գերմանական ուսանողն ամեն մի պատվավոր ընտանիքի մեջ մուտք ունի. նրանից չեն վախենում։ Կնոջ վրա նայում է նա որպես մի քնքուշ առարկայի վրա, որին եթե զորավոր գործերի մեջ գցեիր, կարող էր շուտով կոտրվել, և այս պատճառով, ռուսական ուսանողի նման նա կնոջը չէ ընտրում որպես սրոպագանդայի գործիք։ Նա համարում է կնոջը մի գեղեցիկ արարած, որով կարելի է զբաղվել առանց ձանձրանալու, որով կարելի էր զվարճանալ առանց տխրելու—այսքանը միայն։ Կինը նրան խելքից չէ հանում, բայց նրբ սիրում է, սիրում է միայն ամուսնանալու համար։

Ուսանողական կազմակերպությունն ամեն գերմանական համալսարանում բաժանվում է երկու որոշ մասերի, մեկը՝ գունավորներ, որոնցից կազմված են զանազան առանձին խմբեր (корпорация), որոնք տարբերվում են իրանց գլխարկների և կուրծքի ժապավենների գույներով, իսկ երկրորդը, հասարակ ուսանողները, որոնք չեն համարում իրանց հիշյալ խմբերի կամ կորպորացիաների անդամ։

Գունավոր ուսանողների յուրաքանչյուր խումբը կամ կորպորացիան ունի իր առանձին դրոշը, նշանաբանը, օրդեննները, սովորությունները, ծեսերը և վերջապես պրինցիպները։ Մեկը, օրինակ, ներկայացուցիչ է ազնվապետական սկզբունքի, մյուսը ռամկապետական է, երրորդը գիտնական նպատակների է ծառայում, չորրորդը հասարակական տենդենցիաներ ունի և այլն։ Յուրաքանչյուր խումբն ունի իր առանձին ավանդական օրենքները կամ վարչության ստատուտները, որ կազմվել են պատմականաբար վաղեմի ժամանակներից և պահպանվում են ամենայն սրբությամբ։ Ուսանողը, որ մեղանչում է իր խմբի օրենքների դեմ, պատժվում է խմբի

վարչությունից։ Երևակայեցեք ձեզ մի ուսանող իր կորպորացիայի պաշտոնական վենգերկայով. սև թավիշից, գունավոր գլխարկով, ժապավենով անցկացրած ուսի տակով, և հպարտ կուրծքը ծածկված օրդեններով, այստեղ կան խաչեր, աստղեր, այստեղ կան զանազան տեսակ նշաններ և զարդեր, բոլորը էժանագին մետալներից, բայց ամենի մեջտեղում, գունավոր լայն ժապավենի վրա, փայլում է գարեջրի բաժակի մեծ պատկերը, որպես բարձր նշան, որ նվիրած է նրան, գարեջրական թագավորությունից (Bierstaat)։ Ամեն մի կորպորացիա ունի իր առանձին ժողովները և խնջույքները, որոնց մեջ սովորական ծեսերով կատարվում է գարեջուր խմելու ուրախությունը։ Խմելու պայմանները չափազանց բազադրյալ են, որ պետք էր առաջուց սովորած լինել, ինչպես օրինակ, սալամանդրա կոչված ձևը։ Ուսանողական երգերը և ճառերն մի առանձին կենդանություն են տալիս այս տեսակ խնջույքներին։ Գարեջուրը, որ ուսանողների զվարճության ոգին է, շատ անգամ գործ է դրվում որպես սրբություն։ Օրինակ, խիստ ծիծաղելի է այն ծեսը, որպես է գարեջրով մկրտելը մի ուսանողի, որ նոր մտնում է որևիցե կորպորացիայի մեջ։ Բացի սովորական ժողովներից և խնջույքներից, կատարվում են և հանդիսավոր օվացիաներ և դեմոնստրացիաներ։ Տեսնում ես, գունավորների զանազան խմբեր, զարդարված իրանց համազգեստով և օրդեններով, ձեռներին բռնած դրոշակներ և ջահեր, գիշերային պահուն, երգելով անցնում են փողոցների միջով, կանգնում են մի սիրված պրոֆեսորի տան առջև և արտահայտում են նրան իրանց հարգանքը։ Երբեմն այսպիսի դեմոնստրացիաներ կատարվում են, որպես արտահայտություն զանազան հասարակական ցույցերի, երբ կատարվում էր մի անարդարություն օրենքի կողմից։ Ուսանողներն այդ ժամանակ սաստիկ վրդովվում են, հուզվում են և խմբերով հրապարակ են դուրս գալիս, իրանց բողոքը հայտնելով զանազան ցույցերով։ Ժողովուրդը միշտ իր ձայնը խառնում է ուսանողների ոգևորված երգերին և նրանց ազնիվ բարկության ձայնին։

Գունավոր ուսանողները, որ առհասարակ նշանավոր են իրանց քաջությամբ, համարձակությամբ և անձնասիրությամբ, միշտ պատրաստ են վրեժխնդիր լինել մի ամենաչնչին վիրավորանքի համար պատվի դեմ։

Այս պատճառով մեծամարտությունը նրանց մեջ այնքան սովորական է, որպես մի գավաթ գարեջուր խմելը։ Եվ շատ անգամ կարելի է տեսնել երեսը բոլորովին սպիներով ալլանդակված ուսա-

նողներ, որ ստացել էին զանազան մենամարտությունների մեջ։ Բայց նույն ուսանողը, երբ իր զարհուրելի դեմքով կանգնում է ամբիոնի վրա և կարդում է մի ոգևորված ճառ, այն ժամանակ առանց հիացմունքի չէ կարելի չլսել նրան։ Նա որպես հաջողակ է զենք բանեցնելու մեջ, այնքան էլ ընդունակ է ընդհանուր մարդկային բարձր գաղափարներ արտահայտելու։ Այսուամենայնիվ, գունավոր ուսանողներին հասարակ ուսանողների հետ համեմատելով, առաջիններն այնքան նշանավոր չեն լինում իրանց աշխատասիրությամբ։ Քաջությունը մենամարտության մեջ և զորությունը գարեջուր խմելում—ահա՛ երկու առարկաներ, որոնցով պարծենում են նրանք։ Եթե գերմանական ուսանողների մեջ կան տիկուն աշխատողներ և ճշմարտապես գիտության հետևողներ—դրանք են հասարակ ուսանողները, որոնք ոչ մի կորպորացիայի չեն պատկանում։

Պետք է նկատել, որ այլ և այլ կորպորացիաներ, որոնք իրանց սովորություններով և պաշտոնական ձևերով այժմ քաստուսական բնավորություն են ստացել, ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ Գերմանիայի միջնադարյան ասպետության զանազան ուխտերի և կարգերի մի նմանություն, որ անցել է ուսանողական կյանքի մեջ։ Այժմ այդ մաշված սովորությունները հնանալու և մոդայից ընկնելու վիճակին են հասել։ Նվ որպես հակակշռություն գունավորների ժողովների, վերջին ժամանակներում կազմվել են ուսանողական ընդհանուր ժողովներ, ավելի լայն և ընդարձակ նպատակներով և ժամանակակից սկզբունքների վրա։ Այդ ժողովներին մասնակցում են հասարակ ուսանողները և երբեմն նրանց մեջ լինում են պրոֆեսորներ։

Բայց մի բան, որ պետք է նկատողության առնել, այն է, մինչդեռ մի ուրիշ պետության մեջ չորս-հինգ ուսանող մի տեղ հավաքվելիս, մի ժողով կազմելիս, միշտ կառավարությունը կասկածանքով է նայում նրանց վրա—դրա ընդհակառակն, գերմանական ուսանողներին տրված է այնքան ընդարձակ ազատություն, որ նրանք կարողանում են վերև հիշած կորպորացիաների նման առանձին առանձին խմբեր կամ ժողովներ կազմել, ամենևին նրանցից չեն վախենում։ Գերմանական ուսանողն իր հայրենիքի հավատարիմ զավակն է։ Նվ այդ ցույց տվեց նա վերջին ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ։ Նա թողեց համալսարանը և անցավ կռվի դաշտի վրա։

Մինչև այստեղ ինչ որ խոսվեցավ, վերաբերում է բուն գերմանացի ուսանողներին, հիմա տեսնենք, ի՞նչ են անում այնտեղ հայ ուսանողները։

Հայ ուսանողները ոչ մի կորպորացիայի մեջ չեն մտնում. նրանք պատկանում են հասարակ ուսանողների թվին։ Բայց որպես հասարակ ուսանող ևս, հայերը չունեն այն բազմակողմանի պարապմունքները, որոնցով, բացի իր մասնագիտությունից, զբաղված է լինում բուն գերմանական ուսանողը։ Օրինակ, հայ ուսանողը ոչ մի ուսումնական ժողովի և ընկերության մեջ չէ մտնում. ոչ մի ուրիշ բան, որպես են մուզիկա, մարմնամարզություն և այլն, չէ սովորում, և որպես Մոսկվայում կամ Պետերբուրգում, այստեղ էլ նույնպես դուրս չէ գալիս իր հայ ընկերների նեղ շրջանից։ Ես մի քանի գերմանական հայ ուսանողներ միայն ճանաչում եմ, որոնց կարելի է բացառություն համարել։ Իսկ մնացածները ճանաչում են միայն համալսարանի շինությունը, իրանց պրոֆեսորին և իրանց ընտրած առարկան, ուրիշ ոչինչով չեն հետաքրքրվում, թե ինչ է կատարվում իրանց չորս կողմում։ Շատ շատ եթե մեկն այնքան աշխատասեր էր, բացի իր ընտրած մասնագիտությունից, կլսե դասախոսություններ մի քանի ուրիշ առարկաներից ևս, որոնք կապ ունեին իր մասնագիտության հետ։ Ամեն ինչ նա սպասում է համալսարանից, իսկ դրսի ուսումնական շրջաններից օգուտ չէ քաղում։ Երբեմն լրագրներ կկարդա, կամ գրքեր կվերառնի մի գրադարանից։ Բայց պետք է խոստովանվել, որ գերմանական հայ ուսանողները դարձյալ գերազանցում են Ռուսաստանի հայ ուսանողներից, թե իրանց աշխատասիրությամբ և թե իրանց վարքով. դրանք գոնե համեստ են. ինչ որ սովորել են, սովորել են հիմնավոր կերպով։ Բայց Ռուսաստանի հայ ուսանողը շատ առարկաներ է սովորում առանց լավ մարսելու, և շուտով էլ մոռանում է։ Բացի դրանից, զանազանությունը մեծ է։ Ռուսաստանի հայ ուսանողը, որպես իր տեղում նկատեցինք, սովորում է ոչ թե գիտության համար, այլ դիպլոմ ստանալու համար, որ պաշտոնի մեջ այս և այն արտոնությունը կարողանա ձեռք բերել, և այս պատճառով նա վեր է առնում գիտությունից այնքան միայն, որ կարող է հասցնել նպատակին։ Իսկ գերմանական հայ ուսանողի վրա ազդում է շրջապատը, նա իրան նվիրում է միմիայն գիտության—ուսանում է ուսման համար, առանց որևիցե արտոնություն աչքի առջև ունենալու։ Գիտության առաքելությունը—ահա՛ նրա գլխավոր նպատակը։ Նա ծառայում է մի դրոշի, որի նշանաբանն էր՝ գիտությունը միայն։ Եվ այսպիսով շատերը մեր երիտասարդներից նշանավոր եղան ոչ միայն հաջող քննություն տալով, բայց նույնիսկ Գերմանիայում պրոֆեսորի կամ պրիվատ դոցենտի ամբիոն ստա-

նալով։ Թեև գտնվեցան այնպիսիները, որ վերադարձան մեզ մոտ առանց քննություն տալու, դարձյալ զանց չառնելով իրանց այցատոմսակի վրա տպել տալ Docteur ès-lettres...

Ջեմ կարող չհիշել, որ ոմանք մեր ուսանողներից վատ համարում թողեցին Գերմանիայում, ոչ միայն իրանց վերաբերությամբ, այլ իրանց վարքով մրոտեցին մինչև անգամ հայ անունը, որ այնքան փոքր ծանոթ է Եվրոպայում։ Խարել, պարտքով ուտել, խմել և փողը չվճարել—այդ արել են ոչ միայն ուսանողները, որ զուրկ են եղել նյութական միջոցներից, այլ նրանք, որ ստանում էին ծնողներից մեծ փողեր։ Այլևս չեմ խոսում այն բանի վրա, որ ամեն մի հասարակ վաճառականի որդին կամ գեհհիկ գյուղացին իրան ներկայացնում էր իբրև հայոց մի երևելի ազնվական տոհմից։ Այս տեսակ խաբեբաներից մեկի համար պատմում էին, թե իրան կոչում էր իշխան Արարատա...

Իհարկե, վերև հիշած տխուր նկատողությունները պետք է բացառական երևույթներ համարել, որ ավելի հետևանք են ընտանեկան վատ դաստիարակության, որը չէ փոխում հայի զավակը, երբ նա ընկնում է մի նոր և ավելի քաղաքակրթված աշխարհի մեջ։ Բայց առհասարակ խոսելով, գերմանական աշխարհը, գերմանական կրթությունը, գերմանական ուսումը շատ նպատակահարմար է մեզ հայերիս համար, որ ունենք բավական նմանություն գերմանացիների հետ, թե բնավորության, թե տոկունության, թե տնտեսական խնայող, հաշվող չափավորության կողմից։ Հայն ասիական գերմանացի է։ Ինչ որ պակաս է մեզ, կարող ենք ստանալ նրանցից։ Մեր նախնիքը Քսենոֆոնի օրերում գարեջուր էին խմում, իսկ գերմանացին խմում է այսօր։ Մեր մեջ նմանություններ կան, ամեն կողմից նայելով։

Նկատողության պետք է առնել մի ուրիշ պայման ևս, այն է՝ գերմանական համալսարանի ազդեցությունն օտարազգի երիտասարդների վրա։ Նա վերադարձնում է ամեն ազգին իր որդուն, ավելի կատարելագործված, ավելի զարգացած, ոչինչ չխլելով նրա ցեղական հատկություններից, այլ ընդհակառակն, ավելի ամրապնդելով, ավելի հաստատելով։ Նա չինացուն տալիս է լավ չինացի, ճապոնացուն՝ ճապոնացի, հայաստանցուն՝ հայ։ Բոլորը մկրտվում են միևնույն համալսարանական տաճարի մեջ գիտության, իմաստության լույսով, բայց յուրաքանչյուր ազգի որդին կրում է իր ցեղական դրոշմը։ Շատ ժամանակ չէ անցել, մի խնջույքի մեջ, որ ուսանողները տալիս էին ի պատիվ իրանց պրոֆեսորի, երբ առա-

ջարկվեցավ յուրաքանչյուրին իր ազգի լեզվով մի փոքրիկ ճառ կարդալ, և երբ հերթը հասավ մի հայ ուսանողի, նա հայտնեց, թե չգիտե հայերեն. ամեն կողմից ծանր հանդիմանություն ստացավ։ Ով նա այնուհետև սկսեց սովորել իր ազգի լեզուն, որովհետև նրանից խոստմունք առեցին, որ մյուս տարվա խնջույքի ժամանակ անպատճառ պետք է կատարե իր ընկերների ցանկությունը։

Պետք չէ մոռանալ և այն, որ գերմանական և առհասարակ արտասահմանյան դիպլոմները որևիցե արտոնություն չտալով ուսանողին Ռուսաստանում, նրանք վերադառնալուց հետո ստիպված են լինում ընտրել ազատ պարապմունքներ։ Եվ այսօր ուրախալի է տեսնել, որ նրանց մեծ մասն ազգային գործիչներ են։ Մեր դպրոցների նշանավոր վարժապետները, տեսուչները, մեր այժմյան խմբագիրները, բոլորը գերմանական համալսարանների պտուղներ են։

Դառնանք դեպի ֆրանսիական ուսանողները։

Ֆրանսիայում հայ ուսանողներն ընտրում են միայն Փարիզը։ Ես գոնե, բացի մի բժշկից, չեմ ճանաչում ուրիշ ուսանողներ, որոնք Ֆրանսիայում մի բան սովորած լինեին։ Բայց ճանաչում եմ շատ թերուսներ, որոնք երկար տարիներ Ֆրանսիայի մայրաքաղաքում թափառելեն հետո, առանց մի հիմնավոր գիտություն սովորելու, վերադարձել են հայրենիքը, բերելով իրանց հետ միայն ֆրանսիական արտաքին փայլը, որ աչքի է զարկում կապկության բոլոր միմոսություններով։ Նրանում է, Փարիզը—այդ գիտության, հեղափոխության, մարսելիեզի և շռայլության մայրաքաղաքը—իր գրիզետներով և կաֆեշանտան-ներով բոլորովին կախարդում է, խելքից հանում է միամիտ հայ ուսանողին, երբ ընկնում է այդ համաշխարհական Բաբելոնի մեջ։ Փարիզը միջին կետ չունի. նա միշտ պատրաստում է ծայրահեղ մարդիկ, կամ խոշոր հասարակական գործիչներ, կամ երևելի հանճարներ, և կամ շրջմոլիկ, անպատճառ շարլատաններ։

Փարիզում լատինական թաղը պատմական նշանակություն է ստացել որպես ուսանողների բնակարան։ Նրա խուլ փողոցներով ոչ մի պատվավոր կին իրան թույլ չի տա անց կենալ գիշերվա 9 ժամից հետո, վախենալով, մի՛ գուցե հանդիպե ուսանողների անպատկառ մի խմբի։ Փարիզի ուսանողներն առհասարակ սակավ են պարապում, խիստ փոքր է այն աշխատավորների թիվը, որոնք ամիսը մի անգամ հաճախում են դասախոսություն լսելու։ Նրանք

ավելի շատ սովորում են այն տարերքից, որոնցմով տոգորված է Փարիզի մթնոլորտը։ Զվարճությունները չափից դուրս շատ և բազմատեսակ են։ Կան թալեր, թատրոններ, ռեստորաններ, կաֆեներ և այլն։ Բայց մանավանդ կնիկները նրանցից շատ ժամանակ են խլում։ Մեծ մասն ապրում է սիրուհու հետ։ Մի ամբողջ դաս աղջիկների, որոնք կոչվում են Լատինական թաղի կանայք, խիստ հետաքրքիր դեր են խաղում ուսանողների կյանքի մեջ։ Դրանք հասարակ գործավոր աղջիկներ են, որոնք բանում են զանազան հիմնարկություններում մեջ, և ուսանողների սենյակներում ուրախություն ու հանգստություն են գտնում, երբ աշխատանքը ձանձրացնում էր նրանց։ Այդ մշտազվարթ, անհոգ և դարտակամիտ արարածներն երբեք դուրս չեն գալիս ուսանողների աշխարհից, և անդադար անցնում են մեկ ձեռքից մյուսը։

Ինչ-որ ավելի հատկանիշ է ֆրանսիական ուսանողներին—դա է նրանց արտաքին փայլը։ Փարիզը սաստիկ հղկում է և կոկում է նրանց։ Նրանք գերմանական ուսանողի նման անտաշ, անշնորհք և դանդաղկոտ չեն, որոնց բոլոր արժանավորությունները թաքնված են դրսի սառն և ցամաք կեղևի տակ։ Փարիզի ուսանողը կատարյալ աշխարհային մարդ է իր բազմակողմանի ձևերի մեջ։ Նա խոսում է, դատում է ամեն բանի վրա, մինչև անգամ այն բաների վրա, որ ինքը չգիտե։ Նրա խելքը սաստիկ ճկուն է, դեպի ամեն կողմ ոլորվում է։ Նա վարում է խիստ բաղադրյալ վիճաբանություններ, և կարկտի նման թափում է խոշոր ֆրազներ։ Այդ նրանից է, որ նա կարդում է մեծ հեղինակների գրքերը, րոմաններ, կարդում է լրագրներ, գնում է թատրոն, ծանոթ է ամեն բանի հետ, ինչ որ կատարվում է նրա չորս կողմում։ Նա թեև հիմնավոր գիտություն չունի, թեև խորին կրթություն չէ ստանում, բայց շուտով հափշտակվում է իդեաներով։

Ինչ որ վերաբերում է ընդհանուր գաղափարներին, մեծ մասը ազատամիտ և առաջադիմականներ են, և պատկանում են հասարակապետական կուսակցության։ Այդ բավական չէ, շատերը նրանցից երազում են համաշխարհային հասարակապետություն, երազում են ազգերի եղբայրություն, և չքավորության վախճան։ Ազատության և արդարության իդեաները սաստիկ արբեցնում են նրանց։ Այսուամենայնիվ, ֆրանսիական ուսանողը պրոպագանդիստի ոգի չունի, որ մտներ ընտանիքների մեջ, որ մտներ ամբոխի մեջ, և առանց աղմուկի տարածեր իր մտքերը։ Նա իր նեղ, ուսանողական շրջանից դուրս չէ գալիս։ Օրինավոր ընտանիքներում մինչև ան-

գամ նրան չեն ընդունում։ Բայց երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, ուսանողները խլրտում են, զարթնում են որպես քնած առյուծ, և առաջինն են լինում, որ թնդեցնում են փողոցները մարսելիեզներով, փշրում են բռնակալների արձանները և թռչում են բարիկադների վրա։ Ով որ փորր ի շատե ծանոթ է ֆրանսիական պատմությանը, դիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում, և մանավանդ Կոմունայի ժամանակ։

Չէ կարելի ասել, թե բոլոր ուսանողները Ֆրանսիայում հետևում են հասարակապետական կարծիքների։ Տակավին կղերը և մանավանդ եզվիտները մեծ ջանք են գործ դնում, որ իրանց մրտքերն անցկացնեն երիտասարդության մեջ. և այս պատճառով, նրանք սաստիկ եռանդով ձգտում են իրանց ձեռքը ձգել ուսումը և կրթությունը։ Եվ կարողացան հաջողացնել, Ֆրանսիայի զանազան գավառներում պահպանելով բավական ծաղկած դպրոցներ, և նույնիսկ Փարիզում բաց անելով մի քանի ուսումնական հիմնարկություններ, այլև մի կաթոլիկական համալսարան։ Այդ հիմնարկությունների ուսանողները ոչինչ կապ չունեն իրանց հասարակապետական ընկերների հետ, և ներկայացնում են սաստիկ ռեակցիա։ Բայց մի բան, որ ուրախալի է, այն է, որ այժմ Ֆրանսիայի ամենաբարձր մտածողներն աշխատում են սահմանափակել կղերի իրավունքները կրթության գործի մեջ։

Հայ ուսանողն, ընկնելով Փարիզի քաոսի մեջ, բոլորովին իր գլուխը կորցնում է։ Անթիվ կուսակցություններ, անթիվ կարծիքներ, և անթիվ ձգտումներ—նա չգիտե, թե որին պետք է հետևել։ Վերջապես ավելի զորեղ հոսանքը նրան իր հետն է տանում։ Նա մոռանում է իր անձը, մոռանում է իր երկիրը, մոռանում է, թե ինչ ազգի որդի է ինքը։ Նա էլ միտքը չէ բերում, թե իր եղբայրները ինչ դրության մեջ են ապրում Տաճկաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում և Հնդկաստանում—սկսում է երազել ընդհանուր եղբայրության վրա։ Նա դառնում է կոսմոպոլիտ և ուրանում է իր հայությունը։ Որպես վերևում հիշեցի, մենք չունենք շատ թվով ֆրանսիական ուսանողներ, իսկ այդ երևույթը նշմարվում է Կ. Պոլսի երիտասարդների մեջ, որոնք դժբախտություն էին ունեցել մի քանի տարի Փարիզում թափառելու։ Զարմանալին այն է, որ Փարիզի ուսանողն իր ընդհանուր կոսմոպոլիտական հայացքներով հանդերձ, դարձյալ մնում է ֆրանսիացի. նա առաջ սիրում է իր ազգը, իր հայրենիքը և ավելորդը միայն տալիս է օտարնե-

րին։ Բայց հայ ուսանողը մոռանում է բոլորը... Սրտի և մտքի դատարկության մեջ միշտ տեղ են գտնում հիմար ցնորքներ...

Ես վերջացրի իմ նկարագիրը Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի հայ ուսանողների մասին. հիմա տեսնենք, ինչ են շինում նրանք, երբ վերադառնում են իրանց հայրենիքը և մտնում են կյանքի մեջ։

Դ

ԹԻՖԼԻՍԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՏՐՈՆ

Թիֆլիսն իր այժմյան դրությունով ներկայացնում է մի կենտրոն, ուր հանդիպում ենք մեր երիտասարդության բազմատեսակ տիպերին։ Այստեղ են գտնվում մեր մտավոր զորության ներկայացուցիչները—մեր ինտելիգենցիան, այստեղ է գործում մեր մամուլը, այստեղ են խմբվում գավառներից մեր նշանավոր ուժերը, և վերջապես այստեղ մեր խոշոր և մանր դրամատերները հրաշք են գործում առևտրական հրապարակի վրա։

Իմ հետազոտության մեջ ես անձնավորություններ չպիտի շոշափեմ. ես կվեր առնեմ առանձին առանձին խմբեր միայն, որոնք պատկանում են այս և այն դասակարգին և գործում են մի որոշ ասպարեզի վրա։ Բայց ինչ պետք է արած, որ մեր շրջանն այն աստիճան նեղ է, որ ամեն մի խմբի վրա խոսելիս, ընթերցողը կամ-ակամա պիտի երևակայե որևիցե անձնավորություն։

Սկսում եմ համալսարանականներից։

Ավարտելով իր ուսումը որևիցե համալսարանում, կամ կիսավարտ, երիտասարդը գրքերը ծալում մի կողմ է դնում, ապսպրում է հմուտ գերձակներից մեկին մի քանի ձեռք հագուստ, գնում է ցիլինդր և պենսնե, ջոկում է ձեռնոցների համեմատ գույները, բողնում է ծնոտի վրա մի պուրակ մազ, և այս բոլոր պատրաստություններով վերադառնում է իր հայրենիքը, ուր նրան սպասում են հայր, մայր, բարեկամներ և վերջապես ազգը։ Արտաքին կերպարանքը վատ չէ, ներկայացնում է ուսյալ մարդու բոլոր ընդունված ձևերը, իսկ ներքինը զգուշությամբ թաքցնում է։ Նա քիչ է խոսում, չէ մտնում ծանր վիճաբանություններ մեջ և միշտ աշխատում է ցույց տալ, թե «արհամարհում է»։ Բայց պատահած տեղը, երբ իր ատամների հարմար մարդ է գտնում, լավ գգգզում է, այլևս նրա սոֆիզմներին և ճոռոմաբանությանը չափ չկա։

Դա այն տեսակ տիպերիցն է, որ հենց սկզբից ուսման և գիտության վրա նայում էր որպես միջոցի վրա, որ իրան լավ ապագա պատրաստե, որ սովորում էր դիպլոմի և արտոնության համար։

Մտնելով կյանքի և հասարակության մեջ, հանգամանքները, կարիքը, նպատակին հասնելու պահանջները սաստիկ զարգացնում են նրա ուշիմությունը։ Նա դառնում է մի ճարպիկ որսորդ։ Նա իսկույն հասկանում է, թե որ կողմից է փչում քամին և նրա համեմատ պարզում է իր նավի առագաստները կյանքի ծովի մեջ։ Համոզմունք ասած բանը չկա նրա մեջ։ Հանգամանքներից օգուտ քաղել—ահա՛ նրա գլխավոր համոզմունքը։ Նվ այդ է, որ շինում է նրան մի տեսակ քամելեոն, մի տեսակ առասպելական էակ, որ անդադար փոփոխվում է թե կարծիքների և թե գործողությունների մեջ, որը ինչ առարկայի և մոտենում է, իսկույն նրա գույնը և ձևն է ընդունում։ Անհաստատակամությունը նրա գլխավոր հատկանիշն է։ Բայց մի գիծ, որ մնում է նրա մեջ անփոփոխ—այդ է շահամոլությունը, որի համար զոհում է ամեն ինչ, որքան և սուրբ լիներ։

Նա հիմար չէ։ Նա լեզվով գոնե ցույց է տալիս իր համակրությունը և հակակրությունը դեպի ամեն լավ և վատ գործ։ Լիբերալի մոտ ազատամտություն է մսխում. հետադեմի մոտ վերջին աստիճանի պահպանողական է ձևանում. ազգասերի մոտ լաց է լինում Թուրքիայի հայերի վիճակի վրա. մի օտարականի մոտ ասում է, թե բոլոր հայերը «մաշենիկներ» են. հայր սրբի մոտ կդեռական է ձևանում. մի ուրիշ տեղ պախարակում է ազգային եկեղեցին. խոսում է անձնական պատվի և ազնվության վրա, բայց պատահած տեղը լիզում է ազդեցություն ունեցող մի մարդու ոտները.—վերջապես դեպի ամեն կողմ թեքվում է, դեպի ամեն կողմ ծալվում է, մինչև կարողանում է մի պաշտոն ձեռք բերել։ Այժմ հասավ ցանկալի նպատակին։ Այնուհետև նա կտրվում է հասարակությունից և սկսում է իր նեղ շրջանի մեջ գործել։ Նա, որ առաջ շողոքորթում էր ամբողջ հասարակությանը, այժմ սկսում է շողոքորթել իր պաշտոնակիցներին, իր մեծավորին, որ ոտքը նրա օգնության վրա դնելով, կարողանա բարձրանալ իր բոնած դիրքի աստիճաններըւ

Բայց որտեղի՞ց, ե՞րբ վարժվեցավ նա այդ տեսակ պրակտիկայի, այդ տեսակ գործնականության մեջ։ Ընտանիքը տվեց նրան այդ դաստիարակությունը։ Նույնը, ինչ որ գործում էր վաճառական հայրը, գործում է և բարձր ուսում ստացած որդին։ Ջանազանությունը միայն մեկ ձևի և կրթության աստիճանի մեջն է։ Անկիրթ

հայրն ավելի կոշտ-կոպիտ կերպով էր խաբում, իսկ կրթյալ որդին ավելի նրբացրել է խաբեությունը։ Նա հարստահարում էր իր խանութի մեջ, իսկ դա հարստահարում է մի ուրիշ ասպարեզում։ Գործողությունների բնավորությունը չէ փոխվում։ Այս պայմանների մեջ հին և նոր սերունդը ձուլվում են միասին։ Գտնվում են, այո՛, և ազնիվ անձնավորություններ, որոնք ավելի մաքուր ճանապարհով են դիմում իրանց բախտին, բայց ցավելով պետք է ասել, որ այդպիսիները բացառություն են համարվում։

Դառնանք դեպի մյուս տեսակ ուսանողները, որոնք հափշտակված էին բարձր գաղափարներով, որոնք պատրաստվել էին իրանց հասարակությանը և ազգին ծառայելու։

Գլուխը լցրած զանազան ծրագրներով, նա մտնում է կյանքի մեջ. ինչ բարի գործ ասես, որ չէ ցանկանում սկսել—լրագիր, ամսագիր, գրքերի հրատարակություն և այլն։ Ժողովրդին շատ բան պակաս է, պետք է լրացնել բոլորը, մտածում է նա։ Հագնվում է հասարակ կերպով, խոսում է տաք և եռանդով. նրա թե լեզվի և թե ձևերի մեջ նշմարվում է պարզություն և անկեղծություն։ Նա մոտենում է այս և այն գործող խմբին, որպես իր եղբայրակիցներին, քաջալերում է նրանց ասելով. «պետք է կրկնապատկել ուժերը, գործը դանդաղ է ընթանում, բայց ժամանակը չէ սպասում»։ Խոսում է, վիճում է, տալիս է նոր խորհուրդներ, ստեղծում է նոր պլաններ։ Անցնում են շաբաթներ, ամիսներ, տարիներ... Նա դեռ մտածում է, նա դեռ խոսում է... Ցանկանում է մի հրաշք գործել և մի անգամով զարմացնել աշխարհը։ Նա չէ սիրում փոքրից սկսել, իսկ մեծ բան գործելու համար չեն ներում հանգամանքները։ Մոտենում է նա, օրինակ, մի խմբագրի, որ շաբաթը մի անգամ հազիվ կարողանում էր հրատարակել իր թերթը, «դրանով բան չի դառնա, ասում է նրան, պետք է ամեն օր հրատարակել, պետք է այս գրել, այն գրել»... Բայց ինքը մի տող անգամ չէ գրում։ Անգործության մեջ եռանդը, ոգևորությունը թուլանում է, սրտի կրակը մարում է... Նա սկսում է զգալ իր դրության անտանելիությունը։ Տեսնում է, երեկվա ընկերը, հիմար, իդիոտ և ոչինչ չսովորած ընկերը, այսօր սեփական կառք ունի, հազարներով եկամուտ է ստանում։ Այդ փառքը հրապուրում է նրան։ Նա թոթափում է իր առաջին հափշտակությունը և սթափվում է իր ազնիվ արբեցությունից... Ազգ, հայրենիք, հասարակություն, այս բաները փոքր առ փոքր անհետանում են նրա գլխից... Նրա աչքի առջև կերպավորվում է իր ես-ը, որին առաջ մոռացել էր։ «Ջէ, մտածում է նա,

պետք է առաջ իր անձը ապահովել, հետո ուրիշների վրա մտածել»։ Հանկարծ առաջարկում են մեր ազգասերին մի պաշտոն, մի «յուղալի պատառ»։ Նա այժմ ծառայության մեջ է, տարեկան մի քանի հազար եկամուտ ունի։ Նա մեծ կրեդիտ է ստանում ամուսնության վերաբերությամբ. ամեն կողմից առաջարկում են հարուստ աղջիկներ։ Պսակվում է։ Այժմ աշխատում է իր կացությունը փառավոր շուք տալ. վարձում է ամենագեղեցիկ տան վերին հարկը, և զարդարում է սենյակները զանազան սնոտիքներով։ Նա, որ առաջ դեմոկրատական պրինցիպների էր հետևում, և ինքը նույն ծագումից էր, այժմ ձևացնում է իրանից ազնվարյուն արիստոկրատ։ Պատվիրում է սպասավորին իր սալոնի մեջ մուտք չտալ այն մաշված այուրթուքով պարոններին, որոնց հետ առաջ իր ազգի առաջադիմության մասին երկար ու երկար մասլահաթներ էր անում։ Երբ փողոցում հանդիպում է հին բարեկամին, երբ ցանկանում է արժանացնել նրան իր ուշադրությանը, արհամարհական ժպիտը երեսին հարցնում է.—«как идет ваша газета», և շուտով անցնում է, նեղվելով, մի գուցե տեսնեին իրան նրա հետ խոսելիս։

Չէ կարելի ասել, թե այս տեսակ տիպերի ոգևորությունը և բարի ցանկությունները հենց սկզբից անկեղծ չէին։ Միայն բնավորության թուլությունը, համոզմունքի անհաստատությունը, տոկունության բացակայությունն առիթ է տալիս նրան շուտով փոխվել։ Նրանք այն աստիճան տկար են լինում, որ չեն դիմանում կյանքի հակառակ հոսանքին, և տկտում են նրա ընթացքով գնալ։ Այս տեսակ տիպերը նմանում են այն մետեորական երևույթներին, որ կոչվում է աստղ, որը հանկարծ հայտնվում է մթնոլորտի մեջ, փայլում է, բոցավառվում է, և հետզհետե սառչելով, վերջապես հանգչում է և ընկնում է ցած...

Ես նկարեցի պատկերները երկու տարբեր տիպերի, որոնք հակառակ ճանապարհներով մոտենում են միմյանց, ձուլվում են, և կազմում են մի ամբողջություն։ Այժմ համեմատենք այդ երկու տիպերը։ Մեկը, որպես գործնական մարդ, հենց համալսարան մտած օրից իրան նպատակ է դնում այնքան սովորել, որ դիպլոմ ստանա, արտոնություններ ձեռք բերե, որ իր համար մի լավ ապագա պատրաստե։ Նա բացի իր անձից, ուրիշի վիճակով չէ հետաքրքրվում։ Այս տեսակ մարդուն, թթե չէ կարելի համակրել, գոնե կարելի չէ և պախարակել։ Նա հավատարիմ է մնում իր ուխտին և նրա համեմատ գործում է։ Իսկ մյուսը, որպես իդեալական մարդ, աշխատում է, սովորում է, և համալսարանից իրան նպատակ է դնում, որ

կյանքի մեջ մտնելուց հետո, պետք է ծառայե այս և այն գաղափարի իրագործելուն, պետք է օգուտ բերե հասարակությանը և իր ազգին։ Բայց վերջը բոլորը մոռանում է, բուրժուազանում է, և սկսում է մտածել իր փառքի, հանգստության և քսակի մասին։ Այս տեսակ երիտասարդը բնավորությունից զուրկ, թույլ և զզվելի արարած է, որովհետև գավաճանում է իր ուխտին։

Ես ցույց տվեցի բարձր ուսում ստացած երիտասարդությունը որոշող երկու ընդհանուր գծերը։ Բայց գտնվում են և հզոր բնավորություններ։ Դրանք հերոսներ են, այսպիսիներին չէ կարելի չհարգել։ Դրանք աշխատում են ձեռք բերել մի պաշտոն, մի գործ այն մտքով միայն, որ ապահովեն իրանց անձը, որ հարստանան, և այն հարստությունով կարողանան իրագործել իրանց ազգօգուտ նպատակները։ «Եթե ես կունենամ տարեկան հինգ հազար ռուբլի ավելորդ եկամուտ,— ասում էր ինձ մի երիտասարդ,— այն ժամանակ կսկսեմ հայերեն մի ամսագիր հրատարակել»։ Բայց հայերեն ամսագիր հրատարակել նշանակում է՝ տարեկան 3—4 հազար ռուբլի դեֆիցիտ ծածկել։ Եվ նա կատարեց իր խոստումնքը, երբ պաշտոնի մեջ մտավ։ Այդ ամենահիմնավոր ձևն է հասարակական գործունեության։ Մեր ազգային գործերը պահանջում են մեծ զոհաբերություններ։ Աղքատ և անապահով վիճակի մեջ գտնվող երիտասարդները հազիվ թե կարող էին մի նշանավոր գործ կատարել։ Կամ պետք է ժառանգական հարստություն ունենալ, կամ պետք է մի կողմնակի պարապմունք գտնել, փող վաստակել, մի մասով ապրել, իսկ մնացածը ծախսել որևիցե հասարակական բարի նպատակի համար։ Որովհետև մեզանում ազգային պարապմունքները ոչ միայն նյութական շահ չեն բերում, այլ պետք է մի բան էլ իր գրպանից ծախսել, որ գործը առաջ գնա։ Այդ ես ցույց կտամ իր տեղում, երբ կխոսեմ Թիֆլիսի մեր գործիչների մասին։ Այժմ տեսնենք ինչ է շինում երիտասարդությունը մյուս ասպարեզներում։

Ինչ որ նկատեցի իմ հետազոտության նախընթաց գլխում ուսանողների կյանքի և աշխատասիրության մասին, հայտնելով այն միտքը, թե գավառացիները գերազանցում են բուն Թիֆլիսեցիներից—նույնը պետք է ասեմ և այժմ։ Եթե կտեսնեք Թիֆլիսում մի երիտասարդ, որ հետաքրքրվում էր ազգային և հասարակական գործերով, որ իր աշխատության մի մասը նվիրում էր նրանց—անպատճառ նա գավառից եկած պետք է լինի, կամ ինքը, կամ հայրը, կամ պապը։ Բուն Թիֆլիսեցին փչացած, այլանդակված և հրեշավոր արարած է, նրա համար հայ կամ հայի առաջադիմություն

կոչված բանը ցնորք է։ Նա ընկնում է միշտ երկու ծայրահեղությունների մեջ, կամ վազում է միայն «չինի» և փառքի ետևից, կամ համալսարանից վերադառնալով դարտակ գլխով և դարտակ սըրտով, լինում է իր հոր հարստության ցեցը, և սկսում է շռայլաբար վատնել այն բոլորը, ինչ որ ողորմելի հայրը դիզել էր իր հոգու, մարմնի և պատվի գնով։ Այդ վրացիացած ընտանիքների զավակները ոչ մի օրինավոր բան չեն արդյունաբերում։ Գավառացի երիտասարդը թե բարոյապես և թե մտավորապես բարձր լինելով, հենց որ ընկնում է Թիֆլիսում, սկսում է հրաշքներ գործել։ Թիֆլիսի հայոց նշանավոր խմբագիրները, վարժապետները, գրողները, բժիշկները, դատաստանական ծառայողները և մինչև անգամ խոշոր կապիտալիստները, բոլորը գավառացիներ են։ Թե կան մի քանի բուն թիֆլիսեցի գործիչներ, նրանց կարելի է մատներով համբարել։

Մի տասը տարի առաջ «չինովնիկությունը» և առհասարակ արքունական ծառայությունը Թիֆլիսի երիտասարդների համար իր ծաղկյալ մոդայի մեջն էր։ Բայց այն օրից, երբ հիմնվեցան բանկեր, երբ երկաթուղու ծայրը հասավ այս քաղաքին, բարձր ուսում ստացած երիտասարդությունը սկսեց որոնել ազատ պարապմունքներ։ Կարծես թե, ասենական տեղերի ճնշված օդը խեղդում լիներ նրանց։ Այժմ մի յուրիստ բարվոք է համարում ազատ փաստաբանությունը կամ նոտարիուսի կանտորան, քան թե նահանգական դատարանում լինել դիվանի անդամ։ Ֆինանսական ձեռնարկություններն ավելի հրապուրում են մեր երիտասարդներին. բանկերը լցված են նրանցով։ Ռեալական կյանքի ռեալական ոգին բաց է արել նրանց առջև մի նոր ասպարեզ։ Շատերը գնում են հողեր և անտառներ Թիֆլիսի շրջակայքում, կամ Վրաստանի կողմերում։ Ոմանք կառավարում են այլ և այն դրամատիրոջ կալվածները։ Ոմանք աքցիաների հետ են խաղում։ Իսկ շատերը, որոնք առաջ արհամարհում էին վաճառականությունը և կապալառությունը որպես ստոր պարապմունքներ, այժմ սկսել են նույն գործերով զբաղվել։ Ագենտուրան և կոմիսիոներությունը նույնպես ոչ սակավ գրավում են մեր երիտասարդներին։ Կան օրինակներ, որ համալսարանական երիտասարդը հիմնում է աղյուսի գործարան, կամ արտասահմանից բերել է տալիս տախտակներ սղոցելու մեքենաներ։ Այս տեսակ ձեռնարկությունների մեջ, կամ առհասարակ առանձին պարապմունքներով զբաղվողները լինում են խիստ գործունյա, ուրախ, զվարթ, նյութապես ապահովված, և երբեք չեն կորցնում իրանց

կենդանությունը։ Մինչդեռ արքունական ծառայողները գործի միակերպության մեջ վաղօրոք ծերանում են, բթամտանում են և մահը երբեմն ավելի շուտ է հասնում, մինչև նրանք կստանային պենսիա կամ ստատսկի սովետնիկի չին։

Մեծ հաջողություն են գտնում Թիֆլիսում բժիշկները, մանավանդ նրանք, որ ռուսաց համալսարաններում ավարտելուց հետո մի կամ երկու տարի անց են կացնում արտասահմանում։ Ոմանք քեֆի համար են գնում, իսկ ոմանք իսկապես մի բան սովորում են։ Բայց ժողովուրդը միշտ նշանակություն է տալիս Գերմանիա կամ Ֆրանսիա տեսած բժշկին, որպես արտասահմանի ապրանքին։ Ավելի դժբախտ են լինում այն ուսանողները, որոնք սովորել էին գյուղատնտեսական մասը՝ երկրագործություն, այգեգործություն, գինեգործություն և այլն։ Իրանք կապիտալ չունենալով սովորած մասնագիտությունն իրացնելու համար, մնում են անգործ։ Իսկ կալվածատերերը չեն հրավիրում նրանց, որովհետև կանոնավոր գյուղատնտեսությունը դեռ մուտք չէ գործել Կովկասում։

Ճշմարիտն ասած, շատ դժվարին է լրագրական հոդվածի մեջ ցույց տալ այն ընդարձակ աշխարհը, ուր զանազան ասպարեզներում գործում է մեր համալսարանական երիտասարդությունը։ Ես պետք է նկատեմ միայն ընդհանուր գծերը։ Այժմ մնում է մի քանի խոսք ասել այն երիտասարդների մասին, որոնք ավարտում են կամ կիսավարտ դուրս են գալիս զանազան գիմնազիաներից և միջնակարգ դպրոցներից, և համալսարան մտնելու միջոցներ չունենալով, մնում են Թիֆլիսում։ Դրանք լինում են ըստ մեծի մասին աղքատների որդիներ և դպրոցի նստարանները թողնելուց հետո, ստիպված են աշխատել օրական հացի համար։ Մեր վաճառականները նրանց չեն ընդունում գործակատարության մեջ, մտածում են, որ ուսյալներին չեն կարող հնազանդության մեջ պահել, որպես իրանց սովորությունն է։ Ուրիշ ոչինչ չէ մնում նրանց, բացի արքունական ծառայությունից, բացի վարժապետությունից մանր դպրոցներում, կամ անգործ թափառելուց։ Դրանք լինում են ավելի փառասերներ, քան համալսարանականները, ստոր պարապմունքների ձայաղ չեն անում։ Դեղին կոճակները և մունդիրը սաստիկ հրապուրում են նրանց։

Հիմա մտնենք մտավորական աշխարհը, տեսնենք, ինչ են շինում գրողները, ուսուցիչները, արտիստները, և առհասարակ այն երիտասարդությունը, որ ներկայացնում է Թիֆլիսի մեր ինտելիգենցիան։

Ես մի առանձին բավականություն եմ զգում, երբ այժմ պետք է նկարագրեմ կյանքն այն երիտասարդների, որոնք հանձն առնելով ամեն տեսակ զոհաբերություններ, որոնք համբերելով ամեն տեսակ հալածանքների, պատերազմում են արգելքների դեմ, գործում են, աշխատում են, թեև առանց խրախույս և մխիթարություն գըտնելու ամբոխից, բայց դարձյալ լի հավատքով կրկնում են—«ապագան մեզ է պատկանում»։ Այդ հուսը լցնում է նրանց սիրտը մի սրբազան հպարտությամբ, և իրանց աղքատության մեջ խիստ զըզվանքով նայում են մոտից անցնող բուրժուային, որ փառավոր կառքի մեջ նստած, թնդացնում է Քիֆլիսի փողոցները։

Առանձին ուշադրության արժանի է այն երիտասարդությունը, որ պտտվում է այս և այն խմբագրատան շուրջը։ Դրանք կազմում են տարբեր շրջաններ, որ որոշվում են իրանց հատուկ ավանդություններով։ Ես ոչ մի լրագրի ուղղությունը, լավ կամ վատ կողմերը քննադատելու նպատակ չունեմ։ Ես պիտի վեր առնեմ գործիչներին միայն։

Յուրաքանչյուր սերնդի համար քանի է ժամանակի մի որոշ շրջան։ Ես երբեք մոռանալ չեմ կարող 72 թվականը, երբ սկսվեցավ հրատարակվել «Մշակ» լրագիրը։ Ի՞նչ կյանք էր տիրում այն ժամանակ Քիֆլիսում, ի՞նչ դրության մեջ էր գավառների վիճակը։ Ամեն տեղ տիրում էր մի տեսակ անշարժություն, մի տեսակ թըմրություն, մի տեսակ մեռելություն։ Հանկարծ, կարծես մի դյութական գավազանի հարվածքից, զարթնեցավ կյանքը։ Ոչ ոք չէր հավատում, թե այսպես կարող էր լինել։ Հավատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ։ Ես հիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հավաքված խմբագրատան մեջ, կարդում էին, ծխում էին և վիճում էին։ Մեզանից շատերը հագներին շապիկ չունեին, մտնում էին այնտեղ բոլորովին պատատոտած կոշիկներով, այսուամենայնիվ, մենք ամենքս էլ ֆատալիստի հուսով հավատում էինք, թե կտիրապետենք մի մեծ ապագայի։

Սկզբում այս լրագրի շուրջը խմբվեցավ համալսարանական դիպլոմավոր երիտասարդությունը։ Բայց նրանք շուտով ցրվեցան. կարծես թե, գործը խորթ թվեցավ իրանց։ Նրանք չհավատացին այս լրագրի ճակատագրին։ Մնացին դիպլոմից զուրկ ինքնուսեները— ինքնակրթությամբ զարգացած մանկտին—անաջողություններից տակ ճնշված, ամեն տեղից հալածված, բայց դարձյալ իր

վեհությունը պահպանած մանկտին։ Ահա այդ ուժերը իրանց ուսերի վրա բարձրացրին «Մշակի» դրոշակը։

Հին «Մեղուն» այն ժամանակ նմանվում էր մի մաշված և ջարդված սայլակի, որին ճռնչելով քաշ է տալիս մի ուժաթափ ձի։ Սայլավարը բոլորովին հուսահատված, մոլորված, և կես ճանապարհի վրա կանգնած, մտածում էր. «Հիմա դեպի ո՞ր կողմը քշեմ»։ «Մշակից» բաժանված խումբն այս դրության մեջ գտավ մաշված սայլակը։ Նրան նորոգեցին, կարկատեցին և սկսեցին միևնույն ճանապարհով առաջ քշել...

Երիտասարդության աշխատանքը սուրբ է ինձ համար, որովհետև նոր կյանքի և նոր զորության արտահայտություն է։ Ես «Մեղուի» ուղղությունը քննադատելու նպատակ չունեմ. այստեղ նույնպես գործում են մանուկ ուժեր։ Բայց պետք էր ի նկատի առնել այն մեծ վերանորոգիչի խրատը, թե «նոր գինին պետք է նոր տիկի մեջ ածել. եթե տիկը հին է, կպատռվի, և գինին վիթվելով, կոչընչանա...»։

Թե ինչ կյանք էր տիրում «Մեղուի» խմբագրատան մեջ՝ այդ մասին ոչինչ ասել չեմ կարող, որովհետև նրա շրջանի մեջ երբեք չեմ գտնվել։ Բայց այսքանը հայտնի է, որ «Մեղուին» շրջապատում էր համալսարանական և ապրուստի կողմից փոքր ի շատե ապահովված երիտասարդությունը, որոնք չէին կրում կյանքի այն դաժանությունները, որոնց դեմ ստիպված էին պատերազմել «Մշակի» աշխատակիցները։

Եվ այսպես, համալսարանականները հեռանալով «Մշակից»՝ ասպարեզը մնաց ինքնուսներին։ Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատություն արեց, թե նա թողեց դպիրներին և փարիսեցիներին, և իրան շրջապատեց հասարակ ձկնորսներով—ժողովրդի չփչացած զավակներով։ Բայց պետք էր ցույց տալ հասարակությանը, թե այդ դիպլոմից զուրկ ուժերով կարելի էր կազմել մի նոր շկոլա։ Գործիչների առաջ դրած էին ահագին դժվարություններ ահագին պատրաստականությունների հետ։ Հողը միանգամայն խոպանացած էր։ Աշխատանքի բաժանություն չկար։ Ուզում եմ ասել, չկային ուրիշ օրգաններ, որոնց յուրաքանչյուրը հանձն առնելով մշակության մի ճյուղը, սկսեին աշխատել։ «Մեղուն» խիստ ծույլ գործակից էր, նոր բան արդյունաբերել չէր սիրում, իսկ «Արարատի», «Հայկական Աշխարհի» և «Դպրոցի» մասին խոսելն անգամ ավելորդ է։ Բայց հասարակությունը մտավոր սնունդ էր պահանջում։ Եվ այս պատճառով «Մշակը» ստիպված էր իր քեր-

քերը բեռնավորել ամեն տեսակ նյութերով։ Պուբլիցիստիկան և բելետրիստիկան ձեռք ձեռքի տված էին ընթանում։ Վիպասանը նկարում էր պատկերներ ժողովրդի կյանքից, ցույց տալով նրա տգեղ այլանդակությունները։ Տնտեսագետը հարվածում էր անխիղճ վաշխառուի և հարստահարիչ կապիտալիստի հարաբերությունները մշակ դասի հետ։ Մորալիստը խորտակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի հոգու վրա, և մատուցանում էր բարոյական նոր սնունդ։ Առողջ խոսքը բխում էր կենդանի աղբյուրից և տարածում էր դեպի ամեն կողմ նոր մտքեր։ Կրիտիկական ոգին գործում էր իր անխնա անգթությամբ։ Նա մրտնում էր հեղինակի կաբինետը, վաճառականի խանութը, արհեստավորի գործարանը, ծառայողի ատյանը, գյուղացու խրճիթը, մեծատան սալոնը, վարժապետի դպրոցը, կղերի մեննարանը—մի խոսքով, կյանքի բոլոր ծալքերում պտրտվում էր նա, և խավարի միջից դուրս էր քաշում ինչ որ անարժան էր։ Այդ բոլորը գործվում էր այն շկոլայի մեջ, որ հիմնեց «Մշակը», ուր երիտասարդությունը ուսանում էր և ուսուցանում էր։

Ես երբեք չեմ կարող մոռանալ այն աղմկալի ժողովները, որ կազմվում էին այդ լրագրի խմբագրատան մեջ մի քանի տարի առաջ։ Եթե ես ունեցել եմ իմ կյանքում մի քանի ոսկի րոպեներ—դրանք պատկանում են այն ժամանակին։ Ժողովների մեջ ոգևորված և բորբոքված վիճաբանությունները տևում էին շատ անգամ մինչև գիշերվա ժամի երկուսը։ Փոքրիկ, բոլոր նյութական միջոցներից զուրկ, բայց բարոյապես հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրոեկտներ։ Այդ դոնքիշոտությունը, երևակայության այդ տենդագին բորբոքումը, թեև մասամբ ծիծաղելի էր, բայց գեղեցիկ էր, որպես մանուկի ժպիտը, որ արտահայտություն է նոր սկսվող կյանքի։ Իդեաների խորին արբեցության մեջ, ամեն մի երիտասարդ մոռանում էր իր վիճակի դժբաղությունը, և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրության մասին։ Կես-գիշերից հետո նիստը վերջանում էր։ Խումբը ցրիվ էր գալիս բուլվարների վրա, երբ բոլոր հյուրանոցները փակված էին լինում։ Բայց դարձյալ խուլ և անապատացած փողոցների մեջ շարունակվում էր ընդհատված վիճաբանությունը։ Այն ժամին, երբ բախտավոր Ֆիֆիսեցին հանգստանում էր իր փառավոր քնարանի մեջ, մեր կիսամերկ շրջմոլիկները, Գոլովինսկի պրոսպեկտի սալերը դղրդելով, քննադատում էին մի նշանավոր հասարակական հարց։ Ջյունը, անձրևը, սառը քամին չէր քշում նրանց դեպի իրանց ողորմելի բնակարանները.

այլ ավելի զովացնում էր և ավելի կազդուրում էր տաքացած գլուխները։ Նրանք բաժանվում էին միմյանցից, երբ զարկում էր առավոտյան զանգակը. այն ժամանակ գնում էին հանգստանալու, որ մյուս օրը նոր ուժով սկսեն աշխատել։

Եթե ընդունենք այն ընդհանուր պայմանը, թե յուրաքանչյուր 25 տարուց հետո ամեն մի երկրի երիտասարդությունը փոխվում է, այն ժամանակ 58 և 72 թվականները խորհրդավոր նշանակություն կստանան մեզ համար։ Երկու որոշ ժամանակամիջոցներ ներկայացնում են երկու որոշ երիտասարդություն, մեկը իդեալական, մյուսը ռեալական։ Առաջինը ծնունդ է «Հյուսիսափայլի», իսկ երկրորդը ծնունդ է «Մշակի»։ Ես հիշում եմ երկու պերիոդներն էլ, որովհետև երկուսի մեջ էլ գործել եմ. «Հյուսիսափայլի» ժամանակ հայտնվեցան բանաստեղծներ, իսկ «Մշակի» ժամանակ պուբլիցիստներ։ Բացառությունները շատ աննշան են։ Եթե վեր առնենք մեր այժմյան փոքր ի շատե աչքի ընկնող, կամ մանր-մունր գրողներին, կտեսնենք, որ բոլորը «Հյուսիսափայլի» ժամանակից մնացորդներ են։ Նոր տաղանդներ չհայտնվեցան։ Նվ այս պատճառով, թեև լրագրությունը ծաղկեց «Մշակից» հետո, բայց գրականության դաշտը մնաց անապատ։

Հիշյալ երևույթի պատճառը կարելի է հեշտ կերպով բացատրել։ Անհերքելի է, որ մեր մտավոր զարգացման և ուսների մեջ կա մի ներքին կապ։ 40—60 թվականները տվեցին Ռուսաստանին իր ամենաերևելի գրողներին։ Նրանից հետո տիրեց թմրություն։ Նույնը պատահեց և մեզ հետ։ Համարյա միևնույն ժամանակներում լույս տեսավ «Հյուսիսափայլը» և ներկայացրեց մի ամբողջ շարք գրողներ։ Իսկ նրանից հետո նոր քանքարներ չհայտնվեցան։

Երբ հսկաներ չեն հայտնվում, ասպարեզը մնում է գաճաճներին։ Սիծաղելի էր տեսնել, որ վերջին տարիներում յուրաքանչյուր համբակ ձգտում էր բանաստեղծ և մատենագիր լինել։ Թխտ կրիտիկայի բացակայությունն ավելի լրացրեց այդ խենթերին։ Չպատրաստված և անտաղանդ գրողներն ավելի անհամեստ և ավելի հանդուգն են լինում։ Կարելի է իսկույն նկատել, թե որպես քիթը վեր քաշած և որպես հպարտությամբ թիֆլիսի փողոցներով անցնում է մի իմաստակ, որի մի քանի նամակները տպվել էին այս և այն լրագրում, կամ հրատարակել էր մի հիմար բրոշյուր։ Վիկտոր Հյուգոն իր փառքի բարձրության վրա ավելի համեստ է, քան թե այս տեսակ խենթերը։ Առհասարակ ամեն ազգի մեջ սկզբում հայտնվում են խոշոր տաղանդներ և ձգում են իրանց ետևից բազմաթիվ

հետևողների։ Իսկ մեր մեջ մի Աբովյան հայտնվեցավ, որի գիրքը, թեև տենդենցիայով հարուստ, բայց լեզվի կողմից ճապաղ, և գեղարվեստական արժանավորություններից թուլլ մի ստեղծագործություն է։ Այդ հեղինակությունն ունեցավ մի քանի անշնորհք հետևողներ։ Ես հարկ չեմ համարում ցույց տալ օրինակները։

Բայց պետք է արտաքին հանգամանքները նույնպես նպաստեին նոր գրողների հայտնվելուն։ Առհասարակ գրականական երիտասարդությունն աղքատ է լինում։ Քաղցածությունը, թեև մի կողմից զորություն է տալիս տաղանդին, բայց մյուս կողմից կարող է սպանել նրան։ Ոչ բոլոր բնավորությունները լինում են տոկուն։ Թեև պատահում են ճշմարիտ երկաթի բնավորություններ։ Ես ճանաչում եմ մեկին, որ ամեն տարի գրում է մի կամ երկու վեպ և համառությամբ փակում է իր գրասեղանի արկղիկի մեջ։ Բայց նա շատ անգամ օրական ծխելու պապիրոսի փող չունի։ Մի օրինավոր ամսագիր կարող էր նպաստել նոր ծնվող ուժերի զարգանալուն։ Եվ այս պատճառով «Փորձի» հրատարակությունը սկզբում ուրախությամբ ողջունվեցավ մեր ամենի կողմից, մանավանդ, որ այդ ամսագրի խմբագիրն առաջին օրինակը եղավ, որ սկսեց վարձատրել իր աշխատակիցներին։ Բայց ապասված հուսը չպսակվեցավ։ Որովհետև «Փորձի» խմբագրատան մեջ հավաքվեցան միևնույն հին ուժերը—թարգմանիչները, կոմպիլատորները, արխիոլոգները, մաշված թեմաները նորից ծամծմող վիպասանները, ավերակների արձանագրություններ արտագրող և գերեզմանատների մեջ թափառող, բայց կենդանի մարդիկ չտեսնող ճանապարհորդները, իսկ ինքնուրույն բաներ գրողները, կենդանի նյութերի մասին գրողները խիստ սակավ մտան այդ ամսագրի խմբագրատան մեջ։ Եվ այս է պատճառը, որ «Փորձը» ներկայացնում է կատարելապես մասխալյանի խանութը, այսինքն՝ մի մագազին, ուր վաճառվում են գլխավորապես մաշված հնոտիներ մի քանի թարմ ապրանքների հետ։ Կարծես թե, այս ամսագիրը մի ապսպրած (заказной) հրատարակություն լիներ, որի ուղղությանը, երևի, ինքը խմբագիրն էլ չէ հավատում...

Ես ցույց տվեցի Թիֆլիսի մեր ինտելիգենցիային պատկանող երիտասարդության երեք զանազան խմբերը, որոնք շրջապատում են երեք հիմնարկությունների՝ «Մշակի», «Մեղուի» և «Փորձի» խմբագրատները։ Դրանք ձևացնում են երեք տարբեր կուսակցություններ, որոնց դիտավորությունն իսկապես միևնույնն է, բայց զանազանությունը նրա մեջն է միայն, որ յուրաքանչյուրը այլ և այլ

հանապարհով, այլ և այլ ուղղությամբ է դիմում իր նպատակին։ Իսկ ո՞ր ճանապարհն ավելի ուղիղ է, ո՞րն ավելի շուտ կհասցնե— այդ ցույց կտա մերձավոր ապագան։ Այսուամենայնիվ, այդ երեք խմբերը, լավ թե վատ, գործում են, աշխատում են, և այդ իսկ պատճառով հարգելի են։

Բայց կա մի ուրիշ խումբ ևս, որ հիշյալ երեք կուսակցություններից ոչ մեկին չէ պատկանում։ Այդ խումբը ոչինչ չէ շինում, միայն մեջտեղում անգործ պտրտվում է, խոսում է, բամբասում է, զևզեկություններ է անում և ինտրիգաններ է սարքում։ Ում պատահել է կարդալ Ալֆոնս Դոդեի վերջին րոմանը, (Jacques), խիստ ճիշտ գաղափար կարող է ստանալ հիշյալ խմբի մասին։ Այդ րոմանի մեջ կա մի տիպ Դարժանտոն անունով, որն իրան երևակայում է երևելի բանաստեղծ։ Նրա գլխում լցված են հարյուրավոր գրքերի վերնագրներ, որոնց նա մի ժամանակ պետք է գրե։ Միայն սպասում է իր մուզային, սպասում է ոգևորության։ Այդ ոգևորությունը նրա կարծիքով կարող է տիրել իրան, երբ ինքը կբնակվի մի շքեղ տան մեջ, շրջապատված գեղեցիկ պարտեզով և ծաղիկներով, նազելի սիրուհու կողքին, և աչքի առջև կունենա բնության հրաշալի տեսարանները։ Այդ բոլորը սարքում է նա, բայց մուզան դարձյալ չէ հայտնվում։ Նրա իդեաները, նրա սյուժետները գողանում են։ Լույս է տեսնում մի գիրք, մի հոդված, Դարժանտոնը բարկանում է, թե դա գրականական գողություն է, թե այն նյութն ինքը վաղուց գլխումը ուներ և մտածում էր գրել։ Դարժանտոնը շրջապատել է իրան մի քանի անաջողակներով (неудачники), որոնք նույնպես մեծ կարծիք ունեն իրանց հանճարի վրա, և ճաշեր են ուտում բանաստեղծի մոտ, շողոքորթում են նրա տաղանդը, և վճռում են ամբողջ մարդկության ճակատագիրը։ Վերջապես, Դարժանտոնը մտածում է մի թերթ հրատարակել և միանգամով ոչնչացնել Փարիզի բոլոր պարբերական հրատարակությունները։ Նրա բարեկամ անաջողակները խոստանում են աշխատակցել և միլիոններ վաստակելու հաշիվ են տեսնում։ Դարժանտոնը մի տեղից փող է գըտնում և սկսում է հրատարակությունը։ Խմբագրատան հիմնական դրամագլուխը մտնում է նրա անաջողակ աշխատակիցների քսակը, իսկ ինքը ստանում է երկու բաժանորդներ միայն, մեկն՝ իր սիրուհին, մյուսն՝ իր սիրուհու նախկին սիրողը։ Դարժանտոնն այսքանը գոնե կատարեց, բայց Թիֆլիսի մեր Դարժանտոնները դեռ մտածում են...

Ամեն մի պերիոդ երիտասարդության կյանքի նշանավոր է լի-

նում մի առանձին գործունեությամբ։ Մեր գրական երիտասարդությունն այժմ զոհաբերության պերիոդի մեջն է գտնվում։ Եվ այս պատճառով մեր բոլոր կրթողական հիմնարկությունները, որպես են՝ լրագիր, ամսագիր, թատրոն, դպրոց, և այլն, պահպանվում են զոհաբերություններով։ Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձին։

Մինչդեռ ուրիշ ազգերի մեջ լրագրապետները հարստանում են, և աշխատակիցներն ահագին փողեր են ստանում, մեր խմբագրները ոչ միայն չեն շահվում, այլ իրանց քսակից ամեն տարի մի քանի հազար ռուբլի վնաս են կրում։ Այդ մեծ զոհաբերություն է։ Ժողովուրդը չէ նպաստում գործին։ Ամենահաջողված պարբերական հրատարակությունը հազիվ տարեկան 1000 բաժանորդ է ստանում, իսկ անաջողները 3—4 հարյուր։ Նույնը կարելի է ասել և գրքերի մասին։ Ուրիշ ազգերի մեջ մի բանաստեղծ մի լավ րոման գրելով, իր ամբողջ կյանքն ապահովացնում է։ Իսկ մեր մեջ բախտավոր պետք է համարել հեղինակին, եթե կարողանա տպագրության ծախսը դուրս բերել։ Եվ այս պատճառով գրականական ասպարեզը մեր երիտասարդության համար մի փշոտ ասպարեզ է։ Նրանց պետք է ժամանակի նահատակներ համարել։ Ապագան կգնահատե նրանց, կամ կաստվածացնե, այդ ուրիշ խնդիր է, իսկ ներկան հաց է պահանջում։ Իդեալական սերը ոչ ամեն ժամանակ կարող է օժանդակել գրողներին հարատևելու իրանց պարապմունքի մեջ, երբ որ այդ պարապմունքն ապրուստի միջոց չէ տալիս։ Այդ պարագաները փոքր պատճառներ չեն, որ մեզանում գրողներ կամ իսպառ չեն հայտնվում, կամ եղածներն առաջադիմություն չեն գործում։

Մենք չէինք ունենա մեր այժմյան պարբերական հրատարակությունները, եթե նրանց խմբագրները նյութապես ապահովված անձինք լինեին։ Այդ մեծ բախտ է, որ հարուստները ձեռնարկում են այս տեսակ գործերի, և կարող են ամեն տարի մի քանի հազար ռուբլի զոհել իրանց գաղափարին։ Բայց մինչև ե՞րբ։ Ընդունում են, որ մի ժողովրդի մեջ, որպես մերն է, այս տեսակ ձեռնարկությունները սկզբում պետք է զոհաբերությամբ հիմնված լինեին։ Բայց այդ անում է մի ընկերություն, և ոչ մասնավոր անձինք։ Այդ կետից նայելով, մեր խմբագիրների աշխատությունը պետք է բոլորովին բացառական երևույթ համարել։ Բավական չէ, որ նրանք զոհում են իրանց արծաթը, այլ զոհում են իրանց հանգստությունը, առողջությունը և վերջապես բախտը. գուցե ուրիշ ասպարեզներում նրանք ավելի երջանիկ կլինեին։ Ես ինձ շատ փոքր ծանոթ եմ մեր խմբագրների մասնավոր կյանքին, բայց դարձյալ գիտեմ, թե ինչ

տաժանական աշխատություն են կրում նրանք, գործի մեծ մասն իրանց ձեռքով կատարելով։ Խմբագիրը պետք է ինքն ուղղե գավառներից եկած թղթակցությունները և հոդվածները. պետք է շատ անգամ մինչև գիշերվա ժամի 3-ը տպարանում աշխատե, սրբագրե և տուն վերադառնալուց հետո պետք է դարձյալ չքնե, այլ նստած, պետք է մյուս համարի համար հոդվածներ պատրաստե։ Առավոտյան 9 ժամին դարձյալ կարելի է տեսնել նրան գրասեղանի մոտ, հասցներ է գրում, որ նոր դուրս եկած համարը փոստից հետ չմնա։ Այդ բոլոր մտավոր և մեքենական աշխատությունները, որ սարսափելի կերպով մաշում են մարդու կյանքը, կատարում են մեր խմբագիրները, առանց որևիցե նյութական շահ ունենալու, միայն բարոյապես վարձատրվելու հուսով, որից դարձյալ զրկում է նրանց հասարակությունը։ Այլևս չեմ խոսում աշխատակիցների մասին, որոնց զոհաբերությունները նույնպես ոչ սակավ համակրության արժանի են։

Հիմա դառնանք դեպի արտիստական երիտասարդությունը, դեպի թատրոնը։

Ինձ պատահել է կարդալ Փիֆլիսի հայոց բեմի վերաբերությամբ մի թատրոնական ժամանակագրություն միայն, որքան հիշում եմ, նա գործողությունների պատմական մի հավաքածու էր, բայց ոչ երիտասարդ արտիստների կյանքի նկարագիր։ Այսուամենայնիվ, այդ աշխատությունն ինձ վրա խիստ տխուր տպավորություն թողեց։ Անհնարին է երևակայել, թե որքան դժվարություններ դեմ մաքառելով, մեր դերասանները կարողացել են պահպանել հայոց բեմը։ Նրանք ստիպված էին պատերազմել ժողովրդի նախապաշարմունքի դեմ, որ դերասանի վրա նայում է որպես մի «օինբազի» վրա, և ոչ որպես կրթության սպասավորի վրա։ Նրանք ստիպված էին պատերազմել քաղցածության դեմ, որովհետև այդ արհեստը հաց չէր տալիս։ Եվ վերջապես ստիպված էին պատերազմել ուրիշ զանազան ճնշումների դեմ, որոնք մեծ խոչընդոտներ էին դնում գործի առաջադիմությանը։ Այդ բոլոր զոհաբերությունների մեջ քաջալերում էր, ոգևորում էր նրանց բեմի դաղափարը։ Ինչպես լրագրությունը կամ օրագրությունը սկսվեցավ և հաջողվեցավ միայն սիրողների ձեռքով, այնպես էլ հայոց բեմը պահպանվեցավ սիրողների ջանքերով։ Դերասանական խումբ իսկապես մենք չենք ունեցել։ Բայց ասելով սիրողներ, պետք չէ հասկանալ պատահական ներկայացնողներ, որոնք մի կամ երկու անգամ զվարճության համար բեմ էին դուրս եկել։ Մեր սիրողների մի կազմակերպված

խումբ էին և որոշվում էին հասարակ դերասանից նրանով միայն, որ վարձկաններ չէին, այլ բարոյապես համակրում էին բեմի արհեստին։ Նրանց առաջնորդում էր բեմի կրթողական նշանակությունը և ոչ անձնական շահը, որ այնքան չնչին էր, մինչ հիշելն անգամ ավելորդ է։ Ով պետք էր երկաթի տոկունություն ունենալ մի այսպիսի գործ երկար տարիներ առաջ տանելու համար։ Այս պատճառով, թեև հայտնվեցան տաղանդներ, բայց տվեցին և գոհեր[1]...

Ոչ սակավ ուշադրության արժանի է բեմական գրողների վիճակը։ Նրանք գրում էին պիեսներ և միևնույն ժամանակ ստիպված էին պահպանել կամ մի կերպով հովանավորել դերասանների խումբին, որ նրանց ամբողջությունը չխանգարվեր, որպեսզի խաղացվեին իրանց ստեղծագործությունները։ Այսպիսի մի աշխատություն հանձն էր առել Մոլիերը, բայց նա շահվում էր իր ձեռնարկությունից։ Իսկ մեր հեղինակներն իրանց քսակից ծախսում էին, որ տեսնեն բեմի վրա իրանց նկարած տիպերին։ Այդ բավական չէ, նրանք շատ անգամ ռեժիսյորի պաշտոն էին կատարում, տոմսակներ էին ծախում, մի խոսքով, ամեն հնարք գործ էին դնում, որ դերասանները շահվեն։ Այդ բոլորն այժմ մեր աչքին խիստ հասարակ բաներ են երևում։ Բայց կգան օրեր, երբ վերջապես հայոց բեմական գրողը կստանա հազարներ իր հեղինակության համար։ Այն ժամանակ երկու անուններ միշտ անմոռաց կմնան հայոց թատրոնի ժամանակագրության մեջ, թե որպես հիմնողներ, թե որպես պիեսների ստեղծագործող տաղանդներ։

Նույն երևույթները, ինչ որ տեսանք լրագրության, գրականության և թատրոնի մեջ, կտեսնենք նաև դպրոցների վերաբերությամբ։ Ռուսաստանի մեր բոլոր նշանավոր դպրոցները, սկսյալ Լազարյան, Ներսիսյան դպրոցներից, մինչև էջմիածնի ճեմարանը և Ախալցխայի ծխական դպրոցները, հիմնված են կամ մասնավոր անձերի կտակներով, կամ ժողովրդի նվերներով։ Դարձյալ զոհաբերություն, դարձյալ սիրողներ։ Բայց այդ բոլոր նվիրված հազարավոր ռուբլիներն ինձ այնքան չեն գրավում, որքան գրավում է ինձ օրվա մեջ մի կամ երկու ժամ ձրի դասատվությունը մի երիտասարդի, որ զոհում է նա իր քանկ ժամանակից այս և այն օրհոր-

[1] Ես այժմյան թատրոնական կոմիտեի գործունեության մասին խոսել հարկ չեմ համարում, որովհետև դեռ հայտնի չէ, թե վախճանն ինչ կլինի։ Միայն այսքանը կարելի է նկատել, որ առաջ դերասաններին թողնում էին քաղցած մեռնել, իսկ այժմյանների գլխին ոսկիներ են թափում։ Երկու ծայրահեղություններ, որ չափազանցության են հասնում։

դաց դպրոցի օգտին։ Եթե մեր երիտասարդությունն ունի գովելի հատկություններ, ամենագլխավորներից մեկը այդ է։ Տեսնում ես, մի երիտասարդ որևէ ծառայության մեջ, հազիվ քաշ է տալիս իր ապրուստը, կեսօրվա ժամը երկուսին դառնում է տուն, շուտով ճաշում է, և իսկույն վազ է տալիս այս և այն օրիորդաց դպրոցը ձրի դասատվության անելու։ Նա այնքան ճիշտ է, որ մի րոպե հետ չէ մնում իր դասից։ Եվ այս տեսակ դպրոցները, որ հիմնվեցան և պահպանվում են երիտասարդների զոհաբերություններով, ամենածաղկյալ դպրոցներն են Թիֆլիսում։ Մինչդեռ մյուսների մեջ, ուր վարժապետներին վճարում են, անճշտություններ, անկարգություններ շատ անգամ անպակաս են լինում։ Առհասարակ խոսելով, վերջին տասը տարվա ընթացքում մեր երիտասարդությունն ուսման և կրթության վերաբերությամբ հրաշք գործեց։ Դպրոցների կազմակերպության մեջ մտան նշանավոր փոփոխություններ։ Մանկավարժական նոր ձևեր, նոր եղանակներ, նոր դասագրքեր մուտք գործեցին նրանց մեջ։ Իհարկե, այդ բոլորը, որպես առաջին և երկրորդ քայլ, չէր կարող կատարյալ լինել, բայց խոստանում է մեծ ապագա։

Բոլոր այդ գործող երիտասարդությունը, թե լրագրության մեջ, թե գրականության մեջ, թե թատրոնի մեջ և թե դպրոցների մեջ, համարյա միևնույն անձինք են, որ կոչվում են ընդհանուր անունով ազգասերներ, թեև իրանց մեջ մի առանձին սեր չունեն։ Դրանք բաժանված են զանազան խմբերի և ընկերակցությունների, որոնց յուրաքանչյուրն ունի իր պարագլուխը։ Այդ մեծ ցավ չէ, որովհետև այս տեսակ բաժանմունքները կարող են ծնեցնել եռանդ և բարի նախանձ։ Բայց ցավալին այն է, որ գործիչների թիվը շատ փոքր է, թեև պետք է մտածել, որ մի բուռն, անձնանվեր երիտասարդներ կարող են կենդանացնել մի ամբողջ աշխարհ։

Ես պահեցի վերջի համար երիտասարդության մի քանի դասեր, որոնք կազմում են հիմնական կապիտալը մեր ժողովրդի ապագա բարօրության։ Իմ խոսքը գործակատարների (պրիկազչիկների), արհեստավորների և մշակների մասին է։

Մի փոքրիկ հայացք ձգենք, թե ինչ վիճակի մեջ էր վաճառականությունը Թիֆլիսում 15—20 տարի առաջ։ Վաճառականը որոնում էր մեկին խորշեր իր ապրանքները ծախելու համար. խանութի նեղ լուսամուտները ծածկում էր նա թափանցիկ կտավով կամ փոքրիկ ապակիները ներկում էր կարմիր գույնով։ Խավարի մեջ նրա կարծիքով ավելի լավ էր երևում ապրանքը և ավելի հեշտ կարելի

էր խաբել «մուշտարուն»։ Պարսկական ճաշակով շինված հին քարվանսարաները բոլորովին համապատասխանում էին վաճառականների այդ կարևորությանը։ Հիմա էլ կարելի է տեսնել այն տեսակ խանութներ բաղնիքների կողմի քարվանսարաներում կամ հին բազախանայում (тёмный ряд)։ Յուրաքանչյուր քարվանսարա, որպես կենտրոն մի խումբ վաճառականների, ուներ իր առանձին ուստաբաշին կամ թաչիր բաշին, այսինքն վաճառականների գլխավորին։ Նա վճռում էր առևտրականների մեջ ծագած վեճերը, և՛ քն պաշտոնական, թե բարոյական ազդեցություն ուներ նրանց վրա։ Վճիռները լինում էին բերանացի, առանց որևիցեատեստագրության։ Բայց առաջին վաճառականական դատարանի (коммерческий суд) բացվելուց հետո, որ տևեց միայն մի քանի տարի, թաչիրբաշիների ազդեցությունը թուլացավ, թեև մինչև այսօր հին վաճառականները մի առանձին ափսոսանքով են հիշում վաղեմի դրությունը, ասելով, թե այն ժամանակ ավելի լավ էր, գործերը շուտ էին վճռվում։

Բայց այն օրից, երբ հին քարվանսարաներն իրանց նշանակությունը կորցրին և փողոցների վրա հայտնվեցան եվրոպական ձևով մագազիններ, վաճառականների կյանքի մեջ մի նոր փոփոխություն առաջ եկավ։ Ասիական դուքանը եվրոպական մագազին դառնալով, Թիֆլիսի վաճառականն էլ չուխան, արխալուղը և մորթե գդակը փոխեց, սյուրթուկ, ժիլետ հագավ, շլյապա կրեց, և սկրսեց եվրոպացու նման առևտուր անել, թեև բուն գործողության մեջ չփոխվեցան վաղեմի ձևերը։ Այսուամենայնիվ, դա մի մեծ քայլ էր դեպի առաջադիմություն։ Թիֆլիսում մի ժամանակ մատով էին ցույց տալիս այն վաճառականին, որ մի անգամ ոտքը դուրս էր դրել Ռուսաստանի սահմանից։ Իսկ այժմ Փարիզ, Մարսել, Վիեննա, Լայպցիկ, Լոնդոն, Մանչեստեր, Մոսկվա և Նիժնի-Նովգորոդ քաղաքներն ամենքս սովորական են դարձել Թիֆլիսեցու համար, որպես Մուշտեհդի այգին։ Եվ այդ փոփոխությունները եղան զարմանալի արագությամբ, մի 10—15 տարվա ընթացքում։

Բայց հին սովորությունները, որպես հիշեցի, իսպառ չկորցրին իրանց հետքերը։ Ես չեմ խոսում վաճառականների բեթեև բարոյականության, անկանոն հաշվապահության և ուրիշ անկարգությունների մասին։ Միայն կասեմ, ինչ որ վերաբերում է երիտասարդ գործակատարներին։ Առհասարակ Թիֆլիսեցի վաճառականը խիստ դժվարությամբ է ընդունում իր խանութում մի արդեն վարժված և պատրաստված գործակատար (պրիկազչիկ), որ թողել էր իր ծա-

ապրուիյունը և ուրիշ տեղ էր որոնում։ Այսպիսիներին շատ չեն հավատում. «Եթե լավ լիներ, իր խազէինը ձեռքից բաց չէր թողնի», մտածում են նրանք։ Եվ այս պատճառով մեր առևտրական աշխարհում չկա գործակատարների մի առանձին դաս, որ ազատ լինեին իրանց գործունեության մեջ և ցանկացած մարդու մոտ ծառայություն ընդունեին։ Համարյա բոլոր խանութներում դեռ պահպանվում է հին սովորությունը, վեր առնել փոքրիկ աշակերտներ, որոնք սովորելով, վերջը գործակատարներ են դառնում։ Դժվար է նկարագրել, թե որքան տանջանքների պետք է համբերե ողորմելի աշակերտը և որքան տարիներ պետք է ձրի ծառայե, մինչև կարողանա գործակատարության աստիճանի հասնել։ Դա մի ամբողջ կուրս է, որ նա պետք է անց կենա սարսափելի տոկունությամբ։ Առհասարակ այսպես է լինում, աշակերտությունից նա դառնում է իր «խազէինի» գործակատարը, ոռճիկ է ստանում, հետո փոքրիկ գումարի տեր դառնալով, իր համար առանձին առևտուր է սկսում։ Թիֆլիսի բոլոր նշանավոր վաճառականները սկսել են աշակերտությունից։ Նրանք առաջ եղել են աղքատ աշակերտներ։

Խանութի աշակերտն ամբողջ օրը մեքենայի նման պտրտվում է, մի րոպե հանգստություն չունի, նստել չէ կարող, ուտում է ոտքի վրա։ Երբեմն նրան կտեսնենք խանութից դուրս, քաշված մի անկյունում, նիրհում է։ Որքան քաղցր են հանգստության այն մի քանի րոպեները, որ նա գողանում է իր վարպետի զգույշ հսկողությունից։ Շատ ապտակը զարթեցնում է նրան, և նա արտասուքը սրբելով, կրկին ներս է վազում աշխատելու։ Աշակերտն ավելի բախտավոր կլիներ, եթե չտիպեին կատարել, բացի խանութից, և «խազէինի» տան սպասավորություններ։ Աղչիկ պարոնի ապսպրանքները անտիկ հոգնեցնում են նրան։ Կիրակի օրերը նա ազատ է։ Այսօր գործում է իր համար։ «Русский базар» կոչված տոնավաճառանոցում փոքրիկ աշակերտը ծախում է զանազան իրեղենները։ Նա ընկերացել է իր նման մի ուրիշ աշակերտի հետ, և տարվա ընթացքում խնայած կոպեկներով, որ գումարվել էր նրանց տաւացած «շաֆիրդանաներից», կազմել են մի փոքրիկ կապիտալ։ Սեղանի վրա դարսած է նրանց վաճառքը — զանազան տեսակ սապոններ, սաներ, թաշկինակներ, գուլպաներ, և ուրիշ այս տեսակ իրեղեններ։ Աղմկալի ձայներով գնողներ են հրավիրում և վաճառում են։ Այդ հիմքն է նրանց ապագա մեծ գործունեության։

Որպես խանութի մեջ ոտքի վրա սովորում է աշակերտն առևտրի եղանակները, որպես ծանոթանում է ապրանքների հետ,

այնպես էլ ռադի վրա ծանոթանում է նա տառերի հետ և սովորում է գրել-կարդալ։ Նրա վարժապետը լինում է իրանից մեծ աշակերտը։ Տառերի գործածության մեջ, իհարկե, հետզհետե վարժվում է նա, բայց դարձյալ մնում է անգրագետ։ Բացառություն պետք է համարել այն աշակերտները, որոնք որևիցե ծխական դպրոցում ավարտելուց հետո խանութ մտնեին։ Մեծամասնության շկոլան լինում է խանութը. այստեղ ստանում են նրանք իրանց մտավոր և բարոյական կրթությունը, որ շատ նախանձելի չէ կարելի համարել։ Մեծ բարերարություն կլիներ վաճառականական մանուկ սերնդին, եթե նրանց համար կկազմվեին առանձին լսարաններ, ուր շաբաթը մի կամ երկու անգամ հաճախելով, նրանք կսովորեին լեզուներ, և կվարժվեին գրագիտության մեջ։

Աշակերտը 10—12 տարեկան հասակում մտնելով մի խանութ, հաղիվ թե 7 տարուց հետո դառնում է գործակատար։ Երբ նրան ամեն կողմից հավատարիմ են գտնում, այնուհետև հանձնում են գործեր, և երբեմն ուրիշ քաղաքներ են ուղարկում ապրանքներ գնելու համար։ Բայց հավատարմությունը վաճառականների կարծիքով պետք է ուրիշ մտքով հասկանալ։ Այն գործակատարը հավատարիմ էր, որ կատարում էր իր «խազեինի» բոլոր պատվերները, թեև նրանք շատ հեռու լինեին բարոյական հատկություններից։ Բայց ինչ որ հետաքրքրական է գործակատարների ձգտումների մեջ, դա է նրանց սաստիկ ցանկությունն ազատ լինել և իր համար առանձին գործ սկսել։ Նրանք խիստ ուշ են ամուսնանում, սպասում են մինչև խանութի տեր դառնային, փող վաստակեին, որ լավ աղջկա հետ պսակվեին։ Ուզում եմ ասել, որ հարուստ աղջիկ առնեին։

Գործակատարների կյանքը սաստիկ անվայելուչ կողմեր է ներկայացնում։ Ցերեկը նրանք խանութից հեռանալ չեն կարող, առավոտյան ժամը ութից մինչև գիշերվա ժամը 12-ը զբաղված են մուշտարիներով։ Կերակրվում են աղայի սեղանի փշրանքներով որ բերել էին նրա համար տնից։ Բայց մանուկ սիրտը զվարճություն է պահանջում, և գիշերը նրանք չգիտեն, թե ինչպես պետք էր անցկացնել։ Գործակատարների կլուբը դեռ նոր է բացվել. դա կարող էր ազատել նրանց քաղաքի անարգ փողոցներում թափառելուց կամ Մուշտեիդի այգիում փողեր ծախսելուց։ Կաֆե, ռեստորան. այսպիսի տեղեր չեն մտնում նրանք, որ աչքի չերևային, որ իրանց կեղծ համեստության վերաբերությամբ «խազեինի» մոտ իրանց վարկը չկոտրեին։ Պտրում են մեքին և անհայտ տեղեր, ուր կարելի էր ազատ կերպով քեֆ անել։ Համարյա բոլոր փոքր ի շատե մեծ առև-

տրական տների գործակատարները ծածուկ սիրուհիներ են պահում, որոնց համար վարձում են առանձին սենյակներ, և նրանց ապրուստի համար նշանակում են ամսական ռոճիկ, երբեմն ավելի, քան թե իրանք էին ստանում։ Որպես գործակատարները կողոպտում են իրանց «խազեիններին», այնպես էլ կողոպտում են նրանց ուուս կամ վրացի սիրուհիները։

Առհասարակ գործակատարների մտավոր զարգացման մակերևույթը խիստ ցած աստիճանի վրա է կանգնած։ Ես մի քանիսներին միայն ճանաչում եմ, որ հետաքրքրվում էին գրականությամբ, լրագիր էին կարդում, և երբեմն գրում էին լրագրական հոդվածներ։ Այսպիսիները նրանք են լինում, որ գոնե որևիցե դպրոցում եղել էին։ Մնացածները, որպես սխալներով գրում են և խոսում են իրանց մայրենի լեզվով, այնպես էլ սխալներով գրում են ու խոսում են բոլոր լեզուներով, որ ծանոթ էին նրանց։ Այնուամենայնիվ, այդ անուսներին պետք է փիլիսոփա համարել, իրանց «խազեիններից» հետ համեմատելով, որոնք իրանց անունը հազիվ թե կարող են ստորագրել։ Թիֆլիսի վաճառականների մեջ առաջ գործ էր ածվում վրաց լեզուն և գրագիտությունը, իսկ այժմ սովորական է դառնում ռուսաց լեզուն։ Խիստ սակավ խանութներ կարելի է գտնել, որոնց մեջ հաշվապահությունը և գրագրությունները լինեին հայոց լեզվով։ Դա Թիֆլիսի վաճառականների աններելի թերությունից մեկն է։ Այժմյան գործակատարները, որ ապագայի վաճառականները պետք է լինեն, ամենևին հակումն չեն ցույց տալիս մայրենի լեզվի և գրության մտցնելուն առևտրական գործերի մեջ։ Նրանք խոսում են մուշտարիների հետ այն լեզվով, ինչ ազգությանն որ պատկանում են — ռուսի հետ՝ ռուսերեն, վրացու հետ՝ վրացերեն, և մինչև անգամ վայրենի օսի, լեզգու, չերքեզի և կոպիտ թարաքամայի հետ նրանց լեզուներով, բայց ոչ երբեք հայերեն։ Գործակատարները երբեք չեն փոխում իրենց վարպետին, որի մոտ սկզբից աշակերտել էին, և այս պատճառով նրանց առևտրական գիտությունը մնում է միակողմանի։ Ինչ տեսակ ապրանքներ էր ծախում վարպետը, նույն տեսակ ապրանքների խանութ է բաց անում իր համար և գործակատարը, եթե մի օր կհաջողվեր նրան առանձին առևտուր սկսել։ Ոմանք նրանցից պսակվում են «խազեինի» աղջկա կամ մոտ ազգականի հետ, ոմանք վերջն ընկերանում են նրա հետ։ Առհասարակ մեր վաճառականներն օգնում են իրանց հավատարիմ գործակատարներին, և ցանկանում են, որ նրանք փողի տեր լինեին։ Բայց գործակատարն այս հա-

մակրութեանն արժանանում է երկար տարիների դառն աշխատութեուններից հետո։

Դառնում եմ դեպի արհեստավորները։

Արհեստավորների դասը Թիֆլիսում դեռ պահպանել է իր կազմակերպության վաղեմի ձևերը։ Բոլոր արհեստավորները, նայելով իրանց պարապմունքի տեսակին, բաժանված են զանազան դասակարգերի, որոնք ընդհանուր անունով կոչվում են «ճամֆյար»[1]։ Օրինակ, դերձակները, կոշկակարները, հյուսները, դարբինները, ոսկերիչները և այլն, առանձին առանձին «համքյարներ» են ներկայացնում։ Յուրաքանչյուր «համքյար» ունի իր «ուստաբաշին», այսինքն՝ վարպետների գլխավորին, որին հարգում են, որի հեղինակութեանը հնազանդում են, որի մի խոսքը վճռում է արհեստավորների մեջ պատահած վեճերը։ Յուրաքանչյուր «համքյար» ունի այլև իր առանձին դրոշը, հանդիսավոր օրերում նրանք հավաքվում են այդ դրոշի ներքո և որոշվում են մյուս «համքյարներից» իրանց գլխարկների գույներով։ Դրոշակների վրա նկարված է սովորաբար այս և այն սրբի պատկերը, որի պաշտպանութեյունը վայելում է «համքյարը»։

Թիֆլիսում «համքյարները» հիշյալ կազմակերպութեյունը պահպանել էին դեռևս 15—20 տարի առաջ։ Բայց այն օրից, երբ արհեստավորների համար հիմնվեցավ առանձին դատարան (ремесленная управа) ուստաբաշիներն իրանց նշանակութեյունը կորցրին, և այժմ համքյարների համարյա անունն է մնացել։

Մեր արհեստավորները միևնույն կերպով են պատրաստվում, որպես մեր վաճառականները։ Արհեստ սովորել ցանկացող տղան մանկութեյունից որպես աշակերտ մտնում է մի վարպետի մոտ, զանազանութեյունը նրա մեջն է միայն, որ վաճառականն իր աշակերտի համար ժամանակ չէ որոշում, իսկ արհեստավորն ընդունում է աշակերտին մի քանի տարվա պայմանով։ Վարպետը միշտ աչքի առջև է ունենում մի հաշիվ. եթե աշակերտը, օրինակ, 3 տարվա մեջ կսովորի արհեստը, նա 7 տարվա պայմանով է ընդունում աշակերտին, որ սովորելուց հետո մի 4 տարի էլ իրան ձրի ծառայե որպես վարձատրութեյուն։ Արհեստավորներն իրանց աշակերտների հետ ավելի վատ են վարվում, քան թե վաճառականները։ Եթե վաճառականը երկաթե արշինով է ծեծում, արհեստավորները ծեծում

[1] Համքյար պարսկական բառ է, նշանակում է համարվեստ կամ միևնույն գործով աշխատողներ։

են ուրագով, ահագին մկրատով, մուրճով և այլն։ Աշակերտի մտավոր զարգացումը մնում է խիստ սահմանափակ, միօրինակ մեքենական աշխատությունը զորացնում է մկանակները միայն, իսկ ուղեղով նա բթանում է, հիմարանում է և վերջապես ապուշ է դառնում։ Հազիվ կարելի է գտնել արհեստավորների աշակերտների մեջ այնպիսիներին, որ գրել կարդալ գիտենային։ Նրանք չեն սովորում կարդալ, որպես սովորում է վաճառականի աշակերտը, որովհետև մեր արհեստավորները դեռևս շատ պետք չեն զգում գրելու մեջ։ Նրանք շատ քաղաքրյալ առևտուր չունեն և հաշիվները պահում են իրանց գլխում։ Այն արհեստավորները, որ եվրոպական ձևեր են ընդունել, պետք է բացառություն համարել։ Նրանց խանութներում հաշիվներ պահվում են։

Աշակերտը արհեստը փոքր ի շատե սովորելուց հետո դառնում է «fյարգյար» (подмастер)։ Բթե նա պայմանը լրացնելով ցանկանում է շարունակել վարպետի մոտ իր աշխատությունը, ոռճիկ է ստանում։ Բայց ըստ մեծի մասին թողնում են վարպետի խանութը և իրանց համար առանձին արհեստանոց են բաց անում։ Հին ժամանակներում, այսինքն երբ «համքյարները» դեռ պահպանել էին իրանց օրենքները, ավանդությունները և սովորություններ՝ն, ամեն մի աշակերտ արհեստը սովորելուց հետո, առանց ձեռնադրության, իրավունք չուներ առանձին արհեստանոց բաց անել և իր համար գործ սկսել։ Նա պետք է առաջ օրինվեր և արհեստավորների կարգի մեջ մտներ։ Այս ծեսը կատարվում էր սովորաբար հետևյալ կերպով։ Նորընծա արհեստավորը ճաշ էր պատրաստում և հրավիրում էր «համքյարի» նշանավոր վարպետներին. այնտեղ գտնվում էր և «համքյարի» գլխավորը — «ուստաբաշին»։ Ճաշելուց հետո նորավարտ արհեստավորը ներկայացնում էր վարպետների ժողովին իր մի ձեռագործը. երբ նա հավանություն էր գտնում, և երբ վարպետները վկայություն էին տալիս նրա հմտության մասին, այնուհետև վարպետների գլխավորը կատարում էր օրհնության կարգը։ Բթե օրինակ, արհեստավորը պետք է դարբին լիներ, վարպետների գլխավորը վեր էր առնում մի մուրճ, օրհնում էր և տալիս էր նրա ձեռքը։ Եվ նրանից մի քանի խոստումներ առնելով, որ չխաբե, սուտ չխոսի, որ հավատարիմ մնա «համքյարիս դրոշին և այլն, հետո նա կարդում էր արհեստավորի գլխին մի քանի ինքնաձև օրհնություններ և երեսին զարկում էր մի ապտակ։ Դրանով օրհնությունը վերջանում էր և երիտասարդ արհեստավորը «ուստա» էր դառնում, և իրավունք էր ստանում այնուհետև «համքյարի»

անդամ համարվել, և իր համար առանձին արհեստանոց բաց անել։ Այդ ծեսը հիշեցնում է միջնադարյան ասպետներին, թե որպես նրանք օրհնվում էին և որպես այս ու այն ասպետական կարգի մեջ էին մտնում։ Բայց արհեստավորների վերաբերությամբ այս տեսակ սովորությունները հետաքրքիր են և այն կողմից, որ ցույց են տալիս, թե մեր նախնիքը որքան մեծ նշանակություն են տվել արհեստին, և որքան հոգ են տարել նրան միշտ ծաղկյալ վիճակի մեջ պահելու համար։ Այդ իհարկե իր ժամանակում ուներ իր նշանակությունը, իսկ այժմ պայմանները փոխվել են։ Այսուամենայնիվ, դեռևս իրանց նահապետական դրությամբ մնացած արհեստավորների մեջ կարելի է և այսօր տեսնել վերոհիշյալ սովորությունները։

Առհասարակ խոսելով, արհեստավորների կյանքում նույն փոփոխությունն է նկատվում, ինչ որ տեսանք վաճառականների մեջ։ Ալ որ հետաքրքրությամբ ուշադրություն է դարձրել Հայկական բազար (Միջին փողոց) կոչված թաղում արհեստավորների վրա, անպատճառ տեսած կլինի, որ այստեղ արհեստավորների յուրաքանչյուր դասակարգը միմյանցից բաժանված, առանձին-առանձին խմբեր են կազմում, որ զետեղված էին զանազան շարք խանութների մեջ։ Մի փողոցի վրա գործում են ոսկերիչները, մյուսի վրա՝ մուշտակակարները (ճոները), մի այլ տեղ՝ զինագործները, մի ուրիշ շարքում կոշկակարները և սառաչները, հետո պղնձագործները, դերձակները, հյուսները, և այլն։ Դրանք զանազան «համքյարների» ներկայացուցիչներ են, որոնց ամեն մի խումբը կենտրոնանալով իր համարվեստների շրջանի մեջ, գործում են միասին, և ուրիշների հետ չեն խառնվում։ Այդ քաստակական դրությունը ներկայացնում է արհեստավորների դասակարգության հին ձևը։ Այստեղ արհեստը նախնական կերպով ավանդվում է սերնդից սերունդ, խիստ սակավ փոփոխություն միայն կրելով։ Բայց երիտասարդ արհեստավորները, որոնք սովորել էին կամ եվրոպացու, կամ մի օտարականի մոտ, և կամ մի այլ երկրում կատարելագործել էին իրանց արհեստը— այսպիսիները չեն մտնում վերոհիշյալ խմբերի մեջ, այլ հեռանալով նրանցից, առանձնանում են, և քաղաքի զանազան փողոցների վրա ահրեստանոցներ են բաց անում։ Դրանք արհեստավորների նոր սերնդի ներկայացուցիչներն են, որ մեծ առաջադիմություն են խոստանում։ Երիտասարդ արհեստավորները համարյա զուրկ են ամեն տեսակ զվարճություններից։ Թիֆլիսում դեռևս չկան այնպիսի հյուրանոցներ և կաֆեներ, որ

ժողովրդի միչին դասին մատչելի լինելին։ Իսկ արհեստավորների կլուբն այն բարերար ազդեցությունը չունեցավ, որքան սպասվում էր։ Համեստ և հասարակական կյանքին դեռ չընտելացած արհեստավորն ավելի շռայլություն սովորից, երբ տան չորս պատերի մեջ փակված կնոջը հանկարծ դուրս բերելով, սկսեց հաճախել կլուբի «հեչերները»։ Այն ևս պետք չէ մոռանալ, որ կլուբում հաճախում են միայն հասակն առած արհեստավորները, ոչ թե երիտասարդությունը։ Այդ վերջինների զվարճությունն այն է, որ երբեմն հավաքվում են միասին և գնում են Օրթաճալա քեֆ են անում, կամ կիրակի օրերը մտնում են մի գինետուն և մի չարեք գինի ոտքի վրա խմելով, դուրս են գալիս։ Այսուամենայնիվ, երիտասարդ արհեստավորների բարոյականությունը համեմատաբար ավելի բարձր է, քան վաճառականների գործակատարներինը։ Արհեստավորներն ավելի վաղ են ամուսնանում և շուտով ընտելանում են ընտանեկան կյանքին. չքավոր տնտեսությունը նրանց ժամանակ չէ տալիս հրապուրվելու ախտերով։

Վեր առնենք մշակ դասը։

Թիֆլիսի հայոց ժողովրդաբնակության մեջ իսկապես մշակ դաս չկա։ Այն մշակները, որոնք փալանը ուսերին դրած լցնում են այդ քաղաքի հրապարակները, բոլորը գաղթականներ են Պարսկաստանից, Տաճկաստանից, կամ Հին-Նախիջևանի և Երևանի գավառներից այստեղ եկած։ Չէ կարելի երևակայել մի ավելի տաժանական աշխատություն, քան թե այն, որ կատարում են այդ մշակները։ Դրանք ընդհանուր անունով կոչվում են «համալներ»։ Համալի վիճակը և բեռնակիր գրաստի վիճակը ոչնչով չեն տարբերվում միմյանցից, երկուսն էլ ծանրություններ են կրում։ Թիֆլիսի քարվանսարաների, մաքսատան, երկաթուղու կայարանի, հրապարակների բոլոր համալները հայեր են։ Օտարազգիները չընչին փոքրամասնություն են կազմում։ Աշխատությունների տեսակները զանազան են. ոմանք բեռնակրություն են անում, տեղափոխում են ահագին, երբեմն 10—15—20 փութի ծանրություն ունեցող հակեր և տակառներ։ Հսկայի ուժ և մկնակների սաստիկ զորություն պետք է այս գործի համար, բայց հայ համալը տանում է փալանով ամրացրած մեջքի վրա իր բեռը որպես մի թեթև փետուրյա բարձ։ Ոմանք, որ կազմվածքով ավելի թուլլ են, կթոցների մեջ տներից աղբ են դուրս տանում և թափում են Կուր գետի մեջ, կամ ավելում են փողոցների անմաքրությունները։ Ոմանք չրկիրներ են, փոքրիկ թուլուխների մեջ, որ քաշ են տալիս ուսից, չուր են բերում

աղքատ ընտանիքների համար։ Ոմանք բանում են տների շինվածքների վրա, խճուղիների և երկաթուղու վրա որպես հասարակ մշակներ, կամ աշխատում են աղյուսի գործարաններում մեջ, և կամ քարափից քար են կտրում։ Երկար կլիներ մի առ մի թվել այդ թշվառների անտանելի աշխատությունների զանազան տեսակները, որոնց կարող էր համբերել միայն այն անբախտը, որին դառն աղքատությունը ստիպել էր թողնել իր հայրենիքը, տունը, ընտանիքը, և պանդխտության մեջ հանձն առնել մի անասնական գործ։

Համեմատաբար ավելի երջանիկ են այն մշակները, որոնք խմբված են զանազան քարվանսարաներում։ Յուրաքանչյուր քարվանսարայի մեջ մշակների խումբը կազմում է մի տեսակ միություն «օդաբաշիի»[1] գլխավորության ներքո. դրանք ունեն իրանց ընդհանուր դրամարկղը (կասսան), որի մեջ ձգում է ամեն մեկն իր օրական վաստակը, ծախսում են այդ դրամարկղից, կերակրվում են միասին, և ամեն մի ամսի վերջը բաժանում են իրանց մեջ մնայորդը։ Հիվանդ ընկերը չէ զրկվում իր բաժնից, եթե ամբողջ ամիսը աշխատած ևս չլիներ։ Մի նոր մշակ ընդունվում է խմբի մեջ ամենի համաձայնությամբ։ Բոլոր այս տեսակ հիմնարկությունների մեջ աշխատող մշակները մի տեսակ ապահովություն ունեն այն կողմից, որ առանց գործի չեն մնում, այլ փոխադարձապես օգնում են միմյանց։ Մինչդեռ մյուս մշակները ստիպված են ամեն օր և ամեն րոպե գործ պտրել։ Շատ անգամ ամբողջ ժամերով նրանք կանգնած են հրապարակների և փողոցների վրա, սպասում են մինչև մեկը կկանչեր և մի շալակ կհանձներ այս և այն տեղը հասցնելու համար։

Ամբողջ օրվա դառն չարչարանքներից հետո մշակներից շատերը աշխատում են գիշերից ևս օգուտ քաղել։ Հանգստությունը զոհում են մի քանի կոպեկների։ Ո՞ւմ չէ պատահել տեսնել, գիշերը փողոցներով անցնելիս, մագպինների դռանը, մերկ սալերի վրա, ձյունի և անձրևի տակ պառկած «հասասներին» (գիշերապահ)։ Դրանք ցերեկն աշխատող մշակներն են։ Երբեմն նրանք այն ասիճան հոգնած և թմրած են լինում, որ գիշերվա քեֆից վերադարձող բուրժուան ոտքը կոխում է նրանց վրա և անց է կենում. թշվառները ոչինչ չեն զգում։ Իսկ երբեմն կտեսնեք մեկին, փաթաթված սոլդատի քրքրված վերարկուի մեջ, դառն-մելամաղձական ձայնով երգում է։ Քունը մոտ չէ գալիս կարոտ աչքերին, նա եր-

[1] Օդաբաշի նշանակում է խանութպան։

զում է իր «յարին», որին դեռ նոր էր նշանել, երբ թողեց հայրենիքը. այժմ անցել էին մի քանի տարիներ, անբախտ մշակը դեռևս այնքան փող չէր վաստակել, որ վերադառնա, պարտքերը վճարե, հետո կարողանա պսակվել։

Ում պատահել է մտնել Սաղի կողմի քարվանսարաներից մեկի մեջ, ուր կանգնեցնում են ֆուրգոններ, կարող է փոքր ի շատե զգալափար ստանալ մշակների կյանքի մասին։ Թիֆլիսի այդ մասը, ուր թափում են ամեն տեսակ անմաքրություններ, ուր գարշահոտությունը թմրեցնում է մարդուն, ուր խոզերը միայն աղտոտությունների մեջ բախտավոր են ապրում, Թիֆլիսի այդ դժոխքը մշակների գիշերային կացարանն է։ Այնտեղ կարելի է գտնել փոքրիկ մթին սենյակներ, որ ամիսը 3—4 ռուբլով վարձով են տալիս. երբեմն 10—20 մշակներ վարձում են այդ սենյակներից մեկը։ Ոչ մի կարասի չէ կարելի տեսնել այդ խոնավ և սառը գերեզմանների մեջ, ուր կարմիր աղյուսով ծածկված մերկ հատակի վրա, իրանց փալանները բարձի տեղ գլխների տակին դրած, գիշերը հանգստանում են մշակները ցերեկվա հոգնածությունից հետո։ Ոմանք այնքան խնայող են լինում, որ սենյակներ չեն վարձում, այլ մտնում են այս և այն քաղաքացու տանը որպես դռնապան (дворник)։ Գիշերը հսկում են դռան վրա, իսկ ցերեկը գնում են իրանց գործին։ Տանուտերն այնքան բարի է լինում, որ խեղճ մշակի աշխատության փոխարեն ձրի տալիս է նրան օթևանելու մի խորշ. դա լինում է ըստ մեծի մասին ներքնատան մի անպետք անկյուն։

Թիֆլիսի մշակների մեջ մի ավելի հետաքրքիր մաս ներկայացնում են թուլուղչիները (ջրկիրներ). գրանք կազմած ունեն մի տեսակ համայնք, որ ունի իր կանոնները և սովորությունները։ Թիֆլիսի բոլոր թաղերը բաժանված են (թուլուղչիների կարգադրությամբ) զանազան մասերի, որոնց յուրաքանչյուրը մի թուլուղչու «մուշտարին» է. այսինքն բացի այն թուլուղչուց մի ուրիշն իրավունք չունի այն թաղեցոց ջուր տալու։ Այդ իրավունքը վաճառվում է թուլուղչիների մեջ. օրինակ, մեկ թաղում հարյուր ընտանիքի ջուր էր տալիս մեկ թուլուղչի, նա իր դավթարի մեջ ունի տների ցուցակը, և նույն ցուցակով վաճառում է իր ջուր տալու իրավունքը մյուսին, ստանալով նրանից 500—1000 ռուբլի։ Եվ այսպես ժողովուրդն անցնում է մի թուլուղչու ձեռքից մյուսին։ Թուլուղչիներն իրանց մեջ կարգ պահպանելու համար, ընտրում են մեկին իրանց միջից որպես «ուստաբաշի» — գլխավոր, որը ճանաչված է լինում քաղաքական վարչությունից։ Թիֆլիսի մշակների մեջ միայն թու-

լուղչիներն են, որ ազատ են հարկից, որովհետև, նայելով այն ծառայութիւնը, որ նրանք կատարում են հրդեհների ժամանակ՝ առանց որևիցե վարձատրութեան, քաղաքը նրանցից հարկ չէ պահանջում։ Հենց որ մի տեղ հրդեհ է հայտնվում, քաղաքի ամեն ծայրերից թուլուղչիները թափվում են իսկույն։ Զարմանալի է տեսնել, թե որպիսի անձնազոհութեամբ այդ քաջերը նետվում են կրակի մեջ. ոչինչ նրանց չէ վախեցնում, ոչինչ նրանց չէ վհատեցնում։

Թուլուղչիները Պարսկաստանի Սալմաստ գավառից եկած կաթոլիկ և լուսավորչական հայեր են, նրանց մեջ գտնվում են և աստրիներ։ Բոլոր մշակների մեջ դրանք են, որ պահպանում են մի կազմակերպված միութիւն, և այդ միութեանն են պարտական, որ ունեն համեմատաբար ավելի լավ վիճակ։ Կուկիայի Ջուխուրեթ կոչված թաղում կարելի է տեսնել թուլուղչիների հյուրանոց, ուր նրանք ընթրիք են ուտում, խմում են և ծխում են պարսկական ղեյլյան։ Բացի թուլուղչիներից մնացած բոլոր մշակները մի տեղ չունեն հավաքվելու համար։ Թէև, ինչպես վերևում նկատեցի, Թիֆլիսում չկան այնպիսի հյուրանոցներ, ուր արհեստավորները կարողանային էժան ճաշ ուտել, չէ կարելի երևակայել անգամ, որ այս տեսակ հիմնարկութիւններից օգուտ քաղեին մշակները։ Այդ ողորմելիները կերակրվում են միայն ցամաք հացով. հրապարակի վրա գնում են մի հատ վրացու «պուրի» և այնպես կրծելով, ծանր շալակի տակ, շարունակում են իրանց գործը։ Մշակը, որ գլուխը դնելու մի անկյուն չունի, ինչպե՞ս կարող է իր համար առանձին խոհանոց սարքել։ Կիրակի օրերը միայն մի քանիսն ընկերանում են միասին, առնում են մի կտոր միս, և տալիս են փուրունչիին եփելու համար։ Այդ աշխատող դասը, որ ավելի ուտելու պետք ունի, բոլորովին զուրկ է մնում զորացնող սննդից։ Որևիցե զվարճութիւնից նույնպես զուրկ են մնում նրանք. երբեմն տոն օրերում մտնում են մի գինետուն և խմում են մի քանի բաժակ արաղ. ալքոհոլը միայն կարողանում է գրգռել մշակի բթացած և անզգայացած ղեները։

Մի քանի խոսք մշակների մտավոր կյանքի մասին։ Մեր մեջ կան ազգասերներ, որոնք երազում են Մուշի, Վանի և Զեյթունի վրա, բայց այստեղ, Թիֆլիսում, մշեցի և վանեցի հայի գավակներն իրանց աչքի առջև չեն տեսնում։ Մեղանից դեռևս ոչ ոք չմտածեց հիմնել մշակների համար կիրակնօրյա դասախոսութիւններ և ծանոթացնել նրանց տնտեսական որևիցե հարցի հետ։ Ախր այդ

Քշվառներն առանց պատճառի չէ որ թողել են իրանց հայրենիքն և այստեղ պանդխտության մեջ տարիներով մաշվում են։ Պետք չէ՞ արդյոք քննել այն պատճառները, որ դուրս են քշում նրանց իրանց հայրենիքից, և ցույց տալ ապրուստի ուղիղ ճանապարհ։ Մշակների մեջ կան մեծ թվով գրագետներ. այսպիսիներն ուրիշ երկրում օգուտ են քաղում կոպեկանոց լրագրներից, բայց այստեղ կարդալու ոչինչ չեն գտնում։ Թողնենք մտավոր սնունդը։ Թիֆլիսի հայ մշակները զուրկ են մնում և բարոյական և հոգևոր մխիթարությունից։ Ոչ մի հայ քահանա չէ բաց անում մշակի խղճուկ օթեվանի դուռը, որովհետև նրանից շահվելու ոչինչ չէ սպասում, բայց ինձ հայտնի են փաստեր, որ Պարսկաստանից այստեղ եղած փոքրաթիվ բողոքական մշակների համար՝ Ուրմիո ամերիկական առաքելության միսիոնարներն իրանց ծախսով ուղարկել են Թիֆլիս մի քարոզիչ քահանա, որ միշտ այստեղ է մնում, և թե հոգևորապես, թե բարոյապես մխիթարում է նրանց։ Ամեն կիրակի հավաքում է նա իր փոքրիկ հոտը գերմանական կոլոնիայում մի հատկացրած տեղ, և քարոզ է կարդում։ Այդ բավական չէ, քահանան իսկույն վազում է բժշկի մոտ, երբ մեկը հիվանդ էր, և խնամք է տանում նրա առողջության մասին, եթե աղքատ էր։ Բայց մեր հայ մշակները հիվանդանում են և անտերությունից, ճանճերի նման ամեն տարի հարյուրներով մեռնում են, ոչ ոք նրանց վրա չէ մտածում։ Այդ ողորմելիները մինչև անգամ չգիտեն, որ Թիֆլիսում կա այնպիսի տեղ, ուր բժիշկները ձրի են նայում հիվանդին (лечебница) *և կա այնպիսի տեղ ևս, ուր հոդ են տանում աղքատներին ձրի կևրակրելու և առողջացնելու համար* (больница)։

Կա մի ուրիշ կետ ևս, որ ոչ սակավ ուշադրության արժան է։ Թիֆլիսում կարելի է հաշվել միջին թվով մինչև 5000 հայ մշակներ, որոնք օտար երկրներից են եկած[1]։ Դրանք երբեմն մինչև տասն տարի շարունակ մնում են այստեղ, անդադար աշխատում են, փող են վաստակում, բայց չգիտեն, թե որտեղ պահեն իրանց դառն քրտինքի գինը։ Մշակի դանձարանը կաշիից իր ձեռքով կա-

---

[1] *Ինձ Ջուլֆայի կարանտինայում ասեցին, թե ամեն տարի մոտ 20 հազար մշակներ անցնում են Պարսկաստանից դեպի Կովկասի գանազան գավառները. այս հաշվով որքան հոգի անց կկենան Արաքսի վրա դրված ռուսաց մյուս կարանտինների անցքերից, որպես են Ջաբրայելի, Շահթախտի, Իգդիրի և մյուս անցքերը։ Հետաքրքիր կլիներ թվանշաններ հավաքել այս տեղերից, և այն ժամանակ կրացատրվեր Պարսկաստանից և Տաճկաստանից ռուսաց հողի վրա անցնող մշակների հիշատ թիվը։*

րած փոքրիկ պայուսակն է, որ միշտ կարելի է տեսնել նրա կողքից քաշ ընկած։ Բայց քիչ չէ պատահում, որ քնած ժամանակ նրա պայուսակը կտրում են, և մշակը զրկվում է իր գանձից, իր մի քանի տարվա դառն աշխատանքից։ Ոմանք ծանոթանում են մի քաղաքացու հետ և փողերը նրան պահ են տալիս, առանց վեքսիլի և առանց թղթի. և խղճմտանքով քաղաքացին շատ անգամ կամ ուրանում է «կռոյի» հանձնած փողերը, և կամ վայրիվերո հաշիվներ է ցույց տալիս։ Վերջապես այդ ողորմելիները չգիտեն, թե իրանց վաստակած փողերն ինչ միջոցով կարող են ապահով կերպով հասցնել իրանց հայրենիքը, իրանց կարոտ ընտանիքներին։ Ըստ մեծի մասին այսպես են անում. մի քանի տարվա վաստակածը հավաքում են մի տեղ, փոխում են ռուսաց ոսկու հետ, և 40—50 հոգի միասին խմբվելով, դիմում են դեպի իրանց հայրենիքը։ Տաճկաց և պարսից սահմանների վրա միշտ պատրաստ են ավազակների հրոսակներ մշակների քարավանը կողոպտելու համար։ Այս տարի մի քանի անգամ կարդացինք լրագրների մեջ Ռուսաստանից Մուշ վերադարձող մշակների կողոպտվելը քրդերից։ Ուրեմն Թիֆլիսի մշակները ոչ իրանց վաստակած փողը պահելու տեղ ունեն և ոչ հայրենիքը հասցնելու ապահով միջոցներ։ Մի փոխատու խնայողական կասսա (ссудо-сберегательная касса) կարող էր ազատել նրանց վերոհիշյալ անբախտություններից, բայց այդ մասին մինչև այսօր ոչ ոք չմտածեց։ Եթե հայ մշակների թիվը հաշվում ենք Թիֆլիսում 5000 հոգի, մի այսքան էլ, և գուցե ավելի, Բուրքեր, ասորիներ և ուրիշ ազգերից կլինեն. և այս պատճառով հիշյալ հիմնարկությունը փողերի սակավ շրջաբերություն չէր ունենա, եթե կազմված ևս լիներ միմիայն մշակների համար։ Այլևս չեմ խոսում օգտավետության մասին, թե մի այսպիսի հիմնարկություն որքան կարող էր նպաստել մշակների շահերին։ Որովհետև փողը միշտ մշակի մոտ պահվելով, ոչ միայն կորցնում էր իր տոկոսը, այլ նա կարող է միանգամով կորչել, կամ շռայլաբար ծախսվել։ Քիչ չէ պատահում, որ մշակը հանկարծ մոլության մեջ է ընկնում, և մի քանի օրվա մեջ ոչնչացնում է իր մի քանի տարվա վաստակածը։

Չէ կարելի չավելացնել մի քանի խոսք մշակների հավատարմության մասին։ Կ. Պոլսի հայ համալների ազնիվ հատկությունները մինչև անգամ գրավեցին եվրոպական մամուլի ուշադրությունը։ Մեր մշակները ևս պակաս չեն նրանցից իրանց բարոյական կողմերով։ Հայաստանի այդ չփչացած զավակները սաստիկ

վախենում են մեզքից, որքան սարսափում են աստուծո պատժից։ Պանդխտության մեջ անգամ, օտար հասարակության մոլորեցնող ազդեցության ներքո, նրանք պահպանում են իրանց բնավորության մաքրությունը։ Թիֆլիսի վաճառականը մեծ վստահությամբ հանձնում է մշակին իր խանութի և ամբարների բանալիքները, ամենևին չկասկածելով նրա հավատարմության մասին։ Ինձ հայտնի են մի քանի փաստեր, որ մշակների ձեռքը որևէ դեպքով ընկել էին գումարներ և ապրանքների հակեր, որոնց հեշտությամբ կարող էին թաքցնել և իրանց սեպհականացնել, բայց նրանք չեն կամեցել «գուտ քաղել դեպքից, և պահելով իրանց մոտ ուրիշի սեպհականությունը, կրկին հանձնել են տիրոջը։

Ես վերջացրի իմ հետազոտությունը։ Այժմ ընթերցողին եմ թողնում եզրակացնել, թե որպիսի ապագա է խոստանում հայ երիտասարդությունը։

Ի՞ՆՉ ԿԱՊ ԿԱ ՄԵՐ ԵՎ ՏԱՀԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Ա

Մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմը, երբ պատահում էր մեր կողմերում մի տաճկաստանցի հայ ֆեսը գլխին, իսկույն «ճոսճոս» անունը կպցնում էինք ճակատին և երեսներս շուռ տալիս։ Մեր կողմերում մշեցի և վանեցի հայ մշակներին մեր երևխաներն անգամ «կռոռ» էին կոչում, և շատերը մեզանից հավատացած էին, թե «կռոռն» հայ չէ, այլ քրդերի մի որևէ ցեղին է պատկանում։

Տաճկաստանցին նույն սխալ և մութը կարծիքներ ուներ մեր մասին։ Երբ մեզանից մեկը հանդիպում էր Կ. Պոլսի կամ այլ քաղաքների փողոցներում, տաճկաստանցին մի կասկածավոր հայացք էր գցում մեր երեսին, և «անունցմե է»... ասելով, ցույց էր տալիս իր ընկերին։ Մեզ համարում էին հայությունից օտարացած, մենք միմյանց չէինք ճանաչում, նրանք ատելի էին մեզ, իսկ մենք — նրանց։

Մեր մեջ բոլոր հարաբերությունները կտրված էին։ Վաճառականությունը չէր մոտեցնում մեզ, վաճառականությունը, որ կարող

էր մեր մեջ հաղորդակցության կապ լինել, այն ևս չկար։ Տաճկաստանցի հայը գործ ուներ եվրոպացիների հետ, իսկ մեր վաճառականը Մոսկվայի և Նիժնայի հետ։ Մի քանի ծխախոտ ծախողներ վերջին ժամանակներում միայն սկսեցին հայտնվել Թիֆլիսում։

Մնում էր երկու բան որ, կարող էին մեզ ծանոթացնել միմյանց հետ, այն է՝ գրականությունը և լրագրությունը։

Բայց մի՞թե մենք ունենք գրականություն։ Մենք ունենք արդարև, հին, կլասիկական հարուստ գրականություն, բայց նոր ոչինչ չունենք։ Եղիշեն կարդալով կարող ենք տեղեկություն ստանալ, թե որպես էր տանջվում հինգերորդ դարու հայը պարսիկներից, իսկ այժմյան Թուրքիայի հայի վիճակի մասին նա մեզ տեղեկություն չի տա։

Մի ազգի կամ մի ժողովուրդի հետ կարելի է ծանոթանալ իր գրականությունից, մինչև անգամ նրան չտեսնելով, բայց այն ժամանակ միայն, երբ գրականությունը կլիներ կատարյալ արտահայտություն նույն ազգի կյանքի և մտավոր զորության, երբ գրականության մեջ կհայտնվեր նա իր տնտեսական, արհեստագործական և ընկերական կյանքով, իր մտածություններով և ձգտումներով, մի խոսքով, իր կեցության բոլոր բազմատեսակ կողմերով։ Այսպիսի գրականությունից թե մենք և թե մեր տաճկաստանցի եղբայրները զուրկ ենք։

Ի՞նչ գործ էր կատարում լրագրությունը։

Մեր լրագրությունը «Մշակի» գոյություն ստանալուց առաջ ամենևին չէր զբաղվում տաճկաստանցիներով. նա չէր զբաղվում և մեր տեղական հարցերով կամ մեր կյանքով։ Իսկ Տաճկաստանի հայոց լրագրությունը հենց այսօր նույն ողորմելի վիճակի մեջն է, ինչ որ էր մեր լրագրությունը տասը տարի առաջ։

Ես համոզված եմ, եթե մեկը այժմ վեր առնի «Մշակի» և «Մեղուի» (նորի) բոլոր համարները և ուշադրությամբ ուսումնասիրե, կտեսնա, եթե ոչ բոլորովին կատարյալ, բայց բավականին պարզ գաղափար Ռուսաստանի հայոց կյանքի մասին. կտեղեկանա նրանց տնտեսական վիճակը և թե ուսումը, կրթությունը ո՛ր աստիճան առաջ է գնացել, կամ ի՞նչ դեր են խաղում նրանք արհեստի և վաճառականության մեջ, և մասնավոր վիճակագրական տեղեկություններ կունենա, թե ո՛րքան թվով ո՛րտեղ են բնակվում և այլն։ Իսկ Կ. Պոլսի լրագրությունը չէր կարող մեզ այս տեղեկություններից և ոչ մեկը տալ, որովհետև նա տեղական հարցերով չէր զբաղվում։ Կ. Պոլսի լրագրությունը զբաղված էր Եվրոպայի և պատ-

րիարքարանի ինտրիգաններով, բայց Բոսֆորի մյուս կողմը, Փոքր Ասիայում նա ոչինչ չէր տեսնում — Հայաստանի հայ բնակչի վիճակը և նրանց հարաբերություններն իրանց օտարազգի դրացիների հետ չէին հետաքրքրում Կ. Պոլսի լրագրությանը, շատ-շատ նա կտպեր մի գավառական սկանդալ և ավելի ոչինչ։

Կ. Պոլսի լրագրությունը չէր ուսումնասիրում մինչև անգամ իր ոտքի տակի հողը — Կ. Պոլիսը։ Մենք ամենևին չգիտենք, թե մոտ երեք հարյուր հազար հայ բնակիչներ Թուրքիայի մայրաքաղաքում ի՞նչ գործով են զբաղված. մի քանի հատ ու կտոր, ծուռ ու սխալ տեղեկություններ հասել են մեզ նրանց մասին օտարազգի լրագրություններից, իսկ բուն Կ. Պոլսի լրագրությունը նրանց մասին միշտ լուռ է եղել։

Բայց Կ. Պոլսում հրատարակվել է միշտ, 10-ից սկսյալ մինչև 15 կամ ավելի, զանազան տեսակ պարբերական թերթեր, և չնայելով նրանց բովանդակության աղքատությանը, լրագրության փոխանակություն ևս չէ եղել մեր և նրանց մեջ։ Ուրեմն լրագրությունը ևս չէր կարող մեզ կատարելապես ծանոթացնել միմյանց հետ։ Մեզ մոտեցնելու և միմյանց հետ ծանոթացնելու կարևորությունը զգալով «Մշակը», սկսյալ իր հրատարակության օրից, և մանավանդ վերջին տարիներում սկսեց խիստ հաճախ խոսել տաճկաստանցոց վրա, և ես համոզված եմ, որ պոլսեցիք կարդալով «Մշակը», ավելի հիշոտ տեղեկություններ կարող էին քաղել Փոքր Ասիայի հայոց դրության մասին, քան թե իրանց բոլոր լրագրությունն ամբողջությամբ վեր առած։

Եվ այսպես, Տաճկաստանի հայոց դրությունը մեզ այնքան էր հայտնի, որքան Միջին Ափրիկայի վայրենիների դրությունը, և նույնիսկ պոլսեցիք մեզանից ավելի չգիտեին նրանց մասին։ Այս կարծիքը ուղիղ է, և որի ապացույցն է այն, որ հայոց պատգամավորներից մեկը արդեն գտնվում էր Լոնդոնում, իսկ մյուսը Ս. Պետերբուրգում, երբ Կ. Պոլսում դեռ նոր մտածեցին, թե Հայաստանի մասին պետք է հիշոտ և մանրամասն տեղեկություններ ունենալ, և դեռ նոր վարդապետներ վազեցրին դեպի Հայաստան, որ գնան, տեսնեն, թե որտե՞ղ են բնակվում հայերը, ո՞րքան է նրանց թիվը և ի՞նչ հարաբերության մեջ են օտարների հետ։ Այն ժամանակ միայն մտածեցին Հայաստանի համար քարտեզ պատրաստել։ Բայց Կ. Պոլսում պատրիարքարան կար, ազգային ժողով կար, այնտեղ էր հայոց ինտելիգենցիան — այս բոլորը պետք է գիտենային և պատրաստեին առաջուց, շատ և շատ առաջուց, և որի

մեջ գլխավոր գործիչ պետք է լիներ լրագրությունը, և առհասարակ գրականությունը։

Ուրիշ օրինակ անհարմար կլիներ բերել, քան թե այն, որ Բեռլինի ավագաժողովի ժամանակ Կ. Պոլսի հայոց դրությունը նմանում էր մի վաճառականի, որ կամենում է սկսել մի մեծ առևտրական սպեկուլյացիա, առանց նախապես գիտենալու իր դրամական վիճակը. նա հասկանում է, որ կաստան գարտակ է, այն ժամանակ միայն, երբ գործը արդեն սկսել էր։ Այսպիսի հանգամանքում անհաջողությունն ինքնըստինքյան հասկանալի է։

Բայց անհաջողությունը, մանավանդ մի մեծ հեղաշրջումից հետո ժողովուրդների կյանքում, ինչպես և պարտությունը ձախորդ պատերազմից հետո, ունեն իրանց օգուտները, այն կողմից, որ նույն ժողովուրդներին հասկացնել են տալիս իրանց թերությունները, սխալները և առհասարակ նրանց անընդունակությունները, որոնք պատճառ եղան անհաջողության։ Եվ այդ գիտակցությունը բավական էր ապագայում նրանց առաջնորդելու համար դեպի ուղիղ և հաստատ ճանապարհը, որ հասցնում է նպատակին։ Եթե կա Տաճկաստանի հայոց անհաջող ձեռնարկության մեջ մի օգտավետ կետ — այդ է։ Իսկ արդյոք կարո՞ղ են տաճկաստանցիք օգուտ քաղել դրանից,— ահա՛ մի հարց, որ պետք է պարզել։

Այդ հարցը այնքան բաղադրյալ է, որ դժվար է մի անգամով բացատրել. մենք կհետազոտենք նրա գլխավոր գծերը միայն։ Արդարև, ամեն մի անհաջող ձեռնարկություն ժողովուրդների կյանքի մեջ ունի իր օգուտները, որ նրանց զգալ էր տալիս իրանց թերությունները և նախապատրաստում է մի նոր ապագայի համար, և դրանից է առաջ գալիս այն գիտակցությունը, որ կոչվում է ինքնաճանաչություն։ Բայց դժվար կարելի է գտնել ամբողջ մարդկության մեջ մի ժողովուրդ, որ ինքն իրան ճանաչեր — նրան ճանաչում են և քննում են նույն ժողովրդի առաջավոր մարդիկը, զարգացած մասը, որպես բժիշկը հիվանդներին։ Եվ այս վերջինները հաղորդում են ժողովրդին նրա թերությունները, նրա պետքերը, և միևնույն ժամանակ հնարները նույն պետքերին բավականություն տալու։ Դրանք կոչվում են գանագան անուններով ժողովրդական գործիչներ, առաջնորդող մարդիկ — դրավոր և բերանացի խոսքը նրանց գլխավոր զենքն է — նրանք ներկայացնում են ժողովրդի մտավոր զորությունը,— նրա ինտելիգենցիան։

Բայց մենք տեսանք մեր հոդվածի սկզբում Թուրքիայի հայի ինտելիգենցիան, նա կարո՞ղ է արդյոք առաջնորդող լինել,

ազդել, դրդել և բարձրացնել ամբոխը իր ընկած դրությունից, քանի որ ինքը ինտելիգենցիան ուղղվելու կարող է։

Պետք է ի նկատի ունենալ և տեղի դրությունը։ Կ. Պոլիսը, որպես պաշտոնական կայարան, հասկանալի է, այնտեղ է Բ. Դուռը, այնտեղ հայոց պատրիարքը միշտ կարող է հարաբերություն ունենալ վեզիրների և եվրոպական պետությունների ներկայացուցիչների հետ։ Բայց Կ. Պոլիսը, որպես ներգործող կենտրոն Հայաստանի վերաբերությամբ, անհարմար է։ Կ. Պոլիսը, թեև կրում է իր մեջ Տաճկաստանի հայոց առաջավոր մարդիկը, բայց իր առանձնացած դիրքով, հազիվ թե կարող էր ազդել հեռավոր Հայաստանի վրա։ Կ. Պոլսի և Տաճկական Հայաստանի մեջ ծովեր կան, Անատոլիայի ցամաքը կա, այլևս չենք հիշում ճանապարհների վատ հաղորդակցությունը։ Այստեղից հասկանալի է ազդեցության թուլությունը, որ պոլսեցիք կարողանում են անել բուն Հայաստանցոց վրա։ Ուրեմն չէ կարելի ամեն ինչ հուսալ պոլսեցիներից կամ ամեն ինչ նրանցից միայն սպասել։

Տաճկական Հայաստանի հայերին, ավելի քան պոլսեցիքը, կարող ենք օգնել մենք՝ Ռուսաստանի հայերս, որովհետև նրանց հետ մոտ դրացության հարաբերություն ունենք։ Թողյալ այդ, Ռուսաստանի հայը համեմատաբար ավելի բարձր է, քան թե պոլսեցին, թե իր մտավոր և թե նյութական կարողությամբ։ Ի՞նչու մենք բոլոր հոգսը պոլսեցիների վրա ենք ձգում. մենք նրանց հետ պետք է բաժանենք բռնության լծի տակ ճնշված մեր եղբայրների ցավերը։

Տաճկաստանի հայերի վերականգնումը միշտ կարծիքական պետք է համարել, երբ հույս կդրվի միմիայն Կ. Պոլսի վրա։ Պետք է ամեն տեղից, ուր որ կան հայեր, օգնության ձեռք մեկնեն նրանց, և այդ պարտավորությունն առավելապես հանում է մեզ՝ ռուսաստանցիներիս։ Մեր բարեսիրտ կառավարությունը մեզ չէ արգելում օգնել նրանց. նա կցանկանա, որ մենք պատրաստեինք Փոքր Ասիայում մի ժողովուրդ, որպես վահան անգլիական ազդեցության դեմ. նա կցանկանա, որ մի քրիստոնյա ժողովուրդ ազատված լինի Թուրքիայի բռնությունից, որոնց համար թափեց իր զինվորների այնքան շատ արյունը։

Ի՞նչ կարող ենք անել, դուցե կհարցնեն ընթերցողը։— Շա՛տ բան, միայն թե մտածեինք օգնել։

Բայց նախ քան օգնելը, պետք է գիտենալ, թե ինչ բանի կարոտ են նրանք. իսկ այդ գիտենալու համար պետք է նրանց հետ որևիցե

կապ և հարաբերություն ունենալ։ Բավական չէ այն, որ մենք նրանց հետ դրացիներ ենք, բայց մեր դրացությունը մինչև այսօր եղել է այնպես, որ առիթ չենք ունեցել լավ ճանաչել միմյանց։ Եվ մեր հոդվածի սկզբում նույնպես նկատեցինք, որ մեր և տաճկատանցոց մեջ չկա և չի եղել որևիցե միացնող կապ։

Մեր մեջ կա մի կապ միայն, այն է՝ ազգակցական, որ նրանք և մենք միևնույն ցեղին ենք պատկանում, միևնույն լեզվովն ենք խոսում, և մեր երակների մեջ միևնույն արյունն է վազում — այսքանը միայն։ Մի ուրիշ կապ էլ ունենք, այն է կրոնական, որ մենք և նրանք միևնույն եկեղեցուն ենք պատկանում։ Իսկ վերջին կապը հազիվ թե կարելի է ամբողջական համարել զանազան հերձվածների պատճառով — մեր կաթոլիկ, բողոքական և մահմեդական եղբայրների մեզանից բաժանվելով — այլև բուն լուսավորչականների վերաբերությամբ նույնպես թույլ է նա, որովհետև, մեր մեղքից, մեր եկեղեցական կառավարությունները երկու հակառակ պետությունների մեջ՝ Թուրքիայում և Ռուսաստանում — կարծես, մինը մյուսին հակառակ աթոռներ են ներկայացնում, և այդ ավելի նկատելի եղավ վերջին քաղաքական հանգամանքներում, երբ էջմիածնի վեհարանն իրան խուլ անտարբերության մեջ պահեց, ամենևին չմասնակցելով Կ. Պոլսի պատրիարքարանի ձգտումներին։ Պատմությունը, իհարկե, կդատապարտե այդ մեծ անուշադրությունը, իսկ ժամանակակից բարեմիտ մարդը չէ կարող առանց խորին վրդովմունքի նայել դրա վրա։

Ցավելով պետք է խոստովանվել, որ չնայելով մեր ամենից բոլոր ցանկությանը, վերջին ժամանակներում, լուսավորչական ս. աթոռի վեհափառի ընտրությունը Թուրքիայի եկեղեցականներից չարդարացրուց այն հույսը, որ սպասվում էր, այսինքն, որ Տաճկաստանից ընտրված ընդհանուր հայոց վեհ. Կաթողիկոսը կամրացներ հայրապետական աթոռի կապերը Կ. Պոլսի պատրիարքարանի հետ, որպես ավելի բազմաթիվ հայ ազգաբնակության եկեղեցու ներկայացուցչի։ Այս խոսքերը մեզ ասել են տալիս մի քանի տխուր փաստեր, որոնց հիշելը ավելորդ ենք համարում։ Եվ որ ավելի վնասակարն է, այն է, որ նույնիսկ ս. էջմիածնի մեջ առաջ նկավ մի տեսակ խորհուրդ — վեհարանն առանձնացավ ամբողջ միաբանությունից։ Ով որ փորր ի շատե ծանոթ է ս. էջմիածնի այժմյան դրությանը, հհամաձայնի մեզ հետ։ Այդ, իհարկե, պետք է համարել մի կամայական գործում, որ առաջ է եկել ավելի անձնավորություններից, և որն ապագայում կարող է ուղղվել, երբ նույն

անձնավորություններ տեղի կտան ուրիշներին։ Իսկ մեր եկեղեցական բարձր կառավարության հիմնական գաղափարը դարձյալ կմնա այն, ինչ որ եղել է միշտ, այսինքն, թե ս. էջմիածինը, որպես գլուխ, կունենա սերտ և անմիջական կապ իր բոլոր մասների հետ — ընդհանուր հայոց հոգ. ներկայացուցիչների հետ, որտեղ և ինչ պետության մեջ լինեին նրանք։

Ես հարկավոր չեմ համարում այժմ մեր կեղտոտ լվացքը դուրս թափել և ուրիշների աչքի առջև լվանալ. դեռևս պետք է լռել... խոսելու ժամանակ շատ կա....

Խոսելով ազգային միության վրա, չէ կարելի չհիշել մեր այն եղբայրներին, որ կրոնական հերձվածներով բաժանվել են մեզանից. մեր խոսքը հայ-բողոքականների և հայ-կաթոլիկների մասին է։ Լրագրությունն այժմ զբաղված է այդ հարցով։ Բայց մենք երբեք մեզ թույլ չէինք տալ հակառակ լինել խղճի ազատության, եթե կրոնական հերձվածները Թուրքիայի հայերի մեջ չվնասեին ազգային միության և չբաժանեին նրա ամբողջությունը։ Բայց երբ տեսնում ենք բողոքականությունը հայերի մեջ դառնում է զանազան քաղաքական նպատակների գործիք անգլիացիների ձեռքում, որ չունի ոչինչ կապ քրիստոնեության և կրոնի հետ, երբ տեսնում ենք, որ պապականությունը մոլեռանդ կղերի ձեռքում դառնում է գործիք ուլտրամոնտանիզմի, որ մի ամբողջ ժողովուրդ շինում է պապի և նրա արբանյակների ստրուկ,— այդպիսի դեպքերում չէ կարելի անտարբեր մնալ։ Կաթոլիկությունը, որպես աստվածաբանական սխոլաստիկա, միշտ եղել է հակառակ կրթության և ժողովրդի ազատ ոգու զարգացման, իսկ բողոքականությունը, որպես նոր աղանդ, որպես նոր խմոր, ավելի թունդ է իր ֆանատիզմով։ Ով որ տեսել է բողոքականին Եվրոպայում, գուցե կծիծաղի մեր դատողության վրա, բայց Ասիայում նույնը չէ բողոքականը, այստեղ նա բաժանվելով իր մայրենի եկեղեցուց, դառնում է բոլորովին ուրիշ մարդ. նրա բոլոր կապերը կտրվում են իր ազգի հետ, և նայում է իր ազգայինների վրա այնպես, որպես մի ժամանակ հրեաները նայում էին սամարացիների վրա։ Կաթոլիկների մասին ավելորդ է խոսել անգամ, նրանք ավելի վատ են։ Մենկ իրան ինգիլիզ է կոչում, մյուսը ֆրանգ։ Եթե սրանք այսպես են, լուսավորչականները նույնպես հետ չեն մնում իրանց աննևրոդամտությամբ դեպի իրանց անջատված եղբայրները, և ավելի նրանց առիթ են տալիս հեռանալու։

Ճանապարհորդելով մի ժամանակ Տաճկական Հայաստանում, ես շատ անգամ առիթ եմ ունեցել տեսնվել որպես կաթոլիկ, նույնպես բողոքական հայերի հետ. մտել եմ նրանց դպրոցներում, ժողովարաններում, և երբեմն տաք վիճաբանություններ եմ ունեցել նրանց հետ։ Այդ մարդկանց վրա պետք է խղճալ, նրանք շատ ողորմելիներ են։ Նրանց այնքան փոքր բան են սովորացրել, որ ուրիշ կերպ լինել չէին կարող, հին և նոր կտակարանից մասնավոր տեղեկություն, մի քանի աղոթքներ, փոքրիկ քրիստոնեական վարդապետություն, եթե ավելացնենք դրանց վրա և այն համոզմունքը, թե ով որ իրանց եկեղեցուն չէ պատկանում, զրկվում է Քրիստոսի արքայությունից — կատանանք նրանց գիտության ամբողջ չափը։

Մեր կարծիքով, այդ խիստ բաժանումը մեր կաթոլիկ և բողոքական եղբայրների ազգային ամբողջությունից, լուկ դավանաբանական պատճառներով, պետք է համարել ժամանակավոր մի երևույթ, որ առաջ է եկել ավելի անկրթությունից, և որն ինքնըստինքյան կանհետանար, երբ ազգայնության գաղափարն իր բոլոր կենսագործող զորությամբ կմարմնանա նրանց մեջ։

Շատ ցանկալի էր, որ մեր ազգայինները պատկանեին նույն եկեղեցուն, որ հիմնեց մեր լուսավորիչ պապը, բայց երբ որ կաթոլիկությունը և բողոքականությունը մեր մեջ արդեն մի կատարված իրողություն է, այլևս ի՞նչ պետք է անել։ Մեր եկեղեցականները չունեն այն հոգին, որ աշխատեն նրանց կրկին միացնել մեզ հետ. ուրեմն պետք է թույլ տված, որ կրոնի վերաբերությամբ ազատ մրցությունն ընթանա իր ճանապարհով, իսկ ազգայնության վերաբերությամբ աշխատել, որ պահպանվի նրանց հետ մեր միությունը։ Մենք այն կարծիքի ենք, թե դավանությունների բազմատեսակությունը չէ ոչնչացնում ազգային միությունը — միությունը պետք է որոնել այդ մասների ներդաշնակության մեջ, որի հիմնական **մոթիվը** պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ։ Մենք համոզված ենք, որ եկեղեցու անբաժան միությունը մի ազգի մեջ կարող է տանել դեպի միակողմանիություն, և հետևապես դեպի անկենդանություն, որի ընդհակառակն, եկեղեցու բաժանված մասերն, առանց մի ընդհանուր առաջնորդող ոգու (որ կարտահայտեր բոլորի շահերը), կտանեն դեպի թուլություն և կործանումն։

Կրկնում եմ, պետք է թողնել մրցությունը գնա իր ճանապարհով, դրանով ավելի կշահվեն լուսավորչականները, քան թե հալածելով իրանց հղբայրներին։ Տաճկաստանցիք փոքր չօգտվեցան այդ մրցությունից. եթե նրանց մեջ փոքր ի շատե ծաղկել սկսել

տպագրությունը և առհասարակ գրականությունը, դա առաջ եկավ վենետիկցոց հետ մրցությունից. եթե նրանք սկսնցին բարեկարգել և բազմացնել իրանց դպրոցների թիվը, դա առաջ եկավ բողոքականների հետ մրցելուց։ Կաթոլիկությունն այժմ հայերի մեջ հասել է մի կետի, որ այլևս առաջ չէ գնում, և կարելի է ասել, որ նրանցից շատերը վերադառնում են դեպի իրանց հայրենի եկեղեցին, երբ փոքր-ինչ զարգանում են։ Իսկ բողոքականությունն այժմ մեծ գործունեության մեջ է. բայց հավանական չէ նրանցից սպասել այն վտանգը, որ կարծվում է, որովհետև Փոքր Ասիայի մեջ դործող միսիոնարներն ըստ մեծի մասին պատկանում են Ամերիկայի մեթոդիստների Պորտ ընկերության, որոնք անգլիականների կամ անգլիացոց հետ ոչինչ կապ չունեն և մինչև անգամ սաստիկ հակառակ են վերջիններին։ Իսկ եթե կմտնեն հայերի մեջ բուն անգլիականները, այն ժամանակ գործը կփոխվի, նրանք կարող էին վտանգավոր լինել. հայերից շատերը կընկնեն նրանց գիրկը, անգլիական կոնսուլներից և գործակատարներից պաշտպանություն գտնելու համար։

Եթե քննենք Թուրքիայում կրոնափոխությունների պատճառը, կտեսնենք որ, դավանաբանական համոզմունքը, խղճի ազատությունը այստեղ բոլորովին երկրորդական դեր է խաղում, այլ ըստ մեծի մասին մարդիկ հեռանում են իրանց հայրենի եկեղեցուց կյանքի զանազան նյութական կարիքների պատճառով։ Տեսնում ենք, միսիոնարը հայտնվում է մի տեղ։ Նրանք առհասարակ ընտրում են խուլ անկյուններ, ուր տիրում է մտավոր և նյութական աղքատություն։ Նրա քարոզների առաջին ունկնդիրները լինում են այն մարդիկը, որ իր տանը ծառայում են՝ խոհարարը, սպասավորը, ձիապանը, նրանց կանայք և այլն։ Ստանալով մեծ միջոցներ իր հայրենիքից, և օգուտ քաղելով երկրի էժանությունից, նա շնչին վարձատրություններով կարողանում է իրան շրջապատել անթիվ ծառաներով և շքեղ կացությամբ։ Տան ծառաների վրա ավելանում են վարժապետները, տպարանի մշակները, մասնավոր քարոզիչներ և բոլոր այն մարդիկ, որ որևիցե պաշտոն են կատարում և միսիոնարից ամսական են ստանում։ Այսպիսով, կազմվում է նրա փոքրիկ եկեղեցին։ Բայց կտրվեցավ մեկի ամսականը, զրկվեցավ նա իր տեղից — մյուս օրը այլևս չի գնա «պատվելիին» քարոզը լսելու։

Բայց «պատվելին» իհարկե չէ կարող իր ունկնդիրների բոլորին գործ հանձնել և ոռճիկ տալ, և նրանց պահպանելու համար ստիպված է ուրիշ կերպով օգնել, կամ փող ընծայելով, կամ պաշտ-

պանելով այս և այն հարստահարություններից և կամ հրապուրելով զանազան խոստմունքներով ու հույսերով։ Մի փաստ, որին ես ականատես եմ եղել, կարող է բացատրել, թե այս եղանակով հաստատված եկեղեցին որքան հիմնավոր պետք է համարել։ Մի գյուղացի պարտքով վեր է առնում միսիոնարից մի քանի ոսկի և իր համար եզն է գնում։ (Նրանք շատ անգամ տոկոսով փող են տալիս իրանց ունկնդիրներին ավելի պարտավորեցնելու համար)։ Այնուհետև գյուղացին մի քանի ամիս հաճախում է լսելու «պատվելիի» քարոզները, իսկ հետո դադարում է գնալ։ Միսիոնարը պահանջում է ոսկիները և ստանում է խորամանկ գյուղացուց մի այսպիսի պատասխան. «Ես արդեն վճարել եմ ձեզ իմ պարտքը. դուք տվեցիք ինձ մի քանի ոսկի, ես փոխարենը երեք ամիս ձեր եկեղեցին եկա. իսկ հիմա երբ փողը հետ եք պահանջում, պետք է երեք ամիս էլ դուք մեր եկեղեցին գաք, որ սերսվենմ (այսինքն՝ «քվիտ լինենք»)։ Իհարկե, դրանք պատահում են ավելի չափահաս մարդկանց հետ, բայց մանուկները, որոնք կրթություն են ստանում նրանց դպրոցներում, բավական տարբերվում են իրանց հայրերից։

Բայց դպրոցի աշակերտներն ևս, սկզբից կաշառվելով, մի տեսակ սովորում են փողի։ Աղքատ մանուկը, մտնելով միսիոնարի դպրոցը, ստանում է գիրք, թուղթ և բոլոր դասական պիտույքները ձրի. նա ստանում է շատ անգամ հագուստ և շաբաթական մի մասնավոր վճար։ Նա սովորում է ուրիշի հաշվով ապրելուն։ Նա դուրս է գալիս դպրոցից բոլորովին փոխված մարդ։ Սովորել է լավ հագնել, լավ ուտել, բայց չէ սովորել մի բան, որ կյանքի մեջ նրան հաց տար։ Իր հոր պարապմունքի վրա նա ամաչելով է նայում։ Ստիպված է դիմել միսիոնարին, որ իրան գործ տա։ Բայց միսիոնարն ամենի համար գործ չունի։ Նա մնում է անգործ և առանց ապրուստի։ Նա դառնում է ավելի թշվառ աղքատ, քան թե իր հայրը։ Այն ժամանակ պատրաստ է նա պատահած մարդու գիրկը ընկնել, իր կրոնը փոխելով, միմիայն նրան ապրուստի միջոց կտար։ Այստեղից է առաջ գալիս բախտախնդիրների այն հասարակությունը, որոնց ուրիշ անուն տալ անհարմար կլիներ, բայց միայն կոչել կրոնավաճառներ, որոնք կաթոլիկներից փախչում են դեպի բողոքականները, իսկ վերջիններից դեպի կաթոլիկները, որտեղ որ նրանց լավ էին վարձատրում։ Այդ պատահում է ոչ միայն մասնավոր անձերի հետ, այլ, ես գիտեմ մի ամբողջ բողոքական ժողովուրդ, ուր Ամերիկայի միսիոնարներն աշխատել էին ավելի քան քառասուն տարի և միլիոններ էին ծախսել, բայց երբ սկսեցին ծախսերի թիվը պա-

կասացնել[1] ժողովուրդը պատգամավորներ ուղարկեց Լոնդոն, այստեղից հրավիրելու անգլիականների (եպիսկոպոսների) քահանաներ, այն հույսով, թե նրանք ավելի հարուստ են։

Վերոհիշյալներից պարզ է, որ Թուրքիայում կրոնափոխության գլխավոր պատճառները պետք է որոնել ժողովրդի դառն աղքատության և նրա անտանելի հարստահարությունների մեջ մահմեդականների կողմից։ Եվ մի եկեղեցի, որ հիմնվում է ժողովրդի չքավորությունից և նրա նեղ դրությունից օգտվելով, հասկանալի է, թե ո՛ր աստիճան կարող է նա աստատուն լինել։ Եվ երբ ժողովրդի տնտեսական դրությունը կբարեկարգվի, երբ նրա կյանքը կապահովվի, և նա իր գլխի և ապրանքի տերը կլինի,— ես համոզված եմ, որ կրոնափոխությունն ինքն իրան կարգելվի, և կդադարի, ինչպես նա այժմ չէ հաջողվում այն քաղաքներում, ուր ժողովուրդը փոքր ի շատե հանգիստ է, և եթե հաջողվում է, այն ևս բնակիչների ամենաստոր դասի մեջ, որ տանջվում են դառն աղքատությամբ։

Ես շատ կտխրեի, եթե Ֆրանսիայում մի փոքրիկ հայ գաղթականություն կընդուներ կաթոլիկություն, իսկ Անգլիայում բողոքականություն. կարող էի մարգարեի ոգով նախագուշակել, որ նրանք մեկ կամ կես դարից հետո կկորչեին. բայց երբեք չեմ կարող երեվակայել, որ Հայաստանում հայը Ֆրանկ կամ Ընգլիզ կարող է դառնալ։ Մի փոքրիկ ազգություն, իրավ է, կկլանվի, կանհետանա, երբ կմիանա իր տիրապետող պետության եկեղեցու հետ, ինչպես Թուրքիայում բոլոր մահմեդականություն ընդունող հայերը ձուլվեցան Թուրքերի հետ։ Բայց նույնը չէ պատահում, երբ մի ժողովուրդ իր հայրենի երկրում ընդունում է մի ուրիշ դավանություն, որ տարբեր էր պետական կրոնից։

Թուրքիայի անհեռատես կառավարությունը, որ հայերի մեջ երկպառակություն գցելու մտքով, և նրանց միությունը քանդելու համար թույլ էր տալիս, և մինչև անգամ ինքը նպաստում էր, որ կրոնափոխությունը տարածվի հայերի մեջ, բայց նա մի սխալանքից մի ուրիշ ավելի վատի մեջ ընկավ, որ հայերից կաթոլիկներ և բողոքականներ պատրաստելով, թեև մի կողմից քանդեց նրանց միության կապերը, բայց մյուս կողմից իրան վնասեց, դրանով մի ճանապարհ բացելով կաթոլիկ և բողոքական պետությունների

---

[1] Այդ ընկերությունը, կարծեմ, 30 տարուց ավելի իրավունք չուներ մի ժողովրդի մեջ ծախսեր անելու. այսքան միջոցում պետք է նա իր գործն ավարտած լիներ և այնուհետև ինքը ժողովուրդը պետք է իր եկեղեցու ծախսերը հոգար։

Անգլիայի և Ֆրանսիայի) դիպլոմատիայի առջև միջամտություն գործելու իրանց հավատակիցների առիթով Թուրքիայի ներքին գործերում։ Հիշյալ սխալանքի հետևանքը բացահայտ երևում է Բեռլինի կոնգրեսի վրա։ Պարսկաստանն այդ մասին ավելի խելացի քաղաքականության է հետևում. նա ամեն կերպով աշխատում է, որ բողոքականությունը և կաթոլիկությունը չտարածվի իր երկրում գրտնված քրիստոնյաների մեջ, հայոց դպրոցներին պետական գանձից ժանդակություն տալով և հայ եկեղեցականների իրավունքները և նրանց նշանակությունը բարձրացնելով, որ կարողանան օտարերկրյա քարոզիչների հետ մրցություն անել։ Այդ մասին ինձ հայտնի են շատ փաստեր, որոնց հիշելը ավելորդ եմ համարում։ Եթե Թուրքիան խելքը գլուխը հավաքեր, նույնը պետք է անե այսուհետև, որովհետև դրանից ավելի կշահվի։

Բայց մեզ շատ անգամ պատահել է լսել այսպիսի կարծիք. «Ինչ ենք կորցնում, եթե անգլիացին և ֆրանսիացին մեր՝ կրոնը հոխելու համար կսկսեին համակրել և պաշտպանել մեզ, ինչո՞ւ գուտ չքաղենք այդ հանգամանքից։ Վասակները և Մեհրուժանները ոլորը այդ կարծիքի էին, բայց մեր ազգը սաստիկ պատժվեցավ այդ քաղաքականության հետևելով. Կիլիկիայի մեր թագավորության զոհ եղավ այդ քաղաքականությանը, երբ հայերն իրանց սեռական ուժերն արհամարհելով, մտածեցին միանալ հունաց եկեղեցու հետ, որպես Բյուզանդիայի կայսրությունից կամ պապից պաշտպանություն գտնեն։ Մեր պատմությունը լի է դրա նման շատ ուրիշներով, որ միշտ կործանիչ հետևանք են ունեցել։

Կրկնում ենք, շատ ցավալի է տեսնել Թուրքիայում կրոնի պատճառով հայերի մի մասն անջատված ազգային ամբողջությունից։ Բայց քանի որ դա արդեն պատմական կատարված իրողություն է, ուրեմն պետք է միավորելու հնարներ որոնել և ոչ թե բանող վիհն ավելի և ավելի լայնացնել։ Վեճը կարծիքների տարբերության մեջն է, թե ո՛րպես պետք էր միավորել։ Սրկին թվված զգասիրությամբ քարոզել այն մաշված թեման, թե մենք մի կրոնական ժողովուրդ ենք, թե մեր ազգությունը ճանաչվում է մեր եկեղեցիով, թե ով որ լուսավորչական չէ, հայ ևս համարվել չէ արող և այլն, այդ տեսակ քարոզներ գուցե մի ժամանակ հարկավոր լինեին, իսկ այժմ շատ և շատ հնացել են։ Այս տեսակ քարոզներով ոչինչ օգտվել չէ կարելի, ընդհակառակն վնասակար են այն պղմից, որ դրանցով ավելի առիթ կտանք բողոքական և կաթոլիկ հայերին բոլորովին անջատելու ազգային միությունից։ Թուրքիայի

հայերի մեջ միութեան միակ հնարն այժմ այն է, որ ոչ թե հայրենի եկեղեցուց բաժանված եղբայրներին կրկին դարձնել դեպի լուսավորչի փարախը, այլ աշխատել նրանց մեջ տարածելու ազգայնութեան գաղափարը, թե մի ազգի անդամները կարող էին այս և այն եկեղեցուն պատկանել, բայց դարձյալ մի ազգային ամբողջական մարմին կազմել, և ցրված ուժերը մի տեղ հավաքելով, միասին գործել բռնության և հարստահարության դեմ, և միասին թոթափել այն անտանելի լուծը, որ ամենի վրա միևնույն չափով ծանրացած է։

Ոմանք ասում են այդ անհնարին է։ Ասիայում, հայերի մեջ եկեղեցին միայն կարող է լինել միավորիչ հոդ. ազգայնության գաղափարը Եվրոպայում միայն ունի իր ազդեցությունը, այնտեղ ամեն անհատ կարող է մինչև անգամ անհավատ լինել, բայց մի ազգի պատկանել և այլն։ Խիստ կարճամիտ դատողություններ են։ Ինչ որ հնարավոր է Եվրոպայի համար, այն և հնարավոր է երկրագնդի ամեն մի ժողովրդի համար, զանազանությունը նրա մեջն է միայն, թե եվրոպացին ի՛նչ ճանապարհով հասավ այն կետին, դու էլ նույն ընթացքը բռնիր, քաղաքակրթությունը քեզ չի զլանա այն բարիքը, ինչ որ բոլոր մարդկության սեփականություն է։ Միթե Եվրոպայի մեջ միևնույնը չէ՞ր մի քանի դար առաջ, ինչ որ այսօր հայերի մեջն ենք տեսնում, մի՞թե եվրոպացիք նույնպես չէին շփոթում ազգությունը եկեղեցու հետ, իսկ այժմ ի՞նչպես հասկացան, թե ազգությունը և կրոնը որոշ գաղափարներ են։

Իմաստակությունը մեր մեջ բթված ազգասիրության հետ ձեռք ձեռքի տված է գնում։ Հայ կաթոլիկը և հայ բողոքականն անցյալ չունեն,— ասում են ոմանք,— լուսավորչական հայերը միայն անցյալ ունեն, որովհետև պատմությունը նրանց է պատկանում։ Դրանից ստոր երեխայական մտածություններ լինել չեն կարող։ Եթե մեր անցյալը բավնդակվում է միայն մեր եկեղեցու մեջ, ուրեմն էլ ինչո՞ւ ենք պարծենում Տրդատից և Լուսավորչից առաջ եղող մեր հնթանոս Հայկով, Արամով, Տիգրաններով և այլն։ Ուրեմն մենք մեր պատմությունը պետք չ սկսենք այն օրից, երբ լուսավորչական եկեղեցին հիմնվեցավ, և նրանից առաջ եղող մեր նախնիքներին հայ չհամարենք, որովհետև կռապաշտներ էին և այդ եկեղեցուն չէին պատկանում։ Բայց մենք մի այսպիսի խորութիւն չենք դնում պատմության մեջ։ Այլևս ի՞նչ իրավունքով կարող ենք ասել կաթոլիկ և բողոքական հային, թե դուք անցյալ չունեք, երբ նրանք էլ միևնույն ցեղի շարունակությունն են, երբ Հայկը, Արամը, Տիգ-

բանը, Տրդատը, Լուսավորիչը, Վարդանը, Ներսես Մեծը և այլն, որքան լուսավորչականին են պատկանում, այնքան էլ պատկանում են հայ բողոքականին և հայ կաթոլիկին։ Ազգային պատմությունը, ազգային անցյալն ամբողջ ազգի սեփականությունն է, ինչ կրոնի և ինչ աղանդի պատկանելու լինեին նրա կազմող մասերը։

Եթե այսօր հայ բողոքականը և հայ կաթոլիկն իրանց հայ չեն համարում, այդ անկրթության հետևանք է։ Մի՞թե անկիրթ հայ լուսավորչականը միևնույն աչքով չէ նայում նրանց վրա. մի՞թե նա բողոքականին և կաթոլիկին հայ է համարում։ Որպես հայ կաթոլիկը իրան ֆրանգ է կոչում, այնպես էլ հայ լուսավորչականը նրան ֆրանգ է կոչում։— Այդ բոլորն առաջ է գալիս այն համողմունքից, թե ազգայնությունը պետք է որոնել եկեղեցու մեջ։ Եվ այդ բոլորը կանհետանան այն ժամանակ, երբ ազգայնության գաղափարը կրթության միջոցով կլսնդհանրանա ամեն մի անջատված մասերի մեջ։

Եվ Թուրքիայի պետական մարդիկը շատ լավ են հասկացել վերոհիշյալ հանգամանքները. «բաժանեա՛, զի տիրեսցեսս—ահա՛ նրանց դեվիզը։ Մեզանից ամեն մեկն առհասարակ խիստ արհամարհական կարծիք ունի Թուրքիայի պետական մարդերի վրա. նրանք, թեև հանճարներ չեն, նրանք թեև մի-մի երևելի ավազակներ են, որ կողոպտում են արքունի գանձը, և ամբողջ նահանգների ժողովուրդը վերջին թշվառության մեջ են ձգում, բայց խորամանկության մեջ, դիվանագիտական խաբեության մեջ և ընդհանրապես մաքիավելլիզմի մեջ անհամեմատ շնորհալի են։ Նրանք շատ լավ են հասկանում պետության մեջ եղող բոլոր ցնղերի հարաբերությունները, նրանց ձգտումները, և եթե վնասակարության մի փոքրիկ նշույլ են տեսնում, գիտեն, թե ինչ եղանակով պետք էր կամ հարմար էր խեղդել նրանց ձգտումները, կամ բոլորովին ոչնչացնել։ Նրանք չեն արհամարհում օգուտ քաղել և ամենափոքր միջոցներից, որոնցով կարելի էր մի ցեղի մեջ երկպառակություն ձգել և նրա միության կապերը քանդել։ Նրանք վաղուց են հասկացել, թե ի՛նչ միջոցով կարելի է քայքայել հայ ժողովրդի ամբողջությունը, որ լուսավորչական եկեղեցուց դուրս հայ չէ ճանաչում։ Եվ այդ է պատճառը, որ Թուրքիայում կրոնափոխությունն այնպես արագ քայլերով առաջ է գնում. որովհետև կառավարությունն ինքը նպաստում է։ Այս բոլորից հետո զարմանալի չէ տեսնել, որ հայկական խնդրին կից հարուցվեցավ հասունյանների և հակահասունյանների դադարած կռիվը։

Կրոնական երկպառակություններին ուժ տալը և նրանց միջոցով զանազան ցեղերի մեջ անմիաբանություն և անհաշտություն պահպանելը դա մի ժառանգական քաղաքագիտություն է, որ սեփականել է իրան մոնգոլական Թուրքիան Բյուզանդիայի գահի հետ։ Միայն հայերի վերաբերությամբ չէ վարվում նա այդպես. նույն երևույթները կրկնվում են նեստորական և նեստորականությունից բաժանված ասորիների մեջ, քիլդանիների մեջ, մարոնիտների մեջ, հակուբիների մեջ, ղպտիների մեջ, և առհասարակ բոլոր քրիստոնյա ցեղերի մեջ։ Ո՞վ չգիտե, թե ամեն տարի, սուրբ Հարության տոնի օրը Երուսաղեմում, սուրբ Հակոբա տաճարի մեջ ի՛նչ խայտառակ խռովություններ են պատահում հայոց, լատինական և հույն աբեղաների մեջ։ Եվ չնայելով հայոց և հունաց պատրիարքարանների անդադար բողոքներին, մինչև այսօր Բ. Դուռը մի կարգ կամ սահման չդրեց նրանց մեջ, և նրանց յուրաքանչյուրի իրավունքները չորոշեց, որ աբեղաները ստիպված չլինեին ամեն տարի միմյանց գլուխը ջարդել։

Բ

Մենք բավական հեռացանք հարցից, երկար կանգնելով կրոնափոխության խնդրի վրա։ Ցույց տալով, թե մեր և տաճկաստանցոց մեջ ոչինչ կապեր կամ հարաբերություններ չկան, և հայտնելով այն միտքը, թե մենք պարտավոր ենք օգնել նրանց — գուցե ընթերցողը սպասում էր, թե մենք պետք է ցույց տանք որևիցե նոր կապեր, կամ մենք կասենք, թե ինչով և ինչ բանի մեջ կարող էինք օգնել նրանց։ Դրանց և ոչ մեկը մեր հոդվածի նպատակը չէ։ Մենք պետք է հետևենք հմուտ բժշկի եղանակին, որ առաջ հետազոտում է հիվանդի կազմվածքը, ուսումնասիրում է նրա ամբողջ կյանքը, քննում է նրա ցավերը, հասկանում է ցավերի առաջ բերող պատճառները, իսկ հետո մտածում է դարմանների մասին։ Մենք, որպես սկզբում հայտնեցինք, դեռ ոչ բոլորովին ճանաչում ենք մեր տաճկաստանցի եղբայրներին, չգիտենք ինչ բանի կարոտ են նրանք, և նրանց դրությունն իր բոլոր կողմերով դեռ մեզ հայտնի չէ. ուրեմն ինչ որ գրենք, ինչ որ մտածենք նրանց մասին, բոլորը կլինեն թերի, միակողմանի և շատ անգամ անհիմն։ Ենթադրություններ։ Պետք է ունենալ ճիշտ տեղեկություններ։ Պետք է մեզ հիմնվել խնդրի բարձր նշանակության վրա և հասկանալ, որպես

հարկն է, նրանց պետքերը, և ուսումնասիրել նրանց կյանքի և կացության բոլոր էական գծերը, նրանց տնտեսական վիճակը, անցյալ և ներկա քաղաքական դրությունը և այլն։ Բավական չեն միայն եղբայրական զգացմունքների արտահայտություններ կամ ազգասիրական դարտակ ցուցումներ, որ վերջանում են նրանով միայն, որ ողորմելի տաճկաստանցու համար օդեղեն ամրոցներ ենք ստեղծում, մինչդեռ նա իր գլուխը դնելու և հանգչելու տեղ չունի։

Մեր մեջ պետք է կազմվի փոխադարձ հասկացողություն։ Մենք դեռ չունենք ոչ մի օրինավոր շարադրություն Տաճկական Հայաստանի մասին։ Մի քանի հատ ու կտոր, չնչին, անիմաստ հոդվածներ ի՞նչ լույս կարող էին ձգել նրանց կյանքի վրա։ Մեզ պետք են կատարյալ ժողովրդագրական (էտնոգրաֆիական) տեղեկություններ, հիմնված փաստերի վրա ոչ միայն հայերի կյանքն ուսումնասիրելու համար, այլ թուրքերի, քուրդերի, չերքեզների և բոլոր ցեղերի, որ այժմ Հայաստանում բնակված են։ Մեզ պետք են կատարյալ աշխարհագրական տեղեկություններ Հայաստանի ազգաբնակության, արդյունաբերության, տեղագրության, ճանապարհների հաղորդակցության և նրա թե բնական և թե քաղաքական կյանքի մասին։ Մեզ պետք են ճիշտ վիճակագրական և տնտեսագիտական տեղեկություններ հայոց ազգաբնակության մասին առանձնապես և օտար ցեղերի մասին ընդհանրապես։ Մեզ պետք են մինչև անգամ գիտենալ Հայաստանում բնակվող ժողովրդների մեջ տիրող ոգին, նրանց բնավորությունները, ուղղությունը, ձգտումները, կրոնական և բարոյական զգացմունքները, մի խոսքով նրանց բոլոր մտավոր և հոգեբանական կողմը[1]։

Կ. Պոլսի հայոց մամուլը և նրանց գրականությունը չտվեցին մեզ վերոհիշյալ տեղեկություններից և ոչ մեկը, ոչ իրանք ցանկացան ունենալ. դրա մեջ պետք է որոնել նրանց անհաջողության ամենամեծ պատճառը։ Թուրքիայի գրական մարդիկն այն աստիճան անզարգացած և մանրիկ մարդիկ են (թեև, պետք է խոստո-

---

[1] *Որպես բացառություն, պետք է հիշել, որ պ. Գ. Արծրունու դասախոսությունը «Թուրքաց հայերի տնտեսական դրության» վերնագրով, որ տպվեցավ «Մշակի» №№ 15, 16, 17, 18, թե իր բազմակողմանի բովանդակության կողմից. և թե հայացքների ճշտության կողմից ներկայացնում է մի գեղեցիկ օազիս Թուրքիայի վերաբերյալ մեր դարտակ և անապատացած գրականության մեջ, և ցավում ենք, որ Կ. Պոլսի մամուլը չհետաքրքրվեցավ հիշյալ աշխատությունով, և այդ մի տեսակ նշան պետք է համարել նրանց անտարբերությանը դեպի այն բոլորը, ինչ որ իրական կյանքին և բնությանն է վերաբերում։*

վանվել, որ մեր մեջ էլ չկան մեծ մարդիկ), որ մինչև անգամ չէին կարող մտածել, թե ինչ պետք է իրանց և ինչ բանի համար պետք է գրել։ Տեղային սահմանափակ միջոցները չկարողացան ստեղծել զորավոր տաղանդներ զորավոր գործերի համար, և մնալով տակ, նրանք չկարողացան ծառայել ազգային գլխավոր պահանջներին — նրա փրկութեանը օտարի ճնշող ներգործութենից։ Իսկ մեր մեջ, թեև չկան զորավոր տաղանդներ, բայց կան զարգացած մարդիկ, որոնք կարող են ավելի նպատակահարմար և հիմնավոր կերպով գործել, քան թե կ. պոլսեցիք։

Բայց կան և մարդիկ, որ այսպես են մտածում. «թողնք տաճկաստանցիներին հանգիստ մնալ, մի՛ պղտորնք նրանց միտքը, նրանք ավելի լավ են հասկանում իրանց գործը, մենք մեծ հույսեր ունենք նրանցից» և այլն։ Երանի, թե գիտենայինք ինչ բանի վրա են հիմնված այդ հույսերը։ Այս տեսակ խոսքերով կարելի է ամբողջ գրքեր գրել, միայն թե ցանկութիւն լիներ անիմաստ բառեր շարել։ Նվ զարմանալին այն է, որ այդ պառավախոս իմաստակները համարձակվում են մի ամբողջ ընկած ժողովրդի «գնդեցիկ» ապագան նախագուշակել դարտակ հույսերով միայն, առանց նրան ճանաչելու, առանց նրա ներկա դրութիւնը հասկանալու։ Դրանք նմանում են այն եղերամարմ կոչված պառավներին, որ հրավիրվում են դիակների վրա երգ երգելու. նրանց համար միևնույն է, թե ո՛վ էր, ինչ տեսակ մարդ էր հանգուցյալը, կարող են նրան մինչև անգամ չճանաչել, կարող է նա բոլորովին ոչինչ մարդ լինել. բայց նրանք միշտ իրանց սովորական երգն են երգում, գովաբանում են նրա չգործած սխրագործութիւնները, նրա առաքինութիւնները, գութ և ափսոսանք են շարժում, որովհետև դրա համար վարձ են ստանում։

Միշտ հույս և հույս — այդ է իմաստակների խոսքը, թեև դարտակ հույսն առանց գործի ոչ մի նպատակի չէ հասցնում։ Անշարժութեան այդ վարդապետները, ես հավատացած եմ, կցանկանային, որ ամբողջ մարդկութիւնը մումիաներ լինեին և երբեք չփոխվեին, փուլ չէ, հա՛ն նրանց մեջ կյանք չէր լինի։

Ո՛չ, մենք պետք է խոսենք, պետք է մտածենք մեր տաճկաստանցի եղբայրների մասին, պետք է քննենք նրանց և բոլորը կրիտիկական խստութեամբ քննենք։ Քանի որ կատարեալ չենք ուսումնասիրել, քանի որ չունենք և չենք աշխատի ունենալ նրանց դրութեան մասին ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ — մեր բոլոր ջանքը, մեր բոլոր աշխատութիւնը նրանց օգնելու մասին

ապարդյուն կլինի։ Կանգնել հեռու, չմտնել գործի մեջ, չտեղեկանալ մի ժողովրդի իսկական պահանջները և միայն ստեղծել իր գլխում իդեալական ցնորքներ — այդ բոլորը հրապուրիչ բաներ են, բայց խաբուսիկ են։ Կարիներտի երևակայություններն ինքն իրան ոչնչանում են, երբ զարկվում են իրականության հետ։

Կրկնում ենք, մեր և մեր տաճկաստանցի եղբայրների մեջ մինչև այսօր ոչ մի ամուր կապ չէ եղել և չկա։ Պատճառները բացատրեցինք։ Եվ ա՛յն ժամանակ կկազմվի մեր մեջ փոխադարձ հարաբերության կապ, երբ կլինի մտքի փոխանակություն, որին պետք է ծառայե իսկապես մամուլը և գրականությունը։ Գրականական հաղորդակցությունը կունենար և այն օգուտը, որ կստեղծեր մեր մեջ ընդհանուր գրականական լեզու, և այդ ամենակարևոր մի գործ է, որովհետև բազմաբարբառությունը, թեև մի կողմից կազմում է լեզվի հարստություն, բայց մյուս կողմից թուլացնում է, անջատում է գրականության կրթողական ուժը և դժվարացնում է միևնույն ազգի մեջ տոհմային հարաբերությունները։

Տաճկաստանի մեր հայ եղբայրները կարոտ են օգնության, կարոտ են, որովհետև անկիրթ են, կարոտ են, որովհետև աղքատ են,— անկրթությունը և աղքատությունը երկուսն էլ մեծ արգելք են լինում ժողովրդի առաջադիմության։ Ամեն հայի պարտքն է օգնել նրանց, իսկ մեծ պարտավորությունը հասնում է Ռուսաստանի հայերին։ Մենք մեծ նշանակություն չենք տալիս այն մասնավոր նվիրատվություններին, որ լինում են Տաճկաստանի այս և այն ընկերության անունով, որովհետև չգիտենք, թե որքան այն ընկերությունների նշանակությունը նպատակահարմար էր, թեև չենք կարող ուրանալ և մեր ժողովրդի գովելի չանքը, որ աշխատում է գոնյա այսքանով նպաստել մեր կարոտյալ եղբայրներին։

Բայց ցավալի է խոստովանվել, որ մեր տաճկաստանցի եղբայրների վերաբերությամբ այն օժանդակությունը, որ արեց և անում է մեր ժողովուրդը, այն աստիճան աննշան և անբավականացուցիչ պետք է համարել, որ մինչև անգամ հիշելու արժանավորություն չունի։ Մեր հարուստները համարյա չմասնակցեցին, ժողովրդի այդ մասը, որի սրտի մեջ սառել է ազգային ամեն զգացմունք, որ իր քեֆի և փառքի համար ահագին դումարներ է վատնում — հարուստները, խիստ մասնավոր բացառությամբ, Տաճկաստանի կարոտյալների համար ոչինչ չնվիրեցին։ Մեր հոգևորականությունը, միայն իր շահերի և քսակի համար մտածող հոգևորականությունը, բոլորովին անտարբեր մնաց, և որպես սկզբում

հայկական խնդիրը զարթնելու ժամանակ լուսյուն պահեց, այնպես էլ նյութապես օգնելու գործի մեջ նա սառնասիրտ համառությամբ պահպանեց իր անկարեկցությունը։ Մեր արիստոկրատիան և այսպես անվանված չինովնիկ հասարակությունը ոչ սակավ սառնասիրտ գտնվեցան, քան հարուստ և հարստահարող վաճառականը և քան ամեն բարի ձգտումներ խեղդող հոգևորականությունը։ Մի կետ, որ աչքի էր զարկում և որ ավելի մխիթարական էր, այն էր, որ Տաճկաստանի մեր կարոտյալ ազգայինների հառաչանքն արձագանք գտավ մեր ժողովրդի ստոր դասի մեջ. չքավոր գյուղացին, օրական աշխատանքով ապրող գործակատարը, փոքրիկ քաղաքների մանրավաճառները, և միշտ զրպանը դատարկ գիմնազիստը բաժանեցին իրանց սուղ միջոցներից մի փոքրիկ մասն այն եղբայրների համար, որ ավելի կարոտության մեջ էին, քան թե իրանք։

Ինչի՞ց առաջ եկած պետք է համարել մեր սառնասրտությունը դեպի մեր արենակից եղբայրները և ինչու՞ պետք է մենք այս աստիճան անկարեկից գտնվեինք։ Մենք ուրիշ պատճառ չենք ճանաչում, բայց միայն այն, որ ինչպես ցույց տվեցինք մեր հոդվածի առաջին գլխում, մեր և տաճկաստանցիների մեջ հենց առաջուց չէ եղել և չկար որևիցե սերտ կապ. մենք կտրված էինք միմյանցից և անջատման վիճակի մեջ մեր փոխադարձ համազգացությունը սառել և խսպառ օտարացման էր հասել։ Ծագեց ռուս-թուրքական վերջին պատերազմը, լսեցինք, կարդացինք մեր եղբայրների դառն թշվառությունները, և գտնվեցան դեռ ոչ բոլորովին մեռած սրտեր, որոնց գութը շարժեցավ, ոգևորվեցան, և մտածեցին օգնության ձեռք հասցնել։ Բայց որովհետև այդ ոգևորությունը րոպեական էր և առաջ էր եկել իրերի ժամանակավոր երևույթներից, ուրեմն և չէր կարող լինել տևողական, չէր կարող լինել հիմնավոր, այլ շարժառիթ պատճառների անհետանալու հետ պիտի անհետանար և ոգևորությունը։ Այսպես էլ եղավ և լինում է։ Սկզբում մենք խիստ հաճախ կարդում էինք «Մշակի» թերթերի մեջ նվիրատվությունների ցուցակներ «Ազգային ընկերության» համար, իսկ այժմ նվիրատվությունները հետզհետե նվազում են, և շատ չի անցնի, որ գուցե խսպառ կդադարեն։

Մի ժողովրդի ոգևորությունը պահպանելու համար դեպի մի բարի գործ պետք են ազդու միջոցներ և եռանդուռ աշխատություն, ոչ միայն նրա համար, որ դրդեն հասարակությանը նյութապես նպաստամատույց լինել գործին, այլ գլխավորապես նրա համար,

որ հասկացնեն, թե նրանք կատարում են սրբազան պարտավորություն։ «Մշակի» մեջ մի քանի անգամ հայտնվեցավ այն միտքը, թե պետք է մեր մեջ կազմվի մի հանձնաժողով, որ հոգ տանե տաճկաստանցոց համար նվիրատվություններ հավաքել տեղային նոր բացված դպրոցներին և առհասարակ կրթության տարածմանը նպաստելու նպատակով։ Բոլորովին համակրելով հիշյալ միտքը, և կրկին դառնալով մեր վերևում հայտնած նկատողություններին, թե մեզ պետք են նախ և առաջ հիմնավոր տեղեկություններ և ճիշտ հետազոտություն մեր տաճկաստանցի եղբայրների դրության և նրանց պետքերի ու կարոտությունների մասին — կավելացննենք, որ մի այսպիսի հանձնաժողովի նպատակը խիստ սահմանափակ կլիններ, եթե նա ուշադրություն դարձներ միայն նյութական օժանդակության վրա։ Որովհետև նախ քան օգնելը պետք է հասկանալ, թե ինչ բանի մեջ նրանք ավելի կարոտություն ունեն, պետք է հասկանալ նրանց անհրաժեշտ պահանջները, մի խոսքով նրանց այն ցավերը, որ շուտափույթ դարմանելու կարոտ են։ Իսկ այդ բոլորն ուրիշ կերպ կարող չէ լինել, բացի կատարելապես ծանոթանալուց նրանց վիճակի հետ։ Բայց տեղեկությունները մեզ մոտ խիստ սակաս են։

Գուցե ոմանք կնկատեն, թե այդ մեր գործը չէ, մենք փողը կհավաքենք, կտանք նրանց ձեռքը, նրանք իրանց պետքերը շատ լավ են հասկանում, թող ինչ հիմնարկության համար ցանկանում են, գործ գնեն փողերը։ Մենք մեզ սխալած կհամարեինք, եթե հայտնեինք այն միտքը, թե պետք է նրանց ձեռնարկությունների մեջ մենք ևս միջամտություն գործենք, կամ փող տալով, մեզ նրանց գլխին հոգաբարձու կանգնեցնենք — այդ մտքերը հեռու են մեր նպատակից։ Բայց չենք կարող թաքցնել և մեր կասկածանքը, թե մեր տաճկաստանցի եղբայրների գործող մասն այնպես հիմնավոր կերպով ուսումնասիրած լիներ ժողովրդի պետքերը, որպես հարկն է։ Միայն ուսումնարան, միայն դիր-կարդալ, միայն այբբենով չէ կարելի մի ընկած ժողովուրդ վերականգնել, դրա համար պետք են ուրիշ զանազան հնարներ, որոնք կրթության հետ պետք է զուգընթացաբար առաջ գնային։ Այլևս չենք խոսում այն բանի վրա, որ մեր տաճկաստանցի գործիչները, երեխայական ոգևորությամբ, միշտ սովոր են եղել մանր և մինչև անգամ չնչին գործերի համար մեծ աղմուկ բարձրացնել...

Մեր կարծիքով, պետք է սկսել մի հիմնավոր գործ, և փոխանակ ցրվելու, մասնավորացնելու ուժերը, հավաքել, կենտրոնաց-

նել նրանց մի ամբողջության մեջ և խմբովին գործել։ Դա ուրիշ կերպ լինել կարող չէր, քայց միայն, երբ Ռուսաստանի հայերից կկազմվեր մի հանձնաժողով գլխավորապես բարեգործական նպատակով՝ օգնելու մեր տաճկաստանցի եղբայրների կարոտությունների։ Ահա այդ հանձնաժողովը կարող էր ձեռք բերել Տաճկաստանի մասին այն տեղեկությունները, որոնց մասին վերևում խոսեցինք։ Նա կարող էր, գործին հմուտ ճանապարհորդներ ուղարկել Թուրքիայում հայերի դրությունն ուսումնասիրելու, և հրատարակել ոչ միայն հայերեն լեզվով, այլ զանազան լեզուներով, նա կարող էր մինչև այսօր հրատարակված հատ ու կտոր տեղեկությունները հավաքել, ամբողջացնել, և նույնպես առանձին գրքերով և թարգմանություններով հրատարակել։ Մի այսպիսի հանձնաժողովը բացի նյութապես և բարոյապես օգնելուց, ուրիշ շատ օգնություններ էլ կարող էր անել, որոնց վրա հարկ չենք համարում խոսել — այս էլ բավական է, որ նա կծանոթացներ Տաճկական Հայաստանի դրությունը ոչ միայն մեզ՝ Ռուսաստանի հայերին, այլ բոլոր լուսավոր աշխարհին։ Այն ժամանակ մենք հաստատ կերպով կգիտենայինք, թե ինչ կարոտություն ունեն նրանք և ինչ բանի մեջ պետք է օգնել[1]։

Ժողովուրդների վիճակը հանկարծ չէ հեղափոխվում, մի օրվա մեջ չէ բարվոքվում, այլ նախապատրաստություններ սկսվում է գուցե դարերով առաջ, իսկ հարմար ժամանակ նրան իրագործում է։ Տաճկաստանցիք նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այս պատճառով չհասան իրանց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում։ Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում։ Այս և այն հոդվածը, մանավանդ, երբ նա ֆորմի համար գրված է լինում, մի ժողովրդի վերածնելության վերաբերությամբ այնքան նշանակություն ունի, որքան մեռած ռեցեպտը հիվանդի առողջության համար, երբ դեղերը չեն գործադրվում։

Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կբովագործվեր. դա կոչվում է նախապատրաստություն։ Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար

[1] Վաղուց լսել ենք, թե մեր ռուսաստանցի հարուստներից մեկը ցանկություն ուներ Տաճ. Հայաստանում հիմնել մի բարձր դպրոց և այդ նպատակով վարժապետներ էր պատրաստում. եթե ճիշտ է այդ, արդյոք ո՞ր օրվա համար է պահել նա իր դպրոցը և վարժապետները։

և անընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ և պատրաստ հանդիպեն այն մեծ օրվանը, երբ կրկին անգամ կշարկե ազատության ժամը։ Իսկ այդ օրը կկրկնվի, և շատ անգամ կկրկնվի... գուցե շատ հեռու չէ մեզանից...

Շատերը դժգոհությամբ խոսում են.— «արևելյան խնդիրն այս անգամ էլ չվերջացավ...»— «ա՜խ, ե՞րբ պետք է վերջանա այդ արևելյան խնդիրը...»։ Իհարկե միամիտ խոսքեր են դրանք։ Արևելյան խնդիրը եվրոպայի կենսական խնդիրն է։ Կյանքի խնդիրները չեն վերջանում, այլ ժամանակավորապես պայմանավորվում են։ Ամբողջ հայոց ազգի մտածողների մեջ ես միայն մի մարդ եմ ճանաչում, որ իսկապես հասկացել էր, թե ինչ է նշանակում արևելյան խնդիր, և հասկացել էր այն ժամանակ, երբ այդ դիպլոմատիական տերմինը դեռ մեզանից շատերին ծանոթ չէր։ Միթե արեվելյան խնդիրը կարո՞ղ է վերջանալ.— ո՛չ, նա կմնա անվախճան, որքան ինքը արևելքը հավիտենական է։ Դա մի պատմական խընդիր է և պիտի ձգվի ազգերի պատմության հետ։ Մի ժամանակ արևելքից ազգերը հեղեղի հոսանքով թափվում էին եվրոպան կոտորածելու համար։ Այժմ դերերը փոխվել են։ Այսուհետև եվրոպայից պիտի հոսեն դեպի արևելք Ասիայի հարստությունները օգուտ քաղելու։ Եվ ամեն մի հոսանք կհարուցանե մի նոր արևելյան խնդիր։ Այսօր ռուսը և անգլիացին արևելքում շատ շահեր ունեն և մրցում են միմյանց հետ։ Հետո կսկսե գերմանացին, ֆրանսիացին և մյուսները։ Ամեն մի եվրոպական պետություն աճելով, ուղղվելով իր երկրի նեղ սահմանների մեջ, և սպառելով նրա հարստությունները, պետք է դիմե դեպի արևելք ապրուստ որոնելու։ Եվ ամեն մի նոր արշավանք կամ գաղթականության կհարուցանե մի նոր արևելյան խնդիր։ Եթե մինչև այսօր եվրոպական ազգերի հոսանքը դեպի արևելք թույլ էր գնում, այդ միայն պետք է շնորհակալ լիներ Ամերիկայի, որի հայտնվելը մի քանի դար թուլացրուց եվրոպացիների հոսանքը դեպի Ասիա. իսկ այժմ Ամերիկան էլ լցվելու վրա է.— Ուրեմն արևելյան խնդիրը միշտ կա ու կմնա, և տաճկաստանցի հայը պետք է նախապատրաստվի օգուտ քաղել հարմար դեպքից, երբ մյուս անգամ կհուզվի նա։

Իսկ եթե նա միշտ անպատրաստ կմնա՞։

Այն ժամանակ դժբախտ Հայաստանը — այդ Եվրոպայի և Ասիայի պատմական կամուրջը — ազգերի անցուդարձի ներքո կտորվի և կոչնչանա...

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ
ՄԵՐ ԸՆԹԵՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մտադրված լինելով նկարել Տաճկաստանի հայոց ներկա դրությյան և նրանց մոտավոր անցյալի ճիշտ պատկերը, վերջին քաղաքական անցքերի տպավորության ներքո ես ձեռնարկեցի գրել իմ «Կայծեր» անունով վեպը։ Այս աշխատությունը բովանդակում էր իր մեջ այն բոլոր սարսափելիքը, որոնց ենթարկված է Տաճկաստանի հայը։ Վեպը բաղկանում է երկու առանձին հատորներից, որոնց յուրաքանչյուրը կունենա մոտավորապես 400 տպագրված երեսներ։ Գործողությունների կենտրոնը Վասպուրականի նահանգն է. տիպերը հեղափոխական բնավորություն ունեն a la «Djalaled-dine»։ Իսկ անցքը վեր է առնված Վասպուրականում երեք քառորդ դար առաջ կատարված հայերի մի շարժումից, որի տխուր հիշատակները մինչև այսօր պահված են տեղային ժողովրդի մեջ։

Ի նկատի ունենալով այն երևույթը, որ այսօր Տաճկաստանի հայերի խնդիրը գրավում է մեր բոլոր համազգիների բարի ուշադրությունը, ես շտապեցի որքան կարելի է շուտով տպագրել հիշյալ աշխատությունը, համոզված լինելով, որ դրանով կարող եմ մի փոքրիկ լույս ձգել Թուրքիայի հայոց խնդրի լուծման վրա, որը գուցե դեռևս երկար ուսումնասիրության պետք ունի։

Բայց տպագրության ծախսերի դժվարությունն ինձ ստիպեց դիմել մեր պատվելի ընթերցող հասարակությանը, խնդրելով նրա համակրությունը մի այսպիսի ձեռնարկության մասին, որը բարեմիտ անձանց օժանդակությանը կարոտ է։ Եվ հուսով եմ, որ իմ ակնկալությունն անպտուղ չի մնա, և բաժանորդագրությամբ լույս կտեսնի «Կայծեր»։ Երկու հատորի բաժանորդագինն է միասին 3 ռուբլի. գրքերը կտպագրվին մինը մյուսից անմիջապես հետո, և ստորագրությունների համեմատ կուղարկվեն պ. պ. բաժանորդներին։

Տպագրությունը կսկսվի անհապաղ այն ժամանակ, երբ բաժանորդներից գոյացած գումարը կլրացնե տպագրության ծախսը։

Ի՞ՆՉՈՎ ԵՆՔ ՄԽԻԹԱՐՎՈՒՄ

Կույրը մի տեսակ մխիթարություն է զգում, երբ հանդիպում է մի ուրիշ կույրին, մտածում է, որ ինքը մենակ չէ։ Աղքատը նույնպես մխիթարվում է, երբ իրանից ավելի դժբախտին է տեսնում։

Բաժանված ախտը թևթևացնում է ախտավորի արատավորությունը։ Բաժանված դժբախտությունը մխիթարում է թշվառին։

Ո՞վ չգիտե, որ սնանկացած վաճառականն ուրախանում է, երբ մեկնույն անբախտությունը պատահում է և իր ընկերներին։ Երկրագործը շատ չէ տխրում, երբ կարկուտը փչացնում է բոլոր գյուղացիների արտերը։ Մինչև անգամ մահը, որ այնքան ցավալի է լինում, խոլերայի և ժանտախտի ժամանակ կորցնում է իր տխուր ազդեցությունը, որովհետև շատերն են մեռնում և վտանգը հասարակաց է դառնում։

Այդ ի՞նչից է, որ մարդ իր թերությունների, կորստի և անբախտությունների մխիթարությունը գտնում է ուրիշի թերությունների, կորստի և անբախտությունների մեջ։ Եթե չասենք, թե դա բնական է, կարող ենք ասել, որ այդ այդպես է լինում։

Այսպիսի հասկացողություններ, այսպիսի մտածություններ ոչ միայն տեսնում ենք մասնավոր մարդու մասնավոր կյանքի մեջ, այլ մինչև անգամ ամբողջ ժողովուրդների և հասարակությունների կյանքի մեջ։ Մի ժողովուրդ կամ մի հասարակություն իր վատ վարմունքն արդարացնում է մի ուրիշ ժողովրդի կամ հասարակության նույն տեսակ վարմունքով։ Զարմանալի չէ, որ տգետ ամբոխն այսպես է դատում, բայց շատ անգամ ինտելիգենցիան նույն սխալանքի մեջ է ընկնում։

Ինձ շատ անգամ պատահել է վիճել այսպիսիների հետ. ես հիշում եմ մինչև անգամ մի քանի բանակռիվներ, որ լրագրության մեջ անցան։ Ասում ես, օրինակ, հայերի մի ընդհանուր մոլության կամ մի ընդհանուր թերության մասին. քո հակառակորդը իսկույն արձակում է և գտնում է երկրագնդի վրա մի քանի ազգություններ, որոնք նույնպիսի թերություններ ունեին, և դրանով արդարացնում է հայի վարմունքը, ասելով, թե հայը մենակ չէ, որ այսպես է գործում։ Նա, կարծես, մի տեսակ մխիթարություն է զգում, երբ օտարների մեջ իր ազգի նմաններին է գտնում։

Այս տեսակ կարճամիտները զուրկ են լինում հիմնավոր ինքնաճանաչությունից։ Նրանց հայացքները կյանքի թե ընդհանուր և

թե մասնավոր երևույթների մասին ունենում են միշտ նեղ, սահմանափակ և միակողմանի բնավորություն։

Ուրիշների մոլություններով արդարացնել իր վատ վարմունքը — ահա՛ նրանց գլխավոր փաստը։

Ասում ես, օրինակ, հայ վաճառականը խաբեբա է։ Օրհնած, պատասխանում են քեզ, դու նայիր հույներին, հրեաներին և կըրթյալ անգլիացուն, հային, նրանց հետ համեմատելով, պետք է հրեշտակ համարել։

Բայց խաբեբայությունը խաբեբայություն է, ինչ չափով և ինչ ազգի մեջ գործվեր նա։ Ուրիշի գողությունները մեր գողությունը չեն արդարացնում։

Ասում ես, մեր եկեղեցականները վատ են, ծույլ են, ժամանակի պահանջների համաձայն չեն գործում, ազգի արծաթը վատնում են, ոչ մի օրինավոր բան չեն արդյունաբերում և այլն։ Խսկույն քո առջև դնում են կաթոլիկ կղերը, և սկսյալ եգիպտական քուրմերից մինչև Պիոս IX-ը, կարդում են եկեղեցականների վնասակար ազդեցությունը, դուրս բերելով այն եզրակացությունը, թե հայ կղերը համեմատաբար ավելի տանելի է։ Բայց դրանով հայ կղերը չէ արդարանում։

Այսպես դատելով, կարելի է միշտ այն սխալ եզրակացությանը հասնել, թե ինչ որ մեր մեջ վատ է, անբարոյական է, անազնիվ է, վնասակար է — ներելի է, որովհետև օտարների մեջ ևս գտնում ենք միևնույն հատկություններ։ Այսպես դատում էին և մինչև այսօր շարունակում են այսպես դատել այն փտած ազգասերները, որոնք հայի մեջ չեն ներում ոչ մի սև բիծ տեսնել։

Բայց մոռանում ենք մի բան։ Մի՞թե օտար ազգերը գոհ են իրանց վիճակից, մի՞թե նրանց մեջ ևս ժողովրդի ընտիր և մտավորապես զարգացած մասը չէ բողոքում, չէ դատապարտում այս և այն հասարակական զզվելի երևույթները։ Մոռանում ենք, որ օտար ազգերն իրանց թերությունների հետ ունեն և ահագին առավելություններ, որոնք պակասում են ողորմելի հային...

Մասնավորում եմ իմ խոսքը։

Մեզանից որի՞ հետ չէ պատահել աշակերտության ժամանակ տեսնել, երբ վարժապետը նկատել է մեր ընկերներից մեկի այս և այն անկարգությունը, ասելով.— Արշակ, անպիտան, ինչու ես չարություն անում։ Արշակը իրան արդարացրել է, պատասխանելով.— վարժապետ, ես մենակ չէի, Արամն էլ էր այսպես անում... Բայց Արամի անկարգությունն Արշակին չէ ազատում պատժից։

Նույն տպավորությունը գործեց, երբ կարդացի պ. Դադյանցի նամակը («Մշակ» № 217)։ Ես շատ ուրախ կլինեի և մեծ հոժարությամբ հետ կառնեի իմ խոսքը, եթե պարոնը իմ «Հայ երիտասարդության» մեջ նկարած Ռուսաստանի հայ ուսանողների պատկերը բոլորովին անճիշտ և աղավաղված գտներ։ Բայց նա աշխատում է արդարացնել հայ ուսանողների թերությունները, նրանով, որ դրանք ընդհանուր ուսանողության հատկանիշներ են, ո՛ր ազգության և պատկանեին — ռուս, լեհացի, գերմանացի, վրացի և այլն։ Դարձյալ մտածության նույն ձևը, դարձյալ դատողության նույն ևղանակը, որ մենք լսում ենք մեր ազգային և հասարակական ամեն մի տգեղ երևույթների վերաբերությամբ։ Մենք մեղավոր չենք, որովհետև ուրիշներն էլ նույնն են գործում... մենք մեղավոր չենք, որովհետև մեր նմանները շատ կան... Արշակը մեղավոր չէ, որովհետև Արամն էլ անկարգություն է անում... Պ. Դադյանի նման ուսանողին, որի գրվածները խոստանում են լավ ապագա, աններելի է այսպես դատել։

Ճշմարիտ ասած, իմ նկարագրած պատկերներն առհասարակ հայ ուսանողների կյանքից ուրիշ ոչինչ չեն, բայց միայն զանազան ժամանակներում «Մշակի» մեջ տպված հատուկտոր հոդվածներից և նամակներից դուրս բերած մի ամբողջ նկարագիր, որ իմ դրչի տակ ավելի ամփոփ շրջանակի մեջ է դրված։ Ես օգուտ եմ քաղել և այն վիճաբանություններից, որ ուսանողների վերաբերությամբ շատ անգամ տեղի են ունեցել այդ լրագրի խմբագրատան մեջ, իհարկե, ավելացնելով միևնույն ժամանակ և իմ սեպհական հայացքներն ու դիտողություններ։

Գուցե պ. Դադյանը այսօր տեսնում է իր աչքի առջև մի քանի իսկապես լավ ուսանողներ, որոնց ես էլ չեմ ուրացել, բայց «մի ծաղիկով գարուն չի լինի»,— ասում է հայտնի առածը։ Պետք է այն ևս նկատողության առնել, որ մի գրող, երբ կամենում է նկարել այս և այն հասարակության պատկերն իր բոլոր լավ և վատ կողմերով, նա չէ բավականանում միայն ներկա կամ առօրյա երևույթներով, այլ հավաքում է մի որոշ պերիոդի, ժամանակի մի որոշ շրջանի մեջ հայտնած երևույթները, ամբողջացնում է, և նրանցից դուրս է բերում մի ընդհանուր նկարագիր։ Նույնպես վարվում է և տնտեսագետը, մի քանի տասն տարվա ընթացքում կատարված փաստերից, մի քանի տասն տարվա ընթացքում հավաքած թվանշաններից դուրս է բերում միջին թիվ և նրա վրա հիմնում է իր կարծիքը։ Այսպես վարվել եմ և ես իմ հետազոտու-

թյունների մեջ հայ երիտասարդության վերաբերությամբ։ Ես վեր եմ առել մի ամբողջ սերունդ, որ գործում է և գործել է մի քանի տասն տարիների ընթացքում։ Հասարակական տիղերը մի օրվա մեջ չեն ծնվում, նրանք ներկայացնում են մի որոշ ընդհանրության հատկանիշներ, որ հայտնվել և զարգացել էին ժամանակի մի որոշ շրջանի մեջ։ Գուցե իմ նկարած ուսանողներից ոմանք դեռ չեն թողել համալսարանի նստարանները, գուցե ոմանք ավարտելով, այսօր պտտում են մեր աչքի առջև, և, ոմանք ծերանալով, թողել են կյանքի ասպարեզը։ Ես միացրել եմ երկու ծայրերը մի բոլոր ակի ամբողջության մեջ։ Բայց եթե ընթերցողը նրանում հրեշավոր տգեղություն է տեսնում, ո՞վ է մեղավոր։

«Հայ երիտասարդությունը» տպվելուց հետո «Մշակի» խմբագրատան մեջ ստացվեցան մասնավոր նամակներով մի քանի բողոքներ, ստացվեցան և շատ համակրական նամակներ։ Մի քանի պարոններ մինչև անգամ խնդրում էին, որ հիշյալ աշխատությունն առանձին տետրակով հրատարակվի։ Բայց պ. Դադյանի նամակի մեջ իմ ուշադրությունը գրավում է այն կետը, իբր թե, ես դուրս բերելով ուսանողությունը մի «հրեշային պատկերի» մեջ, դրանով անգիտակցաբար մտցնում եմ հակակրություն և մինչև անգամ թշնամություն հասարակության մեջ դեպի այն սերունդը, որի ուժերի վրա շատ և շատ հույսեր է դրել ազգը։ Թող չվրդովվի պատվելի նամակագիրը, դրանով ուսանողությունը ամենևին չի վնասվի։ Ինքնաճանաչությունը միշտ եղել է օգտավետ և կլինի։ Հիմար կանվանեինք այն հիվանդին, որ թաքցնում է իր ցավերը։ Երբ «Մշակը» սկսեց անողոք կերպով մտրակել եկեղեցականներին, գտնվեցան միամիտներ, որ ասում էին.— պարոններ, ի՞նչ եք շինում, դուք ձեր ձեռքով ձեր տունը քանդում եք. եկեղեցին մեր ազդի հիմքն է, հարձակվելով եկեղեցականների վրա, մերկացնելով նրանց այլանդակությունը, դուք դրանով կծնեցնեք հակակրություն և մինչև անգամ անհաշտություն ժողովրդի սրտում, և կբաց անեք նրա ու եկեղեցականների մեջ մի անդունդ, որը հետո դժվար կլինի միացնել,— դրանով կվնասվի մեր եկեղեցին։ Բայց եկեղեցին ամենևին չվնասվեցավ և եկեղեցականները սկսեցին փոքր առ փոքր լավանալ։

Ում շատ է ուժած, նրանից շատ կպահանջվի։ Ես և մեզանից ամեն մեկը, իհարկե, այնքան խիստ չէին լինի Ներսիսյան դպրոցում կամ որևիցե միջնակարգ ուսումնարանում ավարտած աշակերտի հետ, որովհետև նա գործում է ավելի, քան թե սովորել է։

ց համալսարանական բարձր ուսում ստացած երիտասարդին
ղք է մտրակել ամենայն անգթությամբ, երբ նա չէ համապա-
տասխանում ոչ իր կոչմանը և ոչ ստացած գիտությանը։ Մեր լրա-
բությունը, մեր գրականությունը մեծ բարերարություն արած կլի-
ազգին, երբ կսկսի քննադատել այդ փչացած և խարդախված
ունդը, որ մի նշույլ անգամ օրինավոր ապագայի չէ խոստա-
մ, Ի՞նչ են տվել մեզ, ի՞նչ ծառայություն են մատուցել։ Գնալ,
ում առնել, դիպլոմ ստանալ, կյանքի մեջ բարձր դիրք բռնել,
ստանալ, փառավոր կերպով ապրել — այս բաներից հազիվ քե
ոց ազգը կարող էր շահվել։

Պետք է ի նկատի ունենալ մի ուրիշ կետ ևս։ Մեր ուսանողնե-
ամեն տեղ, ամեն երկրում, օտարազգիների հետ համեմատե-
, ամենաչնչին փոքրամասնություն են կազմում։ Եթե, օրինակ,
համալսարանում կային 10 հայ ուսանողներ, իսկ 100 ռուս
անողներ, և հայերից 8-ը վատ էին, իսկ ռուսներից 50-ը, դարձ-
համեմատաբար հայերից վատերի թիվը մեծ պրոցենտ է ներ-
յացնում։ Բայց մեր նախկին ուսանողներն այսպես չէին, նրանք
ենքի, Աղեքսանդրիայի դպրոցներում միշտ իրանց փոքրամաս-
թյամբ գերազանցում էին մեծամասնությունից, որպես լավ
անողներ։

Պ. Դադյանի մի երկրորդ սխալն այն է, որ նա աշխատում է
ուլքներն արդարացնել պատճառներով։ Պատճառները միայն
ձևացնում են հանցանքը, բայց հազիվ թե արդարացնում են։ Մի
բարոյական միշտ կհամարվի անբարոյական, թեև նրա մոլու-
ւններն առաջ եկած լինեին վատ դաստիարակությունից կամ
ասական այլ և այլ պահանջներից։ Այնպես էլ գողը, ավազակը
ոտ ճանաչվում է ավազակ, թեև նրանց վարմունքը կլիներ հե-
անք տնտեսական կամ հասարակական այս և այն անկարգ
ղմակերպության։ Գողությունը փաստ է, պատճառով չեն ար-
րացնում նրան։

Հասկացողության այդ եղանակը, երբ միակողմանի կերպով է
ոաբերվում դեպի հայտնվող երևույթները, միշտ սխալ եզրակա-
ւթյունների է հասցնում։ Իհարկե, ամեն երևույթ ունի իր արտա-
իչ պատճառները։ Որպես բնության, նույնպես և կյանքի մեջ ոչ
չ բան ինքնագոհ չէ։ Բայց պատճառները պետք չէ խառնել երե-
ւյթների հետ, որոնք միշտ պահպանում են իրանց բնավորու-
ունը, լավ կամ վատ հատկություններ։

Եթե այս մեծոդին հետևեինք, այն ժամանակ ոչ մի բանի դեմ պետք չէր խոսել, ոչ մի անարդարության դեմ պետք չէր բողոքել, որովհետև և ոչ մեկը արտադրիչ պատճառ չէր լինելու։ Բայց մեզ մեջ կան շատերը, որոնք հետևում են մտածության այս եղանակին։ Օրինակ, ասում ես, թե հայը ցած և ստրկական բնավորություն ունի, թե նա զուրկ է այն բանից, որ կոչվում է ազգային ազնիվ հպարտություն, թե նա պատվի և անձնասիրության զգացմունք չունի, թե նա չէ հետաքրքրվում որևիցե բարձր իդեայով և այլն։ Հիմար անձնագովները հերքում են այս ճշմարտությունները, իսկ կարճատես խելացիները արդարացնում են։ Վերջիններս սկսում են քննել պատճառները, և իսկույն դառնալով դեպի անցյալը, դեպի պատմությունը, պատասխանում են քեզ.— դու գիտես, եղբայր թե այդ ազգը ինչ է կրել իր կյանքում, թշնամու սուրը միշտ նրա գլխից պակաս չէ եղել. բռնության լծի ճնշման տակ նա կորցրել է իր զգացմունքը դեպի գնղեցիկը և ազնիվը։ Շատ լավ, պատճառը հասկացանք, դիցուք թե հայը մի այսպիսի թշվառ անցյալ է ունեցել, բայց ներկայումս պետք չէ՞ որ ուղղվի և վերադարձնե իր հին կորուստը։

Ասա դու նրան, թե հայոց ընտանիքը այս և այն թերությունն ունի, թե նրա կազմակերպության մեջ տիրում են շատ անկարգություններ, թե մանուկ սերունդը ճնշվում է հներից, թե ամուսնական լծակցությունը շատ անգամ անտանելի է դառնում և այլն։ Քեզ կպատասխանեն.— թե դրանք մտել են մեր մեջ երկար տարիներով պարսիկների և մահմեդական ազգերի հետ դրացությունից։ Դարձյալ պատճառներ։ Բայց դրանք բավական չեն, որ մենք ներողամիտ լինենք դեպի մեր ընտանեկան մոլորությունները։ Ի՞նչ կասեինք այն բժշկին, որ հիվանդի ցավը քննելով, կասեր մեզ, թե դա մի վնասակար տենդ է, որ առաջ է եկել մրսելուց, և կդադարեր նրան դարմանելուց։ Մրսելը պատճառ է, բայց տենդը հիվանդության փաստ է, որ կարոտ է բժշկության։

Վերջացնում եմ ձեզ հետ, պ. Դադյան, հասկանում եմ ուսանողի վրդովմունքը, երբ հարձակվում են նրա ընկերակիցների վրա։ Ցավում եմ, որ ավելի պարզ խոսել չէի կարող, և այս պատճառով իմ հոդվածը ստացավ ավելի այլաբանական և ճիշտ ասած, ֆելետոնական ձև։ Բայց եթե ես իմ կարծիքների մեջ ուսանողների վերաբերությամբ սխալված եմ, երանի թե այդպես լիներ...

* *
*

Պատմության վրա խոսք գալով, ես չեմ կարող չհիշել, որ վերջին ժամանակներում մեր պարբերական հրատարակությունների մեջ կրկին սկսեցին հունցել միանգամայն մոռացված երկրպառակության խմորը, կրկին բարձրացրին կրոնի և ազգության խնդիրը։ Խոստանալով առաջիկա տարվա սկզբներում նվիրել այդ հարցին մի քանի պատմական հոդվածներ, այժմ բավականանում եմ միայն մասնավոր նկատողություններով։

Տաճկաստանի հայոց մամուլը երկար տարիներ զբաղվեցավ հիշյալ հարցով, և բացի թշնամության սերմանելուց, բացի ազգային ամբողջության պատռվածքի ճեղքերը ավելի լայնացնելուց, ոչ մի օգտավետ հետևանքի չհասավ։ Եվ այսօր, երբ ավելի կարևոր խնդիրների մասին խորհելիք ունենք, երբ Տաճկաստանի հայերի վերածնելության հարցը գրավում է մեր ամենի ուշադրությունը, մեր մեջ գտնվում են մարդիկ, որ սկսում են կրկին քըչրչել մարած մոխիրը, սկսում են կրկին բորբոքել դադարած վիճաբանություններ կրակը, հայտնելով այն հնացած, և լուսավոր ազգերի համար իր նշանակությունը կորցրած միտքը, թե կրոնը, այսինքն՝ եկեղեցին պետք է ճանաչել ազգության հիմք, և ով որ դուրս է գալիս այդ եկեղեցուց, նա կտրվում է ազգի ամբողջության հետ անդամակցությունից և այլն։ Արդարև, մի հին և բոլորովին մաշված գաղափար, որ դարերի ընթացքում, Վատիկանի դարբնոցի մեջ, պապերի հզոր կռանի տակ ծնծվեցավ, կոփվեցավ և դարձյալ չկարողացավ եկեղեցու մեջ ի մի ձուլել ազգություններ։

Իսկ այժմ մի քանի ողորմելի գրիչներ աշխատում են նույնը իրագործել, ինչ որ Հռոմի ահեղ բազուկը չկարողացավ կատարել։

Մենք պատմություն ունենք,— ասում են մեզ,— մեր պատմությունը սովորեցնում է, որ լուսավորչական եկեղեցին պետք է լինի հայի պատսպարանը և ազգության հիմքը, այդ եկեղեցուց դուրս հայը չէ կարող հայ համարվել, նա կորած է։ Եվ այդ հիման վրա, կաթոլիկ և բողոքական հայերը հայ չեն, նրանք, ո՜վ գիտե, թե ինչ են... Եվ այդ տիրացուական քարոզները մեզ կարդում են այն պարոնները, որոնք Ջաքջյանի և Բերբերյանի դասագրքերից մի քանի գլուխներ սերտելով, երևակայում են, թե պատմություն գիտեն։ Մենք այսպիսիներին խորհուրդ կտայինք մի փոքր ուսումնա-

սիրել Բոկլը, եթե կամենում էին հասկանալ, թե ինչ կապ կա ազգերի պատմության մեջ։

Պետք է լայն հայացքով նայել առարկայի վրա. պատմությունը առաչյոք միրաժներ ունի, որոնք երբեմն ձգում են անհմուտ նայողին օպտիկական խաբեություններների մեջ։ Նեղ, միակողմանի հայացքը պատմության վրա միշտ մոլորեցնում է մարդուն։ Հայն աշխարհի ստեղծագործության մեջ մի առանձին արարած չէ, և չէ կարող լինել։ Նա ազգերի պատմության մեջ բացառություն չէ կարող կազմել։ Նա ենթարկված է եղել և պետք է ենթարկվի միևնույն պատմական օրենքներին, որոնցմով կառավարվել են մարդկությունի ներկայացնող ազգերը։ Հայն առանձին պատմական օրինքներ ստեղծել չէ կարող։ Պատմությունն ազգերի առջև մի որոշ շավիղ է գծել — դա ընդհանուր մարդկության ուղին է — ինչ ազգ, որ ուզը դուրս է դնում այն շավղից, մոլորվում է, կորչում է և ոչնչանում է...

Կրոնը որպես մարդկային զգացմունքի արտահայտություն, ժամանակների հետ միշտ փոփոխվել է և անվերջ կերպով կփոփոխվի։ Մեր նախնիքը մի ժամանակ կռապաշտ էին, այժմ մենք քրիստոնյա ենք, իսկ դարերից հետո, ով գիտե, մեր ապագա սերունդը ինչ կրոն կստեղծե իր համար, գուցե ամենևին կրոն էլ չի ունենա։ Ուրեմն, մի բան, որ տևողական չէ, որ միշտ հեղուկ վիճակի մեջ է գտնվում, որ զգացմունքից միայն կախում ունի, նա չէ կարող ազգության հաստատ հիմք լինել. գուցե մասնավորապես կնպաստե նրա գոյությանը, բայց պահպանել չէ կարող։

Պետք է փայտից շինած գլուխ ունենալ և այդ ամենապարզ ճշմարտությունները չհասկանալ։ Բայց ի՞նչ օգուտ, հազար ու մեկ փաստեր բեր, միևնույն է, դարձյալ քեզ կպատասխանեն, թե հայոց ազգը պահպանվեցավ իր կրոնով, իր եկեղեցիներով։ Եվ այդ խոսքերը կրկնվում են մի հոյակապ ազգի վերաբերությամբ, որի ողորմելի փշրանքներն են մնացել այսօր։ Դուք գիտե՞ք, պարոններ, թե ո՞րքան էր առաջ հայերի թիվը, և այժմ որքան է մնացել։ Ինչո՞ւ կորան նրանք, ինչո՞ւ կրոնը չկարողացավ պահպանել։ Եթե հայերն ունեցել են մի փառավոր անցյալ,— դա եղել է նրա հեթանոսական դարերում և քրիստոնեությունն ընդունելուց հետո այդ ազգը սկսեց տկարանալ և քայքայվել։

Շատ հեշտ է վեր առնել պատմությունից մի քանի երևույթներ, և առանց նրանց իսկական պատճառները քննելու, սխալ եզրակա-

ցուրյուններ դուրս բերել։ Շատ հեշտ է մատի փաթաթան շինել Լեհաստանի հայ գաղթականությունը, ասելով, թե իրանց կրոնը փոխելու պատճառով կորան, ոչնչացան։ Բայց պետք է բոլորովին կույր լինել, և չնկատել մեր պատմության մեջ այն ընդհանուր երևույթը, որ դեպի արևմուտք դիմող բոլոր հայ գաղթականությունները մեծ մասամբ ոչնչացան առանց իրանց կրոնը փոխելու անգամ։ Նվ դրա պատճառը ոչ թե մի օտար ազգի եկեղեցուն հարելն էր, այլ այն ընդհանուր բնական օրենքը, որ հայ գաղթականները, արևմուտքում հանդիպելով իրանցից ավելի բարձր կուլտուրական ազգերի, չկարողացան նրանց հետ մրցություն անել, և կյանքի կռվի մեջ հաղթվեցան, և կլանվեցին իրանցից ավելի զորեղ ազգերից։ Որի ընդհակառակն, դեպի հյուսիս և դեպի արևելք դիմող հայ գաղթականությունները պահպանվեցան, ոչ թե այն պատճառով, որ չփոխեցին իրենց կրոնը, այլ այն պատճառով, որ ապրում էին կուլտուրայով իրանցից ավելի ստոր ազգերի հետ և, գոյության կռվի մեջ կարողանում էին նրանց հետ մրցություն անել։ Ուրեմն, եթե հայերից մնացել են մի քանի փշրանքներ, դրա համար պետք է շնորհակալ լինել ոչ թե լուսավորչական եկեղեցուն, այլ թուրքերին, թաթարներին, պարսիկներին և հնդիկներին։ Եթե հայը լիներ ֆրանսիացու, գերմանացու և անգլիացու հպարտակ, արդեն վաղուց կորած կլիներ և լուսավորչական եկեղեցին չպիտի թե կարող լիներ փրկել նրան։

Մենք միշտ ասել ենք և դարձյալ կկրկնենք. որ ազգության գաղափարը պայմանավորվում է ոչ թե կրոնով, այլ նրա ցեղական հատկություններով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է և միշտ կլինի ազգի պահպանության հիմքը։ Դա է, որ մշտական է, դա էլ անբաժանելի է մարդկությունից ։ Լեզուն թեև փոփոխվում է, բայց իր փոփոխության մեջ ավելի կյանք է ստանում, զարգանում է և կատարելագործվում է։ Մի մարդ կարող է ոչ մի եկեղեցու չպատկանել և մինչև անգամ անկրոն լինել, բայց չէ կարող որևիցե լեզվով չխոսել։ Խոսքը միշտ կմնա, որքան ապրում է մարդկությունը. նա հավիտենական է։

Հայը, թե կաթոլիկ լիներ նա, թե բողոքական, թե լուսավորչական և թե անկրոն — դարձյալ հայ է. որովհետև միևնույն ցեղական հատկություններն ունի, միևնույն լեզվով է խոսում, միևնույն տոհմին է պատկանում։ Մենք եկեղեցու տարբերության մեջ ազգային տարբերություններ չենք ճանաչում։ Մենք չենք կարող

ընդհանուր մարդկային կենցաղավարութեան պայմաններուն մէջ մեզ համար առանձին օրենքներ ստեղծել։ Չկա՛ մի ազգ երկրագնդի վրա, որի մէջ չլինեին զանազան աղանդներ, դավանութիւններ, եկեղեցիներ, բայց բոլորը միևնոյն ազգին են պատկանում։ Ամերիկայում մինչև անգամ մի ընտանիքի մէջ հայրը, մայրը, որդին, աղջիկը — իւրաքանչիւրն առանձին եկեղեցիներում են աղօթք անում, բայց կրօնի տարբերութիւնը չէ վնասում նրանց ազգութեանը։

Կրօնի երկպառակութիւնների խնդիրը մեզ գցել ուղիղ այն ժամանակ, երբ Տաճկաստանում պատրաստվում է հայերի համար մի ապագա — դա եղեռնագործութիւնից ավելի մեծ հանցանք է։ Մենք այսպիսիներին ստոր ենք դասում Հասուններից, Նիկոլներից, Վասակներից և Մերուժաններից։ Մենք հայտնում ենք մեր անկեղծ ցաւը, որ վերջին ժամանակներում Կ. Պոլսի մեր հակահասունեան եղբայրներից մի խումբ, զանազան տխուր հանգամանքներից ստիպված, դիմեցին լուսաւորչական եկեղեցու գիրկը։ Մենք ավելի կհարգեինք նրանց, եթե կաթոլիկ եկեղեցու մէջ մնալով, կշարունակէին քարոզել հայութիւն և ազգայնութիւն։ Մենք մի մեծ կորուստ ենք համարում, որ մեզ համակրողների մի խումբ դուրս եկաւ հակառակ բանակից, որին խորամանկ Հռոմը բշնամական գիրքի մէջ է դրել իր համազգիների դէմ։ Թող ուրախանան կարճամիտները, բայց մենք ոչ ոքի ուրախութեանը կցորդ չենք լինում։ Մի այսպիսի ուրախութիւն զգաց հայոց ազգն այն ժամանակ, երբ չորս նշանաւոր եկեղեցականներ բաժանվեցան մխիթարեան միաբանութիւնից և վերադարձան լուսաւորչական եկեղեցու գիրկը։ Մեծ եղաւ վնասը, որովհետև, մխիթարեանների միաբանութիւնը, որ այնքան շատ գործել էր հայութեան համար, որ մի լավ քարգման էր մեր ազգի և Եվրոպայի մէջ — այն օրից, երբ այդ չորս արժանաւոր անձինքը հեռացան — սկսեց հետզհետե թուլանալ և վերջապես դեպի հայոց ազգի շահերը անտարբեր լինել։ Վաստակեցինք չորս մարդիկ, բայց կորցրինք մի ամբողջ միաբանութիւն։

Եթե այսօր կամ էգուց կզարկե Տաճկաստանի հայոց վերածնութեան ժամը, եթե Հայաստանին կտրվի որևիցե ինքնավարութիւն, այդ բախտին պետք է վճռակից լինեն Թուրքիայի բոլոր հայերն առանց կրոնի խտրութեան։ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մէջ հայերին խոստացված բարիքները միայն լուսաւորչականներին չեն պատկանում, այլ վերաբերում են և կաթոլիկ, և բո-

ղոքական հայերին։ Այդ իսկ պատճառով կրոնի խնդիրները մի կողմ դրած, այժմ Թուրքիայի հայերն ազգայնության դրոշը պարզելով, պետք է ձեռք ձեռքի տված աշխատեն տնօրինել իրանց ապագա բախտը։ Եվ հայության գործը Թուրքիայում այն ժամանակ միայն հաջողված կարելի է համարել, երբ ազգի անջատված մասները կմիանան, կկազմեն մի ամբողջություն, ոչ թե կրոնական կապերով, այլ ազգայնական անունով։ Բավական է, որքան հայերն իրանց ճանաչել տվին որպես կրոնական համայնք, այսուհետև ինչ աշխատեն ճանաչվել որպես ազգ։

ԱՆՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՈԴՎԱԾՆԵՐ

Այս խորագրի տակ զետեղված են Րաֆֆու «Մշակում» ու «Հյուսիսապայծառ» թերթերում տպագրված ուսումնասիրությունները, գրական, հասարակական ու քաղաքական բնույթի հոդվածները։

Մեզ հասած առաջին հոդվածը Րաֆֆին գրել է 1858 թվականին։ Դա մի նամակ է, ուղղված «Արծիվ Վասպուրականց» ամսագրի խմբագիր Գրիգոր Ալիշանին։ Այնուհետև 1860—61 թվականներին Րաֆֆին թղթակցում է «Հյուսիսապայծառին»։

1872 թվականին, երբ հրատարակվում է «Մշակը», Րաֆֆին դառնում է այս թերթի մշտական աշխատակիցներից մեկը։ Թողնելով «Մշակը» 1885 թվականից սկսած Րաֆֆին աշխատակցում է «Արձագանք» շաբաթաթերթին, այստեղ ևս տպագրելով մի քանի հոդվածներ։

Ինչպես հայտնի է Րաֆֆին հնարավորություն չունեցավ իր բոլոր ստեղծագործությունները, այդ թվում նաև հոդվածները, առանձին գրքով տպագրել։ Դա մինչև վերջ էլ մնաց նրա համար իբրև մի ցանկալի երազ։

Սույն ժողովածուն Րաֆֆու հոդվածների հրատարակման առաջին փորձն է, եթե չհաշվենք 1895 թվականին Աննա Րաֆֆու կողմից Թիֆլիսում հրատարակած «Տաճկահայք» խորագրով գրքույկը։

Հոդվածները հատորում դասավորված են ժամանակագրական կարգով։

Ձեռքի տակ չունենալով հեղինակի ինքնագրերը, հոդվածները տպագրության պատրաստելիս կազմողները հենվել են հեղինակի կենդանության օրոք պարբերական մամուլում տպագրված տեքստերի վրա, առանձին դեպքերում չգտնվելով նաև հետմահու հրատարակություններից։

ԱՐԾՈ ԲԱՐԵԿԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՔԱՆՅԱՆՑ (էջ 23)

Մատենադարանի արքունիքի գիմնազիայի նկարչության դասատու Հովհաննես Քաքանյանցին ուղղված այս նամակը Րաֆֆին գրել է 1861 թվականի ապրիլի 25-ին, Ուժմիայից։

Նամակը, մի քանի առանձնահատկություններ հետ ուշադրելով իր բարեկամին, Րաֆֆին ցանկանում էր Քաքանյանցի միջոցով այն հասցնել Մատենադարանի Նաղաշյա-

Ներս, որպեսզի վերջինս (հավանելու դեպքում) ապագրի «Հյուսախաչիկը» ամսագրում։ Նագաթյանը հավանելով հոդվածը, 1861 թվականին այն հրատարակում է «Հյուսախաչիկում»։

Հոդվածի գրության հարցում շարժուռիթ է հանդիսացել ամերիկյան միսիոներների վերաակար գործունեությունը Արևելքում, որոնք «լույս և ճշմարտություն» տարածելու անվան տակ հետապնդում էին գաղութատիրական նպատակներ։

Հոդվածը հրապարակված է Հ. Մ. Մելիք-Հակոբյանց ստորագրությամբ։

Արտատպված է «Հյուսախաչիկից», 1861 թ., 11-րդ ամսատետրակ, էջ 393։

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՐԲԵՐՈՒՄՆԵՐ (էջ 29)

«Ընտանիքի կերբերումներ»-ը Բաֆֆու «Մշակում» տպագրված առաջին հոդվածն է։ Այն ուղղված է «Մեղու Հայաստանի» լրագրի 2-րդ համարում տպագրված Մ. Ս.-ի «Մեր ընտանեկան կյանքի մասին» հոդվածի դեմ։ Խոսելով կնոջը ֆեոդալական կապանքներից՝ հարեմի գերությունից ազատագրելու և հասարակական կյանքում ներգրավելու մասին, Բաֆֆին միաժամանակ քննադատում է «Մեղվի» հոդվածագիր Մ. Ս.-ի մի շարք տեսակետները։

«Ընտանիքի կերբերումներ»-ը հրապարակված է Յ. [Հակոբ] Մ. [Միրզայանց] ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից» 1872 թ., № 13, էջ 1։

ՎՐԱՑ ԻՇԽԱՆ ԱՐՔԱՅԱԶՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՅԱՆՔԻՑ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ (էջ 32)

Վրաց իշխան Ալեքսանդրի կյանքին ու գործունեությանը վերաբերող այս հոդվածը Բաֆֆին գրի է առել ականատեսների պատմածից, հավանաբար այն ժամանակ, երբ նա գտնվում էր Խոսրովա գյուղում։

Հոդվածը լույս է տեսել Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից» 1872 թ., № 25, էջ 1։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ (էջ 34)

Շրջագայելով Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում և մտիկից ծանոթանալով ժողովրդի կացությանը, Բաֆֆին տեսնում է թե ինչպես նոր զարգացող հարաբերություններ քայքայում են հայ գյուղացիության տնտեսության հիմքերը և նա ստիպված թողնում է հողը, երկրագործությունը՝ զբաղում է քաղաք ապրուստ հայթայթելու։

Զարգացող վաճառականության առջև Բաֆֆին խնդիր է դնում թողնել նահապետական հին ձևերը և սովորել գյուղատնտեսական արհեստ. նա պահանջում է մեքենայացման ենթարկել գյուղատնտեսությունը։ Հանդես գալով բարբարոսական հարաբերությունների չարաշահի դեմ, Բաֆֆին իր նպատակների իրականացումը տեսնում էր առևտրական ընկերությունների հիմնադրման մեջ. «Ընկերության մեջ,— գրում է նա,— վաստակը և օգուտը կլինի ընդհանուր։ Ով նոքա ընդհանուր ուժով կկարողանան ավրպագիների հետ մրցություն անել։»

Հոդվածը լույս է տեսել Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից» 1872 թ., № 32, 33։

ԷԴ ԷԼ ՔԻԶ ԿՐԻՏԻԿԱ (ԷՋ 39)

Բաֆֆու այս հոդվածը մի պատասխան է, ուղղված Դ. Շերմազանյանի «Քե՞ւ են Ավարայր և Տղմուտ խոթագիրը կրող քննախոսությանն դեմ։

Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանը «Մշակի» 1872 թվականի 7-րդ համարում կարդալով Բաֆֆու «Հուշերությանից Գարսեւանտեսի» վերնագրով ակնարկը «Արարատ» ամսագրի նույն թվականի ԺԱ և ԺԲ համարներում հանդես է գալիս մի ընդարձակ հոդվածով և բանավիճում Բաֆֆու դեմ՝ Ավարայրի դաշտի և Տղմուտ գետի պատմաաշխարհագրական տեղը պարզաբանելու նպատակով։

Այս առիթով «Մշակի» 1872 թվականի 7-րդ համարում Բաֆֆին Մելիքզադե ստորագրությամբ հրապարակում է «Էդ էլ քեզ կրիտիկա» հոդվածը։

Նույն թվականին «Արարատ» ամսագրի մայիսյան համարում (էջ 185) կըբ-կին անգամ հանդես է գալիս Գալուստ Շերմազանյանը «Դարձյալ քե՞ւ է Ավարայր և Տղմուտ» հոդվածով։ Մելիքզադեն սրան ևս անպատասխան չի թողնում, գրելով «Մի քանի խոսք վերնագրով հոդվածը (տե՛ս այս հատորում, էջ 58)։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 7, էջ 1։

ՆԱՄԱԿ Կ. ՓՈԼՍԻՑ (ԷՋ 43)

Բաֆֆին սուրբ խորագրով գրել է երեք նամակ, որոնք Մ. ստորագրությամբ հաջորդաբար տպագրվել են «Մշակից» 1873 թվականի 9, 10 և 14-րդ համարներում։ Ինչպես հայտնի է, Բաֆֆին Գալուստ չի եղել, այս հանգամանքն էլ հավանարար առիթ է դարձել, որ նա հանդես գա Մ. և ոչ թե լրիվ Մելիքզադե ստորագրությամբ։

«Մշակից» այն ժամանակվա աշխատակից (քարտուղար) Հ. Տեր-Գրիգորյանը Բաֆֆուն ուղարկված նամակներից մեկում գրում է, որ նրա հոդվածները շատ են կարդացվում, մանավանդ Մ. ստորագրությամբ, (Տե՛ս «Տաճկահայոց ժողովածու, Վիեննա, 1913 թ., էջ VIII)։ Տեր-Գրիգորյանի հայտնած այս վկայությունը անժխտելի է դարձնում «նամակ Կ. Փոլսից»-ը Բաֆֆու գրչին պատկանելու փաստը։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 9, էջ 4։

ՆԱՄԱԿ Կ. ՓՈԼՍԻՑ (ԷՋ 45)

Հանգիստ գալով պղտոր ջրերում և բացահայտելով հայ գյուղի քաղաքական սոցիալական արմատները, Բաֆֆին գաղափարական գլխավոր պատճառ տեսնում է ոչ թե հարևան ցեղերի կարծեցյալ բշնամանքի (ինչպես ճգնում էին բացատրել արևմտահայ ազգային լրագրերը), այլ հողատիրական, ֆեոդալական տնտեսաձևի ներքին հակասությունների մեջ։ Այս տեսանկյունից նա քննադատության է ենթարկում նաև Արիմյանի հիմնադրած «Բերիա վասպուրականի» ամսագրի դիրքը, որը կամենում էր «Հայկի և Արամի անցյալ հիշատակներով միայն կերակրել սոված ժողովուրդը այն ժամանակ, երբ ամարդը կարոտ է նյութական սնունդի։ Նալբանդյանի նման Բաֆֆին ևս պնդում էր, որ «...ազգի (ժողովրդի — Խ. Մ.) գոյությունը պահպանելու գլխավոր պայմանն-

րից մեկն է հոդը և նորա մշակութիւնը։ Հենվելով այս տեսակետի վրա և ժողովրդի գլխավոր ուժը տեսնելով ճերմակագործ ու արդյունաբերող դասի մեջ», Բաֆֆին որպես գաղթականության կանխման միջոց պահանջում է գյուղացուն կապել հողի և ճերմակագործության հետ՝ նրանից, նա առաջարկում է հիմնել գյուղատնտեսական և արհեստագիտական ուսումնարաններ ու գյուղական փոխատու բնակութիւններ։ Այլ խոսքով՝ Բաֆֆին ձգտում էր հողի օգտագործման հին եղանակը դնել կարգացման բուրժուական ուղու վրա։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 10, էջ 3։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ (ԷՋ 49)

Նամակի վերնագրի և հեղինակի ստորագրության վերաբերյալ տեղեկութիւններ արդեն հայտնի են առաջին նամակի ծանոթագրութիւնից։ Բաֆֆու գրած աջ երեք հոդվածները հաջորդելով միմյանց, ունեն մի ներքին ընդհանուր կապ։ Առաջին հոդվածում «ազգության գլխավոր ուժը» տեսնելով «ճշմված ու հարստահարութեանց մեջ մաշված հայերի մեջ», երկրորդում նա ցույց է տալիս «հարստահարութեանց մեջ մաշվող» ժողովրդի քայքայման սոցիալական արմատները։ Երրորդ հոդվածում Բաֆֆին ազգային ուժերի միասնության կոչ է անում։ Նա առաջարկում է վերջ տալ դավանաբանական վեճերին, թողնել կղերի փեշերը և հենվել ժողովրդական ուժերի վրա։ Այս կետում նեղ ու միակողմանի չգտնվելու և ավելի արդյունավետ գործելու համար Բաֆֆին պահանջում է գործակցել մյուս ազգութիւնների՝ հույների,ասորիների, հրեաների և այլոց հետ։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 14, էջ 3։

«ՔԱՆԴՎԱՄ ՕՋԱԽ» (ԷՋ 52)

Այս հոդվածը Բաֆֆին գրել է Գ. Սունդուկյանի համանուն կատակերգության առաջին բեմադրության առիթով (1873 թ. ապրիլի 19-ին)։ «Քանդած օջախ» բեմադրությունը իրարամերժ կարծիքների տեղիք է տալիս մամուլում։ Մի փոքրածավալ ծանուցումից հետո «Մեղու» Հայաստանին» հրապարակում է Ս[ննեքերիմ] Ա[րծրունու] ընդարձակ հոդվածը, որտեղ վերջինս ձգտում է նսեմացնել ու արժեքազրկել Սունդուկյանի կատակերգությունը։

«Քանդած օջախ» վերաբերյալ միանգամայն տարբեր գիրք է բռնում «Մշակը»։ Բարձր գնահատելով պիեսի արժանիքները, «Մշակիս» հոդվածագիր Բաֆֆին գտնում է, որ «Քանդած օջախը» գեղարվեստական ու գաղափարական տեսակետից հաջողված գործ է։

Բաֆֆու այս հոդվածից հետո «Մեղվի» հոդվածագիր Ս. Ա.-ի հարձակումները կատակերգության ու հեղինակի վրա ավելի սուր բնույթ են ստանում։ (Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873 թ., № 16, 17, 20)։

Բուֆֆին հոդվածը հրապարակել է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 18, էջ 1։

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ (ԷՋ 58)

«Էջ էլ քիչ կրիտիկա» հոդվածի ծանոթագրությունից ընթերցողին արդեն հայտնի է Գ. Շերմազանյանի և Բաֆֆու միչև ծագած բանավեճի սկզբնաւորիր։

Հայտնի է նաև, որ Րաֆֆուց հետո Շերմազանյանը գրում է. «Դարձյալ քե՞զ է Ավարայր և Տղմուտ» վերնագրով հոդվածը (տե՛ս «Արարատ», 1873 թ. № 5, էջ 165) որտեղ, բանավիճելուց զատ, ի լուր ամենքին բացում է Րաֆֆու պսեվդոնիմը և հայտնում է, որ Մելիքզադեն, Հակոբ Մխրզայանը և Րաֆֆին միևնույն անձավորությունն է։ Ահա այս առիթով է, որ Րաֆֆին գրում է «Մի քանի խոսք» վերնագրով հոդվածը, Շերմազանյանի կատարածը բնութագրելով իբրև անպատվություն, մի առածով Րաֆֆին վերջացնում է իր բանավեճը նրա հետ։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 24, էջ 3։

(ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԵՂՈՒ»-ԻՆ) (էջ (59)

1873 թվականի սկզբին Րաֆֆին որոշում է իր արձակ և չափածո ստեղծագործությունները ամփոփել 10 հատորի մեջ և հրատարակել «Փունջ» ընդհանուր խորագրով։ Այս առիթով «Մշակին» խմբագրությունը տպագրում է մի հայտարարություն (տե՛ս «Մշակ», 1873 թ., № 17, էջ 4), որտեղ հատորների պարունակության և բաժնեգրության պայմանների մասին ծանուցումից բացի, խնդրվում է հայ գրականություն սիրողներին նպաստել «Փունջի» տպագրությանը։

Դեռևս չէր ավարտվել առաջին հատորի բաժնեգրության գործը, երբ «Մեղու Հայաստանի» լրագրի թղթակից Քաղքցին իր մի ֆելիետոնում Րաֆֆու բանաստեղծությունները («Փունջի» առաջին հատորը) որակում է իբրև «փտունջ» անգույն ու անհոտ ծաղկանց» (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1873 թ., № 26, էջ 3)։

Ահա այդ ֆելիետոնի կապակցությամբ է, որ Րաֆֆին գրում է այս մի քանի տողից բաղկացած պատասխանը «զուլամաս» անվանելով Քաղքցու գործը։

Հոդվածի վերնագիրը պատկանում է տեքստը տպագրության պատրաստողներին։

«Պատասխան...» հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 27, էջ 4։

Կ. ՊՈԼՍԻ ՍՐ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ (էջ 60)

Երիմյանի պատրիարքությունից հրաժարվելու առիթով գրված այս հոդվածում Րաֆֆին քննադատում է Կ. Պոլսի ամիրանագրական վարչությանը, որի գործունեությունը ոչ միայն չի տարածվում գավառների վրա, այլև զրկված է Պոլսի մեջ պատահած գործերն իսկ քննելու և վճռելու կարողությունից։

Րաֆֆուն զայրույթ է պատճառում, որ Պոլսի կուսակցությունները իրենց գործունեությունը ընդհանուրի օգտին և ազատությանը ծառայեցնելու փոխարեն ի սպաս են դնում էֆենդի աղաների շար կրքերին», նա իր քննադատության սուր ծայրն ուղղում է քաղաքական ժողովի դեմ, որն անտես առնելով Երիմյանի առաջարկները, տեղիք է տալիս նրա՝ պատրիարքությունից հրաժարվելուն։

Րաֆֆու հոդվածը ամբողջովին կառուցված է Երիմյանի հրաժարականի հիման վրա, որի տեքստը լույս է տեսել Կ. Պոլսի «Մասիս» լրագրի 1873 թվականի օգոստոսի 7-ի համարում։

Հոդվածը լույս է տեսել Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 35, էջ 3։

ՓՈՍՏԱՅԻ ՀԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ (էջ 62)

«Վաճառականությունը հայերի մեջ» հոդվածից արդեն հայտնի է, որ Րաֆֆին ցանկանում է զարկ տալ նոր տիպի վաճառականության զարգացմանը։ Նույն միտքը նա հետևողականորեն արծարծում է նաև մի շարք այլ հոդվածներում, ինչպես նաև «Մակի աքաղաղ» վեպում։

«Փոստային հարաբերության կարևորությունը Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ» հոդվածում Րաֆֆին թեև ուրիշ կնտիր է մոտենում խնդրին, բայց նպատակն ու ելակետը մնում է նույնը — ճանապարհ հարթել նոր զարգացող բուրժուական հարաբերությունների համար։

Հոդվածը լույս է տեսել Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1873 թ., № 37, էջ 2։

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ (էջ 65)

Ընթերցողներին ուղղված այս առաջաբանը Րաֆֆին գրել է իր անգրանիկ ժողովածուի՝ «Փունջ» առաջին հատորի հրատարակման առիթով։

Այս կարճ առաջաբանով Րաֆֆին իր գիրքը հանձնում է ընթերցողներին, նախօրոք զգուշացնելով, որ իր բանաստեղծությունները զուրկ են գեղարվեստական վսեմությունից, որ դրանք արձագանք են դառն հառաչանքի։

Առաջաբանի միջոցով Րաֆֆին ընթերցողներին ծանոթացնում է իր հրատարակչական ծրագրերի հետ։

Հայտնում է, որ «Փունջ» խորագրով ժողովածուն լույս է տեսնելու տասը հատորով։ Այստեղ մանրամասն նշված է, թե ինչ պարունակություն է ունենալու «Փունջի» ամեն մի հատորը, ինչ դիրք ու ծավալ է ունենալու նրա յուրաքանչյուր գիրքը։

Հոդվածը գրված է 1873 թվականին, հրատարակվել է երկու անգամ։ Առաջին անգամ լույս է տեսել 1874 թվականին (իբրև «Փունջի» առաջաբան), իսկ երկրորդ անգամ՝ 1891 թվականին։ Հեղինակի մահվանից հետո, երբ նրա ստեղծագործությունների հրատարակման իրավունքը անցնում է Աննա Րաֆֆու ձեռքը, վերջինս 1891 թվականին տպագրում է Րաֆֆու «Վիպակներ և պատկերներ» ժողովածուն, իբրև առաջաբան կրճատ ձևով օգտագործելով այս հոդվածը։

Արտատպված է «Փունջի» առաջին հատորից, Թիֆլիս, 1874 թ., էջ VII։

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ (էջ 69)

«Առաջաբանի տեղ» հոդվածը Րաֆֆին գրել է «Փունջի» երկրորդ հատորի հրատարակման առիթով։ Րաֆֆին բացատրում է, որ հրատարակելով իր պատմվածքները, նպատակ է ունեցել զգարգացնել կարդացողների ճաշակը և նոցա սերը դեպի մայրենի լեզվի ընթերցանությունը։ Այնուհետև օգտվելով առիթից, հեղինակը իր վերաբերմունքն է ցուցաբերում «Փունջի» առաջին հատորի կրիտիկոսների հանդեպ, վայրիվերո համարելով «Մեղու Հայաստանի»-ի և «Մշակի» կողմից արված դիտողությունները։ (Այս մասին տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, ծանոթագրություններ, էջ 693)։

Արտատպված է «Փունջի» երկրորդ հատորից, Թիֆլիս, 1874 թ., էջ VII։

«ԱՄՐԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԵՐԱ» (ԷՋ 70)

Րաֆֆին «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վերա» հոդվածը գրել է Պոլսից ստացված համանուն վերնագրով մի գրքույկի առիթով։

Պողոսի չարագործությունները հայտնի էին դեռևս 60-ական թվականների սկզբից։ Լինելով Վանի առաջնորդ, նա կապված էր քուրդ ու թուրք ավազակների հետ, կողոպտում, ծեծում ու առևանգում էր աշխատավոր մարդկանց։

Պողոսի դեմ բողոքում են Կ. Պոլսի առաջավոր տարրերը և գավառի ազգաբնակչությունը, որոնց ճնշման տակ կրոնական ժողովը որոշում է ժամանակավորապես «քահանայագործելու» իրավունքից ազատել ոճրագործին։ Պողոսի դեմ առանձին հոդվածով հանդես է գալիս «Միություն», պահանջելով քահանայությունից ընդմիշտ զրկել նրան։ Նույն օրերին Սվաճյանին ուղղված նամակում Մ. Նալբանդյանը ողջունում է «Մեղվիս կողմից ժողովրդի իրավունքի պաշտպանությունը և պահանջում է դատի տալ ոճրագործ հոգևորականին։ Զրավարարվելով դրանով, Նալբանդյանը «Երկու տող պամֆլետում կրկին անգամ անդրադառնալով այդ խնդրին, մերկացնում ու դատապարտում է Պողոսին և նրա հովանավորներին։

Մեկ և կես տասնամյակ հետո Պողոսի ոճրագործությունների դեմ հանդես է գալիս նաև Րաֆֆին և Կ. Պոլսի ազգայ.ն վարչությունից պահանջում է խոհեմ լինել և լսել Պողոսին պատժել պահանջող ժողովրդի ձայնը։

Պողոս վարդապետի ոճրագործություններին Րաֆֆին անդրադառնում է նաև հետագայում՝ «Կայծերիս» երկրորդ հատորում։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արատապված է «Մշակի», 1874 թ., № 10, էջ 1։

«ՔՆԱՐ ՄՇԵՑՎՈՑ ԵՎ ՎԱՆԵՑՎՈՑ» ԳՐՔՈՒՅԿԻ ԱՌԻԹՈՎ (ԷՋ 76)

Այս հոդվածը մի գրախոսություն է նվիրված Արխստակես վարդապետ Սեդրակյանի հրատարակած «Քնար Մշեցվոց և վանեցվոց» գրքույկին։ Րաֆֆին բանասիրական քննության է ենթարկում Սեդրակյանի հավաքած երգերը, արժեքավորելով այդ ստեղծագործությունների մեջ տեղ գտած ժողովրդի հատկանիշ բնավորությունը», երգերի ազգային բնույթը, ինքնուրույնությունը։ Ժողովրդական երգերի կարևորագույն հատկանիշը Րաֆֆին տեսնում է աորյա կյանքի հետ ունեցած կապի, հարաբերության մեջ։ «Մշեցվոց և վանեցվոց երգերի մեջ ընքիրցողը տեսնում է ոչ թե երևակայական էակներ, այլ մի կենդանի ժողովուրդ, թե որպես ապրում է նա, որպես մտածում, զգում է, վերչապես որպես սիրում է նաև։ Ինչ վերաբերում է ժողովրդական երգերի գեղարվեստական արժեքին, ապա Րաֆֆին հերակականան նշանակության մեծությունը համարում է այդ երգերի բնական գեղեցկությունը։ «Որքան ժողովրդական երգերը կազմված լինեին կաշա-կոպիտ կերպով, որքան նոքա զուրկ լինեին արհեստական գեղեցկությունից, այնուամենայնիվ, նոքա դարձյալ նշանավոր են, որպես անկեղծ քնարվանք, որ բխում է նորա սրտից և նորա կյանքից»։ Նրա կամենում նա ճանաչել ժողովրդի հոգին,— կարդա նրա երգերը,— ասում է Րաֆֆին։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արատապված է «Մշակի», 1874 թ., № 19, էջ 1։

ՀԱՍՈՒՆՅԱՆԸ ԵՎ ՅՈՒՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (էջ 81)

1860-ական թվականների երկրորդ կեսին Հռոմի պապի գործակալ և նրա կամակատար Անտոն Հասունյանի ազգադավ գործունեության հետևանքով պոլսահայ իրականության մեջ ծայր է առնում հասունյան և հակահասունյան կուսակցություններ պայքարը։

Գոլսում և գավառներում հասունյան կուսակցության դեմ ծավալվում է անհաշտ պայքար, որին, ինչպես հայտնի է, մասնակցում է նաև հայ առաջավոր մտավորականությունը՝ ի դեմս Մերենցի և ուրիշների։

Այդ պայքարը առանձնապես սուր բնույթ է կրում 1874 թվականին, պատճառ դառնալով մի շարք անախորժությունների։ Առերևույթ կրոնական թվացող այս խնդրի տակ թաքնված էր քաղաքական նպատակադրում, որ Հասունյանի միջոցով ցանկանում էին իրականացնել նրա արևմտյան հովանավորները։ Հասունյանի և նրա կուսակցության դեմ տարվող պայքարին մասնակցում են նաև Բաֆֆին և Արծրունին։ Բաֆֆին «Հասունյանը և յուր կուսակցությունը» հոդվածով հետապնդում է մի նպատակ՝ ցույց տալ այդ կուսակցության գործունեության կոքսատաբեր հետևանքները և պարզել, որ հայ ժողովուրդը ոչ մի ապասելիք չի կարող ունենալ Արևմտյան տերություններից։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակի»ց», 1874 թ., № 42, էջ 1։

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ (էջ 84)

«Հեղինակների վիճակը» հոդվածի գրության շարժառիթը մասամբ անձնական է, թայլ խոսքանալով իրերի գրության մեջ և քննության ենթարկելով հեղինակների ընդհանուր վիճակն ու հրատարակչական գործի դրվածքը, այդ հարցը Բաֆֆու գրչի տակ ստանում է հասարակական նշանակություն։ Հայտնի է, որ առաջին և երկրորդ գրքերից հետո Բաֆֆին նյութական հետաքրքրություն չունենալով շարունակելու «Փունչի» մնացած հատորների տպագրության։ Ղ. Աղայանի վկայությամբ Բաֆֆու «Փունչերը» մնում են տպարանում փակված ստացագրության վարձը չվճարելու համար և վերջը կշռքով ծախվում են մանրուք փաթաթելու համար» (տե՛ս Ղ. Աղայան, «Երկեր», հատ. Դ., Երևան, 1950 թ., էջ 463)։

Համեմատության մեջ դնելով գրողի, կոշկակարի և հյուսնի տնտեսական վիճակը, Բաֆֆին այն միտքն է հայտնում, որ գրողը ավելի վատթար կացության մեջ է գտնվում, քան վերջիններս։ «Գրքերի հեղինակը յուր գլուխն անգամ պահել չի կարողանում»,— ասում է Բաֆֆին՝ նկատելով հեղինակի անկայուն ու անմխիթար դրությունից, հոդվածագիրը Մելիքզադեն առաջարկում է հիմնել «Տպագրական ընկերություն», որով, ըստ նրա, մեկուց կտրվի հեղինակներին աշխատելու և մյուս կողմից կբավարարվեն դպրոցականների ու ընթերցասերների գրքի հանդեպ ունեցած պահանջները։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակի»ց», 1874 թ., № 48, էջ 1։

ԹՈՒՐՔԻԱ

«Թուրքիա» վերնագրով հոդվածը գրված է «Մշակի» արտաքին տեսության բաժնի համար։ Հենվելով պոլսահայ թերթերի հաղորդած տեղեկությունների վրա, Րաֆֆին կազմում է հիշյալ տեսությունը, յուրաքանչյուր հարցի վերջում ավելացնելով իր արժեքավոր դիտողություններն ու եզրակացությունները։

Փոքր Ասիայում տիրող սովի հետևանքով առաջացած դժբախտությունները մատնանշելուց հետո, Րաֆֆին անդրադառնում է գաղթականության հարցին և քննադատում է Պոլսի ազգային ժողովը, որը այդ փակելով պանդխտության ծնող սոցիալ-տնտեսական պատճառների հանդեպ, առաջարկում է այնպիսի միջոցներ, որոնք ոչ մի չափով չեն կարող կանխել գյուղացիության թալքայումն ու գաղթականության հոսանքը։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875 թ., № 2, էջ 3։

«ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԿԱՄ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» (էջ 92)

«Գրոց ու բրոց» հոդվածը Րաֆֆին գրել է Գ. Սրվանձտյանի համանուն գրքից (1874 թվականին) լույս ընծայման առիթով։

Գնահատելով ու վերլուծելով Սրվանձտյանի հավաքած ավանդությունները, Րաֆֆին աշխատում է ցույց տալ այդ ստեղծագործությունների կապը ժողովրդի անցյալ կյանքի հետ։ Հաճախ Րաֆֆին Սրվանձտյանի կիսատ թողած լրացնում է իր իմացած տեղեկություններով, պատմում է նոր ավանդություններ ու անում համապատասխան եզրակացություններ։ Այս գիրքը Րաֆֆին գնահատում է իբրև մի օգտակար աշխատություն, որը ընծայում է հնագիտական առատ և անշահ նյութ։ Վերջում Րաֆֆին խոստանում է առանձին հոդվածով հանդես գալ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վեպի մասին, հիշյալ հոդվածը նա գրել է թե ոչ, դժվարանում ենք ասել։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1874 թ., № 2, էջ 1։

«ԷԼԻ ՄԵԿ ՁՈՀ» (էջ 111)

Այս հոդվածը Րաֆֆին գրել է «Էլի մեկ գոհ»-ի 1875 թվականի մայիսի 16-ի ներկայացման առիթով։

Քննելով Սունդուկյանի ստեղծած կերպարները, Րաֆֆին ցույց է տալիս դրանցից յուրաքանչյուրի վերաբերմունքը ժամանակի ամենախոշոր գործոնի՝ փողի հանդեպ։

Ինչպես հայտնի է, «Էլի մեկ գոհ»-ի ավարտված տարբերակը բաղկացած է հինգ գործողություններից, սակայն 1875 թվականին Րաֆֆու տեսած ներկայացման տեքստը կազմված է եղել երեք գործողություններից։ Հավանաբար հենց այս հանգամանքն էլ առիթ է տվել Րաֆֆուն ասելու, որ «էլի մեկ գոհը» «լրացված գործ չէ», որ հեղինակը «չէ հասցնում գործողությունները իրենց վերջնական կետին» և այլն։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875 թ., № 22, էջ 1։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 118)

Հայտնի է, որ 1875 թվականի հունիսի սկզբին Ռաֆֆին մեկնում է Պարսկաստան։ Թավրիզից նրան հրավիրել էին վարելու տեղի ազգային դպրոցի հայոց լեզվի և պատմության ուսուցչի պաշտոնը։ Այդ առիթով «Մշակում» տպագրված հայտարարության մեջ ասված է, որ նա այնտեղից կշարունակի աշխատակցել «Մշակին»։

«Նամակ Դավրեժից» հոդվածը Րաֆֆու ուղարկած առաջին ընդակցությունն է, որտեղ նա իրեն հատուկ կրքով մասնակցում է հասարակական հարցերին, պաշտպանելով ընկած ու ոտնահարված մարդու՝ հայ շինականի իրավունքները կրոնական մոլեռանդություններից։

«Նամակ Դավրեժից»-ը գրված է 1875 թվականի հուլիսի 5-ին Թավրիզից, տպագրվել է նույն թվականի հուլիսի 24-ին։

Հրապարակված է Մել. տոորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875 թ., № 29, էջ 3։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ (ԷՋ 120)

1875 թվականի հուլիսի 15-ին Թավրիզից Րաֆֆին «Մշակին» է ուղարկում երկրորդ ընդակցությունը «Նամակ Դավրեժից» վերնագրով։ Խոսելով պարսկահայոց լուսավորության մասին, Րաֆֆին մեջ է բերում Թավրիզի ազգային դպրոցի հիմնադրման ու առաջադիմության պատմությունը։ Նա առաջարկում է դպրոցում ընդունել նաև պարսիկ երեխաներին, այդ փաստի մեջ տեսնելով «պարսիկների և հայերի, այդ երկու միմյանց հետ ցեղակից ազգերի մեջ սեր և միաբանություն տարածելու» լավագույն միջոցը։

«Նամակ Դավրեժից»-ը տպագրվել է 1875 թվականի հուլիսի 31-ին։

Հոդվածը հրապարակված է Մել. տոորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1875 թ., № 30, էջ 1։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ (ԷՋ 125)

Այս հոդվածի առաջին մասը 1875 թվականին տպագրվել է «Մշակի» 38-րդ համարում «Պարսկաստանի հայոց վիճակագրական դրությունը» վերնագրով։ Հոդվածի վերջում (տե՛ս այս հատորում, էջ 135), Րաֆֆին գրում է. «Մեր այս նամակով հաղորդված վիճակագրական տեղեկությունները վերաբերում են միայն պարսից Արդրիստանի մասին, մեռում է Ատրպատականի նահանգը, որի մասին կգրենք ետոնց»։ (ընդգծումը մերն է. Խ. Ս.)։ Ատրպատական նահանգի մասին գրվելիք հատվածը «Մշակում» չի հրապարակվել, և հոդվածը մնացել է կիսատ։ Մեր ձեռքի տակ է նույն հոդվածի ավելի ընդարձակ տարբերակը «Հայոց ազգաբնակությունը Պարսկաստանում» վերնագրով, որտեղ նույնպես խոսք չկա Ատրպատականի մասին (այս տարբերակը 1913 թվականին Ականա Րաֆֆին հրատարակում է «Պարսկական պատկերներ» ժողովածուում, առաջաբանում հավաստելով, որ հոդվածը արտատպված է ձեռագրից)։

Հոդվածի առաջին պարբերության սկզբում իբրև ենթավերնագիր գրված է Ատրպատական բառը, ակնհայտ կա ենթադրելու, որ հոդվածը նվիրված է լինելու այդ նահանգին, մինչդեռ հիմնականում խոսվում է Սպահանի ու Արդրիստանի

մասին։ Հեղինակային ձեռագրերի բացակայության հետևանքով մենք հնարավորություն չունենք պարզելու, թե Րաֆֆին է այդպես գրել, ինչ-որ նպատակով, թե հրատարակիչ Աննա Րաֆֆին է ստեղծել այս բյուրիմացությունը։

Թե երբ է գրված «Պարսկաստանի հայոց վիճակագրական դրությունը» հոդվածը, մեզ չհաջողվեց պարզել, այն տպագրվել է 1875 թվականի սեպտեմբերի 25-ին (տե՛ս «Մշակ», 1875 թ., № 38, էջ 1)։

Հրապարակված է Մեկ. ստորագրությամբ։

Արտատպված է Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուից, Վիեննա, 1913 թ., էջ 528։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ (էջ 144)

Հոդվածը Րաֆֆու կենդանության ժամանակ չի հրապարակվել։ Ավետագիլյանի հուշերից հայտնի է, որ Րաֆֆին Պարսկաստանում եղած ժամանակ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում պարսից գրականության, ժողովրդի կենցաղի ու ներքին տնտեսական կյանքի հանդեպ։ Այս հոդվածը պետք է համարել Րաֆֆու կողմից պարսկական կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի արտահայտություն, նրա մանրազնին ուսումնասիրությունների արդյունք։ Այդ են վկայում նաև հոդվածում բերված փաստական տվյալները։ Պետք է ենթադրել, որ հոդվածը գրված է 1875 թվականի վերջում, կամ 1876 թվականի սկզբում, երբ Րաֆֆին գտնվում էր Թավրիզում։

Հոդվածը առաջին անգամ հրապարակում է Աննա Րաֆֆին 1913 թվականին։

Արտատպված է Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուից, Վիեննա, 1913 թ., էջ 556։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (էջ 151)

Այս հոդվածը ևս հեղինակի կենդանության ժամանակ չի հրապարակվել։ Գրության տեղն ու թվականը հայտնի չէ, պետք է ենթադրել, որ այն գրված է 1875—76 թթ.։

Արտատպված է Րաֆֆու «Պարսկական պատկերներ» ժողովածուից, Վիեննա, 1913 թ., էջ 556։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (էջ 155)

1876 թ. սկզբին Աբգար Հովհաննիսյանը թույլտվություն է ստանում «Փորձ» անունով ամսագիր հրատարակելու և նույն թվականի փետրվարի 25-ին նամակով դիմում է Րաֆֆուն, խնդրելով վերջինիս աշխատակցել «Փորձ»-ին։ «Ես ինձ շատ բախտավոր կհամարիմ,— գրում է Աբգար Հովհաննիսյանը,— եթե ամսագրիս առաջին իսկ էջերի վրա կարողանամ Ձեր մի որևիցե գրվածքը տպագրել, իսկ վերջին մասերում՝ Պարսկաստանից նամակ Ձեր առորոգությամբ։ Ես ուրեմն անհամբերությամբ նամակիս պատասխանին կը սպասեմ» (տե՛ս «Պարսկական պատկերներ» ժողովածու, Վիեննա, 1913 թ., էջ XIII)։

Չանցած մի քանի ամիս Թավրիզից Րաֆֆին խմբագրին է ուղարկում «Պարսկաստան» վերնագրով հոդվածը, որը նույն թվականին տպագրվում է «Փորձի» առաջին համարում։ Այս հոդվածը մի տեսություն է նվիրված պարս-

կահայոց ժողովրդի սոցիալ-քաղաքական ու կուլտուրական կյանքին։ Բաֆֆին այստեղ ամբողջացնում և ամփոփում է այն ամենը, ինչ ուսումնասիրել, տեսել ու լսել էր Պարսկահայաստանում։ Հոդվածի սկզբում նա նշում է, որ Պարսկաստանի հասարակական կյանքում հանդես են եկել իսլամի մոլեռանդության դեմ ուղղված հոսանքներ, որոնց գործունեության մեջ Բաֆֆին տեսնում է ֆեոդալական կարգերի փլուզումը։ Դառնալով բուն խնդրին, նա ամբողջ կրքով դատապարտում է բողոքական միսիոներների և կաթոլիկների գործունեությունը, որոնք մուտք են գործել Արևելք և խարդախ միջոցներով գավանափոխ են անում ժողովրդին։

Անդրադառնալով պարսկահայոց կրթական վիճակին, Բաֆֆին գպրոցական գործի ձախողման պատճառը տեսնում է հոգևոր բնույթի մեջ։ Դպրոցը «ծնեցեցականացրին և դրանով էլ մեռցրին»,— գրում է նա ու պահանջում ժողովրդի փողերով հիմնված դպրոցը անջատել եկեղեցուց և տալ ժողովրդին։

Բաֆֆին հոդվածը գրել է 1876 թվականի հունիսի 1-ին, Թավրիզում։ Առաջին անգամ լույս է տեսել «Փորձում», ապա նաև՝ հեղինակի «Պարսկական պատկերներ» ժողովածուում (Վիեննա, 1913 թ.)։

Հոդվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Փորձ» հանդեսից, 1876 թ., № 1, էջ 279։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (էջ 184)

«Նամակ Պարսկաստանից» հոդվածը գրված է «Թիֆլի Շարաբանի» պատմվածքին նախորդող, նյութի կուտակման ժամանակաշրջանում։ Հայտնի է, որ «Թիֆլի Շարաբանին» գրելուց առաջ Բաֆֆին մանրազնին կերպով ուսումնասիրում է Գաբրիների (արևապաշտների) կենցաղն ու սովորույթները։ Այդ են վկայում նաև հոդվածում Բաֆֆու ցուցաբերած խոր գիտելիքները Գաբրիների մասին։

Հոդվածը գրված է 1875 թվականի դեկտեմբերին Թավրիզից, տպագրվել է 1876 թվականի հունվարին։

Հրապարակված է Մել. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 3, էջ 3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (էջ 186)

Գրված է 1876 թվականի հունվարի 24-ին Թավրիզից, տպագրվել է նույն թվականի փետրվարի 5-ին։

Հրապարակված է Մել. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 4, էջ 3։

ԳԺԱՏՈՒՆ (էջ 188)

Բաֆֆին այս հոդվածը գրել է «Արևելյան մամուլում» տպագրված Մերենցի մի «Բողբակցությանն» առիթով (տե՛ս «Արևելյան մամուլ», 1876 թ., հունվար, (№ 1), էջ 22)։

Յուլց տալով հայերի վիճակը Թուրքիայի բռնակալության տակ, Մերենցը այն միտքն է հայտնում, որ հարստահարությունից խուսափելու համար պետք է թողնել հայրենի հողը և ապաստան որոնել օտար երկրներում։

Արատաժոր համարելով այս հարցադրումը, Րաֆֆին օրինակների միջոցով ցույց է տալիս գաղթականության կորստաբեր հետևանքները և արևմտահայությանը կոչ է անում ամուր կապվել մայր հողին։ «Թքե հայը կամեր կյանք և ապագա ունենալ,— գրում է Րաֆֆին,— նա պետք է յուր ապրուստը հիմնե հասատուն հողի վերա, և այդ հողը Քող լինի այն, որ սրբված և գնված է մեր նախնյաց արյունով...»։

Այդ հարցի մասին Րաֆֆուց հետո հոդված է գրում նաև Սպանդար Սպանդարյանը (տե՛ս «Մշակ», 1876 թ., №№ 24, 25, էջ 1)։ Մերենցը, իհարկե, անպատասխան չի թողնում ինչպես Րաֆֆուն, այնպես էլ Սպանդար Սպանդարյանին՝ «Արևելյան մամուլի» երկու համարում շարունակաբար տպագրելով մի ընդարձակ հոդված (տե՛ս «Արևելյան մամուլ» 1876 թ., № 10, էջ 342 և № 11, էջ 394)։

«Գիժատուն» հոդվածը գրված է 1876 թվականի մարտի 20-ին Թավրիզում, տպագրվել է նույն թվականի ապրիլի 22-ին։

Հրապարակված է Մեկ. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 14, էջ 1։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (էջ 197)

Գրված է 1876 թ. մայիսի 22-ին Թավրիզից, տպագրվել է նույն թվականի հունիսի 10-ին։

Հրապարակված է Մեկ. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 21, էջ 3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (էջ 199)

Նամակի գրության հարցում շարժառիթ է հանդիսացել մահմեդական կրոնավորների հրահրած սնոտիապաշտական ցույցերը, որոնց մոլեռանդությունը նոյ քաղաքում լուրջ սպառնալիք է ստեղծում շրջապատում բնակվող քրիստոնյաների համար։

Այս սպառնալիքը այնպիսի լուրջ բնույթ էր կրում, որ Րաֆֆին զգուշության համար ստիպված է լինում հոդվածը հրապարակել Անանուն ստորագրությամբ։

Նամակը գրված է 1876 թվականի հունիսի 25-ին, Թավրիզից, տպագրվել է նույն թվականի օգոստոսի 5-ին։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 29, էջ 3։

ԿՂԵՐԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ (էջ 201)

«Կղերական հարստահարություն» հոդվածի գրության հարցում շարժառիթ է հանդիսացել Թավրիզի ազգային-հոգևոր դպրոցի անմխիթար վիճակը և դպրոցի կողմից կաթոլիկոսին ուղղված աղերսագրին էջմիածնի տված բացասական պատասխանը։

Հոդվածը գրված է 1876 թվականի մայիսի 28-ին Թավրիզում, տպագրվել է նույն թվականի օգոստոսի 12-ին։

Հրապարակված է Մեկ. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 30, էջ 1։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (էջ 210)

Այս քղթակցության մեջ ցույց տալով բարբարոսության կոնկրետ օրինակներ, Րաֆֆին աշխատում էր կառավարող շրջանների ուշադրությունը հրավիրել այդ երևույթի վրա, միաժամանակ մերկացնելով ու դատապարտելով պետական պաշտոնյաների չարաշահումները։

Նման պարագաներում միանգամայն պարզ է ու հասկանալի, որ Րաֆֆին չէր կարող բացահայտորեն հանդես գալ այս հոդվածի հեղինակի դերում, այդ իսկ պատճառով հոդվածը «Մշակում» հրապարակված է երեք աստղանիշ (* *) ստորագրությամբ։*

«Նամակ Պարսկաստանից» հոդվածը գրված է 1876 թվականի օգոստոսի 13-ին, Թավրիզից, տպագրվել է նույն թվականի սեպտեմբերի 2-ին։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 33, էջ 3։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ (էջ 214)

Այս նամակը ևս մի քղթակցություն է, գրված «Մշակի» «Արտաքին տեսություն» բաժնի համար։ Հոդվածում եղած մերկացամները կարող էր կորստաբեր հետևանքներ ունենալ Թավրիզում ապրող հեղինակի համար, այդ իսկ պատճառով «Նամակ Պարսկաստանից»-ը «Մշակում» հրապարակված է Աճեանեւ ստորագրությամբ։

Հոդվածը գրված է 1876 թվականի օգոստոսի 15-ին, Թավրիզից, տպագրվել է նույն թվականի սեպտեմբերի 16-ին։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 35, էջ 3։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ (էջ 216)

Մեզ չհաջողվեց պարզել «Հայ վաճառականները Կովկասի մեջ» հոդվածի գրության տեղը և թվականը։ Պետք է ենթադրել, որ այն գրված է 1876 թվականին, Թավրիզում։

Լույս է տեսել նույն թվականի նոյեմբերի 18-ին։

Հոդվածը հրապարակված է Ո. ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1876 թ., № 44, էջ 1։

«ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ» (էջ 220)

«Տեղեկագիրք գավառական հարստահարությանց» հոդվածը մի գրախոսական է, որը Րաֆֆին գրել է համառուն վերնագրով գրքի տպագրության առիթով։

Այս հոդվածը մի վավերական է այն մասին, թե ինչպիսի վայրագություններ են գործել քուրդ բաշիբոզուկները ու թուրք պաշտոնյաները հայերի նկատմամբ, և թե որպիսի սառն անտարբերությամբ է նայել թուրքական կառավարությունը այս ամենի վրա։ Անդրադառնալով գրքում լուսաբանված յուրքանչյուր դեպքին, Րաֆֆին այն եզրակացությանն է հանգում, որ մի ժողովրդի ոչինչ բախտավոր ապագա գուշակել չի կարելի, քանի դեռ նրա ապրուստի պա-

Հանջները հաստատուն հիմքի վրա կեցված չեն, քանի որ նա թե՛ նյութապես և թե՛ բարոյապես մաշվում և կլանվում է մի ուրիշ ավելի զորեղ տարրից՝ Արևմտահայության գերխավոր կենսական հարցը» համարելով հողային խնդիրը, Րաֆֆին պահանջում է, որ պատրիարքը իր աչքի առաջ ունենալով գոլտամ համալուրյուն անող 45 հազար վանեցի և մշեցի գաղթականներին, իր ուշադրությունը դարձնի հայ գյուղացիության քայքայման սոցիալական պատճառների վրա։

Հոդվածը, ինչպես պարզվում է տոզատակի ծանոթությունից, Րաֆֆին գրել է 1877 թվականի սկզբին (հունվարի 10-ից առաջ) «Փորձում» հրապարակելու համար։ Սակայն «Փորձի» խմբագիրը, Րաֆֆու բնորոշմամբ, «իբրև միայն հայտնի պատճառով», այս հոդվածը թողնում է անտիպ։ 1878 թվականի հունիսի վերջերին Րաֆֆին Թավրիզից գալով Թիֆլիս, «Փորձից» վերցնում է այն ու հանձնում «Մշակին»։ Նույն թվականի օգոստոսին «Մշակում» շարունակաբար սկսում է տպագրել Րաֆֆու այս հոդվածը։

«Տեղեկագիրը...» ավելի ուշ, 1913 թվականին, տպագրվում է նաև հեղինակի «Պարսկական պատկերներ» ժողովածուում։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1878 թ., № 145—150, էջ 1։

Տեքստում որոշ լրացումներ են կատարված 1913 թվականի հրատարակությունից։

ՆԱՎԱՐՒ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐԸ (էջ 262)

Հոդվածն անավարտ է և հեղինակի կենդանության ժամանակ չի հրատարակվել։

«Նավարի արբանյակները»-ը առաջին անգամ տպագրվել է Րաֆֆու մահվանից երկու տարի անց, 1890 թվականին։ Աննա Րաֆֆին հեղինակի արխիվից հայտնաբերելով այս հոդվածի ձեռագիրը, տպագրելու համար այն ներկայացնում է «Տարազին» խմբագրությանը։

Այնուհետև այս հոդվածը երկրորդ անգամ, 1915 թվականին, հրատարակվում է «Աղբյուր» մանկական ամսագրի 5-րդ համարում։

Հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է «Տարազից», 1890 թ., № 5, էջ 84։

ԴԱՏԱՐԿ ՀՈՒՅՍԵՐՈՎ ԵՆՔ ԽԱՓՎՈՒՄ (էջ 265)

«Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածի գրության հարցում շարժառիթ են հանդիսացել ռուս-թուրքական պատերազմի շրջանում ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության տարբեր հոսանքների միջև գոյություն ունեցող հակադիր մտայնությունները։

Հայտնի է, որ «Մեղու Հայաստանի» լրագրի շուրջը համախմբված պահպանողական տարրերը որոշ ակնկալություններ ունեին բուրժուական արևմուտքից. արևմտահայ բուրժուազիան, ամիրայությունը ամուր թելերով կապված էր թուրքական վերնախավի հետ, իսկ լիբերալ բուրժուազիան առաջարկում էր հեռու մնալ արյունահեղությունից, որովհետև քաղաքակրթված Թուրքիան կարող էր հայերին հասցնել մի բախտավոր ապագայի։ Րաֆֆին արտահայտելով ազգային-ազատագրական պայքարի առաջավոր դեմոկրատական թևի գաղափարախոսու-

թյունը, քննադատում է պահպանողականներին, արևմտահայ ամիրայությանը ու փիթերալ բուրժուազիային, դավաճանությունն համարելով նրանց բռնած դիրքը ժողովրդի ու հայրենիքի հանդեպ։ «Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածում նա այն միտքն է հայտնում, որ ազատության ձգտող մի ժողովուրդ, որը օտարի լուծը թոթափելու համար դարեր շարունակ սպասել է հարմար առիթի, իրավունք չունի ճնշանքավոր լուծյուն պահպանելուն։ Բաֆֆին հիմար խմաստակ է համարում նրանց, ովքեր ելուծյան մեջ են տեսնում ժողովրդի շահը և Հայաստանի ազատության հարցը կապում են Թուրքիայի քաղաքակրթվելու հետ։ Բաֆֆին զգուշացնում է ժողովրդին չխաբվել Եվրոպայի ներշնչած և Թուրքիայի խոստացած դատարկ հույսերով և դիմել վճռական քայլի։

Այս հոդվածը տպագրվելով «Մշակում» արժանանում է լայն շրջանների ուշադրությանը։

«Մշակի» քարտուղար Հ. Տեր-Գրիգորյանի վկայությունից իմանում ենք, որ «Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածը տպագրվելու ժամանակ կըրճատումների է ենթարկվել «Միտք Ռողղի (գրաքննիչի) կողմից»։

Ինչպես պարզվում է, «Տաճկահայաց» ժողովածուում (Վիեննա, 1913 թ.) Աննա Բաֆֆու հրապարակած ակագիցց, Բաֆֆին հետագայում վերամշակում ու ընդարձակում է այս գգրվածքը՝ նպատակ ունենալով հասցնել իր պատմական տեսությանը մինչև մեր օրերը։ «Ակզդում» այն միտքն է հայտնված, որ «Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածը առաջարան է հանդիսացել մի ավելի ստվարածավալ աշխատության, որը կրում է «Հայաստանը երկու կրակի մեջ» վերնագիրը։ Ըստ Աննա Բաֆֆու հավաստիացման այս աշխատությունը («Հայաստանը երկու կրակի մեջ») պետք է տպագրված լիներ «Տաճկահայաց» ժողովածուի Վիեննայի հրատարակչության մեջ, սակայն մեզ համար միանգամայն անհասկանալի պատճառով ժողովածուում բացակայում է այդ հոդվածը։

«Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածը գրված է 1878 թվականի սկզբին Ագուլիսում, տպագրվում է նույն թվականի փետրվարի 14-ին։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1878 թ., № 22, էջ 1։

ԻՆՔՆԱՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆ (ԷՋ 273)

«Ինքնահավաքություն» հոդվածը մի պատասխան է ուղղված «Մեղու Հայաստանի» լրագրի և մեղվականների դեմ։

Մեղվականները անվերապահորեն մեծարում էին այն ամենը, ինչ որ հայկական է։ Այս երևույթը համարելով ինքնահավաքություն, Բաֆֆին ամենախիստ կերպով քննադատում է այդ կեղծ ազգասերներին, որոնք ուրիշ պարագաներում Հայկի ոսկորները կարող են վաճառել մի քանի գրոշով։

Ինքնահավաքությանը հակադրելով ինքնաճանաչողությունը, Բաֆֆին պաշտպանում է «Մշակի» դիրքը, որը քննադատելով ու խարազանելով արատները, վիր է հանում հասարակական կյանքի հիվանդոտ կողմերը, քանի է տալիս ընտանեկան կյանքի, հոգևորականության, լրագրության և այլ կազմակերպություններուն աչքառնակությունները, դրանով իսկ նպաստելով այդ կյանքի առաջխաղացման ու զարգացմանը։

Ի դեպ, «ազգասիրությանն» և ճշմարիտ հայրենասիրության հարցը շատ է զբաղեցրել Բաֆֆուն և նա այս թեմայով քանկացել է գրել նաև գեղարվեստա-

կան ստեղծագործություն, որից մեզ է հասել միայն ամբողջական վերնագրով պատառիկը (տե՛ս Րաֆֆի, «Երկերի ժողովածու», հատոր VIII, էջ 561)։

«Ինքնախոստովանությունը» գրված է 1878 թվականի սկզբներին Ագուլիսում, տպագրվել է նույն թվականի փետրվարի 28-ին։

Հեղվածը հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1878 թ., № 29, էջ 1։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ (ԷՋ 282)

Հայտնի է, որ 1877 թվականի սեպտեմբերին Րաֆֆին ուղևորվում է Վերին Ագուլիս՝ վարելու տեղի երկսեռ դպրոցի հայոց լեզվի և պատմության ուսուցչի պաշտոնը։

Աշխատելով Ագուլիսում և ծանոթանալով գործերի ընթացքին, նա տեսնում է, որ տգետ վարժապետների պատճառով դպրոցը հասել է կործանման եզրին։ Գործադրելով մեծագույն ջանքեր, Րաֆֆին կարգի է բերում դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքները։ Մեծ անախորժություններից հետո նրան հաջողվում է կնպաստել տիրացուների փոխարեն կրթված մանկավարժներ հրավիրել Թիֆլիսից և այլն։ Համանաքար հենց այս դեպքերի անմիջական ազդեցության տակ էլ նա գրում է «Ժողովրդական վարժապետներ» վերնագրով հոդվածը։

Գավառական դպրոցում մանկավարժներ ընդունելու այս եղանակը, որի մասին հոդվածում մանրամասն կերպով խոսում է Րաֆֆին, իրական դեպքեր են, որոնց ականատես է լինում նա իր մանկավարժական գործունեության ընթացքում։

«Ժողովրդական վարժապետներ» հոդվածը գրված է 1878 թվականի սկզբին, Ագուլիսում, տպագրվել է նույն թվականի մարտի 1-ին։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից» 1878 թ., № 30, 31։

ԳԵՌԵՎՍ ՈՒՐՇ ՉԷ (ԷՋ 295)

Ռուս-Թուրքական պատերազմից հետո՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրի կնքումից շատ չանցած, իսկույն պարզ է դառնում, որ հայ ժողովուրդը ոչ մի սպասելիք չի կարող ունենալ 16-րդ հոդվածից։ Րաֆֆին գիտակցում էր, որ բալկանյան ժողովուրդների բախտին արժանանալու համար պետք է հետևել նրանց օրինակին։ Այս նույն նպատակն էր հետապնդում նա, երբ «Մշակի» 41-րդ համարում հրապարակ հանեց «Գեռևս ուշ չէ» հոդվածը։

Րաֆֆու համար պարզ էր, որ «հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելուց։ Անհաջողության հիմնական մեղքը արևմտյան պետությունների ագրեսիվ ձգտումների և ցարական Ռուսաստանի շահերի միջև գոյություն ունեցող հակամարտությունից բացի, նա տեսնում էր նաև «հայերի անշարժության մեջ։ «Ոչ ոք պատրաստակամ չէ հայերի համար մտածել,— գրում է նա,— քանի որ իրենք հայերը անշարժ մնացին և իրենց համար չմտածեցին»։ Րաֆֆին վերևից եկող ազատության հանդեպ առաքելությունը տալով ցածից դեպի վեր բարձրացող ազատությանը, կոչ է անում մշակ դասին, որպեսզի վերջիններս զենքի դիմեն, բռնելով «պատիարքի ու ազգային ժողովի կոկորդից, տիպին նրանց ճիշտ հասկանալու

հայ ժողովրդի ազգային շահերը։ Նման վճռական քայլի համար Րաֆֆին գտնում էր, որ դեռևս ուշ չէ։ «Հակառակ դեպքում,— ասում է նա,— հայի առաջարկությունները կմնան առանց հետևանքի կազմակերպվելիք կոնֆերենցիաներում»։ Րաֆֆին արդեն կռահել էր արևմտյան պետությունների կողմից կուլիսներում նախապատրաստվող խաղերի ներքին իմաստը և պահանջում էր քողնել կույր հնազանդությունը ու զենքի օգնությամբ դիմել վճռական քայլին։ Նա կոչ է անում չվախենալ պայքարից ու արյունահեղությունից, որովհետև, ասում է նա. «Առանց արյունի, առանց զոհերի փրկություն չի լինում»։

«Դեռևս ուշ չէ» հոդվածը գրված է 1878 թվականի փետրվար-մարտ ամիսներին, Ագուլիսում։ Տպագրվել է նույն թվականի մարտի 16-ին։

Երկրորդ անգամ այն լույս է տեսել 1895 թվականին Աննա Րաֆֆու կազմած «Տաճկահայքը ժողովածուում։

Հոդվածը առաջին անգամ հրապարակվել է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1878 թ., № 41, 42։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ (էջ 365)

«Մշակից» խմբագիր Գ. Ալթրունուն ուղղված այս նամակը Րաֆֆին գրել է 1878 թվականի հունիսի 11-ին, Վերին-Ագուլիսից։ Լույս է տեսել նույն թվականի հունիսի 22-ին։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից» 1878 թ., № 102, էջ 2։

ԻՆՉ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ (էջ 306)

Այս հոդվածը գրված է Բեռլինի վեհաժողովից հետո, երբ արևմտյան պետությունները «Հայոց հարցը» դարձրել էին ներքին գործարքների ու քաղաքականական ձգտումների հետապնդման միջոց, ամուրդի գնելով մի ամբողջ ժողովրդի ազգային գոյության հարցը։

Ահա այդ օրերին է, որ Րաֆֆին հրապարակում է «Ի՞նչ վերանորոգումներ պետք են տաճկական Հայաստանին» վերնագրով հոդվածը։ Այստեղ Րաֆֆին դնում է կյանքի ու կայքի և իրավունքի ապահովության խնդիրը՝ միաժամանակ ազգային միավորման կոչ անելով։ Նա պահանջում է վերացնել հողի կալվածատիրական օրենքը և այն հանձնել իր իսկական տիրոջը՝ գյուղացուն։

Հոդվածը գրված է 1878 թվականի սեպտեմբերին, Ագուլիսում, տպագրվել է նույն թվականի սեպտեմբերի 22-ին, երկրորդ անգամ այն հրատարակվել է 1895 թվականին, Աննա Րաֆֆու կազմած «Տաճկահայքը ժողովածուում, ինչպես նաև տեղ է գտել նույն ժողովածուի երկրորդ՝ վիննական հրատարակության մեջ։

«Մշակում» հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1878 թ., № 162, 163։

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ (էջ 316)

Ռուս-Թուրքական պատերազմից հետո քաղաքական նոր դեպքերի ազդեցության տակ Րաֆֆին իր ձեռքն է առնում «Կայծեր» վեպը, վերամշակում է այն և ցանկանում հրատարակել «Հայդուկներ» վերնագրով։ Այս նպատակով նա

գրում է համանուն վերնագրով առաջաբան, որը պետք է լույս տեսներ վեպի հետ միասին։

«Տեսնելով թե ի՛նչ տպավորություն գործեց իմ «Ջալալեդդին» փոքրիկ վիպակը ընթերցողների վրա,— գրում է Րաֆֆին,— ես քաջալերվեցա իմ վաղուց գրած մի աշխատությունը լույս ընծայել, որ կրում է անունս «Հայդուկներ»։

Առաջաբանում Րաֆֆին խոսում է հայդուկային շարժման բուն պատճառների մասին։ Հայդուկի հանդես գալը նա կապում է ազգային ճնշման հետ։ «Հայդուկը,— գրում է նա,— ստրկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ...»։ Հայդուկը արյունահեղություններ է կատարում ոչ թե «...հափշտակության ագահությունից գրգռված... այլ նրա սրտի հետ կապված են խորին ազգային զգացմունք և ազատության բաղձանք։ Հայդուկի գործողությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կողմից, որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում ճնշյալին և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունները»։

«Հայդուկները» հոդվածը հայտնի պատճառով հեղինակի կենդանության օրոք չի հրատարակվել, այն առաջին անգամ տպագրվում է 1892 թվականին։ Աննա Րաֆֆին հեղինակի ձեռագրերի միջից հայտաբերելով այս հոդվածի ինքնագիրը, հանձնում է «Արաքս» հանդեսի խմբագրությանը, որ հրատարակում է այն հետևյալ ծանոթագրությամբ. «Այս գրականական բեկորները, որ մեծ սիրով գիշեց մեզ տպագրելու համար. Րաֆֆու մեծարգո այրին, երևի հանգուցյալից նշանակված է եղել իրրև առաջաբան մի ընդարձակ վեպի, որ լույս չի տեսել. գուցե այդ վեպը լինի հոյակավոր գլուխներ»։

«Հայդուկներ»-ը հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ։

Արտատպված է «Արաքս» հանդեսից, Պետերբուրգ, 1892 թ., գիրք II, էջ 91։

ՀԱՅ ԿԻՆԸ (էջ 318)

«Հայ կինը» վերնագրով ուսումնասիրությունը Րաֆֆին հավանորեն գրել է 1878 թվականի վերջում։

1879 թվականի հունվարի 30-ին այն արդեն ուղարկված էր Գ. Արծրունուն «Մշակում» տպագրելու համար։

Փետրվարի 13-ին Գ. Արծրունին «Մշակից» միջոցով Վերին-Ագուլիսում ապրող Մելիքզադեին հաղորդում է, որ նրա աշխատությունը ստացված է, բայց մի քանի անհետաձգելի նյութերի պատճառով տպագրումը հետաձգվում է։

Վերջապես 1879 թվականի մարտի 7-ին «Մշակի» 34—43-րդ համարներում սկսվում է պարբերաբար տպագրվել «Հայ կինը» աշխատությունը։

Այս ուսումնասիրությունը թեև մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև ազգագրական, կենցաղագրական տեսակետից, սակայն այստեղ հիմնականը կնոջը հասարակական ու ընտանեկան կյանքի համար նախապատրաստելու, նրա ազատության ու հասարակական դերի հարցն է։

Սկսելով գեղչկուհուց, Րաֆֆին անցնում է քաղաքի կանանց կենցաղի և իրավունքների նկարագրմանը, ապա անդրադառնալով գավառի և Քիֆլիսի կանանց կենցաղային և բարոյական տարբերություններին, նա հանգում է այն եզրակացությունները, որ վերնախավում տիրապետող ընտանեկան հոդի բարերը և գնխությունը «Գոռացնում են կնոջ առաքինություն» խոսելով կնոջ հասարակական դերի մասին, նա կնոջը դիտում է իբրև տղամարդկանց հասարակության վրա ազդելու միջոց։

«Հայ կինը» աշխատության հրատարակման հետ կապված է գրաքննչական մի պատմություն, որի խնդությունը այս դեպքում անուղղելի է դառնում հեղինակային ինքնագրերի բացակայության պատճառով։ «Հայ կինը» տպագրվելու ընթացքում «Մշակի» 41-րդ համարում խմբագրությունը հրատարակում է մի այսպիսի հաղորդություն. «Վ. Ագուլիս. Մելիքզադե։ Մենք մեղավոր չենք, որ Ձեր հոդվածը կրճատված է տպվում»։ Այստեղից ակնհայտ է դառնում, որ «Հայ կինը» տպագրելու ընթացքում ենթարկվել է գրաքննչական կրճատումների։ Այդ են վկայում նաև «Մշակի» 35 և այլ համարների սյունակներում բաց մնացած տարածությունները։

Հայտնի է, որ «Հայ կինը» «Հայ երիտասարդությունը» աշխատության հետ միասին հրատարակվում է 1890 թ. առանձին գրքով։ Այս և «Մշակում» հրատարակված տեքստերի համեմատությունից պարզվում է, որ «Մշակում» 36-րդ համարից հետո եկող տեքստի հաջորդականության մեջ գոյություն ունի տարբերություն։ Ամենից հավանական ենթադրությունն այն է, որ «Մշակի» խմբագրությունը գրաքննչի կողմից հանված տեքստը նորից է ներկայացրել վերջինիս և կարողացել է անցկացնել, որի հետևանքով էլ 36-րդ համարից հանված հատվածը տպագրվել է աշխատության վերջնամասում։

«Հայ կինը» «Մշակում» տպագրվելուց հետո արժանանում է ընթերցողների ամենալայն ուշադրությանը։ «Մշակի» 145-րդ համարում տպագրված մի հայտարարությունից մենք իմանում ենք, որ Մոսկվայի համալսարանի իրավաբանական բաժնի ուսանող Ս. Դադյանը Բաֆֆու մի շարք ուրիշ գործերի հետ ռուսերեն է թարգմանել նաև «Հայ կինը» աշխատությունը։ Նույն աշխատությունը «Кавказ» լրագրի համար թարգմանում է նաև Հով. Աբեղյանը (տե՛ս «Մշակ», 1879 թ., № 152, էջ 3)։

«Հայ կինը» առանձին գրքով լույս տեսնելուց հետո ընդարձակ «Մատենախոսությունն» է հրապարակում նաև «Նոր-դար» թերթը, ըստ ամենայնի բարձր գնահատելով աշխատության հասարակական արժեքը (տե՛ս «Նոր դար», 1890 թ., № 64—65)։

«Մշակում» «Հայ կինը» հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Ներտպված է Բաֆֆու «Հայ կինը և Հայ երիտասարդությունը» գրքից, Թիֆլիս, 1890 թ.։

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ (էջ 380)

«Հայ կինը» աշխատության հրապարակումից հետո, «Մշակի» 1879 թ. նոյեմբերի 6-ի համարից սկսած պարբերաբար տպագրվում է նաև նրա «Հայ երիտասարդությունը» վերնագրով հոդվածը (տե՛ս «Մշակ», 1879 թ., №№ 192—195, 197—199, 201—208)։

Ձեռնարկելով այս աշխատությունը, Բաֆֆին ցանկանում էր երիտասարդության՝ հասարակության այդ թարմ ուժի մեջ տեսնել կազմակերպված և ուժեղ միավորություն, որը անհրաժեշտության դեպքում պետք է ուղղություն տա ժողովրդի ազատագրական ձգտումներին։

Հայ երիտասարդությանը բնորոշելիս Բաֆֆին նրա բնավորության էական հատկանիշը կապում է միջավայրի ֆիզիկական ներգործության հետ։ Լեռնաբնակները, ըստ նրա, ավելի քաջ են, ազատասեր և ըմբոստ, իսկ հարթավայրի բնակիչները աշխատասեր են, խաղաղ և երկչոտ։ Նա երբեմն հարցին տալիս է

նաև սոցիալական լուծում, նշելով, որ ազգաբանների զավակները ավելի լավ ուսանողներ են, քան հարուստներինը»։

Խոսելով Ռուսաստանում և Եվրոպայում սովորող հայ ուսանողության մասին, Րաֆֆին նրանց շարքերում նշմարում է տարբեր հասկացողության տեր մարդկանց։ Նա ամենախիստ կերպով քննադատում է իր ազգությանը արհամարհող, քաղախաղով ու զվարճությամբ տարված այն պարտաբուծներին, որոնք հայրենիք են վերադառնում առանց հիմնավոր գիտելիքների։ Դրանց կողքին նա ցույց է տալիս ջանասեր և գործունյա ուսանողներին, որոնցից մեծապես կարող է օգտվել ժողովուրդը, եթե նրանք չունենային առանձին հայեցակետ և հանդես գային միասնական գաղափարներով ու ձգտումներով։ Իբրև օրինակ, Րաֆֆին մատնացույց է անում ռուս ուսանողներին, որոնք հետևում են ժամանակակից ժեստերին ու շարժումներին և հետաքրքրվում են ժողովրդի ներքին խավերի վիճակով, զբաղվում են քաղաքական մտքերով։ Նա մեծ ոգևորությամբ է խոսում նաև ֆրանսիական ուսանողների դեպի քաղաքական հարցերը ցուցաբերած ակտիվ վերաբերմունքի մասին։ «Քաղաքական հեղափոխության ժամանակ,— գրում է Րաֆֆին,— նրանք զարթնում են որպես քնած առյուծ և առաջինն են լինում, որ քնդացնում են փողոցները մարսելյոզներով, փշրում են բռնակալների աթոռները և թռչում են բարիկադների վրա։ Ով որ ծանոթ է Ֆրանսիայի պատմությանը, գիտե, թե որպես մեծ դեր խաղացին ուսանողները, մանավանդ Կոմունայի ժամանակ»։

Նկատելով, որ հայ նահապետական օջախում կրթված երիտասարդը ձեռք է բերել որոշ իրավունքներ՝ ընտանիքում կարևոր հարցերը լուծելիս ձևրա հետ մասլահաթ են անում», միաժամանակ դպրոցական գործի ղեկավարությունը տեսնելով երիտասարդության ձեռքում, Րաֆֆին նրանց հետ է կապում նաև ժողովրդի մեջ միասնականության ամրապնդման գործը։

Հայ երիտասարդությանը խրախուսելով ռուսական և ֆրանսիական ուսանողության օրինակով, Րաֆֆին ցանկանում է նրանց նպաստակներին կազմակերպված ձև տալ, նրանց եռանդը և կրթության գործը դնել մտածված ուղու վրա։ Հիմնականում այս տեսանկյունից էլ ձեռնարկում է ուսանողության, երիտասարդ արհեստավորների, գործակատարների, մշակ դասի, շրկիրների կյանքի և գործունեության ուսումնասիրությունը։

«Հայ երիտասարդությունը» հոդվածի տպագրումը մեծ իրարանցում է առաջացնում հասարակական տարբեր շրջաններում։ «Մշակի» հասցեով բազմաթիվ նամակներ ու քաղվածքներ են ստացվում, որոնց մեջ ընթերցողները իրենց համակրանքն են արտահայտում «Հայ երիտասարդությանը» հոդվածի առթիվ։

«Հայ երիտասարդությունը» տպագրումից չանցած մեկ ամիս, «Մշակում» հրապարակվում է Մոսկվայի համալսարանի իրավաբանության բաժնի ուսանող Ս. Դադյանի նամակը (տե՛ս «Մշակ», 1879 թ., № 217, էջ 2), որտեղ վերջինս Մելիքզադեին մեղադրում է, որ նա ուսանողությանը լավ չի ճանաչում, որ նրանք ունեն այս և այն արժանիքները և այլն։

Այս նամակի առիթով «Մշակին» 226-րդ համարում Րաֆֆին հանդես է գալիս իր «Ինչով ենք մխիթարվում» ընդարձակ հոդվածով։ Ինչպես պարզվում է հոդվածից, Րաֆֆին ցանկանում էր, որ ուսանողությունը աթափվի և գիտակցելով ժողովրդի կոմից իր վրա դրված պարտականությունները, գործով հաստատի իր արժանիքները։

Մելիքզադեի դեմ մի նոր բողոքով 1880 թվականին հանդես են գալիս Մոսկվայի 20 հայ սովորողներ (տե՛ս «Մշակ», 1880 թ., № 4)։

Վերջիններիս «Մշակին» հենց նույն համարում մի ֆելիետոնով պատասխանում է Արծրունին, Ասիացի ստորագրությամբ։

1890 թվականին «Հայ երիտասարդությունը» «Հայ կինը» աշխատության հետ միասին հրատարակվում է նաև առանձին գրքով։

«Մշակում» «Հայ երիտասարդությունը» հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Հայ կինը և Հայ երիտասարդությունը» գրքից, Թբիլիսի, 1890 թ.։

ԻՆՉ ԿԱՑ ԿԱ ՄԵՐ ԵՎ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ (էջ 470)

Ռուս-Թուրքական պատերազմից մի քանի ամիս անց, երբ լիովին պարզվեց վեհաժողովների խեղկատակությունը, հայ մտավորականությունը սկսեց ավելի մեծ նշանակություն տալ սեփական ուժերի համախմբման գաղափարին։ Այդ շրջանում ավելի քան անհրաժեշտ դարձավ Արևելահայ ու Արևմտահայ հատվածների տնտեսական ու կուլտուրական կապերի միավորման հարցը։

Այդ օրերին Րաֆֆին գրում է իր «Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածը։ Այստեղ շոշափված հարցերը ծրագրային նշանակություն են ունենում գրողի հետագա գործունեության համար և գրեթե նույն մեկնաբանությամբ դրվում է նրա գեղարվեստական ստեղծագործությունների հիմքում։ Քննելով Արևելահայ ու Արևմտահայ հատվածների միավորման հարցը, Րաֆֆին գտնում է, որ գոյություն ունեցող անջատվածությունը լրջորեն վնասում է ժողովրդի միասնությանը, նա պահանջում է մեկ ընդմիշտ վերջ տալ դավանաբանական վեճերին։

Երկու հատվածներից միավորման հարցում լեզուն համարելով հիմնական գործոն, նա կոչ է անում գրականության, մամուլի և դպրոցների միջոցով նախապատրաստել ու համախմբել ժողովրդին։

Մաղրելով 61-րդ հոդվածի մեջ «ոսկու հանքը որոնողներին, Րաֆֆին գտնում է, որ «Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անընդհատ նախապատրաստության գործի մեջ (ընդգծումը հեղինակինն է), որպեսզի նրանք կազմ և պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը։ Իսկ այդ օրը կկրկնվի և շատ անգամ կկրկնվի...,— վստահությամբ ասում է նա,— գուցե շատ հեռու չէ մեզանից...»։

Այս հոդվածի հետ ներփակ «Մշակին» խմբագրին ուղարկված նամակից (տե՛ս վերծանաշեջ, 1895 թ., № 99, էջ 3) մենք իմանում ենք, որ «Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածը գրված է 1878 թվականի դեկտեմբերին, Ագուլիսում։ Վերոհիշյալ նամակի վերջում Րաֆֆին «Մշակին» այն ժամանակվա բարոտուղար Տեր-Գրիգորյանին խնդրում է իր՝ խմբագրին ուղղված նամակը տպագրել հոդվածի հետ միասին միևնույն համարում, «որովհետև,— գրում է նա,— նամակը հիշյալ հոդվածի հետ կապ ունի»։

Արծրունին չհամաձայնելով Րաֆֆու առաջարկներին, նամակի տպագրությունը մատնում է անուշադրության։ Ինչ վերաբերում է հոդվածին, ապա այն հրատարակվում է 1879 թվականի հուլիսի 26-ին։

Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածը երկրորդ անգամ հրատարակվել է 1895 թվականին Ա.Նն Բաֆֆու կազմած «Տաճկահայքը ժողովածուում, ինչպես նաև տեղ է գտել նույն ժողովածուի 1913 թվականի վերահրատարակման մեջ։

Հոդվածը «Մշակում» տպագրվել է Մելիք-Զադե տառագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1879 թ., №№ 122, 123, 125, 126։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ (էջ 492)

«Երկու խոսք մեր ընթերցող հասարակությանը» վերնագրով հոդվածը գրված է «Կայծերից» բաժնեգրության պայմանների հրապարակման առիթով։ Ի նկատի ունենալով այն երևույթը, որ Տաճկաստանի հայերի խնդիրը գրավում է բոլոր համազգայինների բարի ուշադրությունը», Բաֆֆին, ինչպես ծանուցում է այս հոդվածում, աշտապում է որքան կարելի է շուտով տպագրել իր «Կայծերը» անունով աշխատությունը», բայց որովհետև բավարար քանակությամբ միջոցներ չուներ, որոշում է բաժնեգրություն հայտարարել։ 1879 թվականի դեկտեմբերի 10-ին նա մի տպագիր շրջաբերականում դիմում է իր բոլոր բարեկամներին և «Մշակի» ընթերցողներին, խնդրելով օգնել իրեն «Կայծերի» հրատարակման գործում։

Ահա այս «Երկու խոսքը» այն շրջաբերականն է, որով նա դիմում է «Ընթերցող հասարակությանը»։

Հոդվածը գրված է 1879 թվականի դեկտեմբերի 10-ին, Փիֆլիսում, տպագրվել է նույն թվականի դեկտեմբերի 13-ին։

Հրատարակված է Բաֆֆի տառագրությամբ։

Արտատպված է «Մշակից» 1879 թ., № 218, էջ 2։

ԻՆՉՈ՞Վ ԵՆՔ ՄԽԻԹԱՐՎՈՒՄ (էջ 493)

Բաֆֆին «Ինչո՞վ ենք մխիթարվում» հոդվածում քննում է երկու հարց։ Առաջին հարցի գրության համար շարժառիթ է հանդիսացել «Հայ երիտասարդության» աշխատության մասին Ս. Դադյանի «Մշակում» հրապարակած նամակը (տե՛ս «Մշակ», 1879 թ., № 217, էջ 2), իսկ երկրորդի համար՝ ազգայնության հարցի շուրջը մամուլում եղած տարաձայնությունները։

«Հայ երիտասարդությանը» հոդվածի ծանոթագրությունից ընթերցողին արդեն հայտնի է, որ Մոսկվայի համալսարանի ուսանող Ս. Դադյանը, համաձայն չլինելով Մելիք-Զադեի կողմից հայ ուսանողությանը հասցեագրված դիտողությունների հետ, «Մշակում» հանդես է գալիս մի հոդվածով և իր պաշտպանության տակ առնում նրանց։

Այս հոդվածում Բաֆֆին խոստանում է նաև վերցնել իր դիտողությունները, եթե նամակի հեղինակը կարողանա հաստատել, որ բերած օրինակները ճիշտ չեն, բայց քանի որ Ս. Դադյանը ցանկանում է արդարացնել հայ ուսանողներին, դրանք համարելով ընդհանուր ուսանողության հատկանիշներ», ուստի Բաֆֆին բարեկամաբար խորհուրդ է տալիս ուրիշի վատթար արարքով չարդարացնել իրենց մեջ գոյություն ունեցող թերությունները։ Շատ հատկանշական է այն հանգամանքը, որ Բաֆֆին ոչ քե ձգտում է իր պատասխանի միջոցով փակել Դադյանի բերանը, այլ ուզում է մեղմ տոնով համոզել նրան։

Հոդվածի երկրորդ բաժինը ամբողջովին նվիրված է այն հարցին, թե ազգայնության դրոշի տակ ովքեր կարող են միավորվել իբրև մի ազգային մարմին։ Այս վեճը «Մշակի» դեմ վարած էին «Մեղու Հայաստանի» ու պոլսահայ մի շարք պահպանողական լրագրեր, որոնք ազգայնության հարցը կապելով լուսավորչական եկեղեցու հետ, հայ չէին համարում բոլոր այլադավան համազգայիններին։ Րաֆֆին փայտե գլուխ ունեցող մարդիկ համարելով այս տեսակետի հեղինակներին, պատմությունից վերցված օրինակներով ցույց է տալիս, որ կրոնը չի եղել և չի կարող իր վրա վերցնել ազգային միավորիչի դերը։ Ի տարբերություն պահպանողականների, Րաֆֆին այս հարցում վճռական տեղ է հատկացնում լեզվին և կոչ է անում համախմբվել առանց դավանանքի խտրության և աշխարհի առաջ հանդես գալ ոչ թե իբրև կրոնական համայնք, այլ իբրև ազգ։

Հոդվածը գրված է 1879 թվականի դեկտեմբերին, Թիֆլիսում, ապագրված է նույն թվականի դեկտեմբերի 29-ին։

Հրապարակված է Մելիքզադե ստորագրությամբ։

Արտատպված է «Մշակից», 1879 թ., № 226, էջ 1։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Բաֆֆին հրապարակախոս և քննադատ — Ս. Հարությունյան . 5

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Արգո բարեկամ Հովհաննես Քաջանյանց 23
Ընտանիքի կերբերոսներ 29
Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում . . 32
Վաճառականությունը հայերի մեջ 34
Էդ էլ քեզ կրիտիկա 39
Նամակ Կ. Պոլսից 43
Նամակ Կ. Պոլսից 45
Նամակ Կ. Պոլսից 49
«Քանգված օջախ» 52
Մի քանի խոսք 53
[Պատասխան «Մեղուին»] 59
Կ. Պոլսի սր. պատրիարքի հրաժարումը 60
Փոստայի հարաբերության կարևորությունը Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ 62
Ընթերցողներին 65
Առաջաբանի տեղ 69
«Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վերա» 70
«Քնար Մշեցվոց և Վանեցվոց» գրքույկի առիթով 76
Հասունյանը և յուր կուսակցություններ 81
Հեղինակների վիճակը 84
Թուրքիա 89
«Գրոց ու բրոց կամ Մասունցի Դավիթ» 92
«Էլի մեկ գոհա» 111
Նամակ Դավրեժից 115
Նամակ Դավրեժից 120
Հայոց ազգաբնակչությունը Պարսկաստանում 125
Վաճառականությունը Պարսկաստանում 144
Պարսկաստանի զինվորական կազմակերպությունը 151
Պարսկաստան 155
Նամակ Պարսկաստանից 184
Նամակ Պարսկաստանից 186
Գժատուն 188

Նամակ Պարսկաստանից 197
Նամակ Պարսկաստանից 199
Կղերական հարստահարություն 201
Նամակ Պարսկաստանից 210
Նամակ Պարսկաստանից 214
Հայ վաճառականներ Կովկասի մեջ 216
Տեղեկագիրք գավառական հարստահարության 220
Խավարի արբանյակները 262
Դատարկ հույսերով ենք խաբվում 265
Ինքնախաբեություն 273
Ժողովրդական վարժապետներ 282
Դեռևս ուշ չէ 295
Նամակ խմբագրին 305
Ի՞նչ վերանորոգություններ պետք են Տաճկական Հայաստանին 306
Հայդուկներ 316
Հայ կինը 318
Հայ երիտասարդությունը 380
Թիֆլիսը որպես կենտրոն 440
Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ . . . 470
Երկու խոսք մեր ընթերցող հասարակությանը . . . 492
Ինչով ենք մխիթարվում 493
Ծանոթագրություններ 505

Ծանոթագրությունները Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆԻ

Գեղ. խմբագիր՝ Ա.Ճ. Դասպարյան *Տեխ. խմբագիր՝* Է. Ճաճճապանյան

Վերատեսուչ սրբագրիչ՝ Ա. Երիցյան

Պատվեր 1918։ Տիրաժ 45000։ Հանձնված է արտադրության 17/IX 1963 թ.։ Ստորագրված է տպագրության 13/I 1964 թ.։ Թուղթ՝ 60×92 1/16։ Տպագր. 33,25 մամ., հրատ. 28,8 մամ. + 1 ներդիր։ Գինը՝ 1 ռ. 44 կոպ.։

Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։